

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ



ՀԱՅՐ ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 200-
ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ
2021

902.9
D-78
h2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊՐԱԿ Ա

ՀԱՅՐ ՂԵԻՆՆԻ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 200-
ԱՄՅԱԿԻՆ ԵՎԻՐՎԱԾ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԵՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

6438

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԴՅԱՆ
ԱՄԵՆԱՇԱՐ
218



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
218

ԵՐԵՎԱՆ - 2021



NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

FOREIGN-LANGUAGE SOURCES ON
ARMENIAN COMMUNITIES

ISSUE I

PAPERS OF THE INTERNATIONAL CONFERENCE DEDICATED
TO THE 200TH ANNIVERSARY OF GHEVOND ALISHAN'S
BIRTH

YEREVAN – 2021

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ ОБ
АРМЯНСКИХ ОБЩИНАХ

ВЫПУСК 1

СБОРНИК МАТЕРИАЛОВ МЕЖДУНАРОДНОЙ
КОНФЕРЕНЦИИ, ПОСВЯЩЕННОЙ 200-ЛЕТИЮ ОТЦА
ГЕВОНДА АЛИШАНА

ЕРЕВАН – 2021

ՀՏԴ 93/94(082)
ԳՄԴ 63.3գ43
Օ-780

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՍԲ

ԽՄԲԱԳԻՐ՝
Պ. Գ. Դ., ՊՐՈՖԵՍՈՐ ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝
Բ.Գ.Թ. ԱՐՇՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ
Պ.Գ.Թ. ԿԱՐԵՆ ՄԿՐՏՅԱՆ
ԷԼԻԶԱԲԵԹ ԹԱԶԻՐՅԱՆ

Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին: Պրակ Ա:
Օ-780 Հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված
միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու.- Եր.: ՀՀ
ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2021.- 404 էջ:

Ժողովածուում ընդգրկված են «Օտար աղբյուրները հայկական գաղ-
թավայրերի մասին» խորագրով (Երևան, 2020 թ. սեպտեմբերի 15-16) մի-
ջազգային գիտաժողովի նյութերը:

Օտար աղբյուրները, մասնավորապես ճանապարհորդների երկերը,
հսկայական ծավալի նյութ են պարունակում հայկական գաղթօջախների
բնակչության թվաքանակի, տնտեսության, օտար ազգերի հետ ունեցած
փոխհարաբերությունների, հայ ազգաբնակչության մշակույթի, կրթութ-
յան և ներհամայնքային կյանքի բազմաթիվ իրողությունների վերաբերյալ:

Գիտաժողովի խորագրի համեմատությամբ բացատրություն է կազ-
մում Ջավախքի հայությանը վերաբերող մեկ զեկուցում:

Նախատեսված է Հայոց պատմության, հայ գաղթօջախների պատ-
մության հարցերով հետաքրքրվողների և ընթերցող լայն հասարակա-
յան համար:

ՀՏԴ 93/94(082)
ԳՄԴ 63.3գ43

ISBN 978-9939-892-10-8

© ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2021

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և
Մփյուռքի պատմության
բաժնի վարիչ, պ.գ.դ, պրոֆեսոր



(1820-1901 թթ.)

Հայկական գաղթավայրերը հայ ժողովրդի պատմության կարևոր առանձնահատկություններից են: Հայաստանը, աշխարհաքաղաքական կարևոր նշանակություն ունենալով, իր ողջ պատմության ընթացքում գտնվել է ժամանակի հզոր կայսրությունների շահերի բախման կենտրոնում: Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև երկարատև ռազմաքաղաքական հակամարտությունը 387 թվականին հանգեցրեց հայ պետականության կործանմանը, Հայաստանի առաջին բաժանմանը այդ երկրների միջև: Այդ թվականը պայմանականորեն կարելի է համարել նաև հայ գաղթի պատմության սկիզբը: Այդուհետ արտագաղթերը հայրենիքից դարձան հայ ժողովրդի պատմության մնայուն բնութագրերից մեկը: Դարերի ընթացքում հայերի արտագաղթը հայրենիքից պայմանավորված է եղել երեք հիմնական գործոններով՝ տնտեսական, կրոնական և քաղաքական, որոնք, ինքնուրույն պետականության բացակայության պայմաններում, մշտապես ուղեկցվել են օտարազգի իշխանությունների կողմից իրականացվող բռնաճնշումներով և հալածանքներով:

Դեռևս 3-4-րդ դարերում Սասանյան Արտաշիր I և Շապուհ II արքաների օրոք տեղի ունեցան հայերի առաջին խոշոր զանգվածային բռնագաղթերը Պարսկաստան: Առավել հետևողական էր հայերի տեղահանման Բյուզանդիայի քաղաքականությունը, երբ մի քանի դար շարունակ հայերը պարտադրված էին գաղթել դեպի արևմուտք՝ կայսրության տարբեր շրջաններ, այդ թվում Բալկաններ, Թրակիա, Մակեդոնիա, փոքրասիական արևմուտք և այլն:

Այսպիսով՝ հայերի արտագաղթը հայրենիքից, որ մեծ չափեր էր ընդունել 7-14-րդ դարերում, տարբեր ասպատակիչների (արաբներ, թուրք-սելջուկներ, մոնղոլներ) ասպատակությունների

պատճառով և հատկապես Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Անիի՝ 1045 թ. անկման հետևանքով, երբ հայերը ստիպված էին գաղթել Ասորիք, Միջագետք, Ղրիմ, Ուկրաինա, Լեհաստան, Մոլդավիա, Ռումինիա, Հունգարիա, Բուլղարիա, Կիևյան Ռուսիա, Փոքր Ասիայի ծովամերձ շրջաններ՝ ամենուրեք հիմնելով համայնքներ: Միջնադարյան Եվրոպայի ու Ասիայի հայկական գաղթավայրերում կառուցվում էին եկեղեցիներ ու դպրոցներ՝ հայ ինքնությունը և հայրենիքի հետ կապը ամուր պահելու համար:

Կիլիկիայի հայկական թագավորության անկումից (1375) հետո մեծ թվով հայեր գաղթեցին նաև եվրոպական (Իտալիա, Ֆրանսիա) ու մերձավորարևելյան տարբեր երկրներ: Այսուհանդերձ, հայերի մի զգալի հատվածի կենսագործունեությունը պատմական Կիլիկիայում շարունակվեց հետագա դարերում ևս (ընդհուպ մինչև 1921 թվական՝ Ֆրանսիայի կողմից Կիլիկիայի պարպումը):

Հայ ժողովրդի պատմության մեջ հատկապես ճակատագրական եղան XVI-XVII դարերը, երբ Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև պատերազմների ընթացքում պարսից շահ Աբաս Ա-ը 1604 թ. ամռանն իրականացրեց հայ բնակչության ամենագանգվածային բռնագաղթը, որի հետևանքով Պարսկաստան թշվեց Կարսից մինչև Ջուղա ընկած տարածքում բնակվող բազմահազար հայությունը:

Մինչդեռ Օսմանյան կայսրությունում ավելի էր խստանում հայերի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային ճնշման քաղաքականությունը: Օսմանյան կայսրությունը սուլթան Աբդուլ Համիդ II օրոք 1894-1896 թվականներին կազմակերպեց շուրջ 300.000 հայերի ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ այլ վայրերում: Դրա անխուսափելի հետևանքներից էր հայերի ավելի մեծ չափով արտագաղթը հայրենի տարածքներից՝ այս անգամ նաև դեպի Հյուսիսային և Հարավային Ամերիկա:

Համիդյան ցեղասպանությանը հաջորդեց երիտթուրքերի կողմից Ադանայի և շրջակայքի ավելի քան 30.000 հայության կո-

տորածը՝ պատճառ դառնալով արտագաղթերի շարունակականության:

Արևմտահայությունը նոր փորձության առջև կանգնեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Երիտթուրքերը ձգտելով վերջնականապես ճնշել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը և վերջ տալ Հայկական հարցին ուղղված միջազգային դիվանագիտության ջանքերին, 1915-1916 թթ. Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ վայրերում հայերի նկատմամբ իրականացրին ցեղասպանություն և բռնագաղթի քաղաքականություն, որի հետևանքով կոտորածի ենթարկվեց ավելի քան 1,5 միլիոն հայ, իսկ մնացյալ հատվածը կամ բռնի հավաքագրվեց եղալ, կամ ապաստան գտավ տարբեր երկրներում: Այսպիսով, հայկական Սփյուռքն առաջացավ Առաջին աշխարհամարտի տարիներին՝ Հայոց ցեղասպանության, տեղահանության և հայրենագրկումի հետևանքով, երբ հարյուր հազարավոր հայ տարագիրներ համալրեցին աշխարհի տարբեր երկրներում գոյություն ունեցող հայկական գաղթօջախները: Առավել խոշոր հայկական համայնքներ դարձան Մերձավոր Արևելքի (Լիբանան, Սիրիա, Եգիպտոս), Բալկանյան թերակղզու (Բուլղարիա, Հունաստան, Ռումինիա) երկրների, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի համայնքները: Հայերի թիվն ավելացավ նաև Ավստրալիայում և Լատինական Ամերիկայում:

Ողջ 20-րդ դարի ընթացքում տեղի ունեցան հայերի տարերային տեղաշարժեր մի երկրից մյուսը՝ փոխելով առկա հայօջախների ու համայնքների դիմագիծը և ստեղծելով նորերը: Դրա պատճառ հանդիսացան մասնավորապես Երկրորդ աշխարհամարտը, Միջին Արևելքում ստեղծված քաղաքական հակամարտությունները և Հայաստանի Հանրապետության անկախացմանը հաջորդած սոցիալ-տնտեսական դժվարությունները: 21-րդ դարում ևս, ցավոք սրտի, հայերը շարունակում են արտագաղթել Հայաստանից և Միջին Արևելքից հիմնականում դեպի Արևմուտք՝ դարձյալ փոփոխելով հայկական ժողովրդագրության պատկերը այս կամ այն պետությունում:

Այսպիսով, հայկական գաղթավայրերը և, ի վերջո, Սփյուռքը ձևավորվել են դարերի ընթացքում՝ Հայոց անկախ պետականության կորստի և օտար տիրապետությունների հաստատման և հայերի ցեղասպանության հետևանքով: Այսօր ավելի քան 100 երկրում հարատևող հայօջախներից ավելի մեծաթիվը Ռուսաստանի Դաշնությունում են, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Վրաստանում, Արգենտինայում, Կանադայում, Գերմանիայում, Իրանում և այլուր: Սփյուռքահայ համայնքներն ակտիվորեն մասնակցել են իրենց երկրների հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքին և ստեղծել հարուստ պատմություն:

Ներկայումս հայության ամենաարդիական հիմնահանդիրներից է Հայ Սփյուռքի հետագա գոյապահպանումն ու զանազան մարտահրավերներին դիմակայելը: Մակայն սխալված չենք լինի նշելու, որ սփյուռքահայերի ինքնության պահպանման և ձուլման վտանգից խուսափելու միակ ճանապարհը հայրենադարձությունն է, հանգրվանելը Մայր Հայրենիքում: Իսկ հետագա գաղթերից խուսափելու համար, Հայոց պետականության հզորացումը, **Միացյալ և մեկ Հայության, Միացյալ և մեկ Հայաստանի կերտումը:** Ինչպես իրավամբ նշել է մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանը, «Արևմտահայաստանը պիտի ազատագրվի ու միանա Արևելահայաստանին, սփյուռքահայությունն էլ պիտի հանգրվանի իր Մայր հայրենիքում, և Մասիսները իրենց փեշերի շուրջը կհավաքեն բոլոր կողմերից աշխարհով մեկ սփռված իրենց զավակներին»¹:

Աշխարհի՛ւ գրեթե բոլոր ծագերում սփռված հայօջախների և Սփյուռքի ձևավորումից ի վեր բազմիցս փորձեր են արվել շարադրելու հայկական գաղթավայրերի պատմությունը: Այս համատեքստում ստեղծվել են մեծարժեք աշխատություններ: Այս առումով իրենց մեծ ներդրումն ունեն հայ գաղթօջախների պատմության նշանավոր գիտակներ Արշակ Ալպոյաճյանը, Հրաչյա Աճառյանը, Աշոտ Աբրահամյանը, Կառլեն Դալլաքյանը, Վարդգես Միքայելյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Ալբերտ Խառատյանը և ուրիշներ:

¹ Բատիկյան Խ., Հրաչյա Աճառյան մարդը և գիտնականը, Երևան, 2005, էջ 241:

Հարկ է նշել, որ հայ գաղթօջախների ամբողջական պատմության ուսումնասիրման համար հայկական աղբյուրներից բացի, սկզբնաղբյուրային բացառիկ կարևոր նշանակություն ունեն օտար հեղինակների տարբեր ժամանակների երկերը՝ հուշագրությունները, ճանապարհորդական նոթերը, ուղեգրությունները, ուսումնասիրությունները և այլն: Այդ հեղինակներն իրենց երկերում պատմագիտական արժեք և նշանակություն ունեցող տեղեկություններ են հաղորդում հայկական գաղթօջախների ձևավորման, հայերի հոգևոր-մշակութային և սոցիալ-քաղաքական կյանքի մասին: Ուստի լիահույս ենք, որ «Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին» խորագրով այս գիտաժողովը ևս, իր զգալի նպաստը կբերի գաղութահայ պատմության հետագա ուսումնասիրման համար՝ նկատի ունենալով տվյալ նյութի վերաբերյալ բազմաթիվ աղբյուրների առկայությունը: Նման գիտաժողովները հնարավորություն են ստեղծում հետադարձ հայացք նետել մեր ժողովրդի անցած պատմական ուղուն, ինչպես նաև անվիճելիորեն նպաստում են նոր աղբյուրների բացահայտմանը և գիտական շրջանառության մեջ դնելուն:

Ժողովածուն, որը նվիրված է բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, բանաստեղծ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին, յուրովի հարգանքի տուրք է հայագիտության մեծանուն նահապետին ու երախտավորին՝ ի հավերժացումն նրա ազգաշահ գործունեության:

Տ. ԼԵՒՈՆ ԱՐՔ. ՋԷՔԻԵԱՆ
Վենետիկի Կա Ֆոսկարի Համալսարանի եւ
Հռոմի Քահանայապետական Արեւելագիտութեան Ինստիտուտի
վաստակատար դասախօս

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ ԲԱՆԱՍԷՐ, ԱՂԲԻԻՐԱԳԷՏ.
ԱՂԲԻԻՐՆԵՐՈՒՆ ՀԱՌԱՏԱՐԻՄ, ՀԱՒԱՍՏԻ ԵՒ ԲՕԱԽՆԻՐ
ՄԵԾ ԲԱՆԱՍԷՐԸ

Հ. Ղեւոնդ Ալիշանը Հայ մշակոյթի երկնակամարին այն բազմանշոյլ աստղն է, զոր կարելի է փորձել բնութագրել բազմօրինակ որակումներով, բազմահատուած փոխաբերութիւններով:

Ինքն է որ, հոգեկից եւ խոհակից Հ. Գաբրիէլ Այվազովսկիի հետ, հիմնած է «Բազմավէպ» հանդէսը, տալով անոր անուն մը՝ որ մշակութային, հումանիտական բովանդակ հորիզոն մը կ'ուրուագրէ, եւ որ ամենայարիւր յղացքներէն մէկը կ'ընձեռնէ բնութագրելու համար Ալիշանի հանճարը, երբ պատումի հարթակէն կ'անցնինք «պատմող»ի դիրքին, պատմողի դիտանկիւնին: «Բազմավէպ» կոչումը, իր էութեամբ, իտալական Վերածնունդի Հումանիզմի գաղափարախօսութեան աշխարհայեացքին մէջ իր արմատները խորոյ յղացք մըն է, որ՝ ինչպէս պիտի տեսնենք՝ կը բնորոշէ Ալիշան գիտնականի ներէութիւնը, ինչպէս առ հասարակ Միսիթարեան դպրոցը, յատկապէս Ժամանակին՝ մինչեւ 2000 թուականի կրկնակ ճիւղերու վերամիութիւնը երկարող շրջանին՝ իր վենետիկեան դրսեւորումով:

Ալիշանի ծննդեան երկհարիւրամեայ յոբելեանի այս ծիրին մէջ, երբ մէկէ աւելի գիտաժողովներ, գիտահանգէսներ կը յաջորդեն իրարու, որոնց յոյժ ազնուօրէն մասնակցելու հրաւեր կը ստանամ, այս անգամ խորհեցայ անդրադառնալ յատկապէս, ունկնդիրներուս ուշադրութիւնը գրաւել Ալիշանի բազմաձիւր, բազմատաղանդ անձնաւորութեան գլխաւորապէս բանասերի հանգամանքին վրայ, իբրեւ մեկնարկ ընտրելով Հայ գաղութներու,

մանաւանդ Իտալիոյ հայ գաղութներուն ուսումնասիրութեան համար, ինչպէս այլ բազում մարզերու մէջ, իր անփոխարինելի ներդրումը:

Ջրաղած եմ անձամբ եւ մանրամասնօրէն այս գաղութներուն ուսումնասիրութեամբ, ջանալով համադրել մեր առկայ գիտելիքներու պաշարը եւ համապատասխան գրականութիւնը մինչեւ ուսումնասիրութեանս հրատարակութիւնը նշող 1978 թուականը: Հետազօտութեանս առաջին եւ մեծագոյն ուղեցոյցը, մինչեւ ԺԹ. դարու վերջերը լոյս տեսած՝ նիւթին առնչակից գրականութեան նկատմամբ, գիտելեաց անփոխարինելի շտեմարանը եղած են Ալիշանի պրպտումները, թողած ձեռագիր անհամար նշումները, ի բացատրութիւն իր կատարած հրատարակութիւններուն, ինչպէս պահպանուած են Ս. Ղազարու Մայրավանքի Դիւանին մէջ պահուող իր արխիւին գիտական ձեռատետրերուն մէջ:

Իսկոյն ըսեմ, որ Ալիշանի հսկայ տաղանդն ու բազմակողմանի անձնականութիւնը չեն գտած տակաւին իրենց արժանի հետազօտութիւններն ու խորացող վերլուծումը: Ղէտք է խոստովանինք, որ անոնք կը մնան դեռ գրեթէ «սիրողական», աւելի ճիշտ՝ բեմբասացական-ներբողական գրասեռերու հուներուն մէջ: Մերձեցումի աւելի լուրջ, բայց բացայայտօրէն միտումնաւոր փորձերը՝ որ մերթ կատարուած են, ինչպէս Օշականի գրականագիտական փորձը, դժբախտաբար թիրախավրէպ հանդիսացած են, զուցէ նաեւ անկախաբար՝ ակնբախ միտումնաւորութենէն, համապատասխան մշակութային հորիզոնին անբաւարարութեան պատճառով: Ակնյայտ է այս կէտը՝ երբ նկատի առնենք Ալիշանի քերթողութեան՝ որակով միջազգային բարձրութեամբ լաւագոյն բերքը կազմող գրաբար քերթուածներուն ընթացիկ թերագնահատումը մերագնեայ գրականագիտութեան կարեւոր մէկ մասին կողմէ, «մեռած լեզուով» գրուած ըլլալու պատրուակով ու պարսաւով, անգիտանալով՝ օրինակի համար իտալական խորհրդապաշտութեան մեծագոյն վարպետներէն Ջովաննի Փասկոլիի (1855-1912) մը լատիներէն քերթուածներու պարագան, որոնք կը դասուին բանաստեղծին լաւագոյն արտադրու-

թեան կարգին: Այս ալ զարմանալի չէ, որ նոյնիսկ տաղանդաւոր գրողատներ կամ բանասէրներ, ինչպէս է անառարկելիօրէն Օշական ինքը, մերթ էնթակայ եղած ըլլան թիրիմացութիւններու եւ կանխակալ կարծիքներու: Որատիոսի ծանօթ պատգամը իմաստութեան զանգ մըն է բոլորիս համար՝ «Երբեմն կը նիրհէ նաեւ բարին Հոմերոս», թէպէտեւ կանխակալ կարծիքներու կամ նախապաշարումներու պարագային՝ պիտի չկարենայինք միշտ երաշխաւորել «բարութիւն»ը: .

Ալիշան՝ ժառանգ Վերածնունդի դասական Հումանիզմին

Վերոնշեալ պարագան կը բացատրէ, գէթ մասամբ, թէ ինչո՞ւ եղած են եւ կան առարկողներ կամ վերապահութեամբ մօտեցողներ Ալիշանի արտադրութեան այս կամ այդ երեսակին: Զարմանալի ալ չէ՝ Վերածնունդի դասական Հումանիզմին՝ լաւագոյն առումով վերջին ժառանգներէն մէկն է Ալիշան: Անոր ընդգրկած հետազօտական տեսադաշտերուն ծովածաւալ ընդարձակութիւնը, յաճախ մեթոդաբանական իր ուրոյն ըմբռումներով ու իւրօվի մերձեցումներով, յի էր – ու զարմանալի չէ որ յի ըլլար – վերապահութիւններու եւ առարկութիւններու, ինչպէս պատահած է մարդկութեան նոյնիսկ մեծագոյն հանճարներուն նկատմամբ. այստեղ յիշենք միայն Դանթէի ու Շեքսպիրի պարագաները: Մարդկութեան այս երկու բացարձակ հանճարներուն նկատմամբ վերապահութիւնները պէտք է որ պարզապէս «գայթակղական» որակէինք, եթէ առ հասարակ մտաւոր քննադատութեան պատմութիւնը մեզի արդէն բաւարար չտփով ուսուցած չըլլար պատմական-մշակութային համագրերու գրեթէ բոնաստիքական պայմանաւորումներուն, կաշկանդումներուն մասին՝ մինչեւ իսկ հմտագոյն եւ նրբագոյն ուղեղներու վրայ:

Արգոյամեծար հայագետ մը օր մը հետեւեալը կ'ըսէր ինձի. «Ալիշան աւելի բանաստեղծ է, քան բանասէր կամ գիտնական»:

Արդէն յիշեցի նոյնինքն Ալիշանի բանաստեղծութեան բարձրագոյն որակի մասին յայտնաբերուած վարանումները: Գանք հիմա բանասէր Ալիշանին, որ մեր ներկայ առաջադրանքը կը

կազմէ: Բանասէր Ալիշանի նկատմամբ մղուած առարկութիւններէն գոնէ մէկը կարելի չէ վերագրել թիրիմացութեան կամ նախապաշարումի: Լուրջ առարկութիւն մըն է, գոր կը փափաքիմ հակիրճ կերպով քննել այստեղ:

Բանն այն է՝ որ Ալիշան իր աղբիւրները չի նշեր, ինչ որ դեմ կ'ընթանայ ԺԹ. դարէն ի վեր ծաղկած եւ ինքզինքը պարտադրած արդի, քննական բանասիրութեան հիմնական պահանջներէն մէկուն: Այսօր, մեզմէ որեւէ մէկը, եթէ ներկայացուէր իրեն՝ մագիստրոսական կամ թեկնածուական աստենախօսութիւն մը, որ չունենար աղբիւրագրական ծանօթագրութիւններու գիտական պատշաճ հանդերձանքը, առանց վարանումի պիտի չընդունէր զայն գիտական նկատառութեան համար, պիտի վերադարձնէր բերողին կամ յողին:

Կարեւոր հարց մըն է ասիկա, ցարդ հանգամանօրէն չքննուած, գոր պէտք է լրջօրէն քննենք եւ, եթէ կարելի է, լուսաբանենք: Ուստի, նախ եւ առաջ պէտք է հարց դնենք թէ ի՞նչ բանի կը ծառայէ ծանօթագրութիւններու գիտական հանդերձանքը:

Արդի քննական բանասիրութիւնը

Ծանօթագրութիւնները, բնականաբար, ինքնանպատակ չեն: Կարելի չէ գիտութիւնը վերածել սոսկ աղբիւրագիտութեան կամ աղբիւրագրութեան: Այս փորձութիւնը յաճախ ներկայ է ժամանակակից բանասիրութեան մէջ: Իրականին մէջ ծանօթագրութիւնները երկու հիմնական նպատակ կը հետապնդեն, պէտք է հետապնդեն.

ա. երաշխաւորել հաւաստիութիւնը կատարուած հաստատութիւններուն⁴

բ. գաղափար տալ՝ հաւաստիութիւնը երաշխաւորող աղբիւրներուն պատմական և մշակութային արժէքին եւ համագրի մասին:

Այս պահանջներուն նկատմամբ Ալիշան ունեցած է իր անձնական, ուրոյն իմացումը եւ մեկնաբանութիւնը:

Ըստ Ս. Ղազարու վանական ներքին, բանաւոր աւանդութեան, եղած են ուսումնասէրներ, մանաւանդ թէ միաբաններ, որոնք Ալիշանի բացայայտօրէն հարցուցած են, թէ ինչո՞ւ չի նշեր

կամ հազուադեպօրէն միայն կը յիշէ իր աղբիւրները, այդ ալ ո՛չ միշտ ըստ բոլոր պահանջներուն: ԺԹ. դարու գիտահետազոտութեան մէջ արդէն ընդունուած էր եւ հետզհետէ կը շեշտուէր ծանօթագրութիւնները նշելու պահանջը: Այդ պահանջը չունէր բնականաբար այսօրուան, գրեթէ մտասէւեռում դարձած, թերեւս ծայրայեղական հանգամանքը, բայց արդէն կա՛ր, առկայ էր: Ըստ նոյն աւանդութեան, Ալիշան իրեն ուղղուած հարցումին հետեւեալ պատասխանը կու տայ՝ «Ես պրպտեցի, աշխատեցայ, հաւաքեցի, ո՛վ որ չի վստահիր, գրածիս, թո՛ղ ինքը կրկին պրպտէ»: Ըստ ինքեան, բաւական «գլխօրիչ», *պրովոկատիւ*, եւ, անկեղծօրէն, ո՛չ բոլորովին բաւարարող պատասխան մը պիտի ըսէինք:

Սակայն պահ մը՝ զանց ընելով պատասխանին «գրգռիչ» հանգամանքը, աւելի՛ս սառնօրէն ջանանք մերձենալ խնդրին: Ամէն անոնք, որ գիտութեամբ, յատկապէս պատմաբանասիրական հետզոտութեամբ կը զբաղին, գիտեն անձնական եւ յարակայ փորձով, ո՛ր ծանօթագրութիւններու հանդերձանքին պատրաստութիւնը, մշակումն ու տեղադրումը, ըստ արդի բանասիրութեան բոլոր պահանջներուն, խմբագրական կանոններուն, երբեմն նոյնիսկ աւելի ժամանակ կը պահանջեն քան յօդուածին պատրաստութիւնը ինքնին: Նոյնպէս Ալիշանի կը վերագրուին նա՛եւ թէ ըսած ըլլայ, որ իր տեքստը ծանօթագրութիւններով օժտելու պարագային, հարկ պիտի լինէր աւելի մեծ ծաւալով ծանօթագրութիւն պատրաստել, քան գրառած տեքստը, թէ իր արտադրածին հազիւ կէսը թերեւս պիտի կարողանար արտադրել:

Յաւելունք նաեւ սա նկատողութիւնը: Ալիշանի տեղագրական կոթողային հատորները, ի մասնաւորի՝ *Միսուն, Միսական, Շիրակ, Այրարատ*, բայց նաեւ իր պատմատեղագրական երկունքին կարեւոր մէկ մասը, լոյս կը տեսնեն իր կեանքի վերջին երկու տասնամեակի ընթացքին: Նախընթաց տասնամեակներուն, սկսեալ ԺԹ. դարու քառասնական թուականներէն, մեղուաջան աշխատանքով Ալիշան կը հաւաքէր, կը համախմբէր, կը դասաւորէր, կը վերլուծէր, կը համադրէր այն ծովածաւալ ատաղձը՝ որ յետոյ առանցքային հիւսկէնը պիտի կազմէր իր գլուխ-գործոցներուն, կը սկսէր շարայարել այդ ատաղձին անէզր

սահմանները: Այդ միեւնոյն տասնամեակներուն, արդի բանասիրութիւնը կը սկսէր արձանագրել իր առաջին մեծ նուաճումները: Այս երկու ճգանց միջեւ, մէկ կողմէ Ալիշանի, միւս կողմէ՝ արդի բանասիրութեան, կար յամենայն դէպս էական, անշրջանցելի տարբերութիւն մը՝ հորիզոնի, նիւթին մերձեցման, նպատակադրումներու, շարժառիթներու:

Առանց նկատի առնելու այս տարբերութիւնները՝ դժուար է հասկնալ թէ՛ Ալիշանը, թէ՛ արդի բանասիրութիւնը:

Արդի բանասիրութիւնը եւ Ալիշան

Արդի բանասիրութեան հիմնական եւ հիմնարար հորիզոնը, որմէ կը հետեւին, կը յառաջագային նիւթին մերձեցումը, նպատակադրումներն ու շարժառիթները, «մասնաւոր»ն է, «մասնաւոր»ին ստուգումը, ճշտումը, բացայայտումն է, որով սկիզբ կ'առնէ գիտութեան մասնագիտացումը, մէկ բառով՝ ինչ որ այսօր կը կոչենք «մասնագիտութիւն»:

Մէկ օրինակ միայն տամ, մեր իսկ, մերագնեայ բանասիրութենէն՝ Խորենացիի ժամանակագրութեան հարցը: Մէկ դարէ սուելի է, որ վիճուած է եւ դեռ կրնայ անվերջանալիօրէն վիճուիլ Խորենացիի ժամանակագրութեան մասին, թէ ո՛ր դարուն ապրած կամ գրած է: Այս է արդի բանասիրութեան հիմնական առարկան, ասպարէզը, տեսադաշտը՝ որոնք ունին անշուշտ, առանց դոյզն վարանումի, իրենց անուրանալի կարեւորութիւնը: Կասկած չկայ եւ չի՛ կրնար ըլլալ այս մասին: Սակայն չենք կրնար նաեւ անտեսել, որ «բանասիրական» այս սեւեռումը, համարձակիմք ըսել՝ մերթ «մտասէւեռում»ը, պատճառ հանդիսացեր էր, մինչեւ գրեթէ Ի. դարու ութսունական թուականները, որ բաւական ուշադրութեան առարկայ չդառնային մեծ Պատմահոր ըմբռումներն ու տեսութիւնները պատմութեան մասին, ազգութեան մասին, ինքնութեան մասին եւ ըստ կարգին, յաճախ ուրոյն եւ ինքնատիպ՝ համամարդկային չափոլորտով: Այս բոլորը ունին անվերապահօրէն իրենց կարեւոր, նշանակալից ներդրումը համաշխարհային պատմագրութեան մէջ, որ կը կերպա-

տրուի նոյնիսքն պատմագրութեան, այսինքն՝ պատումին գրառման, հաւաքական եւ ազգային ինքնութեան վերաբերեալ տեսաբանութիւններուն, պատմութեան հոլովոյթը ենթալարող ներուժականութիւններուն, օրինաչափութիւններուն նկատմամբ մերս Պատմաօր մշակած նորարար հայեցողութիւններով եւ կիրարկումներով²:

Արդի բանասիրութեան մասնականացող եւ մասնականացնող, մասնականին գերխնդրօրէն եւ գրեթէ տարամերժօրէն ուշադիր այս միտումէն հիմնովին կը տարբերի Ալիշանի մտային հորիզոնն ու տեսադաշտը, որ՝ թէեւ բժայնդրօրէն ուշադիր մասնաւորին՝ կը ձգտի յարատեւօրէն «վերակառուցելու» իր սյրպտումի առարկան, այս պարագային՝ Հայոց Մեծաց անցեալն ու աշխարհը, ոչ լոկ իբրեւ անցեալի յուշ կամ յուշարձան, իբրեւ սոսկ իր բաղադրամասերուն մէջ տարրալուծելի իրականութիւն, այլ որպէս այդ բաղադրամասերուն փոխյարաբերութեան եւ օրգանական փոխադարձ համալրումին մէջ իմանալի դարձող պատմական ապրող եւ ապրեցնող վկայութիւն: Բնականաբար, Ալիշանեան այս տարածքները չէին կրնար նշմարելի դառնալ ԺԹ. դարու բանասիրական տիրող մերձեցումներուն, քննամթոնողարբանութեան:

² Այս ուղղութեամբ առաջին փորձերէն մէկն էր այս տողերը ստորագրողին հետեւեալ աշխատասիրութիւնը՝ L'«idéologie» nationale de Movses Xorenac'i et sa conception de l'histoire, "Handes Arnsorya," CI (1987), էջ 471-485. որու հայերէն նախնական բնագիրը իբրեւ գլխաւոր գեկոյց ներկայացուցեալ՝ ՀԽՍՀ ԳԱ-ի կազմակերպութեամբ Միջնադարեան Հայ Գրականութեան նուիրուած 1986-ի Սիմպոզիումին լեհականեան հանրային նիստին: Այս եւ յաջորդող յօդուածներուն մէջ Հեղինակին որո՞ւցրած մերձեցումներն ու բանաձեւած տեսութիւնները խոր արձագանգ գտան մեծամուն բանասէր եւ Հին Արեւելքի մասնագէտ Գագիկ Սարգսեանի կր.դմբ: Տե՛ս յատկապէս՝ Լ. Չլքիւան «Նորից Մովսէս Խորենացու Պատմութեան մասին», Պատմա-բանասիրական Հանդէս, 1993, 1-2, էջ 27-34: Գ. Խ. Սարգսեան, Մովսէս Խորենացու Ողբը նոր մեկնաբանութեամբ. «Պատմաբանասիրական հանդէս», 1997, 1, էջ 119-129:

Ալիշանի մերձեցումը իր աղբիւրներուն

Յետ այս ընդհանուր համեմատութեան՝ հետազօտութեան առարկային նկատմամբ արդի բանասիրութեան եւ Ալիշանեան դիտանկիւններուն, մերձեցումներուն, ընկալումներուն միջեւ, պիտի ուզէի հիմա իջնել աւելի շոշափելի եւ փորձընկալելի հարթակի մը վրայ: Հարթակը՝ իմ անձնական պրպտումներուս, ինչ կը հայի իր աղբիւրներուն նկատմամբ Ալիշանի ցուցաբերած վերաբերումին եւ իր կողմէ անոնց կիրառութեան: Կը ներէք, որ կը դիմեմ անձնական վկայութեան մը: Բայց ինչպէս իրաւական դատերու պարագային, հաւաստի, հաւաստիութիւնը փաստուած անձնական վկայութիւնը կը գործէ իբրեւ օրինական/իրաւական միջոց կամ գործիք, նոյնը կը գործէ նաեւ գիտական պրպտումի ասպարեզին մէջ՝ ուր փաստուած, հաւաստի վկայութիւնը կը մնայ եւ կը գործէ որպէս գիտական բարձրագոյն որակի ապացոյց:

Ալիշանի այդ ովկիանածաւալ, համապարփակ գործերէն ես ուսումնասիրած եմ մասնագիտօրէն, առաւելագոյն մանրագին դիտարկով, Իտալիոյ մէջ հայ գաղութներու պատմութիւնը Միջին Դարու ընթացքին, ուշ Հռոմէական շրջանէն կամ վաղ Միջին Դարէն՝ այսինքն շուրջ Զ. դարէն սկսեալ մինչեւ Վաղ Արդի շրջանը, որ է մօտաւորապէս մինչեւ ԺԸ. դար ներառեալ³: Շատեր կը կարծեն, որ Ալիշան հայ գաղութներու մասին խօսած է *Միսուանի* մէջ առաւելաբար: *Միսուանի* մէջ ալ խօսած է անշուշտ: Բայց հիմնական աշխատանքը, ուր նա աչքէ կ'անցընէ հայ գաղութները, դա *Միսուանն* է՝ յատկապէս *Միսուանի «Շահաստան հայոց»* բաժինը: Իսկ Իտալիան, ինչպէս Աշոտ Աբրահամեան կը գրէր, Միջին Դարու ընթացքին եղած է այն ոսկեայ շղթան, որ կապած է Հայոց աշխարհը, Հայութիւնը՝ Արեւմուտքին: Հետեւաբար շատ կորիզային դիրք մը ունին Իտալիոյ գաղութները մեր մշակոյթի պատմու-

³ Le colonie armene del Medio Evo in Italia e le relazioni culturali italo-armene (Materiale per la storia degli Armeni in Italia), Bergamo 28-30 giugno 1975. "Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena", San Lazzaro-Venezia, 1978: էջ 803-931 + 13 պատկերներ:

թեան եւ առ հասարակ Արեւուտքի հետ մեր մշակութային կապերու ծիրին մէջ ամբողջ Միջին Դարու ընթացքին, եւ ի գուր չէ, որ Յակոբ Մեղապարտ Վենետիկ կ'երթայ, Աբգար Դպիր Իտալիա կ'երթայ, Մխիթար Աբբահայր Վենետիկ կ'երթայ: Զեն երթար այլ ուր: Գիտենք՝ Վանանդեցիները Ամստերդամ գացին, քանի որ այդ շրջանին այդ քաղաքը առաւելագոյնը կ'ընծայէր իրենց երազներուն, իրենց ակնկալիքներուն հաւանական իրականացման համար: Հայերուս մէջ կար այս «հոտառութիւն»ը, ուժգին հոտառութիւն մը, թէ ո՞րն էր տուեալ ժամանակի կամ պահու մը ընթացքին երոպայի ամենէն յառաջացած, ամենէն ձեռնտու կեդրոնը իրենց մշակութային տեսիլներուն ի նպաստ: Բնականաբար, հարցը այլ հանդերձանք կը զգենուր, երբ երազները, գէթ մասամբ, նաեւ քաղաքական տարագ կը հագնէին:

Ուստի այդ ուսումնասիրութեանս ընթացքին, որու իբր մեկնարկ ծառայած են, ինչպէս ըսի, Ալիշանի վիթխարի աշխատանքը, յատկապէս Ս. Ղազարու մէջ պահուող իր դիւանը: Մեծ բախտ ունեցայ, որ կրցայ այդ դիւանը, թղթածրար առ թղթածրար, թուղթ առ թուղթ, անձամբ տեսնել, քննել, ստուգել, համեմատել, վերստուգել: Մէկ առ մէկ համեմատած եմ, *Միսականի* մէջ Ալիշանի բոլոր հաստատութիւնները՝ Իտալիոյ մէջ Հայոց ներկայութեան մասին, մանաւանդ վկայակոչած բոլոր աղբիւրները, ասոնց իւրաքանչիւրին բնագիրներուն, սկզբնագիրներուն հետ, երթալով՝ երբ հնար էր՝ մինչեւ առաջին տպագրութիւն, երբ գործ մը ունեցած է մէկէ աւելի տպագրութիւններ: Արդարեւ իր դիւանի թուղթերուն, նոթերուն, նշումներուն մէջ, Ալիշան արձանագրած է ամէն ինչ, թէ ի՞նչ վկայութիւն առած է իտալացի կամ ֆրանսացի, գերմանացի կամ անգլիացի ո՞ր հեղինակէն, ո՞ր ուղեգրէն, ո՞ր պատմաբանէն կամ հնագետէն: Նաեւ՝ թէ այդ հեղինակներու ո՞ր գործէն՝ նշելով միանգամայն գործին բոլոր հանգամանքները, ըստ արդի ամենախստապահանջ բանասիրութեան, մինչեւ հատորներու էջերը, երբեմն՝ մինչեւ իսկ տողերը: Այս բոլոր նշումները մէկ առ մէկ ստուգած եմ յիշեալ հատորներէն, որոնց մեծ մասը գտած եմ Ս. Ղազարու գրադարանին մէջ, նոյնինքն այն հատորները, զորս ձեռքի տակ ունեց'ար եւ տեսեր էր Ալիշան: Իսկ մաս մըն ալ գտած եւ ընթերցած եմ

Վենետիկի կամ Իտալիոյ մեծագոյն գրադարաններուն մէջ, երբեմն՝ բաւական դժուարութեամբ, նկատի առած՝ որ ինտրոյ առարկայ էին յաճախ ԺԷ. կամ ԺԸ. դարերու հագուագիւտ հատորներ, մի քանի անգամներ՝ նոյնիսկ ԺԶ. դարու հատորներ: Ասիկա գրեթէ մէկ տարուան մօտ աշխատանք մը եղաւ՝ 1976-1977 թուականներուն միջեւ: Աւելի քան չորս տասնամեակ անցած է արդէն առ այսօր: Այդ ամենի ովկիանոսին մէջ, որպէս կաթիլ մի հիւլէ, մէկ վրիպակ մը միայն կրցած եմ գտնել: Հատորի մը էջը՝ փոխանակ 22-ի իբրեւ 23 նշուած էր: Ա՛յսքան: Վրիպակ կ'ըսեմ, սխալ անգամ պիտի չկարենամ ըսել: Բազմահարիւր հատորներէ հագարատը վկայակոչումներու միջեւ մէկ թուանշանի վրիպակ մը միայն: Էջին եւ յաջորդ էջին ուշադիր ընթերցումով, դժուար չեղաւ գտնել համապատասխան տողը: Ահա՛ ւասիկ, Ալիշանի աշխատանքին մեթոդը, բժախնայութիւնը, աղբիւններուն հանդէպ բացարձակօրէն խղճամիտ հաւատարմութիւնը:

Կրնանք ուրեմն եզրակացնել, թէ Ալիշանի բոլոր տեղեկութիւնները, կատարած հաստատութիւնները ծայր աստիճան հաւաստի են, գիտականօրէն ստոյգ եւ վստահելի:

Պիտի ուզել այս առիթով կոչ մը ուղղել, յատկապէս երիտասարդ ուսումնասէրներու կատարելու նման աշխատանք մը Ալիշանի կոթողային հատորներուն մէջ շօշափած այլեւայլ բնագաւառներուն նկատմամբ, ինչ որ տողերուս գրողը կատարած է *Միսականի Հայ շահաստաններուն*, գործնականօրէն՝ Իտալիոյ Հայ գաղութներուն վերաբերող տեքստի մասին: Այսպէս կարելի պիտի ըլլայ վերականգնել Ալիշանի ենթատեքստը կազմող գրական հսկայ յուշարձան մը, որ վստահաբար նոր լոյսի տակ պիտի գետեղէ նոյնինքն Ալիշանի առկայ տեքստը իր պատմամշակութային բովանդակ համագրով եւ լիցքով:

Եզրակացնելով, պիտի հատուտենք անվարան, եւ ս՛ առտել քննական նոր լոյսով, թէ Ալիշան շատ մեծ, վիթխարի բանասէր մըն է, արժանատր ժառանգը՝ իտալական Վերածնունդի փաստագրային (դիպլոմատիկ) բանասիրութեան լուագոյն արանդին, բայց ո՛չ միայն: Ան, ըստ էութեան, լուագոյն եւ հաւատարմագոյն ծառան է նաեւ, խղճամիտ սպասաւորը արդի քննական բանասիրութեան,

քննարկումովը եւ ստուգումովը իր բոլոր վկայակոչումներուն, թէեւ տպագրեալ տեքստին մէջ մեծ մասամբ մուտք չեն գտած այն անհամար վկայակոչումներու տեքստային ցուցմունքները, որոնք մնացած են սակայն, կա՛ն եւ կը մնան ի վկայութիւն, Ս. Ղազար պահուող Ալիշանի դիւանին մէջ:

Ըստ այս աւանդին եւ ասոր հիման վրայ, Ալիշան գիտէ վերականգնել, վերակազմել, վերակառուցել անցեալը որպէս ապրող, բարախող իրականութիւն, միանգամայն կատարելով սակայն այս սխրալի աշխատանքը արդի բնաստիքութեան պահանջած բովանդակ ճշգրտութեամբ ու խստապահանջութեամբ: Այս ճշգրտութիւնն ու խստապահանջութիւնը, եթէ չեն երեւիր անմիջականօրէն հրատարակուած հատորներուն մէջ, ծանօթագրութիւններու աղբիւրագիտական տունեալներուն տպագրեալ բացայայտ նշումով, լրիւ բաւարարուած են սակայն պրպտումի եւ հետազօտութեան իր անձնական ոլորտին մէջ: Այս իրականութիւնը փաստացիօրէն եւ ակնյայտօրէն կը պարզուի, բացարձակ ստուգութեամբ, հրատարակուած կոթողային հատորներուն ընձեռած նիւթին մանրագին համեմատութեամբը նոյնին ենթատեքստը կազմող՝ Ալիշանի անձնական արխիւի փաստաթուղթերուն հետ: Այդ համեմատութիւնը, ինչպէս վերեւ բացատրեցի, անձամբ կատարած եմ այքէ անցընելով Ալիշանի կողմէ օգտագործուած բովանդակ գրականութիւնը, մեծ մասամբ հնատիպ եւ հագուադէպ հատորներ, Ս. Ղազարու Մայրավանքի իր դիւանին մէջ պահուող ծայր աստիճան ճշգրիտ ու մանրամասն նշումներուն եւ ցուցմունքներուն հիման վրայ: Այս համեմատութեան եւ մանրակրկիտ պրպտումներուն արդիւնքը եղած է Միջին Դարուն Իտալիոյ Հայ գաղութներու մասին ընդարձակ ուսումնասիրութիւնս, որ ինչ կը վերաբերի մինչեւ ԺԹ: Դարու վերջերը երկարող գրականութեան, անհնարին պիտի ըլլար՝ առանց Ալիշանի դիւանին անմիջական օգտագործման: Պարագայ մը՝ որ ակներեւ դուրս կը ցայտէ նոյնինքն յիշեալ ուսումնասիրութեանս նշուած շրջանին վերաբերող բոլոր աղբիւրագրական տեղեկութիւններէն:

Վենետիկ, 18 Յուլիս 2021

ԷԼԻԶԱԲԵԹ ԹԱԶԻՐԵԱՆ
գիտաշխատող, Հայաստան

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՀԱՅ ԳԱՂԹՕՁԱԽԼԵՐԻ ՄԱՍԻՆ» ԶԵՆՈՒԳԻՐ ՀՍՏՈՐԸ ԵՒ ՆՐԱ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. Ալիշան, գաղթօջախներ, ձեռագիր, Պերուզիա, Տեթվաճեան, Լիվոռնո, Ուդուրլեան, տապանաքարեր:

Հ. Ղեւոնդ Ալիշանը առաջիններից մէկն է, եթէ ոչ առաջինը, ով գիտակցելով հայ գաղթավայրերի անուրանալի դերն ու նշանակութիւնը հայոց պատմութեան ուսումնասիրման ասպարեզում՝ յատուկ ուշադրութիւն է դարձրել դրանց քննութեանն ու համակարգմանը:

Ալիշանն առաջինն էր, որ փորձեց ուշադրութիւն հրաւիրել Ս. Երկրում հայոց ներկայութեանն ու վանորէից պատմութեանը՝ հրատարակելով Անաստաս Հերայոլսեցու «Վասն վանորէից, որ ի Ս. քաղաքին Երուսաղէմ»-ի բնագիրը (1896):

Անաստաս վարդապետի անունով մեզ հասած Երուսաղէմի հայկական վանքերի ցուցակի բնագիրը գիտական հանրութեանը յայտնի էր դարձել Հ. Ղուկաս Ինձիճեանի եւ Հ. Ղեւոնդ Ալիշանի բարձր արժեւորումով ու հրատարակութիւններով դեռեւս XIX դարից²: Ծաւալով փոքրիկ այդ բնագիրը իր գիտական

¹ Ալիշան Հ. Ղ., Անաստաս վրդ. Հերայոլսեցի, Վասն Վանորէից, որ ի Սուրբ քաղաքն յԵրուսաղէմ, ի ժամանակս թագաւորութեան մեծին Տրդատայ եւ ի հայրապետութեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեծամեծ իշխանքն հայոց շինեցին վանորայք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, որոց ականատես եղէ գրելով յայս գիւրաքանչիւրսն յականէ յանուանէ, Վենետիկ - Ս. Ղազար, 1896:

² Տե՛ս Ինձիճեան Ղ վրդ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հտ. Բ, Վենետիկ - Ս. Ղազար, 1835, էջ 199-201: Վասն վանորէից, որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ, յԱզաթանգեղեայ պատմութենէն, որ էր դարապետ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, հրատ. Հ. Ղ. Ալիշան, «Բազմավէպ», 1882, էջ 23-26:

արժեքով հայ մատենագրութեան չափազանց կարելոր սկզբնադրիւրներից է: Տուցակին կցուած յիշատակարանում պատմուող դէպքերի մասին այլ աղբիւրներում պահպանուած գուգահեռ փաստերի հիման վրայ փորձ է արուել նաեւ հաստատելու յիշեալ ցուցակի վաւերական լինելու եւ գիտական մեծ կարելորութիւն ունենալու հանգամանքը եւ այն, ի տարբերութիւն նախկինում VII կամ VIII դարերով թուագրելու աւանդոյթին՝ վերագրելու VI դարի 70-ական թթ.:

Անաստասի երկի հրատարակութիւնը Ալիշանին ներշնչեց այն վստահութիւնը, որով նա ձեռնամուխ եղաւ հայերէն թարգմանելու ծագումով հայ արաբ մատենագիր Աբուսահլ Հայի (Աբու Սալիի ալ-Արմանի, XII-XIII դդ.) աշխատութիւնը, որտեղ հեղինակը գրել է Եգիպտոսի եկեղեցիների ու վանքերի 1170-1208 թթ. պատմութիւնը՝ տեղեկութիւններ հաղորդելով հայերի, ինչպէս նաեւ դպտիների, լիբիացիների, արաբների, նուբիացիների մասին³:

Իրականում հայ գաղթավայրերի նկատմամբ Ալիշանի հետաքրքրութիւնների շրջանակը շատ աւելի համապարփակ է: Այսպէս, 1896 թ. Ալիշանը հրատարակում է «Վամենից, տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ՝ հաւաստչեայ յաւելուածովք»⁴ աշխատութիւնը, որը ներառում էր Վամենեց-Պոդոլսկում (այժմ՝ Ուկրաինա) եւ լեհահայ համայնքում ստեղծուած ժամանակագրութիւնների հաւաքածոյ եւ ընդգրկում էր 1430-1672 թթ. իրադարձութիւնների մասին հայերէն և հայատառ դիչաղերէն նիւթերը:

1896-ին նա տպագրութեան է յանձնել «Հայ Վենետ» կարելորագոյն աշխատութիւնը⁵: Այն երկու «եղանակով», ընդգր-

Ալիշան Հ. Ղ., Վասն Վանորէից որ ի Ս. քաղաքին Երուսաղէմ, ըստ նախնեաց մերոց, Վենետիկ-Ս. Ղազար, 1896, էջ 5-13:

³ Ալիշան Հ. Ղ., Աբուսահլ հայ. պատմութիւն եկեղեցեաց եւ Վանորէից Եգիպտոսի, Վենետիկ, Ս. Ղազար, 1895: Հայաստանում, Վենետիկ, 1901, մաս 1, էջ 121:

⁴ Ալիշան Հ. Ղ., Վամենից, Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ հաւաստչեայ յաւելուածովք, Վենետիկ, Ս. Ղազար, 1896:

⁵ Ալիշան Հ. Ղ., Հայ Վենետ, կամ յարբնչութիւնք հայոց եւ վենետաց ի ԺԳ եւ ի ԺԵ - Զ դարս, Վենետիկ, Ս. Ղազար, 1896:

կում էր վենետկահայոց պատմութիւնը՝ սկսած հայոց Ռուբինեան թագաւորութեան շրջանից մինչեւ XV-XVI դդ.: Ալիշանն այստեղ փոքր անդրադարձ է ունեցել նաեւ XVII-XVIII դդ. նախատեսելով գրել 3-րդ եղանակը, որն այդպէս էլ չիրականացաւ: Այս վերջին եղանակի հսկայածավալ նիւթը ձեռագիր վիճակում տարբեր տուփերի մէջ եւ հետեւեալ անուններով՝ «Կտակք», «Վաճառականք», «Նոտարականք», «Գերաքք», «Շահրիմանք», «Ս. Խաչ» եւ այլն, պահուում է Ս. Ղազարի Մխիթարեան միաբանութեան Հ. Ղ. Ալիշանի անձնական դիւանում, որի ցանկագրման աշխատանքներին մասնակցել էմ 1994-1995-թթ. Հ. Սահակ Ճեմճեմեանի յանձնարարութեամբ:

Հ. Ղ. Ալիշանի խնդրանքով 1851 թ. մարտի 1-ից 21-ը Հ. Անանիա Ճելալեանը խնամքով արտագրել է Հռոմի Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցու եւ հայոց հիւրատան արձանագրութիւնները, որոնք տեղ են գտել Ս. Ղազարի մատենադարանում 2746 համարի ներքոյ: Դրան կցուած են նաեւ եկեղեցու յատակագիծն ու տապանաքարերի տեղադրութիւնը:

Իր պատմա-տեղագրական աշխատութիւններում Հ. Ալիշանը չէր պատկերացնում հայաշխարհի պատմութիւնը հայ գաղթօջախներից գատուած: Այս տեսակետից ուշագրաւ է նրա «Միսական» հատորը⁶: Բաւական է թուարկել երկրագնդի այն տեղանունները, ուր կարելի է հետեւել սիսականցիներին՝ «Հայք ի Սուրաթ» եւ «Հայք ի Ագրայ», «Հայք ի Չինաստան» եւ «Բուխարայ» եւ վերջապէս «Հայք ի Ճեմբոն»:

Ալիշանի դիւանում առկայ է նաեւ մի ձեռագիր, որը չի վրիպել հայ գաղթօջախներով զբաղուող մասնագէտների աչքից: Այն անվերնագիր է, բաղկացած է Ա3 չափսի 550 էջերից, շատ յաճախ՝ երկկողմանի (դարձերեսով), որոնք հիմնականում երկսիւնակ են: Մի սիւնակում Հ. Ալիշանը արտագրել է տուեալ գաղթօջախի մասին բնագրային տեքստը, իսկ կողքի սիւնակը յատկաց-

⁶ Ալիշան Հ. Ղ., Միսական, տեղագրութիւն Միսնեաց աշխարհի, Վենետիկ, Ս. Ղազար, 1808:

րել է կարճ համառոտումներին եւ բնագրային տուեալներին՝ նշելով հեղինակին, գրադարանային կամ արխիւային միաւորը:

Այս ծաւալուն աշխատութեան առիծի բաժինը, շուրջ 290 էջ, իհարկէ, նուիրուած են Իտալիայի հայ գաղթօջախներին, ինչպէս նաեւ Միցիլիային ու Մալթային, որոնց հեղինակն անդրադարձել է հնարաւորինս հանգամանօրէն՝

Պերուջիա	Ջենովա
Լիվոռնո	Պադուա
Բոլոնիա	Մատերա
Անկոնա	Կուպպիո
Պիստոյա	Նարդո
Կավա	Հոռոմ
Լուկկա	Ռիմինի
Պիզա	Ռավեննա
Պարմա	Պալերմո
Միլան	Ֆայենցա
Պավիա	Ֆերարա
Նեապոլ	Ֆորլի

Հ. Ալիշանի մանրագիր ձեռագրին կցուած են նաեւ մեծաթիւ նամակներ հայ եւ օտար անձանցից, որոնք, ի պատասխան իր խնդրանքներին, տարբեր քաղաքների գրադարաններից եւ արխիւներից, իրենց ուժերի ներածի չափով, համապատասխան նիւթեր են ուղարկել: Ալիշանի յանձնարարութիւնները շատ յաճախ մարդկանց մօտ ոգեւորութիւն ու հետաքրքրութիւն էին առաջացնում հայաշխարհի նկատմամբ, իսկ վարդապետի պրոֆեսիոնալ մօտեցումը նրանց պարտաւորեցնում էր հնարաւորինս լրջօրէն ու նոյնքան արհեստավարժութեամբ մօտենալ Հ. Ալիշանին հետաքրքրող որեւէ հարցի: Մա որքան վերաբերում էր հայերին, նոյնքան էլ օտարներին:

Լինէր դա նկարիչ Արշակ Ֆեթվաճեանը, Հայր Մեսրոպ Ուղուրլեանը, Հայր Պատրուբանեանը եւ կամ Ֆրանսիայի, Գերմանիայի, Աւստրիայի, նոյն իտալական քաղաքների գրադարանների եւ արխիւների բարձրաստիճան հոգեւորականներն ու մասնագէտները:

Փորձենք մանրամասն դիտարկել Հ. Ալիշանի հաւաքած նիւթերից որոշ բաժիններ՝ դրանք ներկայացնելով իրենց հետագայ գիտական զարգացման մէջ:

Սոյն յօդուածում կ'իտուսափենք գաղթօջախների նկարագրութեանն ու պատմութեանն անդրադառնալուց, մանաւանդ որ հեղինակն ինքն իր առջեւ այդ խնդիրը չի դրել եւ առաւելապէս ուշադրութիւն կդարձնենք Հ. Ալիշանի յիշեալ ձեռագրի կառուցուածքին եւ բովանդակութեանը՝ հիմնուելով երկու՝ **Պերուջիայի** եւ **Լիվոռնոյի** գաղթօջախների օրինակի վրայ:

Պերուջիայի մասին, բացի XVII դ. հնատիպ տպագիր գրականութիւնից⁷, Ալիշանն ուսումնասիրել է նաեւ քաղաքային արխիւի ձեռագիր նիւթերը:

Նիւթերի պատճենները, որոնք նա ստացել է համապատասխան թղթակիցներից (ծանօթ կամ անծանօթ, յայտնի կամ ոչ այնքան, հոգեւորական կամ աշխարհական), իր ձեռագրով արտագրուած, կցուած են աշխատութեանը:

Պերուջիայի հայոց մասին աղբիւրների հաւաքագրման առիթով նշենք, որ վերջերս հրատարակուել են Հ. Ալիշանի թղթակցութիւնները, ուր, ի թիւս այլ նամակների, Հայր Յովի. վրդ. Թորոսեանին 1888 թ. նոյեմբերի 12-ին յղած իր նամակում Ալիշանը խնդրում է «...հանդիպել ի Բերուճիա եւ ... քննելի է ճաշոց կամ Թուղթք Պողոսի հայ ձեռագիր որ գտանի ի հասարակաց մատենադարանին, ունիմ գլխատակարանն մաշեալ եւ պակասաւոր, յայտնի յիտալական հիւրատան միում Հայոց գրեալ, այլ ոչ անուն քաղաքին եւ ոչ թուականն, միայն եկեղեցին Ս. Ստեփանոս: Արդ խնդիրս է ծայր ի ծայր թղթատել զմատեանն

⁷Տե՛ս օրինակ Pellini Pomp., Dell'Historia di Perugia; 1664; Crispolti Cesare, Perugia Augusta. 1648; P. Ciatti Felice, Delle Memorie, Annali, et istoriche delle cose di Perugia. 1638; Siepi, Descrizione di Perugia. (1882); Mariotti Annibale, Orsini Baldassare, Lettere Pittoriche Perugine, Perugia, 1788:

և խուզել, գտցի՞ արդեօք այլ ինչ յիշատակ՝ սուղ կամ երկար, կամ ո՞րքան հին և ո՞րոյ դարու համարիցի. միս էս քննելի է տապանաքար Թովմայի Հայոց եպիսկոպոսի (վախճանելոյ) 1385 և թաղելոյ ի Ս. Մատթէոս եկեղեցւոջ արտաքոյ քաղաքին...»⁸: Մի այլ նոյն Հ. Յովհ. վրդ. Թորոսեանին 1891 թ. նոյեմբերի 1-ին ուղղուած նամակում գրում է. «Բայց թերես պիտանի են քան զայդ իցեն խոստացեալ գրուածք Մարիտորի հեղինակին ձեռագիրքն, իմ ընթերցեալ է զտպագրեալ ինչ գիրս նորա նշանակեմ աստանոր և այլ քանի մի հեղինակս գրողս զիրացս գոր խնդրեմ, և ևն

- 1) Balestrini Ales[sandro]. - Memorie sulla erezione della Chiesa di Perugia.
- 2) Belforti. - Serie de' Vescovi di Perugia
- 3) Perugia Sacra. - Annali della Chiesa Perugiana, ցամն 1591.
- 4) Mariottelli. - Catalogo dei Vescovi [di Perugia]....

Պատճառ փափագելոյ պատկերաց կամ տեսարանի եկեղեցւոյ կամ մատրան Ս. Մատթէի, ոչ զարմանալի կամ նշանաւոր ինչ լինել է զի գրեաթէ ամենայն եկեղեցիք Հայոց յայլեայլ քաղաքս Իտալիոյ կամ աւերեալք են կամ իսպառ այլափոխեալք, և դա միայն (կամ գրեթէ միայն մնացեալ է, և խիթալի է և աւեր նորա, վասն որորոյ փութալի թուեր ինձ գոնէ զկերպարանս նորա զերծուցանել ի կորստենէ: ...»⁹

Այս փաթեթում գտնում ենք նաեւ Արշակ Ֆեթվաճեանի՝ 1888 թ. հոկտեմբեր 19-ի նամակը՝ Բարսեղեան միաբանութեանը պատկանող հայոց Ս. Մատթէոս և Ս. Բառնարաս XIII դ. մատուռի մանրամասն նկարագրութեամբ և վիմագրերի պատճէներով: Մարդոստայններով պատուած մատուռի ներսում Ֆեթվաճեանը տեսնում ու պատճէնում է նաեւ Ս. Գեորգի և Ս. Սարգսի մասամբ վնասուած որմնանկարները: Յիշարժան է Հ. Մ. Ճանաչեանի ակնարկը Ալիշան գիտնականի և Ֆեթվաճեան

⁸ Ալիշան Հ. Աետոյ, Նամականի, (Աշխատասիրութ. Հ. Վահան Ծ. Վրդ. Օհանեանի), հտ. 2 (1871-1889), Երևան, 2021, էջ 643:

⁹ Նոյն տեղում, հ. 3 (1890-1901), Երևան, 2021, էջ 68-69:

նկարչի մասին, որին վարդապետը հարկ է համարել անդրադառնալ առանձին յօդուածով:

«Եթէ Ֆեթվաճեան եղած է սիրահար նկարիչ մը հայկական յուշարձաններու, պատմական յիշատակներու, սիրահար ձեռագրական արուեստի, նկարներու արտասպումներուն՝ այդ կը պարտի Ալիշանին, որ դրոշմած է անոր երիտասարդ ու խանդավառ հոգւոյն մէջ՝ սերը դէպի հայկական հին արժէքները, կիսաւեր և կամ փլած յիշատակարանները, ճարտարապետական կոթողները»¹⁰:

Ալիշանը այս եկեղեցւո մասին համապարփակ տեղեկութիւնները հաւաքել է նաեւ իտալական տեղագրական գրականութիւնից, հնագոյն «Աննալներից»¹¹:

Ձեռագրին կցուած է նաեւ Պերուջիայի քաղաքային գրադարանի զլիսաւոր գրադարանավարի նամակը՝ որով վերջինս մերժում է երկար ժամանակով ձեռագիր տրամադրել Ալիշանին:

XX-XXI դարերում Լեւոն Արքեպիսկոպոս Ջեքիեանի և դոկտոր Գաբրիելա Ուլուհոջեանի մեծագոյն ջանքերով ստեղծած իտալական հայագիտական դպրոցը հսկայական գործունէութիւն է ծաւալել Ալիշանի սկսած իտալահայ համայնքների ուսումնասիրութիւնը գիտական խոր հիմքերի վրայ դնելու և զարգացնելու համար¹²:

¹⁰ Ճանաչեան Հ. Մ., Արշակ Ֆեթվաճեան և Հ. Ալիշան, «Բազմալէպ», 1948 (3-4), էջ 82-87:

¹¹ Տե՛ս օրինակ Bini Vincenzo, Memorie storiche della Perugia Università: ..., Vol. 1, parte 1. Perugia, 1816; Bini Vincenzo, Annale Decemvirale an. 1400, fol. 148, p.188; Mariotti Annibale, Storia Civile ed Ecclesiastica della Citta di Perugia divisa per le cinque porte Mss., Istoria ecclesiastica della Città di Perugia divisa per le cinque porte Mss. Bibliografia Storico-Perugina, o sia Catalogo degli Scrittori... Perugia, 1772; Muratori Lodovico Antonio, Antiquitates Italicae medii aevi, vol. VI. col. 7, 9, 1738; Orsini Baldassarre, Guida al forestiere per l'augusta città di Perugia, Perugia, 1784:

¹² Առաւել զարգացնելով ու խորանալով Պերուջիայի հայոց պատմութեան քննութիւնը՝ Լեւոն արքեպիսկոպոս Ջեքիեանը Հայ արուեստին նուիրուած առաջին միջազգային գիտաժողովի առիթով հրատարակած Իտալիայի հայ զաղթօջախներին նուիրուած իր ծաւալուն յօդուածում (Zekiyani B. L., Le colonie armene del Medio Evo in Italia e le relazioni culturali italo - armene (Materiale per la Storia degli Armeni in Italia), in «Atti del I

Հայերի ներկայութիւնը **Լիվոռնոյում** հաստատուում է XVII դարասկզբից: Սակայն նրանց իրաւական եւ տնտեսական գործունէութեան մասին կարելի է խօսել նախ Կոզիմո I դուքսի 1551

Simposio Internazionale di arte armena». (Bergamo 1975), Venezia 1987, pp. 803-946. spec. pp. 865-870; նաեւ Հայ գաղթաշխարհի պատմութիւն, Եւրոպայի հայ գաղութները, Իտալիա, Պերուջիա, Երևան., 2013, էջ 35-36), յօդուածում, օգտագործելով ինչպէս Հ. Ալիշանի, այնպէս էլ յետագայ բազմաթիւ մասնագետների բազմալեզու նիւթը, առաւել նոր, զիտական նոր աստիճանի է հասցրել Պերուջիայի գաղթօջախի ուսումնասիրութիւնը: Նրա աշակերտներից Ջուստո Տրահինան իր «Միջնադարեան Պերուջիայի հայերին ներկայացնող նիւթերը» յօդուածում (**Traina G.**, *Materiali sulla presenza armena nella Perugia Medievale.- Ad limina Italiae.* Padova 1996, p. 97-113.). առաւել հանգամանօքէն է ուսումնասիրել այդ գաղթօջախը՝ հրատարակելով նաեւ Ս. Մատթէոս եւ Ս. Բառնաբաս եկեղեցու որմնանկարները եւ արձանագրութիւնները: Ջ. Տրահինան անդրադարձել է նաեւ Պերուջիայի գրադարանում պահուող վերը նշուած ձեռագրին, որից մի հատուած ժամանակին Հ. Ալիշանը նամակով ստացել էր: Պերուջիայի Ս. Մատթէոս եկեղեցու պատմութեան մասին տե՛ս նաեւ **Casagrande Giovanna.** *S. Matteo degli Armeni nel contesto insidiativo-religioso di Perugia (secc. XIII-XV).* - *Ad limina Italiae.* Padova 1996, էջ 115-127: Նշենք նաեւ, որ Ս. Մատթէոս եւ Ս. Բառնաբաս եկեղեցու քահանայ տէր Յովհաննէսի խնդրանքով, 1279 թ. Կիլիկիոյ Լեւոն 2-րդ արքան 1230 թ. արտագրուած մի ճաշոց է ուղարկել որպէս նուէր, որն այժմ պահուում է Հռոմի Լեւոնեան վարժարանի գրադարանում (**Ալիսնեան Ն.**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Հռոմի հայոց հիւրանոցի ի Ս. Վլաս եւ քահ. Լեւոնեան հայ վարժարանի, Վիեննա, 1961, էջ 54: Zekiyan B.L., *Le colonie...*, p. 865.): Դոկտ. Գաբրիէլա Ուլուհոջեանին պարտական ենք ողջ Իտալիայի, այդ թում նաեւ Պերուջիայի հայ ձեռագրերի ցանկագրման եւ նկարագրութեան համար (**Սլուհոջիան Գ.**, *Catalogo dei manoscritti armeni delle biblioteche d'Italia*, Ist. Poligrafico dello Stato, 2010). Նշենք նաեւ, որ վերջերս Բուրնիայի համալսարանի հրատարակչութիւնը Գ. Կիլպէն-կեան հիմնադրամի աջակցութեամբ տպագրել է **Sirinian A., Tinti I.** "Tracce armene nella Biblioteca Universitaria di Bologna e in altre biblioteche d'Italia". (Bologna, 2021) հատորը, ուր տեղ են գտել իտալական զանազան գրադարաններում պահուող եւ հայոց հետ առնչութիւն ունեցող ձեռագրական, քարտէզագրական եւ տպագիր նիւթեր (հատորը նուիրւած է Գ. Ուլուհոջեանի յիշատակին, ուր հրատարակուել են նաեւ վերջինիս երկու անտիպ յօդուածները):

թ. հրովարտակից յետոյ միայն, երբ վերջինս արտօնութիւններ շնորհեց արեւելքից եկող վաճառականներին՝ այդ թում հայերին ու պարսիկներին, հրաւիրելով նրանց Լիվոռնո եւ Ֆլորենցիա՝ երկրամասի տնտեսութիւնը խթանելու նպատակով: Այս որոշումը յետագայում վաւերացուեց 1591-ին, ապա՝ 1593-ին¹³:

Լիվոռնոյի հայ գաղթօջախի նիւթերը Հ. Ալիշանը սկսել էր հաւաքել շատ վաղուց, եւ դրանք հիմնականում ամփոփուած են նրա այլ աշխատութիւններում, օրինակ՝ «Կտակք», «Վաճառականք», «Հայ-Վենետ», «Գերակք» եւ այլն: Գաղթօջախներին նուիրուած իր այս հաւաքածոյում նա հիմնականում զետեղել է Լիվոռնոյի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցու շինութեան հետ կապուած փաստաթղթերի կորպուսը՝ դրանք հաւաքելով թե՛ օտար գրականութեան տուեալներից¹⁴, թե՛ նոտարական ու դիւանագիտական փաստաթղթերից եւ թե՛ հոգեւոր ատեանների նիւթերից:

Հ. Ալիշանի յանձնարարութեամբ, այս գործում նրան մեծ աջակցութիւն է ցոյց տուել յատկապէս Հ. Մեսրոպ Ուղուրլեանը, որն այդ շրջանում Լիվոռնոյի ժողովրդապետն էր: Սակայն Հ. Ուղուրլեանից բացի բազմաթիւ են նրա թղթակցութիւններն այս գաղթօջախի մասին նիւթերն ամբողջացնելու համար:

Առաջին 1689-ով թուագրուած փաստաթուղթը, որն ընդօրինակել է Յովհ. վրդ. Նուրսիսեանը, վերաբերուել է եկեղեցու

¹³ "In effetti, nel privilegio ai mercanti levantini del 1551 insieme ai Greci . ai Turchi . ai Mori . agli Ebrei Cosimo I invita Armeni e Persiani a trafficare a Firenze e nello stato ". probabilmente anche in considerazione dei loro legami con la Chiesa ...". Տե՛ս Fischer Lucia Frattarelli, *Per la storia dell'insediamento degli Armeni a Livorno nel seicento* յօդուածը. *Gli Armeni lungo le strade d'Italia: Atti del convegno internazionale* (Torino. Genova. Livorno, 1997). Pisa-Roma, 1998, p. 23. Հեղինակը հղում է "Bando in Beneficio de' Mercanti Forestieri" in *Archivio di Stato di Firenze. Pratica segreta di Firenze.* 186. cc. 94v.-95v. 16 giugno, 1551; *Magistrato Supremo*, 4308. c. 128 r. in data 13 nov. 1551.

¹⁴ Տե՛ս **Vivoli Giuseppe.** *Annali di Livorno dalla sua origine sino all'anno di Gesù Cristo.* 1843-1846, vol. 4, pp. 296-301. 344. 349. 353. 358. 359. 368. 571-572. 593 (հիմնարկէք Գր. Լուսաւորիչ եկեղեցու). **Piombanti Giuseppe.** *Guida storica ed artistica della città e dei dintorni di Livorno.* 1873. **Piombanti Giuseppe.** *Compiendo storico popolare della città di Livorno* 1884. *Benedictus Papa XIV "Bullarium"* vol. 4. Roma 1760-1761:

շինութեան համար հայ համայնքի հանգանակութեանը: Այստեղ ներկայ էին Միրման Գերաք եղբայրները, Գեորգ դ'Աբբո Չելեքին, Մուրադիան դի Նազարը, Վրթանէս Քալանթարը եւ այլոք, շուրջ 30 հոգի, որոնք հաւաքել էին 4277 խտալական գուլդէն:

Ապա յաջորդ փաստաթուղթը (1701 թ.) վերաբերում է եկեղեցու շինութեան հոգաբարձուների խորհրդին (թուով՝ 24), որոնք շինութեան պատասխանատու են նշանակել Ադա Մաթոս Օղլանքեշիշեանին (ծագումով՝ Արցախի Հաթերք գիւղից):

Եկեղեցու շինարարութեան հետ կապուած յաջորդ փաստաթղթերում Հ. Ալիշանը յղումներ է կատարում օտար գրականութիւնից, որտեղ յիշում է, որ Լիվոնոյում XVII դարում հայերին պատկանող 27 վաճառատներ կային: Նշենք, որ Հ. Ուղուրլեանն այնտեղ 120-ն էր հաշուել: Ապա յիշում է Մեծ դուքս Ֆերդինանդո Մեդիչին՝ Կոզիմո Մեդիչիի որդին, որը նախագծել էր եկեղեցին եւ նշում էր, որ շինութեան գմբեթը միակն էր, որն աչքի էր ընկնում Լիվոնոյի համայնապատկերում¹⁵: Շինարարութեան վերակացու էր նշանակուել Մարգար Ճլապխանը: Նշում է նաեւ, որ եկեղեցու շինարարութեան հանգանակութեան ժամանակ Միրման 5 եղբայրները (փաստաթղթում՝ «cinque fratelli Mirman di figura semi-colossale») մեծ ներդրում են ունեցել իսկ Ադա Մաթոս Օղլանքեշիշեանը եկեղեցին աւարտին հասցնելու համար նուիրաբերել է 60.000 դուկատ: Եկեղեցու շինարարութիւնն աւարտուել է 1700 թ., իսկ 1701-ի յունուարի 1-ին կատարուել է նաւակատիքը: (Նշենք, որ Ալիշանի հատորում զետեղուած է նաեւ եկեղեցու մանրակերտը՝ հայոց տապանաքարերի տեղադրութեամբ):

¹⁵ Տե՛ս **Vivoli Giuseppe**, *Annali...*, p. 349. Ի դէպ, հարկ է նշել, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայ առաքելական եկեղեցու զեղադիր գմբեթը մինչեւ 20-րդ դ. առաջին կէտը մշտապէս ամենաբարձրն ու երեսացողն է եղել Լիվոնոյի համայնապատկերում: Այն խոնարհուել է Երկրորդ աշխարհամարտի ժամանակ՝ օդային ուժակոծութեան ընթացքում: Եկեղեցուց, որը քաղաքի կենտրոնական փողոցներից մէկի վրայ էր գտնուում, մնացել է սոսկ նրա ճակատային մասն իր հայերէն եւ լատիներէն արձանագրութիւններով ու բարաւորով:

Հետաքրքիր է, որ Հ. Ալիշանն ընդհանրապէս քննական մօտեցում է ցոյց տուել աղբիւրների՝ այս դէպքում Վիվոլիի աշխատութեան մէջ բերուած փաստերին: Նա ճշգրտում է Ս. Դաւիտի¹⁶ մատուցների՝ հայոց ուխտագնացութեան հանդիսաւոր արարողութեանը, որ ամեն տարուայ յունիսի 3-ին էր նշում, ինչպէս նաեւ Ետրկացի Ալէքսանի առաջնորդութեամբ Լիվոնոյից պաշտօնապէս հրաւիրուած 12 հայ հեղինակութիւնների ուխտագնացութեան մասին եղած փաստերը: Նրանց Լիվոնոյից Լուկկա մեկնելու թուականը Ալիշանը ոչ թէ 1668 թիւն է համարում, այլ 1646-ը: Այս վկայութիւնը ճշտելու համար Ալիշանը դիմում է երկու այլ փաստաթղթերի տուեալների: Նախ՝ *Amedeo Saminiati*, *Riflessioni sopra la vita di S. Davino Armeno* (Lucca, 1700), ապա հայ հոգեւորական *Pietro Batista*-ի նամակը, որը ներառուած է ձեռագրի համապատասխան էջերում (1737 թ.): Փաստաթղթերի մէջ գտնում ենք նաեւ յիշեալ տասներկու վաճառականների դիմումը, որով նրանք խնդրում են սրբի մատուցներն իրենց մօտ պահել այնքան ժամանակ, մինչեւ կարողանան փոխադրել Լուկկայի Ս. Միքայէլ եկեղեցու աւագ խորանում դրանք հանդիսաւորութեամբ տեղադրելու համար: Փաստաթղթի խտալերէն թարգմանութիւնը թուագրում է 1646 թ. յուլիսի 30-ով:

Հ. Ալիշանն անդրադառնում է նաեւ մի քանի հոգեւոր-ծիսական սովորոյթների մասին տեղի հոգեւոր իշխանութիւնների հետ համաձայնեցման փաստաթղթերին (1703 թ.), յատկապէս հայոց հին տոմարի փոփոխութեան հետ կապուած հարցերին, որոնց հայ համայնքը կտրականապէս հակառակուում է: Ձեռագրին կցուած է նաեւ հայ համայնքի ներկայացուցիչների կողմից բենեդիկտեան միսիոներներին ուղղուած 1673 թ. շրջաբերական ծաւալուն դիմումի թարգմանութիւնը (1755թ., յուլիս 26):

Ալիշանի մօտ կարճ վկայութիւն ենք գտնում նաեւ Ոսկան Երեւանցու՝ Լիվոնոյում հրատարակչական գործունէութեամբ զբաղուելու նպատակով ապարդիւն այցելութեան մասին

¹⁶ Սրբագործ հայկազն Դաւթի (Ս. Դաւիտի) մասին տե՛ս **Ուղարկեան Մեսրոպ վրդ.**, *Ղատմութիւն հայոց գաղթականութեան ...*, Վենետիկ, 1891, էջ 238-240:

(1662 թ.): Չճագրում գետեղուած է նաև 1643/1644–1701 թթ. ընթացքում Լիվոնոյում տպագրուած հայերէն գրքերի ցուցակը¹⁷:

Լիվոնոյի հայերէն հրատարակութիւնների հետ կապուած զանազան հարցերի մասին յայտնի է Ալիշանի նամակագրութիւնը իտալացի բանասէր, լեզուաբանութեան պատմութեան յայտնի մասնագէտ եւ թարգմանիչ Էմիլիո Թեզայի հետ¹⁸:

Ալիշանը Հայր Մեսրոպ Ուղուրլեանին խնդրել է (այդ մասին են վկայում նրանց նամակները) ցուցակագրել Լիվոնոյի հայոց տապանագրերը: 1881 հոկտեմբերի 1-ի նամակով Հ. Ուղուրլեանը ուղարկել է Լիվոնոյի ա՛յն հայ բնակիչների ցուցակը, որոնց տապանաքարերը գտնուում էին Ֆրանցիսկեան վանատան գաւթում (այժմ անհետացած): Վերջինս նախապէս, նախքան Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցու կառուցումը, ծառայել է հայերին՝ իրենց հոգեւոր արարողութիւնների համար: Դրանք հիմնականում XVII դ. շիրիմներ էին, որոնցից յայտնի էին.

Ագուլեցի Աղաջենց Խաչատուրի որդի Փանոսը
Վանեցի Շիխկանց Միրլայի որդի Նազարը
Երեւանցի Մային Պիկի որդի Ուլուղեանը
Ջուղայեցի Մալումի որդի Յակոբը
Ջուղայեցի Բաշար Ջավարի որդի Մէթին
Ջուղայեցի Միրումի որդի Սեթ Սաֆարը

¹⁷ Լիվոնոյի հայկական տպագրութեանն առանձին յօդուածով անդրադարձել է իտալացի հայագէտ Ալեսանդրօ Օրենզոն: Տե՛ս **Orengo A.**, *Tipografie e stampatori armeni a Livorno: una sintesi.* - Ad Limina Italiae, Padova 1996, էջ 157-190:

¹⁸ Է. Թեզայի մասին տե՛ս **Mazzoni, Emilio Teza.** in Enciclopedia Italiana di scienze, lettere, ed arti. Roma. 1937-XV, XXIII, էջ 757: Տե՛ս նաև **Ալիշան Հ. Ղևոնդ.** Նամականի, (աշխատասիրութ. Հ. Վահան Ծ. Վրդ. Օհանեանի), Երեւան 2020, հտ. Բ., էջ 311, 313, 337-339, 460; հտ. Գ., էջ 163: Տե՛ս նաև Munarini Giuseppe. *Brevi note sulla corrispondenza di Levond Ališan (1820-1901)* al professor Emilio Teza. *Faquadilija*, 2013, N° 1-2, էջ 32-40: **Ohanian V. P.**, *Corrispondenza di Padre Levond Ališan (1820-1901)* al Professor Emilio Teza (1831-1912). «*Բազմավէպ*», 2013, N° 1-2, p. 41-73:

Ապա առանձին ցուցակով Ուղուրլեանը ուղարկել է նաև Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու գաւթի տապանաքարերի արձանագրութիւնների պատճենները.

Դաստակերացի Խոջա բէկի որդի Բաղդասար (1714)
Զմիւռնիացի Աւետիքի որդի Յովհաննէս (1720)
Դիարբէքիցի Աստուածատուրի որդի Մղոսի Կիրակոս (1742)
Եղոկիացի Ալեքսան (1731)
Ղալիանցի տէր Աստուածատուրի որդի Միսիթար (1752)
Ագուլեցի Մկրտիչի որդի Սիմոն
Աբրո Չելեբի որդի Մախսուդ Չելեբու
Անեցի Նազարի որդի Մուրատխան
Համաղանցի Եղայի որդի Մանուկ
Սիւնեցի Գաբրիէլ որդի Պետրոսի Յարութիւնեան
Բաղդաստեցի Ամիր աղա որդի Միքայէլի Դաշտեցի
Թարվեզցի պարոն աղային ի գարմէ իշխանաց Աղվանից Օղլան-քեշիշեանց
Թիֆլիսեցի Պաղտասարի որդոյ տէր Օվանէս քահանային
Թուարկուում են նաև Բաբերդցի, Դաշտեցի եւ այլոց անունները:

Հ. Ալիշանը Հ. Մեսրոպ Ուղուրլեանին առաջարկել է, իր հաւաքած ծաւալուն նիւթի հիման վրայ, մենագրութեամբ լուսաբանել այս գաղթօջախի պատմութիւնը: Այն Վենետիկի Ս. Ղազարի միսիթարեան տպարանում լոյս է տեսել 1891 թ., երբ Հ. Ուղուրլեանն արդէն Կ. Պոլսի Գընալը կղզու հայոց թեմի ժողովրդապետն էր: Այնուհետև «Հանդէս Ամսօրեայ» պարբերականում Ուղուրլեանը հրատարակել է իր՝ Ալիշանի հետ ունեցած թղթակցութեան արդիւնքում կատարած աշխատանքների եւս մի մասը՝ Լիվոնոյի հայոց տապանագրերի արձանագրութիւնները¹⁹:

¹⁹ **Ուղուրլեան Մեսրոպ վրդ.**, Պատմութիւն հայոց գաղթականութեան եւ շինութեան եկեղեցոյ նոցա ի Լիվոնոյ քաղաքի: Հանդերձ յաւելուածով: Վենետիկ, 1891: Ուղուրլեան Մեսրոպ վրդ., Թղթակցութիւն. Հնախօսական

Լիվոռնոյի հայոց գաղթօջախի ուսումնասիրութիւնը եւս, Պերուջիայի նման, ունեցել է իր յետագայ գիտական զարգացումը²⁰:

Այս երկու գաղթօջախների օրինակով ցանկացանք ներկայացնել, թէ ինչպիսի մատենագիտական հէնք է ստեղծել Հ. Ալիշանն իր ձեռագրում՝ Իտալիայի հայոց 25 համայնքների, ինչպէս նաեւ Հունգարիայի, Հոլանդիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Անգլիայի, Հնդկաստանի հայ համայնքներին վերաբերուող նիւթերի շտեմաւորմամբ, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով հետաքրքիր եւ օգտագործելի են հայ գաղթօջախների պատմութեամբ զբաղուող հայ եւ օտար մասնագէտների համար:

Նկատենք, որ ուսումնասիրութեան համար յատկապէս գնահատանքի են արժանի վարդապետի կողմից վաղ շրջանին վերաբերուող աղբիւրների արժեւորումն ու յղումը, դրանց

Լիվոռնոյ քաղաքին ազգային գերեզմանաքարերի, «Հանդէս ամսօրեայ», 1895, 3, էջ 70-75:

²⁰ **Zekiyan B.L.**, *Le colonie ...*, p. 901-902. Ալեասնդրօ Օրենզոն հրատարակել է Հ. Ուդուրլեանի մենագրութեան իտալերեն թարգմանութիւնը՝ առաջաբանով եւ ծանօթագրութիւններով, հարուստ մատենագիտութեամբ. տե՛ս **Orengo A.**, *Storia della colonia Armena di Livorno e della costruzione della sua chiesa (con appendici) traduzione e note di Alessandro Orengo*. Livorno, 1990; Նոյն հեղինակի *Nota sulle iscrizioni armene apposte a due medaglie conservate a Firenze*. pp. 121-126, in *Gli Armeni Lungo le strade d'Italia*. Pisa-Roma. 1998. **Sebouh David Aslanian**, *From the Indian Ocean to the Mediterranean (The global trade networks of armenian merchants from New Julfa)*, Univ. of California press, 2010. pp. 73-75. Տե՛ս նաեւ **Frattarelli-Fischer L.**, *Per la storia dell' insediamento degli Armeni a Livorno ne Seicento* pp. 23-42, in *Gli Armeni Lungo le strade d'Italia*, Pisa-Roma. 1998. Նոյն հեղինակի *Les Arméniens à Livourne*. Roma-Armenia, Roma, 1999, p. 298-301. Նոյն հեղինակի եւ **Castignoli P.**, "Livoumine" del 1591-93, Livoume, 1987. **Ghezzi Renato**, *Mercanti armeni a Livorno nel XVII s.* pp.43-54, in *Gli Armeni Lungo le strade d'Italia*, Pisa-Roma, 1998. **Castignoli Paolo**, *I Mirman a Livorno*, pp. 103-120, in *Gli Armeni Lungo le strade d'Italia*, Pisa-Roma. 1998. **Sanacore Massimo**, *Splendore e decadenza degli Sceriman a Livorno*. in *Gli Armeni Lungo le strade d'Italia*, Pisa-Roma. 1998. **Salvini Manuela di Ghirac**, *Cenni storici. Identità etnica e culturale della nazione Armena di Livorno (sec. XVI-XX)*, Dissertazione Università di Pisa (1992-1993).

խնամքով արտագրութիւնն ու պատճէնումը (ձեռագիր արտագրութիւն կամ լուսանկար), քանի որ դրանցից շատերն այժմ անգտանելի են, կամ պակասաւոր՝ զանազան պատճառներով (պատերազմներ, հրդեհներ եւ այլն):

Գուցէ յարկ է մտածել Մխիթարեան Միաբանութեան հետ միասին այս ծաւալուն աշխատութեան հրատարակութեան մասին եւս՝ ծանօթագրութիւններով, առաջաբանով, ցանկերով, որը, սակայն, քիչ է ասել աշխատատար եւ ժամանակի կարօտ կարող է լինել, բայց նաեւ խիստ կարեւոր՝ հայ գաղթօջախների պատմութեամբ զբաղուող մասնագէտների համար:

ELIZABETH TAJIRYAN
researcher, Armenia

THE MANUSCRIPT OF P. GEVOND ALISHAN ON THE
ARMENIAN SETTLEMENTS AND ITS SOURCES

Keywords: Armenian settlements, P. Ghevond Alishan, manuscript, Perudjia, Arshak Fetvadjian, Livorno, Mesrop Ughurlian, St. Gregory the Illuminator church, armenian tombstones in Livorno.

Father Ghevond Alishan is one of the first Armenologists who, realizing the undeniable role and the significance of the Armenian settlements in Armenian history, paid special attention to their analysis and the organization of primary and secondary source material on their histories.

Among many other printed works and primary documents, his archive contains a thick, untitled manuscript consisting of 550 A3 pages, in which Ghevond Alishan copied foreign and Armenian sources starting from the dates of the establishment of the given Armenian settlement, in addition to making brief summaries, mentioning the authors, the library or the archival data of the source he used. The manuscript contains bibliographic material, including inaccessible information, mainly about Italy, as well as many other Armenian settlements in Europe and India, which are very valuable for scholars working on the history of the Armenian settlements.

ЭЛИЗАБЕТ ТАДЖИРЯН
научной работник, Армения

РУКОПИСЬ ГЕВОНДА АЛИШАНА ОБ АРМЯНСКИХ
ОБЩИНАХ И ЕЕ ИСТОЧНИКИ

Ключевые слова: Армянские общины, Гевонд Алишан, рукопись, Перуджия, часовня св. Маттея и Барнаба, Аршак Фетваджян, Livorno, От. Месроп Угурлян, церковь Св. Григория Просветителя, армянские надгробия в Livorno.

Отец Гевонд Алишан - один из первых арменоведов, который, осознавая неоспоримую роль и значение армянской диаспоры в истории армянского народа, уделял особое внимание изучению и координированию разных источников.

В его архиве среди множества других печатных и рукописных работ по этой теме есть безымянная рукопись, состоящая из 550 страниц формата А3, где Г. Алишан переписал иностранные и армянские оригинальные тексты начиная с периода основания общины, сделал краткие сводки с указанием их авторов, библиотек или архивных единиц. Рукопись содержит библиографические материалы, в том числе недоступные, в основном об армянских колониях Италии, а также о многих армянских общинах Европы и Индии, которые очень ценны для специалистов, занимающихся изучением армянских общин.

К ВОПРОСУ О ПРИСУТСТВИИ АРМЯНСКИХ
МОНАШЕСТВУЮЩИХ В РИМЕ В СЕРЕДИНЕ VII ВЕКА

Ключевые слова: Рим, Латеранский собор, армяне Италии, армянское монашество, армянские монахи, монастырь армян, монастырь Рената, авва Фалассий, армяне-халкидониты, Нарсес.

«Все дороги ведут в Рим!»¹ - говорили в древнем мире. Действительно, «Вечный Град», являлся административным, экономическим, военным и религиозным центром Римской империи. Благодаря этому и Римская Церковь, согласно преданию основанная в I в., пользовалась среди христиан практически непререкаемым авторитетом, а за Римским епископом со временем закрепился статус первого среди равных (primus inter pares) епископов Вселенской Церкви. Не удивительно, что Рим как важнейший центр Христианства был в поле внимания и христиан Армении, и в этом смысле вопрос о существовании армянской обители в кафедральном городе Верховного первосвященника приобретает особую значимость.

Впервые армянский монастырь в Риме упоминается в протоколах Латеранского собора, созванного в 649 г. папой Мартином I (649-653)² при активном участии Максима Исповедника

¹ Пословица дословно отражала реалии, т. к. система дорог Римской империи была построена с центром в Риме, от которого и разветвлялись все остальные магистрали. Относительно системы римских дорог см. **Chevallier R.** Les voies romaines. Armand Colin. 1972.

² В начале своей церковной карьеры Мартин являлся апокрисиарием (представителем) Римского понтифика в Константинополе. После своего избрания на папский престол Мартин стал ярким противником монофелитства – учения об одной воле Христа, получившем большое распространение в христианском мире и ставшем официальным вероисповеданием Константинопольской Церкви. Главным

ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

(580-662)³. Результатом деятельности собора стало осуждение монофелитского указа - «Типа» императора Константа II (641-668) и утверждение учения о двух природных волях и воздействиях (энергиях) Христа⁴. Среди участников Латеранского собора, подписавшихся под его определениями, значится подпись Фалассия, игумена армянского монастыря в Риме. Греческий и латинский тексты⁵ подписи Фалассия гласят:

... Θαλάσσιος πρεσβύτερος καὶ ἡγούμενος τῆς εὐαγοῦς μονῆς τῶν Ἀρμενίων τῆς ἐνθάδε παροικούσης εἰς τὴν ἐπιλεγομένην μονὴν Ῥενάτου...⁶ ...Фалассий – пресвитер и игумен святого монастыря армян, пребывающей/ странствующей⁷ здесь, в монастыре, называемом Ренатовым...

Thalassius abba presbiter uenerabilis monasterii Armenissarum in hac Romana ciuitate constituti qui appellatur Renati⁸... ...Фалассий – авва пресвитер честного монастыря армянок, утвержденного здесь в граде Риме, называемом Ренатовым...

Всего одно предложение, составляющее подпись Фалассия, ставит перед нами вопросы относительно идентификации настоятеля, названия монастыря армян, его состава, времени основания, происхождения насельников.

Прежде всего, кто такой игумен монастыря Фалассий? Никаких дополнительных сведений о нем, к сожалению, не сохранилось. Во всяком случае, следует отклонять его отождест-

Influences on Rome and the Papacy from Gregory the Great to Zacharias, A. D. 590-752, Lexington Books, print. in USA, 2007, с. 134).

⁶ Acta Conciliorum Oecumenicorum sub auspiciis, Academiae Scientiarum Bavaricae edita, Series II, Vol. I, 1984, Berolini (далее: АСО), с. 50. В актах Латеранского собора Фалассий упомянут еще пару раз: см. там же, с. 48, 57.

⁷ Глагол παροικέω означает «жить рядом, обитать по соседству», «населять побережье», «находиться рядом», «переселиться (в качестве чужеземца)» (Дворецкий И. X. Древнегреческо-греческий словарь, т. II. Москва, 1958, с. 1265). В последнем значении παροικέω соответствует армянским глаголам պահնխանանք и պահնխանիմ (см. Նոր Բառգիրք Հայկազգան լեզուի, Կ. Բ. Վենետիկ-Ս. Ղազար, 1887, էջ 595).

⁸ АСО, с. 51.

делом папы Мартина был созыв Латеранского собора, на котором присутствовало 105 епископов, а также монашествующие. Осуждение на соборе монофелитства вызвало острую реакцию императорского двора: папа Мартин был арестован и сослан в Херсонес, где и скончался в 655 г. (см. Kelly J. N. D. The Oxford Dictionary of Popes, Oxford, 1986, с. 77-78). Как святой исповедник папа Мартин почитается в Римо-Католической и Православной Церквях.

³ Выдающийся византийский богослов, философ и аскет. Родился в благородной семье в Константинополе и, получив блестящее светское образование, стал главным секретарем императора Ираклия (610-614). Впоследствии Максим оставил двор и принял монашество. Некоторое время он провел в Африке, после же смерти Ираклия, став во главе антимонофелитского движения, переехал в Рим, где при содействии папы Мартина созвал Латеранский собор. По повелению императора Константа II Максим вместе со своими сподвижниками был арестован. Отказавшись подчиниться императору, Максим был сослан в Абхазию, где и скончался, за свою стойкость в вере получив эпитет «Исповедник». Богатое богословское и философское наследие Максима Исповедника стало предметом особого внимания исследователей в XX в. и продолжается до сегодня. Библиографию трудов Максима и исследований о нем см. Prosopographie der Mittelbyzantinischen Zeit, Band 3, с. 207-217.

⁴ Латеранский собор, направленный против засилья императорской власти в вопросах веры, имел знаковое значение и фактически стал предтечей VI Вселенского собора (Константинополь, 681). О Латеранском соборе подробно см. специальное исследование греческого архим. Пантелеймона Цорбадзоглу: Τσορμπατζόγλου Παντελεῖμων -Γ., ἀρχιμ. Ἡ σύνοδος τοῦ Λατερανοῦ (649). Σύγκλιση μετὰ τὴν σύγκρουση. Θεολογία καὶ πολιτική τῶν 7^ο αἰῶνα, εκδ. «Ελέκταση», Κατερίνη, 2007.

⁵ Как выявило филологическое исследование актов и решений Латеранского собора, они изначально были написаны на греческом, затем переведены на латинский. Сделано это было очевидно одними и те же лицами, которые прекрасно владели греческим, но не латинским, из-за чего латинский перевод текстов не отличается высоким качеством (см. Ekonomou A. J. Byzantine Rome and the Greek Popes. Eastern

вление с известным адресатом Максима Исповедника аввой Фалас-
сием, т. к. последний был ливийцем⁹. Имя Фалассий (от греч.
Φάλασσα – море) или его возможные переводные эквиваленты на
армянском не засвидетельствованы в «Словаре армянских личных
имен» Рачьи Ачаряна. Исходя из того, что данное имя не
засвидетельствовано в армянской действительности, пожалуй
можно предположить, что Фалассий по происхождению был греком.
В пользу этого вероятно, может свидетельствовать то, что Фалассий
упомянут среди прочих трех греческих игуменов и монахов –
«издревле проживающих здесь и недавно прибывших греков» («τῶν
τε πάλαι παροικοῦντων καὶ τῶν ἐκδεδημηκότων ἄρτίως ἐνθάδε
Γραικῶν...»)¹⁰.

В греческой подписи аввы Фалассия стоит Ἀρμενίων, которое
является амбивалентным: это может быть как род. падеж от
Ἀρμένιος (армянин), так и от Ἀρμένια (армянка). Наиболее вероятен
первый вариант, т. к. в известных словарях древнегреческого языка

как античного, так и византийского периода слово Ἀρμένια не
значится. Однако в латинском переводе стоит слово Armenissarum, т.
е. «армянок». Не исключено, что данное слово происходит от
греческого Ἀρμένισσα, т. е. «армянка», хотя в вышеуказанных
словарях это слово также не значится. Таким образом, согласно
латинскому тексту, римский армянский монастырь был женским¹¹.
На наш взгляд, эта двусмысленность по всей вероятности объясняется
тем, что римский монастырь армян был или двойным, или
смешанным¹². К этой проблеме мы еще вернемся в связи с вопросом
о происхождении насельников обители.

В греческой подписи игумена Фалассия сообщается, что
возглавляемая им обитель «пребывала» или «странствовала в
монастыре, называемом Ренатовым», в то время как по латинской
подписи, сам армянский монастырь назывался таковым. Папа
Григорий I Великий (Двоеслов, 590-604)¹³ в своих трудах уже

⁹ См. **Sansterre J.M.** Les moines grecs et orientaux à Rome aux époques byzantine et carolingienne (milieu du VIe s. – fin du IXe s.), vol. I, Bruxelles, 1982, с. 13.

¹⁰ АСО, с. 48. Остальные трое игуменов – это Иоанн из Лавры Саввы Освященного, игумен монастыря африканцев Феодор и игумен монастыря киликийцев Георгий. Последняя обитель располагалась в римском местечке Аквасальвия (там же, с. 50-51). Относительно монастыря киликийцев среди исследователей утвердилось мнение, что речь также идет об армянском монастыре (см. **Ալլոյոյաճևան Ա.**, Պատմություն հայ գաղթականության. Հայերու ցրումը աշխարհի գանձան մասերը. Բ. (Քրիստոսի ԺԱ. դարէն մինչև միջին դարու վախճանը. Գահիրէ, 1955, էջ 592-593. **Աճառյան Հ.**, Հայ գաղթականության պատմություն. Երևան, 2002, с. 683. **Stopka K.** Armenia Christiana. Armenian Religious Identity and the Churches of Constantinople and Rome (4th-15th century), transl. by Bafuk-Ulewiczowa T., Jagiellonian University Press, Kraków, 2016, с. 104). Однако безоговорочное отождествление армян с киликийцами неприемлемо до XI-XII в. т. е. до периода, когда в Киликию последовало массовое переселение армян. В монастыре, что в Аквасальвии – месте, где по преданию был казнен апостол Павел, армянское присутствие несомненно засвидетельствовано в XIII-XIV вв. Речь, в частности, идет об армянских надгробиях – некоего Стефана (1267 г.) и иеромонаха Вардана (1305 г.) (см. **Պալճևան Աղերսանդր արք.** Պատմություն կաթողիկե վարդապետության ի շայս և միութան նոյա ընդ Հռովմական Եկեղեցոյ ի Փրոնենտեան միևնորոյսի, Վիեննա, 1878, էջ 55-56).

¹¹ О. Гевонд Алишан отмечал, что в рукописной традиции встречается также мужская форма Armenopum (помимо женских форм Armenissarum и Armenistarum (см. **Ալիշան Ղ.**, Շնորհալի և Գրիգորի իր. Վիենտիկ-Ս. Ղազար, 1873, с. 177). Однако в критическом издании актов Латеранского собора, осуществленном в 1984 г. Р. Рьедингером, указанные Алишаном разночтения не подтверждаются.

¹² А. Б. Ванькова, резюмируя мнения предшествующих исследователей, определяет двойной монастырь как «два монастыря – мужской и женский, составляющие единое целое (хотя монахи и монахини живут в разных зданиях, обычно разделенных стеной), имеющие единого руководителя, общую экономическую базу и живущие по единому правилу. От двойных предлагается отличать так называемые смешанные монастыри, где мужчины и женщины жили вместе в одном здании» (**Ванькова А. Б.**, К вопросу о статусе так называемых «двойных монастырей» в Византии IV-VI вв.//Вестник Православного Свято-Тихоновского Гуманитарного Университета, Серия II: История. История Русской Православной Церкви, 2018, вып. 83, с. 12).

¹³ Родился в аристократической римской семье и, получив блестящее образование, стал префектом Рима в 572-574 гг. После смерти своего отца Григорий принял монашество и в своем доме на Целийском холме образовал монастырскую общину в честь апостола Андрея. Вскоре Григорий был призван на служение Церкви, несколько лет занимал должность представителя папы в Константинополе. Был рукоположен в епископа Римского в 590 г. Папа Григорий вошел в историю не только как образцовый архиепископ, но и как выдающийся богослов и Отец Церкви

упоминает монастырь Рената, который был посвящен апостолу Андрею и мученице Лукии (Лучии)¹⁴. Кстати, со временем к первоначальному посвящению обители добавилось еще одно – в честь святой Богородицы: так, тот же игумен Фалассий в другом протоколе Латеранского собора обозначается как «Фалассий – Божьей милостью авва (и) пресвитер (монастыря) святой Богородицы и блаженного Андрея» (“Thalassius misericordia dei abba presbyter sanctae dei genitricis, et beati Andreae...”)¹⁵. Что касается названия «Ренатов», то несомненно, монастырь был так назван по имени некоего Рената – по всей вероятности ктитора обители. В этой связи следует отклонить мнение еп. Александра Палчяна и следующего ему еп. Саака Когяна о том, что Monasterii Renati означает «Монастырь возрожденных»¹⁶. Относительно же месторасположения монастыря Рената среди исследователей нет единогласия: так, архиеп. Александр Палчян считает, что он находился вблизи Ватиканского холма, в то время как согласно Санстерру, монастырь возможно располагался юго-восточнее Эсквилинского холма, недалеко от Больших Врат (Porta Maggiore)¹⁷. Кстати, исследуя историю монастыря, Санстерр выявляет, что первоначально это была латинская обитель, известна в частности имя некоего Прова (Probus) – ее первого игумена. Очевидно, что армяне обосновались в Ренатовом монастыре или возле него в

(см. Kelly J. N. D., указ. соч., с. 65-68. Григорий I Великий//Православная Энциклопедия. т. 12, с. 612-635).

¹⁴ См. Святого отца нашего, Григория Двоеслова, епископа Римского. Собеседования о жизни италийских отцев и о безмерности души. Казань. 1858. с. 279. Ср. Leclercq H. Rome: VI des églises de Rome au Moyen Age//Dictionnaire d'Archéologie chrétienne et de Liturgie. T. 14, p. II, col. 2985. Frothingham A. L. Jr. Notes on Byzantine Art and Culture in Italy and Especially in Rome//The American Journal of Archeology and of the History of the Fine Arts. vol. 10. № 2 (Apr.-Jun., 1895), с. 179.

¹⁵ АСО, с. 57.

¹⁶ См. Պալճեան Աղեքսանդր արք., указ. соч., с. 54. Կոզեան Լ. Ս., «Հայոց Եկեղեցին» մինչև Փլորենտեան ժողովը, Պեյրոսթ, 1961, с. 292.

¹⁷ См. Պալճեան Աղեքսանդր արք., указ. соч., с. 54. Sansterre, указ. соч., с. 12.

первой половине VII столетия¹⁸. Итак, относительно времени и обстоятельств появления армянских иночествующих в Риме на данный момент могут быть выдвинуты следующие четыре версии:

- 1) Согласно архиеп. Левону Зекиану, основание монастыря армян в Вечном Граде связано с деятельностью армянских купцов, которые впервые появились в Риме в 30-х гг. VI в.¹⁹

Несомненно, торговля играла важную роль в связях Армении с другими странами, а также в миграционных процессах. В IV-VI вв. два мегаполиса – Двин и Арташат являлись центрами торговли между Византией и Персией²⁰. Примечательно, что в VI в. засвидетельствованы пять торговых маршрутов, проходивших через столицу Двин. Один из них проходил через следующие пункты: Двин-Карин-Колония-Неокесария-Гангра-Анкира-Константинополь-Рим²¹.

Существование данного маршрута безусловно свидетельствует о присутствии армянских купцов в Риме, что в свою очередь делает предположение архиеп. Левона весьма вероятным.

- 2) Присутствие армянских иноков в Риме может быть связано с присутствием армянских воинских подразделений в Италии.

Бедствия, постигавшие Армению в течение византийско-персидских столкновений и войн IV-VII вв. вынуждали армян – не только простой народ, но и знать, мигрировать на Запад – в Малую Азию, Константинополь и т. д. Кроме добровольной миграции,

¹⁸ См. Sansterre, указ. соч., с. 12.

¹⁹ См. Հակոբյան Հ., Հայերը և Գոթալիան, խմբ. Լևոն Զեքիյան, Երևան, 1999, с. 17.

²⁰ Основным восточным продуктом, экспортируемым на Запад через Армению, был китайский шелк и шелковые ткани. Армения вывозила конечно и собственные блага – золото, драгоценные камни, армянскую кошениль (вордан кармир), отборные вина, лечебные травы, коней, верблюдов и т. д. Из Запада на Восток в целом импортировались пшеница, железо, кожные и стеклянные изделия, ткани, папирусы и пр. (см. Манандян Я. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен//Труды, VI, изд. АН Арм. ССР, Ереван, 1985, с. 80-81).

²¹ См. Բսկանյան Վ. Կ., Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ. Երևան, 1991, с. 533-543.

имели место и насильственные: ромейские василевсы, ценя военную мощь и способности армян, переселяли их в разные края империи – аналогично нуждам²². Так, при императоре Юстиниане I (527-567) армянин Нарсес (478-568) наряду с Велизарием являлся величайшим военачальником эпохи. В 552 г. Нарсес во главе армянского военного подразделения Италии разгромил царя готов Тотилу (541-552) и освободил Рим. Три года спустя Нарсес был назначен экзархом (вице-императором)²³ Италии и восстановил Вечный Град, Медиолану (Милан) и Равенну²⁴. В Равенне располагались резиденция экзарха и два отряда армянских всадников. Равеннский квартал, где размещались армянские воины, так и назывался – Армения²⁵. В 625-643 гг. экзархом Равенны был другой армянин – Исаак Камсаракан²⁶. Исаак являлся также главой

²² Как суммирует П. Харанис. «Хорошо известно, что армяне занимали выдающееся место в войсках Юстиниана. Армянские отряды сражались в Африке, в Италии и вдоль восточного фронта. Они занимали видные должности и в дворцовой страже. Прокопий поименно отмечает не менее семнадцать армянских военачальников, включая разумеется и великого Нарсеса» (Charanis P. The Armenians in the Byzantine Empire. Distributors Livraria Bertrand, Lisboa, 1963, с. 16).

²³ Экзархат – автономная административная единица, глава которой – экзарх, концентрировал в своих руках гражданскую и военную власть. Центром учрежденного Юстинианом экзархата Равенна являлась вплоть до взятия города лангобардами в середине VIII в. (см. Lillie R.-J. Εισαγωγή στη Βυζαντινή ιστορία, μεταφρ. από τη γερμανικά Χ. Τσατσοβίλης, εκδ. Χ. Σταυράκος, εκδ. «Πρόδοτος», Αθήνα, 2011, с. 49).

²⁴ Про жизнь и деятельность Нарсеса см. Fauber L. H. Narses, Hammer of the Goths: The Life and Times of Narses the Eunuch. New York, St. Martin's Press, 1991. Brodka D. Narses. Politik, Krieg und Historiographie im 6. Jahrhundert n. Chr., Berlin, Peter Lang, 2018.

²⁵ См. Հակոբյան Հ., указ. соч., с. 13-14.

²⁶ Камсараканы – один из влиятельных феодальных родов Армении (с парфянскими корнями), который правил в Шираке и в других центральных областях Великой Армении с IV в. вплоть до эпохи арабских нашествий. Отбывшие в Византию представители рода отличились на военном поприще. Из них известны трое братьев: Нарсес – дук Фиваиды. Арагий (Հրաշխա) – дук Палестины, и Исаак, казненный Тотилой (см. Աղիշյան Հ. Ղ., Շիրակ. Տեղագրության պատկերացոյց, Վենետիկ-Սբ. Ղազար, 1881, с. 1-6. Toumanoff C. Kamsarakan// Encyclopaedia Iranica, Vol. XV, Fasc. 5, с. 453-455).

армянских полков Равенны²⁷. Его саркофаг, украшенный резьбой и снабженный эпитафией супруги Исаака Сосанны (Шушана), ныне хранится в соборе св. Виталия²⁸.

Итак, имея в виду столь представительное присутствие армянских военных сил в Италии, в частности в Равенне, представляется возможным, что армянские монахи Рима были из числа воинов, прекративших свою службу. Их переезд из Равенны в Рим в этом случае легко можно обосновать желанием подвизаться именно в кафедральном граде, при гробнице апостолов Петра и Павла. Здесь мы должны вернуться к вопросу о двойном характере исследуемой обители. По всей вероятности, ее инокини были овдовевшими женами высокопоставленных армянских военных или просто женского пола членами их семей которые, вслед за отречением от мира глав их семейств, удалялись вместе с ними в монастырь. Именно так может быть объяснена амбивалентность названия монастыря в греческой и латинской версии подписи игумена Фалассия²⁹.

3) Ж.-М. Санстерр в общих чертах связывает прибытие армянских и киликийских монахов в Рим с византийско-персидскими войнами 604-628 гг. и арабскими нашествиями 633-634 гг.³⁰ Развивая и дополняя данную точку зрения, мы

²⁷ См. Bury J. B. A History of the Later Roman Empire. London, Macmillan, 1889, с. 148. Աճառյան Հ., Հայ գաղթականության ցուանություն. Երևան, 2002, с. 683.

²⁸ См. Schoofman E. M. Reassessing the Sarcophagi of Ravenna, Dumbarton Oaks Papers (Harvard University, Washington), № 67, 2013, с. 68). Погосян (Хахбакян) Г. Г. К изучению роли армян в управлении византийскими экзархатами//Регион и Мир, 2015, № 1-2, с. 29-30.

²⁹ Уход всей семьи или людей, связанных узами родства в монастырь был частой причиной для формирования смешанных обителей (см. Ванькова А. Б., указ. соч., с. 22. Ванькова А. Б. «Двойные», смешанные или монастыри-побратимы? О статусе так называемых двойных монастырей в Византии VIII-XV вв.//Вестник Восточного Православного Свято-Тихоновского Гуманитарного Университета, Серия II: История, История Русской Православной Церкви, 2019, Вып. 86, с. 36).

³⁰ См. Sansterre, Les moines, указ. соч., с. 17.

предполагаем, что в этом случае армянские монахи могли прибыть в Рим из Св. Земли.

Приток монахов и паломников из армянских территорий в Палестину начался в IV в., когда при покровительстве царей и нахараров Армении стали строиться армянские обители на Св. Земле³¹. Однако присутствие армянских иноков в Палестине не ограничивалось лишь армянскими монастырями, т. к. большое количество монахов - выходцев из Армении подвизалось и в других палестинских обителях. Так, часть многотысячной братии монастыря св. Саввы Освященного (439-532) составляли монахи армянского происхождения. Армяне состояли и среди братии монастыря св. Феодосия Киновиарха (424-529), причем в обоих обителях они имели право совершать богослужение на родном языке³².

Наше предположение о том, что армянский монастырь в Риме был организован монахами, прибывшими из Св. Земли, подтверждается тем, что монахи Сирии и Палестины, гонимые

³¹ Список этих обителей дошел до нас благодаря армянскому автору 70-х гг. VI в. Анастасу Иерапольскому (см. Անաստաս վարդապետ Հերապոլիտցի Վասն վանքերից որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ (հրատ. Պ. Չորանեան). «Մատենադարան» հ. Ե, Է դ., Երևան, 2005, с. 1271-1279. Ср. Չորանեան Պ., Անաստաս վարդապետի կազմած Երուսաղէմի հայկական վանքերի ցուցակի ժամանակի հարցի շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», 2001, № 1, с. 27-46. Terian A. Rereading the Sixth-century List of Jerusalem Monasteries by Anastas Vardapet/Sion, Mère des Églises. Mélanges liturgiques offerts au Père Charles Athanase Renoux. Semaines d'Études Liturgiques Saint-Serge. Supplement 1/Findikyan M. D., Galadzaand D., Lossky A., Münster. 2016. с. 267-282.

³² Подробнее об армянских монахах и подвижниках Палестины V-VI вв. см. Ղազարեան Գ., Կիրելի Սկիթապոլիսեցու տեղեկութիւնները Ե.-Ձ. դարերի Պաղեստինի հայ վանականների մասին, «Հայկազեան հայագիտական հանդես», 2019, с. 47-56. Казарян Г. Сведения Кирилла Скифопольского об армянских монахах Палестины V-VI вв.//Армения и восточнохристианская цивилизация—III, республиканская конференция, посвященная 70-летию со дня рождения известного армянства-кавказоведа Павла Чобаняна (1948-2017 гг.). Ереван, 17-18 мая, 2018, с. 153-161.

сначала персами, а затем и арабами, действительно находили убежище у папы Римского³³.

4) Прибытие армянских монахов в Рим могло быть следствием событий, имевших место в церковной жизни Армении конца VI-VII вв.

После II Двинского собора 553-555 гг., предавшего анафеме четвертый Вселенский собор (Халкидон, 451 г.) и разорвавшего евхаристическое общение Армянской Церкви со Вселенской, в Армении произошла внутрицерковная схизма на халкидонитов и антихалкидонитов, т. е. – на сторонников и противников Халкидонского собора. В 591 г. когда переговоры между двумя противоборствующими сторонами об объединении провалились, по инициативе Феодора Архифилософа - епископа Карина (Феодосополя), халкидониты организовали свой собственный Католикосат в Аване во главе с Католикосом Иоанном Багаранским³⁴. В это время с трудностью, но при поддержке персов, боролся за свое существование и антихалкидонитский Католикосат в Двине. Эти драматические события разворачивались на фоне жестоких византийско-персидских войн за обладание Арменией. Наконец, в 610 г. персы взяли в плен Католикоса Иоанна и единоличным Католикосом Армении стал антихалкидонит Авраам I Агбатанский (607-615). Согласно «Повествованию о делах армянских», Католикос Авраам «принудил епископов удела Иоанна или предать анафеме Халкидонский собор, или удалиться из пределов Армении. А они, не поддавшись уговорам, ушли: одни - в Тайк, другие в Романию и умерли на чужбине»³⁵ (в греч. оригинале: «Τότε οὐν ἠνάγκασεν ὁ αἰρετικὸς Ἀβραάμ ὁ καθολικὸς τοὺς ἐπίσκοπους

³³ См. Παναγιωτόπουλος Γ. Ο Οἰκουμενικὸς Πατριάρχης Μεθόδιος Α΄ ὁ Ὁμολογητὴς (843-847) καὶ τὸ ἔργο του (διδακτορικὴ διατριβή), Ἀθήνα, 2003, с. 94-95.

³⁴ См. Մովսես Կաթանղուսացի, Պատմութիւն Աղանից աշխարհի. քնն. բնագիրը և ներածութիւնը Վ. Առաքելյանի. Երևան, 1983, с. 267-268.

³⁵ Арутюнова-Фиданян В. А. Повествование о делах армянских (VII в.): источник и время, Москва, 2004, с. 183.

τῶν μερῶν Ἰωάννου ἢ ἀναθεματίσαι τὴν ἐν Χαλκηδόνι σύνοδον, ἢ ἐκχωρήσαι ἐκ τῶν μερῶν Ἀρμενίας· οἱ δὲ μὴ πεισθέντες ἀπεληλύθασιν οἱ μὲν εἰς τὸ Ταίς οἱ δὲ εἰς Ῥωμανίαν, καὶ ἐτελεύτησαν ἐπὶ ξένης»³⁶.

Термин «Ῥωμανία» (по-армянски: Հռոմիք) означает «страна ромеев», т. е. Византию, включая, конечно, и Рим. Таким образом, можно предположить, что изгнанные из Армении иноки-халкидониты частично нашли убежище в Вечном Граде. Это предположение можно аргументировать тем, какое значение имела кафедра апостола Петра в сознании средневековых армян. Достаточно вспомнить то, что согласно Агафангелу, святые Гаяне, Рипсиме и их сподвижницы, мученическая смерть которых стала поводом для обращения Армении, происходили именно из Рима. Немаловажен в этом отношении и пассаж Агафангела о путешествии царя Трдата и Григория Просветителя в Рим и заключении с императором Константином I Великим (306-337) духовного союза³⁷.

В VI-VII вв., в период догматических столкновений на Кавказе, авторитет римского понтифика – первого по чести архиерея Вселенской Церкви, имел важное значение для халкидонитов. Так, патриарх иерусалимский Иоанн IV (575-594) в своем послании к

³⁶ Garitte G. La Narratio de Rebus Armeniae, édition critique et commentaire par G. Garitte//Corpus Scriptorum Christianorum Orientalis, 132 (subsidia tome 4), с. 42.

³⁷ См. Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց (իրատ. Վ. Բրգրաշեան, Պ. Մարտիրոսյան), «Մատենադարան Հայոց», հ. Բ., Ե. դ., Երևան, 2003, с. 1722-1726. La version Grecque ancienne du livre Arménien d'Agathange, édition critique par G. Lafontaine. Louvain-la-Neuve 1973, с. 335-338. Сведения источников относительно этого события в арменоведении в целом рассматривались скептически, однако Р. М. Бартияян показывает, что путешествие и заключение армяно-римского союза действительно имело место, только не в Риме, а в Никомидии (см. Բարթիկյան Հ., «Դաշանց բողոք». Չափմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը, «Պատմա-բանասիրական հանդես», 2004, № 2, с. 76-77). М. Ширинян также отмечает, что в период христианизации Армении действительно существовали духовные связи между Арменией и Римом (см. Շիրինյան Մ., «Սեդրեատրոսի վարքը» և «Դաշանց բողոք», «Բանբեր Մատենադարանի», 17 (2006), с. 76-77). На наш взгляд, вне зависимости от того, насколько правдивы данные источников, значение имеет то, что они тем не менее, определяли собой отношение средневековых армян к кафедре Римского первосвященника.

Католикосу Агванка (Кавказской Албании) Абасу (575-594) призывает адресата оставаться твердым в исповедании халкидонского православия, акцентируя на непоколебимости веры Римской кафедры: «Мы же, т. е. святая Церковь, держим сие слово Господне, сказанное Петру – главе апостолов, при даровании ему главенства непоколебимой веры Церквей: «Ты еси камень, и на сем камне Я созижду Церковь мою, и врата [адовы] не одолеют ее»³⁸. Он вручил Петру ключи небес и земли и до сегодняшнего дня его ученики и учителя Кафолической Церкви следуют ему... особенно же преемники его святого, главного и честного Престола – безошибочно, с правой верой, согласно слову Господню...»³⁹.

Кроме того, видно что сам Римский первосвященник также имел контакты с кавказскими христианами. Так, в 601 г. уже упомянутый выше папа Григорий Великий состоял в переписке с Католикосом Иверии Кирионом I (599-614/616). Это был судьбоносный для Грузинской Церкви момент, когда с одной стороны она боролась против несторианства, а с другой, в условиях острой конфронтации с Двинским Католикосом Авраамом, меняла свою предыдущую антихалкидонитскую позицию на халкидонитскую⁴⁰. Таким образом, в период догматических сомнений, колебаний и конфликтов Римская кафедра, которая и ранее отличалась своей твердой позицией, стала точкой опоры для кавказских халкидонитов. Следовательно, становится весьма вероятной предположение о том, что экстрадированные из Родины армянские иноки – приверженцы IV Вселенского собора, направились именно в Рим, к преемнику ап. Петра.

³⁸ Мф. 16:18.

³⁹ Տե՛ր Մկրտչեան Գարապետ եպս., Երկերի ժողովածու, պր. Ա. «Արարատ»-ի ժամանագությունը, հ. Դ., Սբ. Էջմիածին, 2008, էջ 85.

⁴⁰ См. Կիրիոն կաթողիկոս Վրաց, Պատմութիւն հայ-վրացական յարաբերութեանց եօթներորդ դարու մէջ (քառասնամեայ շրջան Հայոց եկեղեցական պատմութենէն, 574-610), գրեց հ. Ներսէս Ակիմեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1910, с. 182-191.

ՀԱՅ ՎԱՆԱԿԱՆՆԵՐԻ՝ VII Դ. ՀՈՍՏՈՒՄ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻ ՇՈՒՐՁ

Հիմնաբառեր. Հռոմ, Լատերանի ժողով, Բտալիայի հայեր, հայ վանականություն, հայ վանականներ, հայոց վանք, Ռենատի վանք, արքա Թալասիոս, քաղկեդոնական հայեր, Նարսես:

Հռոմում հայ եկեղեցականների ներկայության մասին հնագույն հիշատակությունը վերաբերվում է VII դ. երկրորդ կեսին: Խոսքը Ռենատոսի կամ Հայոց վանքի առաջնորդ արքա Թալասիոսի մասին է, որը մասնակցել է 649 թ. Լատերանի եկեղեցաժողովին:

Թալասիոս վանահոր ստորագրության հունարեն և լատիներեն տարբերակների վերլուծությունը թույլ է տալիս կարծել, որ Հռոմի հայոց վանքի միաբանությունը բաղկացած է եղել այդ և կին վանականներից: Նրանց Հռոմ ժամանումն ու Ռենատոսի վանքում հաստատումը կարող է թվագրվել VII դ. սկզբով, իսկ այդ իրադարձության հանգամանքների վերաբերյալ առաջադրվում են չորս վարկածներ, որոնք թերևս ոչ թե հակասում, այլ փոխլրացնում են միմյանց:

⁴¹ Что касается дальнейшей истории монастыря армян, то известно, что в 681 г. по просьбе императора Константина IV Погона (668-685) папа Римский Агафон (678-681) прислал на VI Вселенский собор в Константинополе игуменов четырех византийских монастырей в Риме, среди которых находился «Георгий - пресвитер и монах Ренатова монастыря, расположенного в Старшем Риме» («Γεώργιος πρεσβύτερος καὶ μοναχὸς μονῆς τῆς Ῥενάτης διακεμένῆς κατὰ τὴν πρεσβυτέραν Ῥώμην»). Последнее упоминание о монастыре Рената относится к концу VIII-началу IX вв., однако неизвестно, были ли в это время в монастыре армянские монашествующие, или уже нет (см. **Leclercq H.**, указ. соч., col. 2985. **Frothingham A. L. Jr.**, указ. соч., с. 179-180). Новый период армянского присутствия в Риме начался в киликийский период армянской истории, но эта тема уже выходит за рамки нашего исследования...

ABOUT THE ISSUE OF PRESENCE OF ARMENIAN
MONKS IN ROME IN 7TH CENTURY

Keywords: Rome, Council of Lateran, the Armenians of Italy, Armenian Monasticism, Armenian Monks, Armenian Monastery, Renatus Monastery, abbot Thalassius, Chalcedonian Armenians, Narses.

The subscription of abbot Thalassius – hegumen and presbyter of Armenian (Renatus) Monastery in Rome in the proceedings of Council of Lateran in 649, is the oldest testimony about the presence of Armenian clergymen in Rome.

The comprehensive investigation of Thalassius's subscription in its Greek and Latin variants lets us to consider, that the convent handed by him, was "double" or "mixed," including both men and women ascetics. The reaching of the Armenian monks in the Eternal City and their settlement in Renatus Monastery refers to the beginning of the 7th century. As regards the historical circumstances, under which that took place, there can be provided four theories, which perhaps complement each other.

REGARDS EUROPEENS SUR LA JERUSALEM ARMENIENNE
PREOTTOMANE

Mots-clés: Mélisende, Saints-Jacques, Caïphe, Mamelouks, Grecs, Géorgiens, Saint-Sépulcre, Mont Sion, Gethsemani, Ein Kerem, Bethléem.

Dès l'imposition du christianisme dans le royaume d'Arménie, Jérusalem n'a cessé d'attirer les Arméniens, qui réussirent à y installer leurs institutions, allant jusqu'à fonder un 'quartier arménien' et à disputer aux autres confessions chrétiennes des parties des Lieux saints.

La première mention connue relative à cette présence remonte à 386 : on la trouve dans une lettre de la sainte romaine Paula, qui cite les Arméniens parmi les peuples de la Ville sainte¹. Peu après, au début du v^e siècle fut créé l'alphabet arménien, et il est intéressant de noter que les premiers alphabets arméniens publiés par des Européens sont le résultat de leur rencontre avec des Arméniens de Jérusalem. Il s'agit, dans les deux dernières décennies du xv^e siècle, de trois Allemands : Bernhard von Breydenbach, évêque de Mayence, Konrad Grünemberg, patricien de Constance et le chevalier de Cologne Arnold von Harff².

Au début du ix^e siècle, dans un rapport commandé par Charlemagne sur les établissements religieux de Jérusalem figurent des monastères arméniens³, mais la véritable découverte de la Jérusalem arménienne par les pèlerins et voyageurs allait commencer au xii^e siècle avec les croisades et la fondation du royaume latin. Leurs récits renferment des renseignements de première main quant à la vie et les possessions des Arméniens de Jérusalem.

¹ *Itinera et Descriptiones Terrae Sanctae*, t. I, T. Tobler (ed.), Genève, 1877, p. 44.

² **Claude Mutafian** (dir.), *Arménie, la magie de l'écrit*, Paris, 2007, 2.3, p. 43, p. 332; Konstanz, Forschungsbibliothek Gotha der Universität Erfurt, Chart. A 541, f^o 78; Gießen, Universitätsbibliothek, Hs. 163, f^o 126v; **Andres Betschart**, *Zwischen zwei Welten*, Würzburg, 1996, p. 47-51.

³ *Itinera Hierosolymitana et Descriptiones Terrae Sanctae*, t. I 2, T. Tobler & A. Molinier (ed.), Genève, 1879, p. 302.

La cathédrale des Saints-Jacques (XII^e s.)

On sait que les deux premières reines de Jérusalem, épouses de Baudouin I^{er} et Baudouin II, étaient des princesses arméniennes, la troisième, la fameuse reine Mélisende (1131-1161), étant donc de mère arménienne.

Vers 1165, peu après le décès de la reine, le clerc allemand Jean de Würzburg visita Nazareth et Jérusalem. « Près de la Tour de David, écrit-il, se trouve un couvent de moines arméniens en l'honneur de saint Saba, abbé très vénéré », et peu après : « Une grande église construite en l'honneur de saint Jacques le Majeur où habitent des moines arméniens, et ils ont là un grand hôpital pour recueillir les pauvres de leur langue. On y conserve encore, avec grande vénération, la tête de cet apôtre. Il avait été décapité par Hérode et son corps avait été mis par ses disciples dans un navire à Jaffa et emporté en Galicie, mais sa tête est restée en Palestine. Cette tête est encore montrée dans cette église aux étrangers qui y viennent »⁴. Il s'agit là de la première mention connue de cette grande cathédrale arménienne des Saints-Jacques, consacrée à la fois à Jacques, frère du Christ, et à Jacques le Majeur, frère de Jean l'Évangéliste. Elle se dresse à l'entrée du quartier arménien de la Vieille Ville, et fait toujours l'admiration des visiteurs. Peut-être y avait-il là un édifice dès le V^e siècle, ou encore une église géorgienne qui aurait été acquise par les Arméniens⁵, mais on n'en a pas de mention précise avant le milieu du XII^e siècle, date de la construction de la cathédrale arménienne actuelle durant le règne de Mélisende. Comme le catholicos arménien Grégoire III avait fait à Jérusalem une visite très remarquée en 1141⁶, il est tentant – même si on manque de preuve explicite – d'imaginer qu'il y ait rencontré la reine de mère arménienne, et que la construction de ce nouvel édifice ait été consécutive à une décision commune de ces deux exceptionnelles personnalités.

Quelques années après Jean de Würzburg, le moine allemand Theodoricus visita longuement la Ville sainte et laissa des renseignements très importants sur les communautés religieuses, en particulier les

⁴ Sandoli, t. II, p. 268.

⁵ **Grigol Peradze.** « An account of the Georgian Monks and Monasteries in Palestine » *Georgica* 2, vol. 4-5, Londres 1937, p. 224.

⁶ Guillaume de Tyr et ses continuateurs, éd. Paulin Paris, t. II, Paris, 1880, p. 74.

établissements arméniens, à ceci près qu'il ignore la cathédrale des Saints-Jacques⁷. Peut-être n'était-elle pas encore suffisamment connue.

Des mêmes années 1170-80 datent les brefs récits de deux visiteurs anonymes. Le premier termine en mentionnant, par erreur, « un monastère des Jacobites où se trouve la tête de saint Jacques », alors que chez le second on lit : « À côté de la Tour de David il y a une chapelle des Grecs (...). Près de là se trouve la chapelle des Arméniens, où fut décollé saint Jacques fils de Zébédée »⁸.

Un siècle plus tard, le dominicain allemand Burchard de Mont-Sion demeura longtemps en Cilicie et nous laissa une précieuse description du royaume d'Arménie sous Léon II. Il revenait de Palestine où il avait fait un long séjour. On lit dans son récit : « Du côté de la Tour de David et du mont Sion se trouve le lieu où saint Jacques fut décollé par Hérode Agrippa », mais sans mention de la cathédrale arménienne. De même, pour la « maison de Caïphe », il ne précise pas qu'il y avait là une chapelle arménienne⁹. En revanche, à la même époque, le franciscain Philippe de Savone écrit : « Ensuite on doit aller au mont Sion, et sur le chemin on trouve l'église de saint Jacques de Zébédée, qui est aux Arméniens. C'est là que fut conservée un certain temps la tête de ce saint Jacques, apportée par des mains angéliques depuis Jaffa où, selon certains, il a été décollé. D'autres, au contraire, prétendent qu'il a été décollé à Jérusalem sur le site même de cette église ; à mon avis c'est plus probable »¹⁰. Cette version de la décapitation à Jaffa est reprise vers 1330 par le missionnaire franciscain Odoric de Pordenone quand il visite « l'église de saint Jacques Zébédée, qui est aux Arméniens »¹¹.

Sous la Jérusalem mamelouke (milieu XIII^e-XV^e s.)

Au milieu du XIII^e siècle les Mamelouks renversèrent les Ayyoubides, et conservèrent l'autorité sur la Syrie et la Palestine durant plus de 250 ans. Ils se montrèrent en gros assez tolérants vis-à-vis des chrétiens, ce qui se reflète dans la multiplication des voyages et pèlerinages en Palestine. Les récits mentionnent souvent les Arméniens, parfois par la

⁷ Sandoli, t. II, p. 328, 334, 354, 356.

⁸ Sandoli, t. III, p. 15, 30.

⁹ Sandoli, t. IV, p. 188.

¹⁰ Sandoli, t. IV, p. 226.

¹¹ **J. C. M. Laurent,** *Peregrinatores Medii Aevi Quatuor*, Leipzig, 1864, p. 150.

description de leurs établissements, mais très souvent au milieu de digressions générales sur les différents peuples de la Ville sainte et leurs querelles permanentes.

Assez complet est le récit du franciscain vénitien Francesco Suriano, qui fit deux longs séjours en Orient, en 1481-1484 puis 1493-1515, avec un intermède d'emprisonnement en Égypte (1510-1512). Son *Traité* inclut comme toujours la description des divers peuples chrétiens du Levant. La « quatrième nation (...) sont les Géorgiens (...), les pires hérétiques, semblables aux Grecs et égaux en malice ». Plus loin : « La cinquième nation qui habite dans l'église du Saint-Sépulcre et y officie sont les Arméniens, nos principaux amis [la traduction anglaise donne par erreur 'ennemis']. Les Arméniens sont des gens très beaux, riches et généreux (...). Ils sont sujets du Sophi [le chah de Perse] et sont ses grands amis et favoris. Ils ont un rite différent des autres chrétiens et appellent Catholicon leur patriarche. Ils sont ennemis implacables des Grecs et des Géorgiens. Ils ont leurs propres lettres et langage ». Suit une description de leurs rites, après quoi : « Bien qu'ils aient promis obéissance à l'Église romaine quand Henri, empereur des Romains, prit leur pays et leur roi fut couronné par l'archevêque de Mayence, ils n'ont jamais abandonné leurs anciens usages, rites et cérémonies ». Ce non-respect de l'accord qui a permis la fondation du royaume d'Arménie cilicienne en 1198 allait être un reproche récurrent dans les récits occidentaux. Le paragraphe se termine par : « A Jérusalem ils habitent au Saint-Sépulcre, à Saint-Jacques et dans les palais et maisons de Anna et de Caïphe, qui sont des monastères à eux. Les Arméniens sont les plus beaux hommes et femmes qui existent à Jérusalem »¹².

Les principaux établissements arméniens visités par les voyageurs se trouvent au Saint-Sépulcre, au mont du Calvaire, dans le quartier arménien et sur le mont Sion, à Gethsemani ainsi qu'à Ein Kerem et à Bethléem.

Au Saint-Sépulcre

Durant des siècles, et encore maintenant, il y eut entre les différentes confessions chrétiennes des luttes épiques quant à la propriété du Saint-Sépulcre, ou plutôt à la répartition de ses diverses composantes. Vers 1175, Theodoricus note qu'en sortant du Saint-Sépulcre, à l'ouest, après une

¹² Francesco Suriano, *Il Trattato di Terra Santa e dell'Oriente*, a cura di G. Golubovich, Milan, 1900, p. 74-76.

montée de trente marches « il y a une chapelle en l'honneur de la Vierge Marie qui appartient aux Arméniens », et sur le parvis du Golgotha, il signale, au sud de la chapelle des Trois Marie, « une autre chapelle propriété des Arméniens »¹³. Plus tard, le moine franciscain toscan Niccolò da Poggibonsi, qui voyagea au Proche-Orient de 1346 à 1350, signale 20 autels dans l'église. « Chacun a son propre prêtre, chaque prêtre célèbre pour son peuple, dans sa langue. Le patriarche des Grecs officie devant l'autel majeur. Au mont du Calvaire ce sont les Arméniens, en bas du Golgotha les Jacobites ; les Indiens et les Éthiopiens ont leur autel à l'arrière du Saint-Sépulcre, ils sont tout noirs, plus que l'encre. À côté sont les Nubiens. Les Latins, plus précisément les Frères mineurs, célèbrent à l'autel de sainte Marie-Madeleine, qui nous appartient »¹⁴.

Un demi-siècle plus tard, c'est encore de Toscane que proviennent treize pèlerins, dont trois ont écrit leur récit. Le plus fameux, Leonardo Frescobaldi, vit les tombeaux de Godefroy de Bouillon et de son frère, ajoutant que « dans cette chapelle officient les Arméniens chrétiens » ; il mentionne ensuite « d'autres chapelles où officient soit les chrétiens francs, soit les chrétiens arméniens »¹⁵. À la fin du siècle, c'est le baron champenois Ogier d'Anglure qui, lors de son pèlerinage, signale, autour du Saint-Sépulcre « quatre belles chapelles », dont l'une appartient aux Arméniens¹⁶. À la même époque, l'archimandrite russe Grethenios écrit : « Outre les orthodoxes grecs et géorgiens il y a encore les maudits hérétiques qui y célèbrent leurs offices : les Latins, les Arméniens sur le Golgotha »¹⁷.

En 1470 le diplomate Anselmo Adorno fit le pèlerinage avec son fils Jean. D'une famille génoise, il était établi à Bruges et fut un homme politique marquant de son temps. Parlant du Saint-Sépulcre : « Les Arméniens ont pour emplacement propre le mont du Calvaire, l'endroit le plus beau et le plus vénéré de l'église. L'un d'eux lisait seul dans un livre à voix haute, en arménien, la passion et la vie du Seigneur. Tous les autres écoutaient avec une attention si intense que plusieurs d'entre eux, hommes

¹³ Sandoli, t. II, p. 328, 334.

¹⁴ Poggibonsi, p. 25.

¹⁵ Pellegrini, p. 205-206.

¹⁶ *Le Saint voyage de Jherusalem du Seigneur d'Anglure*, F. Bonnardot & A. Longnon (dir.), Paris, 1878, p. 30-31.

¹⁷ Khitrowo, p. 173.

et femmes, en étaient venus à pleurer amèrement et à se lamenter à grands cris. Ils m'ont paru plus dévots que les autres »¹⁸.

En 1486, Konrad Grünemberg a noté : « Dans le Temple sacré, les Arméniens ont leur propre chapelle, avec son autel ; on y accède via un escalier près de la chapelle des Abyssins »¹⁹. Un peu plus tard, Arnold von Harff, un chevalier de Cologne, confirme : « Les Arméniens ont une chapelle surélevée où on accède par un escalier à côté des Indiens [Éthiopiens]. Ils y officient et y habitent »²⁰. Peu après, en 1494, ce fut au tour d'un noble milanais, Pietro Casola, d'effectuer un long pèlerinage au Proche-Orient. Visitant la chapelle Sainte-Hélène du Saint Sépulcre, il précise qu'on y descend par de nombreuses marches et qu'elle est « administrée par une autre secte de chrétiens appelés Arméniens »²¹.

Le quartier arménien et la cathédrale

Cela dit, c'est bien sûr le quartier arménien avec sa cathédrale des Saints-Jacques, qui continuait à attirer les visiteurs et pèlerins. Mandaté par le pape Nicolas IV, le dominicain Ricoldo débarqua à Acre en été 1288, et au tout début de sa visite de Jérusalem il parvint « au lieu où fut décollé saint Jacques le Majeur, là est une église, en cette église est un marbre lequel on voit encore tout rouge du sang »²². Il omet de préciser que cette église appartient aux Arméniens. En 1323, le moine franciscain irlandais Symon Semeonis mentionne au mont Sion un « monastère des schismatiques [Arméniens] où ils officient maintenant ; dans cette église se trouve, à ce qu'on dit, la tête du bienheureux apôtre Jacques »²³. La même année eut lieu un pèlerinage de Catalans ; on y lit qu'à partir du mont Sion, « en entrant dans la ville de Jérusalem à un jet d'arbalète se trouvent les propriétés des Arméniens où saint Jacques fut décapité »²⁴. Peu après, en 1335, c'est le frère augustin Jacques de Vérone qui s'embarqua pour la Terre sainte. Il visita, près du mont Sion, « l'église de saint Jacques le Majeur frère utérin

¹⁸ Adomo, p. 270.

¹⁹ Grünemberg, p. 433.

²⁰ Die Pilgerfahrt des Ritters Arnold von Harff, E. von Groote (her.), Cologne, 1860, p. 175.

²¹ Canon Pietro Casola's Pilgrimage to Jerusalem in the Year 1494, by M. Margaret Newett, Manchester, 1907, p. 276.

²² Louis de Backer, L'Extrême Orient au Moyen-Âge, Paris, 1877, p. 264

²³ Girolamo Golubovich, Biblioteca bio-bibliografica della Terra Santa e dell'Oriente francescano, t. III, Quaracchi, 1919, p. 282.

²⁴ Catalans, p. 381.

de saint Jean l'Évangéliste, là où il fut décollé par Hérode Agrippa, j'ai vu le lieu et l'ai beaucoup visité. L'église est belle et grande, tenue par les Arméniens, de vrais chrétiens ; j'y ai vu l'archevêque des Arméniens et lui ai rendu visite »²⁵.

Du milieu du XIV^e siècle date le récit de Ludolf von Sudheim, un clerc originaire de Westphalie. À Jérusalem, « au mont Sion se trouve l'église du Sauveur construite en l'honneur de la transfiguration de Jésus Christ ; pas loin de là il y a l'église de saint Jacques où il fut décollé, dans laquelle il y a un évêque arménien rattaché à l'Église romaine »²⁶, erreur classique remontant, on l'a vu, au couronnement de Léon en 1198. À la même époque, Niccolò da Poggibonsi a intitulé un chapitre « L'endroit où fut décapité saint Jacques le Mineur », une erreur pour 'le Majeur'. On y trouve « une grande porte avec un arc et une petite entrée ; à l'intérieur se trouve une superbe église avec deux petites portes, et à l'entrée une citerne ; au milieu du mur de l'église se trouve une petite tribune avec un très bel autel encastré ; sous cet autel se trouve une grande pierre de marbre rouge. C'est là que fut coupée la tête de saint Jacques le Majeur qui, par un miracle divin, se retrouva le lendemain en Galice »²⁷.

Pèlerin toscan compagnon de Frescobaldi, Giorgio Gucci écrit en 1384 : « Puis il y a le lieu où saint Jacques le Mineur [lire 'Majeur'] fut décapité, ce fut ici et aujourd'hui il y a une église où n'officent pas nos chrétiens, ce sont les Arméniens »²⁸. On trouve des descriptions analogues chez les pèlerins postérieurs, comme Ogier d'Anglure, Girnand von Schwalbach, Anselmo Adorno, ou encore Louis de Rochechouart, évêque de Saintes, en 1461.

Quant à l'archimandrite russe Grethenios, vers 1400, il est très concis : « Les maudits arméniens ont l'église et le tombeau en leur pouvoir »²⁹.

Sur le mont Sion

Vers 1175, Theodoricus signale au mont Sion, près du lieu de la flagellation du Christ et d'une grotte où Pierre avait trouvé refuge, une église

²⁵ ROL, t. III, p. 196-197.

²⁶ AOL, t. II 2, p. 352.

²⁷ Poggibonsi, p. 34-35.

²⁸ Pellegrini, p. 291.

²⁹ Khirowo, p. 175.

« que les Arméniens dirigent »³⁰. Il s'agit de l'église Saint-Pierre, où on plaçait longtemps la maison de Caïphe.

Sur le mont Sion, de l'autre côté de la muraille, s'étend le cimetière arménien, où reposent plusieurs patriarches. Il est gardé par le couvent du Saint-Sauveur. On admet maintenant que ce couvent occupe le site de la maison de Caïphe, qu'on avait longtemps placé plus à l'est, du côté de l'église Saint-Pierre. Les visiteurs de ce couvent ont tous été intrigués par une pierre mythique, dite 'Pierre de l'ange', avec laquelle les anges auraient fermé le Saint-Sépulcre quand le Christ a été mis au tombeau. Elle fut brisée lors des ravages des Khwarezmiens en 1244, mais un fragment a été transporté par les Arméniens dans la maison de Caïphe.

Au milieu XIV^e siècle, Niccolò da Poggibonsi consacre un chapitre de son voyage au mont Sion, où « toutes les maisons sont en ruines, et à droite se trouve un petit endroit dont les frères arméniens ont la garde (...). Il y a à droite l'église du Saint-Sauveur, belle et dévote, à gauche sont les logements des dits frères. L'église est carrée, l'autel étant à l'est, avec une pierre si grande que cinq paires de bœufs ne peuvent pas la tirer »³¹. À la même époque, un dominicain, probablement originaire d'Italie méridionale, parle aussi de cette pierre, dont une partie se trouve « dans le mur du Saint Sauveur au mont Sion où sont les Arméniens »³². À la fin du siècle, un pèlerin écrit : « De même une église des Arméniens, où il y a une pierre renversée du côté d'une porte monumentale, et là est la prison du Christ ainsi que la colonne à laquelle il a été attaché la nuit où il fut conduit devant Anne et Cayphe, car c'est là que se trouvait leur maison »³³. Vers 1400, on lit sous la plume de l'archimandrite Grethenios : « Un peu plus loin est situé un autre couvent de ces mêmes maudits Arméniens, près du Saint Sion »³⁴.

Suite à la bataille d'Ankara, Johannes Schiltberger passa de la captivité ottomane à celle de Tamerlan. Il voyagea beaucoup, en particulier à Jérusalem vers 1410. « Si on veut accéder à la montagne de Sion, on y va par une petite rue dans laquelle il y a l'église Saint-Jacques. Non loin de là où Marie vécut et aussi mourut, il y a une église. Quand on sort du mont

Sion il y a une chapelle où se trouve la pierre qui fut roulée devant le Saint-Sépulcre »³⁵.

Peu après, on lit dans le récit de Jean Poloner, au sujet de la maison de Caïphe au mont Sion : « Il y a une petite église appelée chapelle du Sauveur, pour une bonne raison : au-dessus de l'autel de cette chapelle se trouve une grande pierre qui scellait l'entrée de la tombe du Christ (...). Cette chapelle appartient aux chrétiens arméniens »³⁶.

En 1461, Louis de Rochechouart écrit : « Du couvent des frères du mont Sion à la maison de Caïphe il y a vingt-cinq pas. Cette demeure est tenue par les Arméniens catholiques [erreur classique]. Là se trouve une chapelle renfermant, dans le grand autel, une pierre sacrée (...). Les Arméniens ne permettent l'entrée à personne afin de ne pas la briser »³⁷.

De 1488 date le récit du voyage en Palestine du dominicain Felix Fabri. Dans sa description de l'église du Saint-Sauveur, en dehors des remparts du quartier arménien, il trouva la pierre sacrée surveillée par « des moines arméniens très pauvres qui n'étaient pas en mesure de maintenir l'église et le monastère en leur état (...). Or, cette année-là vint à Jérusalem un Arménien très riche qui fit reconstruire l'église et le cloître en ruines et offrit une main secourable à ces pauvres moines »³⁸.

À Gethsemani

On sait que la reine Mélisende, de mère arménienne, a été enterrée à Notre-Dame de la Vallée de Josaphat, où se trouve le cénotaphe de la sainte Vierge. Plusieurs voyageurs mentionnent son tombeau. Ainsi, vers 1420, Jean Poloner écrit brièvement : « Dans cette sépulture repose la reine Mélisende, qui a fait construire cette église »³⁹. Plus tard, le dominicain Felix Fabri voyagea en Palestine dans les années 1480 : « Là est le précieux sépulcre en marbre blanc et poli dans lequel est enterrée la vénérable reine Mélisende, qui a fait édifier cette église »⁴⁰.

En 1323, des pèlerins catalans parvinrent à une église « qui a nom Gethsemani (...). En ce lieu/ il y a trois autels et une église fort belle où

³⁰ Sandoli, t. II, p. 354.

³¹ Poggibonsi, p. 35.

³² ROL, t. I, p. 350.

³³ AOL, t. II 2, p. 384.

³⁴ Khitrcavo, p. 175.

³⁵ Schiltberger, p. 76.

³⁶ Tobler, p. 240-241.

³⁷ ROL, t. I, p. 248.

³⁸ Fabri, t. II, p. 306-307.

³⁹ Tobler, p. 233.

⁴⁰ Fabri, t. III, p. 86.

officient les Arméniens »⁴¹. À l'heure actuelle, il ne leur reste plus qu'un l'autel.

À Ein Kerem

À 7 km au sud-ouest de Jérusalem ce village, appelé en arménien 'Lernagoghmn', est, selon l'Évangile de Luc, le lieu de naissance de saint Jean-Baptiste. On y trouve une église qui a appartenu aux Arméniens. La première mention se trouve en 1335 chez Jacques de Vérone : « Dans un très beau lieu se trouve cet endroit vénérable où habitaient saint Zacharie et Elizabeth, et il y a là une église et un monastère où habitent des Arméniens et cette église a trente marches pour descendre dans sa caverne, où à présent il y a un autel où sainte Elizabeth descendait pour adorer »⁴².

À la fin du siècle, Grethenios en profite pour exhaler sa haine : « Plus loin dans la troisième montagne se trouve un couvent sous la dépendance des trois fois maudits Arméniens »⁴³. Un peu plus tard, en 1419, le pèlerin gascon Nompar de Caumont écrit : « En ce lieu il y a une chapelle, et près d'elle une autre (...) dans laquelle demeurent certains Arméniens qui chaque jour font l'office selon leur rite et près de cette maison dite de Zacharie se trouve la maison où naquit saint Jean-Baptiste »⁴⁴.

En 1461, c'est Louis de Rochechouart qui visita Ein Kerem : « De là nous arrivâmes à la maison de Zacharie, cette maison fut belle dans les temps anciens comme le montre ce qu'il en reste. La partie inférieure est là où la Vierge Marie composa le Magnificat. Enfin nous montons presque vingt marches. Là se trouvait la chambre de Zacharie (...). Là sont encore visibles les restes d'une très belle église. Il y a l'autel principal à la droite duquel se trouve une fenêtre assez grande. On dit que saint Jean s'était caché là par crainte d'Hérode. Cette demeure est gardée par les Arméniens »⁴⁵.

⁴¹ Catalans, p. 375.

⁴² ROL, t. III, p. 222-223.

⁴³ Khitrowo, p. 184.

⁴⁴ Voyage d'Oulremer en Jhérusalem par le Seigneur de Caumont l'an MCCCCXVIII, éd. Marquis de la Grange, Paris, 1858, rééd. Genève, 1975, p. 53.

⁴⁵ ROL, t. I, p. 258.

À Bethléem

À Bethléem on peut encore voir la belle porte en bois, avec inscriptions en arménien et en arabe, offerte en 1227 par le roi Hét'oum I^{er}. Curieusement, on n'en trouve aucune mention dans les récits de voyageurs. En revanche, plusieurs signalent la présence arménienne dans ce lieu de naissance du Christ. On trouve ainsi le curieux récit de Casola, en 1494 : « Cette église est habitée par une secte appelée Arméniens chrétiens, bien qu'elle soit administrée par les frères de mont Sion. Et grands et petits, hommes et femmes, ils vivent sur la terre comme des porcs, mais ils ne faisaient rien que crier toute la nuit sans s'arrêter »⁴⁶.

Les heurts arméno-géorgiens

En 1470, Anselmo Adorno écrivait laconiquement : « Entre les Géorgiens et les Arméniens il y a une haine implacable »⁴⁷. Les heurts furent en effet constants à Jérusalem, les Géorgiens prétendant même qu'ils possédaient la cathédrale des Saints-Jacques avant les Arméniens. Ils étaient en position de force : l'élite de l'armée des sultans étant constituée de Mamelouks originaires du Caucase, les Géorgiens avaient des relations particulièrement chaleureuses avec Le Caire, ce qui leur permit d'obtenir des avantages à Jérusalem, souvent aux dépens des Arméniens.

Ainsi, en 1440, Girnand von Schwalbach écrit, en parlant du mont du calvaire, que « six ans plus tôt les Géorgiens en ont chassé les Arméniens avec l'aide du sultan »⁴⁸. Quarante ans plus tard, le dominicain Fabri écrit des Géorgiens : « Ils sont chrétiens, mais ont été dépravés en tout par les mêmes erreurs que les Grecs. Dans le temple du Saint-Sépulcre, ils possèdent le mont Calvaire (...) seulement depuis quinze ans. Ils ont offert au sultan d'Égypte des présents, il en a chassé les Arméniens et y a introduit les Géorgiens ». Quant aux Arméniens, « quand ils l'eurent perdu ils achetèrent au sultan un endroit dans la partie supérieure du temple, où ils

⁴⁶ Viaggio a Gerusalemme di Pietro Casola, a cura di Anna Paoletti, Alessandria, 2001, p. 207.

⁴⁷ Adorno, p. 476.

⁴⁸ Fünf Palästina-Pilgerberichte aus dem 15. Jahrhundert (her. Herz, Hushenbett und Sczesny), Wiesbaden, 1998, p. 130.

consacrèrent un chœur et construisirent des salles »⁴⁹. C'est ce qu'on appelle le 'second Golgotha'.

En 1486, Konrad Grünemberg confirme que les Arméniens « possédaient aussi jusqu'à peu de temps le mont du Calvaire, mais le roi des Géorgiens soudoya le sultan avec de riches présents pour qu'il l'enlève aux Arméniens et le donne aux Géorgiens, et c'est ce qui advint »⁵⁰.

L'instauration du pouvoir ottoman en 1516 allait changer le rapport de forces au détriment des Géorgiens.

Les divergences avec les autres rites

Les voyageurs sont en général très diserts sur les heurts et concurrences entre l'Église arménienne d'une part, les Églises latine et grecque de l'autre. Comme on l'a signalé plus haut, afin d'obtenir l'aval de l'Europe pour le couronnement de Léon I^{er} en 1198, les Arméniens avaient promis de faire des concessions dans le sens de l'union, mais ils ne les ont jamais mises à exécution, ce que les pèlerins ne manquent pas de dénoncer.

Ainsi, vers 1200, un voyageur anonyme à Jérusalem termine son récit par la description des peuples de la Ville sainte. Les Arméniens « font beaucoup de choses à l'encontre des institutions ecclésiastiques, ils utilisent leurs propres lettres. Entre Arméniens et Grecs règne une haine implacable (...). Récemment ils promirent d'obéir à l'Église romaine quand leur roi reçut la couronne de l'archevêque de Mayence légat du siège de Rome »⁵¹.

Deux décennies plus tard, Jacques de Vitry, nommé évêque de Saint-Jean-d'Acre en 1216, consacre aux 'erreurs' des Arméniens un chapitre entier, intitulé « Les Arméniens, leurs erreurs dans la foi et une brève réfutation »⁵². Il commence par : « Le peuple arménien habite dans la province d'Arménie, près d'Antioche entre chrétiens et sarrasins, mais à l'écart, ils sont séparés et disjoints de toute la nation des chrétiens, car ils ont des rites particuliers et des observances qui leur sont personnelles ». On remarquera qu'il ne connaît que les Arméniens de Cilicie et ignore la Grande Arménie. Suite une longue liste des 'erreurs', avant de terminer par l'inévitable rappel de 1198 : « Les Arméniens avaient promis obéissance au souverain pontife et à la sainte Église romaine après que leur roi eût reçu sa terre de l'empereur Henri et la couronne royale des

ainsi de l'archevêque de Mayence ; malgré cela ils refusent de changer leurs anciens rites et les coutumes de leur culte ».

On trouve un son de cloche différent chez Jacques de Vérone en 1335. Dans son énumération des différents peuples chrétiens de Terre sainte, il mentionne « les Arméniens, qui sont de vrais chrétiens, ils possèdent plusieurs monastères en Terre sainte et obéissent à l'Église romaine en tout, ils font l'office en langue arménienne et sont de vrais et dévots chrétiens ; ils subirent beaucoup de vexations de la part des sarrasins, et cette même année l'Arménie fut entièrement ravagée et plusieurs milliers de personnes furent emmenées en captivité »⁵³. Il est difficile d'imaginer que l'auteur a cru à cette fable de la soumission...

Un peu plus tard, le franciscain Niccolò da Poggibonsi est plus ambigu. Parlant de la cathédrale des Saints-Jacques, il écrit : « Ce lieu est un archevêché tenu par les Arméniens, qui obéissent à l'église romaine », alors que plus loin, dans son paragraphe intitulé « Sur les Arméniens », on lit qu'ils « ne sont pas sujets à l'Église romaine. Alors que nous avons le pape, vicaire de Dieu, ils en ont un, qu'ils appellent catholicos, qui consacre les évêques (...). Il y a toutefois de légères différences entre leur foi et la nôtre »⁵⁴.

Au milieu XIV^e siècle, le pèlerin de Westphalie Ludolf von Sudheim a consacré un chapitre aux « Sectes des chrétiens ». On y lit que les Arméniens « s'accordent bien avec les Latins pour l'office diurne et pour ordonner les évêques et les prêtres mais dans la consécration du vin ils ajoutent de l'huile. Pour la Venue du Seigneur ils jeûnent strictement. À la veille de Pâques ils mangent de la viande. Il y a de telles controverses entre Grecs et Arméniens que, quel que soit ce qui convient aux uns en matière religieuse, cela déplaît aux autres et ils s'excommunient mutuellement »⁵⁵.

La plupart des voyageurs signalent en effet que la haine est plus forte avec les Grecs qu'avec les Latins. Ainsi, au début du XV^e siècle, Schiltberger, qui appréciait beaucoup les Arméniens et les trouvait très germanophiles, intitule son avant-dernier chapitre « Pourquoi les Grecs sont ennemis des Arméniens »⁵⁶. Il commence par : « Les Grecs ont toujours été les ennemis des Arméniens et je vais dire les raisons comme je les ai entendues des Arméniens ». La suite n'a curieusement aucun contenu religieux. L'auteur rapporte une histoire abracadabrante impliquant, à une époque non précisée, le roi d'Arménie et

⁴⁹ Fabri, t. III, p. 57-59.

⁵⁰ Grünemberg, p. 433.

⁵¹ Sandoli, t. III, p. 96.

⁵² Jacques de Vitry, *Historia Orientalis*, éd. Jean Donnadieu, Turnhout, 2008, p. 318-322.

⁵³ ROL, t. III, p. 217-218.

⁵⁴ Poggibonsi, p. 35, 147.

⁵⁵ AOL, t. II 2, p. 368-369.

⁵⁶ Schiltberger, p. 109-111.

l'empereur de Constantinople. Ce dernier aurait demandé l'aide du roi contre les Tartares, mais inquiet des exploits des Arméniens il les aurait fait mettre à mort, provoquant ainsi l'inimitié éternelle entre les deux peuples.

Plus crédible est Louis de Rochechouart en 1461. Son long paragraphe sur les Arméniens de Jérusalem commence par : « Les Arméniens ont des désaccords modérés avec les Latins, mais entre eux et les Grecs règne une haine implacable (...). Ils sont de grands amis à nous, ils embrassent nos mains et nous respectent beaucoup. Ils ont un aspect très semblable aux Grecs. Ils ont leur évêque ou patriarche dans une demeure propre, qu'ils possèdent à Jérusalem »⁵⁷.

Le voyage du dominicain Felix Fabri date des années 1480. Lui aussi a un chapitre intitulé « Des chrétiens arméniens et de leur nature », qui commence par « Les Arméniens sont aussi avec nous dans cette sainte Église, ils viennent d'Arménie et sont les implacables ennemis des Grecs, tout en n'évitant pas leurs erreurs (...). Les Arméniens sont moins différents de nous que tous les autres chrétiens dont j'ai parlé ». L'auteur poursuit en esquissant un rapprochement avec les dominicains.

Fabri rend ailleurs hommage au « magnifique seigneur souvent cité Bernhard de Breydenbach »⁵⁸. Son voyage fut en effet contemporain de celui de cet évêque de Mayence, dont le compte-rendu sur le sujet reste le plus complet. Dans son long chapitre intitulé « Des Arméniens et de leurs erreurs »⁵⁹, on lit : « Il y a entre eux et les Grecs des discordes implacables et des dissensions inexorables ». Suivent les dénonciations classiques des divergences avec le rite chalcédonien, comme la date de la Nativité, les règles alimentaires, le mélange de l'eau et du vin lors de la messe. L'auteur reprend aussi l'accusation de ne pas avoir tenu les promesses d'Union lors du couronnement de Léon. Il donne la liste des possessions arméniennes à Jérusalem, et termine en notant l'originalité de la langue et de l'alphabet, utilisés tant par les laïcs que pour les offices. Il reproduit ensuite l'alphabet arménien.

Le voyage de Konrad Grünemberg, originaire de Constance, est contemporain, en 1486. Lui aussi parle assez longuement des Arméniens de Jérusalem : « Leur foi est remarquable. Ils ont un évêque en chef qu'ils appellent Katholikos et auquel ils obéissent comme s'il était le pape » Suit une liste de différences de rites, et le rappel de la convention de 1198. « Les Arméniens sont nombreux à Jérusalem, et ils y ont un évêque (...). Ils

⁵⁷ ROL, t. I, p. 255.

⁵⁸ Fabri, t. III, p. 59, 32.

⁵⁹ Mainz, Gutenberg-Museum, Inkunabel 2058, in verso.

portent de longues barbes, leur mode de vie est vertueux, ils sont décemment habillés et donnent le bon exemple au monde »⁶⁰. L'un de ses manuscrits, probablement autographe, comporte une illustration d'un Arménien de Jérusalem⁶¹.

En guise de conclusion

Une constatation s'impose d'emblée : les Arméniens de Jérusalem ont toujours intéressé les voyageurs et pèlerins européens. Il y avait à cela plusieurs raisons. On peut citer l'ancienneté de leur omniprésence dans tous les Lieux saints, l'existence du quartier arménien indépendant du quartier chrétien, le patriarcat dont la juridiction dépasse de loin le cadre de la Ville sainte, la splendeur de plusieurs des monuments. S'y ajoute le statut ambigu de l'Église arménienne face à Rome : une indépendance *de facto*, mais dans un respect globalement réciproque qui ne pouvait manquer d'intriguer les visiteurs occidentaux, en particulier franciscains et dominicains.

⁶⁰ Grünemberg, p. 430-432.

⁶¹ Forschungsbibliothek Gotha der Universität Erfurt, Chart. A 541, 1487, f° 77.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՆԱԽԱՕՍՄԱՆՑԱՆ ՇՐՋԱՆԻ
ՀԱՅՈՑ ԵՐՈՒՄԱՂԵՍԻ ՄԱՍԻՆ

Հիմնաբառեր. Մելիսենդ, Ս. Հակոբ, մամլուկներ, հույներ, վրացիներ,
Ս. Հարության տաճար, Սիոն լեռ, Էյն Բերեան, Բեթղեհեմ:

Երբ Խաչակրաց արշավանքների ընթացքում երոպացիները հայտնագործեցին Երուսաղեմը, հայությունն այստեղ արդեն կայացած համայնք ուներ: Արեւմտյան ճանապարհորդների համար հայոց Երուսաղեմը յուրօրինակ աշխարհ էր եւ նրանց հուշագրությունները թանկարժեք աղբյուր են այն զանազան կողմերով բացահայտելու համար:

Լատինների տիրապետության շրջանում Երուսաղեմի առաջին թագուհիները հայ արքայադուստրեր էին, իսկ Մելիսենդ թագուհու օրոք (1131–1153 թթ.) արդեն սկսեց գործել Սուրբ Հակոբ հայկական եկեղեցին, որին առաջին անգամ 1165 թ. իր հուշերում անդրադարձավ երոպացի ճանապարհորդ եւ հոգեւորական Յոհան Վյուրցբուրգցին (1160–1170 թթ.): Ապա, 13-րդ դ. կեսերին շուրջ 250-ամյա մամլուկյան տիրապետության ընթացքում, երոպացի ճանապարհորդների այցելությունները Երուսաղեմի հայկական թաղամաս, հայոց եկեղեցիներ, Ս. Աննայի եւ Կայիափայի բնակատեղիները, ինչպես նաեւ Ս. Երկրում Ս. Հարության տաճարի, Գեթսեմանի, Սիոն լեռան, Էյն Բերեմի կամ Բեթղեհեմի տարածքներում հայոց սեփականություն հանդիսացող սրբատեղիները, նրանց համար ուղղակի «ոսկեդարյան» տպավորություններ էին:

Ուղեգրություններում եվրոպացիներն անդրադարձել են նաեւ Երուսաղեմում բնակվող տարբեր ազգություններին, քրիստոնեական տարբեր դավանանքների մրցակցությանը, որը հաճախ վերաձվում էր ազգամիջյան բախումների:

Խիստ բազմազան ու հետաքրքրական են նաեւ հայերի՝ լատինների հետ ունեցած առնչությունների մասին նկարագրությունները:

PREOTTOMAN ARMENIAN JERUSALEM THROUGH
EUROPEAN EYES

Keywords: Melisende, Saint James, Caiaphas, Mamluks, Greeks, Georgians, Holy Sepulcher, Mount Sion, Gethsemane, Ein Kerem, Bethlehem.

When Europeans discovered Jerusalem in the wake of the Crusades, the Armenians had already created a lively community. For Western travellers, Armenian Jerusalem was a kind of exotic element, and their accounts are very precious sources.

The first Queens of Latin Jerusalem were Armenian princesses, and it is during the reign of the third one, Melisende, that was inaugurated the Armenian cathedral of Saint-James, first mentioned in 1165 by John of Würzburg.

In the middle of the 13th century, the Mamelukes imposed their authority on Jerusalem for more than two and a half centuries. It was a 'Golden Age' for European travellers, who visited the Armenian quarter, the cathedral, the houses of Anna and Caiaphas converted to Armenian monasteries, and also Armenian properties in the Holy Sepulchre, in Gethsemani, Ein Kerem or Bethlehem.

These accounts also usually include a description of the various peoples living in the Holy City, including interesting details about the rivalry between the various Christian creeds. They unanimously describe the hate between Armenians and Greeks, they often evoke conflicts with the Georgians, but their judgements about Latin-Armenian relations are more diverse.

**ЕВРОПЕЙСКИЕ ИСТОЧНИКИ ОБ АРМЯНСКОМ
ИЕРУСАЛИМЕ ДООСМАНСКОГО ПЕРИОДА**

Ключевые слова: Мелисенда, Св. Акоб, мамлюки, греки, грузины, храм Св. Воскресения, гора Сион, Эйн-Керем, Вифлеем.

Когда европейцы во время Крестовых походов открыли Иерусалим, армяне уже имели здесь состоящую общину. Для западных путешественников армянский Иерусалим представлял собой самобытный мир, и их мемуары являются ценными источниками для его раскрытия с разных сторон.

В период господства латинов первыми королевами Иерусалима были армянские принцессы, а во время правления королевы Мелисенды (1131-1153 гг.) уже начала действовать армянская церковь Святого Акоба, о которой впервые в 1165 г. упоминал в своих мемуарах европейский путешественник и священнослужитель Йохан Вюрцбургский (1160-1170). Затем, в середине 13-го века, в течение почти 250-летнего господства мамлюков, посещения европейскими путешественниками армянского квартала Иерусалима, армянских церквей, жилищ Св. Анны и Каифы, принявших христианство в армянских церквях, а также храма Св. Воскресения на Святой Земле, Гефсимана, горы Сион, святых мест, являвшихся армянской собственностью, на территориях Эйн-Керема или Вифлеема, были для них впечатлениями «золотого века».

В своих путевых записях европейцы касались также живущих в Иерусалиме представителей разных национальностей. конкуренции различных христианских конфессий, что зачастую перерастало в межнациональные конфликты.

Весьма разнообразны и интересны также описания взаимоотношений армян с латинами.

**ԱՐԱՔԱԿԱՆ ԱՂԲԻՒՆԵՐԸ ԱՆՏԻՈՔ ՔԱՂԱՔԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ
ՀԱՅ ՀԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմնաբառեր. Թ.-ՄԳ. դարեր, Անտիոքի շրջան, հայ գաղթականություն, խաչակրաց առաջին արշավանք, ընդվզում սելճուք կառավարիչին դեմ, քաղաքաբնակ և գիւղաբնակ հայեր, Ֆերուզ հայ, Հարեն, Արմինազ գիւղ, Ռուժի հովիտ, անկախության ձգտում, խաչակիրներու դեմ:

1098-ին խաչակիրներու կողմէ Անտիոքի գրաւումէն մինչեւ Էյեուպեան իշխանութեան հաստատումը Անտիոք քաղաքի և շրջակայքի հայոց մասին կը խօսին բիզանդացի, ասորի, լատին, բայց մանաւանդ արաբ պատմագիրներն ու ժամանակագիրները:

Արաբ պատմիչները հայերը կը յիշատակեն յատկապէս Անտիոքի պաշարման ու առման մէջ անոնց դերակատարութեամբ, Լատին դքսութեան հաստատումէն ետք խաչակիրներու դեմ Արթաիի հայոց սպստամբութեամբ և դէպի արեւելք խաչակրաց արշավանքներուն իբրեւ վարձկան զինուոր մասնակցութեամբ: Անոնք կը խօսին Անտիոքի քաղաքաբնակ և գիւղական շրջաններու հայոց մասին, կը յիշատակեն հայոց պատկանող բերդերն ու ամրոցները: Աւելի ուշ՝ անոնց գործերուն մէջ հայերը կը յիշատակուին Սալահէտտինի արշավանքներու ատեն և կը նշուին Էյեուպեան իշխանութեան շրջանին հայոց բնակութեան վայրերը և հետաքրքրական մանրամասնութիւններ՝ տեղւոյն հայոց զբաղումներուն և արարներու հետ ունեցած անոնց յարաբերութիւններուն մասին:

Ստորեւ ցանկ մը այս իրադարձութիւններուն անդրադարձող պատմիչներուն.

- ***Իպն ալ-Ասաքեր** (ծն.՝ 1150), «Թարիխ Տիմաշզ» (Դամասկոսի պատմություն):

- **Մուհամմետ Իպն Ալի ալ-Ատիմ** (ծն. 1192), «Պուդեաթ ալ-Դալայ ֆի Թարիխ Հալայ» (Պիտանի ծաղկաբաղ Հալայի պատմություն):

- ***Իպն ալ-Գալանսի** (1160-1077), «Թարիխ Տիմաշզ (Դամասկոսի Պատմություն): Ալ-Գալանսի լայնօրեն օգտագործած է իր ժամանակակից հեղինակներու՝ **Համոսան Իպն Ապտուլ Ռահիմ ալ-Աթարիայի** (ծն.՝ 1147) եւ **Ալի Իպն Ապտալահ Իպն Ապի Ճարսուէի** (ծն.՝ 1151) գործերը, որոնք կորսուած կը համարուին:

- ***Մուհամմետ Իպն Ալի ալ-Ուզէյմի** (ծն.՝ 1161) պատմություն:

- ***Սաայթ Իպն ալ-Ճուզի Էուսէֆ Իպն Ղազողլի** (մահ.՝ 1256) «Մըրասաթ ազ-Չաման» (Ժամանակի հայելին) գիրքը:

- **Ալի Ազգետտին իպն ալ-Ասիրի** (1160-1233) «Ալ քամալ ֆի-լթարիխ» (Լիակատար պատմություն) բազմահատոր աշխատությունը:

- **Ուսամա Իպն Մունզեզ ալ-Քանանի** (ծն.՝ 1095), «Քիթասալ ալ-իթիպար» (Արժանապատության գիրք), Դամասկոս, 1980:

- **Իպն ալ-Շուհնա** (1402-1485, «Ալ-Տար ալ-մույթախասալ ֆի թարիխ Մամլաքաթ Հալայ» {Համադրություն Հալայի թագատրության պատմության}) Դամասկոս, 1984:

Սուրիացի արաբ ժամանակակից պատմաբան դոկտ. Մուհեյլ Չաքքար Անտիոքի եւ շրջակայքի մասին կը ծանօթագրէ, թե «շրջանին բնակիչները մեծամասնությամբ ոչ-մահմետականներ էին, հա-

¹ Աստղանիշ կրող գործերը տեսած ենք խաչակրաց արշավանքներու մասին արաբ, յոյն, ասորի եւ լատին պատմիչներու եւ ժամանակագիրներու գործերու ժողովածոյէ մը՝ «Ալ-Հուրուպ ալ-Սալիպիյէ» (արաբերէն՝ Խաչակրաց պատերազմները), Ա. հատոր, Դամասկոս, 1984, Բ. հատոր, Դամասկոս, 1984. կազմող ու ծանօթագրող՝ **դոկտ. Մուհեյլ Չաքքար**:

յեր էին»²: Ժամանակակից ուրիշ արաբ պատմաբան մը՝ Մուհամմետ Տամէն, կը գրէ. «Երբ խաչակիր զօրքերը յարձակեցան Անտիոքի շրջակայ գիւղերուն վրայ, տեղւոյն բերդերուն եւ ամրոցներուն հայերը ապստամբութիւն հռչակեցին եւ Աղսիանի³ հետետրոյնները սպանեցին: Ումանք փախան: Նոյնպէս ապստամբեցան Արթաքի բնակիչները, որոնք օգնութիւն խնդրեցին խաչակիրներէն: Իպն ալ-Գալանսիի եւ Իպն Ալի ալ-Ատիմի վկայութիւններէն կարելի է հետեւցնել, որ Անտիոքի շրջակայ հայ բնակչութեան այս կեցուածքին դրդապարճառը Աղսիանի գէշ վերաբերմունքն էր հայոց դէմ, բրտութիւնն ու անգթութիւնը, զորս ի գործ կը դնէր իր երկրին մէջ»⁴:

Խաչակիր բանակները Անտիոքը կը պաշարեն 17 Հոկտեմբեր 1097-ին: Պաշարումը կը տեւէ ինը ամիս:

Անտիոքի շրջանի հայոց մասին սուրիացի արաբ ժամանակակից պատմաբաններու տուեալները առաւելաբար կը յենին արաբ պատմիչներու եւ ժամանակագիրներու հաղորդած տեղեկութիւններուն վրայ, բայց վկայութիւններու առատութիւնը հաւաստիացում կը ստանայ նաեւ անով, որ խարչակրաց արշավանքներու մասնակից լատին պատմիչներն ալ լայնօրեն կ'անդրադարձնան հայոց դերակատարութեան մասին: Ամենէն առաջ կը յիշուին Անտիոքէն դուրս, մանաւանդ անկէ հարաւ արեւելք գտնուող Ռուճի շրջանի հայերը, որոնք բերդերու կը տիրէին, ինչպէս Հարեմն ու Արթաքը: Այսպէս՝ խաչակիր ասպետներէն Պետրոս տը Ռուիպան իր զօրագունդով կը բաժնուի Անտիոքէն եւ կ'ուղղուի արեւի ցած

² Տե՛ս **Դոկտ. Մուհեյլ Չաքքար**, Ալ-Հուրուպ ալ-Սալիպիյէ, Բ. հատոր, Դամասկոս, 1984, էջ 536, ծանօթագրութիւն թիւ 3:

³ Անտիոքի սելճուք կառավարիչը՝ Աղսիան Իպն Մուհամմետ Իպն Ալա Իպն Ալբ Արալան:

⁴ **Մուհամմետ Տամէն**, Իմարաթ Հալայ ֆի զուլլ ալ-հուքրմ ալ-սալճուքի (արաբերէն՝ Հալայի իշխանութիւնը սուլճութեան տիրապետութեան տակ), Դամասկոս, 1990, էջ 183-184:

(հարաւ) Ռուճի հովիտը, ուր իրեն կը հանդիպի թուրքմէններէ եւ մահմետականներէ բաղկացած զօրագունդ մը: Բուռն բախումի մը ընթացքին՝ խաչակիրները մեծ թիւով զոհեր կը խլեն անոնցմէ եւ կը հալածեն միւսները: Լատին Անանուն Պատմիչը⁵, շարունակելով, կը գրէ. «Այդ շրջանին մէջ բնակող հայերը, տեսնելով Պետրոսի յաղթանակը, միացան անոր. Ռուճի շրջանը ու քանի մը բերդեր յանձնուեցան անոր»⁶:

Անտիոքի շրջանին մէջ խաչակիրներուն երեւումէն ու առաջին ընդհարումներէն ետք Անտիոքի տէր Աղսիանը չի կրնար անտարբեր մնալ, մանաւանդ երբ կը տեսնէ տեղացի քրիստոնեաներուն ըմբոստութիւնը, ապա զօրակցութիւնը խաչակիրներուն: Ան անմիջապէս օգնութիւն եւ զօրակցութիւն կը պահանջէ Դամասկոսէն, Հոմաէն ու այլ վայրերէ, եւ Անտիոքը պաշտպանելու եւ քրիստոնեաները անկէ դուրս դնելու համար սրբազան պատերազմ՝ ճիհաս կը յայտարարէ⁷:

Իպն ալ-Ատիմը կը պատմէ, թէ երբ խաչակիրները երեւցան Անտիոքի շրջանին մէջ, Աղսիանը օգնութիւն խնդրեց իր փեսայէն՝ Դամասկոսի եւ Հալէպի տէր Ռտուան Իպն Տուտուշէն: Ռտուան անցաւ Հալէպի զօրքին գլուխը, իր հետ վերցուց նաեւ Երուսաղէմի տէրը՝ Մուքման Իպն Արթըզը իր զօրքով ու յառաջացաւ դէպի Անտիոք: Մահմետականներէ եւ թուրքմէններէ կազմուած Ռտուանի եւ Մուքմանի զօրքերը անակէկալ յարձակումի կ'ենթարկուին Անտիոքի մօտակայքը: «Ապա, կը պատմէ Իպն Ալի ալ-Ատիմը,-

⁵ Ֆայեզ Գոսարա «Լատին Անանուն» կը կոչէ խաչակրաց առաջին արշաւանքին մասնակից այս հեղինակը, որուն գործը թարգմանաբար կը գետնէ իր կազմած հաւաքածոյին մէջ տե՛ս «Ալ-Հուրուպ ալ-Սալիպիե», Ա. հատոր:

⁶ Լաթինի ալ-Մաճհուլ, Ամմալ ալ-Ֆարանճա (Լատին Անանուն, Ֆրանկներու գործերը), «Ալ-Հուրուպ ալ-Սալիպիե», Ա. հատոր, էջ 217:

⁷ Իպն ալ Գալանսի, Թարիխ Տիմաշզ (արաբերէն՝ Դամասկոսի պատմութիւն), տե՛ս «Ալ-Հուրուպ ալ-Սալիպիե», Բ. Հատոր, էջ 535:

մահմետականները պարտուելով փախան Հարեմ, եւ Հարեմի հայ բնակիչները յաղթեցին անոնց»⁸:

Լատին Անանուն պատմիչը հետեւեալ ձեւով կը ներկայացնէ Իպն ալ-Ատիմի գրածը. «Հայերն ու ասորիները երբ իմացան թուրքմէններու փախուստի մասին՝ իրենց գիւղերէն ելլելով դարանակալ դիրք բռնեցին լեռնանցքներուն եւ կիրճերուն մէջ եւ անոնցմէ շատերը սպանեցին ու գերեցին»⁹: Պատմիչը տեղացի ժողովուրդներուն մէջ կը յիշէ մահմետականները, թուրքմէնները, հայերն ու ասորիները: Վերջին երկուքը միատեղ կը յիշատակէ, առաջին հերթին դնելով միշտ հայերը:

Արաբ պատմիչ Իպն ալ-Գալանսի կը գրէ. «Խաչակիրները իջան Պաղրասի բերդը եւ անկէ յարձակեցան Անտիոքի շրջանին վրայ: Այն ատեն Անտիոքի շրջանի բերդերուն ու ամրոցներուն մէջ գտնուող բնակիչները ըմբոստացան Աղսիանի դէմ, անոր հետեւորդներէն ոմանք սպանուեցան, ոմանք փախան»¹⁰: Խաչակիր զօրքերը մահմետականները կը հալածեն մինչեւ Արթաս, որուն բնակչութիւնը նոյնպէս կ'ապստամբի իշխանութեան դէմ: Ապա խաչակիրները Ռուճ կը վերադառնան: Արաբ պատմիչները յաճախ կը յիշատակեն, որ Արթասը կը պատկանէր հայերուն:

Վերոյիշեալ մէջբերումները ցոյց կու տան, որ ա.- Տակաւին Անտիոքի պաշարումը չսկսած՝ Անտիոքի շրջակայքի հայերը կը զինակցին խաչակիրներուն՝ ընդդէմ Անտիոքի տէր Աղսիան սելճուքին: Այս գործակցութիւնը կը ներկայացուի իբրեւ ապստամբութիւն Աղսիանի դէմ, որ, ինչպէս Մուհամ-

⁸ Իպն Ալի ալ-Ատիմ, Ջուպուաթ ալ-Հալապ Ֆի Թարիխ Հալապ (արաբերէն՝ Պատմութիւն Հալէպի), Բ. հատոր, Դամասկոս, 1954, էջ 496:

⁹ Լաթինի ալ-Մաճհուլ, Ամմալ ալ-Ֆարանճա, տե՛ս «Ալ-Հուրուպ ալ-Սալիպիե», Ա. հատոր, էջ 228:

¹⁰ Իպն ալ Գալանսի, Թարիխ Տիմաշզ (արաբերէն՝ Դամասկոսի պատմութիւն), տե՛ս «Ալ-Հուրուպ ալ-Սալիպիե», Բ. հատոր, էջ 536:

մետ Իսկն Ալի ալ-Ատիմը կը հաստատէ ու պիտի տեսնենք յետագայ մէջքերումներէն, իր բռնաբարումներուն եւ անգթութեանց պատճառով՝ տեղւոյն հայոց ատելութիւնը շահած էր:

բ.- Քաղաքէն դուրս, Անտիոքի հիւսիս-արեւելեան, արեւելեան եւ հարաւային շրջաններու ազգաբնակչութեան մէջ մասնաւանդ՝ հայերը զգալի եւ կարեւոր ներկայութիւն մըն են:

Անտիոքի պաշարումի երրորդ ամիսէն սկսեալ՝ խաչակիրներու բանակավայրին մէջ սով կը տիրէ: Խաչակիր ջոկատներ կը ձախողին շրջաններէն պարէն հայթայթելու իրենց փորձին մէջ, որովհետեւ ամենուրեք կը հանդիպին պաշարման ենթարկուած քաղաքին օգնութեան սպասող զօրքերու կամ կ'իյնան ծուղակի մէջ: Անտիոքի շրջանին մէջ պարէն գտնելու անոնց վերջին ջանքերը նոյնպէս ապարդիւն կ'անցնին: «Հայերն ու ասորիները, տեսնելով անոնց ձեռնունայն վերադարձը, կ'որոշեն շրջիլ լեռները եւ յիշեալ շրջանի բոլոր կողմերը՝ մանրամասն հետախուզութեամբ ցորեն եւ այլ ուտեստեղէն գտնելու: Անոնք կը գնէին ու կը դրկէին խաչակիրներու բանակավայրը, ուր սաստիկ սով կը տիրէր: Գիները կը բարձրանան: Մէկ իշաքեռ ցորենը կ'արժէր ութ բերբրի, որ հաւասար է 120 տինարի: Մեր զինուորներէն շատեր սովամահ եղան՝ այսքան գումար վճարելու անկարող ըլլալուն համար»¹¹: Խաչակիրները ստիպուած էին արտօնել պարէն հայթայթող հայ եւ ասորի զիւղացիներուն, որ պարէն հասցնեն նաեւ պաշարուած քաղաքին:

Պատմիչները միահամուռ կերպով կը հաստատեն Անտիոքի անկումին մէջ դաւադրութեան մը բաժինը, որուն կազմակերպիչը շատերու կողմէ կը նկատուի Փիրուզ անուամբ (Գալանսի՝ Ներուզ) հայ մը: Հայ պատմագրութեան մէջ այս մարդը կը կոչուի Յովհան-

¹¹ **Լաթինի ալ-Մաճուլ**, Ամալ ալ-Ֆարանճա, տե՛ս «Ալ-Հուրուպ ալ-Սալիպիե», Ա. հատոր, էջ 224:

նէս Փիրուս: Ան կը ներկայացուի իբրեւ վերտագործ զինուորական մը, որուն, իր մարդոցմով, վստահուած էր «Երկու Քոյրեր» կոչուող աշտարակին հսկողութեան հրամանատարութիւնը: Միւս կողմէ Աղսիանի սպանութիւնն ալ շատերու կողմէ կը վերագրուի հայ զիւղացիներու՝ Ռուճի շրջանի Արմինազ գիւղին մօտ: Այս մասին Իսկն ալ-Գալանսին կը գրէ. «Անտիոքի բնակիչներէն վերտագործներու խումբ մը, որ կը ծառայէր Աղսիանին, դաւադրութիւն կազմակերպեց, ու համաձայնեցաւ քաղաքը յանձնել ֆրանկներուն, որովհետեւ Աղսիանը գէշ վարմունք ունեցած էր անոնց նկատմամբ, իրաւագրկած էր զանոնք ու բռնագրաւած անոնց ունեցուածքը»¹²: Իսկն ալ-Գալանսի կը պատմէ, թէ «Քաղաքը ինկաւ վերտագործի մը կարգադրութեամբ, եւ այդ մարդը հայ էր, անունը՝ Նիրուզ»¹³: Շարունակելով, ան կը պատմէ, թէ «Աղսիանը պարտուեցաւ եւ բազմութեամբ դուրս ելաւ, բայց մէկը չազատեցաւ այդ բազմութենէն: Ու երբ հասաւ Արմինազի մօտ, որ զիւղ մըն է Մաարաթ Մաարինի մօտիկ, ձիէն ինկաւ: Իր ընկերակիցները զինք ետ ձիուն վրայ դրին, բայց չկրցաւ մնալ, կրկին ինկաւ ու մեռաւ»¹⁴:

Մուհամմետ Իսկն Ալի ալ-Ատիմը այսպէս կը պատմէ դէպքերը. «Անտիոքի բնակիչներէն մէկը, որ ծանօթ էր իբրեւ վերտագործ, իր սպասաւորներուն հետ աշտարակներէն մէկուն պաշտպանութիւնը ստանձնած էր: Աղսիանը բռնագրաւած էր այս մարդուն տիրոջներն ու եկամուտները: Այդ պատճառով, այս մարդը, բարկանալով, գրեց Պեմունտին. «Ես այսինչ աշտարակին մէջն եմ, ու պատրաստ եմ քեզի յանձնելու Անտիոքը, եթէ վստահիս եւ ինձի

¹² **Իսկն ալ Գալանսի**, Թարիխ Տիմազ (արաբերէն՝ Դամասկոսի պատմութիւն), տե՛ս «Ալ-Հուրուպ ալ-Սալիպիե», Բ. հատոր, էջ 537: Արաբ պատմիչները վերտագործը Փիրուզ կը կոչեն, ալ-Գալանսիի յիշատակած Նիրուզ ձեւը հաւանական է, որ գրչութեան վրէպ մը ըլլայ:

¹³ Նոյն տեղը:

¹⁴ Նոյն տեղը:

տաս այս ու այն: Եւ գործադրուեցաւ ինչ որ ուզեց»¹⁵: Քաղաքը ինկաւ ու Աղսիան փախաւ: Իսկն ալ-Ատիմ չի յիշատակեր վերտագործին անունը եւ ազգութիւնը, բայց Աղսիանի վախճանը կը բերէ հայոց ձեռքով, դարձեալ Արմինազ գիւղին մօտ: «Եւ երբ հասաւ Արմինազի մօտիկ՝ հետը սպասաւոր մը մնացած էր իր մարդոցմէ: Ան ինկաւ ձիէն: Մպասաւորը ետ բարձրացուց զինք իր ձիուն վրայ: Հեծաւ, բայց չկրնալով պահել ինքզինք՝ նորէն ինկաւ: Հայերը վրայ հասան. ծառան փախաւ: Հայերը սպանեցին զինք ու գլուխը տարին ֆրանկներուն»¹⁶:

Իսկն ալ-Գալանսիի, Իսկն Ալի ալ-Ատիմի, Քամալէտտինի եւ այլոց վկայութիւններէն կարելի է հետեւցնել, որ Փիրուզ հայի արարքը միայն անհատական որոշումի մը հետեւանքը չէ, թէեւ ինք անձնապէս այդ արարքով կ'ուզէ Աղսիանի կողմէ իրմէ խլուածը՝ ազատութիւն, կալուած ու հարստութիւն, վերստանալ ֆրանկներու ձեռքով: Աղսիանէն դժգոհելու նման պատճառներ ունէին նաեւ Փիրուզի զինակիցները: Արաբ պատմիչները կը հաստատեն, թէ դաւադրութեան պատճառը Աղսիանի բռնութիւնն էր իր հպատակներուն վրայ: Այս մարդուն բռնութիւնները կը հաստատէ նաեւ Մատթէոս Ուռհայեցիի այն վկայութիւնը, թէ Աղսիան չար ու մաղձոտ, խառնակիչ էր գազանաբարոյ մարդ էր: Նշենք, որ հայ ժամանակագիրը պատմելով այս դէպքերը՝ գրեթէ չի յիշատակեր տեղւոյն հայերը, չի նշեր անոնց մէջ տեղացի հայոց ունեցած դերակատարութիւնը¹⁷:

Արաբ վերոնշեալ պատմիչները իբրեւ Աղսիանի սպանութեան վայր կը նշեն Ռուճի Արմինազ գիւղը, Մաարաթ Մաարինի

¹⁵ Իսկն Ալի ալ-Ատիմ, Չուպտաթ ալ-Հալապ ֆի Թարիխ Հալապ (արաբերէն Պատմութիւն Հալէպի), Բ. հատոր, Դամասկոս, 1954, էջ 497-498:

¹⁶ Նոյնը, էջ 499:

¹⁷ Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, աշխարհաբարի վերածեց եւ ծանօթագրեց Հրաչ Բարթիկեան, Երեւան, 1973, էջ 170-173:

մօտ: Ասիկա Ռուճի հովիտի հարաւ-արեւելեան շրջանն է, եւ ցոյց կու տայ, թէ հայերը թափանցած էին Ռուճի ընդարձակ հովիտին բոլոր ճիւղաւորումներուն մէջ: Գիւղի անունն ալ իր ծագման մասին բան մը կ'ըսէ: Ի վերջոյ՝ հաստատ կապ մը կայ պատմիչներու այն հաղորդումին, թէ Աղսիանը սպանողը հայ փայտահատ մըն է, կամ երկու հայ եղբայրներ են կամ՝ հայ գիւղացիներ, եւ սպանութեան վայրի Արմինազ անուան միջեւ:

Մուհամմէտ Իսկն Ալի ալ-Ատիմ կը պատմէ, թէ «Անտիոքի անկման օրը՝ անթիւ-անհամար մարդիկ սպանուեցան, կալուածներ, գործիքներ ու զէնքեր աւարի ենթարկուեցան: Անտիոքի մէջ մնացողները [քրիստոնէայ բնակիչները – Յ. 2.] ապստամբեցան: Երբ այս լուրը հասաւ Գոմ եւ Աննապ «մահմետականները այդ տեղերէն փախան ու հոն հայերը տիրեցին»¹⁸:

Գոմն ու Աննապը Ամրզի դաշտին արեւելքն են. անոնցմէ հիւսիս կը գտնուի Արթաշը, որ Ռուճի դաշտէն ետք առաջինն էր, որ ապստամբեցաւ սելճուքեան իշխանութեան դէմ: Այսպիսով, Անտիոքի ու անոր հիւսիս-արեւելեան, արեւելեան եւ հարաւային շրջաններու հայութիւնը ոտքի ելած կը տեսնենք:

Աբու-լ-Ֆիտան սեղմ շարադրելով խաչակիրներու երեսումն ու Անտիոքի անկումը, միայն Աղսիանի սպանութիւնը հայու մը ձեռքով կատարուած ըլլալը կը յիշատակէ: Կը գրէ. «Ֆրանկները շարժուեցին դէպի Լեւոն հայի երկիրը»¹⁹, որտեղից դուրս եկան Անտիոք, որը պաշարեցին 9 ամիս եւ զէնքի ուժով տիրեցին քաղաքին: Աղսիանը գիշերով դուրս եկաւ Անտիոքից եւ սարսափահար փախաւ: Երբ առաւօտ եղաւ, նա սթափուեց իր երկիւղից, փորձեց վերադառ-

¹⁸ Իսկն Ալի ալ-Ատիմ, Չուպտաթ ալ-Հալապ ֆի Թարիխ Հալապ (արաբերէն Պատմութիւն Հալէպի), Բ. հատոր, Դամասկոս, 1954, էջ 499:

¹⁹ Արաբ պատմիչները հայկական Կիլիկիան կը կոչեն Լեւոնի երկիր, Ռուբէնի որդիներու երկիր, Սիսի երկիր:

նայ, զոջալով, որ իր ընտանիքին, զաւակներին եւ մուսուլմաններին լրել էր այդպէս, բայց իր կատարած ճիգերը նրան ուժաթափ արեցին, ու ընկաւ ձիուց: Նրա ընկերակիցները ջանացին նրան բարձրացնել ձիու վրայ, բայց հնարաւոր չեղաւ, որ նա կարողանար սանձը ամուր բռնել, ուստի նրան լրեցին այդ վայրում: Այդ միջոցին Անտիոքի տիրոջ՝ յիշեալ Աղսիան Իպն Մուհամմետ Իպն Ալա Իպն Ալբ Արսլանի մօտով անցնում էր մի հայ փայտահատ, եւ մինչդեռ նա վերջին շունչն էր ապրում, մօտեցաւ ու զլուխը կտրելով տարաւ: Անտիոք՝ ֆրանկների մօտ, որոնք արդէն տիրել էին քաղաքին»²⁰:

Այս դէպքերու մասին, հայերու յիշատակութեամբ, կը պատմեն նաեւ ուրիշ արաբ պատմիչներ: Ըստ արաբ պատմիչ Ալ-Ուզէյմիի՝ «ֆրանկները գրաւեցին Անտիոքը, զոր անոնց յանձնեց Ֆերուզը, եւ անիկա հայ քրիստոնէայ մըն էր»²¹: Անոր համաձայն՝ «Աղսիանը փախաւ, բայց ճամբան մեռաւ ծարաւէն»²²:

Ղազօղլի (մահ.՝ 1257)՝ Ֆիրուզի ազգութիւնը չի յիշատակեր. «Ֆիրուզ անունով մարդ մը դաւադրեց եւ անոնց դիմաց զիշերով մուտք մը բացաւ, անոնք ներս մտան ու բնակիչները սուրէ քաշեցին», ապա կ'աւելցնէ. «Աղսիանը փախաւ լքելով տունը, կինը եւ զաւակները, բայց բաւական հեռանալէ ետք զոջաց, իջաւ ձիէն ու զլիսուն հող թափելով ողբաց ու կոծեց: Ընկերները հեռացան անկէ եւ ան առանձին մնաց: Հայ փայտահատ մը հանդիպեցաւ անոր, ճանչցաւ զինք, սպանեց ու զլուխը տարաւ Անտիոք»²³:

Արաբ Քամաւէտտին պատմիչը նոյնը կը վկայէ իր «Թարիխ Հալապ» գիրքին մէջ, ուր Անտիոքի կառավարիչի սպանութեան

մասին այսպէս կը գրէ. «Անտիոքի կառավարիչ Աղսիանն իր անգթութիւններով եւ բռնութիւններով ատելի էր դարձել: Բնակիչներից ոմանք քաղաքը մատնեցին ֆրանկներին, եւ Աղսիանի փախչելու ժամանակ հայերը նրան սպանեցին»²⁴:

3 Յունիս 1098-ին Անտիոքի անկումը, խաչակիրներուն համար, փաստօրէն, վերջնական յաղթանակ չէ: Մուսուլի եմիրը՝ Քարպոդա, հսկայ բանակով մը կ'ուղղուի դէպի արեւմուտք: Անոր կը միանան Դամասկոսի, Երուսաղէմի, Հոմսի ու Համայի սելճուքեան զօրաբանակները՝ Տուգազի, Թախթիաքինի, Սինճարի տէր Արսլան Թաշի եւ Սուբման Իպն Արթըզի հրամանատարութեամբ: Քարպոդայի բանակը, անելի քան երեք հարիւր հազար զինուորով, Անտիոքը կը պաշարէ 5 Յունիս 1098-ին ու շուտով կը գրաւէ բերդը: Թուրքմէնները կը ներխուժեն քաղաքի կարգ մը մասերը: Միւս կողմէ՝ կը յաջողին քաղաքը շրջապատել բոլոր կողմերէն, մանաւանդ կը կտրեն խաչակիրներու ամենէն յուսալից ճամբաները, կը հասնին Սուէտիոյ նաւահանգիստը, գետաբերանի բոլոր նաւերը կը քանդեն, զօրաբանակ մը կը հաստատեն Անտիոքի մօտիկ Կարմիր լեռան վրայ, ուրկէ կարելի էր իշխել ամբողջ Անտիոքի դաշտին վրայ: Պահ մը կը թուի, թէ ամէն ինչ վերջացած է խաչակիրներուն համար, որոնք, սակայն, օգտուելով մահմետականներու մէջ ինկած երկպառակութիւններէն, վերջապէս կը յաջողին ճեղքել պաշարման օղակը եւ կ'անցնին հակայարձակումի: Քարպոդայի զօրքերը ծանր պարտութիւն կը կրեն ու անհաշուելի աւար ձգելով՝ խուճապահար կը բռնեն փախուստի ճամբան: Խաչակիրները զանոնք կը հալածեն ծովափէն մինչեւ քաղաք ու մինչեւ Երկաթի Կամուրջը (Անտիոքի եւ Հարեմի կէս ճամբուն վրայ). «Եւ թշնամիները իրենց ետին թողուցին իրենց վրանները, ոսկիներն ու արծաթները եւ ուրիշ բազմաթիւ ապրանքներ, ոչխարներու հօտերը, գո-

²⁰ **Հ. Թ. Նալբանդեան**, Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին, էջ 217-218:

²¹ **Ալ-Ուզէյմի**, տե՛ս «Ալ-Հուրուպ Ալ-Սալիպիե», Բ. հատոր, էջ 663:

²² Նոյն տեղը:

²³ **Պասթ Իպն ալ-Ճուզի Եու-սէֆ Իպն Ղազօղլի**, «Մըրասթ ալ-Չաման» (արբ. ժամանակի հայելին), տե՛ս «Ալ-Հուրուպ Ալ-Սալիպիե», Բ. հատոր, էջ 742:

²⁴ **Հ. Թ. Նալբանդեան**, Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին, էջ 257, ծանօթ. 30:

մէջները, այծերը, ջորիները, ուղտերը, էջերը, ցորեն, ալիւր, զինվ եւ ուրիշ ամար, որոնց այնքան պէտք ունէինք մենք: Ու երբ մեր յաղթանակի լուրը իմացան հայերն ու ասորիները, որոնք այդ շրջանին մէջ կ'ապրէին, աճապարեցին դէպի լեռը, թուրքմէներու ճամբան կտրելու նպատակով: Եւ այսպէս ջարդեցին զանոնք, սպանեցին այն որ բռնեցին»²⁵: Իսկ Ալի ալ-Ստիւմը կը գրէ.

«Մահմետականներէն ամառի տրուեցան անհաշուելի թիւով ու քանակով գործիքներ, վրաններ եւ հարստութիւն, իսկ զինուորներէն ով որ փրկուեցաւ կողոպտուեցաւ հայերուն կողմէ»²⁶: Այնուհետեւ, խաչակիրները խաղաղութեամբ կը վերագրաւեն բերդը եւ Քարպողայի կողմէ նշանակուած անոր նոր կառավարիչը՝ Սեմատ Իպն Մարուանը, քաղաքի իր մարդոց հետ ճամբու կը դնեն դէպի Հալէպ, բայց «հայերը ելլելով գերեցին ոմանք, սպանեցին ուրիշները եւ քիչէրը անոնցմէ տեղ հասան փրկուած»²⁷:

Քարպողայի զօրքերուն Մուէտիոյ նաւահանգիստ եւ Կարմիր լեռ հասած ըլլալուն եւ այնտեղ Նանը պարտութիւն կրելուն կապակցութեամբ նոյնպէս կը յիշուին տեղւոյն հայերը: Սա ալ ցոյց կու տայ, թէ հոծ հայութիւն մը գոյութիւն ունէր նաեւ Անտիոքի ծովափնեայ շրջաններուն մէջ՝ այժմու Մուսա լեռան եւ Քեսայի յարակից շրջաններուն մէջ:

Անտիոքի դքսութեան մէջ հայերը շուտով հիասթափութիւն մը կ'ապրին: Խաչակիրները կը գրաւեն հայոց բերդերն ու ամրոցները, անոնց կը վստահին մանր պատասխանատուութիւններ ու անոնցմով կը համարեն իրենց զօրքերուն վարձկանները: Արաբ պատմիչները յաճախ կը յիշատակեն հայ վարձկանները: Այս անգամ տեղ-տեղ հայե-

րը խաչակիրներու դէմ ապստամբութեան կը դիմեն: Այսպէս՝ 1103-ին Արթասի հայերը կ'ապստամբին Անտիոքի դէմ: Արթասի հայերը, որոնք Ռուճի հովիտի հայերէն ետք առաջինն էին սելճուք իշխանութեան դէմ ապստամբութեան մէջ, այս անգամ կ'ապստամբին խաչակիրներուն դէմ ու նամակով կը խնդրեն Հալէպի տէր Ռոտուանէն, որ ստանձնէ բերդը: Այս մասին Իպն ալ-Գալանսի կը գրէ. «Հիճրի 498 թուին Արթասի հայերը Ռոտուանի յանձնեցին բերդը, որովհետեւ ֆրանկները կը նեղէին զիրենք ու կ'աւելցնէին անոնց տառապանքները»²⁸: Ղազզողին կը յայտնէ հետեւեալը. «Հիճրի 498 թուին, Արթասի հայերը բերդը յանձնեցին Ռոտուանի, որովհետեւ ֆրանկները զիրենք շատ նեղեցին»²⁹: Ալ-Ուզլեյմի համաձայն՝ «Հիճրի 496 թուին՝ Արթասի կը յանձնուի Ռոտուանի, իսկ Հիճրի 498-ին խաչակիրները ետ կը գրաւեն զայն»³⁰: Նկատենք, որ ալ-Ուզլեյմի չի յիշատակեր հայերը: Ան իսլամներու կարուստը կը հասցնէ 10 000 մարդի: Իպն Ալի ալ-Ստիւմը այս մասին կը գրէ. «Արթաս բերդի հայերը բերդը յանձնեցին Ռոտուանի՝ ֆրանկներու բռնութեան պատճառով»³¹: Այլ խմբագրութեան մը մէջ, նոյն պատմիչը կը գրէ. «Հիճրի 498 թուին՝ ֆրանկները ծանր պարտութեան մատնեցին Ռոտուան թագաւորը Արթասի հողին վրայ, Այն Թասիլոյի մօտ: Պատերազմին պատճառը Արթաս բերդն էր: Ֆրանկները ուզեցին զայն առնել: Ռոտուան մեծ զօրք հաւաքեց եւ ելաւ բերդին օգնութեան: Հինգշաբթի օր էր. այրուծին պարտուեցաւ, հետեւակը յանձնուեցաւ, շատեր սպանուեցան, հալէպցիներէն շատեր զոհուեցան: Տե-

²⁵ Լաթինի ալ-Մաճհուլ, Աամալ ալ-Ֆարանճա, տե՛ս «Ալ-Հուրուպ ալ-Սալիպիե», Բ. հատոր, էջ 260:

²⁶ Իպն Ալի ալ-Ստիւմ, Չուպտաթ ալ-Հալապ ֆի Թարիխ Հալապ (արաբերէն՝ Պատմութիւն Հալէպի), Բ. հատոր, Դամասկոս, 1954, էջ 502:

²⁷ Նոյնը, 502:

²⁸ Իպն ալ-Գալանսի, Թարիխ Տիմաշգ, տե՛ս «Ալ-Հուրուպ ալ-Սալիպիե», Բ. հատոր, էջ 546:

²⁹ Իպն ալ-Ճուզի Նուսէֆ Իպն Ղազզողի, Սըրաաթ ալ-Չաման, տե՛ս «Ալ-Հուրուպ ալ-Սալիպիե», Բ. հատոր, էջ 746:

³⁰ Ալ-Ուզլեյմի, տե՛ս «Ալ-Հուրուպ ալ-Սալիպիե», Բ. հատոր, էջ 665-666:

³¹ Իպն Ալի ալ-Ստիւմ, Չուպտաթ ալ-Հալապ ֆի Թարիխ Հալապ, էջ 514:

ղեակ եղանք, որ ձիատրոներին եւ հետեւակէն 3000 մահմետական սպանուեցան, իսկ Արթաշի մահմետականները փախան»³²:

Արաբ պատմիչները հայերը կը յիշատակեն նաեւ Մալահետտի տինի արշաւանքներու ատեն: Մալահետտին 1188 թուին Լաթաքիոյ կողմէն յաղթական ընթացքով իջաւ արեւմտեան Ռուճ ու վրան զարկաւ Քաշֆահանի բերդին առջեւ, Որոնդէսի ձախ ափին, համանուն կամուրջին մօտ: Աջ գետափին վրայ կը գտնուէր Արգաբանի բերդը: Մալահետտին անկէ կազմակերպեց իրարմէ կամուրջով մը անջատուած Շուրը (հարաւային) ու Բագաս (հիւսիսային) բերդերուն գրաւումը, որով պիտի բացուէր իր ճամբան Անտիոքի դիմաց:

Իսկ ալ-Ասիրը Շուրը եւ Բագաս բերդերու գրաւումին մասին կը գրէ. «Սուլթանը Ասի»³³ գետի ափին իջաւ Երեքշաբթի օր, ճումատա ամսուն վեցերորդ օրը (Հիճրի 585): Անկէ բարձրացաւ, պաշարեց Բագաս բերդը ու զայն բարաններով հարուածեց: Ուրբայթ օր, ճումատա ամսուն իններորդ օրը բերդը յանձնուեցաւ անոր: Ան գերեց եւ սպանեց բերդին մէջ գտնուողները, աւարեց ինչ որ կար: Հոն, անոր մօտիկ, կը գտնուէր Շուրը անունով փոքրիկ բերդ մը, որ միւսին կը կապուէր կամուրջով մը: Մա անատիկ բերդ էր եւ մէկ մուտք ունէր: Չորս կողմէն բարաններով հարուածեց զայն: Բերդին տները ապահովութիւն խնդրեցին անկէ. Երեքշաբթի օր էր, ճումատայի 13րդ օրը: Անոնք խնդրեցին երեք օր յետաձգել յանձնումը՝ Անտիոքէն հրաման առնելու համար: Յետոյ Շուրը յանձնուեցաւ, ու սուլթանին դրօշը ծածանեցաւ պարիսպին վրայ: Ատիկա եղաւ Ուրբայթ օր, ճումատա ամսուն 16րդ օրը»³⁴:

³² «Ալ-Հուրուպ ալ-Սալիպի», Բ. հատոր, էջ 696:

³³ Ասի կամ Որոնդէս:

³⁴ Իսկ Ասիրէն կատարուած այս մէջբերումը քաղած ենք Ֆայեզ Գոսարայի «Հուսրն Շուրը-Բագաս՝ Հաղդին ալ-սանիէ» (արաբերէն՝ Շուրը-Բագաս բերդը Երկրորդ Հաղդինը), Հալէպ, 1984, էջ 17:

Գրիգոր Տղայ կաթողիկոսը իր «Ողբ Երուսաղէմի» գործին մէջ կը յիշէ նաեւ Շուրըի Քարը ու Բագասը.

Եւ գՊըքասն զանմատչելին,
գՔարն անուամբ զարմանալին,
Որում եւ Շուրըն կոչէին,
Ապա ի միւս կողմանն անցին,
Առ հիւսիսոյ Անտիոքին»³⁵:

Գրիգոր Տղայի ողբին մէջ Շուրըի եւ Բագասի յիշատակութիւնը չէր կրնար ինքնանպատակ ըլլալ: Այս երկու իրար կից բերդերը վերջին պատնէշներն էին դէպի Անտիոք արշատող Մալահետտինի առջեւ: Ունի նաեւ ազգային կողմ մը: Շուրըը եւ Բագասը կը գտնուին այնպիսի շրջանի մը մէջ, ուր խիտ հայութիւն կար: Բագմաթի հայաբնակ զիւղեր այս շրջանի բերդերու եւ ամրոցներու տէրերուն վասալական ենթակայութեան տակն էին: Այս շրջանին հայոց պատկանող բերդերէն մէկը Քֆըր Թըպպինն էր: Իսկ ալ-Ասիր միակ պատմիչն է, որ գոյգ բերդերէն քիչ մը հիւսիս գտնուող Քֆըր Թըպպինի բերդը խաղաղութեամբ գրաւուած կը համարէ: Ան Քֆըր Թըպպինի անկումը կը դնէ Շուրը ու Բագաս բերդերու անկումէն առաջ. կը գրէ. «Մինչ այդ՝ Գլըճը (էմիր Ղըրսէտտին Գլըճ) ստանձնած էր Քֆըր Թըպպինը, որ հայերուն բերդն էր»³⁶:

Էյեուպեան իշխանութեան շրջանին քրիստոնէաներու պատկանող բոլոր բերդերն ու ամրոցները կ'անցնին իսլամներու ձեռքը: Հայեր կը կորսնցնեն աւատապետական իրենց իրաւունքները, բայց հայութիւնը կը շարունակէ խտութիւն մը ներկայացնել շրջանին մէջ: Այսպէս՝ նոր իշխանութեան վարչական բաժանումին մէջ

³⁵ Գրիգոր Տղայ, Բանաստեղծութիւններ եւ պոէմներ, աշխատասիրեց Ա. Շ. Մնացականեան, Երեւան, 1972, էջ 310:

³⁶ Մէջբերումը տե՛ս Ֆայեզ Գոսարայ, Հուսրն Շուրը-Բագաս՝ Հաղդին ալ-Սանիէ (արաբերէն՝ Շուրը-Բագաս բերդը Երկրորդ Հաղդինը), Հալէպ, 1984, էջ 17:

կարևոր դեր կը վստահուի Հարեմին, որ կը պատկանի Հալեպի սուլթանութեան եւ կեդրոնը կը հանդիսանայ ամբողջ արեւմտեան Ռուճին: Իսկ Շուհնա կը գրէ. «... Հարեմի մէջ կը նստի սուլթանին կողմէ նշանակուած կառավարիչը, որուն առջեւ պատասխանատու են Հարեմի սահմաններէն ներս ինկող երեսուն կառավարիչները: Այնտեղ ամրոցի ամրութեամբ նշանաւոր բերդեր կան. անոնցմէ մէկն էր Տերքուշը, որ անցեալին ամրոց էր: ...Պալմիսը ամուր բերդ է գետի ափին, եւ ունի մզկիթ, աւան ու կառավարիչ: Քֆըր Թըպպին ամրոցը կամ Քֆըր Թըպպին բերդը, դարձեալ ամուր բերդ է Որոնդէսի վրայ, եւ ունի մզկիթ, աւան ու կառավարիչ: Եւ այս կալուածներուն բնիկները եւ մշակները հայեր են...»³⁷:

Արաբ պատմիչները լայն տեղեկութիւններ կու տան նաեւ Որոնդէսի միջին հովիտի Ղապի հայոց մասին: Շուրը ու Բագաս բերդերէն հարաւ, մասնաւորաբար Աֆամիոյ, Քֆըր Թապպի եւ Լաթմինի, մինչեւ Շեյգար բերդի շրջակայքը լատին դքսութեան շրջանին գոյութիւն ունէր հայ ստուար գաղթականութիւն մը: Այստեղ խաչակիրներու հետ համեմատաբար հաշտ քաղաքականութիւն մը կը վարեն Շեյգարի բերդին արաբ տէրերը: Արաբ մեծ զինուորական, գրող եւ որսորդական գրականութեան հիմնադիր Ռուսամա Իսկ Մունգեզ (1095-1188) իր գործերուն մէջ տեղ մը կը պատմէ իր հօր՝ Մաճտէտտին Ապու Մալամա Մուրշիտի (1068-1137) եւ Կիլիկիոյ Կոստանդին իշխանի երկու որդիներուն՝ Թորոս եւ Լեւոն հայ իշխաններուն բարեկամական յարաբերութիւններուն մասին: «Հայերը բազէներ կը դրկեն» վերնագիրով պատմուածքին մէջ, ան կը գրէ. «Իմ հօրս եւ Ռուբէնի երկու զաւակներուն՝ Թորոսի եւ Լեւոնի միջեւ փոխադարձ բարեկամութեան ու թղթակցութեան կապ մը գոյութիւն ունէր, որ զլիսաւորաբար թելադրուած էր հօրս՝ բազէնե-

³⁷ Իսկն ալ-Շուհնա, Ալ տար ալ-Մունթախասայ ֆի թարիխ մավաքայթ Հալապ (Համադրութիւն Հալեպի թագաւորութեան պատմութեան), Դամասկոս, 1984 էջ 167:

րու տիրանալու փափաքէն: Անոնք Մսիսի, Անթարթուսի, Ատանայի եւ Տուրուպի հայ իշխաններն էին: Այս իշխանները ամէն տարի մտաւորապէս տասը բազէ կը դրկէին հօրս՝ ձեռամբ հայ բազէպաններու, որոնք հետիոտն կու գային: Անոնք նաեւ բարակներ կը դրկէին: Իր կողմէ, հայրս անոնց ձիեր, անուշահոտեր եւ Եզիպտոսի մէջ բանուած հագուստեղէն կը դրկէր: Այսպէս՝ մեզի անոնցմէ կը հասնէին հագուագիւտ որակի սքանչելի բազէներ»³⁸: Ռուսամա Իսկ Մունգեզ քանիցս կ'անդրադառնայ Շեյգարի մօտիկ բնակավայրերու մէջ ապրող հայերուն: Տեղ մը կը բողոքէ, որ հիւսիսի զիւղերու հայերը զիջերով յաճախ կ'ասպատակեն Շեյգարի մօտիկ բանջարանոցները ու գողութիւն կ'ընեն, այդ պատճառով ալ ինք կը ստիպուի յատուկ պահակախումբեր նշանակել այդ վայրերուն մէջ՝ պաշտպանելու համար զիւղացիներն ու անոնց կալուածները: Ուրիշ տեղ մը կը պատմէ, թէ անգամ մը բերդին մօտիկ պուրակին մէջ կատաղի առիծ մը սպանելու ելած իր խումբին կ'ընկերանան նաեւ քսան ձիաւոր հայեր, բոլորն ալ նետաձիգ ու նիզակաւոր: Անոնցմէ մէկն ալ կը մենամարտի առիծին հետ ու դանակով կը սպանէ զայն³⁹:

Հայր Ղեւոնդ Այիշան լատին աղբիւրէ մը քաղելով կը յիշատակէ Անտիոքի հարաւը գտնուող շարք մը բնակավայրեր ու գանոնք կը համարէ «հայալուր»: Կը գրէ. «Յորոց գէշ գոմանս ի դէպ է դասել ի կողմանս յայտրիկ եւ զի հայալուր եւս են անուանք նշանակեացոյ գոմանս, որպէս Կոմ կամ Գոմ զիւղ (Come), Պոպոս կամ Բոբս? բերդ (Bobos), համանուն զիւղիւ. Կազնափոր (Casnapor), Կոլկաս (Colgas), Կորկոննէ (Corcona), Մունձարակ կամ Մունսարակ, սոքա ասին լինել ի Palmeris լերին: Իսկ Պոտամա (Potama) եւ Բանջերեզուն (Pangeregum)

³⁸ Ռուսամա Իսկ Մունգեզ ալ-Բանանի (ծն. 1095), «Քիթապ ալ-Իթիպար» (արաբերէն՝ Արժանապատուութեան գիրքը), Դամասկոս, 1980, էջ 174:

³⁹ Նոյնը, էջ 185:

(Բանջարագրում?) ի Ռուսէ հովտի, եւս եւ Գոռոզ (Corrosio), Մաստաբ (Mastaba) եւ այլն. ընդ սոսին սուեալ էր եւ Ս. Գէորզ վանք որ ի թիւս վանորէից Սեաւն լերին նշանակեցինք, եւ միւս եւս վանք՝ որոյ ոչ յիշի սրբազան անուն, այլ կոչի վանք Պարլերոյ լերին (Abbatiam Montis Parleri), որ իցէ թերեւս վանքն Պաղլահոյ, այն գոր յիշատակեցաք ի թիւս վանորէից Սեաւ լերանց»⁴⁰. Կը հաւատանք, որ Անտիոքի շրջանի՝ միջին դարերու հայ հոծ բնակչութեան եւ անոնց բնակավայրերու մասին արաբ պատմագրութիւնը հարուստ տեղեկութիւններ ունի տալիք⁴¹:

HAGOP TCHOLAKIAN
Doctor of History, Armenia

ARABIC SOURCES ABOUT ARMENIAN COMMUNITY OF ANTIOCH AND ITS ENVIRONMENT

Keywords: 9th-13th centuries, Antioch region, Armenian emigration, First Crusade, revolt against Seljuk ruler, urban and rural Armenians, Feruz the Armenian, Harem, Arminaz village, Rouge valley, Striving for independence, against the crusaders.

Byzantine, Assyrian, Latin and specially Arab chronicons and historians often refer to the large Armenian community of the Antioch region in the 9th-13th centuries. Arab historians repeatedly write about the role of Armenians in the conquest of Antioch by crusades and assassination of Seljuk regional leader Yaghy Soughan. Among such authors and works are Ibn Asakir, History of Damascus (Arabic: Tarikh Dimashq), 'Umar ibn Ahmad ibn Hibat Allāh Ibn al-'Adīm (1192–1262, “Everything Desirable about the History of Aleppo” (Arabic: Bughyat al-Talab fi Tārīkh Ḥalab), ibn al-Qalanisi, “Continuation of the Chronicle of Damascus” (Arabic:

⁴⁰ Հ. Ղեւոնդ Ալիշան, Միսուան, Վենետիկ, 1885, էջ 424:

⁴¹ Մենք մեծապէս օգտուած են արաբ պատմիչներէն մեր «Անտիոքի մերձակայ Ռուճի հովտի հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)» գիրքին մէջ, Անթիլիաս, 2006:

the Dhail or Mudhayyal Ta'rikh Dimashq), Sibī ibn al-Jawzi (died in 1256), “Mirror of time in histories of the notables” (Arabic: Mir'at al-Zamān fi Tawārīkh al-'Ayān). Al-Qalanisi widely used the literature of his times, such as the works of Hamdan al-Ataribi (born. 1147) and Ibn Abi Jarade (born 1151), whose works are considered to be lost.

Arab historians, while writing about the role of Armenians in the course of history also pay attention to Armenians' properties, settlements, traditions and jobs, inheriting independent information, such as Majd ad-Dīn Usāma Ibn Munqidh al-Kināni (1095-1188), Book of Learning by Example (Arabic: Kitāb al-'Itibar), Ibn al-Shuhna, Selected timelines of the History of Aleppo Kingdom (Arabic: Dar al-Muntakhab fi Tarikh Mamlakat Halab).

It is worth saying, that some present-day Syrian scholars exclusively study the history and accomplishments of the Armenian people, who lived in the Antioch region, such as Souhel Zakkar, Mouhammed Damen, Faez Kosara and others.

АГОП ЧОЛАКЯН
д.и.н., Армения

АРАБСКИЕ ИСТОЧНИКИ О ДРЕВНИХ АРМЯНСКИХ КОЛОНИЯХ ГОРОДА АНТИОХИИ И ЕГО ОКРЕСТНОСТЕЙ

Ключевые слова: 9-13 века, район Антиохии, армянские колонии, первый Крестовый поход, восстание против сельджукских правителей, армяне – городские и сельские жители, Феруз армянин, Гарем, село Арминаз, долина Руж, стремление к независимости, против крестоносцев

Густонаселенные армянские общины города Антиохии и его окрестностей 9-13 веков широко освещены византийскими, ассирийскими, латинскими, но особенно - арабскими историками и летописцами. В связи с захватом Антиохии крестоносцами и убийством сельджукского правителя Антиохии Яхи Сухана, о проживавших в городе и за его пределами армянах и об их роли в исторических событиях писали такие арабские историки, как Ибн ал-Асакир (род. в 1150 г.), «Тарих Димашк» («История Дамаска»), Мухаммед Ибн Али ал-Адим (род. в 1192 г.) «Бугят ал-Талаб фи

тарих Халаб» («Полезное избранное из истории Алеппо»), Ибн ал-Каланиси (1160-1077), история Мухаммеда Ибн ал-Узэйми (род. в 1161 г.) и «Мераат аз-заман» («Зеркало времени») Сибт ибн ал-Джаузи (умер в 1256 г.). Ал-Каланиси широко использует труды современных ему авторов Хамдан ал-Атариби (род. в 1147 г.) и Ибн Аби Джарадэ (род. в 1151 г.), которые считаются утерянными. Арабские историки помимо освещения роли армян в исторических событиях обращаются также к армянским владениям, населенным пунктам, традициям, ремеслам, передают самостоятельные этнографические сведения. Например, Маджд ад-Дин Усама Ибн Мункид ал-Кинани (1095-1188), «Китаб ал-тибар» («Книга достоинства»), Ибн ал-Шухна (1402-1485) «Ал-тар ал-мундахаб фи тарих мамлакат Халаб» («Сопоставление истории королевства Алеппо»). Некоторые из современных сирийских историков, например, Сухэл Заккар, Мухаммед Дамэн, Файэз Косара и другие, в своих исследованиях особое внимание уделяют роли армян Антиохии в исторических событиях.

ԱՅՍՐԿՈՎԿԱՍ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԷՔ

ՈՒՂԵԳԻՐՆԵՐԸ ՉՄՅՈՒՈՆԻԱՅԻ ՀՍՅԵՐԻ ՄԱՍԻՆ
(XVII դ. I կես – XIX դ. I կես)

Հիմնաբառեր. Ձմյունիա, Թավերնիե, Թեւրնո, Թուրնոֆոր, Ֆրանկաց թաղ, Պ. Ա. Տոլստոյ, գմյունահայ վաճառականություն:

Իր աշխարհագրական կարևոր դիրքի, Արևելքի և Արևմուտքի միջև առևտրատնտեսական շփումներում առանցքային դերակատարման, հատկապես Լեւանտի ապրանքաշրջանառության մեջ իր ուղղորդող նշանակությամբ Ձմյունիան XVII դ. երկրորդ քառորդից առաջատարներից մեկը դարձավ Օսմանյան Թուրքիայի նավահանգիստների շարքում: Հիմնականում այս իրողությունը, ինչպես և Ձմյունիայի հին աշխարհից մինչև Բյուզանդական կայսրություն, այնուհետև սելջուկներից ու բեյություններից մինչև Օսմանյան կայսրություն ձգվող պատմությունը այդ նավահանգստի վրա էր բևեռում եվրոպացի ճանապարհորդների չթուլացող ուշադրությունը ամբողջ XVII-XIX դարերի ընթացքում: Օսմանյան Թուրքիայում ճամփորդող եվրոպացիները հիմնականում ֆրանսիացիներ և անգլիացիներ էին, որ բացատրվում է XVII դարից սկսած եվրոպական ու ասիական առևտրական հանգուցային նշանակություն ձեռք բերած այդ քաղաքում նրանց երկրների արտաքին տնտեսական քաղաքականության շահագրգռություններով, ինչպես և խոշոր տեղաշարժերով արտաքին քաղաքական հարաբերությունների ասպարեզում: Լեւանտական առևտրական մայրուղիներն այս իմաստով համաշխարհային առևտրաշրջանառության մեջ ստացան բացառիկ կարևոր նշանակություն՝ ընդլայնելով փոքրասիական առևտրական ոչ միայն հին, ավանդական, այլև նոր հանգրվանները: Նաև գլխավորապես սրանով է բացատրվում եվրոպական ճանապարհորդների բացարձակ մեծամաս-

նության ամեննին էլ ոչ անձնական շահախնդրություններով կամ նախապատվությամբ, այլ որոշակիորեն ճանաչողական և հետազոտական նկարագիր ունեցող այցերը Ձմյունիա, և որոնք արտացոլվել են նրանց ուղեգրություններում: Առևտուր և դրա իրականացման միջավայր, տեղաբնակ ազգերի ու նրանց դավանական ինքնության նկարագիր, նրանց փոխհարաբերությունների ու տնտեսական ներուժի բացահայտում, Օսմանյան Թուրքիայի տնտեսության և կառավարման ճանաչողություն ու բնութագիր ահա այն գլխավոր նպատակներից մի քանիսը, որոնց հետամտում էին եվրոպական ճանապարհորդները, ոչ քիչ դեպքերում նաև դիվանագիտական ծառայության մեջ գտնվող կամ գտնված անձինք: Բովանդակային այս համալիրում նրանք կարևորում էին Թուրքիայում բնակվող ժողովուրդների առանձնահատկությունների, մշակույթի և զբաղմունքների վերհանումը, անցյալի պատմության և ներկա կացության բացահայտումները: Եվ այս տեսակետից ևս նրանց հետաքրքրությունների ընդարձակ շրջանակն ունի ճանաչողական ակնհայտ արժեք, կարծում ենք, հետադուր քոլոր ժամանակների համար: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է գմյունահայ համայնքի, այդ քաղաքում կենտրոնացած հայ վաճառականության ու նրա տնտեսական գործառնությունների, տեղաբնակ հայերի ազգային ու հանրային կյանքի վերաբերյալ տեղեկատվությունն ու հայեցվածքը:

Ֆրանսիացի բազմաթիվ ուղեգրողներից, որոնք եղել են Ձմյունիայում, առ այսօր առավել հայտնի են Թավերնիեն (1631), Թեվրնոն (1656), Շարդենը (1672), Թուոնեֆորը (1700-ականի սկիզբ), Պ. Լուկան (1700-ականի սկիզբ), Ռանքոնեն (1720-ական թթ.) և շատ ուրիշներ, որոնց անունները կարելի է գտնել նաև XVIII-XIX դդ. ուղեգիրների շարքում:

XVII դ. վաղ շրջանի ականավոր ճանապարհորդներից **Ժան Բատիստ Թավերնիեն** այցելել է Օսմանյան Թուրքիայի ամենատարբեր շրջաններ, մասնավորապես փոքրասիական շրջաններում առաջին անգամ եղել է 1631 թվականին: Ֆրանսերենով տպագրված նրա ուղեգրական նոթերը անգլերեն թարգմանվել և տպագրվել են Լոնդոնում՝ 1678 թ., «Մ. Բ. Թավերնիեի վեց ճանա-

պարհորդությունները» վերնագրով¹: Թավերնիեի համար թեմայի առաջնահերթություններից է Չվյուռնիայի լեւանտական առևտրի կենտրոն լինելու հանգամանքը, որ, ի դեպ, որակական նոր հասկանիշներ էր ձեռք բերել XVII դ. երկրորդ քառորդից կապված պարսկական հում մետաքսի և արևելյան հումքի այլ տեսակների արտահանման ասպարեզում Չվյուռնիայի նավահանգստային նշանակության ընդլայնման հետ: Ֆրանսիացի ճանապարհորդին Չվյուռնիան հետաքրքրում է նաև իր բազմացեղ ազգաբնակչությամբ, կենցաղով, զբաղմունքով և մշակույթով: Չվյուռնիայի հայ համայնքի և նրա ժողովրդագրական կացության տեսակետից կարևոր են նրա արձանագրած վիճակագրական տվյալները. Բնակչության մեծամասնությունը, ըստ նրա, կազմում են թուրքերը՝ 60 հազար, ապա հույները՝ 15 հազար, հայերը՝ 8 հազար և հրեաները՝ 6-7 հազար մարդ: Հայերն ունեն մեկ եկեղեցի, հույները՝ երկու, լատինացի բնակչությունը (Ֆրանկաց թաղում)՝ երեք²:

Թավերնիեն հատուկ ուշադրություն է դարձնում Չվյուռնիա տանող քարավանային ուղիներին, հայերի ծավալուն մասնակցությանը պարսկական հում մետաքսի առևտրին, ինչպես և Անգորա-Չվյուռնիա առևտրական երթուղուն, ֆրանսիական մանածագործական արտադրությանը հետաքրքրող առևտրացանկին (այժի բուրդ, կտավ, բամբակե գործվածքեղեն և այլն), կենցաղային սպառման առարկաներին (հաշիշ, օճառ, խավարծիլ, գյուղատնտեսական այլ ապրանքներ³): Աչքի է զարնում հասարակական անվտանգության հանդեպ նրա ուշադրությունը, որ նա Չվյուռնիայում անհամեմատ բարվոք է համարում, նկատելով, որ Չվյուռնիայում կարիք չի զգացվում շրջել ենիչերիների ուղեկցությամբ, ինչը բացառվում էր Թուրքիայի բազմաթիվ քաղաքներում: Քաղաքի կառավարումը, հարում է նա, իրականացնում է կադին, որպես վարչա-

կան պաշտոնյա, որը «այնքան խիստ չէր քրիստոնյաների հանդեպ, ինչպես այլ տեղերում է»⁴:

Փաստորեն Թավերնիեն բացահայտում է Օսմանյան Թուրքիայի վարչության ամբողջ նկարագիրը, երբ նշում է չորս կարևոր պաշտոնները՝ մեծ վեզիր, Կ. Պոլսի գայմագամ, քափթան փաշա և ենիչերի ադալը⁵: Թավերնիեն անվրեպ է նաև թուրքական բանակի ռազմահողատիրական բնույթը նկարագրելիս՝ ի դեմս զեամեթի և թիմարի տերերի. Նրանք հեծելագոր էին տրամադրում բանակին՝ իրենց հուլային տիրույթների չափին համապատասխան: Նրա տեղեկությունները օսմանյան մաքսային քաղաքականության և մաքսադրույքների վերաբերյալ՝ փաստական նշանակություն ունեն XVII դ. առաջին կեսի հարկային համակարգը վերհանելու համար: Այդ տվյալները նպաստում են առավել լայն ընկալելու հայ վաճառականների գործնական հնարավորությունները Չվյուռնիայի նավահանգստում: Օտարերկրացի առևտրականները, նկատում է նա, պետք է վճարեն կես ասպերա (աքչե, ֆրանսիական կես կրոնից ավելի չափով), արտասահմանի հույները՝ 350 ասպերա, իսկ Պարսկաստանից, Վրաստանից, Մենգրելիայից և այլ երկրներից բեռներ տեղափոխող հայերը՝ 300 ասպերա⁶: Այստեղ էլ գործում էին թուրք պաշտոնության կոռուպցիայի ինքնահնար մեթոդները: Առևտրականները, ոչ առանց հումորի նկատում է Թավերնիեն, պետք է տիրապետեն մաքսատան աշխատողների աչալրջությունը շրջանցելու արվեստին, այդ մարդիկ 1000 էքյու էին վերցնում այն ապրանքի դիմաց, որը չարժեր անգամ 300 էքյու, նրանք բացարձակ բարձր գին էին դնում շատ ավելի էժան ապրանքների վրա⁷:

Ճանաչողական արժեք ունեն Թավերնիեի դիտարկումները քաղաքում հայկական, հունական և թուրքական թաղամասերի վերաբերյալ. Հայերը, թուրքերը և հույները ապրում են բլրի վրա, հայտնում է նա եվրոպացիները՝ ներքևում, ելքով դեպի նավահան-

¹ Այստեղ օգտագործել ենք մեզ մասնելի հրատարակությունները՝ Tavernier J. B., Les six voyages en Turquie et en Perse. Francois Maspero, Paris 1981: The Six Voyages of John Baptista Tavernier, pp. 1-2, London, 1678:

² The Six Voyages, p. 33:

³ Նույն տեղում, էջ 34:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 2:

⁶ Նույն տեղում, էջ 11:

⁷ Նույն տեղում, էջ 141:

զիտար⁸: Հետևաբար, հայերը մինչև 1630-ականի սկզբները ապրել են նախնական վերի թաղամասում և հետագայում են իջել քաղաքումեջ՝ ապագա Հայնոց թաղամաս: Թավերնիեն գրում է նաև, որ Պարսկաստանից եկած քարավանները Չմյուռնիա էին հասնում փետրվարին, հունիսին և հոկտեմբերին և մեկնում նույն ամիսներին: «Առևտրականները մեծ մասամբ հայեր էին, որոնք շատ էին սիրում իրենց ապրանքները վաճառել ֆրանսիացիներին, քան մեկ այլ ազգի վաճառականների, որովհետև նրանք ամեն ինչի դիմաց վճարում էին հնչուն դրամով, մինչդեռ անգլիացիներն ու հոլանդացիները նրանց հարկադրում էին ապրանքի գնի կեսը հատուցել մահուդով»⁹:

1656 թ. Չմյուռնիա է այցելել Թավերնիեի ժամանակակից մյուս ֆրանսիացին **Ժան դը Թելընոն**, որն իր հերթին տեղեկություններ է հայտնում քաղաքի առանձին հանրությունների մասին: Թելընոն գրում է, որ հայերը երկու եկեղեցի ունեն¹⁰, ի տարբերություն Թավերնիեի արձանագրած մեկ եկեղեցու: Իրականում, կարծում ենք, Չմյուռնիայի հայերը XVII դ. ունեցել են մեկ եկեղեցի երկու անուններով՝ Ս. Ստեփանոսի և Ս. Բարթոլոմեոսի անվամբ, որ ֆրանսիացի ճանապարհորդին տեղիք է տվել կարծելու, որ նրանք երկու եկեղեցի ունեն: Համենայն դեպս, չկա մեկ այլ փաստ, որ վկայեր XVII դ. Չմյուռնիայի երկու եկեղեցի ունենալու մասին:

1672 թ. գտնվելով Չմյուռնիայում, ֆրանսիացի ճանապարհորդ **Ժան Շարդենը** աչքի է ընկնում տնտեսական հետաքրքրություններով, նրա ուղեգրական նոթերի հիմքում ընկած են ֆրանսիական, անգլիական և հոլանդական առևտրական փոխհարաբերությունները (1680-1700-ական թթ.՝ անգլիական դիվանագետ և անգլո-հնդկական ընկերության գործակալ): Գրել է «Ճանապարհորդություն դեպի Պարսկաստան և արևելյան այլ երկրներ» ուղեգրական երկը: Նրա իրազեկությունն ի հայտ է գալիս դեպի Չմյուռնիա փոք-

րասիական գյուղատնտեսական ապրանքների հոսքի և այնտեղից առևտրական նույն երթուղիներով ֆրանսիական, անգլիական և իտալական ապրանքների տեղափոխության վերաբերյալ տեղեկատվության հատվածներում: Ոչ պակաս կարևոր են նրա նկարագրություններն ու տվյալները հայ վաճառականների և Հոլանդիայի առևտրատնտեսական կապերի մասին:

Կարելի է կարծել, որ անդրծովյան երկրներ տեսնելու և զգալու բավականությունն է մղել Լյուդովիկոս XIV-ի բժիշկ **Պոլ Լուկային** XVIII դ. առաջին տասնամյակին կամ դրանից փոքր-ինչ վաղ հայտնվելու Օսմանյան Թուրքիայում: Հնարավոր է բժիշկն ունեցած լինի բնագիտական հետաքրքրություններ կամ առավել ևս, հնագիտական արժեքներին ծանոթանալու կամ դրանք ձեռք բերելու նպատակներ, իսկ Չմյուռնիան և դրան կից՝ հին աշխարհի մյուս, ոչ պակաս համբավված Եփեսոսի ավերակները, թերևս, ամենանշանավոր հնավայրերն էին ամբողջ փոքրասիական արևմուտքում: Բժշկի տպագրած աշխատության Ս. հատորից մի հատված է տպագրել Կ. Պոլսի «Բիզանտիոն» լրագիրը «Բզմիր երկու հարիւր տարի առաջ (Լուի ԺԴ-ի բժիշկի գիրքին)» վերնագրով¹¹: Բժիշկը ցուցադրում է իր հնասիրական հակումները, երբ նշում է, որ Չմյուռնիայում եվրոպական հյուպատոսներն օրն ի բուն զբաղված են հնությունների հավաքածուներ կազմելով. «Բզմիր դարձիս,- գրում է նա,- հետամուտ եղայ միայն շքադրամներ, ձեռագրեր և ուրիշ հնութիւններ հաւաքելու, գոր հեռի տեղերէն կը բերեն հռն»: Քիչ անց նա նկատում է, որ քաղաքի շատ հնություններ անմատչելի են հետազոտողներին, որովհետև թուրքերը վախենալով դրանք, իբր, պահպանող ոգիներից և նախանձից դրդված՝ ուրիշներին էլ թույլ չեն տալիս մոտենալ այդ հնություններին: Մեզ համար արժեքավորը, սակայն, Չմյուռնիայի և նրա շրջակայքի վերաբերյալ Լուկայի տեղեկություններն են քաղաքի բնակչության, թվաքանակի, բազմաթիվ շուկաների ու բեզեսթենի (ծածկած շուկա, որտեղ կատարվում էր ակնեղենի, թանկագին մետաղների և այլնի առևտուր) նկարագրությունները: Նրա տվյալներով՝ Չմյուռնիայում

⁸ Les six voyages, p. 138.

⁹ Նույն տեղում, էջ 141:

¹⁰ Տե՛ս **Գալուստեան Գ. Օ.** Չմյուռնիա և Չմյուռնիոյ հայ գաղութը, Յուսուսայ տարեգիրք, Աթենք, 1928, էջ 279:

¹¹ «Բիզանտիոն», 1909, 24 դեկտեմբերի:

ապրում էին ոչ մահմեդականներից՝ 20 հազար հույն, 8 հազար հայ, ամբողջ քաղաքի 100-հազարանոց բնակչության մեջ: Հայերին նա անդրադառնում է Գյուզելիխար (Այդըն) արած իր ճամփորդության առթիվ, դիտելով, որ այդ քաղաքի հայերը «մեծ վաճառականություն կրնեն մետաքսի և մանածի (գործվածքեղենի – Ա. Խ.)»: Այդ ցույց է տալիս, որ Էգեյանի առափնյակում՝ Այդընում, ինչպես և Մանիսայում, Էդդեմիշում և այլ հայաբնակ քաղաքներում XVIII դ. առաջին տասնամյակներին հայ վաճառականությունը շարունակում էր գործել՝ Ձմյունիայի իր հայրենակից վաճառականների հետ միասին և ինքնուրույն:

Ուշադրության արժանի են բժշկի գրառումները Ձմյունիայում և շրջակայքում տնաշինական սկզբունքների վերաբերյալ, որ ընթերցողին ենք ներկայացրել նախընթաց էջերից մեկում:

XVII դ. ֆրանսիական մտածող ճանապարհորդների շարքը արժանիորեն լրացնում է նշանավոր հետազոտող, ֆրանսիական ակադեմիայի անդամ **Շորժ Պիթոն Թուրնեֆորը**: Մասնագիտությամբ բուսաբան, բժիշկ և ֆիզիկոս այդ ճանապարհորդը գրել է նամականու ժանրով, Օսմանյան Թուրքիայում է եղել 1700-1702 թթ.¹²: Նրա գիրքը՝ «Դեպի Լեանտ Պիթոն դը Թուրնեֆորի ճանապարհորդության պատմությունը» լույս է տեսել Լիոնում, 1717 թ. և աչքի է ընկնում իր գիտական մեծ արժեքով, որչափով նա փայլուն կերպով է իրականացրել ֆրանսիական կառավարության առաջադրանքներն իր ուղևորության ընթացքում¹³: Ձմյունիայի և կից շրջանների հայերի մասին նա ևս տալիս է բնութագրական տեղեկություններ: Ըստ նրա, Ձմյունիայում հայերն ունեն մեկ եկեղեցի, հույները երկու, հրեաները ութ սինագոգ, լատինացիները երեք վանք¹⁴: Թուրնեֆորը թերևս միակն է ուղեգրողներից, որին հետաքրքրել են տեղական համայնքների կրոնական հաստատույթ-

¹² Տե՛ս **Новичев А. Д.** История Турции I, с. 282.

¹³ Գիրքը հրատարակվել է Լիոնում, 1717 թ. Relation d'un voyage Levant par M. Pitton de Tournefort վերնագրով: Այստեղ օգտագործված է ֆրանսերեն հետևյալ հրատարակությունը. **Tournefort Jozeph P. De.** Voyage d'un botaniste. II. La Turquie, La Georgie. L'Armenie. Francois Maspero, Paris, 1982.

¹⁴ **Tournefort J. P.** . Voyage d'un botaniste, p. 314:

յունների եկամուտները: Ամենից շատ, հայտնում է նա, ստանում է հայոց առաջնորդարանը, որն ապրում է ազգի նպաստներով՝ «Այդ նպաստները կիրակի և տոն օրերը կը հաւաքեն եւ կը հաւաստեն, թե տարին վեց կամ եօթն քաակի կը հասնին» (մեկ քաակը համարժեք էր 500 դուրուշի, որ բավական պատկառելի գումար էր կազմում)¹⁵: Քաղաքի 90 հազարանոց բնակչության մեջ հույներն ունեին 15, հայերը՝ 8 և հրեաները՝ 7 հազար մարդ, թուրքերը՝ 60 հազար¹⁶: Դարավերջին Ձմյունիայի բնակչության նվազելու երևույթը նա բացատրում է 1688 թ. երկրաշարժի հնարավոր հետևանքներով:

Հետաքրքիր և եզակի են Քուշադայի (Սկալա Նովա) հայերին վերաբերող նրա տեղեկությունները: Քրիստոնյաներից հույներն այստեղ ունեն 600 ընտանիք, հայերը՝ 60, ընդամին նկատում է, որ հայերը եկեղեցի չունեն¹⁷: Քուշադայում առևտրի սահմանափակությունը բացատրելով Ձմյունիայի շուկայի մեջ այդ բնակավայրի մարդկանց ներգրավմամբ, փոխարենը նշում է, որ Մանիսայում կատարվում է բամբակի և ցուղատնտեսական այլ ապրանքների առևտուր¹⁸, և որից, ինչպես հայտնի է, անմասն չէր նաև հայ բնակչությունը:

Իր շարադրանքում Թուրնեֆորը կանգ է առնում ֆրանս-հայկական առևտրական կապերի տեսակետից ուշագրավ բերաթլը (արտոնագիր ունեցող) վաճառականների խավի վրա, որից առավելապես օգտվում էին ֆրանսիացի վաճառականները¹⁹, և որը Թուրքիայում Ֆրանսիային տրված կապիտուլյացիաների ռեժիմի դրսևորումներից մեկն էր: Թուրնեֆորի պատմությունը առանձնաձևում է Ձմյունիայի և նրա շուկաների ճշմարտացի և գունեղ, միաժամանակ նուրբ դիտողականության տեր մտավորականի նկարագրություններով և ընդհանրացումներով:

¹⁵ Մեջբերումը և բացատրությունը՝ ըստ **Գալուստեան Գ. Օ.**, նշվ. աշխ., էջ 282:

¹⁶ Նույն տեղում, էջ 313:

¹⁷ **Tournefort J. P.**, նշվ. աշխ., էջ 328:

¹⁸ Նույն տեղում, էջ 312-313:

¹⁹ Նույն տեղում, էջ 316:

Զմյուռնիայի հայերի մասին բավականաչափ տեղեկություններ են տրվում ավելի ուշ շրջանի ֆրանսիացի ճանապարհորդ Ռանքոենեի «Ճանապարհորդությունն ի Զմյուռնիա, յԱրշիպեղագոս եւ ի Կրետե. 1821-1824» գրքում, որից մի հատված, առանց այլ մատենագիտական տվյալների, թարգմանվել է հայերեն՝ Զմյուռնիայում (Բուռնովա արվարձանում) և ներկայումս պահվում է Մաշտոցյան Մատենադարանի Մարկոս Աղաբեկյանի արխիվում (թղթ. 189, վավ. 65): Այս ճանապարհորդը ևս, ֆրանսիական ուղեգրողներին հատուկ լայն դիտողականություն ունի («փողոցքն նեղ են և լի աղտեղութեամբ, եւ տունքն շինեալք ի կառոյ յաղիւսայ թրծելոյ եւ ի փայտե, ուր յաճախ լինին հրդեհք»), միաժամանակ նշելով, որ այք են շոյում արևելյան ապրանքներով լեցուն բազմաթիվ շուկաները: Քաղաքի թաղամասերն իրենց առանձին համայնքներով իրարից բաժանված էին կրկնակի դարպասներով, որոնք փակվում էին երեկոները: Հեղինակը քիչ հայտնի տեղեկություններ է հատրդում քաղաքի վարչության մասին, նշում է, որ քաղաքը վայելում է վայիղե սուլթանուհու (սուլթանի մոր) հովանավորությունը, այստեղ է գտնվում գորահրամանատարի (մյուսեյլիմ) նստավայրը, որն անկախ է մերձակա քաղաքների փաշաներից և որին անձամբ նշանակում էր սուլթանը: Մյուսեյլիմին էին ենթակա ենիչերիների ջուկատները՝ «բազումս եւ խոռվայոյզս որք գոր ի հանապազ ի խնդիր են աղմկաց եւ աւարառութեանց»: Ռանքոենեին առավել հետաքրքրողը Ֆրանկաց թաղն է (Ֆրանկ մահալլեսի)՝ իր ակումբով ու խաղատնով, շվայտ երիտասարդներով ու բաց բարքերով: Այդ թաղի բնակիչները (որոնք հայտնի էին լատինացիներ անվամբ), ծագումով ֆրանսիացի, անգլիացի, հոլանդացի և գերմանացի էին, որոնց հեղինակն անվանում է «արևելյան ֆրանկներ»՝ 5-6 հազար մարդ, որոնք ծնվել էին Թուրքիայում: Ռանքոենեն քիչ է անդրադառնում քաղաքի կրոնական փոքրամասնություններին և այս տեսակետից ժխտ հեղինակը այդ լրացնում է քաղաքին կից ամառանոց արվարձանների (Բուռնովա, Սեվտի քոյ, Պուճա, Քուբլուճա), Հին աշխարհի պատմության հետ կապվող հուշությունների և իհարկե, ֆրանսիական առևտրի վերաբերյալ ծանոթություններով:

XVII դարից հայտնի են անգլիացի բազմաթիվ ճանապարհորդների այցելությունները Զմյուռնիա, որոնք իրենց առջև դրել են, ինչպես և եվրոպական ճանապարհորդների մեծ մասը, ճանաչողական, և առաջին հերթին, իրենց երկրի առևտրական քաղաքականությանն առնչվող խնդիրներ: 1610-ական թթ. սկզբներին Զմյուռնիա է այցելել անգլիացի **Ջորջ Սանդին**՝ հետամտելով վերհանել Օսմանյան Թուրքիայի օրենսդրական և կառավարման համակարգը, ինչպես և առևտուրն ու արդարադատությունը²⁰: Սանդին Զմյուռնիայում է եղել ջալալի Քալդենդեր օլուլի ապստամբությունից հետո, երբ այդ քաղաքում առևտուրը նոր միայն սկսել էր վերականգնվել: Զմյուռնիայի հիմնական արտադրանքը նա համարում է բամբակն ու բուրդը, որ շուկա է հանվում մեծ քանակությամբ: Ջալալիների կողմից Զմյուռնիայի նավահանգստի պաշարումը և անգլիական առևտրանավերին վնասներ հասցնելու փաստերը մեզ հետաքրքրում են դեպի Զմյուռնիա հայերի հերթական գաղթի հնարավորության տեսակետից: Նրանք այստեղ կարող էին հայտնվել (Մյուսիքից և Արևելյան Հայաստանի այլ գավառներից) 1610-ական թթ. երկրորդ կեսին միայն՝ տարածաշրջանը մինչ այդ ջալալիական հուզումներով բռնված լինելու պատճառով: Սանդին անուղղակիորեն հաստատում է այս կարծիքը, նկատելով, որ ապստամբությունների պատճառով Զմյուռնիայի ազգաբնակչության մեծ մասը հեռացել էր այրված քաղաքից²¹:

Անգլիացի մեկ այլ ճանապարհորդ **Ուիլյամ Լիթգոուն**, նույն տասնամյակին իր արևելյան ճանապարհորդության ընթացքում այցելելով Կանդիա, Հունաստան, Երուսաղեմ և հանգրվանել նաև Զմյուռնիայում²²: Նա ուշադրություն է դարձրել առևտրական շրջանառության մեջ ներգրավված հիմնական ապրանքներին, ինչպիսիք էին նուրբ մետաքսը, բրդե-բամբակյա տարատեսակ գործվածքեղենը: Այս նավահանգստում կատարվող միջազգային առևտրի

²⁰ Sandy's Travels Containing an History of the Original State of the Turkish Empire, London, 1673. St' u twal Armenians in the Otoman Empire, էջ 69:

²¹ Sandy's Travels, p. 12.

²² Hakluytus Posthomus or Purchas his Pilgrimes. vol. 10, Glazgow, MVMV, p. 475.

ծավալների նկարագրությամբ Լիթգոուն ցույց է տալիս, որ դրանից առաջ էլ Ջմյունիան իրականացնում էր Արևելք-Արևմուտք ապրանքափոխանակության կենտրոնի գործառույթը, որը, ինչպես հայտնի է, շեշտակիորեն պետք է բարձրանար XVII դ. երկրորդ քառորդից: Նկատենք, որ ճանապարհորդը մասնացույց է անում վոքրասիական արևմուտքի բամբակագործական արտադրանքի նկատմամբ եվրոպական շուկաների բարձր պահանջարկը²³:

Տեղեկատվության հարստությամբ և սթափ ընդհանրացումներով առավել աչքի են ընկնում անգլիական արտակարգ դեսպանի քարտուղար, ապա Ջմյունիայում անգլիական հյուպատոս **Պոլ Ռայկոտի (Ռիկո)** հուշագրական նոթերը: Այս հեղինակը Թուրքիայում է եղել 1660-1670-ական թթ., նրա դիտարկումները լույս են տեսել իր դիվանագիտական ծառայությունից ոչ շատ հետո և ունեն հավաստի սկզբնաղբյուրի նշանակություն²⁴: Այստեղ միայն նկատենք, որ Ռայկոտը սթափ վերլուծություններ ունի երկրի տնտեսության, ֆինանսների, բանակի, կրոնական քաղաքականության, վարչաձևի և այլնի վերաբերյալ: Ուշագրավ են նրա տեղեկությունները իրեն մեսիա հռչակած Սաբեթա Սեիի (Յվի) միջադեպի (1666), նրա կենսագրական ու Ջմյունիայի հրեական միջավայրի հանգամանքների բացահայտումներով: Հեղինակը որոշ դեպքերում անդրադառնում է Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնությունների կյանքի առօրեական հանգամանքներին, հիշում է նաև հույն և հայ մեծահարուստներ Պանայոտիին ու Ապրո Չելեպիին, նշում, որ վերջինս պատկառելի գումարներ էր ներդրել իր համայնքում եկեղեցիներ կառուցելու համար²⁵: Ջմյունիայում ենիչերիների անսանձ կամայականության մի պատկեր ենք տեսնում անգլիացի

²³ Նույն տեղում:

²⁴ Rycout P. (Late Consul of Smyrna). The History of the Turkish Empire from the Year 1623 to the Year 1677. London. MDCLXXX. Այս հեղինակի գիրքը ֆրանսերեն է հրատարակվել 1670 թ.: Փարիզում (տե՛ս **Անասյան Հ. Մ.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 12): Ռայկոտի վերաբերյալ համառոտ տեղեկությունները, որ մենք նշել ենք վերը, տե՛ս Новичев А. Д., նշվ. աշխ., էջ 281:

²⁵ Rycout P., նշվ. աշխ., էջ 279-280:

ճանապարհորդ **Ջոն Հոփսուոզի**²⁶ ուղեգրական հրատարակության մեջ (ճամփորդել է 1809-1810 թթ.): Իրենց ծառայակցի սպանության դիմաց ենիչերիները կրակի էին տվել Ֆրանկաց թաղը (այս հեղինակը նկատի ունի 1799 թ. իրադարձությունները), այնուհետև իրենց վրեժխնդրությունը թափելով քրիստոնյա հույների ու հայերի վրա և 300 մարդ սպանելով փողոցներում²⁷:

Ազգագրական և առևտրական լրատվության բնույթ ունեն անգլիացի ճանապարհորդ **Հենրի Դիլբորնի** զմյունական տպավորությունները: Ահա և հայկական ու հունական տների նկարագրությունները՝ փայտաշեն, մինչև եռահարկ, դրանց վերին հարկերը սեղմ մոտենում են դիմացի տանը՝ «մի փոքր տարածություն թողնելով փողոցներից թափանցող լույսի համար՝ մոտ վեց ոտնաչափ բարձրությունից²⁸»: Հույներն ունեն երկու, իսկ հայերը մեկ եկեղեցի՝ ճոխ ոսկեգօծված դրամանկարներով: Հետաքրքրական է Ջմյունիայում առկա մաքսային քաղաքականության՝ XIX դ. սկզբի պատկերը, որ բացահայտում է սեփական առևտուրը կաշկանդող իրողությունը. օտարերկրացիները, արձանագրում է նա, վճարում են ապրանքի արժեքի մեկից մինչև երեք տոկոսը, թուրքերը՝ չորս, հայերն ու հույները՝ հինգ կամ վեց²⁹:

Հ. Դիլբորնի՝ տների նկարագրությանը կարելի է համադրել անգլիագիր մեկ այլ ճանապարհորդի՝ **Ջոն Լ. Ստեֆենսի** ուրվագծերը³⁰՝ հայկական թաղամասի վերաբերյալ (Ջմյունիայում է եղել 1835 թվականին): Այդ թաղամասը, գրում է նա, Ջմյունիայում ոճով և տեսքով գերազանցում է յուրաքանչյուրին, «նրանց փողոցներն ընդարձակ են և բարեկարգ, տները մեծ են և կանոնավոր... իրենց արևելյան ճարտարապետությամբ, լայն պատշգամբներով և վանդակաձաղ պատուհաններով»³¹:

²⁶ Armenians in the Ottoman Empire, p. 155.

²⁷ Նույն տեղում 155:

²⁸ Նույն տեղում, էջ 169:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում, էջ 243:

³¹ Նույն տեղում:

1830-ական թթ. ճանապարհորդների մեջ զմյուռնաբնակ համայնքների տնտեսական կյանքի նկարագրությամբ առանձնանում է **Ֆրենսիս Հարվեն**: Չմյուռնիայի հայերի և հույների առևտրատնտեսական կապերին անդրադառնալով, նա նկատում է, որ նրանք իրենց առևտրական գործարքներն իրականացնում են Լոնդոնում, Մարսելում, Փաիզում, Տրիեստում և այլուր: Նա շոշափում է, ի դեպ, հայագիտությանը քիչ ծանոթ՝ զմյուռնացի հայ կաթոլիկների տնտեսական գործունեությանը, որտեղ, չնայած ուղեգրողի հպանցիկ անցումներին, ի հայտ է գալիս իրենց ազգությունից նրանց հեռանալու և օտարերկրացի դավանակիցներին ձուլվելու հանգամանքը: «Երբ ես ապրում էի այնտեղ (Չմյուռնիայում – Ա. Խ.), Բսավերդենց ֆիրման կատարում էր իր առևտրական գործարքներն ամենալայն չափերով, անում էր իր խոշոր գործարքները: Չեռնարկի գլուխ էին կանգնած հայերը, թեև ներկայումս նրանք իրենց համարում են ֆրանկներ: Բայց եղբայրները (Բսավերդենց) շուտով բաժանվեցին, ընկերությունը կիավեց երկու տարբեր ֆիրմաների միջև»³²:

Հետաքրքիր է, որ խոսքը վերաբերում է Նախիջևանի Խոշկաշեն գյուղաքաղաքից հայտնի Բսավերդենց ընտանիքին, որից սերում էր Թովմաս Բսավերդենցը՝ Նախիջևանի հայ կաթոլիկների առաջնորդը և Դոմինիկյան միաբանության անդամը: 1747 թ., ինչպես տեսանք, նա կազմակերպել էր իր համայնքի գաղթը Չմյուռնիա, որի պատճառն էին եղել պարսկական ծանր հարկահանումները:

Այս հեղինակների մեջ Չմյուռնիայի ազգաբնակչության ընդհանուր թվի վերլուծական դիտարկումներով առանձնանում է **Ֆ. Ռանդելի** գիրքը³³: Մասնավորապես, ուշադրություն են գրավում հեղինակի քննադատական վերաբերմունքն ու դիտարկությունները XVII-XVIII դդ. Չմյուռնիա այցելած եվրոպացի ճանապարհորդների վիճակագրական տվյալների նկատմամբ: Նա համեմատում է քաղաքի ազգաբնակչության թվաքանակը (ընդհանուր և մասնակի

³² Նույն տեղում, էջ 270:

³³ Նույն տեղում, էջ 232:

ըստ համայնքների) ցուցադրող ճանապարհորդներ դը Լա Մոսրեի (1699), Պոկոկի (1740), Ստյուարտի (1788), Դալավեյի (1795) և ավելի ուշ շրջանի հեղինակների տվյալները՝ նրանց հաշվարկների հակասականությամբ հանդերձ, ցույց տալով, որ շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում (1699-1795) Չմյուռնիայի ազգաբնակչության ընդհանուր թիվը 24 հազարից հասել է 130 հազարի³⁴: Ավելի ուշ հանդես եկած ճանապարհորդ **Ռ. Չեսնեյը** (Չմյուռնիայում է եղել 1835-1837 թթ. ճանապարհորդությունների ընթացքում) իր քառահատոր գրքում քաղաքի բնակչությունը հաշվում է շուրջ 130 հազար մարդ, մոտ 70 հազարը՝ թուրք, 30 հազարը՝ հույն, 12 հազարը՝ իսպանական հրեաներ, 7 հազարը՝ հայ³⁵: 1830-ական թթ. մեկ այլ ճանապարհորդ՝ վերոհիշյալ **Ֆ. Հերվեն**, ավելի է ընդլայնում այս ցուցանիշները՝ Չմյուռնիայի ազգաբնակչության ընդհանուր թվաքանակը հասցնելով 150 հազարի և հետաքրքիր լուսաբանումներ անելով քաղաքի կրոնադավանական հատկանիշներով առանձնացող թաղամասերի (թուրքեր, հույներ, հրեաներ, հայեր, ֆրանկներ) մասին³⁶: Վերոհիշյալից որոշ տարբերություններով իր տվյալներն է ներկայացնում, ի դեպ, ֆրանսիացի **Ժ.-Պ. Դեբբինը** 1845 թ. հրատարակված երկհատոր գրքում, բնակչության ընդհանուր թիվը նա ամրագրում է 145 հազար, որից 80 հազարը՝ թուրք, 35 հազարը՝ հույն, 15 հազարը՝ հրեա, 10 հազարը՝ հայ և 50 հազար՝ քրիստոնյա այլ ազգաբնակչություն³⁷:

1845 թ. հրատարակած իր գրքում անգլիացի **Վայշը** ակնհայտորեն նվազեցնում է Չմյուռնիայի ազգաբնակչության ընդհանուր թիվը՝ հաշվելով ընդամենը 100 հազար մարդ և խուսափելով այդ թիվն ըստ համայնքների տրոհելուց: Այստեղ մեզ առավել հետաքրքրում է Աքիսարի բնակչությանը վերաբերող՝ նրա տեղեկատվությունը, ընդամենը 6-7 հազար մարդ, որից 1500-ը՝ հույներ և

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում, էջ 265:

³⁶ Նույն տեղում, էջ 269:

³⁷ Նույն տեղում, էջ 330:

հայեր³⁸: Չմյուռնիայի նավահանգստի առևտրական կացության և առհասարակ օսմանյան ու միջազգային տնտեսական նշանակության ոչ պակաս հետաքրքրական ծալքեր են բացահայտվում ռուս ճանապարհորդների և մասնագետների գրառումներում: XVIII դ. երկրորդ կեսի ճանապարհորդ Մերապիոնը Չմյուռնիայի նավահանգստի եռուզեռը պայմանավորում էր երթևեկ բազմաթիվ օտարերկրյա առևտրանավերով, որոնք այստեղից մեկնում էին Կ. Պոլիս և այլ ուղղություններով³⁹: Ճանաչողական տեսակետից ուշագրավ են 1740-ական թթ. Կ. Պոլսում ռուսական գործակալ **Ա. Դ. Նեպյուևի** տեղեկությունները քաղաքի առևտրական շրջանառության, առևտրատեսակների, ներմուծվող և արտահանվող ապրանքների, ինչպես և Պարսկաստանից Չմյուռնիա ձգվող քարավանային (ցամաքային) ուղիների և դեպի մերձավորարևելյան տարածքներ տանող ուղիների վերաբերյալ: Իր տեղեկագրում Ա. Նեպյուևը Չմյուռնիան դասում է օսմանյան առաջնակարգ նավահանգիստների շարքում՝ (Կ. Պոլսի, Սալոնիկի, Հալեպի և Կահիրեի հետ միասին), միաժամանակ այն համարելով ասիական և եվրոպական ապրանքների ամբարանոց: Աչքի են ընկնում փաստականորեն հագեցած տվյալները զմյուռնաբնակ եվրոպական համայնքների, անգլիական լեւանտական առևտրական ընկերության և դրա առանձնաշնորհումների մասին⁴⁰:

Ասվածին անմիջականորեն առնչվում է Օսմանյան Թուրքիայում Պետրոս Մեծի դեսպան **Պ. Ա. Տոլստոյի** լայն իրազեկությամբ առանձնացող տեղեկագիրը (XVIII դ. սկիզբ): Պ. Տոլստոյի նկարագրությունները շոշափում են Եվրոպայի հետ առևտրի, Թուրքիա ներմուծվող ապրանքների, պարսկական մետաքսը դեպի սևծովյան առևտրական ուղիներն ուղղելու, այս ասպարեզում հայ վաճառականների գործառույթի և այլնի մասին: Դեսպանի տեղեկությունների մեջ ուշագրավ են նաև հոլանդական առևտրի, Թուրքիա ներմուծվող հոլանդական, իտալական և անգլիական ապրանքներ-

րի տեսականու վերաբերյալ մտքերը, որոնք բնականաբար, պետք է գոհացնեին ռուսաց կառավարության հետաքրքրությունները արտաքին քաղաքականության ոլորտում⁴¹: Պ. Տոլստոյի հաղորդումներում իրենց տեղն ունեն այդ նույն հետաքրքրություններից բխող տվյալները, որպիսիք առնչվում են թուրքական նավատորմին և Էգեյանի առափնյակին, որոնք գտնվում էին Քափթան փաշայի իրավասության ներքո:

Եթե հանրագումարի բերենք եվրոպական տասնյակ ճանապարհորդների՝ Չմյուռնիայի ազգաբնակչության վերաբերյալ տվյալները, ակնհայտ է, որ սկսած Թավերնիեից (1631)՝ նրանց հաշվումներով Չմյուռնիայի հայերի թիվը տատանվում է հիմնականում 7-10 հազարի միջև, և հասկանալի է, որ այս դեպքում դժվար է նրանցից ճշգրտություն ակնկալելը, ինչպես, ի դեպ, առհասարակ ուղեգրական գործերից: Ճանապարհորդներից ոմանք օգտագործում են հին և հայտնի տվյալները, ոմանք հենվում են բանավոր տվյալների վրա, ոմանք՝ մոտավորապես համադրելով մատչելի կամ պատրաստի թվերը: Մնում է, մանավանդ արխիվային վավերագրական նյութերի բացակայության պայմաններում, խորապես շնորհակալ լինել ճանապարհորդներին՝ անգամ նրանց տրամադրած մոտավոր տվյալների համար:

³⁸ Նույն տեղում, էջ 352

³⁹ Данциг Б. М., Русские путешественники на Ближнем Востоке, с. 73.

⁴⁰ Նույն տեղում, էջ 79-80:

⁴¹ Шт и Русский посол в Стамбуле, Москва, 1985.

ARMENIANS OF SMYRNA ACCORDING TO
TRAVELLERS FROM THE
FIRST HALF OF THE 17TH TO THE FIRST HALF OF THE 19TH
CENTURIES

Keywords: Smyrna, Tavernieh, Tevano, Turnephor, French district, P.A.Tolstoy, trade of Smyrna Armenians.

The foreign travelers, who visited Ottoman city of Smyrna and wrote about it in their travel notes, were basically French and English (Jean-Batiste Tavernie, Jean Baptiste Simeon Chardin, Jean de Thevenot, George Sandys, W. Lithgow, P. Rycoth, G. Hobhauz, G. Stevens, A.D. Nebluyev, P. A. Tolstoy and others).

The interests of these travelers were mainly due to the unprecedented expansion of Levant economic trade in the port of Smyrna in the second half of 19th century, which in turn, motivated European travellers to learn about Asia Minor merchandise circulation routes closely and their possible competition in that area. The visits of foreign travellers were of cognitive and investigative character, where their attention was displayed upon dissident minorities, including national and economic position of the western Aegean Armenian communities. Their traveling notes are, in most cases, considered as significant source of information, especially where the matters refer to the religious structures, national temperament, everyday life and occupation of Smyrna Armenians.

The observations and remarks of the travelers contribute in the generalization of the typical system of Ottoman governmental administration and customs policy in Smyrna.

ПУТЕШЕСТВЕННИКИ ОБ АРМЯНАХ СМИРНЫ С ПЕРВОЙ
ПОЛОВИНЫ 17-ГО ДО ПЕРВОЙ ПОЛОВИНЫ 19-ГО ВЕКА

Ключевые слова: Смирна, Тавернье, Тевано, Турнефор, квартал Франков, П.А. Толстой, армянское купечество Смирны.

Посещавшие Смирну иностранцы в основном были французами и англичанами (Ж. Тавернье, Ж. Тевано, Ж. Шарден, Ранкоене, Дж. Сандис, У. Литгоу, П. Райкот, Дж. Хобхауз, Дж. Стефенс, А.Д. Неплюев, П.А. Толстой и др.).

Помимо культурных интересов это главным образом объяснялось беспрецедентным ростом торгово-экономического значения смирнинского порта в левантийской торговле начиная со второй четверти XVII в., что в свою очередь стимулировало европейские страны ближе ознакомиться с малоазиатским торговым оборотом и возможностями их конкурентов в этом регионе.

Приезд иностранных путешественников носил как познавательный, так и исследовательский характер; они проявляли интерес к национальным меньшинствам иного вероисповедания, в том числе к национальному и хозяйственному быту армянских общин западного эгейского побережья. В своем большинстве их путевые заметки имеют значение первоисточника, особенно если речь идет о религиозных институтах смирнинских армян, об их национальном менталитете, численности, образе жизни, быте и т.д.

Заметки путешественников помогают составить представление о характерных чертах османской административно-управленческой системы и таможенной политики.

XV-XVIII ԴԴ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԵՐԿԵՐԸ
ՈՐՊԵՏ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՄԻ ՀԱՅԵՐԻ ՊՍՏՈՒԹՅԱՆ
ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐ (ՀԱՄԱՌՈՏ ԱՎՆԱՐԿ)

Հիմնաբառեր. Արևելյան Կովկաս, Շիրվան, Ասլերոնյան թերակղզի, ճանապարհորդ, Բարու:

Պատմական հավաստի հիշատակությունները վկայում են, որ Արևելյան Այսրկովկասի (ներառում է Կուրից հյուսիս պատմական Բուն Աղվանքի¹ և նրանից հյուսիս-արևելք տարածվող մերձկասպյան, ինչպես նաև Կուրի աջափնյա դաշտավայրը և Երասխ/Արաքսի ստորին հոսանքից հարավ գտնվող Մեծ Հայքի Փայտակարան² աշխարհի արևելյան Կասպից ծովի առափնյա շրջան-

¹ Բուն Աղվանքի աշխարհագրական սահմանների և առերթեր հարցերի մանրամասն քննությունը տե՛ս **Ակոբյան Ա. Ա.** *Албания-Алуанк в греко-латинских и древне-армянских источниках*, Ереван, 1987; **Սվազյան Հ.** *Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից VIII դարը ներառյալ)*, Երևան, 2006; **Հարությունյան Բ.** *Այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցեր*, «Վճռ», Երևան, 2011, ապրիլ-հունիս, № 2 (34), էջ 30-64; **Վարդանյան Ա.** *Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն*, Երևան, 2013; **Յակոբեան Ա. Ա.** *Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար*, Երևան, 2020:

² Մեծ Հայքի 11-րդ¹ Փայտակարան աշխարհը Հայաստանում Արշակունյաց թագավորության վերացումից (428 թ) հետո տարբեր ժամանակներում մտել է այլևայլ պետությունների կազմի մեջ: Թուրքմենչայի 1828 թ.-ի փետրվարի 10-ի հաշտության պայմանագրով Այսրկովկասում Ռուսական կայսրության տիրուպետության հաստատումից հետո անցկացվեցին վարչատարածքային բաժանումներ: Ցարական կառավարությունը նախ Կասպիական մարզի (1840 թ.), ապա՝ Ծամախու նահանգի (1846 թ.), իսկ այնուհետև՝ Բարվի նահանգում (1867 թ.) Շիրվանի, Բարվի և Ղուբայի պրովինցիաներից բացի ընդգրկեց նաև Փայ-

ները) տարեթնիկ տարածքում վաղ ժամանակներից բնակվել են ոչ միայն աղվաններ³, այլև որոշակի հայկական էթնիկ տարր⁴, որն

տակարանի (ունեցել է 12 գավառ) արևելյան շրջանները, հյուսիսում Մուղանի դաշտի մեծ մասը (հետագայի՝ Ջավառի գավառը), հարավ-արևելքում՝ Կասպից ծովի առափնյա շրջանը՝ Լենքորանի ցածրավայրը և Թալիշի լեռնային շրջանը (հետագայի՝ Լենքորանի գավառը): 1920 թ.-ի ապրիլի վերջերին Փայտակարանի արևելյան շրջանները բռնակցվել են Ադրբեջանական ԽՍՀ-ին (տե՛ս Արքանհամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 350; **Հարությունյան Բ.**, Փայտակարան, ՀՄՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 301-302; **Նույնի՝** Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387-451 թթ., ԲԵՀ, Երևան, 1976, էջ 77-95; **Նույնի՝** Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, ԼՀԳ, Երևան, 1981, № 12, էջ 61-76; **Նույնի՝** Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների (քարտեզ), Երևան, 2001); **Амбарцумян А.**, *Область Паїтакаран и гора Сабалан. Филологические и этимологические очерки (этимология названий и происхождение традиций)*. Международная конференция по арменоведению «Письменные памятники армянского наследия». Сб. докладов и тезисов, Ред. составитель **Д. С. Мкртчян**, СПб., 2017, с. 21-40); **Յակոբեան Ա. Ա.** *Աշխարհացոյցեան Փայտակարան նահանգի գաւառների տեղորոշման նոր փորձ («Հայաստանը եւ արեւելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Գ»): Ճանաչված հայագետ-կովկասագետ Պավել Չորանյանի (1948–2017) ծննդյան 70-ամյակին նվիրված Հանրապետական գիտաժողով (մայիսի 17-18, 2018): Ջեկուցումներ եւ զեկուցումների դրույթներ*, Երևան, 2018, էջ 236-246; **Նույնի՝** *Локализация кантонов (гаваров) провинции Паїтакаран Великой Армении по «Ашхарнацою»-у («Армянской географии» VII века)*, «Anatolia – The Caucasus – Iran: Ethnic and Linguistic Contacts» (ACIC), 10-12 May, 2018, Yerevan, Institute of Oriental Studies, Russian-Armenian University, Armenia in Cooperation with the Institute of Empirical Linguistics Goethe University of Frankfurt am Main. Abstracts, Yerevan, 2018, p. 19-20.

³ Ըստ Մտրարանի՝ Բուն Աղվանքում ապրել են 26 տարալեզու ցեղեր (տե՛ս **Страбон**, *География*, пер., статья и комментарии **Г. А. Стратановского**, Москва, 1964, кн. XI, гл. IV, § 6, с. 476). Բուն Աղվանքի թագավորության գոյության ընթացքում (մ.թ.ա. I - մ.թ. V դդ.) նրա կազմի մեջ մտած ցեղերի էթնոհամայնական գործընթացի թուլության հետևանքով Կուրի ստորին հոսանքի ձախափնյակում այդպես էլ չձևավորվեց «աղվան» էթնոս՝ միասնական լեզվով, մշակույթով, ինքնագիտակցությամբ և, հետևաբար, ինքնանվանմամբ: Հարցի մանրամասն քննությունը տե՛ս **Ակոբյան Ա. Ա.** *Албания-Алуанк*, с. 148, 273; **Ակոբյան Ա. Ա., Мурадян П. М., Юзбашян К. Н.**, *К изучению истории Кавказской Албании (По поводу книги Ф. Мамедовой «Политическая история и историческая география Кавказской Албании» (III в. до н. э. - VIII н. э.))*, ՊԲՀ, Երևան, 1987, № 3, էջ 189;

ուրյան դերակատարություն է ունեցել երկրամասի մշակութային և քաղաքական զարգացումներում⁵: Հայկական լեռնաշխարհից

Սվազյան Հ. Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից VIII դարը ներառյալ), էջ 84:

⁴ Տե՛ս **Գալստյան Հ., Հակոբյան Ա.** Էթնակեզվական գործընթացները Բուն Աղվանքում (**Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ**, Երևան, 2003, էջ 91-92):

⁵ Կուրի ձախափնյակի մշակութային զարգացումներում հայկական ազդեցությունն առավելապես դրսևորվել է քրիստոնեության և դպրության տարածման ու հաստատման գործում: Ազաթանգեղոսի հաղորդմամբ Գրիգոր Լուսավորիչը և Հայոց թագավոր Տրդատ III Մեծը (298-330 թթ.) քրիստոնեության քարոզչությունը տարածեցին «...մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից...» (**Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Մ. Կանայեանց**, Տիփլիս, 1909, էջ 439): Պատմականորեն հավաստի է, որ IV դ. 30-ական թվականների սկզբներին երկրամասում քրիստոնեություն է քարոզել Բուն Աղվանքի և Վիրքի համար եպիսկոպոս կարգված՝ Հայոց կաթողիկոս Վրթսեն Ա Պարթևի երեց որդի Գրիգորիսը, որը Մասքթաց հեթանոս Մանեսան թագավորի հրամանով նահատակվել է Դերբենդից հարավ՝ Կասպից ծովի ափին գտնվող Վատնյա դաշտում (ներկայիս Խաչմասի շրջանում): Գրիգորիսի քարոզչական գործունեության մասին մանրամասն տե՛ս **Փառաստի Բիզանդացու** Պատմություն Հայոց: Բնագիրը **Ք. Պատկանեանի** թարգմ. և ծանոթ. **Մտ. Մալխասեանի**, Երևան, 1987, էջ 26; **Օրմանեան Մ.** Ազգապատում, հ. Ա, Կ. Պոլիս, 1912, թ 99, էջ 138-139; **Мурadian П.** Кавказский культурный мир и культ Григория Просветителя, «Кавказ и Византия», вып. 3, Ереван, 1982, с. 5-20; **Акопян А.** Албания-Алуанк, с. 124-145; **Սվազյան Հ.** Աղվանից կաթողիկոս Մա՛նուկ Գրիգորիս, «Էջմիածին», Մ. Էջմիածին, 2003, № 9, էջ 39-46:

Բուն Աղվանքում գրի լուսավորության ու քրիստոնեության հետագա տարածումը սերտորեն կապված է Մեսրոպ Մաշտոցի կրթալուսավորական գործունեության հետ, որը Հայաստանում նորաստեղծ գրի ամրապնդումը և լուսավորական գործը հաջողությամբ ավարտին հասցնելուց հետո V դ. սկզբներին նույն առաքելությամբ անցել է Բուն Աղվանք և Եսվաղեն թագավորի, Երևմիա եպիսկոպոսի ու Բենիամին երեցի օգնությամբ տարածել իր ստեղծած աղվաներեն գիրը (**Չորրան**, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պր. թ. դ-ր **Մ. Արեղյանի**, Երևան, 1941, էջ 70; **Ալիխան Լ.** Մ. Մաշտոց վարդապետ, Կեանքն և գործունեությունը, հանդերձ կենսագրութեամբ Ս. Սահակյա, Վիեննա, 1949, էջ 295-319; **Աճառյան Հ.** Հայոց գրերը: Խմբագրու-

արևելք՝ Կուրի ձախափնյակում, հայ էթնիկ տարրի վաղեմությունը փաստող բազմաթիվ ապացույցներ կան հայկական աղբյուրնե-

թեամբ՝ **Է. Աղայանի**, Երևան, 1984, էջ 213-220, 677-686; **Абрамян А.**, Дешифровка надписей Кавказских армян, Ереван, 1964, с. 73; **Յակոբեան Ա.** Մաշտոցի երկրորդ հիսնամյակի ուղեւորության ժամանակը և խնդիրները, Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին (Երևան, 12-17 Սեպտեմբերի, 2005 թ.), Զեկուցումների ժողովածու, Երևան, 2006, էջ 122-131):

Երկրամասի էթնամշակութային պատմության մեջ հայոց էթնոհոգևոր և քաղաքակրթական ակունքների ու հայաբնակ գյուղերի մշակութային գործունեության անվիճելի վկայություններն են հայ ճարտարապետության հորինվածքներով կառուցված միջնադարյան բազմաթիվ եկեղեցիները, վանքերը (Քիչի Ս. Եղիշա Առաքյալ, Ճալեթի Ս. Աստվածածին, Մաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա, Մեյսարիի Ս. Աստվածածին և այլն) և մատուռները, հնավայրերի հայերեն արձանագրված հարյուրավոր խաչքարերն ու տապանաքարերը, որոնցով հարուստ են Նիժ. Վարդաշեն, Ճալեթ, Ամուրավան, Գանձակ, Ղալակա, Վանք, Ռուշանաշեն, Հնդար, Մաղիան, Մատրասա և այլ գյուղերի գերեզմանատները (տե՛ս **Վարապետյան Ս.** Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Երևան, 1997):

Կուրի ձախափնյակում հայերեն խոսքն ամրապնդվում և տարածվում էր նաև հայերեն գրով: Այս առումով պատմական քաջադիպ արժեք ունեն նաև երկրամասի տառնյակ գրչօջախներում (Բաբու, Ծամախի, Մաղիան, Մեյսարի, Ճալեթ, Մատրասա և այլն) XIV-XVIII դդ. ընթացքում ընդօրինակված հայերեն ձեռագիր բազմաթիվ մատյանները (Ավետարաններ, սաղմոսարաններ, քարոզգրքեր, Ճաշոցներ, եկեղեցական-ձիապական այլ ժողովածուներ՝ մաշտոցներ, ժամագրքեր, խորհրդատետրեր և այլն) (տե՛ս **Եզանյան Օ.** Մեսրոպ արքեպ. Սմբատյանի «Նկարագիր Ծամախոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը՝ «Էջմիածին», Մ. Էջմիածին, 1970, № Ա, էջ 45-48, տե՛ս նաև **նույնի**՝ Աշխատություններ: Հրատարակության պատրաստեց **Գ. Տեր-Վարդանեան**, Երևան, 2014, էջ 72-75): Երկրամասի գրչության կենտրոններում ոչ միայն ընդօրինակվել են մատյաններ, այլև գրատներում պահվել, կոյասից փրկվել և մեզ են հասել այլ վայրերում (Սյախան, Թիֆլիս, Բաբերդ, Արցախ, Գողթան, Նոր Զուղա, Սյունիք, Մոկս, Կաֆա և այլն) XIV-XIX դդ. ընդօրինակված, նվիրատվությունների կամ այլ ճանապարհներով ձեռք բերված մեծաքանակ արժեքավոր ձեռագրեր, որոնց մի մասն այժմ պահպանվում է Մաշտոցյան Մատենադարանում և Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի գրատանը (տե՛ս **Մտեփանյան Գ.** Ծամախու Հայոց թեմի գրչության այլ վայրերում գրագրված եկեղեցապատկան և վանքապատկան մատյանները (XIV-XIX դդ.), «Էջմիածին», Մ. Էջմիածին, 2005, № ԺԲ, էջ 67-73):

րում: Եսայի Հասան-Ջալալյանը հավաստում է. «Եւ երկիրն էր (Բուն Աղվանքը - Գ. Ս.) բարեղի և շէն և մարդաշատ, թէ հայ ազգօք, որ ի Ղարաբաղու երկրէն ժողովուրդք յուրվք անցեալ էին յերկիրն այն աւելի քան գտեղականսն. (ընդգծումը մերն է - Գ. Ս.) և եթէ այլ ազգօք՝ որ բնիկ ի յերկրէն են...»⁶: Իսկ Սիմեոն Ա Երևանցի պատմագիր կաթողիկոսն հիշատակարանում գրում է. «Իսկ բազմութիւնք հայալեզու և հայակրօն ժողովրդոցն, որք այժմ գոն ի յերկիրն Աղուանից, հայք են ի բնէ (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»⁷: Ի լրումն վերոնշյալի՝ ավելացնենք, որ Կուրի ձախսափնյակում և մերձկասպյան շրջաններում հայ էթնիկ տարրի վաղեմության փաստը հավաստում են նաև օտար աղբյուրները: Այդ իմաստով հատկապէս ակնառու է կովկասագետ, կայսերական ակադեմիայի թղթակից անդամ Յու. Գագեմեյստերի տեղեկությունը. «Նախկին Կասախական մարզի ամբողջ բնակչությունից իրենց նախաբնակությունը կարող են ապացուցել միայն հայերն ու ուղիները»⁸:

Բուն Աղվանքը հնուց գտնվել է հայկական պետականության ու Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր և քաղաքակրթական ազդեցության ներքո: Հր. Աճառյանը, բարձր գնահատելով Հայոց քաղաքակրթական նշանակությունը երկրամասում, գրել է. «Աղուանից երկրին մէջ գտնուէին հայկական ծագում ունեցող ցեղեր... Ասոնք այնպէս ուժեղ էին և այնպէս հաստատուն կերպով տեղատրուած երկրին մէջ, որ ոչ թէ միայն իրենց ինքնուրոյնութիւնը կորցրած չէին, այլ և ընդհակառակը, զանազան յաջող հանգամանքներու պատճառաւ... ազդեր էին երկրի վրայ...»⁹: Շիրվանում հայ բնակչության՝ հնուց և վաղ միջնադարից եկող մշակութա-

⁶ Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Յերուսաղէմ, 1868, էջ 26:

⁷ Դիւան Հայոց պատմութեան, Գ զիբր, մասն Բ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 417-418:

⁸ Гагемейстер Ю., Хозяйственный очерк Закавказского края: народонаселение (Сборник газеты Кавказ), изд. О. Н. Константиновым, первое полугодие 1847 года, Тифлис, 1847, с. 58 (բնագրում «Из всего населения бывшей Каспийской области одни Армяне и удины... могут доказать первобытность свою»):

⁹ Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 44:

կերտ գործունեության շարունակականության վերաբերյալ ուշագրավ դիտարկում է արել Լեոն՝ նշելով, որ «Հայերը Շիրվանում բնակութիւն են հաստատել շատ հին ժամանակներից: Բացի դրանից, չը պէտք է մոռանալ, որ Շիրվանը հին Աղուանից երկրի մի մասն է, իսկ Աղուանից երկիրը, երկար դարերի ընթացքում եղել է հայերի կուլտուրական եւ քաղաքական խիստ ազդեցութեան տակ»¹⁰:

Այսպիսով՝ հայերը որպէս երկրամասի տեղաբնակ և մշակութակերտ ժողովուրդ՝ մասնակցեցին այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքին և ստեղծեցին հարուստ պատմություն: Ըստ որոշ տեղեկությունների՝ միջնադարում երկրամասի ողջ տարածքում Կուրից մինչև Կասպից ծով, բնակվում էին մեծ թվով հայեր. հայաբնակ բնակավայրերի թիվը հասնում էր ավելի քան 200-ի¹¹: Այս առումով ուշագրավ դիտարկում է կատարել կովկասագետ, ազգագրագետ Ն. Ջեյդլիցը, գրելով, որ «Շամախի քաղաքի շրջակայքում սփռված հայկական բնակավայրերը ամենայն հավանականությամբ կազմում են միջին դարերում առավել մեծ քանակությամբ եղած բնակավայրերի մնացորդները»¹²:

Հարկ է նշել, որ հայկական աղբյուրները լրացնում են նաև օտար հեղինակների, մասնավորապէս եվրոպական XV-XVIII դդ. ճանապարհորդ-ուսումնասիրողների երկերում հայերի մասին պահպանված ուշագրավ տեղեկությունները:

Այսպէս, Արևելյան Այսրկովկասը պատմական Առանի և Շիրվանի¹³ տարածքը լինելով միջնադարի բանուկ խաչմերուկնե-

¹⁰ Լ. [Լեո], Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 7, № 28:

¹¹ St'e Վարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, ԼՀԳ, Երևան, 1909, N 2, էջ 57:

¹² Списки населенных мест Российской империи по Кавказскому краю. LXV-Бакинская губерния. Список населенных мест по сведениям 1859 по 1864 г. Сост. глав. ред. ком. Н. Зейдлицем, Тифлис, 1870, с. 93.

¹³ X դարից Կուրի ստորին հոսանքից մինչև Կասպից ծով և Ապշերոնի թերակղզուց հյուսիս-արևմուտք՝ զնդուպ մինչև Դեբբենդի ամիրայություն ընկած

րից մեկում՝ իր աշխարհագրական և ռազմավարական կարևոր դիրքով մշտապես գրավել է ճանապարհորդների ուշադրությունը: Սկսած XV դարից հայտնի են անգլիացի բազմաթիվ ճանապարհորդների այցելությունները երկրամաս, որոնք իրենց առջև դրել են, ինչպես և եվրոպական ճանապարհորդների մեծ մասը, ճանաչողական, և առաջին հերթին, իրենց երկրի առևտրական քաղաքականությանն առնչվող խնդիրներ: Հիմնականում այս իրողությամբ պայմանավորված՝ եվրոպացի ուղեգիրների և ճանապարհորդների չթուլացող ուշադրությունը տարածաշրջանի վրա էր բևեռում ամբողջ XV-XVIII դարերի ընթացքում: Ընդամիս, եվրոպացի ճանապարհորդ-ուսումնասիրողներն ու առևտրականներն իրենց երկերում բավականաչափ տեղ են հատկացրել երկրամասի աշխարհագրական իրողություններին, պատկերել հայ ազգաբնակչության կենցաղի ինչ-ինչ մանրամասներ, դրվագներ իրադարձություններ-

ուղ մերձկասպյան տարածքը Շամախի կենտրոնով սկզբնաղբյուրներում առավելապես հայտնի էր «Շիրուանայ երկիր» անունով, որի հիմքում ընկած էր վաղ միջնադարյան Հիլթբի բուն-սավանական թագավորությունը: Մ. Չամչյանն այդ մասին գրում է. «Ադրանից աշխարհ... որ է ընդ մեջ Կուր գետոյ և Կասպից ծովու՝ մինչև ի Դարբանդ. և սա կոչի Ադուանք Շիրուանայ. կամ Շիրուան...» (Միքայել Չամչյանց. Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը). հ. 9, Երևան, 1984. հավելված, էջ 131): Մխիթարյան միաբան Հայր Մանուել Քաջունու պարզաբանմամբ՝ «Շիրուան. որ հին ասեն Ադրանից մայրաքաղաքն էր. և հիմա աներակ է. որոյ հին բերդը միայն մնացած է: Այս քաղաքին անունովն է որ հիմա Շիրուան կ'ըսուի բոլոր Ադրանից աշխարհը» (Աշխարհագրություն հին և նոր Հայաստանեայց դպրատանց տղայոց համար. աշխատասիրեց՝ Հ Մանուել Վ. Քաջունի. Վենետիկ. 1857. էջ 201): «Շիրվան» երկրանվան ստուգաբանման և հարակից հարցերի մանրամասն քննությունը տե՛ս **Минорский В.**, История Ширвана и Дербента X-XI вв., Москва, 1963, с. 85, 106-119; **Փափազյան Հ.** Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (X դ.), «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1953, № 5, էջ 80, 86; **Акопян А. А.** Албания-Алужанк, с. 90; **Դալայան Տ.** Շիրուան տեղանունան ստուգաբանության շուրջ. ՀՀՀ Պեյրոթ, 2006, հ. ԲԶ, էջ 17-28; **Հակոբյան Ար.** «Շիրվան» երկրանվան ծագման հարցի շուրջ. «Սերձավոր Արևելք», հ. IV, Երևան, 2007, էջ 61-65:

րից, որոնց ականատես են եղել իրենք, վերաբրտադրել տեղի հնաբնակներից լսած ավանդություններ, գրույցներ և այլն:

Ստորև, ըստ ժամանակագրության, վկայակոչենք եվրոպական XV-XVIII դդ. հեղինակների երկերում հայերի մասին պահպանված տեղեկությունները:

Մեզ հայտնի ճանապարհորդներից առաջինը XV դարի երկրորդ կեսի իտալացի դիվանագետ, ճանապարհորդ ու վաճառական **Յուսաֆաթ (Ջոզեֆո) Բարբարոն** է, որը Վենետիկի Հանրապետության սենատի 1473 թ. փետրվարի 10-ի որոշմամբ դեսպան էր նշանակվել Պարսկաստանի այդ ժամանակվա տիրակալ ակ-կոյունլու Ուզուն-Հասանի (1423-1478) արքունիքում¹⁴: Բարբարոն Վենետիկ վերադառնալու ճանապարհին Թավրիզից հետո 1475-1476 թթ. լինելով նաև Շամախիում՝ հետևյալ տեղեկությունն է հայտնում. «Այս [Շամախի] շատ լավ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն և շինում է մետաքս, կտավ և ուրիշ բաներ իրենց եղանակով: Գտնվում է Մեծ Հայաստանում, և բնակիչների մեծ մասը հայ են» (ընդգծումը մերն է - Գ. Ս.)¹⁵: Կասկածից վեր է, որ Շամախին գտնվում է Կուրի միջին հոսանքի ձախափնյակում և, բնականաբար, չէր կարող լինել Մեծ Հայքի սահմաններում: Եկթաղրելի է, որ Ջ. Բարբարոյին շփոթեցրել է Շամախի քաղաքում ստվար հայության առկայությունը, ուստիև քաղաքը ներկայացրել է Մեծ Հայքում¹⁶:

¹⁴ Ջ. Բարբարոյի «Ուղեգրությունն» առաջին անգամ լույս է տեսել Վենետիկում՝ 1453 թ., վերահրատարակվել է 1545 թ. հետևյալ վերնագրով «Viaggi fatti de Venetia alle Tana in Persia, India et della Porto del Gran Turco»: Հետագայում կատարվել է լատիներեն (1606 թ.) և ռուսերեն (1831 թ.) մասնակի թարգմանությունը (տե՛ս Ջուլյայան Մ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Երևան, 1990, էջ 23): Հայ իրականության մեջ այդ երկին առաջին անգամ ուշադրություն է դարձրել պատմաբան Հովհ. Հակոբյանը:

¹⁵ **Հակոբյան Հ.** Ուղեգրություններ: Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության. հ. Ա, ԺԳ-ԺԶ դդ. Երևան, 1932, էջ 199:

¹⁶ Ի դեպ, նշենք, որ Բարբարոյի տեքստի այդ հատվածը աղբրեջանական կեղծարար «պատմաբանները» պատմական իրականությունը կեղծելու միտու-

Այն, որ հայերը Շիրվանում, Շամախի քաղաքի օրինակով, կազմում էին ազգաբնակչության զգալի հատվածը, փաստում է անգլիական «Մոսկովյան ընկերություն» առևտրային ընկերության բանազնագ¹⁷, նշանավոր ճանապարհորդ ու վաճառական Անտոնի **Ջենկինսոնը**, որը գլխավորում էր Մոսկվայից Պարսկաստան մեկնող հետախուզական պատվիրակությունը: Ջենկինսոնը՝ ճանապարհորդական նոթերում Շամախիում 1563 թ. ապրիլի 10-ի կատարած գրառումով տեղեկացնում է. «...այս քաղաքը ծովից ուղտով յոթը օրվան ճանապարհ հեռու է, բայց հիմա շատ ավերակ է, բնակված գլխավորապես հայերից... (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»¹⁸:

Այս հեղինակների մեջ հայերի տնտեսական կյանքի նկարագրությամբ իր դիտարկումներով առանձնանում է անգլիացի վաճառական և ճանապարհորդ, «Մոսկովյան ընկերության» գործակալ **Արթուր Էդուարդսը**: 1565-1567 թթ. Ղազվին ուղևորվելու ճանապարհին երկու անգամ երկար ժամանակով կանգ առնելով Շամախիում, նա նամականու ժանրով գրած հաշվետվություններում Շամախիի և կից հայկական գյուղերի հայերի առևտրատնտեսական կապերի մասին ևս տալիս է բնութագրական տեղեկություններ: Ըստ նրա, հայերը զբաղվում էին մետաքսի առևտրով և իրենց առևտրական գործարքներն իրականացնում էին Հնդկաստանում¹⁹:

Անգլիացի մեկ այլ ճանապարհորդ **Լորենս Չեպմենը**, ևս ժամանակ 1568 թ. իր արևելյան ճանապարհորդության ընթացքում այցելելով Շամախի և վաճառաշահ Ար(ե)աշ քաղաքներ, անդրադառնալով հայերի առևտրատնտեսական կապերին՝ գրում է, որ նրանք իրենց առևտրական գործարքներն իրականացնում էին Հա-

լեպում, իսկ առևտրական շրջանառության մեջ ներգրավված հիմնական ապրանքը մետաքսն էր²⁰:

Եվրոպացի հեղինակների գրառումներում արժեքավոր հիշատակումներ կան նաև Այշերոնյան թերակղզու²¹ և Բաբու քա-

²⁰ Տե՛ս նույն տեղում. էջ. 65-68.

²¹ Պատմական աղբյուրները վկայում են, որ թերակղզում հայաբնակ գյուղեր էին Բուզովան, Բալխանը, Մաբունչին, Մաշթաղան, Շաղանը, Սուրախանին և Մարդաքյանը: Հայերն այստեղ բնակություն են հաստատել առնվազն վաղ միջնադարից և ունեցել են իրենց պաշտամունքային օջախները, բայց պահպանված առավել հին պատմական հուշարձանները վերաբերում են միայն XII-XV դդ. (տե՛ս **Տեր-Յովհաննիսեանց Երևան**, Ս. Եղիայի վանքը Բուզովում, «Արարատ», 1902, N Ե-Զ, էջ 481-487, տե՛ս նաև **Stepanyan G.**, On the History of Armenian Sanctuaries of Apsheeron Peninsula (an overview), «Բանբեր հայագիտության», Երևան, 2021, N 1, էջ 5-32): Բաբվի շրջակայքում գոյություն ունեցած հայկական գյուղական համայնքների մասին ուշագրավ տեղեկություն է հարդորում XV դ. սկզբի տեղացի արաբ աշխարհագրագետ և ճանապարհորդ Աբդ սըր-Ռաշիդ ալ Բաբուվին՝ ավանդաբար նրանց բնակիչներին կոչելով քրիստոնյաներ: «Բաբուվի... մերձակայքում.- գրում էր Բաբուվին.- կան շատ գյուղեր և յուրաքանչյուրն ունի ամրացված միջնաբերդ ամրապինդ պատերով: Այդ գյուղերի բոլոր բնակիչները քրիստոնյաներ են (իմա՛ հայեր - Գ. Ս.)...» (**Абд ар-Рашид ал-Бакуви**. Книга талхис ад-асар ва аджа'иб ал-малик ал-Кахар («Сокращение [книги о] «Памятниках» и чудеса царя могучего»). Издание текста, перевод, предисловие, примечания и приложения З. Буниатова, Москва, 1971, с. 89-90): Հարկ է նշել, որ աշխատության հրատարակիչ Բունիաթովը, որին հատուկ է իրեն անցանկալի փաստերի կեղծումն ու աղավաղումը, կասկածի տակ դնելով այդ հաղորդման հավաստիությունը, հանիրավի միջամտել է պատմիչի շարադրանքին և բնօրինակի այդ հատվածում դրել հարցական նշան:

Արևելագետ, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Բ. Միլլերը թաթերի այդ բլում նաև՝ հայ-թաթերի պատմությունն ուսումնասիրելու նպատակով 1928 թ. շրջագայելով Այշերոն թերակղզու վերոհիշյալ բնակավայրերում, ամենուր արձանագրել է անցյալում գոյություն ունեցած մեծաքանակ հայկական եկեղեցիների և զերեզմանատների հետքերի, ինչպես նաև հնաբնակներից լսել է ավանդույթներ այդ բնակավայրերի՝ նախկինում հայկական լինելու մասին (տե՛ս **Миллер Б.**, Таты, их расселение и говоры (материалы и вопросы), «Известия общества обследования и изучения Азербайджана», № 8, вып. VII, Баку, 1929, էջ 13):

մով դուրս են թողել «Путешественники об Азербайджане. Под ред. Э. Шахмалиева, т. I, сост. З. Ямпольский. Баку, 1961, գրքից:

¹⁷ Տե՛ս **Փափագյան Վ.**, Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտներում (XVI-XVII դդ.), Երևան, 1990, էջ 82:

¹⁸ **Հակոբջան Հ.**, Ուղեգրություններ, էջ 372, տե՛ս նաև **Англиские путешественники в Московском государстве в XVI веке. Пер. с англ. Ю. В. Готье**, Ленинград, 1937, с. 205.

¹⁹ Տե՛ս **Погосян (Хакбакян) Г.**, Армяне Шамахи в упоминаниях некоторых западноевропейцев, ч. I (XV-XII вв.), Ереван, 2013, с. 60-61.

ղաքի հայերի մասին²²: XVI-XVII դդ. եվրոպացի վաճառական-ճանապարհորդների թողած տեղեկությունների համաձայն՝ Բաքուն արդեն համարվում էր Կասպյան ծովային առևտրի գլխավոր հանգույցներից մեկը, իսկ մարդատար ու բեռնատար նավափոխադրումները՝ Բաքվից Դերբենդ և Պարսկաստանի նավահանգստային քաղաքներ, գլխավորապես հայ վաճառականների ձեռքում էին²³: Այս առումով հետաքրքրական է XVI դարի վերջերին (1579, 1580–1581 թթ.) Բաքու այցելած ճանապարհորդ **Քրիստոֆեր Բուրոյի** տեղեկությունը, որտեղ հիշատակվում է Հակոբ անունով ուն հայ, որը Կասպից ծովի վրա շահագործում էր 35 տոննա տարողությամբ նավ²⁴: Քրիստոֆեր Բուրոն հետաքրքիր փաստեր է հայտնում նաև Բաքվից հյուսիս գտնվող Նիզաբադ (Նիզադ-Աբադ) ծովեզրյա գյուղաքաղաքից 18 վերստ²⁵ դեպի արևմուտք տեղակայված «Հայ գյուղ» անվանվող բնակավայրի մասին, որի բնակիչները զբաղվում էին մետաքսի և տորոնի առևտրով²⁶:

Երկրամասի հայերի մասին տեղեկություններ է հայտնում անգլիացի ճանապարհորդ, իրավագետ **Ջոն Քարթրայթը**, որը 1604 թ. առաջին կեսին այցելել է Շամախի և իր նոթերում հավաստում է քաղաքի հայ բնակչության բազմաքանակ լինելը²⁷:

Եվրոպացի ուղեգիրների շարքը արժանիորեն լրացնում է նաև Սաքսոնիայի թագավոր Ֆրիդրիխ Շլեզվիգ-Հոլշտեյնացու դեւ-

պանության քարտուղար, գերմանացի գիտնական **Ադամ Օլեարիուսը**²⁸: Պարսկաստան ուղևորվելու ճանապարհին, 1636 թ. դեկտեմբերի 30-ից 1637 թ. մարտի 27-ը հանգրվանելով Շամախիում՝ նա շամախահայերի մասին տալիս է բնութագրական տեղեկություններ: Մասնավորապես ուղեգրական նոթերում նկարագրություն է թողել Շամախիում հայերի 1937 թ. հունվարի 6-ին Ջրօրհների ծիսակատարության վերաբերյալ²⁹: Երկրորդ անգամ Ա. Օլեարիուսը Շամախիում լինում է հետդարձի ճանապարհին 1638 թ. փետրվարի 20-ից մարտի 30-ը³⁰: Ուշագրավ է շամախահայերի վերաբերյալ Օլեարիուսի հետևյալ վկայությունը. Շամախիում եղած ժամանակ խանը ցուցադրել էր ավելի քան 2000 մարդուց բաղկացած իր հետևակը, որի մեծագույն մասը հայեր էին³¹:

XVII դարի երկրորդ կեսի իսպանացի քահանա **Պեդրո Կուրերո Մերաստիանին**, որը որպես միսիոներ արևելյան ուղղությամբ կատարել էր շուրջերկրյա ճանապարհորդություն, նույնպես վկայություն է թողել Շամախիի հայերի մասին՝ նրանց հիշատակելով որպես հավատավոր քրիստոնյաներ³²:

1680-ական թվականների ճանապարհորդների մեջ Շամախիի և Բաքվի հայերին վերաբերող նկարագրությամբ առանձնանում է նաև 1683 թ. հունվարի 6-8-ը Բաքու այցելած գերմանացի բնագետ և բժիշկ **Էնգելերտ Կեմպերը**: Ըստ նրա՝ Շամախիի եկեղեցում պահվում էր Նոյյան տապանի փայտի մի կտոր, որի վրա պատկերված էր խաչ: Կեմպերը Բաքու քաղաքի բազմակողմանի նկարագրությունից բացի, ուշագրավ տեղեկություններ է թողել

²² Բաքու քաղաքի հայության պատմության մանրամասն քննությունը տե՛ս **Ստեփանյան Գ.** Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011:

²³ Մանրամասն տե՛ս **Ստեփանյան Գ.** Կասպից ծովի հայկական նավատորմի պատմությունից: «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում»: «Այաս» ծովային ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր (2010-մայիսի 14-16), Երևան, 2010, էջ 39-44:

²⁴ Տե՛ս **Հակոբյան Հ.** Ուղեգրություններ. հ. Ա, էջ 442, տե՛ս նաև *Англиские путешественники в Московском государстве в XVI веке*, с. 274.

²⁵ Վերստը երկարության ուսական հին չափի միավոր է, որ հավասար է 500 սաժենի կամ 1 կմ-ից քիչ ավելի:

²⁶ Տե՛ս **Հակոբյան Հ.** Ուղեգրություններ. հ. Ա, էջ 443, տե՛ս նաև *Англиские путешественники в Московском государстве в XVI веке*, с. 276.

²⁷ Տե՛ս **Погосян (Хакбакян) Г.**, նշվ. աշխ., էջ 39:

²⁸ Ադամ Օլեարիուսն ավարտել է Լայպցիգի համալսարանը: Ունեցել է փիլիսոփայության մագիստրոսի գիտական աստիճան:

²⁹ **Երիցեանց Ալ.** Մանր նիւթեր Հայոց պատմութեան համար: Մասն Գ: Ջրօրհնեաց հանդեր Շամախիում 1637 թււին, «Արձագանք», Թիֆլիս, 1888, հունվարի 17, N 1, էջ 14-15:

³⁰ Տե՛ս *Путешественники об Азербайджане*, т. I, с. 250-251.

³¹ Տե՛ս *Подобное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах: составленное секретарем посольства Адамом Олеарием*, Москва, 1870, с. 526.

³² Տե՛ս **Погосян (Хакбакян) Г.**, նշվ. աշխ., с. 40.

նան «Կույսի աշտարակի» ու ամրոցի գլխավոր մուտքի՝ «Շամախյան»³³ դարպասների մոտ գտնվող հայկական երկհարկանի քարավանատան մասին³⁴:

1640-ական թվականների կեսերին Շամախի այցելած Սյահանում կապուցիների միսիայի առաջնորդ հայր **Ռաֆայել դյու Մանը (Ժակ Դյուտերտը)** արձանագրում էր, որ քաղաքն ուներ սովարաթիվ հայ բնակչություն³⁵:

1671 թ. Շամախի այցելած հոլանդացի ծովային **Յան Ստրեյսը** քաղաքի նկարագրությունից բացի, վկայում է նաև քաղաքի շրջակայքում բնակվող բազմահազար հայերի մասին³⁶:

XVII դարում Շամախիի հայ ազգաբնակչության խիստ աճը փաստում է 1686 թ. այդ քաղաք այցելած ֆրանսիացի հիսուսյան քարոզիչ **Ֆիլիպ Ավրիլը**, որի հաղորդումը որոշ պատկերացում է տալիս քաղաքի էթնիկական և դավանական կազմի մասին: Ըստ Ֆ. Ավրիլի՝ մոտ 50-60-հազարանոց բնակչություն ունեցող Շամախիում «Բացի հայերի մեծ թվից, որ կարելի է հասցնել 30000-ի, կան նաև հնդիկներ, մոսկովիտներ, վրացիներ, հույներ, թուրքեր, չերքեզներ եւ բազմաթիվ այլ ժողովուրդներ...»³⁷:

XVIII դարը երկրամասի հայ ազգաբնակչության համար մեծ փորձությունների, էթնիկ ինքնությունը պահպանելու երկարատև ու համառ պայքարի ժամանակաշրջան էր: Դարի առաջին տասնամյակների ընթացքում Շիրվանը մեծապես տուժեց հյուսիսկովկասյան լեռնականների՝ սուննի լեզգիների իրար հաջորդող

³³ Այսպես էր կոչվում, որովհետև այստեղով էր անցնում միջնադարյան Շիրվանի ամենաաշխույժ ճանապարհներից մեկը, որը տանում էր դեպի վաճառաշահ Շամախի քաղաք:

³⁴ St. u **Kempfer E.**, Amoenitatum Exoticarum Politico-Phisico-Medicarum, Fasciculi V, Lemgoviae, 1712, p. 264, 428.

³⁵ Etat de la Perse en 1660, par le père Raphaël du Mans, supérieur de la mission des capucins d'Ispahan. Publiée avec notes et appendice par Ch. Schéfer, Paris, 1890, p. 3.

³⁶ St. u **Стрейс Я.**, Три путешествия, перевод Э. Бородинной, Москва, 1935, с. 246, 253-254.

³⁷ **Philippe Avril**, Voyage en divers etats d'Europe et d'Asie, Paris, 1662, p. 114, տե՛ս նաև **Թաջիրյան Է.** Կոռնելի լը Բրյուիների «Ուղեգրությունը» որպես աղբյուր հայ գաղթաբախների պատմության, «Իրան-նամե», Երևան, 1993, սեպտեմբեր, № 4, էջ 21:

(1712, 1716, 1720, 1721 թթ.) ասպատակություններից ու արշավանքներից, որոնք ուղեկցվում էին հազարավոր մարդկանց գերեվարումով: Այդ արշավանքները դեպի Պարսկաստանին ենթակա տարածքներ հրահրվում էին Օսմանյան պետության կողմից, որը Այսրկովկասում իր տնտեսական ու քաղաքական գերիշխանությունը հաստատելու հետահար նպատակով լեզգիների միջոցով ձգտեց թուլացնել Պարսկաստանի և Ռուսաստանի ազդեցությունը երկրամասում³⁸:

Նշենք, որ չնայած այդ ասպատակությունները երկրամասում հանգեցրին հայկական մի շարք գյուղերի քայքայման, այսուհանդերձ, Շամախիի շրջակայքում մեծ թվով հայկական գյուղեր շարունակեցին պահպանել իրենց գոյությունը: Կաթոլիկ քարոզիչ **Մոնիեի** հայտնած մի տեղեկության համաձայն՝ XVIII դարի սկզբներին միայն Շամախիի շրջակայքում կային մոտ 60 հայկական գյուղեր³⁹:

Այն, որ Ավրիլը չամիազանցված թվեր չէր բերում քաղաքի հայերի թվաքանակի հարցում, փաստում են Շամախիում տարբեր ժամանակներում հանգրվանած եվրոպացի ճանապարհորդների թողած տեղեկությունները: Այսպես, 1703 թ. օգոստոսին Շամախի այցելած հոլանդացի նկարիչ և ճանապարհորդ **Կոռնելի լը Բրյուի** նը վկայում է, որ քաղաքում հայերը մեծ թիվ էին կազմում: Քաղաք մտնելուց հետո Բրյուիին իր խմբով հայ ուղեկիցների հետ իջևանել էր հայկական քարավանատանը, ուր մի հայ վաճառական առատորեն հյուրասիրել էր նրանց⁴⁰:

Պարսկական տիրապետության շրջանում (XVI-XVIII դդ.) Շիրվանի հայ բնակչությունը ենթարկվեց ոչ միայն տնտեսական, սոցիալական ու հարկային ճնշման, այլև ազգային ու կրոնական հալածանքների: Այս առումով հետաքրքիր տեղեկություններ է հա-

³⁸ St. u **Льисцов В.**, Персидский поход Петра I. 1722-1723, Москва, 1951, с. 130.

³⁹ St. u **Թաջիրյան Է.** նշվ. աշխ. էջ 21 (Lettres édifiantes et curieuses, écrites des missions étrangères. Nouvelle édition. Mémoires du Levant, p. 149): Հմմտ. **Погосян (Хахбакян) Դ.**, նշվ. աշխ., с. 46:

⁴⁰ St. u Voyage de Comeille Le Brune, par la Moscovic, en Perse, et aux Indes Orientales, t. I-V, Reuen, NDCCXXV (1725), t. III, p. 484, տե՛ս նաև **Թաջիրյան Է.** նշվ. աշխ. էջ 21:

դորդում բապտիստ միսիոներ, հիսուսյան միաբանության անդամ **Յոհան Լա-Մացը**, որն անդրադառնալով շամախահայությանը պարտադրվող տուրքերին՝ Մոսկվայի իր հավատակից Ֆրանցիսկ Էմիլիանիին 1702 թ. մայիսի 18-ին Շամախիից հասցեագրած նամակում գրում է. «Վերջին ամսվա ընթացքում մեզ մոտ այստեղ տեղի էր ունենում բավականին ուժեղ երկրաշարժ, որը յուրաքանչյուր գիշեր երեք-չորս անգամ ցնցում էր տները: Քանի որ հայերն այդ կապակցությամբ հանդիսավոր կերպով բարձրացել էին սարի գագաթը, որպեսզի քաղաքն (Շամախին - Գ. Ս.) աղետից ազատելու համար ադրթեն Աստծուն, հարկադրված եղան դրա համար մոտ 200 թուման տուգանք վճարել»⁴¹: Լա-Մացն Էմիլիանիին 1702 թ. սեպտեմբերի 1-ին ուղարկած մեկ այլ նամակում, դարձյալ անդրադառնալով Շիրվանում հայերի իրավական վիճակին, պարսից իշխողների դատան ճնշումներին և հարկահանների տնտեսական հարկադրանքներին, գրում է. «...Շամախիում հայերին կործանելու զարմանալի միջոցների են դիմում նրանք: Անհիմն տանջանքներ են բարդում նրանց վրա, իսկ գյուղացիներն այն աստիճանի են ճնշված, որ գրեթե բոլորն էլ մտածում են իրենց երկրից հեռանալու մասին և եթե ունենային ապահով սուպաստան, այստեղ չէր մնա ոչ ոք»⁴²:

1738 թ. Բաքու այցելած անգլիացի վաճառական, ճանապարհորդ **Ջեյմս Շփիլմանի** տեղեկության համաձայն՝ Աստրախանից Բաքու, Դերբենդ և Ռաշտ մարդատար ու բեռնատար նավափոխադրումները կենտրոնացած էին հայերի ձեռքին⁴³:

1744–1748 թթ. Պարսկաստան ուղարկված իշխան Մ. Գոլիցինի դեսպանության անդամ շոտլանդացի **Ջոն Քուքը**, նկարագրելով Բաքուն, տեղեկություններ է հաղորդում նաև հայերի կողմից նավթի օգտագործման մասին⁴⁴: Շամախիի հայ բնակչության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել նաև 1780-ականնե-

րի սկզբներին երկրամաս այցելած ֆրանսիացի ուղեգրող **Լուի-Ֆրանսուա Ֆերիեր-Սովբեֆը**: Նա գրում է, որ «Շամախիում բնակվում էին շատ հայեր»⁴⁵:

Այսպիսով, եթե հանրագումարի բերենք XV–XVIII դդ. եվրոպական տասնյակ ճանապարհորդ-ուսումնասիրողների, առևտրականների և կայսրիկ միսիոներների թողած ճանապարհորդական նոթերի տեղեկությունները, ակնհայտ է, որ դրանք լրացնելու են գալիս հայկական սկզբնաղբյուրներում պակասող նյութը: Սկզբնաղբյուրային արժեք ունեցող այդ վկայությունները փաստում են Արևելյան Այսրկովկասում՝ Կուրից մինչև Մալշերոնյան թերակղզի ընկած տարածքում հայերի՝ վաղ ժամանակներից բնակեցված լինելը, ինչպես նաև միջնադարում երկրամասի մի զգալի տարածքում սովորաթիվ հայաբնակ գոտու իրողությունը: Որպես երկրամասի տեղաբնակ և մշակութակերտ ժողովուրդ՝ հայերը մասնակցեցին այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքին և ստեղծեցին հարուստ պատմություն:

GEVORG STEPANYAN
Doctor of History, Armenia

**THE WORKS OF EUROPEAN AUTHORS AS SOURCES
 OF THE HISTORY OF ARMENIANS IN THE EASTERN
 TRANSCAUCASIA IN THE 15TH-18TH CENTURIES**

Keywords: Eastern Cis-Caucasus, Shirvan, Apsheron Peninsula, traveler, Baku.

Traveling notes of many European travelers, researchers, scientists and catholic missionaries in the 15th-18th centuries contain rich information

⁴¹ Письма и донесения иезуитовъ о России конца XVII и начала XVIII века. СПб., 1904, с. 104.

⁴² Նույն տեղում, էջ 107:

⁴³ See **James Spilman**, *A Journey Through Russia Into Persia*. London, 1742, p. 10-11.

⁴⁴ **Johr, Cook**, *Voyages and Travels Throgh the Russia Empire, Tartary and Part of the Kingdom of Persia*, vol. II, Edindurg, 1778, p. 378.

⁴⁵ **Ferrières-Sauveboeuf L.-F.**, *Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières – Sauveboeuf, faits en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782 jusqu'en 1789*, tome première (t. 1), Maestricht, 1790, p. 228.

about the Armenian presence in the Eastern Transcaucasia and Apsheron Peninsula. Among such authors are Giosafat Barbaro, Anthony Jenkinson, Engelbert Kempfer, Raphaël du Mans, Philippe Avril, Corneille Le Brune, James Spilman, John Cook, etc.

The valuable testimonies prove that the Armenians have been residing in the Eastern Transcaucasia – from Koor river up to Apsheron Peninsula - since ancient times and a significant part of this area was inhabited by Armenians in the Middle Ages. As indigenious people of the region, the Armenians have participated in the social, political, economical, educational and cultural life of the region and created rich history.

ГЕВОРГ СТЕПАНЯН
д.и.н., проф, Армения

**ТРУДЫ ЕВРОПЕЙСКИХ АВТОРОВ XV-XVIII ВВ. КАК
ИСТОЧНИК ИСТОРИИ АРМЯН ВОСТОЧНОГО ЗАКАВКАЗЬЯ
(КРАТКИЙ ОЧЕРК)**

Ключевые слова: Восточное Закавказье, Ширван, Апшеронский полуостров, путешественник, Баку.

Путевые заметки многих европейских путешественников, исследователей, ученых и католических миссионеров XV-XVIII веков содержат богатую информацию об армянском присутствии в Восточном Закавказье и на Апшеронском полуострове. Среди таких авторов - Джозеф Барбаро, Энтони Дженкинсон, Энгельберт Кемпфер, Рафаэль дю Ман, Филипп Аврил, Корнель Ле Брюн, Иоан Ла-Мац, Джеймс Спильман, Джон Кук и другие.

Ценные источники свидетельствуют о том, что армяне с древних времен проживали в Восточном Закавказье – от реки Кур до Апшеронского полуострова и что значительная часть этой территории была заселена армянами в средние века. Как коренные жители данной территории, армяне участвовали в социальной, политической, экономической, образовательной и культурной жизни региона и создали богатую историю.

**ԵՎԵՆ ԶԱՆԱՊԱՐՀՈՐԴ ՆԻԼՍ ՄԱԹՍՈՆ ՇԻՈՓԻՆԳՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հիմնաբառեր. Նիլս Մաթսոն Շիոփինգ, Շվեդիա, ուղեգրություն, Հայաստան, Երևան, քրիստոնեություն, Նախիջևան, Արարատ, Պարսկաստան, Նոր Զուլիա:

Հայագիտությունը վաղուց է զբաղվում տարբեր ազգերի ճանապարհորդների ուղեգրություններում Հայաստանի և հայության վերաբերյալ տվյալների վերհանմամբ և քննությամբ: Այդուհանդերձ, այլալեզու ձեռագիր և տպագիր աղբյուրներում տակավին առկա է սակավ ծանոթ կամ լիովին անծանոթ ոչ քիչ տեղեկատվություն, որը, անգամ լինելով հանրահայտ իրողությունների կրկնություն, որպես հավելյալ նյութ ենթակա է թարգմանության և շրջանառման: Խոսքը վերաբերում է նաև լայն տարածում չունեցող այլնայլ լեզուներով ստեղծված ուղեգրական գրականությանը:

Զբաղվելով հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչություններով հատուկ ուշադրություն ենք դարձրել ուշ միջնադարում Արևելք ճանապարհորդած շվեդ ուղեգիրների երկերում հայությանն առնչվող տեղեկատվությանը:¹ Սույն հաղորդումը վերաբերում է հայերի մասին հիշատակություններ թողած երկրորդ² շվեդ

¹ Տե՛ս մեր «Շուեդ ճանապարհորդ Ֆրեդրիք Հասելբլոմսթր հայերի մասին» հրատարակումը («Հայկազեան հայագիտական հանդես», հատոր ԻԶ., Պեյրոթ. 2006. էջ 251-262) և «Հայությունը սկանդինավյան երկրներում (հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները)» աշխատությունը (Երևան, 2010. էջ 97-104):

² Առաջին շվեդը, որը եղել է Հայաստանում և հիշատակել իր այցի մասին, Բենեդիկտ Բենեդիկտ Օրսենսթիերնան է (1591-1643): Հայաստանի նրա հիշատակումը տե՛ս Lijkpredikan öfver. then ädle och högwälbome herre, herr Bengt

ճանապարհորդին՝ Նիլս Մաթսոն Շիոփինգին (մոտ 1621–1680): Նա 1667-ին հրատարակած իր ուղեգրության մեջ հիշել է Հայաստանը և տարբեր երկրների հայերի:

Շիոփինգը որդին էր քահանա Մաթիաս Նիկուլա Թունեմոն-տանուսի Շիոփինգ բնակավայրից (Վեսթմանլանդ շրջան): Ուսանել է Ուփսալայում: 1647 թվականին ընդունել է Շվեդիայի Քրիստինա թագուհու՝ արտասահման մեկնելու առաջարկը: Մոտ ինը տարի՝ 1647–1656 թթ., եղել է Հոլանդիայի Արևելա-հնդկական ընկերության ծառայության մեջ՝ թափառելով Աֆրիկայի և Ասիայի ափերին, ճանապարհորդել Հնդկաստանում, Անդամանյան կղզիներում, Չինաստանում և Բնդունեզիայում: 1652 թվականին ծառայության է մտել պարսից Շահ Աբբաս Բ-ի (գահակալել է 1642–1666 թթ.) արքունիքում: 1656-ին վերադարձել է Շվեդիա, որտեղ որպես նավատորմի լեյտենանտ մասնակցել է հետագա պատերազմներին: Այնուհետև ընտանիք է կազմել և ապրել Ստոկհոլմում՝ բավական չքավոր կյանքով: Ճակատագրի հեգնանքով, այս աշխարհաշրջիկ ճանապարհորդը, որը վերապրել է ծովամարտերը և նավաբեկությունները, իր կյանքն ավարտել է՝ ջրամույն լինելով Ստոկհոլմի, ծովափին, մոտ 59 տարեկանում:

Շիոփինգն իր ուղեգրությունը՝ «Ասիայում, Աֆրիկայում և շատ սյլ հեթանոսական թագավորություններում ուղևորությունների հակիրճ նկարագրություն» վերնագրով, գրել է 1660-ին: Այն լույս է տեսել 1667-ին, Վիսինգսբորգում, կոմս Պեր Բրահեի հրատարակչատանը՝ «Երեք ուղևորությունների և ուխտագնացությունների հակիրճ պատմություն, Ճապոնիայի թագավորությանը հանդերձ» վերնագրով ժողովածուում:³ Շիոփինգի ուղեգրությունը

Oxenstierna... Så och en kort relation, om then salige herrns stora förfarenheet, och widt kring om werlden giorda reesor (Stockholm). Henrich Keyser, 1644, էջ 12:

³ St u Eén kort beskrifning uppå trenne resor och peregrinationer, sampt konungarijket Japan: I. Beskrifwes een reesa som genom Asia, Africa och många andra hedniska konungarijken, sampt öijar, medh flijtt är förrättat aff Nils Matson Kiöping, ... II. Förstelles thet stoor och mächtige konungarijke Japan, sampt thes inwånares handel och wandel. III. Beskrifwes een reesa till Ostindien, China och Japan, giordh och beskrefwen aff Olof Erickson Willman, ... IIII. Vthföres een reesa ifrån Muszcow till China,.... Tryckt på

կազմված է 91 շատ կարճ գլուխներից և ընդգրկում է 136 էջ. գիրքը բովանդակում է նաև բելգիացի Ֆրանսուա Քարոնի՝ Ճապոնիայի վերաբերյալ գրքի համառոտ թարգմանությունը, Ճապոնիա այցելած առաջին շվեդի՝ Օլոֆ Էրիքսոն Վիլմանի ուղեգրությունը և անանուն ռուս դիվանագետի՝ Մոսկվայից Չինաստան ցամաքով ճանապարհորդության տասն էջանոց նկարագրությունը: 1674–2016 թթ. Շիոփինգի ուղեգրությունն այս լրացուցիչ տեքստերի հետ կամ առանձին վերահրատարակվել է հինգ անգամ⁴:

Նիլս Մաթսոն Շիոփինգի ուղեգրության՝ հայությունը վերաբերող հատվածների թարգմանությունը կատարել ենք երկրորդ՝ 1674 թվականի հրատարակության էլեկտրոնային տարբերակից,⁵ որտեղից էլ կկատարենք հղումները՝ երբեմն տողատակին նշելով Շիոփինգի երրորդ՝ 1743 հրատարակության⁶ համապատասխան էջերը (որին ծանոթացել էինք ժամանակին Ուփսալայի համալսարանի գրադարանում, սակայն հայերին վերաբերող ոչ բոլոր էջերն էինք ընդօրինակել): Հին շվեդերենից մեր թարգմանությունը կատարելու գործում մեզ օգնել է ստոկհոլմարենակ մեր բարեկամ Արամ Հելսթադիուսը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Նշենք նաև, որ ժամանակակից շվեդ հնագետ Մարթին Ռյունդբլիսթն անգլերեն է թարգմանել աշխատության՝ Հայաստան

Wisingsborgh, aff hans höggref: nådhes rickz drotzens egen booktryckiare thersammestädes Johann Kankel, anno MDCLXXIV (1667):

⁴ St u, օրինակ, Svenska texter. 6, Nils Matson Kiöpings resa : parallelltexter ur andra och tredje upplagorna. Scandinavian university books, 9901036429. Stockholm: Svenska bokförlaget/Norstedt, 1961. Nils Mattsson Kiöping. Reesa som genom Asia, Africa och många andra hedniska konungarijken, sampt öijar medh flijtt är förrättat. Ruins öfvrändringar. Stockholm: Bokförlaget Ruin, 2016:

⁵ St u Nils Mattson Kiöpings resor, <https://project2.sol.lu.se/fomsvenska/-Nysvenska/C.P38-Kioping-A.html> (մուտք՝ 5.05.2020):

⁶ St u Beskrifning om en resa, genom Asia, Africa och många andra hedna länder, som är gjord af Nils Mathsson Köping, för detta kongl. maj:ts skeps-lieutenant. Förbättrad och fjerde gången upplagd av Lars Salvius, Stockholm, 1743:

նին վերաբերող երկու գլուխը և «Նիլս Մաթսոն Շիոփինգը Հայաստանում» վերնագրով գետեղել իր հեղինակային կայքէջում⁷:

Շիոփինգի աշխատության մեջ հայերն առաջին անգամ հիշատակված են 14-րդ «Մեքայի մասին Քարե Արաբիայում» գլխում: Խոսքը մահմեդականների սրբազան քաղաքի մասին չէ, որտեղ քրիստոնյաների մուտքն արգելված է, այլ Եմենի (կամ ինչպես Շիոփինգն է գրել, Այամանի) տարածքում գտնվող Մեքայի, հիշված որպես «*Բար էլ Մանդեր նեղուցի մոտ գտնվող մի փոքր քաղաք, առանց ամրությունների, միայն քաղաքի հարավային կողմի մի սարի վրա կա մի փոքր ամրություն, որի վրա կա մի քանի թնդանոթ... Հայերը գալիս են այստեղ առևտրի*»⁸:

Այս վկայության մեջ ուշագրավ է, որ հայ առևտրականները գործունեություն են ծավալել՝ ընդհուպ մինչև Արաբական թերակղզու ծայր հարավը:

Այնուհետև 18-րդ գլխում Շիոփինգը վկայել է, թե ինչպես Արաբիայի սուլթանին հրաժեշտ տալուց հետո մի հայ քրիստոնյա գիշերն իրենց տեղեկացրել է, որ պարսիկ, արաբ և հնդիկ առևտրականները սուլթանին նամակ են գրել նախատելով, որ վերջինս մեծ բարեկամություն է ցուցաբերել իրենց՝ «*քրիստոնյա շների*» հանդեպ և ազատություններ շնորհել նրանց, մինչդեռ հավատարիմ մահմեդականներին փորձում է կործանել: Ծանոթ պատկեր է, երբ արևելքիցի հայը հանդես է գալիս որպես հավատակից ճանապարհորդի համախոհ և օգնական՝ իր պարտքը համարելով նախագուշացնել որոշ իրողությունների վերաբերյալ:

26-րդ գլխում՝ «Նրանց տառերի և թղթերի մասին», Շիոփինգը տվել է հետևյալ հետաքրքրական տեղեկությունը արևելյան ժողովուրդների, նաև հայերի մեջ երեխաներին գրաճանաչ դարձնելու վերաբերյալ. «*Արաբները, հայերը, մեդագինները և պարսիկներն իրենց գրության մեջ օգտագործում են առանձին տառեր, բարբա-*

⁷ Aardvarchaeology – by Dr. Martin Rundkvist. Nils Mattsson Kiöping in Armenia. <https://aardvarchaeology.wordpress.com/2019/07/15/nils-mattsson-kioping-in-armenia/> (այցելությունը՝ 15.06.2020):

⁸ St u Beskrifning om en resa. genom Asia, Africa och många andra hedna länder... էջ 32, 36:

կից պատրաստած թուղթ, որն այնքան հարթ է, ասես մշակված լինի փորագրաքարով. մատիտի փոխարեն օգտագործում են ծղոտ կամ եղեգ. իրենց երեխաներին, երբ սկսում են գրել սովորել, թղթի, մատիտի և թանաքի փոխարեն տալիս են մի փոքր բարակ փայտե տախտակ՝ մոտավորապես մեկ խորանարդ լայնությամբ և մի փոքրիկ պարկ կամ պայուսակ՝ ավազով, որը նրանք զգուշորեն շաղ են տալիս տախտակի վրա, որից հետո սովորում են տառերը գրել ավազի վրա՝ իրենց մատներով, մինչև որ կարողանան ճիշտ գրել, որից հետո նրանց մատիտ և թանաք են տալիս»:

Հաջորդ երկու՝ 27-րդ և 28-րդ գլուխներում Շիոփինգը ներկայացնում է Հայաստանը: 27-րդ գլուխը վերնագրված է «Միջին Հայաստանի մասին»: Միջին Հայաստան ասելով նա նկատի ունի Արևելյան Հայաստանը. այստեղ նա հիշատակում է Երևանը՝ Էրիվանա և Նախիջևանը՝ Նախչեյդվան ձևերով: Մեջբերենք 27-րդ գլուխն ամբողջությամբ.

«*Հայերը հավատում են, որ Քրիստոսը ճշմարիտ ԱՍՏՎԱԾ է և մարդուց ծնված, և քանի դեռ նա քայլում էր այս երկրի վրա՝ նա թե՛ ԱՍՏՎԱԾ էր, թե՛ մարդ, բայց շուտով նա ուղևորվեց երկինք՝ լքելով մարդկային բնությունը, և այժմ միայն ճշմարիտ ԱՍՏՎԱԾ է և ոչ մարդ:*

Այս երկիրն ինքնին շատ մեծ չէ, և նրա չափը ես իրականում չգիտեմ, քանի որ այնտեղ չեմ շրջել, այլ միայն վերադարձել եմ նույն ճանապարհով, որով եկել եմ: Չնայած այս երկիրը ենթակա է Պարսկաստանի թագավորին, բնակիչների մեծամասնությունը, այնուամենայնիվ, քրիստոնյա է: Այս երկրում այլ պաշտամունք չկա, բացառությամբ մի քանի մահմեդականների, որոնք բնակվում են իրենց նահանգապետի հետ, որոնք այնտեղ հաստատված են Պարսկաստանի թագավորի կողմից և ապրում են Էրիվանայում: Սա շատ անկեղծ ժողովուրդ է, մանավանդ Եվրոպայից եկած քրիստոնյաների հանդեպ, որոնց սիրում են ինչպես մեկի, որը [ասես] եկած լինի երկնքից, եթե միայն նա կարողանա ապացուցել, որ թլպատված չէ՝ առանց համեստության ցույց տալով իր ամոթը: Բնակիչների մեծ մասը վաճառականներ և առևտրականներ են, որոնք վարում են Հնդկաստանի ակնեղենի և բոլոր տեսակի թան-

կարժեք ապրանքների մեծ առևտուր՝ մեծ Մոդոլից մինչև Թաթարստան և Պարսկաստան, նրանք բերում են իրենց ապրանքը, այնուհետև տանում են Եվրոպա»:

Սույն վկայության մեջ հատկապես կարևոր է այն հավաստումը, որ 17-րդ դարի կեսին Պարսկաստանին մաս կազմած հայոց երկրի «բնակիչների մեծամասնությունը, այնուամենայնիվ, քրիստոնյա է» և որ երևանաբնակ մահմեդականներն ընդամենը «մի քանիսն» են, պարսից շահի կողմից ուղարկված որպես նահանգապետի անձնակազմի անդամ: Այստեղ հավելյալ վկայություններ կան նաև վաղուցվանից հայության մեջ արմատացած եվրոպասիրության մասին, որ քրիստոնյա եվրոպացի մահմեդական տիրապետության տակ ապրող քրիստոնյա հայի աչքին թվացել է դրախտից եկածի պես: Թեև, ինչ խոսք, զավեշտալի է հնչում հայերի կողմից եվրոպացիների քրիստոնյա լինելը ստուգելու եղանակը...

Ամբողջությամբ մեջբերենք նաև 28-րդ՝ «Հայերի պաշտամունքի մասին» գլուխը:

«1656 թվականի սեպտեմբերին, ես Ամստերդամում հանդիպեցի երկու հայ առևտրականների, որոնց հետ մի քանի ճանապարհորդությունների ընթացքում գրուցել էի Սպահանում, 1652 թվականից սկսած Պարսկաստանի թագավոր Շահ Աբբասին իմ ծառայության ընթացքում:

Այս երկիրը բազմամարդ է, ժողովուրդը խոնարհ է և ձեռներեց: Այստեղ հավաքում են գարու, ցորենի և խաղողի առատ բերք, ինչպես նաև [ունեն] շատ լավ անասուններ և տարբեր մթերքներ: Իրենց պաշտամունքում, հատկապես պատարագի և եկեղեցական այլ ավանդույթների ժամանակ նրանք այնքան էլ տարբեր չեն կաթոլիկությունից, իրենց պատարագը վարում են միայն իրենց լեզվով, և նրանց հոգևորականները կարող են ամուսնանալ: Նրանց հայրապետ (իմ այնտեղ գտնվելու ընթացքում) Ֆիլիպը՝ բարեպաշտ և բարեսիրտ մի մարդ, ապրում է Էրիվանա քաղաքում, որը գտնվում է անմիջապես Արարատ լեռան մոտ, որը բաց տարածք է և ոչ մի կերպ չի կարող դիմադրել ոչ մի թշնամու, և քաղաքում գտնվում է թե՛ մենաստան, թե՛ վանք: Լեռան հյուսիսային կողմում

կա մի քաղաք, որը կոչվում է Նախչեյրվան: Սա աշխարհի առաջին բնակավայրն է: Քանի որ բնակիչներն իսկապես հավատում են, որ Նոյը, երբ տապանից երկիր էր գնում, նա այս վայրում ոչ միայն կատարել է իր գոհաբերությունը, այլև կառուցել է իր տնակը: Այս երկիրը շատ հայտնի է, նախևառաջ այն պատճառով, որ նրանք շարունակաբար պահել են քրիստոնեական հավատը, նաև իրենց առաքինության, հավատարմության և անկեղծության համար բոլոր մարդկանց,⁹ մանավանդ բոլոր քրիստոնյաների հանդեպ, ապա Արարատի լեռան համար, որը բոլոր կողմերից այնքան սուր է, որ անհնար է հասնել զագաթին: Այս ողջ երկրում զինվորներ չկան, բացառությամբ մի քանիսի, որոնց պահում է նահանգապետը, բայց նրանք ծնունդով հայ չեն: Կոշկակարներից, դերձակներից և դարբիններից բացի այլ արհեստավորներ չկան, բայց բոլորն էլ իրենց ապրուստը գտնում են առևտրի մեջ: Այստեղ ոչ մի պապիստ չի կարող բնակվել, մասնավորապես ոչ մի վանական կամ քահանա իրավունք չունի որևէ ժողով կամ հավաքույթ ունենալ: Սպահանի և Հայաստանի միջև չես կարող ճանապարհորդել առանց պահակ ունենալու որպես ուղեկից, և 130 օրվա ճանապարհորդություն է, քանի որ չես կարող օրվա ընթացքում երեք շվեդական մղոնից ավելի քայլել ավանակներով կամ ուղտերով: Ամեն տարի մարտի 10-ին, երբ Պարսկաստանի թագավորը նշում է իր Նոր տարին, նրանք ճշգրտորեն վճարում են իրենց հարկերը, որպեսզի Թագավորը պատճառ չունենա բողոքելու դրանից: Եվ տարին մեկ անգամ նրանք հաստատման նամակ են ստանում իրենց կրոնական սովորությունների վերաբերյալ: Ինչ վերաբերում է ձկանը և աղին, ապա դրանք ստանում են Կասպից ծովից:

Շիռփինգի նշած Ֆիլիպ հայրապետը 1633–1655 թթ. Ամենայն հայոց կաթողիկոս Փիլիպոս Ա Աղբակեցի (1593–1655) է: Տեղեկությունը, որ նա ապրել է Երևանում, անշուշտ, ճիշտ չէ. իր մեջ մենաստան և վանք ներառող քաղաքն Էջմիածինն է՝ հայոց կաթողիկոսնե-

⁹ Այս նախադասությունը մեջբերել է շվեդ արևելագետ Թուրե Յ. Արնեն «Շվեդները և Արևելքի երկրները» աշխատության մեջ (ունեւ Ture J. Arne, Svenskarna och Österlandet. Stockholm, 1952. p. 156):

րի նատավայրը: Այս հատվածում Արևելյան Հայաստանի արհեստավորների մասին տեղեկությունից բացի արժեքավոր է Կասպից ծովից ստացվող մթերքների (ձուկ և աղ) մասին տեղեկությունը:

Հետագա շարադրանքում արդեն կցկտուր տեղեկություններ են հիմնականում Պարսկաստանում հանդիպած հայերի ու նրանց վանքերի մասին: Այսպես, 30-րդ գլխում («Պարթիա կամ Պարթեն, որ դարձել է Արաք»), խոսելով Համադանի (պատմական Էկբատանի) մասին, Շիոփինգը նշում է. «Քրիստոնյա հայերը մեզ ցույց տվեցին մի գեղեցիկ տուն, թեև քայքայված վիճակում, որը նրանք համարում էին այն ժողովարանը, որտեղից Երեք սուրբ թագավորները պիտի ճամփորդեին՝ Փրկչին գոհ մատուցելով ոսկի, կնդրուկ և զմուռ»:¹⁰ Նկատի ունի աստվածաշնչյան վկայությունը երեք մոզերի (պարսից Մելքոն, հնդիկների Գասպար և արաբների Բաղդասար թագավորների) վերաբերյալ: 31-րդ գլխում («Սպահան քաղաքի մասին») նա հիշել է, որ քաղաքի «Ղատավորը հայ է, և իր շքեղությունը պահում է նույնքան հոյակապ, որքան իշխանը»¹⁰ և որ Սպահանում հայերն ունեն վեց եկեղեցի¹¹: 30-րդ գլխում («Երկու փոքր քաղաքների՝ Քորասթանի և Քուրբազարիհանի մասին») Շիոփինգը գրում է. «Քորասթանը (Նորասան – Ա. Բ.) փոքր բաց քաղաք է, մոտավորապես մի փոքր ավելի մեծ, քան Սթրենգնեսը (քաղաք Շվեդիայում – Ա. Բ.), այստեղ ապրում են բոլոր քրիստոնյաները, և նրանք այստեղ ունեն երկու կաթոլիկ և մեկ հայկական վանք»: 41-րդ գլխում («Շիրազի կամ նոր Պերսեպոլիսի մասին») հիշված է, որ այնտեղ հայերն ունեն երկու եկեղեցի: Իրականում Շիրազի միակ հայկական եկեղեցին սուրբ Մարիամն է, կառուցված 1662 թվականին: Հաջորդ գլխում հեղինակը հիշել է նաև քրիստոնեություն ընդունած պարսիկների և այլ մահմեդականների, որոնք իրենց տների վրա կանգնեցրել են փայտե խաչեր. «*Եվրոպացիների և հայերի պես*»:

Պարսկաստանից հետո Շիոփինգը հայտնվել է Իրաքում, որտեղ նույնպես հանդիպել է հայերի: 48-րդ գլխում («Բաղդադի կամ

նոր Բաբելոնի մասին») նա հիշել է, որ Բաղդադում առևտրով են զբաղված «*քաղղեացիները, հնդիկները և հայերը*»¹²: Սա հայերի մասին Շիոփինգի վերջին հիշատակումն է:

Ելնելով մեջբերումներից՝ կարող ենք եզրակացնել, որ Նիլս Մաթսոն Շիոփինգի ծանոթությունը հայ ժողովրդին չի եղել մակերեսային: Նա, ինչպես տեսանք, բուն Հայաստանից բացի հայերի է հանդիպել Եմենում, Պարսկաստանում, Իրաքում, հետագայում նաև՝ Հոլանդիայում, իր ուղեգրության մեջ գնահատել նրանց արժանիքները՝ համարելով առաքինի և իրենց հավատին նվիրված մարդիկ և թեկուզ հանրահայտ եւ կցկտուր, սակայն արժեքավոր տվյալներ հաղորդել հայոց դավանանքի, ավանդույթների, կրթության, առևտրի և արհեստների վերաբերյալ:

ARTSVI BAKHCHINYAN
Ph.D. in Philology, Armenia

SWEDISH TRAVELER NILS MATSON KIÖPING ON ARMENIA AND THE ARMENIANS (17TH CENTURY)

Keywords: Nils Matson Kiöping, Sweden, travelogue, Armenia, Armenians, Yerevan, Christianity, Nakhichevan, Ararat, Persia, New Julfa.

The Swedish traveler Nils Matson Kiöping (c. 1621–1680) mentioned Armenia and the Armenians of different countries in his travelogue “A Brief Description of Travels in Asia, Africa, and Many Other Pagan Kingdoms” published in 1667. In chapters 27-28 of his travelogue (“On Middle Armenia”), Kiöping described his journey in Eastern Armenia, in particular mentioning Yerevan and Nakhichevan (Eriwana and Nachseidwan) and noting that “Although this country is under the King of Persia the inhabitants are nevertheless all Christians” and “This country is very famous: firstly, because they remain so constant in the Christian creed, also for their virtue, fidelity and honesty to all people, particularly to the Christians; secondly, for Mount Ararat...”

¹⁰ St: u Beskrifning om en resa, genom Asia, Africa och många andra hedna länder.... p. 40:

¹¹ Նույն տեղում, p. 42:

¹² Նույն տեղում, p. 54:

In addition to Armenia, Kiöping met Armenians in various cities in Persia, Yemen, Iraq, and later - in Holland. In his travelogue he evaluated the dignity of the Armenians, providing albeit well-known and few, but valuable information about their religion, traditions, education, occupations, economy, trade and crafts.

ԱՐՇՎԻ ԲԱԽՇԻՆՅԱՆ
к.ф.н., Армения

ШВЕДСКИЙ ПУТЕШЕСТВЕННИК НИЛЬС МАТСОН ШИОПИНГ ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ (17-Й ВЕК)

Ключевые слова: Нильс Матсон Шиопинг, Швеция, книги путешествий, Армения, армяне, Ереван, христианство, Нахиджеван, Арарат, Персия, Новая Джусульфа.

Шведский путешественник Нильс Матсон Шиопинг (ок. 1621-1680) упомянул Армению и армян различных стран в своей книге «Краткое описание путешествий в Азии, Африке и многих других языческих королевствах», опубликованной в 1667 году. В главах 27-28 книги («В Средней Армении») Шиопинг описал свое путешествие в Восточную Армению, в частности, упомянув Ереван и Нахиджеван (Эривана и Нахсейдван) и отметил, что «Хотя эта земля принадлежит персидскому королю, ее жители, тем не менее, все христиане» и «Эта страна очень знаменита: во-первых, потому что они остаются столь верными в христианском вероисповедании, также за их достоинства, верность и честность всем людям, особенно христианам; во-вторых, за гору Арарат...».

Помимо Армении, Шиопинг встречался с армянами в различных городах Персии, Йемена, Ирака, а затем - в Голландии. В своей книге он оценил достоинства армян, предоставив, хотя и хорошо известную и малочисленную, но ценную информацию об их религии, традициях, образовании, роде занятий, экономике, торговле и ремеслах.

17-ԴԴ ԴԱՐԻ ՊԱՐՄԿԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ ՇԱՀ ԱՐԲԱՍ Ա-Ի ԿՈՂՄԻՑ ԱՅԱՐԿՈՎԿԱՄԻՑ ԻՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՈՒ ՀՅՈՒՄԻՍՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐ ՏԱՐԱԳՐՎԱԾ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմնաբառեր. Իրան, պատմագիր, Նոր Ջուղա, հայություն, Իսրայելյար Մոնջի, Ֆազլի Իսֆահանի, վաճառական, բռնագաղթ, իսլամացում, քարտաշ:

Սեֆյան շրջանի պատմագիրները իրենց պատմագրական երկերը շարադրելիս հպանցիկ անդրադարձել են նաև Շահ Աբբաս Ա-ի կողմից Իրանի կենտրոնական ու հյուսիսային շրջանները տարագրված հայությանը վերաբերող որոշ հարցերին: Շահ Աբբաս Ա-ի պալատական պատմագիր Իսրայելյար Բեկ Թորքեմանը (Մոնջի) և նրա ժամանակակից Ֆազլի Բեկ Խուզանի-Իսֆահանին իրենց պատմագրական երկերում որոշ տեղ են հատկացնում հայերի բռնագաղթի կազմակերպման նկարագրությանը, Նոր Ջուղայում, Սպահանի շրջակա բնակավայրերում և Իրանի հյուսիսային շրջաններում հաստատված հայության պատմության առանձին խնդիրներին:

Հայերի բռնագաղթի մասին խոսելիս վերոնշյալ պատմագիրները ելնելով իրենց պաշտոնական դիրքից, ինչպես նաև տուրք տալով պարսից պատմագրությանը բնորոշ ներբողական ոճին՝ ջանում էին շահի բոլոր ձեռնարկումները ներկայացնել դրական լոյսի ներքո, քողարկել դրանց իրական դրդապատճառներն ու հայության կյանքում ունեցած բացասական հետևանքները: Այս հատկանիշներն առկա են վերոնշյալ պատմագիրների հայերին վերաբերող գրեթե բոլոր հաղորդումներում:

Այսպես, Իսքանդար Մոնշին խոսելով Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից Շահ Աբբաս Ա-ի կողմից իրականացված հայերի բռնագաղթի մասին, որպես այդ նախաձեռնության դրդապատճառ նշում է «ռայաթների հանգստության ապահովումը» և «հակառակորդ գործի վնասներից գերծ պահելը», իհարկե, հիշելով նաև, որ «ղզլբաշ գորքը, որքան կարող է, պաշար է վերցնում, իսկ այն, ինչ մնում է, այրում-ոչնչացնում է»¹: Այս խոսքերն իսկ մատնանշում են բռնագաղթի իրական դրդապատճառները, որոնցից է իրանական մարտավարությանը բնորոշ «այրված հողի» տակտիկայի կիրառումը, որը բազմիցս հիշյալ և այլ վիճելի տարածքների նկատմամբ կիրառվել էր նաև նախորդ Մեֆյան տիրակալների կողմից, երբ օսմանյան գործի առաջխաղացումը իրանական տարածքներում փորձում էին կանգնեցնել պարենի ու այլ պաշարներից զրկելու միջոցով՝ ոչնչացնելով նրա ճանապարհին գտնվող բնակավայրերը: Բացի այդ, բռնագաղթի միջոցով Շահ Աբբասը լուծում էր նաև Մեֆյան նոր մայրաքաղաք Սպահանը առևտրական ու արհեստավորական դասերի ներկայացուցիչներով բնակեցնելու ու բարեկարգելու խնդիրը: Հարկ է հիշել նաև այն իրողությունը, որ Այսրկովկասի ամայացված տարածքներում դեռևս 16-րդ դարից Մեֆյան շահերը բնակեցնում էին իրենց ռազմական հենարանը հանդիսացող ղզլբաշ ցեղերին², որոնք, կարևոր դեր խաղալով իրանական բանակում, միաժամանակ նաև բնական պատնեշ էին ստեղծում Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքակառուցության դեմ:

¹ اسکندر بیگ ترکمان، 1335. بکوشش تیرج افشار، تهران، 2، تاریخ عالم آرای عباسی، جلد 667-668.

² Այսրկովկասի տարբեր շրջաններում բնակեցված թյուրք-ղզլբաշական ցեղերի ու նրանց տրված հողային տիրույթների մասին մանրամասն տե՛ս **И. П. Петрушевский**, *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI- начале XIXвв.*, Ленинград, 1949, с. 131-141; նաև **Н. Маеда**, *Exploitation of the Frontier: The Caucasus Policy of Shah 'Abbas I, Iran and the World in the Safavid Age*, London, New York, 2012, p. 477. **Ա. Եսայան**, Թյուրքական ցեղերի բնակեցումը Հյուսիսարևելյան Հայաստանում Մեֆյանների օրոք **XVI-XVII**դդ., «Բանբեր Մատենադարանի», 27, Երևան, 2019, էջ 290-294:

Ըստ Իսքանդար Մոնշիի՝ Չոխուր Սա'ադի (Երևանի) նահանգի բնակչության բռնագաղթը իրականացնում է Ամիր Գունախանը, Նախիջևանինը՝ այնտեղի հաքիմ (կառավարիչ) Մադսուդ Սուլթան Քենգերլուն, իսկ Ջուղայինը՝ խասսե-ե շարիֆեի³ ղուլամ⁴ Թահմասպ Դուլի Բեկը⁵: Ջուղայեցիների բռնագաղթի կազմակերպման մանրամասն նկարագրությունը առկա է Առաքել Դավրիժեցու պատմության մեջ: Վերջինս, բնութագրում է Թահմասպ Դուլի Բեկին որպես Շահ Աբբասի մոտ գտնվող վրաց մահմեդականացած պատանդներից և մատնանշում նրա դերը Ջուղայեցիների բռնագաղթի կազմակերպման գործում⁶:

Իսքանդար Մոնշին ջուղահայության բռնագաղթի հետ կապված նշում է նաև, որ «Թեև Ջուղայի բնակիչները կապված էին իրենց հին բնակավայրին, սակայն իրենց կյանքն ու ունեցվածքը պաշտպանելու համար ստիպված գաղթեցին և հաստատվեցին դրախտային Սպահանում»⁷: Այս տեղեկությունը գրեթե նույնությամբ կրկնում է Ֆազլի Խուզանին՝ հավելելով, որ Շահ Աբբասը ջուղայեցիների տարհանումը իրականացնող Թահմասպ Դուլի Բեկին որոշ գումար է տրամադրում գաղթողների ծախսերը և կարիքները հոգալու համար⁸: Իհարկե, ջուղայեցիները բռնագաղթի ենթարկ-

³ **Խասսե-ե շարիֆե** (خاصه شریفه) էին կոչվում արքունի կալվածները, արհեստանոցներն ու գործատները, և առհասարակ, շահին ու թագավորական ընտանիքին պատկանող մյուս բոլոր հաստատությունները միասին վերցրած:

⁴ **Ղուլամ** - (غلام) - Բառացի նշանակում է «ստրուկ, ծառա»: Այսպես կամ պարզապես դուլ էին կոչում այն հեծյալներին, որոնք մեծ մասամբ կամ իրենք էին նոր մահմեդականություն ընդունել և կամ հանդիսանում էին մեկ կամ երկու սերունդ առաջ մահմեդականություն ընդունած քրիստոնյաների զավակներ: Սրանք փաստորեն կազմում էին շահի անձնական թիկնապահների զվարդիան՝ ղուլլար: Ղուլամները երկու տեսակի էին՝ ներքինի (խասսեին պատկանող ղուլամներ) և ոչ ներքինի (սադե- սովորական) (Tadhkirat al-mulūk, A manual of Safavid administration (circa 1137/1725), Persian text in Facsimile, translated and explained by V. Minorsky, London, 1943, p. 127)

⁵ اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، جلد 2، بکوشش تیرج افشار، تهران، 1335، ص. 668.

⁶ **Առաքել Դավրիժեցի**, Գիրք պատմութեանց, Երևան, 1990, էջ 89:

⁷ اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، جلد 2، ص. 668.

⁸ **Fazli Beg Khuzani Isfahani**, A Chronicle of the Reign of Shah 'Abbas, edited by K. Ghereghlu, vol. I, Gibb Memorial Trust, 2015, p. 370.

վածներից առավել ապահով վիճակում Մպահան հասածներից էին, այնուամենայնիվ, ջուղայեցիների բռնագաղթը պատկերավոր նկարագրող 17-րդ դարի անանուն ժամանակագիրը վառ գույներով է ներկայացնում նրանց դժկամությունն ու ավստանքը իրենց բնակավայրից հեռանալու կապակցությամբ. «ապայ գրեակիչս Ջուղայոյ հանին ի գեղեցկաշէն և ի բազմաձախ յակաց իւրեանց, մեծաւ հառաչանոք վայ և եղուկ կարդալով, անդ էր տեսանել զողբս և զարտատուս նոցա, զի ի յանկարծ և յեղակարծ ժամու եղեն անտուն և անտեղ, անյարկ և անօթեան, ատար և պանդուխտ . . . Մանաւանդ զի առաջի աչաց իւրեանց տեսին զբազում ծախիս քինեալ և զարդարեալ ապարանս իւրեանց այրեցեալ և հրդեհեալ»⁹:

Իսքանդար Մոնշին ճշգրտում է իր ժամանակներում (17-րդ դարի սկիզբ) Նոր Ջուղայում ապրող բնակչության քանակը՝ 3000 ընտանիք¹⁰: Իրանցի պատմագրի այս տեղեկությունը մոտ է իրականությանը, որովհետև այդ հարցը ուսումնասիրած Վ. Ղուկասյանը ևս հենվելով եվրոպացի հեղինակների տվյալների վրա, պնդում է, որ սկզբում այն փոքր, շուրջ 2000 ընտանիքի (10000 հոգի) սահմաններում լինելով՝ հետագայում ավելացել է և իր ամենաձաղկուն շրջանում, ժԷ դարի 60-70 ականներին, ընտանիքների քանակով չէր կարող գերազանցել 3500-ը¹¹:

Հ. Տեր-Հովհանյանի «Պատմութիւն Նոր Ջուղայի» երկատորյա ուսումնասիրության մեջ բավականին հանգամանալից ներկայացվում են Նոր Ջուղայի 1606 թ. հիմնադրման հանգամանքները և դրա առթիվ հրապարակված շահական հրովարտակները:

Մոնշիի հավաստմամբ թեև դիվանի ունեցվածքից բռնագաղթի ենթարկվածներին մթերք ու ձմռան կարիքները հոգալու պարագաներ տրվեցին, քանի որ հայերից շատերը մահացան, զարնանը շահի ողորմած հրամանով Մպահանում ու նրան կից շրջաններում նրանց բնակության վայր, հող, սերմացու տրամադր-

վեց և այդ նպատակով դիվանից 2-3000 թուման հատկացվեց¹²: Հ. Տեր-Հովհանյանը հաստատելով Մոնշիի հաղորդումը հայ գյուղացիներին բնակության վայր և սերմացու տրամադրելու վերաբերյալ, հավելում է, որ «անկարողներից ոմանց նան եզներ և այլ անասուններ տրվեց... միաժամանակ նան տուրք սահմանելով, որ ամեն մեկին տրուած սերմը չորս անգամ աւելացւի եւ ամսէ-ամիս քառապատիկ սերմից մէկ երրորդը յանձնի արքունիքին եւ մէկ մասը, որ ստացել էին դիւանատանից՝ մնայ ժողովրդի մօտ, իբրեւ արքունիքին ունեցած նրանց պարտքը»¹³: Սյապիսով, պարսից արքունիքը տրված նպաստի դիմաց հետագայում բերքի մեկ երրորդը ետ էր գանձելու:

Նոր Ջուղայի հիմնադրմանը վերաբերող որոշ մանրամասներ է հաղորդում նաև Ֆազլի Խուզանին՝ նշելով, որ «հայերից նրանց, ովքեր վաճառական էին, բնակության վայր տրամադրվեց Ջայսնդեռուղ գետի ափին թավրիզեցիների թաղամասի դիմաց, և շահը այդ հողերը նրանց նախկին տերերից գնելով, որպես ին՝ամ (պարզև) նրանց շնորհեց, և նրանցից յուրաքանչյուրն իր կարողությանը համապատասխան, 100 թումանից 3000 թուման ծախս արեց, տուն կառուցեց, 2000 և ավելի կացարան նախագծվեց, փողոց անցկացվեց, որոնցից շատերը հոսող ջուր ունեին: Խոջա Մաֆարն ու Խոջա Նազարը, որ նրանց քալանթարն ու մեծահարուստներից էին, հոյակապ ապարանքներ կառուցեցին: Իսկ հողագործներին հող տրամադրվեց Մպահանի շրջակայքում, և տներ կառուցվեցին նրանց համար»¹⁴:

Ֆազլի Բեկ Իսֆահանիի հաղորդումները Իրանի կենտրոնական շրջաններ բռնի տեղափոխված հայության XVII դարի պատմությունը լրացնում են Նոր Ջուղայի կառավարմանը մասնա-

⁹ Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 182:

¹⁰ اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، جلد 2، ص. 670.

¹¹ V. Ghougassian, The Emergence of the Armenian Diocese of New Julfa, University of Pennsylvania (Scholars Press Atlanta, Georgia), 1998, p. 34-35

¹² اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، جلد 2، ص. 670.

¹³ Յ. Տեր-Հովհաննեսի, Պատմութիւն Նոր Ջուղայի, Նոր Ջուղա, 2008, էջ 71:

¹⁴ Fazli Beg Khuzani Isfahani, նշվ. աշխ., էջ 372-3:

կից Սեֆյան վարչակարգի տարբեր պաշտոնյաների՝ դարուղաների¹⁵ ու վեզիրների¹⁶ մասին տվյալներով:

Նոր Ջուղայի հայությանը տրված էր որոշ ինքնավարություն, որը գլխավորում էր քալանթարը¹⁷: Վերջինս մինչև Խոջա Հայկազի մահը 1660-ականների սկզբին, նշանակվում էր Խոջա Խաչիկի ժառանգներից՝ Շահիխասենց կամ Սաֆրազյանք ընտանիքի անդամներից և ապա ազդեցիկ այլ խոջաներից: Նոր Ջուղայի հայերի կառավարմանը մասնակից էր նաև դարուղան, որը մահմեդական էր: Մինչ այլ աղբյուրները բավարար նյութ չեն բովանդակում բացի Սպահանի դարուղայից՝ Նոր Ջուղայում ևս դարուղայի պաշտոնավարման վերաբերյալ, և ուսումնասիրողներից ոմանք կասկածի տակ են առնում այդ պաշտոնյայի առկայությունը¹⁸, Ֆազլի Իսֆահանիի հաղորդումները ճշգրտումներ են մտցնում այս հարցում: Նա հիշատակում է Ջուղայի դարուղաներին և նշում, որ հիջրայի 1017 թ. (1608/9 թ.) Ուղուբլու Բեկ Յուզբաշին նշանակվում է

“Սպահանի Ջուղայի դարուղա”¹⁹, իսկ նրա մի քանի տարվա պաշտոնավարումից հետո 1022 թ. (1613/4 թ.) այդ պաշտոնը հանձնվում է Միավուշ Բեկին: 1028 թ. (1618/9 թ.) Ջուղայի դարուղայի պաշտոնը հանձնվում է ջուղայեցիների բռնագաղթը իրականացրած կրոնափոխ դուլամ Թահմասպ Ղուլի Բեկի եղբորը՝ Քարթլիի Մելիք Ղորիամազի որդի Միզբան Բեկին²⁰: Դարուղայի գործառնությունը շատ պատկերավոր ներկայացնում է ֆրանսիացի կաթոլիկ քարոզիչ Գաբրիել Շինոնը. “Խոջան (քալանթարը) վեճերն ինքն էր հարթում և դարուղայի մարդկանց ծառայեցնում էր իր բարապանների պես. հրամայում էր անել այն, ինչ ինքն էր ցանկանում: Եվ եթե պատժի կամ տուգանքի արժանի դեպք էր պատահում, նա դարուղայի սպաներին թույլ էր տալիս զբաղվել դրանով՝ առանց պատահական գանձումներ անելու: Հայերը պարտավորված էին նաև տարեկան 50 թուման վճարել դարուղային, որը սերտ հարաբերությունների մեջ էր խոջայի (քալանթարի) և նրա մարդկանց հետ: Սպան այնքան էր հարգում նրան, որ նրա ներկայությամբ երբեք չէր նստում, միայն եթե վերջինս ձեռքով նստելու նշան էր անում»²¹:

Ֆազլի Իսֆահանիի հաղորդումներից պարզ է դառնում նաև, որ Սպահանի «հայ և մյուս օտար համայնքների» ֆինանսական ու հարկային գործերը վերահսկում էր հատուկ նրանց կցված վեզիրը, որի պաշտոնում հիջրայի 1022 թ. (1613/4 թ.) նշանակվում է Խոջա Շա'իք Ջուղանին²²: Հիջրայի 1032 թ. (1622/3 թ.) այդ դիրքում հիշատակվում է Ադա Յուսեֆ Միֆայ Թաֆրեշին²³, որին այդ թվականին հանձնարարվում է նաև վերահսկել հայերի առևտրի

¹⁵ **Դարուղա** (داروغه) - Այսպես էր կոչվում տվյալ վայրի ոստիկանապետը, որն ակտիվ մասնակցություն ուներ բնակչությունից գանձվող հարկերի իրացման գործում:

¹⁶ **Վեզիր** (وزیر) - Սեֆյանների օրոք այսպես էին կոչվում այն բարձրաստիճան ֆինանսական պաշտոնյաները, որոնք մուսթովֆիների հետ միասին հսկում էին պետության, արքունիքի և բանակի ֆինանսների և զինվորականությանը տրվող ռոճիկների բաշխման գործը: Նրանք անմիջապես պատասխանատու էին էթենադ ալ-դովլեի առաջ և փաստորեն հանդիսանում էին վերջինիս ներկայացուցիչները ֆինանսական գործերի կառավարչություններում վարչություններում:

¹⁷ **Քալանթար** (کالتار) էին կոչվում քաղաքների կամ քաղաքային խոշոր թաղամասերի աշխարհիկ ղեկավարները, որոնք զբաղվում էին բնակչության քաղաքացիական հարցերով և հետևում քաղաքի հասարակական գործերին: Մրանք սովորաբար ընտրվում էին քաղաքի մեծահարուստ վաճառականների կամ խոջաների շարքերից (Չ. Փավազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրավարտակներ, պրակ Ա, Երևան, 1956, I, էջ 122): Քալանթարներն էին նշանակում քաղաքային, որոշակի դերակատարություն ունենում համաքաղաքային հարկերի բաշխման գործում (Tadhkirat al-mulūk, p. 148):

¹⁸ V. Ghougas'ian, նշվ. աշխ., էջ 64:

¹⁹ Fazli Beg Khuzani Isfahani, նշվ. աշխ., էջ 476:

²⁰ Fazli Beg Khuzani Isfahani, նշվ. աշխ., էջ 783:

²¹ Է. Թաշիրյան, Նոր Ջուղան եվրոպական աղբյուրներում 17-18 դարերում, մաս II, Երևան, 2017, էջ 53:

²² Fazli Beg Khuzani Isfahani, նշվ. աշխ., էջ 625:

²³ Fazli Beg Khuzani Isfahani, նշվ. աշխ., էջ 842:

թահվիլդարների²⁴ գործունեությունը, որի մասին տվյալները նրա ըննությանը պետք է հանձնել խասսե-ե շարիֆեի²⁵ մուսթովֆին²⁶, որպեսզի վեզիրը խասսե-ե շարիֆեի թահվիլդար Լալե (կամ Լալա) Բեկի հետ համապատասխան պահանջներ ներկայացնել հայերին²⁷:

Ինչպես իրավացի կերպով նկատում է Հ. Տեր Հովհանյանը, ընդհանուր առմամբ Շահ Աբբաս Ա-ը բավական հանդուրժողական էր կրոնական հարցերում, և Սպահան ներգաղթած հայերն ունեին կրոնական ազատություններ. ներգրավվում էին կառավարական ծառայության մեջ որպես խորհրդականներ, թարգմանիչներ, դեսպանությունների մեջ եւ զինվորական պաշտոններում եւ ամեն իմաստով²⁸ հավատարիմ ու վստահելի էին²⁹: Տեր Հովհանյանի այս միտքը հաստատում են Նոր Ջուղայի հայ վաճառականությանը տրված արտոնություններն ու սոցիալական բարձր կարգավիճակը: Նրանք համարվում էին իրանական հասարակության վերնախավի անդամ, և նրանցից առավել ազդեցիկ անձիք, որոնք առանձնանում էին իրենց հարստությամբ, ծառայություններով և արժանիքներով, կրում էին «խոջա» տիտղոսը: Նրանցից մի քանի-

²⁴ **Թահվիլդար** - (تحویلدار) - Գանձապետ, պաշտոնյա, որը զբաղվում էր դրամական գործարքներով:

²⁵ **Խասսե-ե շարիֆե** (خاصه شریفه) էին կոչվում արքունի կալվածները, արհեստանոցներն ու գործատները, և առհասարակ, շահին ու թագավորական ընտանիքին պատկանող մյուս բոլոր հաստատությունները միասին վերցրած:

²⁶ **Մուսթովֆի** - (مستوفی) - Այսպես էին կոչվում պետության, արքունիքի, ինչպես նաև կրոնական հաստատությունների ֆինանսական, հաշվապահական գործերի գլխավոր կառավարիչները: Խասսե-ե շարիֆեի մուսթովֆին խասսեի ֆինանսների վերահսկման պատասխանատուն էր:

²⁷ **Fazli Beg Khuzani Isfahani**, նշվ. աշխ., էջ 842:

²⁸ Շահ Աբբասի Կովկասյան արշավանքների ժամանակ հայ մելիքների ցուցաբերած ակտիվ աջակցությունից բացի գորքերում հայերի որոշակի ներգրավվածության մասին փաստեր է արձանագրել Ֆազլի Բաֆահանի (այս մասին տե՛ս ք. **Կոստիկյան**, Ֆազլի Բեկ Բաֆահանիի տարեգրության հաղորդումները Արևել-յան Հայաստանի ԺԷ դարի պատմության որոշ հարցերի շուրջ, Արևելյան աղբյուրագիտություն, 2, Երևան, 2020, էջ 311-319):

²⁹ **Հ. Տեր Ցովհանյան**, նշվ. աշխ., էջ 48:

սը հանդես էին գալիս որպես շահի խորհրդական տնտեսական հարցերում և ակտիվորեն մասնակցում Սեֆյան թագավորության ու Եվրոպական երկրների միջև առևտրական բանակցություններին³⁰:

Արդեն 1016 թ. (1607/8) հիշատակվում է Խոջա Սաֆարի անունը, մալեք ալ-թուջջար Խոջա Ահմադ Փիր Բալխիի հետ խասսե-ե շարիֆեի գործերին Թավրիզում մասնակից լինելու մասին³¹:

1619 թ. սեպտեմբերի 17-ին տեղի ունեցած աճուրդում Ջուղայեցի հայ վաճառականներին է հանձնվում հում մետաքսի իրացման մենաշնորհը: Ջուղահայ վաճառականներին հաջողվում է պահպանել Իրանի հում մետաքսի արտահանման իրենց արտոնությունները և ստանալ այդ մենաշնորհի եկամուտների առյուծի բաժինը նրա ողջ գոյության ընթացքում մինչև Շահ Աբբասի մահը³²:

Ֆազլի Բաֆահանի երկում պահպանվել է աճուրդին նախորդած Շահ Աբբասի 1028 թ. (1618/9 թ.) հրովարտակը, որով «կարգադրվեց, որպեսզի այն վիլայեթների վեզիրներն ու քալանթարները, որտեղ մետաքս է մշակվում, ամբողջությամբ խասսե-ե շարիֆեի վարչության գնմանը ենթակա համարեն և պատժեն նրանց, ովքեր առանց թույլտվության մեկ ման³³ մետաքս կզնեն կամ կվաճառեն... Գիլյանի մետաքսի [իրացումը] հասկացվում է Խոջա Լալազարին, որը 1000 հրեա ընտանիքներով Վրաստանից բերվել էր Ֆարրահաբադ, իսկ Շիրվանի ու Ղարաբաղի մետաքսինը ջուղայեցի Խոջա Սաֆարին ու Խոջա Նազարին «որպեսզի Ռումի երկիր (Օսմանյան կայսրություն) տանեն ու վաճառեն»³⁴: Հրովարտակով մատնանշվում է հայ խոջաների ուղիղ կապը և փոխ-

³⁰ **V. Chougassian**, նշվ. աշխ., էջ 60:

³¹ **Fazli Beg Khuzani Isfahani**, նշվ. աշխ., էջ 462:

³² **S. Aslanian**, *From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa*, University of California Press, Berkeley, New York, London, 2011, p. 38.

³³ Ման (من) - Կշոի միավոր: XVIII դարում 1 թավրիզի մանը հավասար էր մոտ 3 կգ (տե՛ս **Հ. Փափազյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, հրովարտակներ, պրակ Բ, Երևան, 1959, էջ 223):

³⁴ **Fazli Beg Khuzani Isfahani**, նշվ. աշխ., էջ 782:

գործակցությունը շահի ընտանիքի դուլամ և մետաքսի առևտրի գործակալ Մուհիբ Ալի Բեկի հետ, որն էլ նախագահել էր հետագայում մետաքսի առևտրի մենաշնորհի կապակցությամբ անցկացված աճուրդում³⁵: Վերջինս օրինավոր կերպով ստանում էր Խոջա Նազարի կողմից հում մետաքսի առևտրի ստացվող արծաթի եկամուտների 1/6-ը³⁶:

Նոր Ջուղայում հաստատված հայերին թույլատրված էր եկեղեցիներ կառուցել, կրոնական արարողություններ կատարել, որոնց ժամանակ առ ժամանակ մասնակից էին դառնում շահն ու բարձրաստիճան պաշտոնյաները: Հոլանդացի ճանապարհորդ Լը Բրյուինը փաստում է նաև, որ ջրօրհների արարողության համար Նոր Ջուղայի քաղաքարք նախօրոք ստանում էր շահի թույլտվությունը, որի համար վճարվում էր մոտ 200 դուկատ հարկ³⁷: Շահի կողմից ուղարկվում էր պահակախումբ բազմամարդ արարողությունները հսկելու և կարգ ու կանոն պահպանելու համար, քանի որ դրան հաճախ մասնակցում էին նաև բազում մահմեդականներ:

Ըստ երևույթին Ֆազլի Բեկ Իսֆահանին ևս ականատես է եղել այս արարողությանը, քանի որ իր պատմության մեջ բավական մանրամասն նկարագրում է ջրօրհների տոնակատարությունը՝ նշելով, որ «այն Սպահանի Ֆարրահաբադի հայության ու վրացիների մեծ տոնն է, որի ժամանակ յոթ խալիների վրա մեծ սկահակի մեջ ջուրը որոշ խոտաբույսերով, ծաղիկներով ու յուղերով օծում են, ապա այդ ջրով լվանում և մաքրում իրենց այդ տարվա գործած մեղքերը, իսկ մնացած ջուրը թափում այնտեղով անցնող գետը»³⁸:

Բայց և այնպես, շահի վարքագիծը կրոնական հանդուրժողականության հարցում չի կարելի միանշանակ գնահատել, որովհետև պետք է հիշել նաև նրա օրոք Սեֆյան պետության տարբեր վայրերում, մասնավորապես, Սպահանում և վերջինիս շրջակա

հայաբնակ գյուղերում պարբերաբար տեղի ունեցող քրիստոնյաների բռնի իսլամացման ինչպես մասնավոր, այնպես էլ զանգվածային դեպքերը, որոնք հիշատակվում են Ա. Դավրիժեցու, կաթուղիկ քարոզիչների և այլ հեղինակների երկերում³⁹: Ա. Դավրիժեցին, մասնավորապես, պատմում է շահի կողմից աղքատ գաղթականներին տրված պարտքի դիմաց 1613 թ. մահմեդականացման դեպքի մասին⁴⁰:

Իսքանդար Մոնշիի հաղորդումներում առանձնանում են տեղեկությունները 1620/1621 թ. (հիջրայի 1030 թ.) Սպահանի մերձակա Փերիայի (Ֆարիդան) շրջանի գյուղերում և Մազանդարանում հաստատված հայությանը Սեֆյան իշխանությունների կողմից ներկայացված իսլամացման պարտադրանքի ու արդյունքում նրանց զանգվածային կրոնափոխության դեպքերի մասին: Իրանցի պատմագիրը շահի այս ձեռնարկումը բացատրում է նրանց հանդեպ ունեցած հոգածությամբ. «որ միգուցե իշխանության թուլացման դեպքում մոտակա լոռերի ցեղերից նրանց նկատմամբ, որ [թեև] իսլամին հպատակ ու զիմի են, բռնություն ու ոտնձգություններ կատարվեն, կանայք ու պատանիներ գերեվարվեն: Այդ ժողովրդից մի խումբ կամովին ընդունեց տիրակալի առաջարկը: Հիմնական նպատակն այն էր, որ այն վայրերում, ուր նրանք բնակություն էին հաստատել և եկեղեցի կառուցել, այն մզկիթի վերածվի և մուեզինի ձայնն այնտեղից լսվի... և նրանց վերջնական վիճակը լավ լինի»⁴¹:

Լոռերի հայերի նկատմամբ բռնություններ գործելու հնարավորության մասին Շահ Աբբաս Ա-ին վերագրվող Իսքանդար Մոնշիի կանխատեսումը, իհարկե, հեռու չէր իրականությունից, որովհետև, մասնավորապես, 1737 թ., երբ Ալիմորադ խանի գլխավորությամբ լոռերը ապստամբում են Նադիր շահի դեմ, թալանում են Սպահանի շրջանի հայկական. Զամրիսրա, Ջանխոջի, Խմստուն

³⁵ S. Babaie, K. Babayan, I. Baghdiantz-McCabe, M. Farhad, Slaves of the Shah: New Elites of Safavid Iran. I. B. Tauris: London, New York, 2004. pp. 61, 64.

³⁶ Ibid. p. 64.

³⁷ Թաջիբյան Է... Նոր Ջուղայի գաղթօջախը 17-18-րդ դդ.: Եվրոպական աղբյուրներում, մաս I, Երևան, 2012, էջ 51:

³⁸ Fazli Beg Khuzani Isfahani, նշվ. աշխ., էջ 777-778.

³⁹ Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 290-1. Chronicle of the Carmelites, vol. I. 248-255 Թաջիբյան Է... նշվ. աշխ., մաս II, Երևան, 2017, էջ 43-44:

⁴⁰ Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 149-157:

⁴¹ اسکندر بیگ ترکمان. تاریخ علم آرای عباسی، جلد 2، ص. 960.

Գուլբնհար, Անաֆշ, Դեյնով, Չարբադ, Բուրք, Շուրաւա, Խոսրովա-
բադ, Աբբարիք բնակավայրերը և գերեվարում նրանց բնակիչնե-
րին⁴²: Այնուամենայնիվ, կարևոր է նաև այն հանգամանքը, որ այս
դեպքերը նկարագրող Ստեփաննոս Երեց պատմիչի հավաստմամբ
վերոհիշյալ թալանված գյուղերից չորսի՝ Չամբխրսի, Շուրաւանի,
Ջանխոշիի և Խոստունի բնակիչները դեռևս նախքան այդ միջադե-
պը արդեն մահմեդականացել էին: Միաժամանակ ավարատության
է ենթարկվում նաև ազգությամբ «տաճիկ» հարևան Մալիգաբ գյու-
ղը⁴³: Այնպես, որ լոռերի ցեղերի կողմից մատնանշվող վտանգը հա-
վասարապես սպառնում էր թե՛ քրիստոնյաներով և թե՛ մահմեդա-
կաններով բնակեցված գյուղերին, և կարծում ենք պարսից պատ-
մագիրը իր վերը շարադրված տեսակետով, ընդամենը փորձում էր
արդարացում գտնել շահի հիշյալ քայլերի համար:

Շահ Աբբաս Ա-ի կողմից Փերիայի գավառում ձեռնարկված
բռնի մահմեդականացման հետ կապվող իրադարձություններին
մանրամասն անդրադառնում է Հ. Տեր-Չովհանյանը՝ կապելով այն
պարսից շահի ծպտյալ կերպարանքով Փերիա գավառի Դարբնի
գյուղում մի կնոջ հետ հանդիպման ու նրա անկեղծ պատասխանի
հետ, որը, չճանաչելով շահին, իր դժգոհությունն էր արտահայտել
իրենց նոր բնակավայրը գաղթեցված լինելու առիթով⁴⁴:

Կարծում ենք, Փերիայի հայերին ներկայացված մահմեդա-
կանացման հարկադրանքը տվյալ շրջանում չէր կարող պահի ազ-
դեցությամբ ու ոչ կանխավ մտածված քաղաքականության արդ-
յունք լինել: Քանի որ հենց 1620-ականների սկզբից են առկա փաս-
տաթղթեր Իմամ Ջաֆարի⁴⁵ օրենքի կիրառման մասին, որի համա-
ձայն մահացած քրիստոնյաների ունեցվածքը կարող են ժառանգել
նրանց մահմեդականացած ազգականները, անկախ նրանից՝ մոտ

են, թե հեռու, մինչև յոթ պորտ՝ զրկելով ժառանգությունից ավելի
մոտ քրիստոնյա ազգականներին: Այս օրենքն ավելի վտանգավոր
էր, քան մահմեդականացման պարտադրանքը, որն իսլամի օրենք-
ներով անթույլատրելի էր զիմմիների հանդեպ: Ժառանգության այս
օրենքի մասին դրույթն առկա է Շահ Աբբաս Ա-ի շեյխ ուլ-իսլամ
Բեհա ալ-Դին Ամիրիի «Ջամ'ե աբբասի» (Աբբասի ժողովածու) եր-
կում, որ գրվել է 1621 թ.⁴⁶: Վերջինս իր ժամանակաշրջանի ազդե-
ցիկ հոգևորականներից էր, որը կարող էր լինել այդ օրենքի գոր-
ծադրման նախաձեռնողներից⁴⁷: Բացի այդ, չպետք է մոռանալ, որ
Շահ Աբբաս Ա-ը ևս բարեպաշտ մահմեդական էր, որը բազմիցս
ուխտագնացություն էր կատարել դեպի շիական սրբավայրերը, վե-
րանորոգել Իմամ Ռեզայի դամբարանը և նվիրատվություններ կա-
տարել մզկիթներին⁴⁸: Այնպես որ 1629 թ. նրա հրապարակած հրո-
վարտակը Իմամ Ջաֆարի օրենքի շրջանառության մեջ դրվելու
մասին⁴⁹ ի ցույց է դնում նրա իրական նպատակները Իրան ներ-
գաղթած հայությունը քայքայելու և նրանց հոծարակամ իսլամաց-
մամբ ձուլելու վերաբերյալ:

Մոնղիի կարծիքով հայերի մահմեդականացման այդ
«պատվաբեր» ծառայությունը հանձնարարվում է արքունի մաջ-
լեսնևևիս (քարտուղար) Սեիդ Ամիր աբու ալ-Մա'ալի Նաթանգլին⁵⁰,
որին հաջողվում է հայերի մի մասին հոծարակամ մահմեդակա-
նացնել, իսկ նրանց, ովքեր վանականների ու քահանաների
հրահրմամբ, ընդդիմանում էին, «սպառնալիքներով է մահմեդա-
կանացնում»⁵¹: Մոնղիի հավաստմամբ մոտ 5000 հոգի մահմեդա-
կանանում է⁵²: Իրանցի պատմագրի այս հաղորդումը, իհարկե,
ճշգրտում ու հաստատում է Հ. Տեր-Չովհանյանցի կողմից միևնույն

⁴² Ստեփաննոս Երեցից, Հանգիստագիրք-Պատմագիրք, Թեհրան, 2017, էջ 181-182:

⁴³ Նույն տեղում, էջ 182:

⁴⁴ Հ. Տեր Յովհաննես, նշվ. աշխ., էջ 65:

⁴⁵ Այդ օրենքի ու նրա ծանր հետևանքների մասին տե՛ս Փափագյան Հ., Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 85-99:

⁴⁶ بها الدين محمد بن حسين عاملي، جامع عباسي، سنة 1331، ص. 264.

⁴⁷ The Cambridge History of Iran, vol. 6, Cambridge University Press, 1986, p. 667.

⁴⁸ Նույն տեղում, էջ 273:

⁴⁹ A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the 17th and 18th Centuries, vol. I, London, 1939, p. 288.

⁵⁰ اسکندر بيک ترکمان، تاريخ عالم آرای عباسی، جلد 2، ص. 960.

⁵¹ Նույն տեղում:

⁵² Նույն տեղում:

կրտսդարձության շարադրանքը Փերիայի նահանգի հայկական գյուղերի բնակիչներին բռնի մահմեդականացնելու մասին, սակայն չսպիագանցում է այդ գործընթացի արագությունն ու կեղծում դրա դյուրին լինելու հանգամանքը: Հայ ուսումնասիրողի հավաստմամբ տեղի հայերի նկատմամբ հալածանքները շարունակվում են երկու տարի և վերջիններս զգալի դիմադրություն են ցույց տալիս, անդադար խռովություններ են բարձրացնում և անգամ չորս մոլլա սպանում⁵³: Ի վերջո հայերի մի մասին հաջողվում է ազատվել կրոնափոխության պարտադրանքից շահի հրովարտակով՝ ծանր՝ շուրջ 1000 թուման տուգանք վճարելու գնով⁵⁴: Ընդհանուր առմամբ շահին վճարվում է 2000 թուման, որպեսզի նա փոխի իր վճիռն այս հարցում և դադարեցվեն Փերիայի նահանգի հայերի նկատմամբ կրոնական հետապնդումները⁵⁵:

Չնայած Շահ Աբբաս Ա-ի օրոք Սպահանի շրջակա գյուղերի նկատմամբ կրոնափոխության նպատակով իրականացված բռնաճնշումներին՝ դրանց մեծամասնությունը մինչև 17-րդ դարի վերջը շարունակում էր մնալ հայկական, որի մասին փաստում է պահպանված Բուրվառի և Փերիայի հայերի պահպանված համախոսականը գրված 1693 թ. այդ շրջանների 43 գյուղերի անունից՝ Նոր Ջուղայի թեմի առաջնորդությանը իրենց հպատակությունը հայտարարելու առիթով⁵⁶:

Վրաց պատմագիր Փարսադան Գորգիջանիձեն փաստում է Շահ Աբբաս Ա-ի կողմից մեծ թվով վրացիների, հայերի ու հրեաների Այսրկովկասից Մազանդարան բռնագաղթեցված լինելու մասին⁵⁷: Ըստ որոշ հետազոտողների՝ Իրանի մերձկասպյան Մազանդարանի և Գիլյանի շրջանները տարագրված հայերի քանակը կազմել է 27000-30000 շունչ⁵⁸: Այստեղ նրանց բնակեցման նպա-

⁵³ B. Stepanian, նշվ. աշխ., էջ 66-67:

⁵⁴ Նույն տեղում, էջ 67:

⁵⁵ V. Ghougassian, նշվ. աշխ., էջ 75:

⁵⁶ V. Ghougassian, նշվ. աշխ., հավելված վավերագիր 17, էջ 266-269:

⁵⁷ Լ. Մելիքսեթ բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Խ. Բ. Երևան, 1936, էջ 112:

⁵⁸ V. Ghougassian, նշվ. աշխ., էջ 44-45:

տակներից է համարվում բնական մետաքսի արտադրության ու հողագործության զարգացումը: Այնուամենայնիվ, ինչ-ինչ պատճառներ, որոնց մեջ նշվում են բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները, կրոնական ճնշումները, ծանր հարկերն ու Ռուսաստանի փախչելու հնարավորությունները, պատճառ են դառնում, որ կարճ ժամանակ անց այդտեղ հայերի քանակը խիստ նվազի: Արդեն 1660-ականներին այնտեղ հաշվվում էր 1200 հայ ընտանիք, իսկ 1670-ականներին՝ ընդամենը 200-ը⁵⁹, այնպես, որ Ռուսաց կայսր Պետրոս Մեծի 1723 թ. արշավանքի ժամանակ այստեղ ոչ մի հայ չէր մնացել⁶⁰:

Այս հարցում կարևոր է Իսքանդար Մոնշիի հաղորդումն այն մասին, որ Մազանդարան տարված բոլոր հայ քրիստոնյաներից պահանջեցին ընդունել իսլամ և Մոուլանա Մուևամմադ Ալի Թաբրիզիին հանձնարարվեց նրանց կրոնափոխության իրականացումը: Ըստ հեղինակի՝ «այդ ժողովրդի մեծ մասը «իսլամի թագավորի» հրավերն ընդունեց անկեղծ սրտով և ճշմարիտ կերպով, մի մասն էլ՝ դժկամորեն...»⁶¹: Փաստորեն, իրանցի պատմագրի հաղորդումը հստակ մատնանշում է Մազանդարանում բնակեցված հայերի բռնի մահմեդականացման իրողությունը:

Բացի վաճառականներից, Նոր Ջուղայի հայ բնակչության մի ստվար հատված էլ կազմում էին արհեստավորները, որոնց միայն մի փոքր խումբ էր ներգրավված արքունի գործատների (խասսե-ե շարիֆեի) աշխատանքներում: Ֆազլի Իսֆահանին փաստում է Շահ Աբբաս Ա-ի 1034 (1625) թ. Ֆարրահաբադ տեղափոխված և արքունի գործատների աշխատանքներին մասնակից արհեստավորներին արված մի կարևոր հարկային զիջման մասին, որի նպատակն էր ամրացնել նրանց այնտեղ և կանխել նրանց հետագա փախուստը՝ հարկերից խուսափելու նպատակով: Ըստ նրա՝ «Ֆարրահաբադում գտնվող հրեա Խոջա Լալազարին, վրաց

⁵⁹ Նույն տեղում, էջ 45:

⁶⁰ هاشمی، شکوه السادات اعرابی، از امانة جلفای نو در عصر صفوی، تهران، 1394، ص. 95.

⁶¹ اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، جلد 2، ص. 960-1.

ազնվականներին⁶² և հայ քահանաներին» հաջողվում է մեծ վեզիր Սարուջադիի միջնորդությամբ և դարուղաների գեկուցմամբ Շահ Աբբաս Ա-ից որպես պարզ ատանալ կարգադրություն, որով խասսե-ե շարիֆեի աշխատանքներում ներգրավված Ֆարահաբադի արհեստավորները ու մյուս բնակիչները ազատվում էին արդեն 25 տարի չվճարվող հարկային պարտավորություններից, որի գումարը հասել էր մոտ 300000 թումանի⁶³:

Արքունի գործատներում աշխատող հայ արհեստավորներից էին քարտաշ կամ քարհատ վարպետները: Շահ Աբբաս Ա-ն ու նրան հաջորդած Սեֆյան գահակալները մեծ ուշադրություն էին դարձնում Սպահանի կառուցապատմանն ու շահական պալատների շինարարությանը: Առաքել Դավրիժեցու հավաստմամբ Շահ Աբբասի բռնագաղթերի ընթացքում առանձնացվում ու Սպահան են տարվում հայ «քարագործ արհեստավորները», որոնց աշխատանքն անհրաժեշտ էր արքայական պալատի և այլ շինությունների կառուցման համար: Նրանց բնակեցնում են քաղաքի հարավային կողմում, այնտեղի գրադաշտականների (գարի) համայնքին կից և նրանց հետ խառը, իսկ այնուհետև՝ 1659 թ., նրանց Շահ Աբբաս Բ-ի հրամանով այնտեղի գրադաշտականների հետ տեղահանում են և բնակեցնում քաղաքից դուրս տրամադրված այլ վայրում⁶⁴: Հ. Տեր Հովհանյանի պատմության մեջ ներկայացված է Շահ Աբբաս Բ-ի 1070 թ. (1659/60 թ.) հրովարտակը Սահեբաբադի (քարգործ) հայերին Սարնունի կողմում 60 ջրիբ (10000մ²) հողատարածք տրամադրելու վերաբերյալ⁶⁵:

Մարկո Գրիգորյանի հավաքածուի նմուշների մեջ պահպանվել են 17-րդ դարի երկու հրովարտակ, որոնք անդրադառնում

⁶² Բնագրի հրատարակության մեջ նշված է հետևյալ բառը ناسوانان. որը բառացի նշանակում է «հարց չունեցող», հնարավոր է, որ տեղ գտած լինի «تواداد» (թավադ) բառի տարբերակում, որը նշանակում է «վրաց ազնվական»:

⁶³ Fazli Beg Khuzani Isfahani, նշվ. աշխ., էջ 887-888:

⁶⁴ Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 356:

⁶⁵ Յ. Տեր Յովհաննես, նշվ. աշխ., էջ 77:

են Նոր Ջուղայի հայ քարտաշներին և լրացնում նրանց վերաբերող հայկական աղբյուրների տվյալները:

Դրանք հրապարակվել են Սեֆյան շահեր Սուլեյմանի և Սուլթան Հուսեյնի կողմից համապատասխանաբար 1667 և 1697 թվականներին, որոնց համաձայն Սպահանի հայ քարագործ վարպետները հանդիսանալով խասսեի վարչության արհեստավորները՝ ազատվել են ջիզյա⁶⁶, թաֆավուբ-ե ջիզյա⁶⁷ և մալ⁶⁸ հարկերից: Ստորև բերում ենք այդ հրովարտակների բնագրերը հայերեն թարգմանությամբ:

Թարգմանություն

Իմ հայր շահը, թող Ալլահը նրա հոգին լուսավորի:
[Կնիք]. Վելայաթի շահի ծառա Սեֆի:

⁶⁶ Ջիզյան ոչ մահմեդական ռայաթներից (քրիստոնյաներ և հրեաներ) գանձվող գլխահարկն էր: Սեֆյան ժամանակաշրջանում յուրաքանչյուր գյուղից գանձվող ջիզյան հաշվված էր և ընդհանուր գումարով հարկային մատյաններում գրանցված տվյալ գյուղական համայնքի անունով: Շահ Աբբաս Ա-ի օրոք (1588-1629թթ.) հայերի հարկային բեռը բավական թեթև էր, XVII դարի ընթացքում նրանցից գանձվող ջիզյան շարունակում էր աճել (Vera B. Moreen, Jizya, Encilopedia Iranica, vol. XIV, Fasc. 6, pp. 643-645), հասնելով յուրաքանչյուր չափահաս հրեա ու հայ տղամարդուց գանձվող ջիզյան կազմում էր մեկ միսդալ (4.69 գրամ) ոսկի (Raphael Du Mans, L'estat de la Perse en 1660, Paris, 1890, 46):

⁶⁷ Սկսած XV դարից ջիզյա եզրույթի հետ զուգահեռ փաստաթղթերում հանդիպում է նաև թաֆավուբ-ե ջիզյա հարկատեսակը, որը ներկայացնում էր ջիզյայի գումարի վրա ավելացումը, որը մի քանի տարին մեկ կատարվում էր ընդհանուր մարդահամարից հետո (А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI- XVII веках, Ереван, 1972, с. 234):

⁶⁸ Մալ (مال) - Գլխավոր եկամտահարկը և սեփականության հարկը, որ գանձվում էր ամեն տեսակի եկամտաբեր օբյեկտներից ու շենքերից, այգիներից, վարելահողերից, ջրաղացներից, ձիթահանքերից, գութաններից, տներից, խանութներից և այլն: Մալը գանձվում էր ինչպես բնամթերքով, այնպես և կանխիկ դրամով:

Աշխարհասատ հրաման եղավ հետևյալի մասին. հայ քարտաշների համայնքը 1078 թ. ջումադի Բ. ամսի 15-ից⁶⁹, ինչպես, որ բարեբախտ դրախտարնակ Նորին Մեծության ժամանակներում իրենց ձեռքին եղած ռադամին⁷⁰ համապատասխան, առանց մալի, ջիզայի ու թաֆավութ-ե ջիզայի [վճարման] զբաղվել են իրենց քարտաշության գործով, [շարունակեն] զբաղվել, և ամիլներն⁷¹ ու դարուղաները նախկինի պես, նրանցից մալ, ջիզայ և թաֆավութ[-ե ջիզայ] չպահանջեն: Այս թող իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1078 թ. ջումադի Ա. ամսին⁷²:

شاه باباام انار الله بر هاته

مهري: بنده فرمانبر مولای حق سلطان حسين

حكم جهانمطاع شد آنکه از تاریخ 15 شهر جمیدی الثانی سنه 1078 جماعت ارامنه سنگتراش بطریقی که در زمان نواب خاقان خلدآشیاں صاحبقرانی بموجب رقم که در دست دارند بلا مال و جزیه و تفاوت جزیه بامر سنگتراشی وفا مشغول بوده اند بوده عمال و داروغگان طریق سابق طلب مال و جزیه و تفاوت ننمایند در عهده شناسند.

تحریرا" فی شهر جمادی الاول سنه 1078.

Թարգմանություն

Իմ մեծ պապը, թող հողը նրա վրա թեթև լինի:

Իմ հայր շահը, թող Ալլահը նրա հոգին լուսավորի:

[Կնիք]. Արդարադատ Տիրոջ նվաստ ծառա Մուսայի շուսեյն:

Աշխարհասատ հրաման եղավ հետևյալի մասին. քանի որ 1078 թ. ջումադի Ա. ամսին բարեբախտ դրախտարնակ Նորին Մեծության կողմից հաստատված հանգուցյալ միապետի ռադամի համաձայն

⁶⁹ 1667 թ. նոյեմբերի 2:

⁷⁰ Ռադամ (رقم) - Պաշտոնական գրություն, թագավորական հրովարտակ:

⁷¹ Ամիլ (عامل) - Այն պաշտոնյաներն էին, որոնք հաշվառման էին ենթարկում բոլոր հարկատու օբյեկտները. չափում ցանքսերն ու այգիները. ցուցակագրում բոլոր չափահաս աշխատունակ մարդկանց և ըստ այնմ որոշում. թե տվյալ օբյեկտից որքան հարկ պետք է գանձվի:

⁷² 1667 թ. հոկտեմբերի 19- նոյեմբերի 18:

հայ քարտաշների մալը, ջիզյան ու թաֆավութ-ե ջիզյան մուաֆ⁷³ էր արվել այդ համայնքին, և [այդպես] արձանագրվել, ուստի կարգադրեցինք, որպեսզի հիշյալ հայ ամիլներն ու դարուղաները այն բանի համար, որ խասսեի վարչության քարտաշությամբ ու քարհատությամբ են զբաղվում, նրանցից մալ, ջիզայ ու թաֆավութ-ե ջիզայ չպահանջեն և գերագույն ռադամները ստորագրված համարեն: Գրվեց 1108 թ. ռաջաբ ամսին⁷⁴:

جد بزرگوارم طاب ثراه

شاه بابا ام انار الله بر هاته



مهري: بنده فرمانبر مولای حق سلطان حسين

حكم جهانمطاع شد آنکه چون حسب الرقم نواب طوبی آشیاں قدس مکان که بتاریخ شهر جمادی الاول 1078 بامضاء نواب خاقان خلد آشیاں صاحبقرانی رسیده مال و جزیه و تفاوت جزیه ارامنه سنگتراش بمعافی جماعت مذکوره و محرره مقرر شد بنابرین مقرر فرمودیم که عمال و داروغگان ارامنه مزبوره بعلت آنکه جماعت مزبوره در سرکار خاصه بامر سنگتراشی و تیشته بری مشغولند بدستور سابق طلب مال و جزیه و تفاوت جزیه از ایشان ننموده ارقام مطاعه را

ممضی دانند. تحریرا" فی شهر رجب 1108

⁷³ Մու'աֆ (معقب) - Հարկային իմունիտետ, ազատում բոլոր տեսակի պետական հարկերից, երբեմն նաև միայն որոշ հարկերից և պարտավորություններից: Համանիշը՝ «մուսալլամ, թարխան» (Հ. Փափագյան, հրովարտականեր, պրակ Ա, էջ 114):

⁷⁴ 1697 թ. հունվարի 24-փետրվարի 23:



THE PERSIAN SOURCES OF 17TH CENTURY ABOUT THE
ARMENIANS MOVED FROM TRANSCAUCASIA TO THE
CENTRAL AND NORTHERN DISTRICTS OF IRAN BY SHAH
ABBAS I

Keywords: Kiran, historian, New Julfa, Armenians, Iskanadar Munshi, Fazli Isfahani, merchant, forced migration, Islamization, stone-mason.

The article contains an analysis of the reports of Persian historiographers and other sources of 17th century about the Armenians moved by Shah 'Abbas I to the central and northern regions of Persia. The reports are mainly on the organizational matters of the forced migrations, foundation of New Julfa, some privileges granted to the Armenian merchants, state officials (*daruga*, *vizir*) involved in the affairs referring to the Armenian community and the steps taken by the Shah's government to attach the migrants to their new places of habitation.

The information of the Persian historiographers allows us to retrace the real extend of the religious tolerance of the Shah's government as regards the Christian migrants in details and more thoroughly. They were allowed to build churches, conduct there church services, and celebrate their religious feasts.

However, in spite of these acts of countenance, the Persian historians as well as other sources report about the facts of forced Islamization of some Armenian communities in the regions of Faridan (near Isfahan) and Mazandaran. This evidence is well accorded with the general direction of Shah Abbas I's inner policy, which may be well featured with the wide circulation of Imam Ja'far's law, which states that an Islamized heir could inherit the whole property of his Christian relative no matter how far the ties of relationship were. The implementation of this law had destructive effects for the Armenians, and it stimulated the Islamization and assimilation of a significant part of them in Persia.

ПЕРСИДСКИЕ ИСТОЧНИКИ 17-ОГО ВЕКА ОБ АРМЯНАХ
ПЕРЕСЕЛЕННЫХ ШАХОМ АББАСОМ ПЕРВЫМ ИЗ ЗАКАВКАЗЬЯ В
ЦЕНТРАЛЬНЫЕ И СЕВЕРНЫЕ ОБЛАСТИ ИРАНА

Ключевые слова: Иран, историограф, Новая Джульфа, армяне, Искандар Муши, Фазли Исфাহани, купец, переселение, исламизация, каменотес.

В статье проведен источниковедческий анализ сообщений персидских историографов и других источников 17-го века об армянах переселенных Шахом Аббасом в центральные и северные районы Персии. Эти сообщения в основном касаются вопросов организации переселения, основания города Новой Джульфы, некоторых привилегий данных армянским купцам, персидских чиновников (*даруга*, *визирь*) занимающихся делами армянской общины, мер предпринятых шахским правительством для прикрепления переселенцев к их новым местам обитания.

Информация историографических трудов позволяет более детально и основательно проследить реальные грани веротерпимости шахского правительства в отношении переселенных христиан, которым было позволено строить церкви, провести в них церковную службу, отмечать свои религиозные праздники.

Несмотря на все эти поощрительные меры, персидские историки также как и другие источники не скрывают факты о насильственной исламизации армян в некоторых областях Ирана, в частности в области Фаридан (вблизи от Исфাহана) и Мазандаран. Эти факты созвучны с общим направлением внутренней политики шаха Аббаса I, в период правления которого был широко введен в обращение закон Имама Джафара гласившего, что родственник принявший ислам мог унаследовать все имущество своего родственника христианина, вне зависимости от дальности родственных уз. Применение этого закона имело пагубные последствия для армян, стимулируя исламизацию и ассимиляцию их значительной части в Персии.

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՅՅԱՆ
պ.գ.թ., Հայաստան

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԸ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԱՂԹՕՋԱՆԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

Հիմնաբառեր. Եվրոպական ճանապարհորդներ, Պարսկաստանի հայկական գաղթօջախ, պարսկահայոց ավանդույթներ, իրավական կարգավիճակ, հայ առևտրականներ, պարսկահայ կնոջ կերպար, Թավրիզ, Նոր Զուղա, Եկեղեցի, մկրտություն:

Եվրոպական ճանապարհորդների վկայությունները հարուստ և արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Պարսկաստանի հայկական գաղթօջախի մասին: Սույն հոդվածի շրջանակներում փորձենք անդրադարձնել դրանցից մի քանիսին, որոնք համապատասխանաբար վերաբերվում են Պարսկաստանում հայության ներկայության, պարսկահայոց որոշ ավանդույթների, պարսկահայ կնոջ կերպարի ձևերին:

Ներկայումս Թավրիզի հայ բնակչությունը խիստ սակավաթիվ է (շուրջ 1500 հոգի, որը կազմում է իրանահայության մոտ 1%-ը), մինչդեռ երբեմնի հայաշատ Ատրպատականի հայոց թեմն ունի շուրջ 800 տարվա պատմություն: Նշելի է, որ XX դարի սկզբին թեմի տարածքում բնակվել է ավելի քան 30 հազար հայ, հետագայում հայրենաստործության և արտագաղթի հետևանքով նրանց թիվը նվազել է և 1980-ական թթ. սկզբին կազմել շուրջ 17 հազար⁷⁵: Այդուհանդերձ հայության ներկայությունն Իրանի այս երկրամասում հազարամյակների պատմություն ունի:

Հիրավի, 1258 թ. Աբբասյանների խալիֆայության կործանումից հետո Թավրիզը դարձավ Մերձավոր Արևելքի առևտրական

⁷⁵ Մաթևոսյան Կ., Ատրպատականի թեմ, Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան. խմբ. խորհ.՝ Հ. Մ. Այվազյան և ուրիշ., Երևան, 2002, էջ 135:

կենտրոնը: 1295 թ. Թավրիզ այցելած վենետիկցի առևտրական, ճանապարհորդ Մարկո Պոլոն (1245–1325 թթ.) իր հուշերում գրում է. «Թավրիզը մեծ ու գեղեցիկ քաղաք է և ամենագեղեցիկն ու հարուստն է իմ տեսած քաղաքներից: Այս տարածքում կան բազում քաղաքներ ու ամրոցներ, սակայն Թավրիզն ամենահեղինակավորն է: Թավրիզի բնակիչները մետաքսե ու ոսկեթել գեղեցիկ կտավներ են պատրաստում, որոնք թանկ արժեն»⁷⁶: Ըստ Պոլոյի տեղացի ժողովուրդն աղքատ է և տարբեր խավերի մեծ խառնուրդ: Այնտեղ կան հայեր, նեստորականներ, հակոբիկներ (հակոբիկյաններ - Կ. Մ.) վրացիներ, պարսիկներ և վերջապես քաղաքի բնիկները, որոնք Մուսամմեդի պաշտոններ են⁷⁷: Ուշագրավ է, որ իտալացի ճանապարհորդը թվարկելով տեղի ազգերին առաջինը նշում է հայերին: Ենթադրելի է, որ Պոլոն նկատի է ունեցել հայերի հասարակական կյանքում ունեցած առաջադիմությունը մյուսների նկատմամբ:

Թավրիզում հայության հյուրասիրության և հանապազօրյա հացը վատտակելու մասին հիշատակում է նաև իսպանացի դիվանագետ, ուղեգրող Ռոյ Գոնսալես դի Կլավիխոն (XIV դար-1412): Նա գրում է. «երջապես փետրվար ամսի վերջին օրը մենք մտանք Թավրիզ քաղաքը, ուր օթևան էին հատկացրել մեզ մի քանի հայերի տներում, որոնք քրիստոնյա մարդիկ էին, և այստեղ նրանք հայթայթում էին ուտեստի սովորական քանակը»⁷⁸: Խոսելով Թավրիզի XV դարի բնակչության կազմի մասին մեկ այլ ճանապարհորդ Վենետիկի հյուպատոս Կատերինո Զենոն (1440-ական թթ. - 1490-ական թթ.) վկայում է. «Այս երկրում բնակվում են մեծ մասամբ հայ քրիստոնյաներ և յնիկ պարսկական ցեղեր...»⁷⁹:

Հիշարժան են Կլավիխոյի հաղորդած վկայությունները Մալու քաղաքում պահպանված հայկական իշխանություններից մեկի

⁷⁶ Մարկո Պոլո. Աշխարհի նկարագրությունը. հրաշքների զիրքը. 2018, էջ 59. Թարգմանությունը ֆրանսերենից՝ Արուսյակ Բալսլինյան-Գրիմոյի:
⁷⁷ Հակոբյան Հ., Ուղեգրություններ. հատոր Ա, ԺԳ - ԺԶ դար (1253-1582). Երևան, 1932, էջ 60:
⁷⁸ Նույն տեղում, էջ 126:
⁷⁹ Նույն տեղում, էջ 163:

մասին. «Կիրակի, հունիսի 1-ին (1404 թ.), մենք հասանք մի բերդ, որ կոչվում էր Մակու, և այդ վայրը պատկանում էր մի իշխանի, որ հռովմեական կաթոլիկ քրիստոնյա էր, բայց անունը Նուրադդին էր, և այն զինվորները, որոնք պահպանում էին այս բերդը նույնպես պատկանում էին հռովմեական կաթոլիկ հավատքին: Նրանք իրականում ազգությամբ հայ էին, խոսում էին հայերեն, բայց մինևույն ժամանակ հասկանում էին թուրքերեն և պարսկերեն: Մակվում Դոմինիկյան միաբանության մի վանք կա»⁸⁰: Փաստորեն Կլավիխոն տարբերակում է, որ չնայած այն հանգամանքին, որ տեղի իշխանը կաթոլիկական դավանանքի էր հարում, սակայն ազգությամբ հայ էր: Կարևոր տեղեկություն է նաև այն, որ նա նկատում է հայերի օտար լեզուների տիրապետումը:

Մեկ այլ աղբյուր Կլավիխոն գրում է. «Հաջորդ երկուշաբթի կեսօրին մենք հասել էինք մի բազմամարդ զեղեցիկ քաղաք, կոչված Թասուչ (Թավրիզ - Կ.Ս.), որ տարածվում է մի դաշտավայրում: Այս վայրը գտնվում է մի աղի լճի՝ Ուրմիայի եզերքին... Շարունակելով մեր ճանապարհը մենք օթևանեցինք այդ երեկո Կուզահ Կունան կոչված գյուղում, որը մի մեծ վայր է եղել, բայց այժմ մեծ մասամբ ավերակ է, ասում են, թե թաթար խան Թոխթամիշը քանդել է այս ավանը, նա, որ պարսվել է Թինուրից: Կուզահ Կունանի մեջ մենք նկատեցինք, որ բազմաթիվ հայեր էին հաստատվել»⁸¹: Այս դեպքում Կլավիխոյի ուշադրության կենտրոնում են այն տեղահանված հայերը, որոնք Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքների հետևանքով ստիպված են եղել լքել իրենց մշտական բնակավայրերը և նոր բնակություն հաստատել նշված վայրում:

Թավրիզի հայության հոգևոր մշակույթի մասին անգլիացի վաճառական Ջոն Նիուբերին⁸² գրում է. «Հայերը հետևում են հունա-

⁸⁰ Նույն տեղում, էջ 113:

⁸¹ Նույն տեղում, էջ 121:

⁸² Ջոն Նիուբերին իրականացրել է երեք խոշոր ուղևորություններ դեպի Արևելքի երկրներ՝ 1579 թ.՝ Արևելյան Միջերկրածով՝ Լևանտ. 1580-1582 թթ.՝ Լևանտից Միջագետքով դեպի Պարսից ծոց և Հորմուզի նեղուց. Գենտրոնական Պարսկաստան. Այսրկովկաս և Արևելյան Եվրոպա. 1583-1584 թթ.:

կան կանտոններին, որովհետև ամեն չորեքշաբթի և ուրբաթ օրերը պահք են, շաբաթ օրերը միս են ուտում, բացի գատկի իրիկունը: 1581 թ. նոյեմբերի 26-ին Թավրիզում ես նրանց եկեղեցումն էի, ուր նրանք նախ սաղմոս երգեցին ու ապա պատարագ մատուցին...»⁸³:

Պարսկաստանում հայության իրավական կարգավիճակի մասին արժեքավոր տեղեկատվություն է փոխանցում վենետիկցի ճանապարհորդ Ջոզեֆա Բարբարոն (1471-1478): Նա ներկայացնում է իր գործընկեր ջենովացի Պիետրո դի Գուսակոյից մի վկայություն, որի մասին իմացել է 1487 թ. դեկտեմբերին: Վերջինս նրան տեղեկացնում է, որ Թավրիզում գտնվելու օրերին հայ խոջա Միրաք անունով⁸⁴ մի ոսկերչի խանութում գտնվելիս է լինում, երբ նրան է մոտենում մի սուրբ, որին Հաջի էին կոչում առաջարկելով ուրանալ իր հավատքը և դառնալ մահմեդական: Խոջան խնդրում է նրան, որ իրեն նեղություն չպատճառի: «Մակայն մուսը (հաջին - Կ.Ս.) շարունակեց պնդել՝ համառորեն առաջարկելով, որ ուրանա: Լա (խոջան - Կ.Ս.) նորից դրամ ցույց տվավ նրան, կամենալով դրանով հանգստացնել նրան, բայց սուրբը դրամը չէր ուզում՝ պնդելով տակալին, որ նա ուրանա: Դրա վրա խոջա Միրաքը պատասխանեց, թե ինքը չի ուրանում, բայց պիտի պահի իր հավատը, ինչպես արել է մինչև հիմա: Որի վրա այս ստահակը քաջեց սուրբ մի ուրիշ մարդու պատյանից, և զարկավ այնպես խոջայի գլխին, որ սպանեց նրան և անմիջապես փախավ»⁸⁵:

Բարբարոն շարունակում է վկայել, ի վերջո թագավորը կանչում է Խոջա Միրաքի որդուն, մխիթարում, քանի որ Խոջան շատ լավ համբավ ուներ: Այս փաստը ցույց է տալիս հայության կյանքի իրավունք չունենալու փաստը մահմեդական միջավայրում, ինչպես նաև տիրող հասարակական անարդար բարքերը:

Հնդկաստան: Վերջին ճանապարհորդության ընթացքում նրա հետ ճանապարհորդել է Ռալֆ Ֆիշըրը (Լոնդոնից):

⁸³ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, էջ 452:

⁸⁴ Խոսքը Միրաք Թավրիզեցու մասին է, որը 1486 թ. մարտի 24-ին՝ ավագ ուրբաթ օրը, սպանվեց:

⁸⁵ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, էջ 213-214:

Հաջորդ հարցը, որին կանդրադարձանք հայ առևտրականների վարքի մասին եվրոպացի ճանապարհորդների նկատառումն է: Այսպես, Պարսկաստանի Ղազվին քաղաքում հայ առևտրականների գործունեության և Վենետիկի դքսի հետ ունեցած կապերի մասին է վկայում Վենետիկի դեսպան Վինչենցո Դ'Ալեսանդրին: 1572 թ. հուլիսի 24-ին նա Կրակովից նամակով դիմում է Վենետիկի կառավարությանը, որ Ղազվինում իրեն ներկայացել են մի քանի հայ վաճառականներ և տեղեկություն են ուզել իրենց ընկերների մասին, որոնք 1570 թ. մեծ քանակությամբ ապրանքով գնացել էին Վենետիկ: Ալեսանդրին հայտնում է նրանց, որ հայ առևտրականները լավ ընդունելություն էին գտել Վենետիկի դքսից: Ուշագրավ է, որ այդ հայերը նրան ասել են, թե իրենք Ջուդայի գլխավորներից էին, իսկ նրանցից մեկը որպես գործակալ մնում էր Ղազվինում: Վենետիկի դեսպանը այս հայերի միջնորդությամբ հաջողում է ներկայանալ Շահի որդուն և տալ իր պաշտոնական փաստաթղթերը:

Դ'Ալեսանդրիի Վենետիկ վերադարձալուց հետո, հավանորեն 1572 թ., վերոհիշյալ հայ վաճառականների կողմից երկու հայեր են գալիս Վենետիկ բերելով նրանցից մի գրություն հայերեն լեզվով և գրված Ջուդայում հոկտեմբերի սկզբներին: Այս գրությունը կրում է երեք ստորագրություն՝ Թենեքսիս, Միրիջան և Մարութա: Իսկ Վենետիկ այցելած պատվիրակներն էին Դերման և Սոնտուզը (հավանորեն Կոնդուզ): Մրանք ապրանք չէին տանում իրենց հետ, այլ հանձնարարություն ունեին Դոլֆին բանկում իրենց ունեցած դրամը գանձելու: Ինչպես երևում է, նրանք այդ առևտրական հանձնարարությունից գատ, ունեին նաև քաղաքական հանձնարարություններ՝ պարսից կառավարության կողմից հարորդելու համար Վենետիկի դուքսին: Նշելի է, որ Ջուդայի հայերը Դ'Ալեսանդրիին անվանում են «ճանոթ բարեկամ» և խնդրում, որ նա իր աջակցությունը չխնայի դուրացնելու համար իրենց պատվիրակների գործը, «որոնց առանց տարակուսելու կարող էր հավատալ, որովհետև նրանք լավ ու արժանավոր անձեր էին»⁸⁶: Հետո, նրանք խոստանում են փոխադարձաբար ապագայում աջակցել վենետիկցիներին, երբ նրանք Պարսկաստան գալու լի-

⁸⁶ Նույն տեղում, էջ 331-332:

նեն, ինչպես աջակցել էին Ղազվինում իրենց գտնված միջոցին: Ըստ էության, Ղազվինի նշանակության մասին է վկայում այն, որ այնտեղ որպես առևտրական գործակալ, ընթացիկ աշխատանքները համակարգելու նպատակով մնում էր Ջուդայի գլխավորներից մեկը:

Շարունակելով քննարկել հայ առևտրականների վարքը՝ մեկ այլ ֆրանսիացի հեղինակ Ժոզեֆ Պիթոն դը Թուրնըֆորը (1656–1708) զարմանքով գրում է. «*Երբ նրանցից մեկը օտարության մեջ անհաջողության է հանդիպում, այլևս չի վերադառնում իր երկիրը, որպեսզի ազատվի իր պարտապահանջներից, ասելով՝ թե երես չունի նրանց մոտ երևալու: Մակայն այս բանը չի արդարացնում սնանկացողին: Եվ մենակ արդարացնելի հանգամանքն այն է, որ սնանկություններ շատ սակավ էին պատահում հայ վաճառականների մեջ*»⁸⁷: Հարկ է նշել, որ չնայած խիստ էր այդ կանոնը, այդուհանդերձ, կարծում ենք, որ հենց դրանում էր հաջողության գաղտնիքը:

Հալածանքները նույնիսկ «քրիստոնեասերի» համբավ վայելող Շահ Աբբաս I-ի (1587–1629) օրոք սովորական երևույթ էին, որի պատճառով և Առաքել Դավրիժեցին նրան անվանում է «վիշապ անդնդային»: Այդ բռնակալը իր կողմից գաղթեցված հայ բնակչությանը սիրաշահելու հետ մեկտեղ, ժամանակ առ ժամանակ նրանց նկատմամբ վարում էր զանգվածային հետապնդումների և իսլամը պարտադրելու քաղաքականություն: Ուստի խոջայական դասը ստիպված էր միշտ զգույշ և աչալուրջ լինել և մշտապես Սեֆյան իշխանությունների առջև ներկայանալ որպես բարեհույս և չեզոք տարր: Այդ բանը նկատելի էր նույնիսկ կողմնակի դիտորդների համար: Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը (1699–1779) վկայում է, որ Նոր Ջուդայի խոջաները, որոնք իրագել էին Հակոբ Ջուդայեցի կաթողիկոսի բանակցություններին Հռոմի հետ քրիստոնյա պետությունների օգնությամբ Հայաստանի ազատագրման վերաբերյալ, երկյուղի մեջ էին, թե իրանական պետությունը կարող է դրա համար վրեժխնդիր

⁸⁷ **Լեռ**, Խոջայական կապիտալը և նրա հասարակական դերը հայերի մեջ. Երևան, 1934, էջ 66:

լինել և պատժել հայերին⁸⁸: Տեղին է նշել, որ 1605 թ. հատուկ հրովարտակով Շահ Աբբասը Մսյահանի հարավային մասում՝ Ջայեղերուղ գետի աջ ափին, շահապատկան «խասան» հողերից ջուղայեցիներին հատկացնում է մի ընդարձակ տարածք: Այստեղ էլ կառուցվում է նոր բնակավայրը, որն ի հիշատակ ավերված Ջուղայի ստանում է Նոր Ջուղա անվանումը⁸⁹:

Գաթուլիկ միսիոներ, Իրանում և հայերի միջավայրում շուրջ քսան տարի ապրած և պատմական երկասիրություններ թողած հայր Գաբրիել դե Շինոնը (1610–1660) Նոր Ջուղայի հայերի մեջ երկպառակություններ է սերմանել, որի հետևանքով հայ համայնքի ներկայացուցիչների բողոքի հիման վրա կառավարության ներկայացուցիչները նրան տեղափոխել են Թավրիզ: Շինոնը հարձակումներ է գործում այսպես կոչված «հերձվածող» հայերի դեմ, որոնց միակ «մեղքը» եղել է այն, որ չեն ենթարկվել կաթուլիկական քարոզչությանը: «Ես չեմ կարծում,– գրում է նա,– թե աշխարհում գտնվի մի այլ ժողովուրդ, որը ավելի կապված լիներ իր ավանդույթներին, քան հայերը»⁹⁰: Այնհայտ է, որ այս պարագայում նկատվում է Շինոնի գայլոսությունը հայության իր ավանդույթներին կառչած լինելու մասին:

Հիրավի, ավանդապաշտ հայկական այս գաղթօջախը տարբեր պատմափուլերում գտնվում էր օտար գործիչների ուշադրության կենտրոնում: Այդ համատեքստում որոշակի կարևորություն ունի հայ կնոջ մասին նրանց վկայությունները և համեմատությունները:

Իսպանական արքունիքի ներկայացուցիչ ճանապարհորդ Գարսիա դե Միլվա Ֆիգեռոան (1574–1628) առևտրական նպատակներով Մսյահանում է եղել 1618 թ. ապրիլին: Ի թիվս այլ հարցերի՝ նա գրում է. «... Հայ կանայք, պարսկուհիների նման, գրեթե չեն երևում հասարակության մեջ, իսկ եթե դուրս են գալիս փողոց, անձանաչե-

լիորեն ծածկվում են իրենց շղարշներով և, ամուսնացած կամ ոչ, միայն խմբերով են ման գալիս ու նրանց բողոքի դեմքերը բաց են: Ամուսնացած կանայք մանրակրկիտ ձևով ծպտված են մորթիներով զարդարված հաստ հանդերձների մեջ: Նրանց այս հագուստը նման է Կաստիլիայի գեղջկուհիների հագուստին կամ լայնաթև բաճկոնների: Գլխաշորը կապում են այնպես, որ ծածկում է բերանը՝ բաց թողնելով դեմքի մյուս մասը՝ Իսպանիայի ծայրամասերի գեղջկուհիների նման: Օրիորդների գլխաշորերը նման են ամուսնացած կանանց գլխաշորերին: Դրանք այնպես են անցնում նրանց կզակի տակով, որ մագերի մի մասը երևա: Պարսկուհիների և վրացուհիների պես ունեն գյուղական վերարկուներ ու վարտիքներ, բայց՝ առանց հատուկ զարդարանքի, ինչպես ասում են, առանց պճնանքի, քանի որ հայուհիները, չնայած Մսիայի կանանց մեջ ամենագեղեցիկն են, մեծ մասամբ շատ անխնամ են»⁹¹:

Արևելք երկու ուղևորություն (1677 և 1701–1708 թթ.) կատարած հուլանդացի նկարիչ Կոռնեյ լը Բյուրինը (1652–1726) գրում է. «...Հարուստ հայուհիների հագուստը շատ թանկարժեք է: Նրանք իրենց գլխին կրում են թանկարժեք քարերով ու մարգարիտներով զարդարված ժապավեն, իսկ նրա տակ երկու մատ լայնությամբ, նույնպես ոսկեգօծ շաքարայ: Իսկ այտերի շուրջը ավելի քան քսան մարգարիտներով ընդմիջվող, ոսկե դուկատներ և այլ զարդեր, որոնք անցնում են կզակի տակով»⁹²: Նա նաև նկատում է, որ հայուհիները երեք տեսակի քող են կրում, որոնք ստրագվում են գլխի ետևի մասում:

Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան դը Թևրնոն (1633–1667), անդրադարձնալով հայ կանանց և աղջիկներին, վկայում է. «Հայ կանայք տանը դեմքի մի մասը ծածկում են քողով, որը փակում է քիթն ու

⁸⁸ Բայբուրդյան Վ., XVII դարում իրանահայ առևտրական բուրժուազիայի առաջատար դերը համահայկական տարրություն ունեցող հարցերում. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր XXII, պրակ 2, Երևան, 2019, էջ 179:

⁸⁹ Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում, Երևան, 2007, էջ 42:

⁹⁰ Զուլպյան Մ., Հայ ժողովրդի XIII–XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների աղբյուրագիտական ակնարկ, Երևան, 1990, էջ 50:

⁹¹ Թաջիբյան Է., Նոր Ջուղան եվրոպական աղբյուրներում 17–18-րդ դարերում, մաս II (բնագրերի թարգմանություն, ծանոթագրություններ), Երևան, 2017, էջ 24:

⁹² Թաջիբյան Է., Նոր Ջուղայի հայ գաղթօջախը 17–18-րդ դարերի եվրոպական աղբյուրներում, մաս I, Երևան, 2012, էջ 46-47:

իջնում մինչև կգան ու կուրծքը: Միայն այդ ազգի երիտասարդ աղջիկներն են մինչև ամուսնանալը տանը միայն կգալը փակում»⁹³:

Կարծես շարունակելով Թևոսյին՝ Ջեմելի-Կարերին (1651–1725 թթ.) հավելում է. «Հայ կանայք շատ գեղեցիկ են. արվեստն ամենևին չի աջակցում նրանց հմայքին: Նրանք ծածկում են իրենց գրուխը սպիտակ և նուրբ կտավով, որն ամրանում է կզակի տակ: Մազերը մեկ հյուս են անում, որ, պահելով թավշե քսակի մեջ, թողնում են ուսերի վրա: Այդուհանդերձ ամենահարուստներն ու առավել սնուպարծները ոսկու և թանկագին քարերի մեջ են դեռ փնտրում իրենց գեղեցկությունն ավելացնելու միջոցը»⁹⁴:

Վերոնշյալից գատ հայ կանանց գերության հարցին է անդրադարձել գերմանացի աշխարհագրագետ, արևելագետ, մաթեմատիկոս Ադամ Օլեարիուսը (1599–1671): Նա գրում է. «Այն աղջիկները, որոնք դուր էին գալիս Շահ Սեֆիին, պետք է 18 տարեկանից մեծ չլինեին: Շահը սովորություն ուներ ժամանակ առ ժամանակ հետախուզել Մպահանի հայերի տները և խլել ամենագեղեցիկ աղջիկներին, տանել նրանց իր հարենը դեռ 12 տարեկան հասակում, որպեսզի վստահ լիներ նրանց կուսության հարցում: Այս պատճառով էլ քրիստոնյա հայերը, ցանկանալով պահել իրենց գոնե փոքր-ինչ գեղեցիկ աղջիկներին, նրանց ամուսնացնում էին ամուսնական տարիքին հասնելուց շատ ավելի վաղ»⁹⁵: Հարցի մասին մանրամասներ է հաղորդում Ժակ Վիլլոտը (1656–1743) գարնանքով նշելով, որ դեռ գոյություն ունի պարսից արքաների բարբարոսական սովորույթը, ըստ որի հայերի Ս. Ծննդյան տոնին բոլոր գեղեցիկ հայ աղջիկները ներկայացվում են արքային: Այսպիսով, թեև պարսկահայ գաղթօջախը հայտնի էր իր առևտրական մեծ ցանցով, այդուհանդերձ, եվրոպացի ճանապարհորդների աչքից չի վրիպել այդ երկրում ապրող հայ կինը՝ իր գեղեցկությամբ և հոգսերով:

⁹³ Թաջիդյան Է., Նոր Ջուղան եվրոպական աղբյուրներում 17–18-րդ դարերում, մաս II, էջ 110:

⁹⁴ Նույն տեղում, էջ 258:

⁹⁵ Նույն տեղում, էջ 46:

Ի դեպ, Նոր Ջուղայի հայերի ապրուստին ու կենցաղին, առհասարակ հայկական միջավայրին առանձնահատուկ անդրադարձել է Ադամ Օլեարիուսը, որն առևտրական կապերի հաստատման նպատակով Ֆրիդրիխ III թագավորի կողմից Ռուսաստան և Պարսկաստան ուղարկված դեսպանության քարտուղարն էր: Նա 1636 թ. Մոսկվայից ճանապարհվել է Սպահան: Ի թիվս այլ հարցերի՝ նա անդրադարձել է Նոր Ջուղայի հայությանը. «Մեզ ուղեկցեցին Ջուլֆա արվարձանը, որտեղ Սեֆրագ Բեկի⁹⁶ տունն էր, սակայն նախ այցելեցինք եկեղեցի, նրանց պատարագին մասնակցելու համար: Եկեղեցին բավականին գեղեցիկ էր նկարագարով, հատակը ծածկված էր գորգերով, իսկ պատերի տակ բոլորածն նստարաններ էին շարված մեզ համար: Պատարագում էր ինքը՝ պատրիարքը⁹⁷: ...Եկեղեցական հանդերձանքը արծաթակար կերպասից էր՝ ոսկյա ծաղիկներով ու մարգարիտներով, եպիսկոպոսական խույրը ևս այդպիսին էր»⁹⁸:

Պատարագի ավարտին բոլորը գնում են հյուրատուն, որտեղ նրանց ընդունում են և ուղեկցում պարսկական ձևով զարդարված այգի՝ հանգստանալու, և հրավիրում են նստել հատակին ծալապատիկ: Նա նկատում է. «Ոսկեկար կերպասից պատրաստված սփռոցի վրա դրեցին բազմազան մրգեր ու անուշեղեններ: Առաջին բաժակը, որ հյուրասիրեց Մաֆրագ բեկը շատ լավ պատրաստված և թանկարժեք օղի էր: Անուշեղեններից հետո փռեցին հնդկական ծաղկավոր գույնզ-գույն սփռոց, որն արժեքավոր է համարվում և բերեցին շատ լավ պատրաստված բազմաթիվ ուտելիքներ՝ տավարի մսից, աղած մսից, ոչխարի մսից, հավից և այլն: Կշտանալու չափ կերանք, և դեռ ճաշերը մնում էին սեղանի վրա»⁹⁹:

Դրանից հետո հրավիրում են պարտեզում գտնվող բացօթյա մի մեծ սրահ՝ կառուցված գմբեթարդ ոսկեգոծ տանիքով: Ուշագրավ է,

⁹⁶ Մաֆրագ բեկը (1636–1656) Նոր Ջուղայի Շահիխասենց կամ Մաֆրագյան գերպաստանից Նագարի որդին էր:

⁹⁷ Այդ թվականին Նոր Ջուղայի առաջնորդն էր Խաչատուր Կեսարացին (1620–1646), իսկ կաթողիկոսը՝ Փիլիպոս Աղբակեցին էր (1633–1655):

⁹⁸ Թաջիդյան Է., Նոր Ջուղան եվրոպական աղբյուրներում 17–18-րդ դարերում, մաս II, էջ 36:

⁹⁹ Նույն տեղում, էջ 36-37:

որ պատերին կախված են լինում զանազան նկարներ, որոնք պատկերում էին տարբեր տարազներով կանանց: Օլեարիուսի վրա տպավորություն է թողնում սրահի կենտրոնում մարմարե շատրվանը, որի մեջ ծաղիկներ էին նետված, իսկ եզրերին դրված էին գինով լի ոսկյա, արծաթյա և ապակյա սափորներ: Շարունակելով իր խոսքը՝ նա գրում է. «Հատակին շուրջ բոլորը, գեղեցիկ գորգերի վրա ոսկեթելով ու արծաթաթելով ծաղկազարդված բազմազուն բարձեր էին դրված, որոնց վրա էլ մեզ հրավիրեցին նստել: Կրկին հյուրասիրեցին անուշեղեններ ու մրգեր, ինչպես նաև երաժիշտներ ու պարողներ եկան»¹⁰⁰:

Այս խնջույքի ընթացքում երկու եպիսկոպոսների ուղեկցությամբ այցելում է նաև հոգևոր ստաճնորդը, որին հեղինակը անվանում է պատրիարք: Ի դեպ, նա նկատում է, որ հայերը տիրապետում էին պարսկական երաժշտական գործիքներին: Ահա թե ինչպես է նկարագրում օտար հյուրը. «Կառավարչի եղբայրները դեսպաններին հաճույք պատճառելու համար իրենք սկսեցին նվագել, և միջնեկ եղբայրը՝ Եղիա Բեկը, ուրախ անձնավորություն, որի համար էլ շահը նրան լավ էր ընդունում, սկզբում նվագում էր պարսկական վինի¹⁰¹ վրա, հետո յոթ հախճապակե բաժակներ վերցնելով, դրանք ջրով լցրեց և վինի նվագակցությամբ երկու փայտիկներով սկսեց նվագել դրանց վրա»¹⁰²: Մինչդեռ ավագ եղբայրը՝ Սաֆրազ Բեկն, ասում է, որ այլ երաժշտություն նվագեն: Միաժամանակ սկուտեղներով երկու պատանիները հյուրերին էին մոտենում, իսկ Սաֆրազ Բեկը նրանցից յուրաքանչյուրին գինի էր առաջարկում՝ Շահ Սեֆիի կենացը խմելու համար: Ուշագրավ է, որ խնջույքի նկարագրությունից երևում է հայկական և պարսկական հյուրասիրության և կենցաղային մշակույթի տարբերի միաձուլումը: Օլեարիուսն անդրադառնում է նաև հայոց մկրտությանը և վկայում է այդ սրբազան արարողության նկատմամբ հայերի ունեցած պատկառանքի մասին. «Եկեղեցում տեսա, թե ինչ-

պես են հայերը երեխային մկրտում: 18 տարեկան մի տղա հոգևորականի առջև մի երեխա էր գրկել: Եկեղեցում ոչ ոք չկար, բացի տղայից և մի մեծահասակ կնոջից, ով երեխային փայթաթել ու եկեղեցի էր բերել: Այդ կինը կանգնած էր հետվում և չէր ուզում կամ չէր համարձակվում մոտիկ գալ¹⁰³»: Նա նկարագրում է ընթացքը, որի ավարտին «նրանք գնացին մկրտարան, որտեղ պատի մեջ ամրացված քար կար տակառի ձևով մի արմունկաչափ երկայքնով և կես արմունկաչափ լայնությամբ, այդ քարի մեջ էլ (մկրտարան) հոգևորականը օծեց ջրով՝ այնտեղ սուրբ յուղ լցնելով (մուռն-հեղինակի մոտ՝ մուռն) և այդ ամբողջ ժամանակ երգում էր իր օգնականի հետ միասին»¹⁰⁴:

Ֆրանսիացի Վեդարավորների միաբանության անդամ հայր Գաբրիել դը Շինոնը ևս անդրադարձել է մկրտությանը: Այդ առիթով նա, մասնավորապես, գրում է. «... Եթե Ֆրանսիայում ինձ պատմեին, այն ինչ մտածում եմ շարադրել, վստահեցնում եմ ձեզ, որ դժվարությամբ կհավատալի դրա կեսին անգամ: Սկսելով նրանց մկրտությունից ասեմ, որ իր ողջ արարողակարգով այն շատ նման է մեր ծեսին: Այս Սուրբ ծեսը նրանք մեծ շքեղությամբ են տոնում և Սուրբ օծումն (վիացումը) ու ընկղմումը կատարում են միասին: Հետո նրանք անպայման հաղորդություն են տալիս փոքրիկ երեխային, որը դեռ նույնիսկ չի վիճակի չէ կույ տալ, ուստի նրանք Քրիստոսի արյան մեջ թաթախելով նրա մարմինը՝ դրանով շփում են մանկիկի շրթունքներն իրենց սովորույթի համաձայն...»¹⁰⁵:

1640 թ. Սպահան ուղարկված և շուրջ 20 տարի միսիոներական գործունեություն ծավալած Շինոնը գրում է նաև գենքին տիրապետելու հայերի հնարավոր ունակությունների մասին. «Այս ազգը, կթե խնամքով վարժեցվի, գենքի գործածության մեջ շատ հմուտ է: Հայերը շատ ուժեղ են, լավ կազմվածք ունեն և կազմվածքի նմանությամբ մոտ են գլխեղբերացիներին: ... Ինչ էլ որ լինի, չենք կարող ժխտել, որ Դարեհի՝ Ալեքսանդրի դեմ մղած պատերազմում նրա ամենալավ

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 37:

¹⁰¹ Լարավոր երաժշտական հին գործիք (տե՛ս Ադայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 1415):

¹⁰² Թափոյան Է., Նոր Ջուղան եվրոպական աղբյուրներում 17–18-րդ դարերում, մաս II, էջ 37:

¹⁰³ Նույն տեղում, էջ 41:

¹⁰⁴ Նույն տեղում:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 60:

նստիկանախումբը հայերից էր բաղկացած»¹⁰⁶: Փաստորեն Շինոնը նկատում է, որ չնայած պարսկահայատակ հայերը զենք կրելու իրավունք չունեին, ռազմարվեստում կարող են հմուտ լինել:

Այսպիսով, Պարսկաստանի հայկական գաղթավայրերը տարբեր պատմափուլերում գտնվել են եվրոպացի ճանապարհորդների հետաքրքրությունների կենտրոնում: Արևելքի երկրներում գործունեություն ծավալած օտար գործիչների հաղորդած տեղեկությունները լույս են սփռում հնամենի այս գաղթավայրի հայության սովորույթների և կրոնական պատկերացումների, պարսկահայ կնոջ ավանդական կերպարի վրա, ինչպես նաև վերականգնում այն բնական միջավայրը, որտեղ ապրել և իր գործունեությունն է ծավալել գաղթաշխարհի հայության այս հաստիվածը:

KAREN MKRTCHYAN
Ph.D. in History, Armenia

EUROPEAN SOURCES ON SOME ISSUES IN THE ARMENIAN COMMUNITIES OF PERSIA

Keywords: *European travelers, Armenian community of Persia, Persian-Armenian traditions, legal status, Armenian merchants, image of Persian-Armenian woman, Tabriz, New Julfa, church, baptism.*

The Armenian communities in Persia have been in the center of interest of European travelers in different historical periods.

The information provided by foreign figures operating in Eastern countries sheds light on the Armenian customs, religious beliefs, traditional image of the Persian-Armenian woman, as well as restores the natural environment in which this part of the Armenians of the Diaspora lived and worked.

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 51:

КАРЕН МКРТЧЯН
к.и.н., Армения

ЕВРОПЕЙСКИЕ ИСТОЧНИКИ ПО НЕКОТОРЫМ ВОПРОСАМ В АРМЯНСКОМ ОБЩИНЫ ПЕРСИИ

Ключевые слова: *Европейские путешественники, армянская община Персии, персидско-армянские традиции, правовой статус, армянские купцы, образ персидской армянки, Тебриз, Новая Джульфа, церковь, крещение.*

Армянские общины в Персии были в центре внимания европейских путешественников в разные исторические периоды.

Информация, предоставленная зарубежными деятелями, работающими в странах Востока, проливает свет на армянские обычаи, религиозные верования, традиционный образ персидско-армянской женщины, а также восстанавливает природную среду, в которой эта часть армян диаспоры жила и работала.

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԽՈԶԱՅԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԻ
ՀԱՐԴԱՐԱՆՔԸ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ
ՏԵՄԱՆԿՅՈՒՆԻՑ

Հիմնադրամեր. Նոր Զուղայի արվեստ, Սեֆեյան Իրան, Նոր Զուղայի հայեր, Հայերը Սեֆեյան Իրանում, հայկական արվեստ, եվրոպացի ճանապարհորդներ:

Տասնվեցերորդ դարում Սեֆեյանների իշխանության ձեւավորումը համարվում է կարեւոր եւ որոշիչ իրադարձություն Իրանի պատմության մեջ, քանի որ իրավիճակն Իրանում էապես փոխվեց. քաղաքական կայունության հաստատումը, շիականության համընդհանուր տարածումն իբրեւ երկրի պետական կրոն, տնտեսական բարգավաճումը եւ միջազգային հարաբերություններում Իրանի վճռական հանդես գալը Սեֆեյանների ժամանակաշրջանի առանձնահատկություններից են:

Ուսումնասիրելով Սեֆեյանների դարաշրջանի վաքսական կառուցվածքը՝ տեսնում ենք ընդարձակ ու կանոնավոր համակարգ, որը վերահսկել է արվեստների ձեւավորման բոլոր փուլերը սկսած արվեստագետներ պատրաստելուց մինչեւ արվեստի գործիքների ստեղծումը: Այս ամենի հիմքում մեծ է եղել հայերի ներդրումը, որի մասին կանոնադատնանք սույն հոդվածում:

Շահ Աբբաս Ա (1588-1629) Իրանի Սեֆեյան հարստության թագավոր դառնալուն պես մտադիր էր մայրաքաղաքի փոփոխություն կատարել: Մինչ այդ՝ նույն հարստության օրոք, մայրաքաղաքը Թավրիզն էր, հետո՝ Ղազվին քաղաքը, եւ վերջապես 1597-98 թթ. դարձավ Սպահանը:

Շահ Աբբասը, հիմնադրելով իր նոր մայրաքաղաք Սպահանը,

ծրագրել էր այն դարձնել տնտեսապես արագ զարգացող եւ արեւելյան ճարտարապետության ու մշակութային ուրույն միջավայրով աչքի ընկնող մի նոր քաղաք, որը պետք է լիներ կարևորագույն կենտրոն Եվրոպայի, Հնդկաստանի եւ Չինաստանի միջև: Ըստ ակադեմիկոս Ի. Պետրուշեւսկու. «Ձեռնարկելով իր չափերով վիթխարի մի տեղահանություն, Շահ Աբբասը հիանալի գիտեր, որ մեծ թվով առեւտրականների եւ արհեստավորների տեղափոխությունը Իրան դրական ներգործություն կունենար մյուս երկրների հետ ապրանքաշրջանառության զարգացման գործում, որը, բնականաբար, նպաստելու էր Իրանի տնտեսության առաջընթացին, հատկապես նրա կենտրոնական մասերում»¹: Այդ նախաձեռնությամբ արագորեն փոխվեց Սպահանի դեմքը, ավելացավ քաղաքի բնակչությունը: Սպահանը դարձավ առեւտրական խոշոր կենտրոն եւ այնտեղ սկսեցին կառուցվել շուկաներ, մզկիթներ, պալատներ, դպրոցներ եւ գործարաններ: Նոր մայրաքաղաքի զարգացման նպատակով խրախուսվեցին ներդրումները եւ կարճ ժամանակ անց տարբեր ազգերի առեւտրականներ ու գործարարներ բնակություն հաստատեցին այնտեղ՝ նպաստելով առեւտրի աշխուժացմանը²:

Հզոր եւ անկախ պետություն ստեղծելու քաղաքականությունը եւ միաժամանակ իսլամական պետություն իրենց համարող Օսմանյան կայսրության դեմ պայքարը պատճառ հանդիսացավ, որ Սեֆեյան շահերը մոտենան Օսմանյան կայսրության թշնամի համարվող արեւմտյան երկրներին: Այնուհետեւ, Սեֆեյան թագավորների քաղաքականության շարունակող Շահ Աբբասը երկրի շենացման ծրագրում հատկապես կարեւորեց հայերի վերաբնակեցման գործընթացը³: Շահը հայերին Սպահան բերելով նրանց մի մա-

¹ Տե՛ս Ի. Պ. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI начале XIX вв., Ленинград, 1949, էջ 82:

² Տե՛ս R. W. Ferrier, A Journey to Persia: Jean Chardin's Portrait of Seventeenth-Century Empire, London, 1996, էջ 193:

³ Միջազգային կապեր ունեցող հայ շոջաների հետ կապված Շահ Աբբասի հույսը արդարացավ, որի արդյունքում տնտեսությունը զարգացում ապրեց: Սկզբնական շրջանում շահը հայ վաճառականներին

սին բնակեցրեց քաղաքամիջում, իսկ Հին Ջուղայից տեղափոխվածներին Ջայանդե գետի աջ ափին՝ հարավային կողմում, որն իրենց հին քաղաքի անունով կոչեցին Նոր Ջուղա⁴: Սպահանկի քաղաքամիջում բնակվող հայերը այնտեղ մնացել են մինչև 1650-1655 թվերը⁵, ապա Շահ Աբբաս Երկրորդի հրամանով տեղափոխվել են Նոր Ջուղայի հարավային եւ արեւմտյան կողմերը՝ հիմնելով իրենց համար առանձին թաղեր Հայաստանում ունեցած իրենց նախկին բնակավայրերի անուններով⁶:

Գաղթած հայերի, ինչպես նաեւ եվրոպացիների գործունեությունը ծավալելու համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին:

ոգեւորելու համար տրամադրում էր առանց տոկոսների վարկեր եւ մի շարք լիազորություններ, որոնցով խոջաները կարճ ժամանակում կկարողանային լուծել իրենց խնդիրներն ու վերականգնել երբեմնի համբավը: Ջուղայի վաճառականների եւ նրանց առեւտրական գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս S. Aslanian, *From the Indian Ocean to the Mediterranean, The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa*. Berkley-New York-London, 2011, էջ 66-80:

⁴ «Ջուղա» տեղանունը գիտական գրականության մեջ դեռեւս ստուգաբանված չէ: Հայ մատենագրության մեջ այս հնագույն տեղանունը 5-17-րդ դդ. կոչվել է Ջուղայ, Ճուղայ, Ջուղա, իսկ 17-20-րդ դդ.՝ ի տարբերություն Նոր Ջուղայի, կոչվել է Հին (ժողովրդական լեզվով՝ «խին») Ջուղա: Այս մասին տե՛ս Ա. Արվազյան, Նախիջեւանի ԲՍՄՀ պատմական հուշարձաններ, Երևան, 1986, էջ 3: Դատելով Ջուղայի հնագիտական տարածքից եւ պատմական աղբյուրների վկայություններից՝ քաղաքը կազմված է եղել ավելի քան տասը մեծ թաղամասերից, բնակեցված եղել միայն հայերով եւ ունեցել է յոթ նշանավոր եկեղեցիներ, մի քանի այլ մատուռներ ու սրբավայրեր, աշխարհիկ մի շարք կառույցներ: Մինչև Ջուղայի ավերումն ու բռնի գաղթեցումը այդտեղով անցած եվրոպացի մի շարք ճանապարհորդների հազորդած տեղեկություններով 16-րդ դարի կեսերից հետո քաղաքն ունեցել է 2-4 հազարի հասնող տներ՝ 15-20 հազարից մինչև 40 հազարի հասնող հայկական բնակչությամբ: Ավելի մանրամասն տե՛ս Ղ. Ալիջան, Միսական, Վենետիկ, 1893, էջ 413:

⁵ Հետաքրքիր է այն փաստը, որ միավորումից հետո նախկինում այդտեղ ապրողները սկսեցին կոչվել բնիկ՝ հին ջուղայեցիներ, իսկ նորեկները նորջուղայեցիներ, բայց բոլորն էլ եկվոր էին եւ նույն ժամանակ էին գաղթել Իրան:

⁶ Լ. Գ. Միսսսեան, Նոր Ջուղա, Ուղեցոյց գրքոյկ, Թեհրան, 1965, էջ 6:

Հայերը մեծ մասամբ հողագործներ կամ արհեստավորներ էին, առաջին հերթին իրենց նախաձեռնող բնավորության շնորհիվ. «Քիչ ժամանակի մեջ եղան, կրսե՛ Տավեռնիէ, այնքան վարժ, որ չկայ առեսուր մը, որ չընեն»⁷:

Չնայած այն հանգամանքին, որ եվրոպացիները 14-րդ դարից ներկա են եղել Իրանում, բայց նշանակալի ազդեցություն չեն թողել պարսկական արվեստի վրա: 16-րդ դարում Պարսից ծոցում պորտուգալացիների ներկայությունը գուգաղիպեց Շահ Իսմայիլի կողմից Սեֆեյան թագավորության հիմնադրման հետ, որը նույնպես որևէ ազդեցություն չունեցավ պարսկական արվեստի վրա: Շահ Թահմասպի ժամանակաշրջանից մեզ հասած ստեղծագործությունների մեջ նույնպես չեն նկատվում արեւմտյան գեղանկարչության ազդեցության տարրերը իրանական գեղանկարչության վրա: Նույնիսկ այն ժամանակ, երբ անգլիացի վաճառականներ Անտոնի Ջենկինսոնը եւ նրա եղբայր Ջոնսոնը մուտք գործեցին Ղազվին Շահ Թահմասպի պալատ, նրանց ներկայությունը զգալի ազդեցություն չգործեց Սեֆեյանների ժամանակաշրջանի արվեստի վրա⁸:

1597 թվականին Անգլիայի կառավարության կողմից ուղարկված Շերլի եղբայրները հանդիպեցին Շահ Աբբասի հետ: Այդ հանդիպումը գուգաղիպեց Սպահանի մայրաքաղաք դառնալուն: Հենց այդ ժամանակ էր, որ արեւմտյան արվեստի տարածումը խորհրդանշական կերպով շաղկապվեց այս քաղաքի ճակատագրի հետ⁹: Շահ Աբբասը այնպես վստահեց Շերլի եղբայրներին, որ Ռո-

⁷ Տե՛ս **Յովհ. Աբրիևեան**, Նոր ջուղայեցի հայերուն առեսուրը ԺԷ. դարուն, «Անահիտ», 1908, թ. 4, էջ 33:

⁸ س. م. فنوی ، تصویر سازی در عصر صفوی و قاجار ، تهران ، نشر دانشگاه تهران ، 2007 ، ص 76

1. **(Մ. Մ. Տադալի**, Գեղանկարչությունը Սեֆեյանների եւ

2. **Ղաջարների ժամանակաշրջանում**, Թեհրան, 2007, էջ 76):

3. **مکتب سازمان فرهنگی تفریحی شهرداری اصفهان ، طوبی ، نصف جهان 1385 ، ص 6**

9. **(Տե՛ս Հ. Թահմիլիան**, Սպահանի Սեֆեյան

բերտին որպես իր դեսպան բազմաթիվ ընծաներով ուղարկեց Եվրոպա: Սկզբունքորեն Շահ Աբբասը հավատացած էր, որ արքունիքը ավելի ներկայանալի կլինի, եթե արտասահմանցիները իրենց պաշտոնական զգեստներով ելումուտ ունենան այնտեղ¹⁰:

Ուսումնասիրելով Սեֆեյյան ժամանակների եւ մինչ այդ ստեղծված արվեստի գործերը՝ կարող ենք արձանագրել, որ արեւմտյան գեղանկարչության ազդեցության լրջագույն սկզբնակետը հենց Շահ Աբբասի ժամանակաշրջանն է եղել:

Ժան Շարդենը իր «Ռաբեգրության» մեջ նշում է, որ նոր մայրաքաղաքի զարգացման նպատակով խրախուսվեցին ներդրումները եւ կարճ ժամանակ անց տարբեր ազգերի առեւտրականներ եւ գործարարներ բնակություն հաստատեցին Սպահանում եւ նպաստեցին առեւտրի աշխուժացմանը: Եվրոպացիների մուտքով եւ հայ խոջանների առեւտրական կապերի միջոցով Սեֆեյյան հարստությունն ու այդ շրջանի գեղանկարչությունը ենթարկվել է զգալի փոփոխությունների, որն էլ համարվում է իրանական արվեստի ու քաղաքակրթության կարեւոր ժամանակահատված: Նոր Ջուղայի վաճառականները, լինելով մի շարք երկրներում, սերտ կապեր ունենալով բազմաթիվ մեծահարուստների հետ, հրապուրվելով եվրոպական տների նկարագրողումներով, սկսեցին իրենց ապարանքներում ունենալ նմանատիպ հարդարանք:

Լեոն իր «Խոջայական կապիտալը»¹¹ գրքում նշում է, որ «հայերը Սպահան գնալուց հետո, յենթարկվելով, արաքայական իրակա-

գեղանկարչության դպրոց, Սպահանի քաղաքապետարանի հրատարակչություն, 2008, էջ 6):

4. ¹⁰ جان آبروی، میراث ایران، گروه نویسندگان مترجم: احمد بیرشک، دکتر بهاء الدین ¹⁰ تهران: شرکت انتشارات علمی و فرهنگی، ۱۳۸۴، ص 50 پاز ارگاد، عزیز الله حاتمى، محمد سعیدی، دکتر (St u Է. Ջ. Արբերի, Իրանի ժառանգությունը, Թեհրան, 1964, էջ 50):

¹¹ Խոջա նշանակում է ամեն կարգի վաճառական մանր փերեզակից մինչև խոշոր առեւտրական: Լեոն խոջաներին նկարագրելիս մանրամասնում է, որ «կային մեծ խոջաներ, կային եւ փոքրերը: Փոքրերը մեծելից են կախված եւ կազմում են մանր, ընդարձակ տարածված խանութպանությունը, որ վաճառելի ապրանքներ ստանում է մեծ խոջաներից եւ այդպիսով կազմում է նրանց

նություն համեմատությամբ, խորին կենցաղական հեղաշրջման, զարգացում էր Ասիայի խորքում մի շոայլ բուրժուական նիստուկաց, աշխատելով համընթաց քայլել յեթե վոչ Իրանի շահնշահի պալատի, գոնե պետական բարձր պաշտոնեյության եւ ազնվականության հետ: Սուաջ ու աուաջ այս նոր ճաշակի եւ նոր պահանջների արտահայտիչ էլին հանդիսանում խոջայական բնակարանները»¹²:

Խոջաների հարստության եւ ընդհանրապես ճաշակի, կենցաղավարության, երեւակայության ըմբռնման տեսանկյունից իսկապես կարեւոր է խոջաների առանձնատների կառուցվածքի եւ հարդարման ուսումնասիրությունը: Խոջայական առանձնատներում արված որմնանկարները իրենց թեմատիկայով սկզբնաղբյուր կարող են հանդիսանալ ոչ միայն արվեստաբանների, այլ նաև պատմաբանների, ազգագրագետների եւ առհասարակ հայ գաղթօջախները ուսումնասիրող հետազոտողների համար: Տարիների ընթացքում այցելել ենք Սպահան, Նոր Ջուղա, եւ եղել այն ապարանքներում, որոնք հնարավոր էր մուտք գործել: Ցավոք, մեր օրերում արդեն ապարանքների մի մասն է պահպանվել: Սպարանքների մի սովոր հատված ուղղակի քանդվել է, քանի որ անընդհատ զարգացող Սպահան քաղաքը կանգնած էր քաղաքաշինական լուրջ փոփոխությունների առաջ:

Հենվելով նախկինում մեր և որոշ մասնագետների (օրինակ՝ Ավո Հովհաննիսյան) կողմից արված լուսանկարների եւ այլ հետազոտությունների վրա՝ կարող ենք եզրակացնել, որ Նոր Ջուղայում որմնանկարներով¹³ զարդարված խոջայական ապարանքների թի-

գործակատարությունը, ասել է, նրանց անձևվեր զինվորությունը, նրանց ուժն ու շահը»: Ավելի մանրամասն տե՛ս Լեոն Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 56:

¹² Նույն տեղում՝ էջ 78:

¹³ Ըստ արվեստաբան, նկարիչ-վերականգնող Անի Բաբայանի՝ ապարանքների որմնանկարները մեծ մասամբ կատարվել են սվաղի վրա թե՛ ջրային եւ թե՛ յուղային լուծորով ներկանյութերով: Կիրառվել է նաև յուղանկարի միացումը որմին տեխնիկան (Marouflage): Տե՛ս Ա. Բաբայան, Հայկական որմնանկարչությունը Նոր Ջուղայում, «Հայկական որմնանկարչություն, գիտական հոդվածների ժողովածու», կազմող՝ Կ. Մաթևոսյան, Երևան, 2019, էջ 198:

վր հասնում էր մի քանի տասնյակի, եթե ոչ ավելին: Ապարանքների մեծ մասը տարիների ընթացքում չի պահպանվել: Չպահպանված առանձնատների հարդարման կարելու աղբյուրներից են 17-19-րդ դդ. եվրոպացի ճանապարհորդների գրառումները, որոնց ուսումնասիրման ընթացքում հաճախ ենք հանդիպում հիշատակությունների, ըստ որի, Իրանի պետական այրերի ու խոջանների հետ հարաբերությունները այնքան էին բարելավվել, որ խոջայական ապարանքներ էին այցելում եվրոպացի ճանապարհորդներ, նախարարներ և նույնիսկ հենց ինքը՝ Շահ Աբբասը¹⁴: Օրինակ, իտալացի ճանապարհորդ Պիետրո Դելլա Վալեն, իր օրագրում նշում է. «Նոր Ջուդայի հայերի առանձնատները այնքան շքեղ էին, որ կարող էին հյուրընկալել անգամ շահին»¹⁵: Այցելելով վաճառականների տները՝ շահը մտերմորեն շփվում էր խոջանների հետ: Խոջանները այդ պատվին արժանանալուց հետո որպես հուշ կամ պատվաբեր փաստ իրենց առանձնատների պատերին նկարում էին դրվագներ: Այդպիսի օրինակներից հատկանշական է հյուրասիրության տեսարանը ներկայացնող որմնանկարը, որտեղ պատկերված էր Շահ Աբբասը իրենց տանը հյուրընկալվելու ժամանակ:

Խոջայական ապարանքներում նկարված որմնանկարները իրենց թեմատիկ պատկերներով, կոմպոզիցիոն մոտեցմամբ, մեկնաբանման առանձնահատկություններով ու նկարելու եղանակով ավանդական արվեստը կրող Իրանի համար նորություն էին, և վերջիններս էլ իրենց հերթին դարձան ներշնչանքի աղբյուր իրան-

¹⁴ Շահ Աբբասից հետո այլ թագավորների (շահերի) օրոք նոր օրենքներ ու տուրքեր հաստատվեցին: Արդյունքում մեծ վնաս պատճառեցին հայերին և խլեցին իրենց անասհման հարստությունը: Նույնիսկ բազմաթիվ փարձեր կատարեցին բռնի ուժով կրոնափոխ անել հայերին, սակայն այդ ջանքերն ապարդյուն էին: Մանրամասն տե՛ս

5. (ن. فلسفی، زندگینامه شاه عباس اول، تهران، نشر نگاه، 1398، ص 54)

Տալաաֆի. Շահ Աբբաս առաջինի կյանքը /Զենդեգինամե-յե Շահ Աբբաս-է ավալ/. հատոր Գ. Թեհրան, 1992, էջ 54):

¹⁵ Պիետրո Դելլա Վալեն (Pietro Della Valle, 1586–1652) 17-րդ դարի իտալացի նշանավոր ճանապարհորդ էր: Նրա մասին մանրամասն տե՛ս **Ա. Հերմետ**, **Պ. Կունի Ռատտի դի Դեզիո**, շայերի Վենետիկը, Երևան, 2000, էջ 175:

ցի արվեստագետների համար: Այդ խոջանները թագավորների կողմից դիտվում էին որպես արեւմուտքի և արեւելքի մշակութային բարձր ճաշակի տեր անձինք, ուստի իրենց տան գեղարվեստական հարդարանքը ընդունվում էր բարձր դասի ներկայացուցիչների կողմից:

Առեւտրական գործունեության ընթացքում եվրոպացիները միաժամանակ բացահայտում էին և՛ Իրանը, և՛ նորջուղայեցիներին: Հոլանդացի նկարիչ Կոռնելյ լը Բրյուինը (1652–1726 թթ.) 1701–1708 թթ. Մոսկովյան պետության տարածքով դեպի Հնդկաստան գնալիս անցել է Պարսկաստանով: Իր ճանապարհորդությունը անցել է մի քանի ջուղահայ վաճառականների ուղեկցությամբ: Նա անդրադարձել է Հին Ջուդայի որոշ խոջանների առանձնատների հարդարմանը: Այդ հուշագրություններից առավել ուշագրավը Խոջա Մաֆրազի տան նկարագրությունն է: Խոջա Մաֆրազը ունեցել է անասհաման հարստություն և եղել է շատ առատաձեռն մարդ: Խոջան մյուս հարուստ ջուղայեցիների նման ցանկացել է նկարագարել իր ապարանքը և այդ աշխատանքը վստահել է հանրահայտ Մինաս նկարչին¹⁶: Ըստ Լը Բրյուինի՝ տան բոլոր պատերը նկարագարոված են եղել չափերով բնականին շատ մոտ մեծածավալ պատկերներով: Խոսքը որմնանկարների մասին է եղել: Այս տան ներքին հարդարանքի մասին հանդիպել ենք նաև Դավրիժեցու և այլ ճանապարհորդների ուղեգրերում, բայց, ի տարբերություն շատերի, Լը Բրյուինի մոտ հիշատակվում է «մի թուրքի և

¹⁶ «Այսպես և խոջայ Նազարի որդի խոջայ Մաֆրազն տարեալ ի տուն իր ծաղկոթ և պատկերօք: Եւ մինչ տակաին ոչ էր աւարտեալ գտունն ի ծաղկելոյ, պատահեցաւ զի թագաւորն Պարսից Շահ Մեֆի եկն ի տուն խոջայ Մարֆրազին, որոյ նստելով իբրեւ գննեալ հայեր ի ծաղկիս և ի պատկերս գոր նկարեալ կայր տեսանէր զի չքնաղ և գեղապանծ և յոժ նմանակի կերպագրեալք են ամենեքեան, սկսաւ հարցանել թագաւորն ի խոջայ Մարֆրազէն վասն նկարիչ վարպետին, թէ ուստի իցէ, և նա ասաց ի մերմ: Ժողովոյնս և ի Հայող ազգէս. և ասաւանիկ այժմ յայն իմն տան ի գործի կայ. գոր և հրամայեաց թագաւորն կոչել զնս»: Ավելի մանրամասն տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, Պատմութիւն. Վաղարշապատ, 1896, էջ 410:

թրքուհու» պատկերի մասին¹⁷: Յավոք, այսօր այս ապարանքից մնացել են միայն ավերակներ: Վերջինիս վկայությամբ՝ այդպիսի նկարագարող առանձնատներ են ունեցել նաև խոջա Ասլամազը, Հովհաննեսը եւ Մուրզան¹⁸:

Խոջաներ Մուքիասի եւ Պետրոսի տները նույնպես հայտնի են եղել իրենց որմնանկարներով: Խոջա Պետրոսենց առանձնատան որմնանկարներից միայն հետքեր են պահպանվել: Յավոք, մեր ուսումնասիրության ընթացքում այս երկու առանձնատների ներքին հարդարման մասին ճանապարհորդների գրառումներում առանձնահատուկ հիշատակման չենք հանդիպել: Մանյա Ղազարյանը խոջաներ Մուքիասի եւ Պետրոսի տների գավթի միաֆիգուր պատկերները (եվրոպական կամ պարսկական տարազներով իշխաններ, իշխանագուններ, նաժիշտներ) գննելուց հետո նկատում է, որ վերջիններս բարձր վարպետությամբ արված աշխատանքներ են (նկ. 1-5)¹⁹:

¹⁷ Տե՛ս է. Թաջիբյան, Նոր Ջուղան եվրոպական աղբյուրներում 17-18-րդ դարերում, մաս I, Երևան, 2012, էջ 33-44:

¹⁸ Տե՛ս Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Երևան, 1974, էջ 44:

¹⁹ Տե՛ս նույն տեղում՝ էջ 40: Չուն Քարավելը Նոր Ջուղայի մասին հեղինակած իր աշխատության մեջ խոջաներ Մուքիասի եւ Պետրոսի որմնանկարները վերագրում է Մինասին: Ավելին տե՛ս J. Carswell, *Julfa*, Oxford, 1968, էջ 67: Նշված գրքում Քարավելը հիշատակում է Ադամ Օլեարիին, ով երեք անգամ ճանապարհորդել է Պարսկաստանում: Օլեարը 1637 թվականին Հոլշտեյնի դեսպան դուքսի խոսքերն է մեջբերում, որի համաձայն նա եղել է Նոր Ջուղայի առաջին քաղաքագլխի (պրսկ.՝ քալանթար քան) տանը և հիացել տարբեր ազգերի կանանց որմնանկարներով: Իսկ արվեստաբան Արամ Երեմյանը, ինքն ընդունելով խոջաներ Մուքիասի եւ Պետրոսի ապարանքներում պահպանված ու որմնանկարներում հանդիպող տարազների մանրամասնությունները, համեմատելով Մինասի ապրած ժամանակների հետ, նկատում է, որ այդ որմնանկարներում նկարված տարազները իրենց ոճական առանձնահատկություններով պատկանում են ոչ թե 17-րդ դարին այլ՝ 18-րդ դարին բնորոշ հեզուստների: Մանրամասն տե՛ս Ա. Երեմյան, Նկարիչ Մինասի կյանքի եւ ստեղծագործության հիմնական գծերը, «Անահիտ», Փարիզ, 1938, մայիս-օգոստոս:

Ուսումնասիրելով եվրոպացի ճանապարհորդների գրառումները և դրանք զուգակցելով մեզ նախորդած արվեստաբանների հետազոտությունների հետ՝ գալիս ենք այն եզրակացության, որ խոջայական ապարանքների որմնանկարները նորույթ են եղել մեզանում: Նորը դրսևորվել է որմնանկարների ընդհանուր համակարգում, հորինվածքային մոտեցումների, թեմաների ընտրության և ոճական արտահայտչամիջոցներում: Կոթողային նկարչության ամեն մի ստեղծագործություն իր բովանդակությամբ, ձևով ու գեղարվեստական ոճով ծրագրված է լինում որոշակի տեղի ու կառույցի համար: Այս հանգամանքից ելնելով խոջայական ապարանքները նույնպես ունեցել են հստակ թեմաներ: Վկայությունների համաձայն խոջաները եւ իշխանները նկարիչներին թելադրում էին պատկերային կառուցվածքը եւ պահանջում էին հնարավորին չափ իրականացնել իրենց մտահղացումները: Հիմք ընդունելով եվրոպացի ճանապարհորդների գրառումները եւ զուգակցելով պահպանված ապարանքների որմնանկարների հետ՝ կարող ենք արձանագրել, որ եվրոպական նոր արվեստի աշխարհիկ շնչով հրապուրված հայ նկարիչը հիմնականում գործող անձանց պատկերում է բնանկարի մեջ՝ երբեմն համադրելով ճարտարապետական որեւէ մանրամասնության հետ: Նկարիչը կերպարները նկարում է խոշոր չափերով՝ մեծ ուշադրություն դարձնելով նրանց շարժումներին: Մեֆեյյան շրջանի նկարչությանը բնորոշ այստեղ էլ նկարիչը ցուցադրում է առարկայի նկատմամբ առավել իրական ու նյութական հակվածություն: Նկարիչները մեծ ուշադրություն են դարձրել կտորի ձևվածքի, նյութի եւ նախշերի վրա: Նշենք, որ նախկին շրջանի համեմատ արդեն Մեֆեյյան ժամանակաշրջանի տարազներում փոփոխություններ են նկատվում: Այս շրջանում սողամարդկանց՝ գլխի չալմաները չափերով մեծանում են: Բոլոր խավի սողամարդիկ անկախ իրենց պաշտոնից կրում էին չալմա: Չալմաներից բացի այն շրջանում կիրառվել են նաև տարբեր թագեր ու գլխարկներ, որոնց հաճախ հանդիպում ենք մանրանկարներում եւ որմնանկարներում: Նշենք, որ խոջաները եւս օգտագործել են չալմա: Կարելու է նշել, որ անկախ նկարչի ազգությունից, եթե

նյան հանձնարարվել է պատկերել հասարակ մարդկանց, նա պատկերել է այն, ինչ համապատասխանել է իրականության հետ:

Խոջաների առանձնատների հարդարման նոր մոտեցումները մի կողմից վերագրվում են եվրոպական մշակույթի հետ նորջուղային առեւտրականների ունեցած հարաբերություններին, մյուս կողմից՝ արդեն Նախիջեւանում արմատացած գեղարվեստական ավանդույթների հետ, որտեղից եւ գաղթել էին Սպահան տեղափոխված ջուղայեցիները: Մանյա Ղազարյանը այս կապակցությամբ նկատել է, որ «Նոր Ջուղան փաստորեն գաղթօջախ էր որպես բնակավայր, իսկ որպես մշակութային կենտրոն, մի քանի տարվա ընդմիջումից հետո, շարունակում է Հին Ջուղայի ավանդները, նրա մշակույթի օրինաչափ զարգացումը»²⁰, իսկ Ղեւոնդ Ալիշանի հավաստմամբ՝ արդեն XVI դ. վերջերին Նախիջեւանի եկեղեցիների մեծ մասում որմնանկարները կատարված էին եվրոպական արվեստի պատկերային ձևերով²¹:

Բոլոր դեպքերում որմնանկարներում արտացոլված են եղել խոջաների ընտանեկան միջավայրի եւ մի շարք երկրների բարձրաստիճան անձանց հետ ունեցած կապերի բնույթը: Այդ ամենը դրսևորվել է դիցաբանական տեսարանների, պալատական հանդիսությունների, հաղթական ճակատամարտերի, իշխանների եւ իրենց ընտանիքի անդամների դիմանկարների ներկայացմամբ: Նորջուղայեցիները այդ իրականությունից ազդվելով ցանկացել են ապարանքներում տեսնել նոր միջավայրի կյանքը եւ այդ բոլորն իրականացնել՝ մեկտեղելով բնության տեսարանների, ծառ ու ծաղկունքի, երկրաչափական ու ռճավորված մոտիվների հետ:

Կարելու է չնոռանալ, որ խոջայի տան ձևավորումը մեծապես համարվում է տվյալ խոջայի՝ արվեստի նկատմամբ ունեցած իր գեղագիտական ընկալման գլխավոր արտահայտիչը:

²⁰ Տե՛ս Մ. Ղազարյան, նույն տեղում, էջ 15:

²¹ Տե՛ս Հ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Նոր Ջուղա. Խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքը (XVII-XVIII դդ.), Երեւան, 2007, էջ 14:

Վերջին տարիներին Իրանի մշակութային ժառանգության վարչության (میراث فرهنگی Ministry of Cultural Heritage)²² կողմից բազմաթիվ առանձնատներ, դիտվելով որպես Իրանի մշակութային ժառանգություն, գնվել են սեփականատերերից եւ վերականգնողական աշխատանքներ անելուց հետո պետականացվել:

Որոշ շինություններ վերանորոգման ընթացքում բազմաթիվ ձեւափոխությունների են ենթարկվել, եւ այժմ համարվում են Սպահանի Արվեստի, (Փարդիս پردیس, Քար Աֆարին کار آفرین), Գեղարվեստական ու վերականգնողական համալսարանների մասնաշենքեր: Այդ ապարանքների թվին են պատկանում խոջա Սուքիասի, Դավթի, Մարթա Փիթերզի, խոջա Պետրոս Վելիջանի, Խաչիկի ապարանքները: Ապարանքներից որոշները ձեւափոխությունների ենթարկվելով այժմ այլ նպատակների են ծառայում: Օրինակ, Հովհաննեսի ապարանքը, ձեւափոխություններից հետո այժմ վերածվել է սրճարան-ճաշարանի «Թորանջ» (ترنج) անունով, որը մեր վերջին այցելության ժամանակ (2017 թ.) շարունակում էր գործել:

Որպես եզրակացություն նշենք, որ չնայած խոջաների ապարանքներից ոչ բոլորն են պահպանվել, այնուամենայնիվ, եղածների գործերը շոշափելի են դարձրել այն խոշոր աշխատանքը, որ իրականացվել է 17-18-րդ դդ. ընթացքում հայ արվեստագետների կողմից: Եվրոպացի ճանապարհորդների գրառումների ուսումնասիրության եւ ապարանքների որմնանկարների պահպանված մասը մոտիկից գննելուց պարզ դարձավ, որ 17-րդ դարից սկսած հայկական որմնանկարչական արվեստում նկատում ենք մի նոր երևույթի ծնունդ, որի արտացոլանքը տեսնում ենք Սպահանի տարածքում հայերի կողմից կառուցված եւ՝ հոգևոր շինութ-

²² Իրանի մշակութային ժառանգության վարչությունը կրթական եւ հետազոտական հաստատություն է, որը զբաղվում է մշակութային ժառանգության զբոսաշրջության եւ արհեստների հարցերով: Այն վերահսկում է Իրանի ամբողջ տարածքում գտնվող բազմաթիվ թանգարանային համալիրներ եւ կառավարվում ու ֆինանսավորվում է Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության կողմից:

յուններում, և՛ խոջաների ապարանքներում, և՛ զուգահեռաբար շահական պալատների հարդարանքում²³:

Խոջաների ապարանքների ավելի վաղ շրջանում արված որմնանկարներում արվեստագետները, ժառանգելով հայկական արվեստի ավանդույթները եւ ներշնչվելով քրիստոնեական մշակույթով, արվեստում դրսևերդրվել են յուրահատուկ մոտեցմամբ: Այսինքն, խոջայական առանձնատների գեղարվեստական ներքին հարդարման հիմքը Հին Ջուղայինն է, որոնք զուգակցվել են արեւելյան պերճության ազդեցությանն ու Եվրոպայից եկող կենցաղավարման օրինակներին:

Կարող ենք նաև արձանագրել, որ ժամանակի ընթացքում իրանական արվեստը չէր կարող անմասն մնալ այդ ամենից, եւ, արդեն որոշակիորեն ձևավորված հայկական և եվրոպական արվեստի միաձուլման հիմքը, պահպանելով իր ավանդական կողմը, սկսեց անցում կատարել դեպի նորը՝ իր վրա կրելով իրանական կենցաղավարության և մշակույթի տարրերը, որը իր անհերքելի ազդեցությունն է թողել հայերի վրա: Սպահանում պահվող արխիվային նյութերի հետ ծանոթացման ընթացքում հստակվեցինք, որ սերտ համագործակցություն է եղել հայ եւ պարսիկ արվեստագետների միջեւ²⁴: Վերջինիս գործոնով պայմանավորված ավելի ուշ շրջանում ստեղծագործությունները դարձել են ավելի ինքնատիպ,

²³ Իրանցիների, եվրոպացիների եւ հայերի միջեւ ստեղծված բազմաթիվ կապերը, արևմտյան ստեղծագործությունների հետ ծանոթացումն ու արվեստագետների Իրան մուտք գործելը խթան հանդիսացան իրանցի նկարիչների համար: Վերջիններիս աշխատանքներում նկատելի էին դառնում արևմտյան արվեստի ազդեցությունները: Վերոնշյալ հանգամանքները համընկան սպահանյան գեղանկարչական դպրոցի ձևավորման հետ: Այս ամենից հետո որոշ գիտնականների մոտ վերջին փոփոխությունները վերագրվեցին Սպահանի դպրոցին եւ պատճառ դարձան, որ մի շարք հետազոտողներ Սպահանի դպրոցը համարեն Իրանի ավանդական գեղանկարչության վախճանը համարելով այդ դպրոցի ամենաթույլ տեղը:

²⁴ Հայ եւ պարսիկ արվեստագետների համագործակցության մասին ավելի մանրամասն տե՛ս **Լ. Մինասյան**, Վարպետ նկարիչ Մինաս Ջուղայեցի, Նոր Ջուղա, 2006:

որի արտացոլանքը մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք որպես Նոր Ջուղայի արվեստ:

YVETTE TAJARIAN
Ph.D. in Art Studies, Armenia

**THE DECORATION OF THE KHOJA MANSIONS OF NEW
JULFA
FROM THE POINT OF VIEW OF EUROPEAN TRAVELLERS**

Keywords: New Julfa art, Safavid Iran, Armenians of New Julfa, Armenians in Safavid Iran, Armenian Art, European travelers .

As soon as Shah Abbas I (1588-1629) became the king of the Safavid dynasty of Iran, he intended to change the capital. Before that, during the reign of the same dynasty, the capital was Tabriz, then the city of Qazvin and finally, in 1597-98, became Isfahan. A few years later, because of the deportation of the Armenian people organized by Shah Abbas, new Armenian communities were formed in Persia, the most famous of which was Isfahan, which had been the capital.

In his "Travelogue," Jean Chardin notes that investments were encouraged in the development of the new capital and shortly afterwards, merchants of different nationalities, factories, settled down in Isfahan and promoted trade. With the arrival of the Europeans, through the trade relations of the Armenian Khojas, the Safavid dynasty and the painting of that period underwent radical changes, which is considered to be a significant period of Iranian art and civilization. The merchants of New Julfa brought with them painting material from Europe and were able to develop the art of oil painting.

From the point of view of understanding the wealth of Khojas, and, generally, the taste, the way of life, imagination, it is possible to study the structure and decoration of Khojas' private houses. The frescoes painted in private houses of Khojas can be a professional source not only for art critics, but also for historians, ethnographers and researchers studying Armenian communities in general. Relying on the photographs and other researchers conducted by us and the others, we can conclude that most of the mansions have not been preserved over the years. One of the possible sources of

unsaved private houses is the records of European travelers of 17th-19th centuries. In this article we refer to the travels of Pietro Della Valle, Corneille le Bruyne and others.

ИВЕТ ТАДЖАРЯН
канд. иск-ведения, Армения

УБРАНСТВО ОСОБНЯКОВ ХОДЖЫ НОВОЙ ДЖУЛЬФЫ С ТОЧКИ ЗРЕНИЯ ЕВРОПЕЙСКИХ ПУТЕШЕСТВЕННИКОВ

Ключевые слова: Искусство Новой Джульфы, Сефевидский Иран, Армяне в Новой Джульфе, Армяне в Сефевидском Иране, Армянское искусство, Европейские путешественники.

Как только Шах Аббас I (1588-1629) стал королем династии Сефевидов в Иране, он намеревался сменить столицу. До этого, при той же династии, столицей был Тебриз, затем город Казвин и, наконец, в 1597-98 гг. Исфахан. Спустя несколько лет из-за депортации армянского народа, организованной Шахом Аббасом, в Иране образовались новые армянские общины, самой известной из которых стал Исфахан, ставший столицей.

В своем «Путешествии» Жан Шарден отмечает, что инвестиции в развитие новой столицы поощрялись и вскоре после этого в Исфахане обосновались купцы разных национальностей, фабрики, которые способствовали развитию торговли. С приходом европейцев, благодаря торговым связям армянских ходжей, династия Сефевидов и живопись того периода претерпели значительные изменения, что считается значительным периодом иранского искусства и цивилизации. Купцы Новой Джульфы привезли с собой малярные материалы из Европы и смогли развить искусство масляной живописи.

С точки зрения понимания богатства ходжы и, в целом, вкуса, образа жизни, воображения, можно изучить устройство и убранство частных домов ходжы фрески, написанные в частных домах ходжы могут быть профессиональным источником не только для искусствоведов, но и для историков, этнографов и исследователей,

изучающих армянские общины в целом. Опираясь на фотографии и другие исследования, ранее сделано нами и другими, мы можем сделать вывод, что большая часть особняков не сохранилась с годами. Одним из важнейших источников несохранных частных домов являются записи европейских путешественников 17-19 веков. В этой статье мы говорим о путешествиях Пьетро Делла Валле, Корнеля ле Брюйна и других.

ՄԻՋԱԳԵՏՔ(ԻՐԱՔ)Ի ՀԱՅ ԳԱՂԹՕՃԱՄԸ ԸՍՏ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ
ԱՂԲԻՒՆԵՐՈՒ
(XIX ԴԱՐ)

Հիմնարաներ. Մերձատր Արևելք, XIX դար, Միջագետք(Իրաք), հայ համայնք, բրիտանական աղբիւրներ, Օսմանեան Իրաք, Արևելա-հնդկական ընկերություն, հասարակական-տնտեսական գործունեություն:

Դարեր շարունակ այլևայլ նպատակներով Մերձատր Արևելք այցելած են տարբեր ազգություններուն պատկանող բազմաթիւ ուղեւոր-գրասաշրջիկներ, հոգեւորական-քարոզիչներ, դիւանագետներ, հնագետ-գիտնականներ, որոնց արտասահմանեան գործառոյթներուն կամ այցելութիւններուն ցանկին մէջ իր ուրոյն տեղը կը գրաւէր աշխարհի հնագոյն քաղաքակրթութեանց բնօրրան հանդիսացող Միջագետքը պեղումներ կատարելու, ինչպէս նաեւ, այնտեղ բնակութիւն հաստատած ժողովուրդներուն առանձնայատկութիւնները խորապէս ուսումնասիրելու հետաքրքրութենէն մղուած:

Ներկայ յօդուածով անդրադարձ պիտի կատարուի XIX դարուն որոշ բրիտանական աղբիւրներու յիշատակութիւնները Միջագետք(Իրաք)ի հայ համայնքի մասին, որոնցմէ ամենակարեւորը եւ {Իրաքի մէջ} ամենաերկարատեւ գործունեութիւնն ունեցող անձնաւորութիւնը Քլաւդիոս Ջեյմս Բիչն է, որ հմուտ դիւանագետ էր եւ քաղաքական գործիչ ըլլալէն բացի, Պաղտատի մէջ ներկայացուցիչն էր Արևելա-հնդկական ընկերութեան: Միեւնոյն ատեն, ան հնագետ էր եւ հնագոյն մետաղեայ դրամներու, հազուադիւս ձեռագիրներու եւ ընդհանրապէս պատմական արժէք ներկայացնող որեւէ հնաոճ իրի սիրահար:

Յօդուածին աղբիւրագիտական հիմք հանդիսացած են Մերովրէ Կարնեցիի *Ուղեգրութիւնը*,¹ Սթիֆըն Հեմպի Լօնգրիջի² *Չորս Դար Իրաքի Ժամանակակից Պատմութիւնը*, Քօնսթանս Ալեքսանդրի³ *Պաղտատ Անցեալ Օրերուն* եւ ուրիշ տարբեր հեղինակներու յիշատակութիւնները, ինչպէս նաեւ Մաղաքիա Օրմանեան⁴ պատրիարքի «Ազգապատում»էն պատմական որոշ դրուագներ: Օգտագործուած է նաեւ «Իրաքահայ Թեմի համառօտ պատմութիւն»ը, որ հիմնուած է գլխաւորապէս Իրաքի Թեմի առաջնորդարանի արխիւային նիւթերուն վրան:

ՔԼԱՎԵԸՍ ՋԵՅՄՍ ԲԻՉ – CLAUDIUS JAMES RICH

1808 թուականի Մայիսին Պաղտատ կը ժամանէ 21-ամեայ բրիտանացի երիտասարդ դիւանագետ Քլաւդիոս Ջեյմս Բիչը, իբր իր երկրի պաշտօնական ներկայացուցիչ, որ միեւնոյն ատեն Պաղտատի մէջ ներկայացուցիչն էր Արևելա-Հնդկական ընկերութեան⁵: Բիչը (ծնեալ 1787 թ.) կ'ակընկալէր տեսնել Պաղտատ քա-

¹ Մերովրէ Կարնեցի, Ուղեգրութիւն Բաղդադից Էջմիածին. 1812 թ., Երեւան 1968:

² Longrigg Stephen H., Four Centuries of Modern Iraq. Oxford at the Clarendon Press. England 1925.

³ Alexander Constance M., Baghdad in Bygone Days. John Murray, Albemarle Street, W. London, 1928.

⁴ Օրմանեան Տ. Մաղաքիա, Ազգապատում. Պէյրութ, 1960:

⁵ Արևելա-Հնդկական Ընկերութիւնը (East India Company) հաստատուած էր 1600 թուականին՝ անգլիացի առեւտրականներու և ազնուական դասին պատկանող անհատներուն կողմէ, անգլիական պետութեան արքայական կանոնադրութեամբ եւ առեւտրական մենաշնորհ ունէր արևելա-հնդկական տարածքներուն վրայ: Ընկերութիւնը իր ներկայացուցիչները ունէր Իրանի, այնուհետեւ Իրաքի նաւահանգիստներուն մէջ, որոնք նաեւ քաղաքական հանգամանք ունէին: Սամուէլ Մանեսթին (Samuel Manesty), այս ներկայացուցիչներէն մէկն էր, որուն նստավայրը նախապէս Բանդար Բուշիրն (Պարսկաստան) էր: Մակայն, քաղաքական վերիվայրումներուն պատճառով իր գրասենեակը կը տեղափոխէ Պասրա: Անուսնացած էր հայ վաճառականի մը դստեր հետ: Սկզբնական շրջանին Ընկերութեան գործունեութիւնը կը կայանար աֆիոնի բամբակի, աղի, պղպեղի և այլ համեմունքներու առեւտրով: Տարիներու ընթացքին ընկերութիւնը իր ուշադրութիւնը կը դարձնէ աւելի շահաւետ

ղաքը իր միջնադարեայ երբեմնի քաղաքակրթության կոթողներով, հռչակաւոր «Իմաստութեան գրադարան»ով, մզկիթներու մասամբ ոսկեպատ կապոյտ գմբէթներով, ինչպէս նաեւ մաքուր սալայատակուած փողոցներով: Սակայն, իրականութիւնը այլ տեսարան ներկայացուց երիտասարդին: Ըհչը, թէեւ բազմաթիւ մզկիթներու հանդիպեցաւ, սակայն իր մտապատկերին մէջ գոյութիւն ունեցող քաղաքը ոչինչով նման էր տեսածին, քանզի այն տարբեր չէր Օսմանեան կայսրութեան որեւէ յետամնաց քաղաքէ՝ աղտի մէջ թաղուած նեղիկ փողոցներով եւ անխնամ ու անպաշտպան, կիսաքանդ պարիսպներով:

Երբ Ըհչ ժամանեց Պաղտատ, այստեղ Ֆրանսայի քաղաքական ազդեցութիւնը՝ ներկայացուած ամէնագոր եւ ամենակալ Նափոլեոնի կերպարով ակնյայտ էր: Վերջինս, իր յետագայ ծաւալապաշտական արշաւանքներուն ընթացքին դէպի Հնդկաստան կը ծրագրէր Պաղտատ քաղաքը վերածել վարչական կեդրոնի, քանզի վերջինս այդ ժամանակ կը ներկայացնէր առեւտուրի մեծ շուկայ եւ որպէս այդպիսին, բեռնամիդիադրման շատ կարեւոր կեդրոն-հանգուցակետ⁶: Այս երկրի (իմա՝ Ֆրանսայի) լրտեսները եւ գործակալները կը վխտային Օսմանեան Թուրքիայի եւ Պարսկաստանի տարածքին, որոնք թշնամական քարոզչութեամբ կը գրգռէին տեղացիները Անգլիայի դէմ: Ուրեմն, Ըհչ պիտի գործէր բոլորովին թշնամական միջավայրի մը մէջ: Այս իսկ պատճառով, ինչպէս իր կենսագիրը Քոնսթանս Ալէքսանդրը⁷ կը նշէ, Ըհչի մուտքը Պաղտատ հանդիսաւոր սլայմաններու մէջ չ'անցաւ, այլ այն անշուք էր եւ առանց պաշտօնական աւելորդ ցուցադրութեանց ինչպէս իւրայատուկ է թրքական պաշտօնական հանդիսաւոր միջոցառումներուն ժամանակ: Հետեւաբար, հակազդելու եւ մանաւանդ չեզոքացնելու

նիւթերուն վրան, ինչպէս հնդկական թէր, սպա իր գլխաւոր առեւտուրը կայացաւ Իրանի մետաքսի արտահանմամբ: Ընկերութիւնը կը լուծարուի 1874-ին (տե՛ս en.m.wikipedia.org, այցելութիւն կայքին՝ 25.11.2020):

⁶ Alexander, p.31.

⁷ Constance Malcolm Alexander-ը հեղինակն է Baghdad in Bygone Days (Պաղտատ՝ Անցեալ Օրերուն) աշխատութեան. որ գլխաւորապէս հիմնուած է իր հետաւոր ազգականի՝ Քլադերս Ըհչի յուշագրութեանց վրայ:

այս թշնամական եւ վտանգաւոր երեւոյթը, իր ժամանումի առաջին օրէն իսկ, Ըհչը առանց յապաղելու անմիջապէս գործի անցնելով ձեռնարկեց գործակալական – լրտեսական ցանց մը կազմելու կամ ինչպէս այն այսօր կը կոչուի Գաղտնի Օտոայութիւն մը, որ ի մէջ այլ գործունէութեանց, պիտի ապահովէր բրիտանական իշխանութիւններուն համար այնքան կենսական եւ անվտանգ հաղորդակցութիւնը Կ.Պոլսոյ եւ Պասրայի միջեւ:

Ժամանակի ընթացքին, հակառակ երիտասարդ տարիքին, քաղաքական ճկուն գործունէութեամբ եւ բրիտանական դիւանագիտութեան իւրայատուկ վարուելաձեւով, Ըհչ յաջողեցաւ նախ եւ առաջ իր կողմը շահիլ Պաղտատի կուսակալի (վալիի) համակրանքը: Իր գործունէութեան սկզբնական շրջանին, զինք կ'այցելէին հայ մեծահարուստ ազնուականներ եւ թուրք բարձրաստիճան պաշտօնեաներ, որոնք իբր հաւաքավայր կը նախընտրէին Ըհչի նստավայրը: Այսպէսով, իր պաշտօնական-գործնական եւ ընկերական օղակը աստիճանաբար ընդլայնեց, որ պիտի ներառէր նաեւ, ինչպէս վերը նշեցինք, Պաղտատի հայ համայնքի մեծահարուստ երեւելիները եւ բարձրաստիճան պաշտօնեաներ, որոնց շարքին էին Մուքլէ եւ Մինաս Ըհչի գրասենեակի թարգմանները, ինչպէս նաեւ Վրթանէս վարդապետը, Յովհաննէս Տիարպէթիբցի հայ կաթողիկ վաճառական մը, նաեւ Մագնէս անունով ուրիշ վաճառական մը եւ վերջապէս Յովհաննէսը, որ Ըհչի գրասենեակի յանձնակատար-քարտուղարն էր:

Թէեւ Ըհչը ի պաշտօնէ իր երկրի քաղաքական շահերը կը պաշտպանէր, սակայն, նշենք որ ան հետաքրքրուած էր նաեւ Օսմանեան կայսրութեան մէջ բնակող բոլոր ժողովուրդներուն կենցաղով եւ դաւանած կրօններով, յատկապէս քրիստոնէայ ժողովուրդներուն իրաւունքները պաշտպանելով, քանզի ինք նոյնպէս ջերմեռանդ քրիստոնէայ էր: Ան մասնաւոր համակրանք ունէր հայերուն նկատմամբ, իբր գործունէայ, երախտագէտ, հիւրընկալ ու վստահելի տարր եւ այս իրողութիւնը ան երբեք չէր քօղարկէր⁸:

⁸ Alexander, p. 141.

Հետեւեալ դէպքը, որ վառ ապացոյցն է Օսմանեան կայսրութեան անմարդկային վերաբերմունքին դէպի իր հպատակ ժողովուրդները, անմիջականօրէն առնչութիւն ունի հայերուս հետ եւ Բիչի միջամտութիւնը այս խնդրի հանգուցալուծման աշխատանքին.

Այսպէս, 1799 թուականին, Էջմիածնի միաբանութենէն Յակոբ արքեպիսկոպոսը Ղուկաս կաթողիկոսի կողմէն կ'առաքուի Հնդկաստանի հայկական գաղթօճախը, որպէս կաթողիկոսական նուիրակ Էջմիածնին ի նպաստ հանգանակութիւն կատարելու, քանզի Մայր Աթոռը այդ ժամանակ անմիջապէս վիճակ մը ունէր: Յակոբ արքեպիսկոպոսին կ'ուղեկցէին Վրթանէս վարդապետը եւ Սերովբէ Կարնեցիին: Հնդկաստանի մէջ 25 լիտր ոսկի հանգանակելէն ետք, վերադարձի ճամբուն պատուիրակութիւնը կը ժամանէ Պաղտատ, ուր կը տեղեկանայ, որ Էջմիածնի մէջ կեանքը խաղաղ չէր, քանզի այստեղ կը տիրէր խառնաշփոթութիւն եւ կաթողիկոսական գահին տիրանալու համար պայքարի մէջ էին Դանիէլն ու Դաւիթը⁹: Այս պայքարը հայոց եկեղեցական պատմութեան մէջ կը յիշուի Դաւիթ-Դանիէլեան անունով¹⁰, որ քաղաքական սուր բնոյթ ունեցող պայքար մըն էր: Հայաստանը դարձած էր հակամարտ պետութիւններու (Պարսկաստանի եւ Ռուսական կայսրութեան) քաղաքականութեան ասպարէզ: Տեղեկանալով այս պատուիրակութեան յաջող առաքելութեան մասին, Պարսկաստանի Ապպաս Միրզան հետամուտ կ'ըլլայ Յակոբ արքեպիսկոպոսի հանգանակած հարստութիւնը յափշտակելուն: Իր նպատակը իրականացնելու համար Միրզան առանձին մարդկանց միջնորդութեամբ կը յորդորէ, որ Յակոբ նուիրակը այդ հարստութեամբ Պարսկաստանի ճամբով անցնի Էջմիածին: Սակայն, Ներսէս Աշտարակեցիի նախագուշացման շնորհիւ, Յակոբ արք. Էջմիածին վերադարձը ապահով չգտնելով՝ ժամանակաւորապէս կը մնայ Պաղտատ, ուր, դժբախտաբար, իր մահկանացուն կը կնքէ 21 Հոկտեմբեր 1809ին: Օրուան Օսմանեան իշխանութեան հրամանով մարմինը կը թա-

⁹ Սերովբէ Կարնեցի, էջ 41:

¹⁰ Օրմանեան, պարբերութիւնը 2248-2308 ներառեալ:

լուի Պաղտատի պարիսպէն դուրս: Վեց ամիս ետք, Անգլիայի Լիազօր ներկայացուցիչ՝ Բիչի միջնորդութեամբ աճիւնը կը փոխադրուի եւ կը վերայուղարկաւորուի Պաղտատի Ս.Աստուածածին եկեղեցոյ բակը: Աճիւններուն փոխադրութիւնը կարգադրելուն առիթով Երուսաղէմի պատրիարք Թեոդորոս վարդապետ ճոխ յառաջարկումով, հետեւեալ շնորհակալական անգլերէն նամակը կ'ուղղէ Քլադիըս Բիչին, որմէ հատուած մը կը ներկայացնենք թարգմանաբար.

«...նմանապէս լսած եմ ձեր համակրանքին եւ հովանաւորութեան մասին հանդէպ հայ ժողովուրդին, որոնք կը տառապին եւ անպաշտպան են: Իրազեկուած եմ նաեւ ձեր հոյակապ եւ ասպետական արարքի մասին, երբ Յակոբ արք. Էջմիածնի հոգեւոր նուիրակը վախճանեցաւ հոն, մարմինը թաղեցին քաղաքէն դուրս գերեզմանի մը մէջ: Քանի մը ամիս ետք, ձերդ վստմութիւնը այս լսելով անմիջապէս պէտք եղած կարգադրութիւնը ըրաւ անոր սուրբ մարմինը փոխադրելու քաղաքադուրսէն եւ յուղարկաւորելու քաղաքի եկեղեցիին մէջ: Իրապէս ասիկա հիանալի գործ մըն է այս տեսակ երկրի մը մէջ եւ նման քաղաքի մը մէջ, առաւել եւս այսպիսի կայսրութեան մը մէջ: Ասիկա արարք մըն է, որուն համար հայեր հպարտ պիտի զգան ինքզինքնին: Սոյն նամակով շնորհակալութիւն կը յայտնեմ իմ եւ իմ համայնքիս կողմէն, ձեր արարքին համար, զոր ես կը նկատեմ անյատապէս իմ եւ իմ վանքիս համար կատարուած: Նոյեմբեր 1810»¹¹

Սերովբէ Կարնեցիի ուղեկից՝ Վրթանէս վարդապետ, Յակոբ արք.ի վախճանումի մասին աստեմին տեղեկացուցած էր Էջմիածնի Հոգեւոր Խորհուրդին: Այդ կը հաստատէ նաեւ Յակոբ արքեպիսկոպոսի տապանագիրը¹²: Շիրմաքարը ներկայիս գետեղուած է Պաղտատի Ս. Աստուածածին եկեղեցոյ ներքին ձախակողմեան որմին մէջ, որուն վրայի գրութիւնը տակաւին ընթեռնելի է.

¹¹ Իրաքահայ Թեմի Համառօտ Պատմութիւն, Պաղտատ, 2005 (անտիպ), էջ 244: Նաեւ՝ Alexander, p. 83-84.

¹² Սերովբէ Կարնեցի, էջ 9:

«Իմ Յակոբայ Արեհիդի տիս
Հնդկաց երկրի նուիրա կիս
Ի յաւարտիլ գործոյն որ յիս
Ձեռն Տեառն միսեցաւ յիս
Մինչ սուրբ գահիս եւ ճնո դիս
Եթող կարօտ ողորմէ լիս
Ի ննջմանէս մինչ վեց ամիս
Մնացի ի դաշտին Բաբելօ նիս
Ապա շնորհիս իմ որդե կիս
Տէր Վրթանէս վարդա(պե) տիս
Տեղափոխեալ եղայ շիր միս
Հանգեայ ես այս ի ծոց Հար սիս:

Յամի Տեառն 1809 Հոկտեմբերի 21 ի Բաբելոն»

Յակոբ նուիրակի մահէն ետք, վերոյիշեալ հանգանակուած 25 լիտր ոսկին սուպահովութեան համար կը գումուէր Պաղտատի բրիտանական ներկայացուցչութեան (Քլադերս Ըիչ) հովանաւորութեան տակ եւ զայն Էջմիածին փոխադրելու համար սուպահով եւ անվտանգ ուղիներ կը փնտռուէր: Ըստ Սերովբէ Կարնեցիի Ուղեգրութեան, այս առաքելութեան նոյնպէս իր գործօն մասնակցութիւնը կը բերէ Բրիտանիոյ ներկայացուցիչ Քլադերս Ըիչը, որ բնականաբար թելադրուած էր անգլիական դիւանագիտութեան շահերով: Յամենայնդէպս, քաղաքական կամ մարդասիրական շահերէ դրդուած եւ ճիշդ գնահատելով պահը, մէկ կողմէն պետականութենէն զրկուած հայ ժողովուրդի տնտեսական եւ քաղաքական կեանքին մէջ հայ հոգեւոր կեդրոնի՝ Էջմիածնի ունեցած դերը, միւս կողմէն՝ օգտագործելով իր կայսրութեան (իմա՝ Բրիտանական) սահմաններուն մէջ եղած հայ զաղթածախներուն հնարաւորութիւնները, ջանք ու եռանդ չէր խնայէր իր ազդեցութեան տակ առնելու Էջմիածինը եւ իր բոլոր նուիրապետական աթոռները եւ թեմերը:

Այս կապակցութեամբ, յիշատակութեան արժանի է Վրթանէս վրդ.ի հետեւեալ նամակը ուղղուած Էջմիածնի Հոգեւոր Խորհուրդին. «...Անգղիացւոց ազգին դեսպանն ի մէջ այլ բազմապատիկ

լարերարութեանց... նա առ ազինս մեր արարելոց զգերագանցն արար յայտոսիկ ատուս. Հրամանաւ քաղաքիս (Բաղդադի) բղէշ-խին, զկնի չորից ամսոց զպարկեշտակենցաղ մարմինն Յակոբոյ արքեպիսկոպոսի, զոր վասն խառնակութեանց ժամանակին այնորիկ, զայն մարմինն բարեյիշատակ սրբագանի իմոյ ի հասարակ գերեզմանս արտաքոյ քաղաքին թաղեալ էաք, հոչակաւոր պատուով ի քաղաք բերեալ փառաւորապէս յեկեղեցին թաղելով...»¹³: Այնուհետեւ, Վրթանէս կը խնդրէ օրհնութեան եւ երախտագիտութեան ոսկեգօծ եւ գեղեցկագիր նամակ մը դրկել դեսպանի անունով: Վերջինս, խնամքով նախապատրաստած, անգլիական դրօշի ներքոյ, իբր Արեւելահնդկական ընկերութեան յանձնակատարներ, Սերովբէ Կարնեցի եւ Վրթանէս Աշտարակեցի վարդապետները անգլիական փաստաթուղթերով սուպահով Էջմիածին կը հասցնեն վերոյիշեալ հանգանակուած գումարը: Վերջիններս 03 Ապրիլ 1812-ին մեկնելով Պաղտատէն, երկար ու արկածալից ճամբորդութենէ մը վերջ, կը հասնին Էջմիածին նոյն թուականի Մայիս 28-ին¹⁴:

Ըիչի նախասիրութիւններէն էր նաեւ հնադարեայ մետաղադրամներու եւ հնագոյն ձեռագիրներու հաւաքումը, որոնցմով բնականաբար հարուստ էր այս հին քաղաքակրթութեանց երկիրը: Իր հաւաքածոն կը ներառէր հազուագիտ ձեռագիրներ կրօնական թեմաներով, որոնց գերակշիռ մասը կը պատկանէր Միջագետքի մէջ բնակութիւն հաստատած քրիստոնէայ տարբեր յարանուանութեանց՝ հայերուն, քաղղէացիներուն, ասորական եւ այլն: Իսկ աշխարհիկ թեմաներով ձեռագիրները արաբերէն, պարսկերէն եւ թրքերէն էին: Պաղտատ կեցութեան 13 տարիներու ընթացքին Ըիչ յաջողեցաւ կոկիկ հաւաքածոյ մը կազմել վերոյիշեալ հիասքանչ ձեռագիրներէ, որոնցմէ մաս մը միայն ինչ-ինչ միջոցներով հանգրուան գտաւ Անգլիա, վաճառուեցաւ բրիտանական թանգարանին եւ անոնք այժմ փառաւորապէս բազմած են այդ թանգարանի ցուցափեղկերուն մէջ...:

¹³ Սերովբէ Կարնեցի, էջ 19:

¹⁴ Նոյն:

Բիչի թանկագին հաւաքածոյի մէջ կը գտնուէր նաեւ Պետրոս Մեծի դիմանկարը, որուն պատմութիւնը բաւական հետաքրքրական է. Ուրեմն, Պետրոս ցարը ունենալով յաւակնոտ նախագիծեր Հայաստանի նկատմամբ, Ամենայն Հայոց կաթողիկոսին նուիրած բազմաթիւ պարգէններուն հետ կը նուիրէ նաեւ իր դիմանկարը: Այս դիմանկարը Էջմիածնի մէջ կը մնայ գրեթէ մէկ դար, որմէ ետք, իբր երախտագիտութեան արտայայտութիւն կաթողիկոսը իր հերթին կը նուիրէ Բիչին, որ այնքան ազնիւ գտնուած էր Միջագետքի հայերուն նկատմամբ, ինչպէս տեսանք Վրթանէս վարդապետի նամակին մէջ ուղղուած Էջմիածնի Հոգեւոր Խորհուրդին: Բիչի մահէն ետք, իր տիկինը՝ Մէրին 1824 թ.. գայն կը նուիրէ Բիչի հեռաւոր ազգականներէն մէկուն՝ ոմն William Erskine-ին, Edinburgh: Ուրեմն այս դիմանկարը ճամբորդած է Ռուսաստանէն Կովկաս, Էջմիածին, Պաղտատ, Հնդկաստան եւ ետ Եւրոպա:

1821 թ. Բիչի Պաղտատի գործունէութիւնը աւարտին հասնելով վերջինս իր տիկնոջ հետ կը հեռանան Պաղտատէն ուղղուելով դէպի Հնդկաստան: Պարսկաստանի մէջ կը բաժնուին իրարմէ, Բիչը գործերով Բուշիր կ'իջնէ իսկ Մէրին կը շարունակէ ճամբան դէպի Հնդկաստան: Բուշիրէն Բիչ կ'անցնի Շիրազ (Պարսկաստան), ուր վարակուելով ժանտախտէ 1821 թ.ի Հոկտեմբեր 5-ին կը մահանայ 36 տարեկանին, եւ կը թաղուի այն քաղաքի գերեզմանատն մէջ՝ ներկայութեամբ իր ազգակից ընկերներուն եւ Շիրազի մէջ գտնուող բազմաթիւ հայերու: Վեց տարի ետք, պարսկական եւ բրիտանական պատկան մարմիններուն թոյլտուութեամբ, իր աճիւնը կը տեղափոխուի եւ կը վերայուղարկուորուի Նոր Զուղայի հայկական վանքին մէջ: Իր տապանաքարի վրայ փորագրուած է հետեւեալ գրութիւնը.

Քլադերս Ջեմրս Բիչի նուիրական յիշատակին, երկար տարիներու Պաղտատի Ներկայացուցիչ, որ այս կեանքէն հեռացաւ Շիրազի մէջ Հոկտ. 5, 1821-ին, ուրկէ իր աճիւնը փոխադրուեցաւ իր ազնիւ ընկերոջ Col. J. Macdonald Kinneir ցանքերով եւ վերայուղարկուորուեցաւ այստեղ¹⁵ 17 Յուլիս 1826 թ.:

¹⁵ Խօսքը Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքին մասին է:

Այս առթիւ, իր կենսագիրը կը նշէ, որ Բիչը անպայման գոհ էր, որ իր վերջին հանգրուանը կը գտնէր այսպիսի նուիրական վայրի մը մէջ, հովանաւորութեամբ այն համայնքին, որուն ինքը մշտապէս եւ հիմնական կերպով նեցուկ կանգնած էր եւ այնպիսի երկրի մը մէջ ինչպիսին էր Օսմանեան Միջագետքը¹⁶:

Բազմաթիւ են այն բրիտանացի ուղեւորներ/այցելուները Միջագետք, որոնք իրենց ճամբորդական նօթերուն մէջ յիշատակած են հայ համայնքի գործունէութեան եւ անոնց ձեռներէց ոգիի մասին, որոնցմէ կը նշենք առաւել ակնառու հետեւեալ հեղինակները.

Անգլիացի ուղեւոր **ՋԱՔՍՈՆ**՝ 1797 թուականին Միջագետք կատարած իր ճամբորդութիւնը նկարագրող նօթերուն մէջ կը յիշէ, որ Մուսուլի հայերը Տիգրիս գետի վրայով մեծ քանակութեամբ պղինձ կը փոխադրէին լաստերով Պաղտատ, ապա առագաստանաւերով Պասրա բերելով, ուր այս մետաղի վաճառականութեան հայերը մեծ զարկ տուած են. Պասրայի հայերը աչքի զարնող վաճառականութիւն ունին Բենկալի եւ Պոմպէի հետ, ուր 400 թոննոց նաւերով կը փոխադրէին պղինձ, դեղօրայք, չոր միրգ, ինչպէս նաեւ արծաթ, ոսկի, իսպանական սոլար եւ վենետիկեան դահեկան: Ջաքսոնը կ'աւելցնէ նաեւ, որ այս մետաղի (պղինձի) վաճառականութիւնը հայոց մենաշնորհն էր Օսմանեան կայսրութեան տարածքին՝ 12 առ հարիւր շահով: Ասոնց դիմաց երկիրին (Իրաք) համար Հնդկաստանէն կը ներմուծուէր շաքար, բրինձ եւ այլ ապրանքներ¹⁷: Նոյն հեղինակը կը նշէ, որ մարգարիտի մեծ առեւտուրն ալ պատահալայերու հովանաւորութեան տակ կը գտնուէր¹⁸:

¹⁶ Տապանագիրի բնագիրը հետեւեալն է. "Sacred to the memory of CLAUDIUS JAMES RICH. Esq. of the Bombay Civil Service, many years British Resident at Baghdad, who departed this life at Shiraz on the 5th Oct. 1821 aged ...years, from whence his remains were removed by his affectionate friend Col. J. Macdonald Kinneir and reinterred here on the 17th July 1826" (Alexander, p. 323):

¹⁷ Մէլքոնեան Վ., Մարգիլի Հայ Ազգային Վարժարանի Քսանիինգ ամեակ 1955. Էջ 42:

¹⁸ Նոյն:

Վերապատուելի **Ճեյքոյ Սամուել** – **Jacob Samuel** Պարսա սյ-
ցելութեան մը ընթացքին (1835 թ.), հանդիպած է Ջուպէրի¹⁹ շրջանը
էւ իր «*Քարոզիչի մը շրջապտոյտ օրագրութիւնը Արաբական անա-
պատէն դէպի Պաղտատ 1835 թ.*», յուշերուն մէջ կը յիշէ թէ Ջուպէ-
րի մէջ 50 ընտանիք հայեր կային: Շատ յարգուած համայնք մը, բո-
լորն ալ սահուն անգլերէն կը խօսին: Ունին գեղեցիկ եկեղեցի մը,
ուր առաւօտեան էւ երեկոյեան պաշտամունք կը կատարուի»²⁰:

Ջ. Բ. Ուելսթըդ – **J.R. Wellsted** (անգլիացի ճանապարհորդ)
ուղեւորութեան ընթացքին կը նկարագրէ իր տպաւորութիւնները.
«...Պաղտատ հանդիպեցայ 1840 թ., որ 120.000 բնակչութիւն ունի,
երկու երրորդը խառն ցեղ մը՝ բաղկացած պարսիկներէ, թուրքերէ
էւ արաբներէ բոլորն ալ «սիննիներ», մնացեալները հրեաներ էւ
քրիստոնէաներ...: Հայեր կը կազմէին ամենանկատարելի մասը,
յարգուած ամենքէն, բարգաւաճ էւ հարուստ ցեղ մը իրենց յատկու-
թիւններով էւ ստացուածքով: Մեծամասնութիւնը տնտեսական
պաշտօնէաներ էին, որոնց մէջ ամենաբարձր դիրքերու հասածներ
կային... թուրքերը չունին այդ ատակութիւնը: Հայեր ունին եպիսկո-
պոս մը»²¹ էւ փոքր եկեղեցի մը»²²:

Նոյն հեղինակը 1840 թ. հանդիպած է նաեւ Հիլլա քաղաքը²³,
էւ նոյն աշխատութեան մէջ կը նշէ հետեւեալը. «...Հիլլա քաղաքը

ունի 25.000 բնակչութիւն, մեծամասնութիւնը՝ արաբներ: Կային
նաեւ հայեր (առանց նշելու թիւ մը – Ս.Օ.), հրեաներ, քրիստոնէա-
ններ, վրացիներ էւ ալպանացիներ, ...վաճառականութիւնը հայե-
րուն էւ հրեաներուն ձեռքն էր...»²⁴:

Անգլիացի ճանապարհորդ **Գրաթան Գիրի** – **Grattan Geary**
Պաղտատ այցելած է 1870-ական թուականներուն, իր տպաւորու-
թիւնները գրի առած էւ հրատարակած է 1878 թ., «*Պոսկէն Լոն-
տոն ճամբորդութեան մը նկարագրութիւնը*» անուան տակ: Այլ
կրօններու, ազգերու էւ յարանուանութեանց յիշատակութեան
ատեն հեղինակը կը յիշէ, որ հայերը մեծ համայնք մըն էին, ինչքի
տէր՝ ազդեցիկ անձնաւորութիւններով: Միջին կարողութեան տէր
հայր մը փափաքն էր գրագիր կամ գրող դառնալ: Պաղտատաբ-
նակ հայերուն մէջ կային նաեւ երկրաչափներ, որոնք կ'աշխատէին
Տիգրիսի վրայ նաւարկող շոգեմակոյկներու մեքենաներու նորոգու-
թեան գործարանին էւ կամ նման մասնագիտացուած աշխատանք-
ներուն մէջ»²⁵:

Յիշատակութիւններ կան նաեւ հայ հարուստ էւ նախաձեռ-
նութիւններ ունեցող վաճառականներուն մասին, սակայն անոնք
աւելի մտաւորականներ էին: Կառավարական բոլոր գրասենեակ-
ներուն մէջ կը գործէին հայ գրագիրներ, ազդեցիկ դիրքերու հա-
սած, որոնք մեծ ազդեցութիւն ունէին պետական բոլոր բաժան-
մունքներուն մէջ:

Վերոյիշեալ զբօսաշրջիկը կը շեշտէ, որ իր ճամբորդութեան
ընթացքին, կամ Պաղտատի մէջ հայերուն ընդունակութեան մա-
սին կասկած արտայայտող որեւէ բացասական կարծիք չէ լսած:
Սնունք հաւանաբար, ամենաընդունակ էւ մտային կարողութիւննե-
րով օժտուած միակ ժողովուրդն էին Ասիական Թուրքիոյ ամբողջ
տարածքին, էւ այս պատճառով է, որ ընդհանուր վստահութիւն մը

¹⁹ Պարսայի հարաւային արտարձաններէն մէկը:

²⁰ Իրաքահայ Թեմի էջ 114:

²¹ Նշուած անձը Օհաննէս արքեպիսկոպոսն էր, որ Նոր Ջուղայի կողմէն
նշանակուած էր առաջնորդ Պաղտատի էւ Պարսայի, քանզի Իրաքի թեմը
մինչեւ 1847 թ. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի իրատարութեան տակ կը
գտնուէր: Իսկ ակնարկած եկեղեցին՝ 1639 թ. հիմնուած Ս.Աստուածածին
եկեղեցին է, որ բազմիցս վերանորոգուած էւ կանգուն է ցայսօր:

²² **Wellsted J. R.**, *Travels To The City of Caliphs Along The Shores Of The Persian Gulf
And The Mediterranean*, Volume 1, pp. 274-275: Ուրեմն այս շրջանի հայերը. 1831–
1835 թթ. ահռելի ժանտախտէն ետք, այդքան կարճ ժամանակուայ ընթացքին,
1840 թուականին արդէն վերագտած էին իրենց նախկին բարեկեցիկ վիճակը
ըստ վերոյիշեալ օտար ճանապարհորդին:

²³ Հիլլա քաղաք՝ պատմական Բաբելոն քաղաքը, հիմնադրուած է 7000 տարի
առաջ վերածնեալ Բաբելոնի արքայ Համուրայիի կողմէն. կը գտնուի Եփրատ
գետի արեւմտեան ափին, Պաղտատէն հարաւ 100 քիլոմէթր հեռավորութեան

վրայ էւ Բաբելոն նահանգի վարչական կենդրոնն է: Պատմական հոյակապ
Բաբելոնի աւերակները կը գտնուին նոր քաղաքին հարեւանութեամբ:

²⁴ **Wellsted**, էջ 220:

²⁵ **Geary G.**, *Narrative of a Journey from Bombay to the Bosphorus*, London, 1878, pp.
222-224.

THE ARMENIAN COMMUNITY OF MESOPOTAMIA (IRAQ)
AS PER BRITISH SOURCES – 19TH CENTURY

Keywords: Middle East, Mesopotamia(Iraq), 19th Century, Armenian community, British sources, Ottoman Iraq, East-India Company, social and economic activities.

For centuries, Mesopotamia has been the center of attention of the super powers at all times. Scholars, travellers, tourists, spiritual preachers, archeologists and diplomats of various nationalities have been visiting this country for different reasons: Some for political reasons, others to carry out excavations in Mesopotamia - the cradle of civilization and study the characteristics of the people living in this part of the world throughout history. Of these ancient people, Armenians also had their fair share in putting down the foundations of Iraq's socioeconomic life.

By this article, we shade light on the writings of the most important British intellectuals of the 19th century, who through their direct contacts with notable Armenians in Iraq, confirm the importance of these people in contributing towards the development of Iraq's various spheres of life throughout history.

СЕДА ОГАНЯН
к.и.н., Армения

БРИТАНСКИЕ ИСТОЧНИКИ ОБ АРМЯНСКОЙ ОБЩИНЕ
МЕСОПОТАМИИ (ИРАК) В XIX ВЕКЕ

Ключевые слова: Ближний Восток, XIX век, армянская община, Месопотамия (Ирак), британские источники, Османский Ирак, Ост-Индская компания, социально-экономическая деятельность.

На протяжении веков Месопотамия была центром внимания великих держав, куда, для разнообразных целей, приезжали путешественники-туристы разных национальностей, священнослужители-

կայ իրենց հանդէպ²⁶: Շարունակելով իր գրառումները հայերուն մասին, հեղինակը կ'եզրակացնէ. «ամենադոյզն կասկած չկայ, որ հայերը կարողութիւն ունին քաղաքակրթութեան ամենաբարձր աստիճանին հասնիլ: Անոնք կը յառաջդիմեն կրթութեան եւ ընկերային գիտութիւններուն ասպարեզին մէջ: Իբրեւ ժողովուրդ, հաւատարիմ են օսմանեան գահին: Եթէ պատեհութիւնը ստեղծուի զինուորական մարզին մէջ ալ, առանց կասկածի պիտի ցուցաբերեն արժանիքներ տուեալ ոլորտին մէջ²⁷:

Իբր եզրակացութիւն, նշենք, որ Միջագետքի աշխարհագրական դիրքը անցեալին եւ ներկայիս, մշտապէս եղած է մեծ տէրութիւններուն ուշադրութեան կեդրոնը: Արեւելքը արեւմուտքին կապող աշխարհի այս երկրամասը, Պարսից Ծոցի հիւսիսը գտնուող Պասրա նաւահանգիստով, ինչպէս անտիկ աշխարհի, նմանապէս միջնադարեան եւ արդի առետրատնտեսական եւ քաղաքական պատմութեան մէջ ունեցած է իր յոյժ կարեւոր եւ ուրոյն տեղը: Նկատի ունենալով նաեւ այն պարագան, որ հայ վաճառականները աշխոյժ գործունէութիւն կը ծաւալէին Հնդկաց Ովկիանոսի բոլոր նաւահանգիստներուն մէջ, բնական է, որ անգլիացի եւ այլ ազգի դիւանագետներ կամ ուղեւոր/գրօսաշարջիկ անուան տակ քաղաքական գործիչներ ուղիներ պիտի փնտռէին սիրաշահելու այն ժամանակուայ ազդեցիկ հայ վաճառականները գործադրելու համար իրենց քաղաքական կամ առետրատնտեսական հետաւար նպատակները, որոնք բրիտանացիները պիտի իրագործէին յետագային:

²⁶ Ibid. p. 223.

²⁷ Ibid.

проповедники, дипломаты, археологи-ученые, интересующиеся землей, являющейся колыбелью древней мировой цивилизации, и особенности народов, поселившихся на ней, частью которого были и армяне.

В данной статье упоминаются работы некоторых британских интеллектуалов XIX века, которые имели непосредственный контакт с выдающимися местными армянами, вспоминая и подчеркивая их вклад в развитие Ирака на протяжении всей истории.

18-ԴԻ ԴԱՐԻ ՀԱԼԵՊԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԱՍԵԼԻ «ՀԱԼԵՊԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիմնաբառեր. Միրիա, Օսմանյան կայսրություն, կրոն, թուրք, քրիստոնյա, մուսուլման, հրեա, եվրոպացի, ավանդույթ, ժանտախտ:

Հայ համայնքների միջնադարյան պատմության ուսումնասիրման համար հայ և օտարազգի պատմագիրների մեծաթիվ աշխատությունների կողքին աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն նաև տվյալ երկրում հաստատված օտարերկրյա պաշտոնյաների հուշագրությունները:

Այս առումով օսմանյան շրջանի Հալեպի հայ համայնքի պատմության ուսումնասիրման համար շատ արժեքավոր աղբյուր է Ալեքսանդր Ռասելի «Հալեպի բնական պատմությունը» աշխատությունը: Ծագումով շոտլանդացի, մասնագիտությամբ բժիշկ, բնագետ Ռասելը 1740 թ. որպես բժիշկ աշխատանքի է անցնում Հալեպի անգլիական գործարանում, դառնում քաղաքի գլխավոր բժիշկ-պրակտիկը և շահում տեղի *փաշաների* վստահությունը: 1754 թ. վերադառնալով Անգլիա՝ երկու տարի անց նա հրատարակում է իր վերոնշյալ աշխատությունը²⁸: Այն, տեքստի վերամշակմամբ ու ընդլայնմամբ, երկրորդ անգամ վերահրատարակվել է 1794թ. հեղինակի երկվորյակ եղբայր՝ Պատրիկ Ռասելի աշխատասիրությամբ, և հետագայում թարգմանվել տարբեր լեզուներով²⁹:

²⁸ St' u **Russel Al.**, The natural history of Aleppo. Printed for A. Millar. in the Strand. MDCCCLVI. London. 1756.

²⁹ **Russell Al.**, The natural history of Aleppo. 2nd edition revised, enlarged, and illustrated with notes, by Russell P.. London. 1794. 2 vols. Նշենք, որ սույն զեկուցման համար

Աշխատության խորագրից արդեն պարզ է դառնում, որ հեղինակը ոչ միայն մասնագիտորեն հետազոտել է Հալեայ քաղաքի և նրա շրջակայքի բնակլիմայական պայմանները, կենդանական և բուսական աշխարհը, այլ նաև մի շարք տեղեկությունների հաղորդմամբ լույս է սփռել Հալեայի 18-րդ դարի պատմության այնպիսի կարևորագույն հարցերի վրա, ինչպիսիք են՝ տեղի բնակչության ընդհանուր թվաքանակը, քրիստոնյա և հրեա համայնքների կարգավիճակը, կենցաղն ու սովորույթները, քրիստոնյա-մուսուլման հարաբերությունները, հաստատված օսմանյան վարչակարգի առանձնահատկությունները և այլն:

Ռասելի հուշագրությունների հիման վրա վերոնշյալ առանցքային խնդիրների ճիշտ և օբյեկտիվ լուսաբանման համար նախ և առաջ հարկ է հաշվի առնել սույն աշխատության կառուցողական մի քանի առանձնահատկություններ: Առաջին՝ օսմանյան տիրապետության առաջին դարերի օտարագիր աղբյուրներում, կայսրության քրիստոնյա համայնքները հաճախ ներկայացված են «քրիստոնյաներ» մեկ ընդհանուր անվամբ: Ռասելի սույն աշխատությունում նույնպես տեսնում ենք այս երևույթը: Սակայն, միևնույն ժամանակ պետք է նշենք, որ բացի քրիստոնյաների՝ որպես մեկ ամբողջական միավորի վերաբերյալ ընդհանրական, երբեմն նաև էթնո-դավանական հատուկ շեշտադրմամբ առանձնացված համեմատական տեղեկություններից, հեղինակն իր աշխատության երկրորդ հատորում առանձին ենթազույգներ է հատկացրել Հալեայի եվրոպացի, բնիկ քրիստոնյա և հրեա համայնքների համառոտ պատմությանը ընդգծելով նրանց լեզվական, դավանական, ավանդույթային և կենցաղային առանձնահատկությունները:

միաժամանակ ուսումնասիրել ենք Ռասելի աշխատության երկրորդ հրատարակության երկրորդ հատորը և դրա արաբերեն թարգմանությունը: Հմմտ.

أ. وب. راسل، تاريخ حلب الطبيعي في قرن الثامن عشر، مجلد 2، ترجمة خالد الجبيلي، 1997.

Այլ Ռասելի «Հալեայի բնական պատմությունը» աշխատության որոշ հատվածներ թարգմանաբար ներկայացված են Արտավազդ Արքեպիսկոպոս Մյուրմեսյանի «Պատմություն Հալեայի հայոց» հատորներում:

Երկրորդ՝ Ռասելը հաճախ այս կամ այն իրավիճակի նկարագրության ժամանակ տարբերակում և համապատասխան համեմատություններ է անցկացնում մի կողմից տեղի քրիստոնյա, հրեա և արաբ բնակչության և մյուս կողմից միայն թուրքերի միջև, որն էլ կարծում ենք միտված է հատկապես թուրքերի՝ որպես իշխող դասի կարգավիճակը և միջհամայնքային հարաբերություններում նրանց դրսևորած վարքագիծն առավել հստակ ներկայացնելուն: Եվ վերջապես երրորդ՝ հեղինակի՝ կարևոր, խնդրահարույց հարցերին անկողմնակալ մոտեցումն ու իրավիճակի օբյեկտիվ վերլուծությունն ու գնահատումը թույլ են տալիս սույն աշխատության մեջ առկա տվյալներն ընդունել որպես փաստ և դրանցից կատարել համապատասխան հետևություններ և եզրահանգումներ:

Այլ Ռասելը, «Հալեայի բնական պատմությունը» աշխատության մեջ, ներկայացնելով տեղի բնիկ քրիստոնյա համայնքները՝ հույն, ասորի, մարոնի և հայ, նրանց ընդհանուր թիվը նշում է 30. 000, որից հույները՝ 13. 500, հայերը՝ 6.750, ասորիները՝ 3750 և մարոնիները՝ 3030³⁰: Հավելում է նաև, որ նրանցից յուրաքանչյուրը եկեղեցի ունի Ջիդեյդայում³¹ և վայելում է մահմեդական իշխանության բացարձակ հանդուրժողականությունը:

³⁰ Russell AL, նշվ. աշխ., հ. 2, էջ 28:

³¹ Նույն տեղում, էջ 29: Մի ավանդության համաձայն, սույլսան Մելիմ I-ինը (1512-1520 թթ.). երբ գրավել է Հալեայը, տեղի վաճառականությունն աշխուժացնելու հետևանքով, Լիբանանից Հալեայ է տեղափոխել քառասուն քրիստոնյա ընտանիքներ. որոնք հիմնել են քաղաքի թաղամասերից «Չոքաք ալ-Արբաաիև»-ը («Քառասունի փողոց»), որը հայտնի է նաև Սալիբեդ Ջիդայդե կամ Ջիդայդե. Չոքաք ալ-Կալ, Հարաթ ալ-Կանիսսե անվանումներով: St u D'Arvieux L., Mémoires du Chevalier d'Arvieux, envoyé extraordinaire à la Porte, Consul d'Alep, d'Alger, de Tripoli et autres Echelles du Levant, tom sixième, par le R.P. Labat J.-B., chez Charles-Jean-Baptiste Delespine, le Fils, Libraire, rue S. Jacques, vis-à-vis la rue des Noyers, à la Victoire, Paris, 1735, p. 437, كامل بن حسين بن مصطفى بالي الحلبي الشهير بالغزي. نهر الذهب في تاريخ حلب. الجزء الاول. طبع في المطبعة المرونية بحلب. 1923, ص. 197.

Աղբյուրներ, Արաբական գաղթները և հայ գործիչները. Հալեայ, 2008 թ., էջ 30-31: Սակայն, պետք է նշել, որ այս արվարձանում հայերը հաստատվել էին

Հեղինակը Հալեպի հայ համայնքի վերաբերյալ ենթազուխը մեկնարկում է նրանց դավանական պատկանելության վերաբերյալ տեղեկություններով: Նախևառաջ շեշտում է Հայ Առաքելական Եկեղեցու միաբնակ լինելու հանգամանքը, ապա ներկայացնում նրա հետևորդների և քրիստոնյա մյուս համայնքների միջև առկա դավանական տարբերությունները: Մասնավորապես, նշում է. «Հայերը հույների պես բաժանված են հների և նորերի կամ ուղղափառների և աղանդավորների: Առաջինները թվաքանակով ստավել են, սակայն ոչ ունեցվածքով: Նրանց եպիսկոպոսն ավելի համեստ կյանք է վարում, քան մյուս եպիսկոպոսները»³²:

Այլ Ռասելը քրիստոնյա մյուս համայնքների հետ հստակ համեմատություններով ներկայացնում է նաև Հայոց եկեղեցու կողմից սահմանաված պահքի շրջանները, այդ շրջանում թույլատրելի սննդակարգը և, որն ամենակարևորն է, տեղի հայերի վերաբերմունքն ու հետևողականությունը սահմանված կարգերի նկատմամբ. գերակշիռ մեծամասնություն կազմող այլադավանների միջավայրում առավել քան կարևոր է ազգային դավանանքի և ավանդույթների պահպանումն ու յուրաքանչյուր հայի հավատարմությունն առ այդ հայապահպան գործոնները: Եվ, ի փառս հալեպահայերի, Այլ Ռասելի վկայություններն այդ մասին գոհացնող են. «տեղի հայերը շատ խիստ են վերաբերվում իրենց պահքին և հաճախ մերժում են դրանցից ազատվելու կամ դրանք շրջանցելու առաջարկները, նույնիսկ եթե դա անհրաժեշտ է իրենց առողջության համար:

ավելի վաղ շրջանում՝ դեռևս Գրիկյան հայկական թագավորության կործանումից և Մև Շովի ջենովացի առևտրականների հեռացումից հետո. երբ, որպես Արևելք-Արևմուտք առևտրային շարժի իրականացնող միջնորդ քաղաք. Հալեպը սկսեց շատ արագ զարգանալ: Այս ժամանակ էլ քարավանային ճանապարհների երկարությամբ ձևավորվեցին հսկայական արվարձաններ: Այս արվարձաններից մեկում, հաստատվեցին քրիստոնյաները՝ մարոնիները և հատկապես հայերը, որոնք ծառայում էին միջնորդ և թարգմանիչ եվրոպացի գնորդների համար: Տե՛ս **Sauvaget J.**, «Alep», Essai sur le développement d'une grande ville syrienne, des origines au milieu du XIXème siècle, Librairie Orientaliste Paul Geuthner (12, Rue Vavinm, VI), Paris, 1941, էջ 99:

³² **Russell AI.**, նշվ. աշխ., էջ 31:

Նախընտրում են ավելի հաճախ վտանգել իրենց կյանքը, քան համտեսել արգելված որևէ բան: Արևելյան եկեղեցու սովորույթների համաձայն, նրանք ևս շաբաթ օրերը ծոմ չեն պահում, սակայն մյուսներից տարբերվում են տարվա ընթացքում սահմանված պահքերի այլ կանոնակարգմամբ, բացառությամբ՝ Մեծ պահքի: Պահքերին սովորաբար հաջորդում է որևէ տոն, սակայն, որպես մարդկանց առողջության հետ քիչ ընդհանրություն ունեցող երևույթ, որոշ տոներ, որոնք պահպանվել են Հալեպի քրիստոնյա այլ ազգերի շրջանում, հայերի կողմից շրջանցվել են»³³: Հալեպահայության շրջանում դավանանքային սովորույթների պահպանման մասին է փաստում նաև Ռասելի այն վկայությունը, ըստ որի. «ի տարբերություն տղամարդկանց շատ քիչ թվով կանայք էին ուխտաճնացություն կատարում դեպի Երուսաղեմ և հավատում դրա գործությանը, ընդ որում այդ կանանց մեծ մասը հալեպցի հայուհիներն էին»³⁴:

Հեղինակն անդրադառնում է նաև հալեպահայերի շրջանում հայերենի պահպանմանն ու կիրառմանը՝ նշելով, որ նրանք բացի իրենց մայրենի լեզվից, խոսում էին արաբերեն, իսկ նրանց մեծը մասը՝ նաև թուրքերեն³⁵: Ռասելի այս տեղեկությունը վերա-

³³ **Russell AI.**, նշվ. աշխ., էջ 32-33:

³⁴ **أ. و ب. راسل**, h. 2, էջ էջ 238:

³⁵ **Russell AI.**, նշվ. աշխ., էջ 45: Որպես պետական լեզու. թուրքերենը (օսմաներեն) առաջնային էր կայսրության ողջ տարածքում, սակայն ոչ բոլորն էին տիրապետում դրան: Արաբական երկրներում բնակչության մեծ մասը շարունակում էր մնալ արաբախոս (խոսում էին արաբերենի բարբառներով). իսկ մասնավորապես Պատմական Սիրիայում արաբերենից հետո տեղի ազգային վարչամասնությունները հիմնականում պահպանել և գործածում էին իրենց մայրենի լեզուն: Առավել մանրամասն տե՛ս **Imber C.**, *Imber C.*, The Ottoman Empire, 1300-1650, the structure of power. Printed and bound in Great Britain by Mackays of Chatham, Palgrave macmillan, 2002, p. 2: Տե՛ս նաև **Febvre M.**, *Theatre de la Turquie, où sont représentées les choses les plus remarquables qui s'y passent aujourd'hui touchant les Mœurs, le Gouvernement, les Coutumes et la Religion des Turcs : et de treize autres sortes de Nations qui habitent dans l'Empire Ottoman.* Chez Edme Couterot, Paris, 1682, p. 355.

كامل بن حسين بن مصطفى بالي الحلبي الشهير بالغازي, նշվ. աշխ., էջ 389:

բերում է նաև Հալեպի հայ կանանց, որոնք, ըստ հեղինակի, բացառություն էին կազմում տեղի այլազգի կանանց շրջանում՝ հայերենից զատ թուրքերենի և արաբերենի իմացությամբ³⁶։ Ռասելը նշում է նաև գրաբարի՝ որպես եկեղեցական ծիսական լեզվի, պահպանման և օգտագործման մասին. «Նրանց եկեղեցական ծիսակարգը կատարվում է հայերեն *մակթուրա* լեզվով (مكتوبة)՝ գրաբար (սա արաբերեն թարգմանությունից է, անգլերենում՝ learned Armenian), որը տարբերվում է հասարակ խոսակցական հայերենից: Նրանց գրքերը գրված են այդ լեզվով, ուստի դրանք առավելապես կարողանում են կարդալ կամ հասկանալ միայն հոգևորականները»³⁷։

“Հալեպի բնական պատմությունը» աշխատության կարևորագույն առանցքային կետերից է թուրք-քրիստոնյա, մուսուլման-քրիստոնյա փոխհարաբերությունների համակողմանի լուսաբանումը: Այդ փոխհարաբերությունների լույսի ներքո հնարվոր է դառնում հստակ պատկերացում կազմել տեղի քրիստոնյա համայնքների, այդ թվում նաև հայերի փաստացի կարգավիճակի մասին³⁸: Սակայն, նախ պետք է նշենք, որ Ռասելը միջհամայնքային հարաբերությունների համատեքստում անընդմեջ, ոչ ուղղակիորեն ներկայացնում է այն իրավիճակը, որը ստեղծվել էր Հալեպում, և Պատմական Միրիայում առհասարակ, օսմանյան տիրապետության առաջին դարերում: Իսկ իրավիճակը, փաստացի, այսպիսին էր. արաբական երկրներում, այդ թվում նաև Պատմական Միրիայում, թուրքերը մեծածավալ վերաբնակեցման փորձ չարեցին, մնացին իշխող փոքրամասնություն իրենց մեծ տիրություն³⁹: Իսկ տեղի կենտրոնախույս և թույլ վարչակառավարման համակարգի

արդյունքում Պատմական Միրիայի բնակչության կարգավիճակի անմիջական պատասխանատուները փաստացի հանդիսանում էին տեղական իշխանությունները⁴⁰: Վերոնշյալ եզրակացության համար հիմք են ծառայում նաև Ալ. Ռասելի հետևյալ տեղեկությունները. «Կրոնի պատճառով կրած դժվարությունները, որոնցից նրանք (յումա՝ քրիստոնյաները, Վ. Մ.) երբեմն դժգոհում են, միշտ միմյանց (համաձայն կոնտեքստի՝ քրիստոնյա չորս համայնքները, Վ. Մ.) միջև երկպառակտման հետևանք են, քանի որ թուրքերը երբեք չեն միջամտում, մինչ այս կամ այն կողմը չհրահրի կամ չլղղի»⁴¹:

Միևնույն ժամանակ Ռասելը նշում է, որ քրիստոնյաները տեղի ողջ բնակչության հետ միասին ենթակա էին ճնշման և հաճախ դժգոհում էին իրենց նկատմամբ կիրառվող անգամ փոքր բռնություններից: Սակայն, ըստ հեղինակի, «իրականում նույն դասի թուրքերը հավասարապես տառապում են»⁴²: Ըստ Ռասելի՝ «քրիստոնյաները, անկասկած, որոշ անբարենպաստ պայմաններում են գտնվում, և առօրյայում տառապում են իրենց թուրք հարևանների հանդուգն քմահաճույքներից, սակայն կառավարության կողմից առաջացած դժվարությունները, որոնց դեմ նրանք հաճախ դժգոհում են, շատ դեպքերում հետևանք են հենց իրենց անխոհեմության»: Ապա, որպես օրինակ ներկայացնում է *խարաջ* ուշացելու պատճառով հարկահավաքի բանտի շուրջ ստեղծված բռնության տեսարանը, որն, ըստ հեղինակի, սակայն, քրիստոնյաների անպարտաճանաչության հետևանք էր. «Երբ գալիս է *խարաջ* վճարելու ժամանակը, ամեն օր փողոցներում տեսնում ենք հավաքված խեղճ

³⁶ St' u راسل و. ب. ا. , նշվ. աշխ., էջ 241. հմմտ. Մյուրմեյան Ա. Արք., Պատմություն Հալեպի Հայոց, հ. Բ., «Հալեպ», Բեյրութ, 1946, էջ 436:

³⁷ Russell A., նշվ. աշխ., էջ 32:

³⁸ Օսմանյան կայսրության, այդ թվում՝ պատմական Միրիայի հայերի իրավական կարգավիճակի մասին մանրամասն տե՛ս Մակարյան Վ., Հայկական միլլետի կազմավորումը և Կ. Պոլսի Հայոց պատրիարքների իրավասությունները (ԺԵ.-ԺԹ. դդ.), Էջմիածին. օգոստոս, Մ. Էջմիածին, 2016, էջ 111-132:

³⁹ Hitti Ph., History of the Arabs, 90 Tottenham Court Road. Printed in China, London, 2002, p. 716.

⁴⁰ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Մակարյան Վ., Օսմանյան իշխանությունների քաղաքականությունը Միրիայում և տեղի հայերը (XVI-XVIII դդ.), Հայաստանը և Արաբական աշխարհը. Պատմություն և արդի խնդիրներ (Երիտասարդական միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Պատմության ինստիտուտ. Երևան, 2014, էջ 104-114: Այս մասին մանրամասն տե՛ս նաև Inalcik H., Quataert D., An Economic and Social History of the Ottoman Empire, 1300-1600, vol. 1, Cambridge University Press, 1994, p. 566, 590.

⁴¹ Russell A., նշվ. աշխ., էջ 29:

⁴² Russell A., նշվ. աշխ., էջ 41-42:

գյուղացիներ (աղբասներ՝ Մյուրմեյան արք. Ա., Պատմ ութին Հալեպի Հայոց, հ. Բ., էջ 434, արհեստավորներ՝ ا. و ب. راسل, նշվ. աշխ., հ. 2, էջ 240), որոնց բանտ են տանում: Մուհասսիլի⁴³ բանտի դարպասների շրջակայքը լի է կանանցով, որոնք, հարկերը չվճարելու պատճառով բանտարկված իրենց հարազատների համար ուտելիք և խմիչք էին բերել: Տեսարանը կոպիտ բռնության տպավորություն է թողնում, սակայն դա այդպես չէ, քանի որ նրանք, իմանալով հանդերձ, որ *խարաջի* վճարումն անխուսափելի է, այն ժամանակին վճարելու փոխարեն թողնում են մինչև բանը հասնի բանտարկվելուն, ապա, մի քանի օր կորցնելով, առժամյա ազատություն ստանալու համար որպես կաշառք մեծ գումար են վճարում պահակներին, մինչդեռ պարզ զիտեն, որ բոլոր այդ փորձերից ու աղմուկից հետո անգամ պետք է պարտքը վճարեն»⁴⁴:

Անչափ կարևոր են Ռասելի Հալեպի վարչակառավարման համակարգի, մասնավորապես տեղի քրիստոնյա համայնքների և օսմանյան վարչակազմի միջև փոխգործակցության վերաբերյալ մանրամասները: Ըստ Ռասելի, ազգային ծախսերի կարգավորման համար յուրաքանչյուր քրիստոնյա ազգ ուներ հասարակական գործակալ՝ *վեքիլ* (وكيل, wekil-պատվիրակ, փոխանորդ)⁴⁵, որն ընտրվում էր տվյալ ազգի երեսիներից կազմված ժողովում, ապա իր պաշտոնում հաստատվում *փաշայի* կողմից և ի նշան մեծարանքի՝ հրավիրվում Pellice ((պալա տ) անզերեն բնագրում՝ Pellice (տեղանուն Իտալիայում), արաբերեն թարգմանության մեջ բերված է բառի նույն լատինաստացությունը)⁴⁶: Ռասելը ներկայացնում է

նաև այն հատկանիշները, որով պետք է պարտադիր օժտված լինեին *վեքիլ*ները, դրանք են՝ ճարպկությունը և, հատկապես, «ինտրիգի արվեստին» տիրապետումը, ինչն ըստ հեղինակի, անհրաժեշտ էր թուրք մեծամեծերի հետ բանակցությունների ժամանակ: Կարևոր էր նաև թուրքերենի իմացությունը⁴⁷: Ապա շարունակում է թվարկել այդ պաշտոնի առավելություններն ու թերությունները. «Նա իր չարչարանքի համար ստանում է աշխատավարձ և գումար վաստակելու այլ հնարավորություններ ունի, բացի այդ, կարևոր անձնավորություն է համարվում: Բայց այս ամբողջ առավելություններով հանդերձ, այն անհաճո պաշտոն է, որքան էլ արդար վարվի ազգային հարկերի կամ *ամանի*⁴⁸ չափերի կանոնավորման գործում, մշտապես մեղադրվում է կողմնակալության և զեղծարարության մեջ, նրա ընտրողները երբեք գոհ չեն, իսկ իր ազգի նկատմամբ ոտնձգության դեպքում, նա պատիվ ունի լինել առաջինը բանտում հայտնվածների թվում»⁴⁹:

Հայերի մասին Ռասելի հաջորդիվ տեղեկությունները վերաբերում են նրանց կենցաղին: Ինչպես գիտենք, որպես կայսրության առևտրային խոշորագույն կենտրոն, Հալեպը մշտապես զգացել է մեծաքանակ եվրոպացիների ներկայություն, որոնք ակամայից իրենց ազդեցությունն են թողել տեղի բնակիչների վարքի և կենցաղի վրա: Եվ փաստ է, որ այստեղ, մասնավորապես նշված ժամանակաշրջանում, շրջանցվում էին անգամ հպատակների վարք ու բարքին վերաբերող օսմանյան հստակ մշակված օրենքները: Հալեպի բնակչության համեմատական ազատության մասին փաստում է նաև Ալ. Ռասելը՝ շեշտելով, որ իրավիճակը նույնը չէր արաբական այլ երկրներում:

Տարբեր ժամանակաշրջաններում Հալեպ քաղաքի տարբեր բնագավառներում հայերի դերի մասին բազմիցս նշվել է, սակայն, կարճես նորություն է Ռասելի տեղեկությունն առ այն, որ Հալեպում

⁴³ Մուհասսիլը կամ դեֆթերդարը փաշայից հետո քաղաքային պաշտոնյաների կարգից երկրորդ անձն էր և նրա բացակայության ժամանակ վարում էր կառավարչի առժամանակյա պաշտոնը: Մուհասսիլի պարտականությունների մեջ էր մտնում արքունի տուրքերի, մաքսատան հասույթների և խարաջ տուրքի հարկահավաքությունը: Տե՛ս Մյուրմեյան արք. Ա., նշվ. աշխ., էջ 503:

⁴⁴ Russell A.I., նշվ. աշխ., էջ 42, հմմտ. ا. و ب. راسل, նշվ. աշխ., էջ 240. Մյուրմեյան արք. Ա., նշվ. աշխ., էջ 434: Տե՛ս նաև Febvre M., նշվ. աշխ., էջ 510:

⁴⁵ Օրմանեան արք. Մ., «Ազգապատում». մասն Բ., Բեյրութ, 1960, էջ 2187-2188.

⁴⁶ Միրանի Յ., Պոլիս եւ իր դերը. հ. 1. Պեյրութ, 1965. հ. 2. Պեյրութ, 1969, էջ 282:

⁴⁷ Russell A.I., նշվ. աշխ., էջ 41, հմմտ. ا. و ب. راسل, նշվ. աշխ., էջ 239:

⁴⁷ Russell A.I., նշվ. աշխ., էջ 41:

⁴⁸ Օսմանյան կայսրության օտարերկրացիներին պարտադրված անկանոն հարկ կամ տուրք:

⁴⁹ Russell A.I., նշվ. աշխ., էջ 41:

հաստատված եվրոպացիների խոհարարները, ինչպես նաև սպասարկող անձնակազմի մեծ մասը հայեր էին, որոնք, ֆրանսիական և անգլիական խոհարարական արվեստը սերտելուց հետո էին միայն բազմազանության միջոցով մատուցում նաև տեղական որոշ ուտեստներ⁵⁰:

Ռասելը մանրամասն համեմատականներով ներկայացնում է նաև Հալեայի քրիստոնյաների և թուրքերի շրջանում տարածված ուտեստները, ճաշի մատուցման արարողակարգերը և՛ առօրյայում, տանը և՛ թե՛ միջոցառումների ժամանակ, ապա շեշտում, որ այդ առումներով տեղի քրիստոնյաներն ընդօրինակում էին թուրքերին⁵¹: Այստեղ հարկ է դիտարկել, որ Ռասելի այս համեմատականն արված է տեղի քրիստոնյաների և հենց թուրքերի միջև, այլ ոչ թե մուսուլմանների ընդհանուր առմամբ և արաբների մասնավորապես: Թեև, ինչպես գիտենք հատկապես խոհանոցի և ընդհանուր կենցաղավարության հարցերում թուրքերն ու արաբները շատ ընդհանրություններ ունեն, բացի այդ, տեղի քրիստոնյաները, մասնավորապես հայերը, հաստատված լինելով Հալեայում դեռ մինչ օսմանյան տիրապետությունը պետք է որ ընդօրինակեին էենց արաբների կենցաղավարությունը, այլ ոչ թուրքերի: Նշվածը ևս մեկ անգամ բերում է այն համոզման, որ Ռասելն իր համեմատություններում ընդհանուր առմամբ տարբերակում է թուրք բնակչությանը որպես իշխող ազգ և տեղի մյուս բնակիչներին որպես հպատակներ՝ այդպիսով ցանկանալով ընդգծել թուրքերի կարգավիճակն ու այդ կարգավիճակի փոխազդեցությունը հպատակ այլազգիների հետ հարաբերություններում:

Քրիստոնյաների առօրյայի նկարագրությունները Ալ. Ռասելը հաճախ փոխանցում է հետաքրքիր մանրամասնություններով. «Նրանք (իմա՝ քրիստոնյա տղամարդիկ), ճաշից հետո, ընդհանրապես սեղանի շուրջ երկար նստած չեն մնում, այլ սովորաբար մեկ գավաթ սուրճից հետո անմիջապես վերադառնում են իրենց գործերին: Հանգստյան օրերին, սակայն, նրանց հաճելի է նույնիսկ մի

⁵⁰ Նույն տեղում, էջ 10:

⁵¹ Նույն տեղում, էջ 43:

բանի ժամ նստել, սուրճ խմել կամ ծխել: Ընթրիքից հետո մատուցվում է առաջին բաժակը խնձորի կամ այլ մրգի բարակ կտորը եգրին. այս սովորույթը կիրառվում է նաև տոներին հանդիսավոր այցերի ժամանակ, երբ սուրճից հետո մատուցվում է գինի, որն էլ անվանում են տոնական գավաթ»⁵²:

Համաձայն Ռասելի՝ քրիստոնյա կանայք իրենց ամուսինների հետ սեղան չէին նստում: Սակայն որոշ համայնքներ, մասնավորապես մարոնի, շեղվել էին այդ սովորույթից՝ կանանց թույլատրելով բոլորի հետ միասին ճաշել, ինչպես նաև յուրացրել էին սեղան-աթոռից օգտվելու և ճաշի մատուցման եվրոպական ձևը: Երբեմն կանանց թույլատրվում էր նաև ներկայանալ եվրոպացի հյուրերին, որոնք հյուրընկալվում էին նրանց տներում⁵³:

Ալ. Ռասելը հաղորդում է նաև տեղի քրիստոնյա և մուսուլման տղամարդկանց և կանանց արտաքինի, հագուստի վերաբերյալ մանրամասնություններ: Քրիստոնյա տղամարդկանց հագուստի մասին հետևյալն է նշում. «Այն ինչ հագնում են քրիստոնյաները հիմնականում տարբերվում է մուսուլմանների հագուստից. նրանց օգտագործած շղարշը երկնագույն է՝ սպիտակ գծերով: Նրանց կոշիկները կարմիր են: Դրսում նրանց հագուստն ընդհանուր առմամբ շատ պարզ է, հատկապես երբ խոսքը վերաբերում է մորթուն: Չնայած նրանցից շատերը տանը շատ թանկարժեք հագուստ են հագնում և ընդօրինակում են մուսուլմաններին սպիտակ գլխաշորերի (տյուրբան-Վ.Մ.)⁵⁴ օգտագործման հարցում: Շքեղ հագուստներն ու այլ բաները օրեցօր զարգանում են»⁵⁵: Համաձայն Ռասելի նկարագրության «քրիստոնյա և մուսուլման կանանց զգեստները մի փոքր տարբեր էին. քրիստոնյա կանայք ավելի շռայլ

⁵² Russell A., նշվ. աշխ., էջ 43:

⁵³ Նույն տեղում, էջ 44:

⁵⁴ Ըստ Մ. Ֆեբրուի՝ թուրքերն արգելում էին քրիստոնյաներին և հրեաներին սպիտակ տյուրբան կրել: Տե՛ս u Febvre M., նշվ. աշխ., էջ 196:

⁵⁵ و ب. راسل, նշվ. աշխ., էջ 240. հմմտ. Russell A., նշվ. աշխ., էջ 42-43: Տե՛ս նաև՝ Մյուրմեյան աքք. Ա., նշվ. աշխ., էջ 435: Այս մասին Այնթապի հայ տղամարդկանց օրինակով մանրամասն տե՛ս Sarafian K., A Brief History of Aintab. Printed in the United States of America. 1957, pp. 184-186.

էին իրենց զգեստների հարցում: Նրանց չէր թույլատրվում իրենց դեմքը ծածկել նույն ձևով, ինչպես ծածկում էին մուսուլման կանայք և հրապարակայնորեն օգտագործել հատուկ գույներ, հասկապես կա՛սաչք»⁵⁶: Կինը դրսում պարտադիր ծածկվում էր սպիտակ զծեղով շղարշով, որն իր ձևով տարբերվում էր թուրքական *ֆերաջևե*ից⁵⁷: Ռասելը նշում է նաև, որ քրիստոնյա կանայք չէին ամաչում տանը առանց շղարշի երևալ իրենց հոգևոր հայրերի, բժիշկների և տան արական սեռի անդամների առաջ⁵⁸:

Ընդհանրապես, պետք է նշենք, որ Ալ. Ռասելը, քրիստոնյա բնիկ, եվրոպացի և մուսուլման կանանց վարքի և կենցաղի նկարագրությունները չափազանց մանրամասնելով, անդրադառնում է անգամ նրանց արտաբերած բառերին՝ նշելով Օրինակ, որ «քրիստոնյա կանայք մուսուլմանների նման անընդհատ *փալլահ* կամ *Աստված չեն ասում*»⁵⁹:

Շեղինակի հաղորդմամբ՝ ի տարբերություն մուսուլման կանանց, քրիստոնյա կանայք երկար ժամանակ էին անցկացնում տանը, հազվադեպ էին զբոսնում այնգիներում և նրանց պես հաճախ չէին գնում բաղնիք (համամ): Ապա հավելում է, որ դա չէր նշանակում, թե նրանք հազվադեպ էին դուրս գալիս տնից, նրանք գնում էին եկեղեցի շաբաթը երեք կամ չորս անգամ, իսկ բաղնիք (*համամ*)՝ 10 օրը մեկ, նաև այցելում էին իրենց ազգականներին⁶⁰:

Ալ. Ռասելի տեղեկությունները քրիստոնյաների պսակի և ամուսնական սովորույթների վերաբերյալ նույնպես շատ մանրամասն են ներկայացված: Դրանց շարքում գտնում ենք հենց տեղի հայերի շրջանում տարածված սովորույթներ ևս: Մասնավորապես, խոսելով քրիստոնյաների շրջանում ամուսնությունների տարիքային շեմի մասին, նշվում է հետևյալը. «Երբեմն քրիստոնյաներն իրենց երեխաներին նշանում են շատ երիտասարդ տարիքում, սա-

կայն թույլ չեն տալիս ամուսնանալ մինչ որոշակի տարիքային սահմանը, ինչպես որ ընդունված է թուրքերի մոտ, թեև երբեմն այս երևույթը հանդիպում է նաև հայերի շրջանում»⁶¹:

Պսակի և հարսանեկան արարողակարգերի թեման Ալ. Ռասելը սկսում է հարսնացուի և փեսայի միջև սովորույթներով պայմանավորված մինչամուսնական հարաբերությունների, դրանց ընթացքի մանրամասն նկարագրությամբ և թուրքական սովորույթների հետ համեմատություններով: Իսկ որպես տեղի բոլոր քրիստոնյա ազգերի շրջանում տարածված հարսանեկան արարողակարգերի ընդհանուր Օրինակ, ներկայացնում է մարտինների արարողակարգը՝ շեշտելով, որ թեև պսակի արարողությունը տարբեր է (պայմանավորված կրոնական առանձնահատկություններով), բայց մյուս ավանդույթները գրեթե նույն են բոլոր քրիստոնյաների մոտ⁶²:

Ինչպես արդեն նշել ենք, որպես բժիշկ, բնագետ Ռասելը մեծ ուշադրություն է դարձրել և մասնագիտական հետազոտության հիման վրա ներկայացրել նաև Հալեպում իր ապրած ժամանակահատվածում բռնկված ժանտախտի շրջանը, որն ընդգրկում է 1742-1744 թթ.: Ռասելը ներկայացնում է համավարակի ընթացքն ու զարգացումը, նահանջը, հիվանդների թվային հարաբերակցությունը յուրաքանչյուր տարվա համար նշելով նույնիսկ վարակակիրների և

⁵⁶ *أ. و ب. راسل*, նշվ. աշխ., էջ 241:

⁵⁷ **Russell Al.**, նշվ. աշխ., էջ 44:

⁵⁸ Նույն տեղում, էջ 45:

⁵⁹ Առավել մանրամասն տե՛ս **Russell Al.**, նշվ. աշխ., էջ 45-46:

⁶⁰ *St*՝ *أ. و ب. راسل*, նշվ. աշխ., էջ 241:

⁶¹ **Russell Al.**, նշվ. աշխ., էջ 47:

⁶² Այս մասին մանրամասն տե՛ս **Russell Al.**, նշվ. աշխ., էջ 48-54: Մույն հոդվածի շրջանակում նպատակահարմար չենք համարել ներկայացնել հարսանեկան արարողակարգի նյութն ամբողջությամբ, որքան էլ հեղինակի կողմից նշվում է, որ այն նույնն է, ինչ տեղի քրիստոնյա բոլոր ժողովուրդների մոտ: Թեև նմանություններն առաջին հայացքից ակնհայտ են, այնուամենայնիվ, կարծում ենք, որ այն պահանջում է հայկական հարսանիքների ընդհանուր արարողակարգային համեմատական ուսումնասիրություն, որի ընթացքում պետք է հաշվի առնել և՛ ժամանակաշրջանը և՛ միջավայրը, այսինքն բուն հայկական ավանդույթի հիմքի վրա տեղի հայերի շրջանում պահպանված և կիրառվող հարսանեկան ավանդույթների լուսաբանում: Ալ. Ռասելը համեմատություններով ներկայացնում է նաև թուրքերի և քրիստոնյաների հուղարկավորության արարողակարգերը: Տե՛ս **Russell Al.**, նշվ. աշխ., էջ 56-57:

դրա հետևանքով մահացածների հստակ թիվ: Նշվում է, որ տեղի քրիստոնյաների շրջանում ժանտախտի հետևանքներն առավել ծանր էին հատկապես 1743 թ. «1743 թ. մարտի 20-ին տեղեկություն է ստացվել իրենց տներում համավարակի պատճառով նախ երկու հրեայի, ապա նաև մի քանի թուրքի և քրիստոնյայի մահվան մասին: Մինչ մյուսները վարակով պառկած էին, վրա հասավ նոր և ավելի լուրջ տագնապ. իսկապես հիվանդությունը շուտով դարձավ տեսանելի հատկապես հայերի շրջանում, որոնք նշանակալիորեն տառապեցին այս շրջանում»⁶³: Ըստ Ռասելի 1743թ. փետրվար ամսից մինչ օգոստոս ընկած ժամանակահատվածում մահացած քրիստոնյաների թիվը 1687 էր (16100 թուրք, 383 հրեա)⁶⁴:

Այսպիսով, հաշվի առնելով «Հալեպի բնական պատմությունը» աշխատության մեջ հեղինակի ուշադրությանն արժանացած տարաբնույթ հարցերի ուսումնասիրությունը, դրանց համակողմանի և մանրամասն նկարագրությունը, կարելի է վստահաբար նշել, որ սույն աշխատությունը 18-րդ դարի առաջին կեսի Հալեպի համապարփակ պատմության կարևորագույն աղբյուր է: Իսկ աշխատության մեջ այնպիսի հարցերի արծարծումն ու լուսաբանումը, ինչպիսիք են Բարձր Դոան, տեղի օսմանյան վարչակազմի քաղաքականության, մուսուլման-ոչ մուսուլման, թուրք-մուսուլման այլազգի, թուրք-ոչ մուսուլման փոխհարաբերությունները, հնարավորություն են տալիս հստակ պատկերացում կազմել Հալեպի հայերի կարգավիճակի վերաբերյալ նշված ժամանակաշրջանում: 4

Արդյունքում, կարելի է արձանագրել, որ ա) Հալեպում, ինչպես գրեթե ամբողջ Պատմական Սիրիայում, հպատակ ժողովուրդների փաստացի կարգավիճակը տեղի ինքնավար իշխանությունների վաղած քաղաքականության արդյունք էր, բ) դեռևս 18-րդ դարի առաջին կեսին օսմանյան իշխանությունների քաղաքականությունը կայսրության բնակչության, այդ թվում նաև հայերի նկատմամբ հիմնված էր ոչ թե ազգային, այլ դավանական սկզբունքների վրա, դ) ս:զգային և կրոնական համայնքների համեմատաբար ազատ ինք-

նադրանքում նպաստում էին նաև եվրոպացի պաշտոնյաների, մեծ թվով առևտրականների մշտական ներկայությունը Հալեպում, նրանց ազդեցությունը տեղի պետական կառավարման մարմինների գործունեության և հասարակության կենսաձևի վրա:

VENERA MAKARYAN
PhD in History, Armenia

GENERAL DESCRIPTION OF THE 18th C. ALEPPO'S ARMENIAN COMMUNITY IN ALEXANDER RUSSELL'S "THE NATURAL HISTORY OF ALEPPO"

Keywords: Syria, Ottoman Empire, religion, Turks, Christians, Muslims, Jews, Europeans, tradition, plague.

The book "Natural History of Aleppo" by Alexander Russell, is an important source about the history of Armenian community in Aleppo during the Ottoman period.

Russell was a Scottish physician and naturalist, delegated to Aleppo in 1740. Having been appointed as a physician to the English factory there, and, gaining the confidence of the local *Pasha*, he became the chief medical practitioner of the city. In 1754, he returned to England and, two years later, published his *Natural History of Aleppo*. In 1794, Patrick Russell, his half-brother, assumed the second edition, revising and expanding the text. Later, the book was translated into different languages.

The title of the book implies that the research refers to fauna and flora of Aleppo, and also the climatic conditions of the city and its surroundings. Moreover, Alexander Russell's book contains significant information about Non-Muslim communities of Aleppo (Greek, Assyrian, Maronite and Armenian), such as the number of the population of each community, the relationship between them and with Muslims, in particular, with Turks living in Aleppo. The study of above-mentioned issues allows us to clarify and to present the actual status of Armenians living in Aleppo in the first half of the 18th century, which mostly depended on the policy pursued by the local authorities.

⁶³ Russell A., նշվ. աշխ., էջ 343:

⁶⁴ Նույն տեղում. էջ 345:

ОБЩЕЕ ОПИСАНИЕ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ АЛЕППО XVIII В. В ТРУДЕ АЛЕКСАНДРА РАССЕЛА «ЕСТЕСТВЕННАЯ ИСТОРИЯ АЛЕППО»

Ключевые слова: Сирия, Османская империя, религия, турок, христиане, мусульмане, евреи, европейцы, традиция, чума.

Для исследования истории армянской общины Алеппо в период Османского правления очень важным источником является труд Александра Рассела «Естественная история Алеппо». В 1740 году, шотландский натуралист Рассел, отправился в Алеппо в качестве врача на английский завод. Работая главным врачом города, завоевал доверие паши. В 1754 году, вернувшись в Лондон, спустя два года опубликовал свой труд, посвященный Алеппо - «Естественная история Алеппо» ("Natural History of Aleppo"). В 1754 г. с расширениями текста и обработками этот труд был переиздан Патриком Расселом, сводным братом Александра Рассела, а позже переведенна разные языки.

Из названия книги становится ясно, что в ней содержится описание города и основных естественных природных объектов в его окрестностях, климата, жителей и болезни, особенно чуму. В трудах Александра Рассела также содержится наиважнейшие сведения о немусульманских общинах Алеппо (греческая, ассирийская, маронитская и армянская), об их числе, о взаимоотношениях между ними, а так же об их отношениях с мусульманами, в частности с турками.

Исследование этих сведений нам дает возможность выяснить фактическое положение местных армян, которое в первой половине XVIII века в большей мере было зависимо от политики введенной местными органами власти Алеппо.

ՄՈՒՀԱՍՄԵՏ ՃԵՍԱԼ ՊԱՐՈՒԴԻ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՒՐԻԱԿԱՆ ՃԵՁԻՐԷԻ ՁԵԻԱԲՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ» ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԷՊԻ ՍՈՒՐԻԱ ՀԱՅԵՐՈՒ ԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ (1915-1945 ԹԹ.)

Հիմնաբառեր. Մուհամմետ Ճեմալ Պարուզ, Գիլիկիա, Արևմտեան Հայաստան, Սուրիական Ճեզիրե, հայերու գաղթ, Գամիշլի:

Սուրիացի հետազոտող Մուհամմետ Ճեմալ Պարուզի¹ մենագրությունը՝ «Ժամանակակից Սուրիական Ճեզիրեի ձևաորման պատմությունը ...»², բաղկացած է 1024 էջէ գրուած արաբերէն լեզուով եւ լոյս տեսած 2013 թ. -ին, Պէրուրի մէջ, համապարփակ կոթողային սկզբնաղբիւր է այն դէպքերու վերաբերեալ, որոնք տեղի ունեցած են Սուրիական Ճեզիրե կոչուած տարածաշրջանին մէջ թաթարական արշաւանքներու աւերումէն մինչեւ նորագոյն դարաշրջանին: Հեղինակը աշխատութեան մէջ մանրամասնօրէն կը վերլուծէ տարածաշրջանի բնակչութեան մարդաբանական ծագման, մշակոյթներու բախման խնդիրները, տեղեկութիւնը կը փոխանցէ շրջանի բնակիչներու եւ յատկապէս Թուրքիայէն դէպի այդ

¹ Մուհամմետ Ճեմալ Պարուզի Սուրիացի գրող, պատմաբան եւ հետազոտող: Հեղինակ է քանի մը գիրքերու եւ գիտական յօդուածներու: ՄԱԿ-ի շարք մը նախագիծերու տնօրէն, խորհրդատու, հետազոտութիւններու եւ քաղաքականութեան ուսումնասիրութիւններու արաբական կեդրոնի հետազոտական բաժնի տնօրէն:

² Բարոտ Մուհամմադ, التكوّن التاريخي الحديث للجزيرة السورية، أسئلة وإشكاليات التحول من البوينة إلى العمران الحضري، الطبعة الأولى، بيروت، تشرين الثاني، ٢٠١٣.

(լետայում. Պարուզ Մուհամմետ Ճեմալ, Այթաբաուն ալթարիխի էլիասիա լիլճեզիրե ալտուրիե, ասիլա ուաիշքալիաթ ալթահաուուլ մին ալպատունէ իլա ալոււրան ալիասարի, ալթապաս ալուլա, Պէրուր, Թիշրին ալաուալ/Հոկտեմբեր), 2013:

շրջանը թափանցող քիւրտերու, ասորիներու, սուրիանիներու (ուղղափառ եւ կաթոլիկ) քաղղեացիներու, ինչպէս նաեւ հայերու եւ այլոց վերաբերեալ: Տեղեկութիւններ կան նաեւ անոնց լեզուական առանձնայատկութիւններուն առնչուող: Հեղինակը կանգ կ'առնէ տեղական համայնքներու, յատկապէս քիւրտ եւ սուրիանի համայնքներու առաջացման վրայ՝ եւ այդ ամէնի կապը թուրքական քաղաքականութեան հետ: Ամբողջ գլուխ մը նուիրուած է Միոնիստական շարժման ճեզիրէի որոշ մասերու մէջ հրեաներ տեղակայելու վաղ փորձի եւ այնուհետեւ պաղեստինցիներուն այնտեղ վերաբնակեցնելու մասին: Գիրքը կ'ուսումնասիրէ այս տարածաշրջանը վերստինսկող հակասական շահերը յատկապէս Թուրքիոյ, Ֆրանսայի եւ Բրիտանիոյ, որոնք մասնակցութիւն ունեցած են սահմաններ գծելու, շրջանի բնակչութեան միջեւ զինուած բախումներ հրահրելու՝ քիւրտերու, սուրիանիներու, ասորիներու եւ այլոց, որոնք կայք հաստատած էին այդտեղ: Աշխատութեան մէջ հարուստ եւ հետաքրքիր տեղեկութիւններ կան այդ շրջանի վրանաբնակ տեղաբնիկներու կայացման եւ Թուրքիոյ, Սուրիոյ եւ Իրաքի սահմաններու սահմանազատումէն ետք շրջանը թափանցող բազմաթիւ գաղթականներու հետեւանքով քաղաքաշինութեան զարգացման ու համայնքներու ձեւաւորումին. ինչպիսին Հասաբէն (Հասիչէն)³ եւ Գամիշլին⁴:

Եւ վերջապէս աշխատութեան մէջ տեղեկութիւններ կան Օսմանեան կայսրութեան եւ յատկապէս Քեմալական Թուրքիոյ կողմէ քրիստոնէաներուն, ի մասնաւորի հայերու, նկատմամբ վարած հակահայ քաղաքականութեան, որու հետեւանքով տեղի ունեցաւ Կիլիկիոյ եւ Արեւմտեան Հայաստանի⁵ վերապրող հայերու պար-

³ Հասիչէ կամ Հասաբէն՝ նահանգ (մարզ) Սուրիոյ հիւսիս-արեւելքը. վարչական կեդրոնը՝ Հասաբէ (Հասիչէ) քաղաքը:

⁴ Սուրիոյ քաղաքներէն է Գամիշլին: Ան կը գտնուի Սուրիա-Թուրքիա սահմանին եւ վարչականօրէն մաս կը կազմէ Ալ Հասաբէ նահանգին (մարզին):

⁵ Հեղինակը այս տարածքները կ'անուանէ Արեւելեան Անատոլի եւ վեց նահանգները կը նշէ: տե՛ս էջ 223:

բերաբար եւ զանգուածային գաղթը իրենց բնօրրանէն դէպի Սուրիոյ տարածք եւ այլուր⁶:

Գիրքի ներածականի մէջ սուրիացի հետազօտողը կը խօսի ժամանակակից Սուրիական ճեզիրէի «Կոզիի» հիմնադրման վերաբերեալ հարցերուն եւ անոր կապը պատմական Արաբական թերակղզի տարածաշրջանի հետ: Հեղինակը այս տարածաշրջանը պատմական տարբեր անուններով կը յիշատակէ «Էլ ճեզիրէ», «Երկիր Էլ ճեզիրէ», կամ «Եփրատեան Էլ ճեզիրէ»⁷: Էլ ճեզիրէն այն անուանումն էր, որ տուած էին իսլամ աշխարհագրագետներն ու հետազօտողները Տիգրիս եւ Եփրատ գետերու միջեւ գտնուող տարածքին, զոր հին յոյները անուանած էին «Մեզոպոթամիա կամ Միջագետք»: Սուրիանիներու կողմէ տարածքը անուանուած է «Սուրիա Պարսիսա», որ կը նշանակէ Արտաքին Սուրիա, իսկ Հռոմէացիներու կողմէ՝ «Առաջին Սուրիա»⁸:

Էլ ճեզիրէի միջին բաժինն է, որ այսօր կը զբաղեցնէ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան Բազգայի, Տէր Զօրի եւ Հասիչէի նահանգներու վարչական շրջանները:

Այս յօդուածով փորձած ենք գիրքի տասնեակ էջերէն դուրս բերել այն հատուածները, որոնք կ'առնչուին հայ ժողովուրդին եւ յատկապէս դէպի Սուրիա անոր գաղթի վերաբերեալ շահեկան վկայութիւններուն: Այդտեղ անդրադարձ կայ Թուրքիա-Սուրիա երկու սահմանակից երկիրներու մէջ ֆրանսացիներու եւ թուրքերու գրաման հակադիր ռազմավարութիւններու հետեւանքով հայ ժողովուրդի, յատկապէս 1920-ական թուականներէն ետք Կիլի-

⁶ Բարոտ Մուհամմադ, التكوّن التاريخي الحديث للجزيرة السورية، أسئلة وإشكاليات التحول من البدوة إلى العمران الحضري، الطبعة الأولى، بيروت، تشرين الثاني، 2013، صفحة 24-25.

(յետայսու՝ Պարուղ Մուհամմադ Ճամալ, Ալթաքաուն ալթարիխի պիհատիս լիլճեզիրէ, ալսուրիէ, ասիլա ուաիշքալիաթ ալթահատուլ մին ալպատունէ իլա ալուսման պիհատարի, ալթապաս ալուլա, Պէյրութ, Թիշրին ալաուալ (Հոկտեմբեր), 2013, էջ 24-25:

⁷ Բարոտ Մուհամմադ, التكوّن التاريخي الحديث للجزيرة السورية، مصدر نفسه، صفحة 24.

Պարուղ Մուհամմադ Ճամալ, Ալթաքաուն ալթարիխի պիհատիս լիլճեզիրէ, նշ. աշխ., էջ 24:

⁸ Նոյն տեղը:

կիսայն եւ Արեւմտեան Հայաստանէն՝ դէպի Թուրքիա, Սուրիա եւ Իրաք սահմանակից շրջաններու մէջ տեղակայուած հայոց գաղթի պատմութեան: Հեղինակի տեղեկութիւններու համաձայն, 1920-ական թուականներէն ետք եւ վերաբնակեցման ծրագիրի իրականացումով հիւսիս-արեւելեան Սուրիոյ վերին Ճեզիրէի շրջանին մէջ ֆրանսացիներու ճիգերով կը կառուցուին նոր քաղաքներ եւ գիւղեր, որոնց վարչական կեդրոնն էր Հասաքէն կամ Հասիչէն, իսկ տնտեսական կեդրոնը՝ Գամիշլի քաղաքը:

Հեղինակը կ'անդրադառնայ այն փաստին, թէ ինչպէս Թուրքիոյ հետ ֆրանսիացիները կը ցանկային այդ հսկայական, ջրառատ ու սակաւ բնակեցուած շրջանը վերածել «աննդամթերքի գամբիւղ եւ բամպակի արտադրութեան» տարածք, ու կը գիտակցէին տեղանքի առատ քարիւղի ներուժը: Այս նախադրեալներու համար կը խրախուսէին ասորիներու, հայերու, քիւրտերու եւ այլոց արտագաղթը թուրքական հողերէն: Կը նշէ նաեւ, որ մանդատային իշխանութեան (ֆրանսացիները – Ա.Ֆ.) կողմէ կարգախօսը, որ կը տարածէին ներգաղթեալներուն մէջ. «Արտադրէ՛ որքան կ'ուզես, տնկէ՛ ինչպէս կ'ուզես, տուն կառուցէ՛ ինչպէս կ'ուզես, եւ շարունակէ՛ հինգ տարի ու դուն թագաւոր կը դառնաս»⁹:

Ինչպէս նշեցինք, հայերու գաղթը դէպի այդ տարածքները, որպէս այդպիսին, աշխատութեան մէջ առանձին բաժինով չէ ներակայացուած, ընդհակառակը, տեղեկութիւնները սփռուած են գիրքի տարբեր էջերուն վրայ: Հայերու գաղթի վերաբերեալ առաւել համապարփակ տեղեկութիւն կը գտնենք չորրորդ գլխուն 2-3-4-րդ ենթամասերուն մէջ: Չորրորդ գլուխը, որ կը կրէ “Մեծագոյն գաղթերը, գաղթի 3-րդ ալիքը (1925–1939 թթ.)» խորագիրը, հեղինակը հայոց գաղթը դէպի Սուրիա կը ներկայացնէ երեք հանգրուաններով.

ա-1915-1916թթ.: Հեղինակը 1915–1916 թթ. գաղթը կ'անուանէ «ներքին գաղթ-ներգաղթ» հիմնատրելով, որ այն տեղի ունեցած է օսմանեան կայսրութեան գահակալութեան հոգեվարքի օրերուն եւ վերջիններուն կողմէ կազմակերպուած բռնագաղթը, քրիստոնէաներու ի մասնատրի հայերու, իրենց հայրենիքէն, եօթ վիլայէթներ-

⁹ Նոյնը, էջ 325:

րէն, դէպի այլ վիլայէթներ տարհանելու նպատակ ունէր: «Բռնագաղթը վերածուեցաւ կոտորածի իրենց (հայերուն – Ա.Ֆ.) դէմ (1915–1916 թթ.), յատկապէս Տիարպէթի մէջ, ուր հայերու բնաջնջումը տեւեց եօթ ամիս (Ապրիլէն Հոկտեմբեր 1915թ.)»¹⁰: Հեղինակը կը նշէ, որ բռնագաղթը պայմանաւորուած էր 1915թ.-ի ծագած Ա. Աշխարհամարտով: «1915թ.-էն սկսեալ հայ գաղթականներու իրարայաջորդ կարաւանները կը հասնէին Հալէպ. իւրաքանչիւր կարաւան կը հաշուէր տասնեակ հազարաւոր: Օրուան կառավարութիւնը զանոնք կը փոխադրէ տարբեր ուղղութիւններ՝ Համա եւ շրջակայքը, Տէր Զօր եւ Ճեզիրէի շրջանը»¹¹: “Տեղափոխման ճանապարհին շատերը մահացան քաղցէն, ծարաւէն, տապէն, ցուրտէն, եւ տարափոխիկ հիւանդութենէն»: Անոնք Հալէպ կը հասնէին մերկ, ոտաբոյսիկ, ոչ մէկը կրնար փախչիլ անօթութեան եւ ցուրտի ճիրաններէն բացի անոնցմէ, որոնք ամուր «կառուցուածքով օժտուած էին»¹²: Գաղթականները տեղ կը հասնէին որպէս ուրուականներ, առանց հոգիի¹³: Անոնք մեծ մասամբ կու գային Տիարպէթիէն, Վանէն, Պիթիսէն, Էրզրումէն, Սվազէն, եւ Խարբերդէն¹⁴: Վերոյիշեալ շրջաններէն դէպի Սուրիոյ ափերը հեռացուած կարաւաններու շարքը վերջ կը գտնէր հատուելով երկուքի Սուրիական Մեծ Ճեզիրէի տարածքին.

ա- հիւսիսը՝ Ռաս ուլ Այն,

բ- իսկ հարաւը՝ Տէր Զօր, ուր մեծ թիւով գաղթականներ կեդրոնացած էին: Հեղինակը կը նշէ, որ Ռաս ուլ Այնէն գնացքով կը փոխադրուէին դէպի Հալէպ, Սուսուլ, Սինճար՝ սկիզբ առնելով Մծրիւնէն (Նիսիպիսէն). ասոնց թիւը կը հաշուէր շուրջ 150 հազար անձ:

Պարուդի փոխանցած տեղեկութիւններուն համաձայն, տուեալ ժամանակաշրջանին Տէր Զօրը ամենալաւ վայրն էր տեղահանուածներուն համար՝ Տէր Զօրի կառավարիչ Ալի Սաուատ Պէկի

¹⁰ Նոյնը, էջ 223:

¹¹ Նոյնը, էջ 224:

¹² Նոյնը:

¹³ Նոյնը:

¹⁴ Նոյնը, էջ 223:

շնորհիւ, կը գրէ հեղինակը, ուր տեղահանուածներուն ապահովու-
ած էին խաղաղ պայմաններ: Կառավարիչը չորս ամսուան ըն-
թացքին կը պահպանէ տեղահանուածները, իրիստ պատիժ կը
սահմանէ անապատի արաբ քոչուորներուն, որոնք կը յարձակէին
հայերուն վրայ: Գաղթականները կը ստանային նիւթական օգնու-
թիւն եւ դուրսէն նամակաբերի ճամբով ծրարներ: Գաղթականնե-
րու բնակեցուած բաժինին մէջ Տէր Զօրի կառավարիչը կը կառուցէ
զինուորական հիւանդանոց, որ նախագծուած էր հայ ճարտարա-
պետներու եւ կառուցողապատողներու կողմէ: Այդ հաւաքավայրը
կ'աշխուժանայ եւ կը դառնայ թաղամաս, ուր կը կառուցուին փու-
ռեր եւ փոքր շուկայ, հոն իրենց ներդնումը կ'ունենային հմուտ աշ-
խատողներ: Այդ թաղամասը, հեղինակի վկայութեամբ, հայերը
կ'անուանեն Սաուատիէ (Մեութիւն) ի պատիւ Ալի Սաուատ պե-
կին¹⁵:

բ- Հայերու երկրորդ գաղթը (1922-1924թթ.): Կիլիկիան, Ա. աշ-
խարհամարտէն ետք կը գրաւուի ֆրանսական իշխանութեան կող-
մէ եւ այնտեղ կը հաստատուին մեծ թիւով հայեր, վերապրող հա-
յեր, որոնց մեծամասնութիւնը Կիլիկիայէն էր. նոր կեանք մը ծայր
կ'առնէ, որ կարճ կը տեւէ: Յետագային թուրք-ֆրանսական համա-
ձայնութեան որպէս հետեւանք ֆրանսացիները կ'որոշեն տարած-
քը զիջիլ Թուրքիոյ (խօսքը Անգարային առաջին համաձայնագրի
մասին է 1921 թ. Նոյեմբերին)¹⁶: Քաղաքական նոր իրադրութեամբ
պայմանաւորուած հայերը եւ Սուրիանները կ'որոշեն «քեմալա-
կաններու ողորմութեան» ձգել Կիլիկիոյ եւ թրքական վերին Ճեզի-
րէի տարածքը, այսինքն՝ Մարաշը, Ուրֆան, Մարտինը, Սղերդը,
Քիլիսը եւ Այնթապը¹⁷ ու զանգուածաբար դուրս գալ, նախքան
թրքական տարրի մուտքը այնտեղ:

Այսպէս սկիզբ կ'առնէ երկրորդ գաղթը դէպի Սուրիա: Գաղթա-
կաններու մէկ հատուածը կ'ուղղուի Սուրիոյ ներքին քաղաքները,
իսկ միւս մասը դէպի Ամերիկա կամ Լիբանան:

¹⁵ Նոյնը, էջ 224:

¹⁶ Նոյնը, էջ 225:

¹⁷ Նոյնը, էջ 225:

Հեղինակին փոխանցած տուեալներուն համաձայն 1921 թ.
Դեկտեմբերէն սկսեալ, Ֆրանսայի կողմէ Կիլիկիոյ պարպումով,
միայն Հալէպ քաղաք հասնող հայ գաղթականներու թիւը եղած է
30.000 հազար, որուն յաջորդած է 15.000 հայ եւս: Իսկ 1923 թ. -ի կէ-
սերը ապաստան գտած են 3000 գաղթականները, որուն մէկ երրոր-
դը յոյներ եղած են¹⁸:

1923 թ., Լոզանի պայմանագրի կնքումէն եւ հանրապետական
Թուրքիոյ ստեղծումէն ետք, «շոգիացաւ» Թուրքիոյ իրաւական
պարտաւորութիւնը փոքրամասնութիւններուն նկատմամբ, ուժե-
ղացաւ թրքացման քաղաքականութիւնը, որ պատճառ դարձաւ
գաղթի նոր ալիքի մը Թուրքիայէն դէպի «ֆրանսական» Սուրիա¹⁹,
կը գրէ հեղինակը: Այս բախտորոշ պիտի ըլլար Թուրքիոյ հանրա-
պետութեան մէջ ապրող փոքրամասնութիւններուն համար²⁰,
որոնց կարգին՝ հայերուն: 1924-1925թթ. Յունուար գաղթականնե-
րու թիւը կը հաշուէր 75.000 հոգի²¹:

Հայերու եւ Ասորիներու գաղթը դէպի Սուրիա, սկզբնական
շրջանին լուրջ խնդիրներ կ'առաջացնէ, ապաստարանի, սնունդի,
աշխատանքի եւ այլ անհրաժեշտ կարիքներու վերաբերեալ: 29
Մարտ 1924թ. -ին Սալիմ Ազար Ճըրճոս, Ճամիլ Պաշիրին յղած նա-
մակով կը յայտնէ, որ դէպի Հալէպ նոր կարաւանի կը սպասեն: Ան
կը փոխանցէ, որ 1924թ. -ի Հալէպ հասնող կարաւանը տեղական

¹⁸ Նոյնը, էջ 225:

¹⁹ Գաղթի ալիքին միացան Ուրֆայի ատորներու 3 կարաւանները, շուրջ 3000
մարդ. վերջին կարաւանը հասած է 1924 թ. -ի Մարտ ամսուն: Սակայն
հեղինակը կը նշէ, որ Ֆրանսացի գերագոյն յանձնակատար գնդապետ Մաքսիմ
Վէլկանի տեղեկագրիին մէջ, ուղղուած Ֆրանսայի Արտգործնախարարութեան,
գաղթականներու թուապատկեր 1924 թ. -ի Մարտէն Ապրիլ 6000 գաղթական
Ուրֆայէն եւ 5000 գաղթական Տիարպիլիւն եւ շրջակայքէն: Տե՛ս Պարոտ
Մուհամմէտ Ճամալ, Ալթաքաուն ալթարիիսի ալիատիս լիճեզիրէ պլսուրիէ, նշ.
աշխ., էջ 186-187:

²⁰ Հայոց Պատմություն, հատոր IV, գիրք առաջին, նորագոյն ժամանակաշրջան
(1918-1945 թթ.). Երևան 2000, էջ 648: Տե՛ս նաեւ Պարոտ **Մուհամմէտ Ճամալ**,
Ալթաքաուն ալթարիիսի ալիատիս լիճեզիրէ պլսուրիէ, նշ. աշխ., էջ 186:

²¹ Պարոտ **Մուհամմէտ Ճամալ**, նշ. աշխ., էջ 225:

իշխանության կողմ կը տեղադրուի Հալեպի Պաղտատ կայարանի մօտակայքը՝ փայտեայ հիդրաաններու մէջ: Հեղինակը այս բաժինի մէջ կը նշէ կարեւոր մէկ այլ փաստ, ըստ որուն, ֆրանսացիները օգտուելով գաղթականներու անմխիթար վիճակէն, 57 առաքելական ընտանիք, առանց անոնց իմացութեան կը գրանցէ սուրիան կաթողիկ համայնքի տոմարին մէջ, ինչ որ յետագային լուրջ խնդիրներու պատճառ կը դառնայ Առաջնորդարանի եւ Մանդատի իշխանութեան միջեւ²²:

Այնուհետեւ անբնարար գաղթակայաններու եւ բնակելի տուներու պակասը պիտի սրէր տեղացիներու եւ գաղթականներու իրավիճակը, յատկապէս Հալեպ քաղաքի մէջ. առաւել կար այլ խնդիր մը եւս: Օտարականները ձեռնածալ չմնալով կը փորձէին աշխատանք ունենլ իրենց օրապահիկը ապահովելու եւ բեռ չդառնալու տեղացիներու վրայ. այս իսկ պատճառով անոնք աշխատանքի կը բխմէին եւ տեղացիի կողմէ շատ քիչերու վիճակուած էր գործի աւգահովութիւնը: Հեղինակը շարունակելով, սակայն, կը նշէ, որ Բօլեւ տեղացիները դժգոհ էին գաղթականներու ներկայութենէն. բայց եւ այնպէս յետագային շնորհիւ անոնց աշխատասիրութեան եւ վաստակաշատ արհեստարուներ ըլլալուն՝ ներգաղթեալները կը նպաստեն նոր արհեստներու ներմուծման, երկրի տնտեսութեան զարգացման, քաղաքաշինութեան աշխատանքին ոչ միայն Հալեպի, այլ ողջ Սուրիոյ քաղաքներուն մէջ: Քննարկուող ժամանակաշրջանին էր, որ Հալեպի մէջ սկիզբ կ'առնէ բնակելի թաղամասերու կառուցումը, Ալ Մէյտանի (Նոր գիւղ), Պուպան փաշայի, Հէլլիքի, Տաուտիէի եւ Էշրէֆիքէ շրջանը, բայց հայերը մեծ մասամբ կը նախընտրէին կայք հաստատել Նոր Գիւղ եւ Պուսթան փաշայ թաղամասերուն մէջ, կը գրէ հեղինակը: Քրիստոնեաներու մեծաթիւ գաղթով Հալեպի բնակչութեան թիւը 1925թ.-ին կը հաշուէր 59.000 մարդ, մինչդեռ մահմետականներու թիւը քաղաքին մէջ շուրջ 4.000 էր²³: Գաղթական հայերու շնորհիւ Սուրիոյ տարբեր շրջաններուն մէջ կը կառուցուին գիւղական բնակավայ-

րներ (կամ գիւղաքաղաքներ), ինչպէս Աֆրին եւ Ազէզ գիւղաքաղաքները: Սուրիա-Թուրքիա սահմանին Տեր Զօրի ինքնավար շրջանի բնակչութիւնը աճ կ'արձանագրէ շուրջ 2000 հոգի²⁴: Քիլիսի հայերը կ'ուղղուին դէպի Ազէզ եւ Աֆրին, որոնցմէ ետք՝ քիւրտ գաղթականները: 1933 թ.-ին հայերը Աֆրինի բնակչութեան /800 բնակիչի/ մէկ երրորդը կը կազմէին²⁵:

Պէտք է արձանագրենք, որ աշխատութեան հեղինակը, ուսումնասիրելով տարբեր աղբիւրներ Հալեպ գաղթող հայերու եւ թիւի վերաբերեալ, կը նկատէ իրար հակասող թուապատկերներ: Օրինակ, Պարուդի կը գրէ, որ Ապտ Էլ Բահման Համիտա 1919 թուականին դէպի Հալեպ գաղթող հայերու թիւը կը նշէ 100 հազար, որմէ 1925 թ.-ին մնացած էին միայն կէսը. նոյն հեղինակը այլ տեղ կը նշէ, որ Հալեպի մէջ 1925թ.-ին կար 75.000 գաղթական²⁶:

Այս բաժինով հեղինակը կ'անդրադառնայ նաեւ հայ գաղթականներու Սուրիական հպատակութիւն ստանալու մանրամասնութեանց²⁷ եւ այլն:

Գ- Երրորդ եւ մեծ գաղթը տեղի ունեցած է 1925-1939 թթ. (1940թ.), ըստ հեղինակին, դէպի Վերին Ճեզիրէ կոչուած տարածք. Հեղինակը իր մենագրութեան մէջ առաւել տեղ կը յատկացնէ դէպի Սուրիա երրորդ եւ մեծագոյն գաղթի վերաբերեալ: Հեղինակի խօսքով այն բոլոր շրջանները, ուրկէ սկիզբ առաւ երրորդ գաղթի ալիքը Սուրիացիներու համար պատմականօրէն Սուրիական հողեր են, որոնք տնտեսական, քաղաքական, ընկերային եւ ժողովրդագրական բոլոր առումներով կապուած էին հիւսիսային Սուրիոյ, յատկապէս «Օմանեան Հալեպ վիլայէթին», որ 19-րդ դարուն վերջաւորութեան վերածուած էր «մեծ մթերանոցի» Վերին Ճեզիրէի, Տիարպէթիի, Անատոլիոյ մէկ բաժինի եւ ինչպէս նաեւ անապատի

²⁴ Նոյնը. էջ 188:

²⁵ Նոյնը:

²⁶ Նոյնը. էջ 186:

²⁷ Նոյնը. էջ 189:

²² Նոյնը. էջ 187:

²³ Նոյնը. էջ 187:

արարներու (պետեուհներու) եւ քիւրտերու անհրաժեշտ կարիքները բաւարարելու²⁸։

1920-ական թուականներու կէտերուն Մուսթաֆա Քեմալ սկսած էր իր ծրագիրի իրագործման, որն էր Արեւմտեան Հայաստանի (հեղինակը կը գործածէ «Թուրքիոյ Արեւելեան նահանգներ» – Ա.Ֆ.), մէջ տեղաւորել մեծաթիւ թուրքեր եւ քրտական հարցը լուծել իր ըմբռնած ձեռով։ Թուրքական իշխանութիւնները հայ եւ քիւրտ յետագայ համագործակցութենէ մտահոգուած՝ քսանական թուականներու վերջաւորութեան քայլեր ձեռնարկելով կը յաջողին տկարացնել այդ տարածքներուն վրայ ուժ եւ հեղինակութիւն ունեցող քիւրտ մեծամեծերու ազդեցութիւնը։ Միաժամանակ իշխանութիւններու կողմէ փոքրաթիւ հայ հասարակութեան ներկայութիւնը իր հողերուն վրայ կը դիտուէր որպէս խոչընդոտ՝ «լքեալ գոյքերու իրացման տեսակետէ»։ Ուստի մարդկային կեանք սպառնացող այս պայմանագիրը ահագանգ էր հայկական գիւղերու մէջ տակաւին գոյատեւող հայերուն տնօրինելու՝ կեանքը շարունակելու եւ չջարունակելու խնդիրը։

Պատմութիւնը կը վկայէ, որ 1920-ական թուականներու սկիզբը Վերին Ճեզիրէի մէջ թուրք-սուրիական սահմանագիծի ճշդումը հակամարտութեան նիւթ դարձած էր Թուրքիոյ եւ Ֆրանսական հոգատար իշխանութիւններու միջեւ, որու հետեւանքով ալ այդ շրջանի մէջ կը տիրէր անկայուն վիճակ։ Ֆրանսական իշխանութիւնները կը միտէին այս տարածքին մէջ վերաբնակեցնել միատարր բնակչութիւն, որուն մէջ կը խմբուէին այն ժամանակ Թուրքիոյ եւ Իրաքի սահմաններուն մէջ ապրող սուրիանիները (ուղղափառ եւ կաթողիկէ), ասորիները (ծանօթ նաեւ նեստորականներ անունով), քաղղեացիները։ Ինչպէս կը նկատենք, այստեղ հայերու մասին ոչ մէկ խօսք։ Ծրագրի յետագայ զարգացումին որպէս արդիւնք ֆրանսացիներու գաղութատիրական յայտագիրին մէջ ընդգրկուեցան ազգային եւ կրօնական այլ խումբեր, որոնց շարքին նաեւ հայերը։ Պէտք է ըսել, որ ֆրանսական իշխանութեան կողմէ Խապուր գետի երկու ափերուն մեծամասնութեամբ քրիստոնէաներով բնակեցու-

²⁸ Նոյնը, էջ 226։

մը կը միտէր իշխանութեան դիրքերը հզօրացնել տարածաշրջանին մէջ, գիւղատնտեսութեան ճանապարհով վերարժեւորել այդ վայրերու բերրի հողը։ Այլ խօսքով, Վերին Ճեզիրէի բնակեցումի եւ զարգացումի ֆրանսական իշխանութիւններու ծրագիրներուն միախառնուած էին տնտեսական եւ ռազմական նպատակներ։ 1922 թ. -ի Մարտին ֆրանսական բանակային միաւոր մը առաջին անգամ մուտք կը գործէ այս տարածք եւ հակառակ տեղական ցեղախումբերու ընդդիմութեան, կը յաջողին գրաւել Հասիչէ կամ Հասաքէ նախկին զօրակայանը, որուն ակերակներուն վրայ կը հիմնուի ֆրանսական զօրակայանը։ Ջօրակայանի շուրջ կը կառուցուին բնակարաններ, որով 1922 թ. -ի վերջաւորութեան Մարտինէն այստեղ կը հաստատուի սուրիանիներէ եւ հայերէ բաղկացած 50 ընտանիք։ Հետագօտողը կը գրէ, որ Մարտինի հայերու մեծ մասը կաթոլիկ էր եւ կը խօսէր արաբերէն²⁹։

1922–1926 թթ. ինկած ժամանակահատուածին Գամիշլին ընդգրկող սահմանային գօտին վիճելի տարածք էր Թուրքիոյ հետ։ Վերջապէս 3 Օգոստոս 1926-ին Ֆրանսական բանակները մուտք կը գործեն Վերին Ճեզիրէի տարածք եւ Հասաքէէն ետք կը հիմնուի երկրորդ կարեւոր քաղաքային կեդրոնը՝ Գամիշլին։ Ֆրանսական զօրակայանը կը հիմնուի Ճաղճաղ գետի ափին՝ 1200 մէթր հեռաւորութեան վրայ թրքական Նիսիպին (պատմական Մծբին) քաղաքէն։

1925 թ. -ի զարնան բռնկած քրտական շարժումը, աշնան պիտի վերածուէր ապստամբութեան։ «Նոր» Թուրքիան ձեռնարկած էր քիւրտերու մէկ մասի տեղահանութեան։ Ամենուրեք քիւրտերը ենթարկուած էին տառապանքներու եւ սպաննութեան։ 1925 թ. -ին քիւրտերու եւ սուրիանիներու գաղթի այլիք կը հզօրանայ դէպի Սուրիական Ճեզիրէ։ Տիրող կացութենէն զերծ չմնաց այդ շրջաններու մէջ բնակուող հայ ժողովուրդը։

1927 թ. -էն սկսեալ տեղ-տեղ զանգուածային, բայց մեծ մասով առանձին ընտանիքներով դէպի Միջագետք, յատկապէս Գամիշլիի

²⁹ Նոյնը, էջ 150-151։

շրջանը կը գաղթեն Տիգրանակերտի³⁰ եւ Բաղէշի նահանգներու մնացած հայերը, որոնց շարքին մեծ թիւ կը ներկայացնէին պշե-րիկցիները: Գաղթողները մինչեւ սուրիական սահման հասնիլը կ'ենթարկուէին անպատում տանջանքներու: 1927 թ. -ին սկիզբ առած, յատկապէս Պշերիկի (քրտախօս) հայերու, գաղթը դէպի Մուրիա, առաւել զանգուածային բնոյթ պիտի ստանար 1929 թ. -ի աշնան: Գիրքին մէջ ակնարկ կայ, թէ Գամիշլիի մէջ կը ստեղծուի քրտախօս հայերու յատուկ թաղամաս: «Անոնք կը դաւանէին հայ առաքելական եկեղեցոյ. բայց անոնց Աստուածաշունչը գրուած էր հայաստաո քրտերէնով»: Հայկական ազգային կուսակցութիւնները, ամէն ճիգ ի գործ կը դնէին, որպէսզի Պշերիկցի հայերը հեռացնէին քրտական մշակոյթի ազդեցութենէն, կը նշէ հեղինակը³¹: 1927 թ. սկսեալ Պշերիկի շրջանի հայութիւնը բռնագաղթի ենթարկուելով հետիոտն կ'ուղղուի դէպի Գամիշլի: Ճամբան չէթէներէն կողոպտուելով կ'անցնի Տարսուսեան լեռները ու կայք կը հաստատէ Գամիշլի եւ շրջակայքի ճահճուտ վայրերը, ճաղճաղ գետի ափերուն, պատմական Մծքին քաղաքի աւերակներուն շունչին տակ:

1929 թ. Հոկտեմբերէն Նոյեմբեր ամիսներուն Մուրիա կ'ապաստանին, բացի Պշերիկէն, Արաբկիրի, Բալուի եւ Խարբերդի շրջաններէն տարագրուած հայերը. «Խարբերդէն եւ Բալուէն եկող գաղթականները երկաթուղիով կը հասնէին Մուրիոյ սահմանագլուխը, իսկ Տիարպէքիի շրջանի հայերը հարկադրուած էին քալելով հասնիլ սահմանագլուխ: Անոնք ընդհանրապէս անօթի եւ կիսամերկ վիճակով կը հասնէին սահմանագլուխ, ու պատսպարան չգտնելով ճամբաները կը պառկէին աշնան ցուրտ եղանակին»³²: Մուրիանիներու, ասորիներու, Նիսիպիի հրեաներու եւ մանաւանդ հայերու զանգուածային գաղթի իբրեւ հետեւանք, 1928 թ. -էն

³⁰ 1923 թ. -ի տուեալներով Տիգրանակերտի մէջ 200 տուն հայութիւն գոյութիւն ունեցած է մեծ մասամբ արիւստաւորներ եւ վաճառականներ: Մղերդէն ալ մաս մը հայեր եկած եւ հաստատուած են այնտեղ: Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, 25-րդ տարի, թիւ 3351, 9 Մայիս 1923, Պոսթըն, էջ 2:

³¹ Տե՛ս, **Պարույ Մուսանկեռ Ճամալ**, նշ. աշխ., էջ 240:

³² **Մարկեան Զաւէն**, Թուրքիոյ ներքին գաւառներու հայոց պարտադիր արտագաղթը (1929-1930), «Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. Գ.», 1972, էջ 106:

սկսեալ Տիարպէքիի, Էրզրումի, Մալաթիոյ, Մուշի, Խարբերդի, Պրուսայի եւ Սվազի ծխական համայնքները մեծաւ մասամբ դատարկուած էին հայ հոգեւորականները, կը գրէ հետազոտողը (կաթոլիկ եպիսկոպոսներէ), ոչ ալ տեղի ունեցած էր Մարտինի Եպիսկոպոսի ձեռադրութիւնը, Պարույի շարունակելով կը նշէ, որ 1920-ական թուականներու վերջը, արդէն Նիսիպիի գրեթէ դատարկուած էր իր բնակիչներէ՝ դէպի նորաստեղծ Գամիշլի քաղաք գաղթի պատճառով:

Արդէն 1930 թ. Հասիչէի մէջ կար 200 տուն հայ (100 հայ առաքելական, 100 հայ կաթողիկէ), Գամիշլիի մէջ՝ 400 հայ առաքելական եւ 30 հայ կաթողիկէ, Գարամանիէի մէջ՝ 15 տուն առաքելական եւ կաթողիկէ հայեր, Ամուտայի մէջ՝ 40-50 տուն հայեր եւ 20-ը կաթողիկէ հայեր:

1929-ի կեսերուն, արդէն Տէրպետիէի մէջ կար 200 տուն, ուր կ'սպրէին քիւրտերը, ասորիները եւ հայերը³³:

Երրորդ մեծ գաղթի մաս կը կազմէին

- 1- քաղաքային բնակչութիւնը, որու տնտեսութիւնը հիմնուած էր առեւտուրի եւ այլ ծառայութիւններու.
- 2- եւ լեռնային գիւղական համայնքները, որոնց տնտեսութիւնը հիմնուած էր գիւղատնտեսութեան եւ հովուութեան վրայ³⁴:

Երրորդ մեծ գաղթի բաժինով հեղինակը կ'անդրադառնայ Ալեքսանդրիէի սանճագի հարցին նաեւ: Կը շեշտէ թուրքերու եւ հովանաւորող պետութեան ընդհանուր ձգտումները՝ շարունակ խռովութիւններու մէջ պահել շրջանը եւ բնակչութիւնը մատնել անգործութեան ու թշուառութեան: Ան կը յայտնէ, որ Մանճագի արաբ-թուրք եւ ֆրանսական մրցակցութիւնը ճգնաժամային եւ վտանգաւոր կացութիւն ստեղծեր էր եւ խուճապի մատնած ժողովուրդը, որու հետեւանքով քրիստոնէայ ընտանիքները սկսած էին հեռանալ այդ շրջաններէն: Հեղինակը կը գրէ, որ 23 Յուլիս 1939թ. -

³³ Տե՛ս, **Պարույ Մուսանկեռ Ճամալ**, նշ. աշխ., էջ 362:

³⁴ **Պարույ Մուսանկեռ Ճամալ**, Ալթաքաուն ալթարիիսի ալիսալիս լիճեզիրէ ալսուրիէ, նշ. աշխ., էջ 227:

ին Ֆրանսական իշխանությունները շուրջ 14.000 հայ, զանգուածաբար կը փոխադրէր Պէյրուս, Հալէպ եւ Քեսապ³⁵:

Հեղինակը խօսելով հայերու գաղթի մասին դէպի Սուրիա, Լիբանան եւ դէպի այլ երկիրներ, 1919 թ. -էն 1939 թ. ինկած ժամանակահատուածին կը նշէ շուրջ 135, 000 հայ, որմէ երկու երրորդը բնակութիւն հաստատած է Սուրիոյ մէջ³⁶:

Հասաբէն որ վարչական այս շրջանի կեդրոնը կը համարուէր, կը բաղկանար չորս շրջաններէ՝ Շէտատիէ, Ռաս ուլ Այն, Ամուտա եւ Գրբո (յետագային Գամիշլի): 1930 թուականին Գամիշլին եւ Հասաբէն կը բաժնուին Տէր Զօրի ինքնավար շրջանէն եւ վարչականօրէն կը միաւորուին եւ հանդէս կու գան որպէս «Եփրատի առանձին շրջան»:

Դէպի այս շրջանները գաղթը կը շարունակուի յետագայ 1942-1943 թթ.: Որպէս վկայութիւն կը մէջքերեմ Հայոց Ճեզիրէի առաջնորդական փոխանորդ Տ. Խորէն Բարոյեանի (յետագային՝ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) 3- Դեկտեմբեր 1942 թ. -ի նամակը ուղղուած Բերիոյ թեմի Առաջնորդ Զարեհ ծայրագոյն վարդապետ Փայասլեանին (յետագային կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ): «Սօտաւորապէս երեք ամիսներէ ի վեր, Տիգրանակերտի եւ մասնաւորաբար Պշերիկի եւ շրջակայ գիւղերու Հայ ժողովուրդը սկսած է գաղթել դէպի Սուրիական հողամաս: Մեծամասնութիւնը քրտախօս հայեր են: Գաղթականները կը խոնուին Գամիշլիի մէջ: Յարոյ գաղթողներուն թիւը իմ հաշուով կը հասնի 300 ընտանիքի կամ 1300 անձի»³⁷: Կը թուէ այս շարժումին երեք շարժառիթները՝ 18-55 տարեկան տղամարդոց զինուորագրուելու պարագան, Անպաշտպան ծերունիներու, մանկամարդ կիներու եւ մանուկներու անպաշտպան ըլլալն ու Թուրքիոյ իրենց շրջաններու մէջ տիրող սոսկալի սովը: Առաջնորդը կ'աւելցնէ. «Հոս յիշեմ որ միայն հայերը չեն

³⁵ Պարուդ Մուհամմէտ Ճամալ, նշ. աշխ., էջ 267:

³⁶ Պարուդ Մուհամմէտ Ճամալ, Ալթաքսուն ալթարիխի ալիստիս լիճեզլիլ, ալսուրիէ, նշ. աշխ., էջ 268:

³⁷ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն Արխի Բերիոյ թեմի /յետայսու՝ ՄՏԿԿԱ ԲԹ/, հաւաքածոյ 3, ցուցակ 1, թղթ. 44, թերթ 34:

գաղթողները, այլ սուրիանիները, թօխլորքիները (այսինքն՝ մուլե-ժանոյ ասորիները) եւ մասնաւորաբար քիւրտերը: Համաձայն լատտեղեակ աղբիւրի մը, ցարդ գաղթող քիւրտերու թիւը կ'ենթադրուի 50 հազար»³⁸, որոնք գրկաբաց կ'ընդունուին Գամիշլիի շրջակայքը գտնուող 21 քրտախօս հայ գիւղերու բնակիչներու կողմէ»³⁹: Գաղթը կը շարունակուի: 1945 թ. -ի տուեալներով՝ Գամիշլիի շուրջ 32 քրտախօս հայ գիւղեր գոյութիւն ունէին⁴⁰:

Ամփոփելով, Այս շրջաններու մէջ յառաջացած հայկական լնակավայրերը պիտի վերածուէին համայնքներու: Քրիստոնէակներու եւ հայերու թիւի հետզհետէ ստուարացումով այնտեղ կը յառաջանան թեմեր, կը կառուցուին եկեղեցիներ, կրթարաններ, մշակութային կառոյցներ: 1942 թ. -ին հիմը կը դրուի «Վերին Ճեզիրէի Առաջնորդական փոխանորդութեան», ուր պիտի աշխուժանար նաեւ համայնքային կեանքը:

Հայ ներգաղթեալները մեծ դեր խաղացին երկիր ներմուծելով արհեստավարական մասնագիտութիւններ՝ մեքանիկ, մեքենայ եւ դարբինութիւն, ինչպէս նաեւ իրենց առևտուրի հմտութիւնները: Անոնց մէջ էին բժիշկներ, իրաւաբաններ եւ ղեղագործներ եւ այլն:

2011 թ. -ի Սուրիական պատերազմի բռնկումով, տարածաշրջանի անցեալի հարցերը անգամ մը եւս դրուեցան մեծ տերութիւններու եւ Թուրքիոյ քաղաքական սեղանին վրայ:

Գիրքը, որպէս սկզբնաղբիւր, գրեթէ ամբողջութեամբ կառուցուած է օտար աղբիւրներու (ֆրանսական, արաբական եւ օսմանական) գրականութեան եւ փաստաթուղթերու հիման վրայ: Աշխատութիւնը կը նպաստէ ինչպէս Սուրիոյ հայ համայնքի, այնպէս ալ այդ տարածաշրջանի հայ եւ քրիստոնէայ այլ համայնքներու քաղաքական, ընկերային, ժողովրդագրական, տնտեսական եւ այլ ոլորտներու պատմութեան ուսումնասիրութեան:

³⁸ ՄՏԿԿ ԱԲԹ., հ. 3, ց. 1, թղթ. 44, թերթ 34:

³⁹ ՄՏԿԿ ԱԲԹ., հ. 3, ց. 1, թղթ. 44, թերթ 34:

⁴⁰ ՄՏԿԿ ԱԲԹ., հ. 3, ց. 1, թղթ. 44, թերթ 76:

INFORMATION ABOUT THE MIGRATION OF ARMENIANS TO SYRIA IN "CONTEMPORARY HISTORY OF DEVELOPMENT OF SYRIAN JAZIRA" BY MOHAMMAD JAMAL BAROODY

Keywords: Mohammad Jamal Barood, Cilicia, Western Armenia, Syrian Jazeerah, migration of Armenians, Qamishly.

Syrian researcher Mohammad Jamal Baroody's monography in Arabic, is an all encompassing and monumental source for the events that happened in the Syrian region called Jazira, from the destruction of the Tatar conquests till the modern times. The work includes information about the Ottoman Empire and specially the policies adopted by the Kemalist Turkey towards Christians, specially Armenians. This resulted in the methodical and periodic migration of survivors from Cilicia and Western Armenia from their homeland towards Syria and elsewhere.

The migration of Armenians to these regions is not as such presented in a specific section. On the contrary, information is dispersed in different pages of the book.

More comprehensive information about the migration of Armenians is found in the 4th chapter titled "The greatest migrations, the third wave of migrations: 1925-1939" in the sections 2-4.

The author presents the Armenian migration to Syria in three stages: 1915-1916, 1920-1924 and 1925-1945.

ИНФОРМАЦИЯ О ПЕРЕСЕЛЕНИИ АРМЯН В СИРИЮ (1915-1945 ГГ.)
МУХАММАДА ДЖЕМАЛЯ ПАРУДА В "ИСТОРИИ ФОРМИРОВАНИЯ
СОВРЕМЕННОЙ СИРИЙСКОЙ ДЖАЗИРЫ"

Ключевые слова: Мухаммада Джемалю Паруда, Киликия, Западная Армения, сирийский Джезир, миграция армян, Гамшили.

Монография сирийского ученого Мухаммада Джемалю Паруда на арабском языке является всеобъемлющим монументальным источником о событиях, которые произошли в Сирии в регионе под названием Джезир, начиная с разрушений татарскими нашествиями до современной эпохи. В работе содержится информация о политике Османской империи и особенно кемалистской Турции в отношении христиан, в частности армян, в результате которой происходила регулярная и массовая миграция армян, проживающих в Киликии и Западной Армении, со своей родины в Сирию и другие места.

Миграция армян в исследовании не представлена отдельным разделом; наоборот, информация разбросана на разных страницах книги.

Более полную информацию о миграции армян мы находим в четвертой главе, озаглавленной «Величайшие миграции, 3-я волна миграции / 1925-1939 /» в подразделах 2, 3, 4.

Автор представляет миграцию армян в Сирию тремя этапами: 1915-1916 гг., 1920-1924 гг. и 1925-1945 гг.

ԵՎՐՈՊԱՑԻ ՈՒՂԵԳԻՐՆԵՐԸ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմնաբառեր. Վրաստան, Թիֆլիս, Կուր, եկեղեցի, համայնք, քահանա, կաթոլիկ:

Թիֆլիսը հայ-վրացական կապերի խոշոր կենտրոն է: Այստեղ են ապրել բազմաթիվ նշանավոր հայ գործիչներ և Հայաստանի պատմության շատ երևույթներ Թբիլիսիի հետ են կապված: Առաջինը Թիֆլիսի մասին գրել է Անանիա Շիրակացին, այնուհետև պատմիչներ Մովսես Կաղանկատվացին, Թովմա Արծրունին, Մխիթար Այրիվանեցին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշները¹: Ըստ արխիվայի վավերագրերի 1817թ. Թիֆլիսում հայ համայնքն ունեցել է 25 գործող հայկական եկեղեցի: Այն անփոփոխ էր մնացել մինչև Վրաստանի խորհրդայնացումը: 18-րդ դարում Թիֆլիսի 20 հազար բնակչից 14 հազարը եղել են հայեր, 500-ը կաթոլիկ հայեր, 2000-ը՝ վրացի և այլն: 19-րդ դարի սկզբում քաղաքի 2000 բնակելի տներից մոտ 1800-ը պատկանել են հայերին:

Կաֆայից Ուզուն-Հասանի երկիրը (իմա Պարսկաստան) մեկնած դեսպան Ամբրոսիոս Կոնտարինին Թավրիզից վերադառնալիս անցնում է Նախիջևանից Լոռի տանող ճանապարհով Թիֆլիս և պատմում է.

«Հուլիսի 12-ին, 1475թ. անցանք Տիգրիս (sic) անունով մի գետից, հասանք այս թագավորին պատկանող մի քաղաք՝ կոչված Թիֆլիս, գետեղված մի փոքր բլրի վրա՝ ամրոցով, որ շատ գորավոր է, ավելի բարձր բլրի վրա: Այս քաղաքը շատ մեծ լինելու համբավը ունի, բայց մեծ մասը քանդված է: Ինչ որ մնում է պարունակում է

¹ Այս մասին տե՛ս **Նաբանդյան Վ.** Թբիլիսին հայ մատենագիտության մեջ (սկզբից մինչև XVIII դարի վերջը), Երևան, 1958:

բազմաթիվ բնակչություն, որոնց մեջ շատ կաթոլիկներ կան: Այստեղ նույնպես հանդիպեցինք մի հայ կաթոլիկի, որի մոտ բնակեցինք»²:

Նույն դեսպանը 1475թ. սեպտեմբերին Սամեգրելոյից Քութալիս է գալիս, ապա շարունակում ճանապարհը և սեպտեմբերի 30-ին նորից հասնում Թիֆլիս:

«Այստեղ՝ ավելի մեծած քան կենդանի, իջևանեցինք մի հայ կաթոլիկ եկեղեցի. թե քահանան և թե ուրիշները անտարակույս շատ լավ ընդունեցին մեզ: Այս քահանան մի զավակ ուներ, որ մեր չար բախտից հիվանդացավ ժանտախտով, որ այդ տարվան ընթացքում տարածված էր այստեղ: ... Խորհուրդ տվին ինձ փոխադրել մի այլ տեղ: Մի տեղ, ուր գիշերները կովեր էն պահում. որքան կարելի էր մաքրելուց հետո, ինձ դրին [խոտի] վրա հանգստանալու՝ իմ շատ ծանր տկարության պատճառով: Քահանան թույլ չէր տալիս, որ Մաֆիոն [սպասավորը] այլևս մնա իր տանը, և որովհետև ուրիշ տեղ չկար, անհրաժեշտ էր նրան տեղավորել մի անկյուն, ուր որ էս էի գտնվում: Ստեփանոն սպասարկում էր նրան, բայց նա մեռավ: Ապա շատ խնդրանքից հետո ձեռք բերեցի մի ուրիշ ախոռ, ուր էս գետեղվեցի միևնույն կերպ...»³:

Ժան Շարդենը Թիֆլիսում գտնվել է 1672-1773թթ. (սեպտեմբեր-փետրվար) և հանգամանորեն ծանոթացել ու նկարագրել քաղաքը:

«Այդ քաղաքը՝ Տիգրիս⁴, Պարսաստանի ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է, թեև շատ մեծ չէ: Այն տեղակայված է լեռան ստորոտում, որին արևելքից ողողում է Կուր գետը: ... Վերադառնանք Թիֆլիս քաղաքին. այն ուներ բազմաթիվ եկեղեցիներ, որոնց թիվը հասնում էր 14-ի: Սա շատ է մի երկրի համար, որտեղ խիստ սատ-

² **Հակոբյան Հ.** Ուղեգրություններ. հատ. Ա. ԺԳ-ԺԶ դար (1253-1582). Երևան, 1932, էջ 244-245, տե՛ս նաև **Մուրադյան Պ.** Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները. Ս. Էջմիածին, 2009, էջ 307:

³ **Հակոբյան Հ.** նշվ. աշխ. էջ 250:

⁴ Ավելի ճիշտ Թիֆլիս: Այս քաղաքը վրացերենով անվանվում է Տիֆլիս քաղաքի (տար քաղաք) կամ պարզապես Թբիլիս տաք աղբյուրների պատճառով:

վածապաշտ չեն: Վեցը պատկանում և ծառայում է վրացիներին, մյուսները պատկանում են հայերին: ... Հայկական գլխավոր եկեղեցիներն են՝ Փաշա-վանքը (նշանակում է փաշայի վանք): Թիֆլիսի հայ եպիսկոպոսը նստում է այս վանքում: Հայերը պատմում են, որ այդպես են կոչում, որովհետև այն կառուցել է Թուրքիայից փախած մի փաշա, որն այս քաղաքում քրիստոնեություն էր ընդունել, Սուրբ Նշանը (կիրառվում է Սուրբ Խաչ ձևը), Բեթլեհեն կամ Բեթղեհեն, Նորաշեն կամ Նոր շինություն և Մողնի: Մողնին հայկական մի գյուղի անվանումն է Երևանի մոտակայքում, ուր, ինչպես հավատացնում են, երկար տարիներ պահվում էր Սուրբ Գևորգի գանգը: Սակայն, քանի որ այդ գանգի մասունքները հետագայում տեղափոխվել են այս եկեղեցին, նրան տրվել է այն վայրի անունը, որտեղից այն բերվել է»⁵:

Ֆրանսիացի կենսաբան Ժոզեֆ-Պիտտոն Թուրնըֆորը որը Լյուդովիկոս ԺԴ-ի հորդորով 1700-1702 թթ. ճամփորդել է Արևելյան երկրներ պարտավորություն ունենալով տեղեկություններ հայթայթել այցելած երկրների մասին: Նա Կովկասի ֆլորայի առաջին ուսումնասիրողներից մեկն է: Թիֆլիսում եղել է 1700թ. հուլիսի 21-26, ապա Դիլիջանով մեկնել էջմիածին: Հանգամանալի են Թիֆլիսի և Երևանի նկարագրությունները այլևայլ պատկերագրողումներով: Աշխատությունը լույս է տեսել նախ ֆրանսերեն (1717թ.), ապա ունեցել է մի քանի թարգմանությամբ: Օգտվել է Շարդենի գրառումներից:

«Թիֆլիսի գլխավոր առևտուրը մորթեղենն է, որ այստեղից գնում է Պարսկաստան կամ Էրզրումի վրայով Կոստանդնուպոլիս, այդպես էլ Շամախուց ու Գանձակից, բայց ծայրահեղ բարձր սուրքի պատճառով, որ պետք է լինում այստեղ վճարել, ոչ Թիֆլիսի ան-

⁵ Մուրադյան Պ., Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները. Ս. Էջմիածին. 2009, էջ 310-313: Հեղինակը օգտվել է Լ. Լանգլեի խմբագրությամբ լույս տեսած հրատարակությունից (Voyages du chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, par. L. Langles, t. 2. Paris 1811, pp. 73-79): Այս հատվածի ռուսերեն թարգմանությունը կարելի է տեսնել նաև պրոֆեսորներ Մ. Պոլինկոտովի և Գ. Նաթաձեի «Старый Тифлис в известиях современников» գրքում. (Тифлис, 1929, стр. 14-25):

ցումով Հայերը այն գնում են տեղերում և ուղարկում Զմյուռնիա և Միջերկրականի այլ նավահանգիստներ, որտեղից հասնում է Ֆրանսիա: Տարեկան երկու հազարից ավելի ուղտերի քարավան է ուղարկվում Թիֆլիսից ու մնացյալ Վրաստանից Էրզրումի բոխ⁶ կոչվող արմտիքով: Մենք առիթ բաց չենք թողնում անցնելու Թիֆլիսի բազարով, ուր ամենայն տեսակ միրգ կա, հատկապես սալոր ու տանձ: ... Թիֆլիսում կա շուր 20,000 բնակիչ՝ 14,000 հայ, 3000 մանևեղական, 2000 վրացի և 500 հռոմեական-կաթոլիկ: Այս վերջիններս դարձի բերված հայեր են, իրենց մնացած հայրենակիցների երզվյալ թշնամիներ: Բտալացի կապուչինները ոչ մի կերպ չեն կարողանում հաշտեցնել: Մենք իջևանեցինք այդ բարի հայրերի մոտ, որոնց Վրաստանում շատ են սիրում. նրանք այստեղ թե հոգու, թե մարմնի բժիշկներ են: Նրանք շատ աշխատանք ունեն, որովհետև ընդամենը երեքն են՝ երկու արեղա և մեկ մոնթ: ... Թիֆլիսում հունական դավանության 5 եկեղեցի կա, 4-ը քաղաքում, մեկը՝ արվարձանում, հայկական 7, ...»⁷:

Հաջորդ ուղեգիրը՝ Յոհաննես Գյուլդենշտեդտը ծնվել է 1745 թ. Ռիգայում: Նա 22 տարեկան հասակում արդեն գիտության դոկտոր էր: 1768-1775 թթ. Կայսերական ակադեմիայի կազմակերպած գիտական արշավախմբերի ընթացքում նա հանգամանորեն ուսումնասիրում էր Կովկասը իր աշխարագրությամբ: 1771 թ. սեպտեմբերին ուղեկիցների հետ գալիս է Վրաստան, Մցխեթում Հերակլ II-ի հետ հանդիպելուց հետո, նոյեմբերի 14-ին ժամանում է Թիֆլիս, ուր մնում է մինչև 1772 թ. փետրվար ամիսը: Յոհ. Գուլդենշտեդտի արշավախմբային գրառումները՝ «Reisen durch Russland und im Caucasischen Geburge» երկհատոր լույս է տեսել P.-S. Pallas-ի խմբագրությամբ 1787 և 1791 թթ. Ս. Պետերբուրգում: 1962 թ. «Օտար աղբյուրները Վրաստանի մասին» մատենաշարով Թբիլիսիում լույս է տեսել հեղինակի «Գյուլդենշտեդտի ճանապարհորդությունը Վրաստանում» աշխատության առաջին հատորը՝ Գ. Գե-

⁶ Գործածվում է կտորեղեն ներկելու համար:

⁷ Полшесктов М., Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу. Тифлис, 1935, с. 186-187.

լաշվիլու պատրաստած գերմաներեն բնագրով, վրացերեն թարգմանությամբ ու ուսումնասիրությամբ, որին երկու տարի անց հետևեց երկրորդ հատորը՝ նույն աշխատասիրողի հրատարակությամբ:

«Մինչև Թիֆլիս թողնելս՝ ձեզ եմ առաջարկում այս տեղանքի համառոտ նկարագրությունը: Թիֆլիսը պարսկական և եվրոպական տեսքի մայրաքաղաք ու Քարթլիի թագավորի նստոցն է: Նրան վրացիները կոչում են Թբիլիս քաղաք, այսինքն Տաք քաղաք, քանզի նրա մերձակայքում տաք աղբյուրներ կան: ... Այս ոչ այնքան մեծ տարածքում ապրում է շուրջ 20,000 բնակիչ: Տները շինված են աղյուսով ու սալերով, կավախառն կիրով, միահարկ, շուրջ 15 փուլ բարձրության, տանիքները հարթ, կավով պատած: ... 20,000 բնակչության համար առանց այն էլ փոքր տարածքում մեծ տեղ են գրավում եկեղեցիներն ու գերեզմանոցները: ... 1770 թ. համաճարակի ժամանակ, հիվանդներին հիմնականում փողոցներում էին պատկեցնում, և նկատվում էր, որ նրանցից համեմատաբար շատերն էին փրկվում, քան տանը պատկածներից: Քաղաքի բնակչության կեսից ավելին հայեր են: Երկրորդ կեսն են կազմում գլխավորապես վրացիները, և բացի նրանցից կան նաև թաթարներ: Հայերի մեջ շուրջ 400-ը հոռմեաղավան են, նրանք ունեն իրենց պատենները, բոլորը առատորեն ապահովված են եկեղեցիներով:

Հայոց եկեղեցիները՝ 1. և 2. Բերդի տաճար, 3. Պեչերնոբ (իմա՝ Բերդեհեմի) տաճար, 4. Կասեթի (?), 5. Պետրոսի (?), 6. Սահակաշենի, 7. Նորաշենի, 8.-9. Մուղնիք, 10. Ջիգրաշեն, 11. Մուրբ Նշան, 12. Կոզմանք (Կոզմաս-Դամիանոսի տաճար), 13.-14.-15. Վանկինին նվիրված, Վանքի տաճար, 16. Քամոյան (Քառյանց տաճար), 17. Ջրկինյան (Ջրկինյանց տաճար), 18. Մուրբ Կարապետի 19. Մելիքի և 20. Մուրբ Սարգսի տաճարներ: Սրանցից 12 քաղաքում են և 8-ը՝ արվարձաններում: Կաթողիկե հայերը, որոնք 400 [հոգի] պիտի լինեն, բավականա՛նում են մեկ տաճարով: Քաղաքում կա նաև մեկ հայկական վանք*:

Քաղաքի բնակչությունն ապրում է հիմնականում այգիներով ու ցանքերով, հատկապես բամբակի մշակությամբ: Շատ են վաճառկանները կամ ավելի ստույգ՝ մանր կրպակավորները,

* Այս պարբերությունը կրկնված է Շադենի հրատարակչի ծանոթագրության մեջ:

որոնց մոտ մարդ կարող է ձեռք բերել պահանջունք ունեցող ապրանք, մանր ապրանք, սպասեղեն, համեմունք և այլ բաներ...»⁹:

1817 թ. Ռուսաստանի կայսրը գեներալ Երմոլովի գլխավորությամբ արտակարգ դեսպանություն ուղարկեց Պարսկաստան: Պեսպանության կազմում իբրև խորհրդական ընդգրկված էր Ալեքսանդր Նեգրին, ով ֆրանսերեն լեզվով կազմել է այդ առաքելության օրագիրը: Ընդարձակ այդ ձեռագիրը (302 էջ) 1848 թվականից գտնվել է իշխանուհի Էլիզե Սուտցոյի մոտ, ապա անցել Պատմության և Հնությունների Օդեսայի ընկերությանը, ուր և ժամանակին այն տեսել և Հին Թիֆլիսին վերաբերող էջերը (7-10) քաղել ու ֆրանսերեն բնագրին զուգահյիռ ռուսերեն թարգմանությամբ հրատարակել է երիտասարդ կովկասագետ Լևոն Մելիքսեթ-Բեկը (Старый Тифлис по описаниям А. Негри (1817) и М. Медича (1824-1830 гг.) Թիֆլիսում լույս տեսնող «Аrs» հանդեսում (1918, № 2-3, էջ 104-114):

«Թիֆլիսը Վրաստանի գլխավոր կառավարչի և բոլոր շրջակա երկրների վարչական կենտրոնն է: Քաղաքը տեղակայված է լեռան ստորոտին: Կուրը այն կիսում-անցնում է ամբողջ երկայնքով: Քաղաքում օդը առողջարար է, ջուրը՝ հրաշալի: Նրա բնակիչների թիվը անցնում է 20,000-ը: Նրանում գտնվող երկու հազար տներից միայն 150 կամ 200 են վրացական, բոլոր մնացածները հայերին են պատկանում: Այդ քաղաքի շուկան բաղկացած է հազարից ավելի կրպակներից: Այստեղ է պարսկական, թուրքաան ու ռուսական և տեղական արտդրանքների հավաքատեղին: Հայերը առևտրական խոշոր գործարքներ են կատարում: Եվ միայն նրանց մեջ կարելի է բոլորական մեծահարուստներ գտնել: ... Տների մեծ մասը թաղակապ է, իսկ թաղերի վրա երդիքներ կան բնակարանի լուսավորության համար... Հունա-ռուսական դավանության մեկ մետրոպոլիտ, Հայոց մեկ արքեպիսկոպոս և երեք կաթողիկե հայրեր քաղաքի ծիսակատարություններն են ներկայացնում»¹⁰:

⁹ Մոսքոպոլսկայա Պ. Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009, էջ 318-322:

¹⁰ Նույն տեղում, էջ 323-324:

Ռուսական բանակում ծառայող գերմանացի Մորիս Ֆոն Կուցերուն գեներալ Երմոլովի Պարսկաստան կատարած դեսպանության (1817թ.) անդամ էր: Նրա ուղեգրությունը լույս է տեսել նախ գերմաներեն (1818թ.), սպա անգլերեն (Narrative of a Tourney into Persia ... London, 1819): Կա նաև ֆրանսերեն հրատարակություն:

«... Ծանապարհները բոլոր նահանգներում անգործածելի էին, և Թիֆլիսն իսկ թաղված էր ցեղի մեջ: Այս քաղաքը իր ներկա բարգավաճ վիճակը պարտական է գեներալ Երմոլովին: Կարճ ժամանակվա ընթացքում նա կառուցել է տներ, մայթեր և փողոցներ, բացել է հրապարակներ՝ որպեսզի օդը շարժի քաղաքի նեղ ու աղտոտ փողոցներից: Կարճ խոսքով, ով որ մի տարի առաջ հեռացել է Թիֆլիսից, հիմա չպիտի ճանաչի այդ»¹¹:

Հնդկաստանում երկար ժամանակ ծառայած բրիտանական գնդապետ Ջոն Ջոնսոնը Անգլիա վերադառնալու ճանապարհին՝ 1817թ., այցելել է Այսրկովկաս և եղել Թիֆլիսում: Նրա ուղեգրությունը լույս է տեսել 1818թ.: Հայերեն քաղվածաբար թարգմանել և հրատարակել է Հ. Հակոբյանը:

«Հուլիսի 9: Մեր հաջորդ ճանապարհորդության նպատակակետը Թիֆլիսն էր... Անցնելով քաղաքի միջից, մեզ դիմալորեց քաղաքի գլխավոր հա բնակչի ծառան, որ մեզ առաջնորդեց իր տիրոջ տունը, ուր հրավիրված իջևանեցինք: Նա որդին էր Արություն խանի, անգլիացիների վերաբերմամբ մասնավորապես լավ տրամադրված մի մարդ, որին մենք նամակներ ունեինք և որ հուզումով տեղեկացանք՝ վերջերս կայծակնահար էր եղել: Տունը հիանալի էր. զետեղված էր գեներալի ու կառավարչի թաղամասում և կրանց բնակարանների մոտ: Որովհետև մենք գտնվում էինք Վրաստանի մայրաքաղաքում, մեր նամակներն ուղարկեցինք գեներալ Կուտուսովին, որ հաջորդ առավոտ մեծ քաղաքավարությամբ ընդունեց ինձ և հրավիրեց ճաշի, որ մենք ընդունեցինք: ...Թիֆլիս գտնված միջոցին ամեն օր նա մի նոր նշան ցույց տվավ իր սրտի բարության և պարտավորեցնող տրամադրության: Երեկոյան, այս առաջին ծանոթության, գեներալը՝ երևակայելով, որ մենք բավական հար-

մարություններ չունենք մեր հայ հյուրընկալի տանը, մեզ առաջարկեց մի տուն, որ այդ միջոցին պատրաստել էին իր համար, և որ լարի: Եղավ անձամբ մեզ ցույց տալ. քայլեց մեզ հետ բազարներում և քաղաքի լավագույն մասում, մատնանշելով ուշադրության արժանի ամեն բան: Մակայն, մենք չէինք կարող ընդունել իր հյուրընկալ հրավերը այդ տան համար, մեր հայ հյուրընկալի հանդեպ ունեցած հարգանքի պատճառով, որ միշտ նպաստավոր էր եղել անգլիացիներին և մասնավոր ինձամբ էր տանում մեր բարօրության համար: Հուլիսի 11-ին – Մենք կրկին ճաշի հրավիրվեցինք գեներալ Կուտուսովի կողմից, որ ասաց, թե մենք պետք է որ մեզ համարեինք իր հյուրերը: Երեկոյան այցելեցինք կառավարչին, որ նոր էր վերադարձել գավառից: Ժամը վեցին, գնացինք վրացի մի իշխանի, իշխան Բեյբուդովի բնակարանը, ուր տեսանք նրա ընտանիքը, և մեզ մեծարեցին Կովկասյան շրջանների տարբեր ցեղերի տարօրինակ պարերով»¹²:

Ռոբերտ Կեր Ֆորտլըրն իր ուղեգրությունում (1817-1820 թթ.) մակրամասնորեն նկարագրում է Թիֆլիսը, նրա դիրքը, տները, մարդկանց, սովորույթները և այլն:

«...Քրիստոնեական տարբեր դավանանքի պատկանող բազմաթիվ գեղեցիկ եկեղեցիներ կան Թիֆլիսում. այն որ պատկանում է հռոմեական կաթոլիկ հավատքին, ամենից գեղեցիկն է: Հայկական մեծ եկեղեցին՝ Սուրբ Սիոնի [թաղից ոչ հեռու] մայր եկեղեցին¹³, ավելի ընդարձակ է... Այս նեղ վայրում մի կամարով կամուրջը կապում է քաղաքը մի ընդարձակ արվարձանի հետ, որ կոչվում է Հավլաբար: Այնտեղ բնակում է գլխավորաբար հայերի մի գաղութ, որոնք փախել¹⁴ են Երևանի շրջակայքից ռուս-պարսկական պատերազմների ժամանակ»¹⁵:

¹¹ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2., էջ 653-656:

¹² Սա պարզ թուրքիմացություն է, պիտի լիներ «Վրացական մեծ եկեղեցին՝ Սուրբ Սիոնի մայր եկեղեցին»:

¹³ Հայերի «փախած» լինելու տեղեկությունը ստույգ չէ, և ինչպես Մ. Բժշկյանցն է ճշտում՝ Թիֆլիսում էին հաստատվել Ցիցխանովի հորդորով:

¹⁴ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2., Երևան, 1934, էջ 754: Կեր Փորտլըրն Թիֆլիսում եղած ժամանակ շփումներ կամ հանդիպումներ է ունեցել հայ

¹¹ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2., Երևան, 1934, էջ 501-502:

Ֆրանսիացի Ժակ Ֆրանսուա Գամբան իր «Ճանապարհորդություն Այսրկովկասում» ուղեգրության մեջ նկարագրել է Թիֆլիսը:

«Տիրուսը կամ Կուրը Թիֆլիսը բաժանում են երկու մասի. աջ ափին են գտնվում հին քաղաքը, հանքային բաղնիքները և նոր քաղաքը, ձախին՝ արվարձան Հավլաբարն ու Բսանին և գերմանական մի գյուղ: ... Երբ ես 1820թ. տեսա հին քաղաքը, նրա բոլոր փողոցները լեցուն էին աղբակույտերով, ինչը պարսիկների հարձակման ցավալի հիշողություն էր: Այդ աղբակույտերը հաղթահարելով դժվարությամբ կարելի էր հասնել դռներին, շուրջ շոքս ֆուտ բարձրություն, որոնց վրայով տներ էին մուտք գործում: [Բակ տները] գրեթե գետնափոր էին, որոնք իբրև կացարան էին ծառայում: Որոշ տների դարաստափերը գրեթե փողոցի մակարդակին էին՝ նեղլիկ ու ծուռ: Երեք տարին բավարար էր, որպեսզի իր ավերածությամբ այս ասիական սանձարձակության բնության վկայություն հանդիսացող քաղաքը եվրոպական լուսավոր սկզբունքներով կառավարվող քաղաքի տեսք ստանար: ... Այս պայմաններում հին քաղաքի վերականգնումը այնպիսի արագությամբ էր ընթանում, ինչպիսին երևակայելն իսկ դժվար է: Այս բոլորը լրացնում էին գեներալ Երմոլովի կատարած հասարակական աշխատանքների ընդհանուր պատկերը: Վերականգնման, կարելի է ասել՝ նրա խնամքին հանձնված երկրամասի մայրաքաղաքի լիակատար վերականգնման հանդեպ նրա հոգածությունն ու ջանադրությունը ոչնչի հետ համեմատելի չեն: Հայտնի է, թե ինչ բավականություն են պատճառում նրան Թիֆլիսի ընդարձակումը, տեսնելը և ահա գեներալները, տեղացի իշխաններն ու մեծահարուստ հայերը միմյանց մրցակցելով աշխատում են առանձնանալ իրենց կառույցների նրբությամբ:

Խոշոր աշխատանքների կազմակերպիչների միջից բոլորից ավելի աչքի է ընկնում Հայոց եպիսկոպոս Ներսեսը: Այս նշանավոր հովվապետը նոր քաղաքում հսկայական քարվանսարայ է կառուցել, որ կարծես խոսում է այս քաղաքի առևտրի պարփա-

հոգևորականության հետ և Հայաստան ուղևորվելիս կաթողիկոսին հանձնելիք նամակներ է տարել Թիֆլիսի Հայոց եպիսկոպոսից:

կության մասին: Հայերի հոսքի պատճառով Թիֆլիսի բնակչությունը մեծանալով մեծանում է. նրանք այստեղ թուրքերի բռնություններից ու պարսիկների պատճառած նեղություններից պատսպարան են որոնում: 1820թ. Թիֆլիս հաստատված մի հայ ընդարձակ քարվանսարայ է կառուցել: 8 սաժենից ոչ ավելի լայնության և 30-40 երկայնության տեղանքի համար նա վճարել է 81.000 ռ. թղթադրամով (81.000 ֆրանկ), իսկ բացի այդ՝ իր տիրույթը Կուրի հեղեղումից պարսպելու համար ստիպված էր պատ կառուցել ու լայն լիցք կատարել: Այս քարվանսարայը նշանկալի չափով ընդարձակ է դարձել հին քաղաքում գտնվող մյուս երկուսից: Այստեղ եկող ու ետ գնացող ձիերը և ուղտերը, պարսիկ վաճառականների արագաշարժությունը և նրանց հակադարձը թուրքերի ու հայերի հանգստությունը, հեռավոր երկրներից եկող ամենաալյազան ապրանքների փոխադրականները՝ այս ամենը հատուկ տեսք ու աշխուժություն է հաղորդում այդ ինքնատիպ հյուրանոցներին, ուր այդքան տարբեր երկրների ու լեզուներով խոսող վաճառականներն ապրում են կարծես մեկ համայնք կազմած: ... Երկու հին քարվանսարայներից մեկում կենում են բացառապես պարսիկները, իսկ Կարսից, Էրզրումից և Թուրքիայից եկող հայերը սովորաբար իջնանում են մյուսում:

Վերջին տարիների Թիֆլիսի բնակչությունը սկսել է էապես մեծանալ: 1820 թ. Թիֆլիսում կար շուրջ 24.000 բնակիչ: 1825թ. նրա բնակչությունը հաշվվում էր առնվազն 33.000: Այս տարի ինչպես բուն քաղաքում, այնպես էլ նրա արվարձաններում հաշվվում էր 2.500 հայ ընտանիք, 1.500 վրացական և 500 թաթարական ու պարսկական, ընդամենը 4.500 ընտանիք, յուրաքանչյուրը բաղկացած առնվազն 6 շնչից, որով կազմում է 27.000 շունչ, գումարած զարնիզոնը, չինովնիկությունը և արտասահմանցիները 6.000 շունչ, իսկ ընդհանուրը՝ 33.000 հոգի: ... Թիֆլիսի վրա իշխող բարձրունքի հարավային լանջին, որտեղից հոյակապ տեսարան է բացվում, գեներալ իշխան Բեհբուդովը մերձքաղաքային տուն է կառուցել և նրա մոտ ճաշակով հարթակներով վար իջնող պարտեզ սարքել... Քսան տարի առաջ Թիֆլիսում իշխում էին ասիական սովորույթները Առհասարակ հազվադեպ ացելող ճանապարհորդներին բնա-

կիչներից յուրաքանչյուրը շտապում էր հյուրասիրություն ցուցաբերել, իսկ վաճառականները իջևանում էին քարվանսարաններում: Այժմ այս մայրաքաղաքում հայերի կողմից խնամվող մի քանի հյուրանոց կա, ռեստորանատեր և երկու հացավաճառ ֆրանսիացի»¹⁶:

1988 թ. Թիֆլիսում տպագրվել է ֆրանսիացի նշանավոր գրող Ալեքսանդր Դյումայի (հայր) 1858 թվականին գրած «Փարիզից Աստրախան» ուղեգրությունը՝ «Կովկաս» վերնագրով: Այս գրքում բազմաթիվ հիշատակություններ կան հայերի և Հայաստանի մասին: Դյուման իր գիրքը գրելիս օգտվել է հայ պատմիչների աշխատություններից, թեև այնտեղ կան բազմաթիվ անճշտություններ և ոչ լիարժեք մեկնաբանություններ ու ծանոթագրություններ: Ցավոք, գիրքը մինչ այժմ չի թարգմանվել հայերեն, թերևս միայն մի քանի հատված, որն էլ ներկայացնում ենք ստորև.

«Հայը մարմնի կառուցվածքով նույնն է, ինչ պարսիկը, բայց հայն արագ գիրանում է, մի բան, որ երբեք չի պատահում պարսիկի հետ: Հայի դիմագծերը պարսիկների նման զարմանալի համաչափ են. աչքերը շատ գեղեցիկ են, հայացքը, որ բնորոշ է միայն նրան, պարունակում է միաժամանակ խելամուռություն, վեհանձնություն, թախիժ կամ հնազանդություն, երբեմն թե՛ մեկը, թե՛ մյուսը:

Հայը պահպանել է նահապետական բարքերը: Նրա համար Աբրահամն իր մահկանացուն կնքել է երեկ, իսկ Հակոբը դեռ ողջ է: Հայրը ընտանիքի անկիճելի ղեկավարն է, նրանից հետո իշխանությունը պատկանում է ավագ որդուն, կրտսեր եղբայրները նրա սպասավորներն են... Բոլորն անվերապահորեն ենթարկվում են հոր անկիճելի և անտոք կամքին: Նրանք հազվադեպ են սեղան նստում հոր ներկայությամբ. դրա համար անհրաժեշտ է ոչ թե հոր հրավերը, այլ հրամանը:

Եթե սոցյալում է հարգանքի արժանի հյուր, հայ օջախում սկսվում է տոնախմբություն. մորթում են ոչ թե հորթ (հիմա Հայաստանում հազվագյուտ է պատահում այդ կենդանին), այլ գառնուկ, վառում են բաղնիքը և բոլոր բարեկամներին հրավիրում են խնջույքի... Այդպիսին է հայկական կենցաղի արտաքին կողմը՝ ընդգծ-

ված տնտեսվարության հետ զարմանալի հակում դեպի կարգուկանոնը և խելահասություն՝ առևտրական գործերում: Իսկ մյուս կողմը, որ մնացել է ստվերում և պահանջում է ակներև ուսումնասիրում, հայ ազգին մերձեցնում է հրեաների հետ, որոնց հետ, ըստ ավանդության, նա կապված է պատմական հիշողություններով, որ սկիզբ են առնում աշխարհի ստեղծումից:

Ինչպես ենթադրում են՝ Հայաստանում էր գտնվում երկրային դրախտը, Հայաստանում իրենց սկիզբն էին առնում երկիրը ոռոգող չորս նախապատմական գետերը: Հայաստանի բարձրագույն լեռան վրա հանգրվանեց տապանը: Հայաստանում սկսվեց ավերված աշխարհի վերականդանացումը: Վերջապես, Հայաստանում Նոյը տնկեց խաղողի այգի և առաջին անգամ փորձարկեց գինու գորությունը: Հրեաների նման հայերն էլ ցրված են, բայց ոչ թե աշխարհով մեկ, այլ միայն՝ ամբողջ Ասիայում: Այնտեղ նրանք գտնվում են զանազան տիրապետությունների տակ, բայց մշտապես բռնապետական, միշտ այլադավան ու բարբարոսական, միշտ ղեկավարվող քահանայքով՝ կարգուկանոնի փոխարեն, կամայականությամբ՝ օրենքի փոխարեն: Տեսնելով, որ հարստահարիչները միշտ ձգտում են խլել իրենց հարստությունը, հայերը սկսեցին այն թաքցնել: Համոզվելով, որ անկեղծ խոսքը ոչինչ չի բերում կործանումից բացի՝ նրանք դարձան ինքնամոլոփ: Հայի խոսքը համարյա միշտ ճիշտ է, նրա գործարքային ստորագրությունը գրեթե սուրբ է»¹⁷:

Ամփոփելով եվրոպացի ճանապարհորդների համառոտ հուշերն ու օրագրությունները Թիֆլիսի հայերի մասին՝ հարկ է նշել, որ նրանք ջերմ խոսքեր են ուղղել հայերին և նկարագրել նրանց դրական կողմերով՝ առանձնացնելով մասնավորապես նրանց աշխատասիրությունն ու բարությունը, կամեցողությունն ու օտարին օգնելու պատրաստակամությունը:

¹⁷https://www.vnews.am/culture/hay-pahpanel-e-nahapetakan-barqer/?fbclid=IwAR0cPnK1AMS-h4JV84U0vxLIDWbaK_TRP0QIz6WihIx8c-NnCVBG337LVjg

¹⁶ Մաքարյան Պ., Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009, էջ 331-335:

ARMEN ASATRYAN
Ph.D. student, Armenia

EUROPEAN TRAVELLERS ABOUT ARMENIANS IN TBILISI

Keywords: Georgia, Tiflis, Kur River, Church, Community, Priest, Catholic.

The capital of Georgia, Tbilisi, was an Armenian-Georgian cultural center. Armenians were living in this city from early times, and since 18th century till the establishment of the Soviet regime in 20th century were predominant in the population. There were twenty-five Armenian churches in Tbilisi in 19th century.

The information of European travelers about the Armenians in Tbilisi is essential, especially as they mention the population, ethnicity and churches.

The article presents excerpts from the travel accounts by Ambrogio Contarini (1475), chevalier Jean Chardin (1672-1673), Joseph Pitton de Tournefort (1700), Johannes Goldenstedt (1771), Alexander Negri (1817), Colonel John Johnson (1817), Sir Robert Ker Porter (1817-1820), Jacques François Gamba (1820), Alexandre Dumas (1858), and others that contain warm words about the Armenians in Tbilissi. For instance, Alexander Negri noted that of two thousand houses in Tbilissi, only 150 or 200 belong to Georgians, the rest, the vast majority belonging to Armenians, while Alexandre Dumas wrote that the eyes of Armenians, being beautiful, gave them the look that is typical only for them, containing at the same time wisdom and nobility.

АРМЕН АСАТРЯН
Соискатель, Армения

ЕВРОПЕЙСКИЕ ПУТЕШЕСТВЕННИКИ ОБ АРМЯНАХ ТИФЛИСА

Ключевые слова: Грузия, Тифлис, река Кур, Церковь, община, священник, католики.

Столица Грузии Тифлис (ныне - Тбилиси) являлась армяно-грузинским культурным и духовным центром. Армяне здесь жили с древних времен, а с 18-го века и до установления советской власти доминировали в численности населения. В 19-м веке в Тбилиси действовало 25 армянских церквей.

Информация европейских путешественников об армянах Тифлиса очень важна, особенно когда упоминаются численность населения, этническая принадлежность и армянские церкви.

В статье представлены сведения Амбросио Контарини (1475), Жана Шардена (1672-1673), Джозеф-Питтона Турнефора (1700), Иоганнеса Гулденштедта (1771), Александра Негри (1817), полковника Джона Джонсона (1817), Роберта Кера Портри (1817-1820), Жака Франсуа Гамбы (1820), Александра Дюма-отца (1858) и др. В отрывках путешествий есть теплые слова об армянах Тифлиса. Александр Негри отметил, что из 2000 домов в Тбилиси только 150 или 200 принадлежат грузинам, остальные – армянам, а Александр Дюма писал, что глаза армян очень красивы, взгляд, характерный только для армян, заключает в себе мудрость и благородство.

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ԱՄՆ-Ի ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
ԳԱՂՈՒԹՅՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ԱՍԵՐԻԿԱ ՄԵԿԼԱԾ
ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ
(XVII Դ. ՄԿԻԶԲ - XVIII Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

*Հիմնադրատեր. Նոր աշխարհ, Ամերիկա, Բրիտանիա, Լոնդոն,
առաջին հայերը Նոր երկրում, Վիրջինիայի գաղութ, Ջեյմսթաուն,
Ջոն Մարտին հայ, ծխախոտագործություն, շերամապահություն:*

*«Սիրով Սերոբիդ սիրտըս ձայն առած
Լուս միայնության ճրագիկըն վառած՝
Գիշերե գիշեր յանձանօթ ճամբայ
Մինչեւ յԱմերիկ քո հետ կը թրթռայ,
Որ թողած սրտիդ հատորն աղուական
Հազար փարախով կ'երթաս բացական...»¹*

ԱՄՆ-Ի ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

¹ XIX դ. առաջին կեսից սկսվել է հայերի բուն հոսքը դեպի ԱՄՆ՝ ի հետևանս ամերիկյան բողոքական քարոզիչների Օսմանյան կայսրությունում ծավալած կրթալուսավորական գործունեության (1831 թ. հիմնվել է Արտաքին առաքելությունների համամիսիոներական Ամերիկյան Խորհրդի Հայկական Առաքելությունը [Հայկական խորհուրդ American Board, American Board of Commissioners for Foreign Missions ABCFM]): Այդ ժամանակաշրջանում ԱՄՆ մուտք գործած առաջին հայերից էր նաև Վենետիկի Մխիթարյան Մխաբանության անդամ Հայր Ղևոնդ Ալիշանի եղբայրը՝ Սերոբ Ալիշանը, որը 1845 թվականից որոշ ժամանակ բնակվել է Ուաշինգտոնում, ապա՝ Բոստոնում [Մուշեղ Եպիսկոպոս (Սերոբեան), Ամերիկահայ տարեցոյցը, Ա տարի, Պոստոն, «Վրիլիկա» տպ., 1912, էջ 24, 31-43]: Դեպի ԱՄՆ եղբոր կատարած ճամբորդության առիթով Հայր Ղ. Ալիշանը երկարաշունչ մի բանաստեղծություն է ձևել նրան՝ «Առ հարազատն իմ. Ծովաչուեղով յԱմերիկա» վերնագրով, որի կարոտալից ու բնութագրական առաջին տողերը ներկայցնում ենք որպես սույն հոդվածի բնաբան [Լուսազք Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան Վարդապետի. Մաղբունի, Խ. Բ. Վենետիկ, 1857, էջ 39]:

2004 թ. անձամբ հետազոտություններ իրականացնելով ԱՄՆ-ի Կոնգրեսի (US Library of Congress), ինչպես նաև 2006 թ. Բրիտանական (British Library) գրադարաններում առիթ եմ ունեցել ուսումնասիրել այնտեղ պահվող սկզբնաղբյուրային բացառիկ արժեք ու հետաքրքրություն ներկայացնող արձանագրությունները, որոնք լույս են ափռում Նոր երկրի գաղութային ժամանակաշրջանում տարբեր հանգամանքներում հիշատակված և մի շարք ապարեզներում որոշակի հաջողություններով աչքի ընկած փաստացի առաջին հայերի մասին, մանավանդ, որ մասնագիտական գրականության մեջ հայերը զնահատվել են որպես «Արևելքի անգլոսաքսոններ»²:

Հայր կոլումբոսյան ժամանակաշրջանի Ամերիկայում

Թեպետ բրիտանացի հայագետ Ռեյվիդ Մարշալ Լանգը, անդրադառնալով Ամերիկյան հողի վրա առաջին հայերի հայտնվելու նախապատմությանը, նշել է, որ նրանք առնչություն չեն ունեցել հետզհետե անհետացող երբեմնի ացտեկների քաղաքակրթության հետ և ոչ էլ մասնակցել են դեպի Նոր երկիր իտալացի հետախույզ-ճանապարհորդ-գաղութարար Քրիստափոր Կոլումբոսի նավարկությանը և նրա կողմից 1492 թ. «Նոր աշխարհի» հայտնագործմանը, «...այդուհանդերձ, հայերի հետ [առնչվելիս] պետք է միշտ պատրաստ լինել անակնկալների»³: Ահա այդպիսի անակնկալի մասին է նրան պատմել ամերիկահայ պատմաբան, “The Armenian Weekly” պարբերականի և “The Armenian Review” գիտական հանդեսի խմբագիր Ջեյմս Հ. Թաշճյանը 1976 թ. դեկտեմբերի 15-ին Բոստոնից Լոնդոն՝ Դ. Մ. Լանգին հղած իր նամակում, որտեղ պատմել է Փարիզի Նուբարյան գրադարանում պահվող XV դ. Մարտիրոս Երզնկացի եպիսկոպոսի կողմից գրված ձեռագրի մա-

² Malcom, Vartan M. The Armenians in America. Boston, Chicago: The Pilgrim Press, 1919, p. vii.

³ Lang, David Marshall. The Armenians. A People in Exile. London: George Allen & Unwin, Boston, Sydney, 1981, p. 120.

սին: Ըստ այդ ձեռագրի, եպիսկոպոսը «հավանաբար, ուղեկցել է Կոլումբոսին դեպի Նոր երկիր նրա երկրորդ (1493-1496 թթ.) ճանապարհորդության ժամանակ»⁴: Այդուհանդերձ, այդ ժամանակաշրջանի վերաբերյալ տեղեկությունները ճշգրտման կարիք ունեն:

Առաջին հայերը Նոր երկրում

Դեռևս XVII դ. սկզբից Եվրոպայից դեպի Հյուսիսային Ամերիկա ուղևորված վերաբնակիչների թվում էին նաև առաջին սակավաթիվ հայերը: Բրիտանական գաղութատիրության այդ ժամանակաշրջանում Ամերիկա մեկնած հայերի մասին պահպանվել են շատ քիչ, հաճախ նաև պատմական հավաստման կարոտ կցկտուր տեղեկություններ:

Այսպես, ըստ ԱՄՆ-ի էթնիկ պատմության մասին իր արժեքավոր ուսումնասիրություններով հայտնի ամերիկացի գրող, թարգմանիչ, ծագումով սլովեն Լուիս Ադամիքի, 1607 թ. Լոնդոնի Վիրջինիա ընկերության կողմից հիմնված Վիրջինիա գաղութը նույն թվականին բնակեցվել է լեհ, գերմանացի և հայ աշխատավորներով⁵: Լ. Ադամիքն իր «Ազգերի ազգ» գրքում նշել է, որ նրանք աշխատավորները, եկել էին Նոր Անգլիայի ծովակալ, հետախույզ-քարտեզագիր, գաղութարար-կապիտան, Ջեյմսթաուն գաղութի հիմնադիրներից⁶, ինչպես նաև Վիրջինիա գաղութի «պատվար ու

⁴ James Tashjian. http://www.armenopedia.org/wiki/James_Tashjian. Christopher Columbus. https://en.wikipedia.org/wiki/Christopher_Columbus. Lang, D. M., նշվ. աշխ., էջ 120:

⁵ Louis Adamic, https://en.wikipedia.org/wiki/Louis_Adamic. Adams, James Truslow. The Epic of America. Boston: Little, Brown, and Company, 1932, p. 27. Gavian, Ruth Wood, Hamm, William A. The American Story. A History of the United States of America. Boston: D. C. Heath and Company, 1945, p. 4. Tashjian, James H. The Armenians of the United States and Canada. Boston: Hairenik Press, 1947, pp. 1-2. Adamic, Louis. A Nation of Nations. New York, London: Harper & Brothers Publishers, 1945, p. 287. Blum, John M., Catton Bruce, Morgan Edmund S., Schlesinger Arthur M. Jr., Stampp Kenneth M., Woodward C. Vann. The National Experience. A History of the United States. New York, Burlingame, 1963, p. 14.

⁶ Smith, John. A Description of New England, 1616. Zea E-Books in American Studies – 3. Lincoln: University of Nebraska, 2006, p. i. Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 1:

փրկիչ» հանդիսացող քսանյոթամյա կառավարիչ (1608 թ. սեպտեմբեր 10 – 1609 թ. օգոստոս), Ջոն Սմիթի (1579/1580–1631 թթ.)⁷ հետ նրա հրամանատարության տակ Հունգարիայում չորս տարի թուրքերի դեմ կռվելուց հետո⁸:

Այդ մասին ոմն անգլիացի Ն. Սմիթը նրան նվիրված բանաստեղծության մեջ նշել է.

«Շատ ցավ է տեսել [Ջոն Սմիթը]

ի բարօրություն մեր թագավորության,
Անձանոթ երկրներում, ԹՈՒՐԿԵՆԻ և ռազմավարի շրջանում՝

Մեր սահմաններն ընդարձակելու ճանապարհին»⁹:

Հենվելով անձամբ կապիտան Ջ. Սմիթի գրառումների վրա՝ Լ. Ադամիքը մասնավորապես նշել է, որ վերջինս, շրջելով Եվրոպայով մեկ, լավ էր հասկացել հասարակ աշխատավոր մարդու արժեքը: Ահա թե ինչու, Ջ. Սմիթը Ամերիկա է բերել շատերին՝ լեհերի, գերմանացիների, հայերի, քանի որ, ի տարբերություն Հարավի անգլիացի շատ գաղութարարների, որոնք մետաքս հագնող և աշխատանքից խորշող «թափառաշրջիկ պարոններ» էին, այս մարդիկ սովոր էին շարունակական ծանր աշխատանքի: Նրանց անգլերենը, եթե նրանք ընդհանրապես դրանով խոսում էին, տարիներ շարունակ Վիրջինիայում ասյրելով հանդերձ, աղքատ էր, նրանց շարժումները գուրկ էին փայլից: Սակայն կապիտան Սմիթի գնահատմամբ, նրանք հմուտ էին ձյութի, կուպրի, օճառի փոշու, ինչ-

պես նաև ապակյա համրիչների պատրաստման գործում, որը հնդկացիների հետ առևտրում դրամի տեղ էր օգտագործվում¹⁰:

Վերոհիշյալ փաստը հաստատել է նաև ամերիկահայ Ջ. Թաշճյանը՝ նշելով. «Լեհերը, գերմանացիները և հայերը գաղութի աշխատավորներն ու առևտրականներն էին և, ի տարբերություն գաղութատերերի, որոնք խորշում էին աշխատանքից, սրանք սովոր էին ծանր ու երկարատև աշխատանքի»¹¹: «Կոպիտ շարժումներ» ունեցող այդ մարդիկ հմտացել էին ձյութի, կուպրի, օճառի փոշու, ապակյա համրիչների և էժան գարդերի արտադրության մեջ, որոնցով առևտուր էին կատարում հնդկացիների հետ, ինչպես նաև մասնակցել են նրանց դեմ գաղութատերերի մղած կռիվներին՝ նպաստելով նորաստեղծ Վիրջինիայի Գաղութի թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական առաջընթացին¹²:

Իր գրվածքներում, կապիտան Ջ. Սմիթը բարձր է գնահատել օտար աշխատավորներին Վիրջինիայի գաղութը փրկելու գործում: Ու թեև նրանք ասյրել են գաղութում, աշխատել ի շահ գաղութի, գաղութարարների հետ պայքարել են հնդկացիների դեմ, այդուհանդերձ, Ջ. Սմիթի գաղութից հեռանալուց հետո անգլիացիները, ընդհանուր առմամբ, թերագնահատել են աշխատավորներին: Ավելի քան մեկ տասնյակ տարի շարունակ (1607-1619 թթ.) հայերն ու նրանց հետ ժամանած մյուս լեհ, գերմանացի աշխատավորները զրկված են եղել քաղաքական իրավունքներից և գաղութի քաղաքացիական գործերին մասնակցելուց, գտնվել են ստրկական վիճակում և անգլիացիների աչքում դիտվել իբրև «ստորակարգ օտարականներ»՝ գուրկ քաղաքացիական, տնտեսական ու քաղաքական որևէ իրավունքներից¹³:

Այդ վիճակը շարունակվել է ընդհուպ մինչև 1619 թ., երբ, իդանդացի գաղթականների աջակցությամբ (որոնք, ի դեպ, Նոր

⁷ Explore the History of Jamestown's Early Years. History Timeline. 1608, <https://historicjamestowne.org/history/jamestown-timeline/>. John Smith, <https://historicjamestowne.org/history/pocahontas/john-smith/>. Lang, D. M., նշվ. աշխ., էջ 120: Warner, Charles Dudley. Captain John Smith, 1579-1631. Sometime Governor of Virginia, and Admiral of New England. A Study of His Life and Writings. Vol. I, New York: S. W. Green's Son, 1881. John Smith (explorer). [https://en.wikipedia.org/wiki/John_Smith_\(explorer\)](https://en.wikipedia.org/wiki/John_Smith_(explorer)).

⁸ Adams, J. T., նշվ. աշխ., էջ 27: Gavian, R. W., Hamm, W. A., նշվ. աշխ., էջ 4: Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 1-2: Adamic, L., նշվ. աշխ., էջ 287: Blum, J. M., Catton B., Morgan Ed. S., Schlesinger A. M. Jr., Stampf K. M., Woodward C. V., նշվ. աշխ., էջ 14:

⁹ Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 2:

¹⁰ Adamic, L., նշվ. աշխ., էջ 287:

¹¹ Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 2:

¹² Նույն տեղում: Adamic, L., նշվ. աշխ., էջ 287. 288:

¹³ Adamic, L., նշվ. աշխ., էջ 287: Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 2: Adamic, L., նշվ. աշխ., էջ 287: Lang, D. M., նշվ. աշխ., էջ 120-121:

երկիր էին բերվել 1609 թվ.-ից սկսած), աշխատավոր ազգային փոքրամասնությունները Ջեյմսթաունում ապստամբել են անօրինականությունների դեմ¹⁴:

Այդպես, ամերիկացի գիտնականների իսկ վկայությամբ, հայերը «մի բուռ» լեհ, գերմանացի և իռլանդացի աշխատավորների հետ մասնակցել են «Ամերիկայում հասարակ մարդկանց իրավունքների ընդարձակմանն ուղղված քաղաքական գիտակցված առաջին ըմբոստությանը»¹⁵: Ջ. Թաշճյանի գնահատմամբ, նրանք՝ աշխատավորները մասնակցել են «քաղաքացիական իրավունքների, անձնական հավասարության և արժանապատվության համար հասարակ մարդկանց մղած առաջին պայքարին այն հողի վրա, որը հետագայում պիտի դառնար անձնական ազատության առաջամարտիկ Ամերիկայի Միացյալ Նահանգների մաս»¹⁶: Ապստամբները պահանջել են «ձայնի իրավունք և լիակատար հավասարություն մյուս գաղութաբնակների հետ»¹⁷:

Լ. Ադամիքի գնահատմամբ, անկախ այն հանգամանքից, որ ապստամբներից ոչ բոլորն էին բարեկիրք մարդիկ, այդուհանդերձ, նրանք գիտակցում էին, որ իրենք ուժ և արժեք են ներկայացնում գաղութի համար: Նոր երկրում առաջին անգամ ազգային ու սոցիալական տարբեր ծագում ունեցող մարդիկ միավորվել էին անարդարության դեմ: Ահա թե ինչու, փոքրաթիվ այդ խմբի ծավալած գործադուլը հավասարազոր էր հուժկու շարժման, այնպես որ, նույնիսկ Վիրջինիայի գաղութի ապագան կախված էր այդ ապստամբության արդյունքներից¹⁸:

Հայտնի է, որ ապստամբությունն ունեցել է «բարեհաջող ավարտ»¹⁹: Աշխատավորների բողոքն ուշադրության է արժանացել Ամերիկայում (Վիրջինիա գաղութ) հիմնված առաջին ներկայա-

¹⁴ Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 2; Adamic, L., նշվ. աշխ., էջ 288:

¹⁵ Adamic, L., նշվ. աշխ., էջ 1, 288:

¹⁶ Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 2-3:

¹⁷ Adamic, L., նշվ. աշխ., էջ 288:

¹⁸ Նույն տեղում, էջ 287, 288:

¹⁹ Նույն տեղում, էջ 288:

ցուցական ժողովի՝ Խորհրդարանի նախատիպը հանդիսացող Ջեյմսթաունի Քաղաքացիների Տան կողմից²⁰: Ժամանակակցի հարողովմամբ, «...որոշվել էր, որ նրանք (ապստամբած աշխատավորները - Բ. Ա.) կստանան ընտրելու իրավունք և կդառնան նույնքան ազատ, որքան տեղի ցանկացած բնակիչ»²¹:

Եվ որպեսզի ձյութի, կուպրի, օճառի փոշու, ապակյա համրիչների պատրաստման ապստամբների արհեստները հարատևեն, համաձայնության էին եկել, «որ որոշ երիտասարդներ [անգլիական ծագման] կուղարկվեն նրանց մոտ, որպեսզի սովորեն նրանց հնարքներն ու գիտելիքները՝ երկրի հետագա բարօրության համար»²²: Ու, թեև, համաձայնակները, հիվանդություններն ու այլ դժվարություններն ահավոր վնաս էին պատճառել, սակայն համառորեն մարտնչող գաղութը կարողացել է վերապրել²³:

Այսպիսով, 1619 թ. ապստամբությունը, իրավամբ, հանդիսացել է Նոր աշխարհում մարդկային իրավունքների ոտնահարման դեմ մղված պայքարում տարբեր ազգերի ներկայացուցիչների միասնականության դրսևորման թերես առաջին փայլուն օրինակը: Ահա թե ինչու, այս և համանման այլ փաստերն ի հայտ բերելով, Լ. Ադամիքը եզրակացրել է, որ ամերիկյան ամբողջ ապստամբությունը վերանայման և վերաշարադրման կարիք ունի, քանի որ, ի թիվս այլ անտեսված փաստերի, նախքան Բրիտանիայի դեմ Ամերիկայի մղած անկախության պայքարը, եղել են մարդկային տարրական իրավունքների ոտնահարման դեմ մղված այլ պայքարներ ևս: Ինչպես որ, Նոր երկրում անկախության համար առաջին պայքարը սևամորթներն են մղել իսպանացիների դեմ տակավին 1526 թ., նախքան տասնամյակներ անց՝ 1607 թ. Ջեյմսթաուն քաղաքի հիմնադրումը²⁴:

²⁰ Blum, John M., Catton B., Morgan Ed. S., Schlesinger A. M. Jr., Stamp K. M., Woodward C. V., նշվ. աշխ., էջ 15; Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 3:

²¹ Adamic, L., նշվ. աշխ., էջ 288; Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 3:

²² Adamic, L., նշվ. աշխ., էջ 288:

²³ Նույն տեղում, էջ 28:

²⁴ Նույն տեղում, էջ 1, 288:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ, Ջ. Թաշճյանը, վկայակոչելով Վիրջինիայի գաղութային հաշվետվությունները (Colonial Records of Virginia), նշել է, որ գաղութի 1620 թ. ննջեցյալների ցուցակում հիշատակվել են կապիտան Ջ. Սմիթի հետևորդներ **Ջորոբաբելի (Zorobabel)** (կամ **Ջոիրապ Աբել**²⁵) և **Ստեփանի** անունները, ինչպես նաև Ջեյմսթաուն քաղաքի գերեզմանատանը օտար, հավանաբար հայերեն գրերով գրված մի տապանաքար²⁶, սակայն դրանց հայկական ծագումը ենթադրական է:

Հետազոտողը, հենվելով օտար աղբյուրների վրա, եզրակացրել է, որ գիտնականների կողմից «արդեն ընդունված փաստ է նախքան 1618 թ. Վիրջինիայում հայերի գոյությունը»²⁷:

*Առաջին ծխախոտագործ հայը Վիրջինիա գաղութում և
հայաստակազրված օտարականն ամերիկյան մայրցամաքում*

Ամերիկայի գաղութային ժամանակաշրջանի համար այդ վայրի ու դժնդակ տարիներին Վիրջինիայի գաղութ ոտք դրած հաջորդ հայի **Ջոն Մարտին Հայի** (**John Martin the Armenian**) մասին տեղեկանում ենք Անգլիայի Ջեյմս I թագավորի կողմից գաղութային Ամերիկայի հարավային մասում տնտեսական, քաղաքական և առևտրական նպատակներով վերաբնակելի տարածք հռչակված Լոնդոնի Վիրջինիա ընկերության²⁸ մեզ հասած որոշ փաստաթղթերից: Անգլոամերիկյան այդ փաստաթղթերում, հատկապես ստորաբանական գործարքներում, տեղ-տեղ հիշատակվել է «Ջոն Մարտին Պարսիկ» անունը (ամենայն հավանականությամբ, նկատի է առնվել XVII դ. սկզբին Շահ Աբասի օրոք նրա ստացած պարսկահպատակությունը²⁹), իսկ պաշտոնական քվեարկություն-

ներում որոշակիացվել է նրա բուն ազգությունը՝ նշվելով «Մարտին Հայ» կամ «Մարտին Հայաստանցի»: Առկա հին անգլերեն փաստաթղթերում նրա անունը գրվել է տարբեր ուղղագրությամբ («John Martin»,³⁰ «John Martin», «John Martin the Persian», «Martin an Armeanean», «Martin the Armeanean», «Martin Armeanean», «Martin Armenean», «Martin the Armenean», «Martin [Martian ?] the Armeanian», «Martin ye Armenia[n]», «Martin the Armenian»³¹):

Եվ քանի որ այդ ժամանակաշրջանում ազգային պատկանելությամբ է պայմանավորվել մարդու սոցիալական դիրքն ու ազատություն ունենալու իրավունքը, հետևաբար Լոնդոնի Վիրջինիա ընկերության գրառումներում (The Records of the Virginia Company of London) հիշատակվել է Ջոն Մարտինի պարսկահպատակությունը («John Martin the Persian»), իսկ Անգլիայի քաղաքացիություն ստանալուց հետո գերազանցապես շեշտվել է նրա ծագումով հայ լինելու և կամ Հայաստանից լինելու հանգամանքը («John Martin the Armenian», «Martin ye Armenia[n]»)³²:

²⁵ W. S. The Proceedings of the English Colonie in Virginia. since their first beginning from England in the yeare of our Lord 1606, till this present 1612. with all their accidents that befell them in their Journies and Discoveries. Oxford: Joseph Barnes. 1612. p. 94. - Travels and Works of Captain John Smith. President of Virginia. and Admiral of New England. 1580-1631. Ed.: Edward Arber. Part I. Edinburgh: John Grant. 1910. p. 390 գրքում:

²⁶ Brown, Alexander. The First Republic in America. An Account of the Origin of this Nation, Written From the Records Then (1624) Consealed By the Council. Rather Than From the Histories Then Licensed by the Crown. Boston & New York: Houghton, Mifflin and Company. The Riverside Press. Cambridge. 1898. pp. 554. 656. 673. Malcom, V. M., նշվ. աշխ. էջ 51-55: Boghosian, H. B. Highlights of Armenian History and Its Civilization. USA: n. p., 1957. p. 167. Tashjian, J. H., նշվ. աշխ. էջ 3, 5: The Records of the Virginia Company of London. 1606-26. Vol. IV. Documents II. Edited by Susan Myra Kingsbury. Washington: United States Government Printing Office. 1935. pp. 290. 291. 473. 477. 498. 617.

²⁷ The Records of the Virginia Company of London. 1622-24. Vol. I. The Court Book. Part A. (From the Manuscript in the Library of Congress). Edited by Susan Myra Kingsbury. Washington: United States Government Printing Office. 1906. p. 633. The Records of the Virginia Company of London. 1622-24. Vol. II. The Court Book. Part B. (From the Manuscript in the Library of Congress). Edited by Susan Myra Kingsbury. Washington: United States Government Printing Office. 1906. pp. 13. 580. The Records of the Virginia Company of London. 1606-26. Vol. III. Documents I. Edited by Susan Myra Kingsbury.

²⁵ Lang, D. M., նշվ. աշխ., էջ 121:

²⁶ Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 2: Մուշեղ Եպիսկոպոս (Մերաբեան), Ամերիկահայ տարեցոյցը, Ա տարի. Պոստոն. 1912. էջ 15:

²⁷ Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 2:

²⁸ Blum, J. M., Catton B., Morgan Ed. S., Schlesinger A. M. Jr., Stampp K. M., Woodward C. V., նշվ. աշխ., էջ 13-14:

²⁹ Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 52:

Անդրադառնալով Ջոն Մարտինի ծագումնաբանությանը՝ Ջ. Թաշճյանը նշել է, որ ամենայն հավանականությամբ, նա կամ Պարսկաստանի տիրապետության տակ անցած հայկական մի բնակավայրից էր և կամ՝ Պարսկաստանի հայաբնակ Սպահանի նահանգի Նոր Ջուղա քաղաքի հայերից³³:

Դեպի Նոր աշխարհ Մարտին Հայի ուղևորության դրդապատճառների մասին բավարար տեղեկություններ չկան: Հայտնի չէ նաև Նոր երկիր նրան բերած նավի անունը, նրա ասի դուրս գալու ճշգրիտ օրը և այլ մանրամասնություններ: Պահպանված սոսկ կցկտուր տեղեկությունները թույլ են տալիս եզրակացնել, որ Մարտին Հայն Ամերիկա էր եկել 1618 կամ 1619 թվականներին՝ որպես Վիրջինիա ընկերության Մեծ կանոնադրությամբ (Great Charter) արմատական բարեփոխումներ իրականացնելու ծրագրով Ջեյմսթաուն ժամանած պլանտատոր, բրիտանական Վիրջինիա գաղութի կառավարիչ, կապիտան Սըր Ջորջ Յեարդլիի (1587/8-1627 թթ.) սպասավոր³⁴:

Ջ. Յեարդլին, որը նաև Նոր երկրի առաջին ստրկավաճառներից էր, ինչպես նաև ոսկու և արծաթի հանք փնտրող արշավախմբի ղեկավար⁽³⁵⁾, Անգլիայի Ջեյմս I թագավորի կողմից Վիրջինիա գաղութի կառավարիչ էր նշանակվել երեք անգամ (1616 թ. նոյեմբեր – 1617 թ. նոյեմբեր, 1618 թ. նոյեմբեր – 1621 թ. նոյեմբեր, 1626 թ. մարտ 4 – 1627 թ. նոյեմբեր 13), ինչպես նաև 1618 թ. նոյեմբեր

րի 24-ին ստացել էր «Ասպետ»-ի կոչում³⁶: 1619 թ. ապրիլի 18-ին, ժամանելով Ջեյմսթաուն, Սըր Ջ. Յեարդլին ձեռնամուխ էր եղել ֆիլանսական ու քաղաքական դժվարությունների մեջ գտնվող Վիրջինիա գաղութը բարեփոխումների ենթարկելուն: Բարեփոխումներն ընդգրկել են վերաբնակիչների շրջանում՝ լայն տարածում ստացած հողատարածքների բաշխման վերահսկումն ու կառավարումը, բրիտանական փորձառության հիման վրա օրենքի գերակայության և դատական համակարգի հաստատումը, ինչպես նաև նախագահել է Վիրջինիայի առաջին ներկայացուցչական կառավարության ու օրենսդիր մարմնի՝ Քաղաքացիների Տան նստաշրջանի բացմանը, որը հետագայում (1624 թ.) հայտնի էր դարձել որպես Վիրջինիայի Գլխավոր ժողովի³⁷ ընտրովի երկպալատանի հաստատություն: Ջ. Յեարդլին իր ժամանակի Վիրջինիայում ամենից խոշոր հողատերերից և հարուստ մարդկանցից մեկն էր³⁸:

Հայտնի է, որ Ջոն Մարտինը եղել է Վիրջինիա գաղութի Ջեյմսթաուն բնակավայրի անդամ և ամենայն հավանականությամբ՝ տեղի հայերից մեկը, որի մուտքն այդ գաղութ տարբերվել է մյուսներից, քանի որ, եթե վերջիններս գաղութի սպասավորներն էին, ապա Ջ. Մարտինը անգլիացի երևելի անհատի Ջ. Յեարդլիի սպասավորն էր: Մանավանդ որ, Վիրջինիա ժամանած հարուստ հողատերերը Ամերիկա էին մեկնում իրենց սպասարկող անձնակազմի հետ, քանի որ գաղութային ժամանակաշրջանի Ամերիկայում «ոչ մի գնով հմուտ ձեռքեր չկային»³⁹: Եվ քանի որ Նոր Երկրի

Washington: United States Government Printing Office, 1933, pp. 423, 713, 742. The Records of the Virginia Company of London. 1606-26. Vol. IV. Documents II, նշվ. աշխ., էջ 167, 290, 291, 498, 617: **Tashjian, J. H.**, նշվ. աշխ., էջ 5, 6:

³³ **Tashjian, J. H.**, նշվ. աշխ., էջ 6:

³⁴ **Wertsman, Vladimir.** The Armenians in America. 1618-1976. A Chronology & Fact Book. "Ethnic Chronology Series - No. 27." Dobbs Ferry, New York: Oceana Publications, Inc., 1978, p. 1. **Malcom, V. M.**, նշվ. աշխ., էջ 51: **Boghossian, H. B.**, նշվ. աշխ., էջ 165: **Adams, J. T.**, նշվ. աշխ., էջ 28, 165: George Yeardley. https://en.wikipedia.org/wiki/George_Yeardley. Governor, Sir George Yeardley. <https://historicjamestowne.org/history/george-yeardeley/>.

³⁵ Governor, Sir George Yeardley, <https://historicjamestowne.org/history/george-yeardeley/>.

³⁶ Լույս տեղում: Explore the History of Jamestown's Early Years. History Timeline. 1618. <https://historicjamestowne.org/history/jamestown-timeline/>. George Yeardley. https://en.wikipedia.org/wiki/George_Yeardley.

³⁷ Governor, Sir George Yeardley, <https://historicjamestowne.org/history/george-yeardeley/>.

³⁸ Explore the History of Jamestown's Early Years. History Timeline. 1619. <https://historicjamestowne.org/history/jamestown-timeline/>. George Yeardley. https://en.wikipedia.org/wiki/George_Yeardley. Community of Virginia. https://en.wikipedia.org/wiki/Community_of_Virginia. Governor, Sir George Yeardley. <https://historicjamestowne.org/history/george-yeardeley/>.

³⁹ **Malcom, V. M.**, նշվ. աշխ., էջ 51: **Մանկունի Նազարեթ Լ.**, Ամերիկահայ գաղութի պատմությունից. «Պատմա-բանասիրական հանդես». № 1, Երևան, 1962, էջ 94: **Tashjian, J. H.**, նշվ. աշխ., էջ 3:

հարստություններն իրացնելու նպատակով ամեն կերպ խրախուսվել է աշխատավոր ուժի մուտքն այդտեղ, հետևաբար, կարելի է ենթադրել, որ Ջոն Մարտինը Ջ. Յեարդլիի վստահությունը վայելող ու արտոնյալ, ամենայն հավանականությամբ, համեմատաբար հին սպասավորներից էր, որը նրա մոտ ծառայել էր նույնիսկ մինչև նրա Վիրջինիա գաղութ ժամանելը⁴⁰:

Հարկ է չչփոթել հայազգի Ջոն Մարտինին Վիրջինիա գաղութի էրևելի ղեկավարներից անգլիացի նույնանուն կապիտան Ջոն Մարտինի հետ⁴¹:

Միջիգանաբնակ ամերիկահայ պատմաբան Նազարեթ Մանկունին, հենվելով ամերիկացի պատմաբանների վրա, եզրակացրել է, որ XVII դ. սկսած Արևմտյան Եվրոպայից Նոր աշխարհի մուտք գործած աշխատավորների գրեթե կեսը պայմանագրված սպասավորներ» էին: Նա նաև նշել է, որ նախքան Ամերիկա գալրտակված 1610-1612 թթ., Ջոն Մարտինը կամ «Հայ Մարտինը», ամենայն հավանականությամբ, որպես Ջ. Յեարդլիի ուղեկցող, նրա հետ եղել էր Եվրոպայում, մասնավորապես Լեհաստանում, Հոլանդիայում, Ֆրանսիայում, Անգլիայում⁴²:

Ի դեպ, Ջոն Մարտինը Ջորջ Յեարդլիի երկարամյա ու հավատարիմ սպասավորներից էր, որի կարծիքը հաշվի է առնվել նույնիսկ նրա իրավագուրկ վիճակում, այսինքն նախքան բրիտանական քաղաքացիություն ստանալը: Այդ մասին են վկայում նաև Բրիտանական պետական փաստաթղթերը (British State papers): Այսպես, երբ 1618 թ. կառավարիչ Ջորջ Յեարդլին իր գարմիկ Էդուարդ Ռոսինգհամին աշխատանքի էր վերցրել պլանտացիան հսկելու համար, վերջինս Ջ. Յեարդլիի դեմ հայց էր ներկայացրել: Այդ առիթով, դատարանը Գաղտնի խորհուրդը, հայցը փոխանցել էր անգլիացի գաղութատեր մեծավորներին՝ Սըր Դուդլի Դիգգեսին, Սըր Մոուրիս Արոթին և Պարոնայք Թոմաս Գիբսին և Սեմյուել Վրոթին: Վերջին

⁴⁰ Tashjian J. H., նշվ. աշխ., էջ 4:

⁴¹ Նույն տեղում, էջ 3: Historic Jamestowne. Unearthing America's Birthplace. Jamestown Rediscovery. Original Settlers. <https://archive.is/20121220210526>. <http://www.apva.org/history/orig.html>.

⁴² Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 94:

ներխ հաղորդումներն ու վճիռները «ն նաև հիշյալ Ջորջ Յեարդլիի սպասավոր, այն ժամանակ Վիրջինիայի բնակիչ Ջոն Մարտինի վկայությունները փաստել են, որ հայցորդն այդժամ ունեցել է ծաղիկ [տերև, այսինքն ծխախոտ – Բ. Ա.] ուտող զագան [կենդանի – Բ. Ա.]»⁴³, որը վնաս է պատճառել պլանտացիային և այլն:

Բրիտանական տարբեր փաստաթղթերում բազմիցս հիշատակվել է Ջոն Մարտինի անունը: Այսպես, Վիրջինիայի Գաղութային հաշվետվություններում (Colonial Records of Virginia) կարելի է գտնել մեկ այլ հետաքրքիր փաստաթուղթ, որի 20 և 21-րդ կետերում նշվել է Ջոն Մարտինի անունը, ընդ որում, 21-րդ կետն ամբողջությամբ վերաբերվել է նրան: Լատիներեն և հին անգլերեն գրված 1621 թ. փաստաթղթում նշված է, որ թվով հինգ (Էդուարդ Ռոթերս, Ջոն Մարտին, Աուստեն Ստյուարդ, Ջոն Դրասոն, Ռիչարդ Բիմոնդ Ջոն) և ավելի անհատ, արդարադատությունից խուսափելով, փախել էին իրենց երկրներից...: Սպա հիշատակվում է, որ Ջոն Մարտինը, որը ծնվել էր Պարսկաստանում կամ Հայաստանում, անգրագետ էր, նույնիսկ չգիտեր ինչ է տերունական աղոթքը և կամ ինչ է երգումը: Նա հիշատակված կապիտան Արգայի սպասավորն էր և ապրուստի միջոցների առումով ամբողջությամբ կախված էր նրանից և ուրիշ ոչ ոք չունեի [որպես պաշտպան և օգնական]⁴⁴:

Շուտով Վիրջինիայի Քաղաքացիների տունը որոշել է «արտունել» գաղութի օտարերկրացիներին ընդունել բրիտանական քաղաքացիություն: Եվ շատ չանցած՝ 1619 թ., Ջոն Մարտինը հազարից ավելի բնակիչ ունեցող Վիրջինիայում ստացել է բրիտանական հպատակություն դառնալով գաղութային ժամանակաշրջանի «առաջին հպատակագրված (naturalized՝ բնականացված – Բ. Ա.) մարդն ամերիկյան մայրցամաքում»: Նա, որպես «ազատ մարդ», դարձել է 95 ակր⁴⁵ հողի տեր և զբաղվել Վիրջինիայում տարածված

⁴³ Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 51:

⁴⁴ The Records of the Virginia Company of London. 1606-26. Vol. III. Documents I, նշվ. աշխ., էջ 423:

⁴⁵ 1 ակր [acre] = 4.060 մ²:

ծխախոտի մշակությամբ, որն այդ ժամանակ զաղություն եկամտաբեր ձեռնարկ էր⁴⁶:

Կարելի է եզրակացնել, որ ազատ գործելու արտոնությունները, որոնցից օգտվել էր Ջոն Մարտինը, հնարավոր էին դարձնանալ շնորհիվ Էույն՝ 1619 թ. Ջեյմսթաունում մի խումբ օտար աշխատավորների. կողմից իրականացրած ըմբոստելույթի, որի հետևանքով ձեռք էին բերվել որոշակի տնտեսական ու քաղաքական իրավունքներ⁴⁷:

Բրիտանական գրադարանում պահվող սկզբնաղբյուրներից աչարք է դառնում, որ Ջոն Մարտինը, Ամերիկայում շուրջ չորս տարի զբաղվելով ծխախոտագործությամբ, 1622 թ. իր աճեցրած «ծխախոտի ծանրոցով» վերադարձել է Անգլիա, որտեղ մաքսատանը նրանից, որպես ծնունդով օտարերկրացու, կրկնակի հարկ է պահանջվել⁴⁸: Այդ կապակցությամբ նա դիմել է Լոնդոնի Վիրջինիա Ընկերության դատարանին, որի պահպանված արժեքավոր հաղորդագրությունները կարևոր սկզբնաղբյուրային տվյալներ են պարունակում Լորդ երկիր մեկնած առաջին հայի տնտեսական գործունեության մասին: Հիշյալ փաստաթղթերում նա հիշատակվել է որպես «Ջոն Մարտին Պարսիկ»⁴⁹:

Պահպանվել է վերահարկավորման մասին դատարան նրա ներկայացրած 1622 թ. մայիսի 8-ի թվակիր խնդրագիրը⁵⁰, որից մեջ-

բերում ենք հատվածներ⁵¹. «Ջոն Մարտին Պարսիկը համեստ խնդրագիր է ներկայացրել Ընկերության բարեհաճությանը՝ դիմելով Մաքսատուրքի իր Ընկեր հողագործներին՝ իրեն ազատելու կրկնակի Հարկ վճարելուց, ինչը նրանք իրենից պահանջում էին որպես Օտարականի, չնայած նա դարձել էր ազատ մարդ Վիրջինիայում այն ժամանակվա Կառավարիչ Մըր Ջորջ Յեարդլիի կողմից՝ Գաղութի Կնիքը կրող Վկայականով: Նրա [Ջոն Մարտինի] ազատությունը շոշափող Պատասխան էր եկել, ըստ որի, Թագավորից բացի, ուրիշ ոչ ոք չէր կարող նրան դարձնել Անգլիայի ազատ բնակիչ, և Մաքսատանից պահանջվել է, որպեսզի հողագործներն իրենք այդժամ փոխանցում չանեն հաշվի առնելով, որ նրանք արդեն ծանրոցը մուտք են արել իրենց գրքի մեջ և վճարել են ըստ այդմ: Հաշվի առնելով այն Հանգամանք, թե ինչպես պետք է նա [Ջոն Մարտինը] ազատ արձակվեր, նրան հանգամանակից խորհուրդ է տրվել խնդրագիր ներկայացնել Լո. Թրիրին՝ փոխանցելով ինչպա պարտադրող հայտարարությունը և հաշվի առնելով, որ նա [Ջոն Մարտինը] Վիրջինիայի ազատ մարդ էր և մտադիր էր դատավարությունից հետո կրկին վերադառնալ այնտեղ որոշակի թվով ապաստավորներով և Միսսիսսիպի փոքր ծանրոցով, որը նա [այստեղ] ձեռք էր բերել ապահովելու համար իր կարիքները»⁵²:

Ջոն Մարտինին հաջողվել է շահել դատը. նրան թույլատրվել է Անգլիայի քաղաքացիների վրա դրված սովորական հարկով իր ծխախոտի բաժինը ներմուծել Մայր երկիր: Այդ մասին է վկայել դատը նախագահող Լորդ Քեվլնդիշի կողմից 1622 թ. մայիսի 20-ին արձակված հետևյալ որոշումը. «Դատարանը, ուշադրության արժա-

⁴⁶ Եզենք, որ այս և հետագա բնագրերի գրվածքները հին անգլերեն են. առանձին դեպքերում՝ լատիներեն, տեղ-տեղ առկա են ուղղագրական և կետադրական անճշտություններ, որոնք թողել ենք անփոփոխ: Բնագրերը ներկայացնում ենք մեր թարգմանությամբ: XVI դ. և XVII դ. սկզբին անգլիական տպագիր գրվածքներում, առանձին բառերի ուղղագրություններում գործածվել են ոչ ավանդական հնչյունային միավորներ: **Smith, J.**, նշվ. աշխ., էջ 11:

⁴⁷ **Malcom, V. M.**, նշվ. աշխ., էջ 52, 53: **Tashjian, J. H.**, նշվ. աշխ., էջ 4, 5: **Boghossian, H. B.**, նշվ. աշխ., էջ 166: The Records of the Virginia Company of London. 1622-24. Vol. I. The Court Book. նշվ. աշխ., էջ 353, 633:

⁴⁶ **Tashjian, J. H.**, նշվ. աշխ., էջ 4: **Kelty, M. G.**, նշվ. աշխ., էջ 206: **Blum, J. M., Catton B., Morgan Ed. S., Schlesinger A. M. Jr., Stamp K. M., Woodward C. V.**, նշվ. աշխ., էջ 18: **Malcom, V. M.**, նշվ. աշխ., էջ 51, 52: **Boghossian, H. B.**, նշվ. աշխ., էջ 165: **Մանկունի Ն. Լ.**, նշվ. աշխ., էջ 95: **Eggleston, Edward.** The Beginners of a Nation. A History of the Source and Rise of the Earliest English Settlements in America with Special Reference to the Life and Character of the People. New York: D. Appleton and Company, 1896. p. 26.

⁴⁷ **Malcom, V. M.**, նշվ. աշխ., էջ 52:

⁴⁸ Նույն տեղում: **Tashjian, J. H.**, նշվ. աշխ., էջ 4: **Boghossian, H. B.**, նշվ. աշխ., էջ 165-166:

⁴⁹ **Tashjian, J. H.**, նշվ. աշխ., էջ 5: **Boghossian, H. B.**, նշվ. աշխ., էջ 167:

⁵⁰ **Tashjian, J. H.**, նշվ. աշխ., էջ 4: **Boghossian, H. B.**, նշվ. աշխ., էջ 166:

նացնելով Պարոն Մարտին Պարսիկի խնդրանքը իր, որպես Օտարականի, Օխախտտի վրա հողագործների կողմից կրկնակի հարկ դնելու մասին, և նրանց տեղեկացնելով իրենց Արտոնագրի մասին, որը նրանց իրավունք էր տալիս նման արտոնություններ ընձեռել Օտարականներին և դրանով իսկ նրանց հասու դարձնել իրենց օգուվելիք անձեռնմխելիությունից, հետևաբար, կարգադրել է Քարտուղարությանը վերանայել Մաքսատան հողագործներին ներկայացվող նշված հողվածի Տարբերակը և Պարոն Մարտինին վերաբերող Դատարանի հատուկ հանձնարարականով հայցել նրան կատմամբ նրանց բարեհաճությունը՝ հաշվի առնելով նրա համակրանքը [ծխախտտի] Ցանքատարածության նկատմամբ, որտեղ նա մտադիր է նորից վերադառնալ, ինչը կարող է բարեբաստիկորեն խրախուսել այլ օտարականների ևս նման որոշմամբ այնտեղ գնալու համար»⁵³:

Այսպիսով, Ջոն Մարտինի գործի առիթով անգլիական դատարանը, առաջին անգամ լինելով, հատակեցրել է Մայր Երկրի Անգլիայի և «օտար» գաղութաբնակների միջև տնտեսական հարաբերություններն ընդհանրապես իթանելով առևտրի հետագա զարգացումը:

1623 թ. Ջոն Մարտինը, կրկին վավերացվելով որպես բրիտանական քաղաքացի, ունեցել է դիրքի հետագա առաջընթաց. նա դարձել է Լոնդոնի Վիրջինիա ընկերության Մշտական կոմիտեի անդամ և քվեարկելու իրավունքով մասնակցել նրա բազմաթիվ կարևոր նիստերին⁵⁴: Այդ նիստերի արձանագրությունները ևս պահվում են Բրիտանական գրադարանում: Այսպես, 1623 թ. հոկտեմբերի 20-ին և նոյեմբերի 12-ին, ապա 1624 թ. հունվարի 14-ին տեղի ունեցած «արտակարգ» և կարևոր հանդիպումների ու քննարկումների արձանագրություններում Ջոն Մարտինը հիշատակվել է

իր ազգային պատկանելությամբ՝ որպես «Մարտին Հայ»⁵⁵ (ընդ որում՝ առավելապես հին անգլերեն ուղղագրության տարբերակներով՝ “Martin the Armeanian” կամ “Martin an Armeanian,” “Martin Armeanian,” “Martin ye Armenia[n],” “Martin the Armeanian,” “Martin the Armeanian”⁵⁶): Հայտնի է նաև, որ նա Վիրջինիա ընկերության կառավարիչ, կապիտան Լորդ Մեյյունե Արգայի և յոթ այլոց հետ քվեարկել է Ընկերության կանոնադրությունը թագավորին հանձնելու հարցի օգտին⁵⁷: Այդուհանդերձ, անգլիացի բարձրաստիճան մյուս պարոններից (M^r) տարբերակելու համար հայի անվան կողքին, ինչպես նաև մի ոմն լեռ գաղթականի անվան փոխարեն խաչածն տարբերանշան է դրված (այսպես՝ «x Մարտին Հայը» [“x Martin the Armeanian”], «x Լեռը» [“x The Polander”]) և կամ՝ արտոնյալ անգլիացիներից տարբերելու համար նրանց դեպքում, որպես օտարականների, հատուկ շեշտվել է ազգությունը (այսպես՝ «Մարտին Հայ» [“Martin the Armeanian”], «Մոլասկո Լեռ» [“Molasco the Polander”]): Բացի այդ, երկու անունների կողքին արձանագրված է. «Կասկածելի է թե արդյոք նրանք ձայն [ձայնի իրավունք] ունեցել են», ապա նշված է. «Այդ երկուսը, որոնք բարձրացրել են իրենց ձեռքերը, անշուշտ, հայտնի չեն»⁵⁸:

Ալեքսանդր Բրաունն իր «Առաջին Հանրապետությունն Ամերիկայում» գրքում Ջոն Մարտինի անվան կողքին հարցական նշանով արձանագրել է ազգանվան Մարթյան տարբերակը՝ “Martin [Martian ?] the Armeanian” ստանձնապես շեշտելով նրա

⁵³ The Records of the Virginia Company of London. 1606-26. Vol. IV. Documents II, նշվ. աշխ., էջ 290: **Malcom, V. M.**, նշվ. աշխ., էջ 55: The Records of the Virginia Company of London. 1606-26. Vol. IV. Documents II, նշվ. աշխ., էջ 290, 291, 617:

⁵⁶ **Boghossian, H. B.**, նշվ. աշխ., էջ 167: **Tashjian, J. H.**, նշվ. աշխ., էջ 5: The Records of the Virginia Company of London. 1606-26. Vol. IV. Documents II, նշվ. աշխ., էջ 290, 291, 473, 477, 498, 617. **Brown, A.**, նշվ. աշխ., էջ 554: **Malcom, V. M.**, նշվ. աշխ., էջ 54-55:

⁵⁷ Explore the History of Jamestown's Early Years. History Timeline. 1613, <https://historicjamestowne.org/history/jamestown-timeline/>. **Malcom, V. M.**, նշվ. աշխ., էջ 54-55: **Tashjian, J. H.**, նշվ. աշխ., էջ 5: **Boghossian, H. B.**, նշվ. աշխ., էջ 167:

⁵⁸ The Records of the Virginia Company of London. 1606-26. Vol. IV. Documents II, նշվ. աշխ., էջ 290, 291: **Brown, A.**, նշվ. աշխ., էջ 554:

⁵³ The Records of the Virginia Company of London. 1622-24. Vol. II. The Court Book. Part B., նշվ. աշխ., էջ 13, 14: **Malcom, V. M.**, նշվ. աշխ., էջ 53, 54: **Tashjian, J. H.**, նշվ. աշխ., էջ 5: **Boghossian, H. B.**, նշվ. աշխ., էջ 166-167:

⁵⁴ **Wertsman, V.**, նշվ. աշխ., էջ 1: **Tashjian, J. H.**, նշվ. աշխ., էջ 5:

իրական ազգանունը: Կարծում ենք, որ Ջոն Մարտինի իրական անուն-ազգանվան համար հնարավոր են նաև Հովհաննես Մարտիկյան կամ Հովհաննես Մարտիրոսյան տարբերակները⁵⁹:

1624 թ. Ջեյմս I թագավորի կողմից Լոնդոնի Վիրջինիա ընկերության լուծարումից հետո դադարել են նաև Ջոն Մարտինի մասին տեղեկությունները⁶⁰:

Բառացիորեն վերջերս, «Ջեյմսթաունի վերահայտնագործում» ծրագրի հնազետներն իրենց հետազոտության առաջին իսկ տարում (2017-2018 թթ.) այդ տարածքում հայտնաբերել և լուսանկարել են XVII դ. առաջին քառորդի ծխամորձի գլանակի մնացորդ, որի վրա առկա է պարսկերեն գրություն: Ամերիկացի հնագետների իսկ զնահատմամբ, «Օսմանյան կայսրության ծխամորձի գլանակի մնացորդը» (հավանաբար նկատի ունի դրա վրա առկա օսմաներեն կամ պարսկերեն գրությունը – Ք. Ա.) ամենայն հավանականությամբ պատկանել է 1618 թ. անգլիական Հյուսիսային Ամերիկայի այդ տարածք ժամանած «առաջին պարսիկ-ամերիկացուն» Ջոն Մարտին «Պարսիկին», որն անգլիացի ստրկատերեր ծխախոտի պլանտատոր ու վաճառական Ուիլյամ Փիրսի և Վիրջինիա գաղութի կառավարիչ Սլը Ջորջ Յեարդլիի մերձավոր գործակիցն էր⁶¹:

Կարմիր կավից պատրաստված ծխամորձի գլանակի մնացորդի վրա, մասնագետի վերծանմամբ, պարսկերեն կամ օսմաներեն տառերով փորագրված է «Օհան Արմանի»⁶², ինչը կարելի է վստահորեն ասել, որ Օհան-Հովհաննես-Ջոն Արմանի-Հային է պատկանել, որն անշուշտ այդ ժամանակահատվածում վիրջինիա-

րևակ, թերևս միակ հայազգի ծխախոտագործ՝ Ջոն Մարտինն էր, որի անունը, ինչպես արդեն նշել ենք, անգլիալեզու տարբեր սկզբնաղբյուրներում հիշատակվել է նաև որպես «Ջոն Մարտին Հայ» (“John Martin the Armenian”):

Ի դեպ, հարկ է նշել, որ Վիրջինիա գաղութում ընդհուպ մինչև XIX դ. վերջը տարածված էր կավե ծխամորձը: Ծխամորձ պատրաստելու գործում հանրահայտ էր «հաջողակ» Ռոբերտ Քոթոնը, որն Անգլիայից Ջեյմսթաուն էր ժամանել 1608 թ. հունվարին: Ջեյմսթաունի բնակելի տարածքում Ջեյմս Ֆորթում իրականացված հնագիտական պեղումների (2017-2018 թթ.) արդյունքում հայտնաբերվել են բավական մեծ քանակությամբ կարմիր կավից նրա պատրաստած ծխամորձի մնացորդները անգլիական սպիտակ կավից պատրաստված ծխամորձների հետ խոնված⁶³:

Հայերի նպատոր Վիրջինիա գաղութի շերամաքուծության զարգացման գործում

Ծխախոտագործությամբ Վիրջինիան սնտեսական որոշակի բարեկեցության հասցնելուց հետո բրիտանացի նախաձեռնողները և գաղութի գործարարները բազմիցս փորձել են այն փոխարինել մետաքսի արտադրությամբ: Ահա թե ինչու, շերամաքուծության զարգացումը մեծ կարևորություն է ներկայացրել բրիտանական իշխանության համար: Մանավանդ որ, բրիտանացի բարձրաստիճան պաշտոնյաներից և Լոնդոնի Վիրջինիա Ընկերության անդամներից բացի, ուրիշ ոչ ոք իրավունք չունեք մետաքսյա հագուստ կրել⁶⁴: Ավելին, 1621 թ. «Լոնդոնից հրահանգված էր Վիրջինիայի խորհրդին, որ միայն խորհրդի անդամները և հարյուրավոր ուրիշ անձինք մետաքս հագնելու իրավունք պետք է ունենան»⁶⁵: Այդ արգելքն ու, միաժամանակ, ընձեռված հնարավորությունն առիթ են դարձել, որպեսզի գաղութում մտածելին մետաքսի մշակության մասին՝ հակառակ, որ այդ

⁵⁹ Malce, m, V. M., նշվ. աշխ., էջ 55: Brown, A., նշվ. աշխ., էջ 554: Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 94:

⁶⁰ Blum, J. M., Catton B., Morgan Ed. S., Schlesinger A. M. Jr., Stamp K. M., Woodward C. V., նշվ. աշխ., էջ 18: Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 5:

⁶¹ Ուիլյամ Փիրս – անգլիացի ծխախոտի պլանտատոր և վաճառական, ստրկատեր: Ավելի մանրամասն տե՛ս՝ Wolfe, Brendan. William Peirce (d. btw. 1645 and 1647). https://www.encyclopediavirginia.org/Peirce_William_d_btw_1645_and_1647. September 2018. <https://historicjamestowne.org/september-2018/>.

⁶² September 2018. <https://historicjamestowne.org/september-2018/>.

⁶³ Tobacco, <https://historicjamestowne.org/collections/artifacts/category/tobacco/>.

⁶⁴ Eggleston, Ed., նշվ. աշխ., էջ 41:

⁶⁵ Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 95:

ձեռնարկն ավելի աշխատատար էր, քան ծխախոտի արտադրությունը⁶⁶: Ուստի և պետք էր զարկ տալ մետաքսի արտադրությանը:

Թեև գաղութում մետաքսի արտադրության մրցակցությունը խթանելու նպատակով Վիրջինիայի խորհուրդը 50 ֆունտ⁶⁷ մետաքս արտադրողին խոստացել էր ծխախոտի առատ պարգև, այդուհանդերձ, ձեռնարկը ցանկալի արդյունք չէր տալիս⁶⁸:

Համաձայն ամերիկյան հեղինակների և «Վիրջինիայի կենսագրական բառարանի», Էդուարդ Դիգգեսը Վիրջինիայի կառավարող խորհրդի անդամ էր (1654-1656 թթ., 1670-1675 թթ.) և Վիրջինիայի կառավարիչ (1655-1656 թթ.): Լինելով վաճառականի որդի՝ նա Լոնդոնի Վիրջինիա ընկերության փայտեր էր: Մոտավորապես 1650 թ. գալով Վիրջինիա՝ նա 1.200 ակր հող է գնել Յորքի, իսկ 1653 թ.՝ 3.000 ակր հող արտոնագրել Գլուցեսթերի կոմսություններում, որտեղ աճեցրել է անուշաբույր ծխախոտի տեսակներ: Նրբահոտ այդ ծխախոտը բարձր գնով էր վաճառվում Լոնդոնի շուկաներում և այնքան հանրահայտ էր, որ նույնիսկ նրա մահից հետո հայտնի էր նրա անվան առաջին տատերով՝ «ԷԴ ծխախոտ» (Edward Digges – “ED tobacco”) տեսակը⁶⁹:

Էդ. Դիգգեսը հոչակվել է նաև իր արտադրած նուրբ մետաքսով: Սակայն, չնայած գործադրած բոլոր ջանքերին, սկզբնական շրջանում, Նոր երկրում մետաքսի արտադրությունը՝ մետաքսի թրթուրների խնամքն ու թրթուրների սնուցումն ապահովող թթենիների աճեցումը ձախողված վիճակում էր: Ահա այդ ժամանակ է, որ 1653 թ. Վիրջինիա գաղութի երևելի պուրիտան⁷⁰ կառավարիչ, պարոն Էդ. Դիգգեսն իր անձնական ջանքերով ու նյութական մի-

ջոցներով Օսմանյան կայսրությունից (հավանաբար՝ Ջոյուրնիալից) բերել է տվել երկու հմուտ շերամապահ հայերի՝ հսկելու մետաքսի թրթուրների աճը, վերականգնելու ժամանակաշրջանի համար պետական ու առևտրական կարևոր նշանակություն ունեցող, սակայն անհաջողության մատնված, Վիրջինիայի գաղութի շերամարուծությունը և իրենց հմտությունները հաղորդելու տեղաբնիկներին⁷¹: Ի դեպ, այդ երկու գաղթական հայերը «մետաքսի թրթուրներ աճեցնելու իրենց հմտության և փորձառության համար մեծ հեղինակություն էին վայելում իրենց բնիկ երկրում»⁷²: Նոր երկիր բերված երկու հայերը խնամքով հետևել են Էդ. Դիգգեսի շերամարուծական տարածքում՝ Դենբիդի, Բելֆիդի (այժմ՝ Ուիլյամսբուրգ) և Ջեյմս գետի շրջակայքում (Վիրջինիայի Գաղութ), բոժոժների հասունացման համար անհրաժեշտ թթենիների աճին⁷³:

Հարկ է նշել, որ Էդ. Դիգգեսը, զբաղվելով մետաքսի առևտրով, շերամարուծության ասպարեզում հայերի ունեցած հաջողությունների մասին տեղեկացել էր ժամանակին Ռուսաստանում Անգլիայի դեսպանի պաշտոն վարած իր հորից: Հայտնի է, որ շերամի հունդը Ռուսաստան էր մուտք գործում մեծ մասամբ Փոքր Ասիայի (Բուրսա, Ադաբազար) և Արևմտյան Հայաստանի (Խարբերդ, Տիգրանակերտ) հայերի կողմից⁷⁴:

⁶⁶ Eggleston, Ed., նշվ. աշխ., էջ 41:

⁶⁷ Անգլիական 1 ֆունտը [pound] = 453,6 գր (0.45 կգ):

⁶⁸ Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 95:

⁶⁹ Tarter, Brent. Edward Digges (1621-1675). Dictionary of Virginia Biography. https://www.encyclopediavirginia.org/Digges_Edward_1621-1675#contrib.

⁷⁰ Պուրիտանիզմ – XVI-XVII դդ. անգլիացի բողոքական գաղափարախոսություն, որը ձգտում էր մաքրել Անգլիական եկեղեցին Հռոմեական կաթոլիկ գործելաճից՝ այն դարձնելով ավելի բողոքական: Ավելի մանրամասն տե՛ս Puritans. <https://en.wikipedia.org/wiki/Puritans>.

⁷¹ Eggleston, Ed., նշվ. աշխ., էջ 42: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 55: Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 6: Lang, D. M., նշվ. աշխ., էջ 121: Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 95: Wertsman, V., նշվ. աշխ., էջ 1:

⁷² Bruce, Philip Alexander. Economic History of Virginia in the Seventeenth Century (An Inquiry into the Material Condition of the People, Based upon Original and Contemporaneous Records). Vol. I. New York: Macmillan and Co., London, 1896, p. 365. Wertsman, V., նշվ. աշխ., էջ 1: Boghosian, H. B., նշվ. աշխ., էջ 168:

⁷³ Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 95:

⁷⁴ Buxton, Noel and Buxton, Rev. Harold. Travel and Politics in Armenia. New York: The Macmillan Company, 1914, p. 218. Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 55: Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 6: Boghosian, H. B., նշվ. աշխ., էջ 168. Արշալոյս պատկերազարդ տարեգիրք, պատրաստեց Արմենակ Մելիքեան, Գ տարի, Ֆրեզնո, «Ասպարեզ» տպ., 1922, էջ 45:

Այնպես որ, շերամապահ հայեր բերած էր. Դիգգեսը արդեն 1654 թ. համարվել է Վիրջինիայում առաջնակարգ մետաքս արտադրող⁷⁵:

Շուտով շերամապահական գործն այնքան ապշեցուցիչ հաջողության է հասել, որ Վիրջինիա Ընկերության այդ ձեռնարկին «փութաջան նպաստող», էր. Դիգգեսի ընկեր, անգլիացի բանաստեղծ-շերամապահ Ջոն Ֆերրըրը 1654 թ. 173 տողից բաղկացած երկարաշունչ ներբող է հյուսել՝ ձոնելով «Ազնվագույն Պարոն Դիգգեսին՝ *Թուրքիայից Վիրջինիա* նրա երկու հայերի ժամանման կապակցությամբ» և գովերգելով մետաքսի արտադրության մեջ նրա նվաճումները⁷⁶: Այն տպագրվել է «Բարեփոխված Վիրջինիայի շերամորդը» (1655 թ.) վերնագրով հատորի մեջ և սկսվել է հետևյալ տողերով.

«Այնտեղ, ուր Թրթուրն ու սնունդն ի բնե առատ են,
Այնտեղ է պետք հիմնել Առևտուրը Մետաքսի Շոռայ:
Վիրջինիան երկու բանով է անցնում աշխարհին՝
Ճշմարիտ է սա՛ Նախանձն ու Չարը չեն կարող շահել»⁷⁷:

Թեև բանաստեղծությունը յուրատեսակ գովերգ է նվիրված Վիրջինիայի բարգավաճման գործում ծանրակշիռ ներդրում ունեցած գաղութի կառավարիչ Էդուարդ Դիգգեսին և նրա գործընկերներին, այդուհանդերձ, ինչպես վերնագրում, այնպես և բանաստեղծության մեջ առկա են Օսմանյան կայսրությունից նրա բերած

երկու հայերի աշխատասիրությունն ու նրանց ունեցած ներդրումը գովերգող հիացական տողեր ևս: Այսպես.

«Մակայն ազնիվ *Դիգգեսը* Հաղթանակ տարավ,
(Աղջնա կս, շերամի հունդերի պահանջը նսեմացրեց ձեռնարկը)
Նրա երկու հայերը Թուրքիայից ուղարկված
Այժմ իր քաջ ձեռնարկով են մեծապես զբաղված,
Եվ ունի նա բավական պաշար հաջորդ տարվան.
Տաս հազար ֆունտ Մետաքս այնժամ ի հայտ կգա,
Եվ նրա արժանավոր գործերի համբավը երկինք կբարձրանա:
Քաջ, խիզախ Պարոն Սիթ Էյդը առաքված է Աստուծուց,
Գործիք, շարունակիր, առաջ տար մտադրությունը մեծ»⁷⁸:

«Բարեփոխված Վիրջինիայի շերամորդը» վերոհիշյալ նույն գրքում Թուրքիայից Վիրջինիա երկու շերամապահ հայեր բերելու և նրանց արձանագրած հաջողությունների մասին գրվել է նաև հետևյալը. «Առարկությունը, կամ ավելի ճիշտ անհիմն ենթադրություններն այն մասին, թե Թրթուրները վնասվում են *Վիրջինիայի* Որոտներից, բավարար կերպով պարզված է, ոչ միայն այն բանով, որ Բնական թրթուրներն այդքան լավ ապրում և հիասքանչ կերպով բարգավաճում են ծառերի վրա, բայց նաև այս Գարուն մեր թրթուրների վրա արված փորձառությամբ: Երբևէ պատվի պիտի արժանանա Ազնիվ Պարոն *Դիգգեսը* (իր իսկ մեծ պատասխանատվությամբ). [նա] մարդիկ ուղարկեց *Թուրքիայից* երկու հմուտ *Հայեր* բերելու, և տաս փաունդ մետաքս ստեղծեց, որը, եթե Հունդերը չխանգարեին, կլիներ մի քանի Հազար փաունդ»⁷⁹:

Շերամապահ հայերից մեկի՝ «Ջորջ-Վևորգ Հայի» [“George the Armenian”] մասին տեղեկանում ենք 1656 թ. դեկտեմբերին Վիրջինիա գաղութի ժողովի (Assembly of the State of Virginia) կայացրած գոհացուցիչ որոշումից⁸⁰: Այդ փաստը հիշատակվել է նաև գաղութի ընդհանուր օրենքները ներառող «Վիրջինիայի օրենքները» ընդարձակ կանոնադրական ժողովածուի մեջ, «Մասնավոր դեպ-

⁷⁵ Tarter, Brent. Edward Digges (1621-1675). Dictionary of Virginia Biography. https://www.encyclopediavirginia.org/Digges_Edward_1621-1675#contrib.

⁷⁶ Laug, D. M., նշվ. աշխ., էջ 121: The Reformed Virginian Silk-Worm, Or, a Rare and New Discovery of a Speedy Way, and Easie Means, Found Out by a Young Lady in England. She Having Made Full Proof Thereof in May, Anno 1652. 1655. London: Printed by John Streater, for Giles Calvert at the Black-Spread-Eagle at the West End of Pauls, pp. 33-38. Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 55-56: Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 6: Boghosian, H. B., նշվ. աշխ., էջ 168: Mirak, Robert. Tom Between Two Lands. Armenians in America. 1890 to World War I. Cambridge, Mass.: Harvard University Press, 1983. p. 36. Tarter, Brent. Edward Digges (1621-1675). Dictionary of Virginia Biography. <https://www.encyclopediavirginia.org/Digges_Edward_1621-1675#contrib>.

⁷⁷ The Reformed Virginian Silk-Worm, նշվ. աշխ., էջ 33:

⁸⁰ Wertsman, V., նշվ. աշխ., էջ 1: Laug, D. M., նշվ. աշխ., էջ 121:

քերի համար» խորագրի ներքո՝ «Համագործակցության 1656-1657 թթ. դեկտեմբեր» բաժնում: Այսպես, «մետաքս արտադրելը խրախուսելու» համար «Այդ Ջորջ Հայը, մետաքսի գործարքում իր ցուցաբերած աջակցության և նույնը շարունակելու նպատակով երկրում մնալու համար, Ժողովի կողմից պարգևատրվել է չորս հազար ֆունտ ծխախոտով»⁸¹: Սույն փաստը հիշատակել է նաև Վիրջինիայի պատմության վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր աշխատությունների հեղինակ, Վիրջինիա պատմական ընկերության թղթակից-քարտուղար Ֆրիյա Ալեքսանդր Բրյունս իր «Վիրջինիայի տնտեսական պատմությունը տասնյոթերորդ դարում» գրքում, ինչը վկայում է գաղութի համար կարևորություն ներկայացնող նախաձեռնության մեջ ազգությամբ հայ հմուտ վարպետների ունեցած ծանրակշիռ ներդրման մասին. «Ժողովը, Հայ Ջորջին, որը, հավանաբար, Դիգգեսի կողմից Վիրջինիա բերված երկու մարդկանցից մեկն էր, գաղութում մնալու և մետաքսի արտադրությանը նվիրվելու գործում համոզելու նպատակով, նրան տվել է չորս հազար փաունդ ծխախոտ»⁸²: Նշենք, որ, հակառակ գործադրած ջանքերին, սկզբնական շրջանում զգալի արդյունքների չհասած հուսահատված հայերը նույնիսկ ցանկացել են հետ վերադառնալ⁸³:

Սակայն շատ շուտով, մետաքսագործության ասպարեզում հայերի արձանագրած հաջողությունների շնորհիվ, 1654 թ. նոյեմբերի 22-ին Վիրջինիայի կառավարիչ Ռիչարդ Բեննեթը և Խորհուրդը հանձնարարել են Քաղաքացիների տանը «Գաղութին և Անգլիա պետությանն իր նշանակալի հավատարմության վկայություն ցույց տված» էդ. Դիգգեսին ընտրել Խորհրդի կազմում, ինչը միաձայն ընդունվել էր: Իսկ արդեն 1655 թ. մարտի 31-ին Գլխավոր ժողովը

նրան ընտրել էր Վիրջինիայի կառավարիչ: 1660 թ. Անգլիայի Չարլզ II թագավորը էդ. Դիգգեսին նշանակել է նոր, հեղինակավոր Օտտր պլանտացիաների խորհրդում, որին հաջորդելու էր Առևտրի խորհուրդը: 1661 թ. էդ. Դիգգեսը թագավորին է ներկայացրել Վիրջինիայի իր պլանտացիայի մետաքսի որակը և, հաշվի առնելով Անգլիայի շուկայի ծանրաբեռնվածությունը, խորհուրդ տվել կրճատել գաղութներում ծխախոտի արտադրությունը խրախուսելով, ընդհակառակը, մետաքսի, կտավիատի, ռազմածովային պահեստների և կալիական պարարտանյութերի արտադրությունը: 1669 թ., վերադառնալով Վիրջինիա, էդ. Դիգգեսը կրկին վերսկսել է ծխախոտի և մետաքսի արտադրությունը: 1671 թ. Գլխավոր ժողովը նրան պարգևատրել է 100 ֆունտ ստերլինգով⁸⁴ որպես «մետաքս ստանալու հուսադրող շահավետ նախագծի հեղինակ և խթանող», ինչպես նաև նրա մատուցած այլ «կարևոր Օտտայությունների» համար⁸⁵:

«Եթե հավատք ընծայենք [Վիրջինիա Ընկերության] զեկուցումին, Վիրջինիան մատակարարեց Չարլզ Ա-ի թագադրության պատմուճանը: Իսկ Չարլզ Բ-ի մետաքսագգեստը անտարակույս իր Վիրջինիայի տիրապետության մեջ մշակված խոզակներեն պատրաստված էին: Տիկս անունով Պարոն մը հայեր բերել տվավ Վիրջինիայի իր խոզակի արտադրության հսկելու 1655 թ.», – ամերիկացի պատմաբան, գրող Էդուարդ Էգլեսթոնի (1837-1902 թթ.) XIX դ. վերջին մատնանշած խոսքն է մեջբերել Ն. Մանկունին⁸⁶:

Վիրջինիա գաղութում մետաքսագործությամբ զբաղվող «Ջորջ Հայի» մասին հիշատակել է նաև ԱՄՆ ներգաղթած իռլանդացի պատմաբան Ջոն Դելի Բարքը (մոտ. 1776-1808 թթ.) իր «Վիրջինիայի պատմությունը. Իր առաջին բնակեցումից մինչև օրս» քառահատոր աշխատության երկրորդ հատորում: Նա նշել է, որ Վիրջինիա գաղութում խրախուսվել է առևտուրն ու ձեռքի աշխատանքը:

⁸¹ Hening, William Waller. The Statutes at Large; Being a Collection of All the Laws of Virginia. From the First Session of the Legislature, in the Year 1619. Published Pursuant to an Act of the General Assembly of Virginia, Passed on the Fifth Day of February One Thousand Eight Hundred and Eight. Vol. I. New-York: Printed for the Editor, By R. & W. & G. Bartow, 1823, p. 425. Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 56; Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 7; Lang, D. M., նշվ. աշխ., էջ 121; Boghosian, H. B., նշվ. աշխ., էջ 169:

⁸² Bruce, Ph., նշվ. աշխ., էջ 368:

⁸³ Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 95: Մուշեղ Եպիսկոպոս (Մերոբեան), նշվ. աշխ., էջ 15:

⁸⁴ 1 ֆունտ ստերլինգ [pound sterling] = 708.73 հայկական դրամ:

⁸⁵ Tarter, Brent. Edward Digges (1621-1675). Dictionary of Virginia Biography. https://www.encyclopediavirginia.org/Digges_Edward_1621-1675#contrib.

⁸⁶ Edward Eggleston. <https://en.wikipedia.org/wiki/Edward_Eggleston>. Eggleston, Ed., նշվ. աշխ., էջ 42: Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 95:

քը: Այսպես, 1663 թ. «ի գոհունակություն [գաղութի] ժողովի, Ջորջ Հայը, արդարացնելով Վիրջինիայում տաս փառնող մետաքսի կծիկի արտադրությունը, հրամայված էր, որ, օրենքի համաձայն, նա կվճարվեր այս տարվա գանձումից»⁸⁷:

Այսպիսով, ինչպես նշել է Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանն իր «Ամերիկահայ տարեցույցում» (Ա տարի, Բոստոն, 1912), Վիրջինիայում «...հայ միտքն ու ճարտարությունը կրցած է սատարել իր կազմութեան խանձարուրքին մեջ եղող Ամերիկեան մետաքսագործական ճարտարուեստին» դառնալով Նոր աշխարհում շերամաբուծության ու մետաքսագործության բնագավառում առաջնեկներ⁸⁸:

Ընդհանրապես, Ամերիկայի հնագույն շրջանին և Վիրջինիա գաղութի հիմնադրմանը վերաբերող պատմական և իրավական փաստաթղթերի մեծ մասում ավելի հաճախ են Նոր երկիր մուտք գործած առաջին երկու հայերի (Ջոն Մարտին Հայ և Ջորջ Հայ) մասին հիշատակումները, մինչդեռ հետագա տարիներին եկած հայերի մասին հատուկե՛նտ: Դա բացատրվում է հիմնականում տվյալ ժամանակաշրջանի Ամերիկայի համար էական նշանակություն ունեցող զբաղմունքներում՝ ծխախոտագործության և մետաքսագործության ասպարեզներում նրանց վարած բարեհաջող տնտեսական գործունեությամբ և ունեցած նշանակալի հաջողություններով:

⁸⁷ John Daly Burk, https://en.wikipedia.org/wiki/John_Daly_Burk. Burk, John. The History of Virginia: From Its First Settlement to the Present Day, <https://catalog.hathitrust.org/Record/001874143>. Burk, John. The History of Virginia, from Its First Settlement to the Present Day. Vol. II. Petersburg, Virginia: Printed by Dickson & Pescud. 1805, pp. 132, 133.

⁸⁸ Մուշեղ Եպիսկոպոս (Սերոբյան), նշվ. աշխ., էջ 15: Buxton, N. and Buxton, Rev. H., նշվ. աշխ., էջ 219:

Հայերի ներկայությունը ամերիկյան այլ գաղութներում (Մասաչուսեթս, Կարոլինա, Ջորջիա)

Հետագա տարիներին Ամերիկա եկած հայերի մասին պահպանվել են շատ սակավ, հաճախ ենթադրական տեղեկություններ: XVII-XVIII դդ. ընդգրկող այդ ժամանակաշրջանում հայերը հիմնականում եկել են ինչպես Վիրջինիայում հաստատված հայերի ազդեցության շնորհիվ, այնպես և Մեծ Բրիտանիայի հետ առևտրական առավել գործուն հարաբերություններ ունեցող եվրոպական որոշ երկրներից (հատկապես Հոլանդիայից) նաև Հնդկաստանից⁸⁹: Այդ երկրներում ևս հայերը տակավին XVII դ. սկզբից ներգրավված էին հիմնականում առևտրական գործունեության մեջ և ամենայն հավանականությամբ վերաբնակվել էին ամերիկյան նորաստեղծ տարբեր գաղութներում՝ Վիրջինիայից բացի, նաև Մասսաչուսեթսում, Հարավային Կարոլինայում և Ջորջիայում⁹⁰:

Այսպես, Դ. Մ. Լանգը նշել է, որ XVIII դ. Ամերիկայում հայկական նշանակալի գործունեություն հետքեր չեն հայտնաբերվել: Նման կարծիքին է նաև Ջ. Թաշճյանը, ըստ որի, երկար ժամանակ *Մասսաչուսեթսի գաղութում* հայերի ներկայության մասին խոսելը կասկածներ է հարուցել: Այդուհանդերձ, նա հիշատակել է ամերիկյան Նոր Անգլիայի տարածքում գործող դատավոր, վաճառական, Մասսաչուսեթս գաղութի կառավարիչ խորհրդի անդամ, մի շարք աշխատությունների հեղինակ Սեմյուել Սյուալի [Samuel Sewall] (1652-1730 թթ.) մասին, որը 1674-1729 թթ. ներառող իր հանրահայտ «Օրագրում» (“Diary”)⁹¹ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել հավանաբար հայկական ծագման մի հայի մասին, որն եկել էր Նոր երկրի այդ պուրիտան գաղութ:

⁸⁹ Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 56-57:

⁹⁰ Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 12:

⁹¹ Lang, D. M., նշվ. աշխ., էջ 121: Samuel Sewall Diaries. 1672-1729. Guide to the Collection, <<https://www.masshist.org/collection-guides/view/fa0243>>. Diary of Judge Samuel Sewall. Massachusetts Historical Society. 1672-1729. Mass., in 11 Vols (Handwritten). <<http://www.masshist.org/collection-guides/view/fa0242>>.

1682 թ. նոյեմբերի 15-ի չորեքշաբթի օրվա իր գրաստան մեջ հայտնի իրավաբանը հաղորդել է Քեմբրիջի եկեղեցի (Cambridge Church) իր այցելության և այնտեղ կրոնական ծառայության ժամանակ հանդիպած հունգարահայ համարվող **Ստեփան Չադորիի** [Stephan Zadori] (հավանաբար հայկական Չադորյան, Աստուրյան կամ Աստվածատուրյան ազգանունների տարբերակը) մասին, որը Նոր Անգլիայի տարածք էր այցելել նույն թվականին⁹²: Ս. Սյուալն իր հանդիպման մասին մասնավորապես գրել է. «Մա առավել բարեպատեհ օր [է], և Ձեռնադրությանը շատ Ժողովուրդ [կա]: Ես գնացի և վերադարձա [եկեղեցի] ոտքով՝ Հունգարացի ՊՐ. ՋԱՐՈՐԻՆ ԸՆկ. [երակցությամբ], որը, ես գտա՝ հայ է [Arminian – sic?!]»⁹³:

Ըստ Ջ. Թաշճյանի, Ս. Սյուալն ակնարկել էր Ս. Չադորիի կրոնական համոզմունքը, որի նկատմամբ ինքը համակրանք չէր տածում և որը, ամենայն հավանականությամբ, «արմինիանականություն» էր⁹⁴: Մեր կարծիքով, ավելի հավանական է, որ Ս. Սյուալը հայ (“Armenian”) էթնոնիմը շփոթությամբ կամ անգիտությամբ նույնացրել է «արմինիանականություն» (“Arminianism”) կրոնական ուղղության հետ⁹⁵:

Իսկ Չադորիի անվան Ստեփան լինելու, ինչպես նաև բավականաչափ այլ փաստերի մասին տեղեկություններ կարելի է քաղել 1682 թ. հոկտեմբերի 10-ին Քենթրբերիի արքեպիսկոպոսին մակագրված նամակից: Նամակում Ստ. Չադորին նշել է, որ մինչև Ամերիկա մեկնելը նա երկու տարի անց էր կացրել Անգլիայում և ցանկություն ուներ մեկնել Հունգարիա: Սակայն, ակնարկել է, որ «Հունգարիայի վերջին իրադրության պատճառով» խուսափել է վերա-

դառնալ (նկատի ունի այդ ընթացքում Բալկաններում և կենտրոնական Եվրոպայում թուրքական ռազմական գործողությունները): Ապա Ստ. Չադորին շնորհակալություն է հայտնել արքեպիսկոպոսին նույն թվականի մայիսի 29-ին իր հանդեպ ցուցաբերած բարեհաճ վերաբերմունքի համար: Ամենայն հավանականությամբ, արքեպիսկոպոսն ապահովել էր Ստ. Չադորիի Ամերիկա այցելության թույլտվությունը, որտեղ նա մնացել էր վեց ամիս: Նամակից նաև տեղեկանում ենք, որ նա երեք ամսով «հյուրընկալվել էր» Նոր Անգլիայում և համոզվել, որ Մասաչուսեթսի գաղութաբնակները խորապես կրոնական են և հավատացյալ: Քենթրբերիի արքեպիսկոպոսին հղած նամակի վերջում Ստ. Չադորին հավաստիացրել է, որ ինքը «մինչև իր կյանքի վերջ [կմնա] Չերդ Պայծառափայլության ամենից հավատացյալ հպատակը»: Վերոհիշյալ փաստը ևս վկայում է, որ Ստ. Չադորին «արմինիանականություն» աղանդի հետևորդ չէր⁹⁶: Պերճախոս լատիներեն գրված այդ նամակից, ինչպես նաև Ս. Սյուալի ակնարկներից կարելի է եզրակացնել, որ նամակը գրելու պահին քսանինամյա Ստ. Չադորին «Պանոնյան»⁹⁷ Հունգարիայից էր և որոշակի համբավ ունեցող գիտնական պիտի եղած լիներ: Ամենայն հավանականությամբ, նա սերում էր Բագրատունյաց թագավորության (961-1045 թթ.) անկումից հետո Եվրոպա, մասնավորապես Լեհաստան, գաղթած հայերի սերունդներից⁹⁸: Հայկական ծագումով անունների կարելի է հանդիպել նաև **Կարոլինայի գաղութի** վաղ շրջանի փաստաթղթերում: Ի դեպ, Կարոլինան ամեն կերպ խրախուսել է «օտար» գաղթականությունը: Հետևաբար ենթադրվում է, որ այնտեղ մեկնած հայերի մի մասը Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում տարածված այդ կոչերին արձագանքածներն էին: Կարոլինայի գա-

⁹² Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 7, 8: Wertsman, V., նշվ. աշխ., էջ 1:

⁹³ Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 7:

⁹⁴ Նույն տեղում, էջ 8:

⁹⁵ Այդ կրոնական ուսմունքի համաձայն, ազատ կամքը վճռական դեր ուներ փրկության գործում: Ավելի մանրամասն տե՛ս Арминиа́нство, <https://ru.wikipedia.org/wiki/Арминиа́нство>: Արևմտյան կրոնական բողոքական ճյուղերից մեկը համարվող այդ ուսմունքի գաղափարախոսը հոլանդացի աստվածաբան Յակոբուս Արմինիուսն [Jacobus Arminius] էր (1560-1609 թթ.): Ավելի մանրամասն տե՛ս Arminianism, <https://en.wikipedia.org/wiki/Arminianism>:

⁹⁶ Wertsman, V., նշվ. աշխ., էջ 1: Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 8:

⁹⁷ Պանոնիա – Հռոմեական կայսրության (27 թ. մ. թ. ա. – 476 թ.) գավառ, տարածք Կենտրոնական Եվրոպայում, որն ընդգրկել է ժամանակակից Հունգարիան, Արևելյան Ավստրիան, Հարավ-արևմտյան Սլովակիան, Հյուսիսային Սլովենիան, Հյուսիսային Խորվաթիան, Հյուսիս-արևելյան Սերբիան, Հյուսիսային Բոսնիան և Հերցեգովինան: Տե՛ս Римская империя, https://ru.wikipedia.org/wiki/Римская_империя. Паннония, <https://ru.wikipedia.org/wiki/Паннония>:

⁹⁸ Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 8-9: Wertsman, V., նշվ. աշխ., էջ 1:

դուքի վաղ շրջանին վերաբերող «Հարավային Կարոլինա ուղարկված հոգևորականների հաշվետվություն» կոչվող փաստաթուղթը բացահայտել է վաղ շրջանում այնտեղ հայի առկայության մասին: Կարոլինա եկած առաջին հայը համարվել է պատվելի պարոն Փիթերը **Թուսթյանը** [Rev. Mr. Peter Tustian] (հավանաբար, հայկական հնչողության Պետրոս Դուստրյան)⁹⁹:

Փաստաթղթում կարդում ենք հետևյալը. «1719 թ. Պառվելի Պարոն Փիթերը Թուսթյանը հասարակության կողմից նշանակվել էր հոգևորական, սակայն, ժամանելով, նա երկիրը գտավ կուսակցական պատակտումներով այնքան խառնաշփոթ վիճակում, որ շուտով տեղափոխվեց Մերիլենդ»¹⁰⁰: Փ. Թուսթյանը նշանակվել էր Հարավային Կարոլինայի Սբ. Գևորգ թեմի հոգևորական: Եվ ինչպես Ջ.Թաշճյանն է պարզաբանել, քանի որ հայը չէր կարող Անգլիկան եկեղեցու հովիվ դառնալ, ուստի հնարավոր է, որ նա Անգլիա մեկնած վաղ շրջանի գաղթականի սերնդից էր, որն ամբողջովին անգլիացի էր դարձել պահպանելով միայն անունը¹⁰¹:

Հիշատակումներ կան, որ այդ նույն ժամանակ Կարոլինայում եղել են նաև այլ հայեր: Այսպես, **Ջեյքոբ Սատուրը** [“Jacob Satur”] (հավանաբար՝ Հակոբ Սատուրյան կամ Ասատուրյան, կամ Աստվածատուրյան) ծառայել է որպես նոր եկեղեցի հիմնադրելու հանձնախմբի պատասխանատու անձ, եղել է նաև պատվելի Թուսթյանի թեմի երևելի անդամ¹⁰²:

Ոչ-անգլիական արյուն ունեցող գաղթականների համայնքներ հայտնաբերվել են Հյուսիսային Ամերիկայի առավելապես հարավային կողմի անգլիական գաղութներում: Այսպես, պահպանվել են

Ջորջիա գաղութի վաղ ժամանակաշրջանի մի շարք փաստաթղթեր, որտեղ հիշատակվում են հրեա և գերմանացի գաղթական խմբերի մասին: Կրոնական փախստականների համար նա որպես ապաստան հաստատված Ջորջիայի գաղութում պետք է, որ հայեր եղած լինեն¹⁰³: Այսպես, գաղութի մի շարք տարբեր փաստաթղթերում հիշատակվում է ումն **Ստեֆըն Թարրյանի** [Stephen Tarrian] անունը՝ ուղղագրական տարբեր գրություններով (նաև Ստեֆըն Թարրյեն / Stephen Tarrien, Ստեֆըն Թերյեն / Stephen Terien)¹⁰⁴: Ամենայն հավանականությամբ դրանք Ստեֆան Տերյան անուն-ազգանվան աղավաղված ձևերն են:

Ջեյմս Թաշճյանի վկայությամբ, Ստեֆըն Թարրյեն կամ Ստեֆըն Թերյեն անվան ձեռագիր մակագրությունն ամրագրված էր 1738 թ. դեկտեմբերի 9-ի թվագրությամբ խնդրագիր-նամակի տակ, որն ուղղված էր «Գաղութի հոգաբարձուներին»¹⁰⁵: Ստորագրողները, որոնք հանդես էին եկել որպես «Ջորջիա գավառի վերաբնակիչներ, ազատ հողատերեր և բնակիչներ», հոգաբարձուներից խնդրում էին իրենց հողատարածքների համար սահմանել «Անվճար սեփականության իրավունք կամ պարզ վճար»¹⁰⁶: Բացառված չէ, որ այլ հայեր նա եղած լինեն հիշյալ Ջորջիա գաղութում¹⁰⁷: Իսկ ուղղագրության տարբեր ձևերը կարող են վկայել, որ Ստեֆըն Թերյենը (Թարրյեն) չէր տիրապետում անգլերենին (Տվյալ անձի ֆրանսիացի լինելու հանգամանքը նա հավանական չէ, քանի որ նման ազգանուն ֆրանսերենում անսովոր է, իսկ Ստեֆըն անվան փոխարեն նրանց մոտ տարածված է Էթյեն [Etienne] տարբերակը)¹⁰⁸:

Ստեֆըն Թարրյանի (Stephen Tarrian) անունը հիշատակվում է նաև «Ջորջիայի պատմական ընկերության ժողովածուների» № 35 Հավելվածի «Փոքր ինչ երևելի տղամարդ կոչված բողոքավորների

⁹⁹ Լույս տեղում:

¹⁰⁰ Լույս տեղում, 10, 11:

¹⁰¹ Wertsman, V., նշվ. աշխ., էջ 1:

¹⁰² Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 11:

¹⁰³ Լույս տեղում, էջ 12:

¹⁰⁴ Լույս տեղում, էջ 11:

gnugulmud» (“Collections of the Georgia Historical Society.” Appendix, No. XXXV. “A List of Complainants, Who are Styled a Few Clamorous Malecontents”), որտեղ նշվում է 251 անձի անուն¹⁰⁹:

Հիշյալ հայազգիի անվան Ստեֆրն Թարրյեն (Stephen Tarrien) տարբերակն արձանագրված է նաև 1738 թ. դեկտեմբերի 9-ին Ջորջիայի Մավանա բնակավայրի մի շարք վերաբնակիչների, ազատ հողագործների, բնակիչների, ինչպես նաև 3 դատավորների կողմից (ընդհանուր առմամբ 117 անձ) տեղի հոգաբարձուներին ուղղված երկարաշունչ նամակի տակ, որը վերնագրված էր «Հարգարժան հոգաբարձուներին Ամերիկայում Ջորջիա գաղութ հիմնելու համար»¹¹⁰:

Եզրակացություն

Այսպիսով, պարզ է դառնում, որ գրեթե միշտ հայեր եղել են անգլիացի երևելի գաղութարար-վերաբնակիչ բարձրաստիճան պաշտոնյաների կողքին, ինչպես նաև հոգևորականների շրջապատում (հետախույզ-ճանապարհորդ Քրիստափոր Կոլումբոս, Վիրջինիա գաղութի կառավարիչ, կապիտան Ջոն Սմիթ, Վիրջինիա գաղութի կառավարիչ կապիտան Սըր Ջորջ Յեարդլիի, Վիրջինիա գաղութի կառավարիչ, կապիտան, Լորդ Սեմյուել Արգայի, ստրկատեր, ծխախոտի պլանտատոր և վաճառական Ուիլյամ Փիրս, Վիրջինիա գաղութի կառավարիչ Էդուարդ Դիգգեսը, դատավոր, վաճառական, Մասաչուսեթս գաղութի կառավարիչ խորհրդի անդամ Սեմյուել Մյուլլի, Քենթրբերիի արքեպիսկոպոս և այլք):

Բրիտանական գաղութատիրության տվյալ ժամանակահատվածում Ամերիկա մուտք գործած հայերի ստույգ թիվը դժվար է որոշել, քանի որ ընդհուպ մինչև XIX դ. սկիզբ նորեկների, այդ թվում նաև հայերի, գրանցման վերաբերյալ փաստաթղթեր չեն պահպան-

վել: Միայն 1820 թվականից է, որ ԱՄՆ ներգաղթողներն արձանագրվել են ուրույն ձևով՝ ըստ իրենց գաղթած երկրների¹¹¹:

Ըստ Ն. Մանկունու հաշվարկների, 1610-1612 թթ. մինչև 1820 թ. Նոր երկիր է մուտք գործել շուրջ 100 հայ¹¹²:

Այրուհանդերձ, պատմական տվյալ ժամանակաշրջանում Ամերիկա մուտք գործած վերոհիշյալ առաջին հայերով չի պայմանավորվել հետագա տարիներին հայկական տարբեր տարածքներից դեպի ԱՄՆ նպատակաուղղված տեղաշարժը. նրանք սուկ գաղթակալության հիմնական հոսքից դուրս գունվող անհատներ էին:

Ի մի բերելով անգլիական գաղութատիրության շրջանում Ամերիկա մեկնած առաջին սակավաթիվ անհատ հայերի մասին մեզ հասած Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի գրադարաններում պահվող սկզբնաղբյուրային սակավ, բայց արժեքավոր տեղեկությունները, կարելի է եզրակացնել, որ նրանց մեծ մասը տնտեսական ու պատմական հանգամանքների բերումով եվրոպական տարբեր երկրներում զրկված հայեր էին կամ նրանց օտարացած սերունդները, որոնք, առևտրական և այլ հանգամանքների բերումով առնչվելով Բրիտանիայի հետ, միմյանցից տարբեր, հիմնականում անհատական դրդապատճառներով անցել էին նոր վերաբնակվող գաղութ և ներգրավվել նրա տնտեսական ու հոգևոր կյանքի տարբեր բնագավառներում: Ահա թե ինչու, նրանք մեծ մասամբ կրել են օտարացած անուններ, ինչպես նաև պատկանել քրիստոնեական հավատի տարբեր դավանանքների: Բայց և այնպես, բրիտանական և ամերիկյան գաղութային պաշտոնական փաստաթղթերում նրանց հայկական ծագման մասին երբևէ հանդիպող ակնարկները հավաստիացնում են այդ ժամանակաշրջանում Նոր Երկրում օտար վերաբնակիչների ազգային պատկանելիության նկատմամբ եղած մեծ հետաքրքրությունը՝ դրանով իսկ ձեռք բերելով ազգային ու պատմական որոշակի արժեք:

¹⁰⁹ Non Sibi, Sed Aliis. Collections of the Georgia Historical Society, Vol. II. Savannah: Printed for the Society, MDCCCXLII [1843], pp. 155-158.


¹¹⁰ Նույն տեղում, էջ 217-220, 221-222.

¹¹¹ Ավագյան Քարիկ. Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.). Երևան, 2000. էջ 17: Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 95:


¹¹² Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 105:



Կապիտան Ջ. Սմիթ



Վիրջինիայի գաղութը (1607-1776 թթ.)



Գաղութային ժամանակաշրջանի Ջեյմսթաունը

KNARIK AVAGYAN
Ph.D. in History, Armenia

**SOURCES OF GREAT BRITAIN AND THE USA
ABOUT THE FIRST ARMENIANS ARRIVED AT THE
COLONIAL PERIOD OF AMERICA
(BEGINNING OF THE 17TH –
FIRST HALF OF THE 18TH CENTURY)**

Keywords: New World, America, Britain, London, first Armenians on the New Land, Virginia Community, Jamestown, John Martin the Armenian, tobacco dealing, silkworm breeding.

Studying the desultory information in British and American sources, about the first Armenians, who had left for America in the period of British colonialism, it is possible to conclude, that their vast majority was composed of Armenians scattered in various European countries due to economic and historical circumstances or their alienated generations. They have being related to Britain to commercial or other reasons and, independent from each other and mainly for individual motives, moved to the new resettling community in the USA and had been involved in the various spheres of its economic and spiritual life. That is why they mostly bore foreign names and had adopted other confessions of the Christian faith.

ԿՈՆԱՐԻԿ ԱՅԱԿՅԱՆ
կ.ի.ն., Արմենիա

ИСТОЧНИКИ ВЕЛИКОБРИТАНИИ И США
О ПЕРВЫХ АРМЯН ПРИЕЗЖАВШИХ В АМЕРИКУ
В КОЛОНИАЛЬНОМ ПЕРИОДЕ
(НАЧАЛО VII ВЕКА – ПЕРВАЯ ПОЛОВИНА VIII ВЕКА)

Ключевые слова: Новая земля, Америка, Британия, Лондон, первые армяне в новой стране, колония Вирджиния, Джеймстаун, Джон Мартин Армянин, табаководство, шелководство.

Изучая скудную, но ценную источниковедческую информацию, хранящиеся в библиотеках Великобритании и США, можно сделать вывод, что большинство первых армян на Новой земле – в Америке, были приезжие из европейских стран или их отчужденные потомки. В силу торговых и других обстоятельств связываясь с Великобританией, они перебрались в новую переселенную колонию и были вовлечены в различных сферах ее экономической и духовной жизни. Вот почему, в большинстве они носили иностранные имена, а также принадлежали к разным конфессиям христианской веры.

ԲԱՆԻՆՏ ԿՈՎԱԶ
պ.գ.դ., Հունգարիա
Գերմաներենից թարգմանությունը՝
ԳԱՅԱՆԵ ՇԱԽԿՅԱՆԻ

«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ».
ԴՈՆՂՈՆԻ ՎԱՐԴԱՆ ՅՈԶԵՖԻ ՀՈՒՆԳԱՐԱԼԵԶՈՒ ԶԵՆՍԱԳԻՐԸ

Հիմնաբառեր. Պատմագրություն, Չամչյան, եկեղեցի, հայերը Տրանսիլվանիայում, ձեռագիր, հունգարահայեր, Մխիթարյան միաբանություն:

Նորագույն շրջանի բազմաթիվ եվրոպացի վաճառականներ, ճանապարհորդներ և հոգևորականներ բազմիցս իրենց հաղորդումներում փաստել են հայերի ներկայության մասին Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում: Նրանց ճանապարհորդական տեղեկությունները, ինքնակենսագրականները, արխիվային նյութերի նկարագրությունները և եկեղեցական հուշամատյաններում հիշատակումները կարևոր աղբյուրներ են, որոնք կազմում են տարածաշրջանի ավելի լայն սոցիալական միջավայրում հայկական տարասեռ ներկայության ընդհանուր պատկերը: Բանի որ առկա նյութը ամբողջությամբ հնարավոր չէ ներկայացնել այս հոդվածի շարադրանքում, ապա մենք կցանկանալինք բերել երկու օրինակ:

1. 17-րդ դարի եվրոպացի ճանապարհորդներից Սիմեոն Լեհացին մանրամասն պատմել է այն վայրերի մասին, որ նա այցելել է Արևելյան Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում և Հայաստանում, և այն մարդկանց, որոնց հանդիպել է 1608–1619 թվականների ընթացքում: Օսմանյան կայսրության նահանգներում հայկական, դպրոցական, հրեական և մահմեդական ծագում ունեցող ազգերի ներկայության նկարագրությունից զատ, նա իր ուսումնասիրության առանցքում դրել է նաև

հայերի ներկայության հարցը Լեհաստանում, հատկապես՝ Լվովում¹:

2. 2008 թ. պատմաբան Ալմութ Բուեքը հրատարակել է Մարտին Գրունեգի ձեռագրերի չորս հատորանոց, գրեթե 2000 էջանոց պատմաբանական հրատարակությունը՝ նրա ընտանիքի՝ Գդանսկում ապրելու տարիների, Լեհաստանում հեղինակի վարած հոգևոր կյանքի և նրա առևտրական ուղևորությունների մասին: Այս քառահատորյակի միջոցով, որտեղ շատ հաճախ կարելի է հանդիպել տեղեկություններ հայերի մասին, հնարավոր է դառնում մանրամասնորեն ծանոթանալ հայերի առօրյա կյանքին՝ հատկապես լեհական Ռեչ Պոսպոլիտայի (Rzeczpospolita Polska) ժամանակաշրջանում²:

Այս երկու օրինակները ցույց են տալիս աղբյուրի հավաստիությունը: Աշխատության մեջ առկա տարբեր տեղեկությունները, որոնց մասին տեղեկանում ենք հայագրի կամ ոչ հայագրի անձանցից, փաստում են հայերի և հայկական համայնքների առկայության մասին Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում: Նշենք նաև, որ Հռոմի կաթոլիկ միսիոներներից շատերը ֆրանսերեն, լատիներեն կամ իտալերեն լեզուներով աշխատություններ են հրատարակել հայերի, հայ եկեղեցու և մասնավորապես հայոց պատմության վերաբերյալ: Նրանց աշխատանքները հասակ գրված էին հատուկ հրահանգով, միսիոներական դիտավորյալով և հատուկ նպատակներով, բայց միևնույն ժամանակ, գիտակցաբար կամ անգիտակցաբար, միսիոներները նպաստեցին ժամանակակից հայագիտության ծնունդին³:

¹ Neueste Ausgabe: The Travel Notes of Simeon of Poland. Translated: Georg Bournoutian, Costa Mesa, Ca., 2006.

² Almut Bues (Hsg): Martin Grüneweg: Die Aufzeichnungen des Dominikaners Martin Gruneweg (1562 - ca. 1618) über seine Familie in Danzig, seine Handelsreisen in Osteuropa und sein Klosterleben in Polen. Bd. 1-4. Wiesbaden, 2008.

³ Nagy, Kornél: Az erdélyi örmény egyházhoz kapcsolódó olaszországi forrásokról. In: Újváry, G (szerk.) Lymbus 2008: Magyarságtudományi forrásközlemények. Budapest, Magyarország : Országos Széchényi Könyvtár (OSZK), Balassi Bálint Magyar Kulturális Intézet (BBMKI) (2008) pp. 411-428. . 18 p., Vgl: Nagy, Kornél: Túlélésre kényszerítve. Az örménység a kora újkor hajnalán. Világtörténet (2014) Nr. 3, 367-380. hier: 373.

Սույն հոդվածում կցանկանայի ներկայացնել մի ձեռագիր, որը գրվել է բոլորովին այլ հեռանկարով: Հայկական ծագում ունեցող հեղինակը հայերի պատմությունը գրել է մենագրական մեթոդով, ուստի հայերի քաղաքական պատմությունը սկզբից մինչև իր ժամանակները փորձել է ներկայացնել ժամանակագրորեն կազմած աշխատության մեջ:

Ժամանակագրական ժանրի վերաբերյալ պետք է փաստել, որ միջնադարում և վաղ շրջանում եկեղեցին, պետությունը և, առաջին հերթին, տարբեր ժողովուրդների ներկայացուցիչները ստիպված էին պատմությունը շարադրել ավելի խստապահանջ ոճով. պետության գոյությունը և տոհմային իշխանության օրինականությունը պետք է հիմնավորված լիներ պատմականորեն: Այն ծառայում էր նոր պետական կարգը հաստատելու և քրիստոնեության տարածումը փաստագրելու համար: Այդ նպատակով պատմական առաջին աշխատությունները՝ մատենագրությունները, գրվել են անձամբ արքաների հանձնարարությամբ: Ժամանակագրությունները (Քրոնիկոնները) որպես կանոն պատմական աշխատություններ են, որոնք ներառում են մի ժողովրդի կամ մի երկրի ժամանակագրորեն ներկայացված ամբողջական պատմությունը: Նման աշխատություններն ընդգրկում են իրադարձությունների, ժամանակաշրջանների և տիրակալների գործողությունների մի մեծ շարք⁴:

«Az érmény Nemzet Históriaja», այսինքն՝ «Հայ ազգի պատմությունը» շարադրվել է հայկական ծագում ունեցող անձի կողմից, որը հայոց պատմությունը գրել է հունգարերենով: Ժամանակագրությունը գրված է ձեռագիր: Այն մեկ օրինակ է, որը պահվում է Բուդապեշտում՝ Հայ կաթոլիկ եկեղեցու թանգարանում⁵: Հեղինակը և նրա աշխատությունը մինչ օրս ուսումնասիրված չեն: Մասնագիտական գրականության մեջ ոչ ոք չի ուսումնասիրել այս ձեռագիրը, ինչպես նաև ոչ մի տեղեկություն հայտնի չի եղել նրա հեղինակի մասին: Ես այն պատահաբար հայտ-

⁴ Vgl. Rötzer, Hans Gerd: Auf einen Blick. Literarische Grundbegriffe. Bamberg, 1995.

⁵ Armenisch-katholische Kirche und Museum, Budapest, Orlay utca 6.

նաբերեցի թանգարանի ցուցափեղկում, սակայն թանգարանի քարտարանում այս ձեռագրի մասին ոչ մի այլ տեղեկություն չգտա⁶:

Ըստ ժամանակագրության տիտղոսաթերթի՝ այն կազմվել է 1800 թվականին, հեղինակը հայ է՝ Ջիբենբյուրգենից, և նա գրել է այն իր հայրենիքում՝ Թասնադում (Թաշնադ), որը գտնվում է Տրանսիլվանիայում (Ջիբենբյուրգենում):

Տիտղոսաթերթը հունգարերենով	Տիտղոսաթերթի թարգմանությունը
<p>Örmény Nemzet Históriája Kezdetől egész a 18dik Század végéig Több írók elő adása szerint Le iratott Nemzeti Nyelven. Nemes [...] Magyar hazának egy új Polgára, Dondony Wártán Joseff által. Tasnádon [...]1800.</p>	<p>Հայ ազգի պատմությունը Ի սկզբանե մինչև 18-րդ դարի վերջ Աղբյուր հանդիսանում են բազմաթիվ մատենագիրներ Ժամանակագրության հեղինակը գրել է հունգարերեն Հունգարիայի քաղաքացու կողմից Դոնդոնի Վարդան Ժոզեֆ Թաշնադ, 1800</p>

Ժամանակագրությունը բաղկացած է 595 էջից, այն գրված է գեղեցիկ, ընթեռնելի հունգարերեն ձեռագրով:

Ժամանակագրության կառուցվածքն ու աղբյուրները

Ժամանակագրությունը սկսվում է առաջաբանով, որտեղ խոսվում է նրա ծագման և հեղինակի կողմից օգտագործված աղբյուրների մասին: Նա հիշատակում է, որ իր հիմնական աղբյուրը Միքայել Չամչյանի պատմությունն էր, որը լույս է տեսել Վենետիկում՝ 1784 թվականին և որը հանդիսացել է իր

⁶ Nach der vorliegenden Aufsatz habe ich Peter Kiss Aufmerksam gemacht auf die Manuskript und er hat schon eine Studentische Wettbeverarbeit geschireben darüber: Kiss, Péter: Geschichtsschreibung oder kompillation? Eine bis jetzt unbekannte Handschrift über die Armenische Geschichte. 35. OTDK. Miskolc, 2021.

աշխատության հիմնաքարը: Նա պնդում է, որ Միքայել Չամչյանը

1. կարող էր ուսումնասիրել Վենետիկի վանքի ձեռագրերի հավաքածուն, և այդ պատճառով էլ նրա պատմական ուսումնասիրությունը հատկապես կարևոր է:

2. Չամչյանը ոչ միայն մեծ դերակատարություն ուներ իր ուսանողների համար, այլ նաև նա շատ լավ գիտեր Հայաստանը: «Ես չեմ թարգմանել այս աշխատությունը», – գրել է հեղինակը Չամչյանի պատմության մասին: Հարց է, թե նա արդյոք անձամբ ուսումնասիրել և շարադրել է այս աշխատությունը, թե այդ ամենը վերցրել է այլ հեղինակների գործերից: Նա գրել է, որ փորձում է տալ նաև իր սեփական գնահատականները և կատարել վերլուծություններ⁷:

Հեղինակը հակիրճ ներկայացնում և թվարկում է իր մյուս աղբյուրները ևս՝ նշելով նաև, թե իրականում ո՞ր հրատարակությունն է կարդացել: Հեղինակի համար աղբյուր են հանդիսացել Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը», Ջենոբի, Փավստոս Բյուզանդի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Հովհան Մամիկոնյանի⁸, Եղիշեի, Հովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Ասողիկի, Արիստակես Լաստիվերտցու, Մամվել Անեցու, Վարդան Արևելցու, Առաքել Դավրիժեցու աշխատությունները: Նա հիշատակում է նաև, որ «Հայկական ժամանակագրությունը» ուսումնասիրելուց գատ, հեղինակը ծանոթացել է նաև Հայրմավուրքի, զանազան գրքերի, հատկապես՝ սրբերի ավանդագրույցների ժողովածուների, ծխամատյանների, ճառերնտիրների, ճաշոց գրքերի հետ: Այսպիսով, ընթերցողը պատկերացում

⁷ Fol. III.

⁸ Hier er erwähnte, dass Hovhan Mamikonyan war ein Bischof und Geschichtsschreiber des 7. Jahrhunderts. In diesem Fall Dondoni Wártán Jozsef war falsch, da Hovhan Mamikonian, der Author der Geschichte von Taron, lebte im 10. Jahrhundert.

է կազմում, թե ինչ կարելի հանդիպել 18–19-րդ դարերի հայկական այլ մատենագրություններում և պատմության գրքերում⁹:

Եթե ուսումնասիրենք Մինաս Բժշկյանցի ուղեգրությունը, ապա կարող ենք նկատել, որ հեղինակն այս մատենագրության հիման վրա է կառուցել իր ուղեգրության պատմական մասը:

Հեղինակը Դոնդոնի Վարդան Ժոզեֆը, կարծում է, որ հայերի պատմությունը սկսվում է Քրիստոսից 4000 տարի ստաջ, նույնիսկ նշում է, որ ըստ Աստվածաշնչի հայերեն թարգմանության՝ մարդկության պատմությունը սկսվել է շատ ավելի վաղ՝ մ.թ.ա. 5199 թթ.¹⁰: Իր պատմության ելակետը նա համարում է Նոյին և Հայկին, այնուհետև հեղինակը հայերի հայոց պատմությունը բաժանում է 7 ժամանակաշրջանների՝ հետևյալ հաջորդակալությամբ.

1. Հայկից մինչև Ալեքսանդր Մեծ:
2. Ալեքսանդր Մեծի տիրապետության ժամանակներից հետո, ինչպես հեղինակն է նշում մ.թ.ա. 325-ից մինչև մ.թ.ա. 176 թթ.¹¹:
3. Արտաշեսյաններից մինչև Արշակունիների հարստությունը: Այստեղ հեղինակը հաշվարկել է այս ժամանակահատվածը մ.թ.ա. 149-ից մինչև մ.թ. 428 թթ.¹²:
4. Մարզայանի հարստությունը և Աբբասյանները: Այստեղ պատմությունը շարադրվում է 428-ից մինչև 858 թվականները¹³:
5. Բագրատունյաց հարստությունը 859-ից 1080 թվականներին¹⁴:
6. Ռուբինյանների հարստությունը 1080-ից մինչև 1375 թվականներին, այսինքն՝ մինչև Լևոն IV¹⁵:

⁹ Kovács, Bálint- Grigoryan, Grigor: Einleitung. In: Der Reisebericht des Minas Bžskeanc' über die Armenier im östlichen Europa (1830). Hg. von Bálint Kovács und Grigor Grigoryan. Köln-Weimar-Wien. 2019. S. 28-29.

¹⁰ Schreibweise der Armenische Namen: Er macht Aufmerksam, dass die Schreibweise der Namen kompliziert ist, und er versuchte die Provinz, Städte, Personennamen" laut die mit Armenische Aussprache notieren.. Vgl. f. III.

¹¹ Fol. 1-31

¹² Fol. 32-37

¹³ F. 38-260.

¹⁴ F. 260 -295.

¹⁵ F. 296-314

7. «Քոչվոր ցեղերի տիրապետությունը», այսինքն, երբ Հայաստանը գտնվում էր քոչվորների տիրապետության տակ¹⁶: Այս ժամանակաշրջանը համարվում էր անիշխանական ժամանակաշրջան: Նա իր աշխատանքի շարադրանքը հասցնում է մինչև իր ապրած ժամանակաշրջանը, ավելի ստույգ՝ մինչև 1791 թվականը¹⁷:

Ըստ աղբյուրների և կառուցվածքի, կարելի է փաստել, որ Դոնդոնի Վարդան Ժոզեֆի կողմից գրված ժամանակագրությունը ոչ թե պարզապես ձեռագիր է, որի նման գոյություն ունեն հայերենով կամ մեկ այլ օտար լեզվով գրված այլ ձեռագրեր ևս, այլ մի աշխատություն է, որը նա գրել է իր ընթերցումների հիման վրա՝ փորձելով ամբողջացնել իր ստացած տեղեկությունները: Սույն հոդվածի շրջանակները թույլ չեն տալիս աստվել մանրամասնորեն շատ մանրամասնորեն այն քննարկել, սակայն ապագայում հնարավոր կլինի ավելի խորապես ուսումնասիրել այն և համեմատել այլ աղբյուրների ու գրականության հետ: Այսպիսով, այն կարող է հանդիսանալ հետազոտության բավականին հետաքրքիր նյութ: Հասկապես հետաքրքրական է, թե հեղինակը որտեղից է վերցրել այս տեղեկությունները և որոնք են հանդիսանում նրա սեփական գաղափարներն ու վերլուծությունները:

Հեղինակի գրելառճը – Ազգային ռումանտիզմը

Ժամանակագրությունն իր ժամանակի արդյունքն է: Քանի որ հեղինակը շատ բան է կարդացել Չամչյանից, ուստի ձեռագրում կարելի է գտնել այնպիսի փաստարկներ և նկարագրություններ, որոնք կարելի է հանդիպել նաև ժամանակի հայ գրականության մեջ: Նա մեծ հպարտությամբ և պաթոսով է գրում Հայաստանի մասին. «Հայաստանը ժամանակին շատ ծաղկուն էր: Հայաստանը ոչ միայն լի էր բնական բարիքներով, այլև օտար

¹⁶ F. 314-462.

¹⁷ F. 463-594.

ազգերը նախանձում էին Հայաստանին»¹⁸, – այսպես է նա սկսում իր պատմությունը: Եվ այդպիսի փաստարկներ հաճախ են եանդիպում նրա տեքստում: Օրինակ. «Կարող ենք անկեղծորեն ասել, որ մեր ազգային պատմությունն ավելի ճշմարտացի և փառահեղ է, քան այլ հայտնի ազգերի պատմությունները»¹⁹:

Չնայած հեղինակը Մխիթարյան միաբանության հոգևոր անդամ չէր, սակայն հարկավոր է նկատի ունենալ մի կարևոր փաստ, որ առանց Մխիթարյան գրական և գիտական գործունեության այս ձեռագիրը չէր կարող ստեղծվել: Մխիթարյան միաբանության հայրերը հրատարակեցին անտիկ հայ պատմաբանների և աստվածաբանների աշխատությունները, ինչպես նաև ժամանակակից հայերեն թարգմանեցին բնագիտական աշխատությունները: Բացի այդ, Մխիթարյան միաբանության հայրերը պատասխանատու էին նաև գիտական խստությամբ գրված Հայոց պատմության առաջին հանրագիտարանային նմուշի համար: Այսպիսով նրանք դարձան արդի հայագիտության առաջատարները²⁰:

Պատմությունն ու աղբյուրները քննադատորեն խմբագրվել և մշակվել են Վենետիկում և Վիեննայում՝ Մխիթարյան միաբանության հայրերի կողմից: Ումանք, ինչպես Չամչյանը կամ Ալիշանը, վերաշարադրեցին հայոց պատմությունը ըստ հայ դասական հեղինակների, որոնք հետագայում հրատարակվեցին: Այդ աշխատությունները Մխիթարյան միաբանության հայրերի ջանքերի շնորհիվ հասանելի էին դառնում ոչ միայն տեղի հայ համայնքի համար, այլև Օսմանյան կայսրության և Ռուսաստանի հայկական համայնքների, ինչպես նաև Սփյուռքում ապրող հայերի համար: Նման աշխատությունները նպաստում էին նաև

ուսար երկրներում ապրող հայ մանուկների կրոնական դաստիարակությանը²¹:

Հայերը Հունգարիայում և Տրանսիլվանիայի հայ գաղութի պատմությունը

Հեղինակը գրում է, որ Հայաստանը միշտ ունեցել է երկու կողմ: Մի կողմից Հայաստանը միշտ հրաշալի էր, բայց մյուս կողմից՝ այլ ժողովուրդների նախանձի պատճառով այն միշտ ոչնչացվում էր: Այսպիսով, նա առաջին գլխում բացատրում է հայերի արտագաղթի պատճառը, իսկ հետո բացատրում է հայկական գաղութների առկայության փաստը: Նման արտագաղթերի պատճառով հայերը (գաղթել և) հաստատվել են նաև Հունգարիայում: Նա չի մանրամասնում այս տեղեկությունը, պարզապես այսպիսով ընդգծում է իր տեսակետը՝ հայտնելով, որ ինքը հայ է, սակայն ունի երկու հայրենիք: Նա Հունգարիայի հայերի մասին շատ քիչ բան է գրել՝ պարզապես փորձելով բացատրել հայերի ձուլումը. «Հունգարիայում շատ հայեր այնքան գոհ էին, որ նույնիսկ չէին հիշում, թե ո՞ր երկրից էին սերում»: Նա Հունգարիայի մասին գրել է նույնքան հպարտությամբ, որքան Հայաստանի մասին: Նոր հայրենիք Հունգարիան հայերի կողմից արժանանում էր հարգանքի, զովասանքի և ուշադրության:

Ինձ համար շատ հետաքրքրական է հատկապես այն, որ չնայած նրա տրանսիլվանյան ծագմանը՝ ձեռագրում չի հիշատակվում Տրանսիլվանիայի հայերի պատմությունը, ինչպես նաև հեղինակը շատ կարճ է անդրադառնում «Անիի հայերի առասպելին»²²: Հատկապես հետաքրքիր է, որ Բագրատունիների հարստության մասին գլուխը ամենակարճն է: Այն կազմում է մոտ 600 էջանոց ձեռագրի ընդամենը 20 էջը:

²¹ Khachig Tololyan, Textual Nation: Poetry and Nationalism in Armenian Political Culture. "Intellectuals and the Articulation of the Nation," ed. Ronald Grigor Suny and Michael D. Kennedy (Ann Arbor, Mich., 1999), pp. 79–102.

²² „[...]A nemes magyar nemzet polgárait nevelték, sőt annyira megelégedésbe vagnak, hogy már elejek származási helyéről is nem emlékeznek”, f. 1.

¹⁸ „Országá több természeti javakkal vala bővülködése. nemcsak a szomszid, hanem igen távol eső Nemzetekirigységít fell gerjesztett arra” f. 1.

¹⁹ “A” mi e Nemzeti Historiának igazságát illeti, bátran lehet állítani hogy többek ditsekedhez ezen részbe sok más Nemesebb Nemzetek felett.” fól. 3

²⁰ Nagy, Kornél: Túlélésre kényszerítve. Az örménység a kora újkor hajnalán. Világtörténet (2014) Nr. 3, 367-380. hier: 373. . Nagy, Kornél: Az elképzelt "Aranykor": Az erdélyi örménykatolikus (unitus) egyház a 18. században. Történelmi Szemle 61 : 2 pp. 267-284. . 18 p. (2019)

Ինչպես հայտնի է, XIX դարում Կովկասում, Օսմանյան կայսրությունում և նաև Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում հայերի մի ստվար զանգված իրեն բնորոշեց որպես «Անիի հայեր», այսինքն՝ որպես հայ Բագրատունիների տոհմի Անի մայրաքաղաքից սերող հայեր: XI դարում մայրաքաղաքը գրավել և հետագայում ավերել են սելջուկ թուրքերը:

Օրինակ, XIX դարում Նոր Նախիջևանի հայերն իրենց կոչեցին «Անիի հայեր», նրանք հանդիպեցին Մշո Սուրբ Կարապետ վանքում և ուխտագնացություն կատարեցին դեպի Անի²³: Հայոց պատմության առանցքային կետերից են միջնադարյան Բագրատունյաց թագավորության մասին հիշատակումները: Քաղաքի ավերումից հետո այն դարձավ հայկական բացակա պետականության խորհրդանիշ: Մայրաքաղաք Անին օժտված էր այնպիսի հատկանիշներով, որոնք հստակեցնում էին հայկական ազգային գաղափարները հաջորդ հազարամյակների համար: Հայկական պետականության անկումը օտարերկրացիների ներխուժման, նրանց կողմից գրավման և ավերածությունների հետևանքներն էին, ինչը հանգեցրեց արտագաղթի: Հայկական արտագաղթի որոշ ալիքները ավանդաբար հայտարարում էին, որ իրենք «Անիի հայեր» են, ինչպես նաև XIX դարի երկրորդ կեսին Տրանսիլվանիայում ապրող հայերը նույնպես իրենց ներկայացնում էին որպես «Անիի հայեր»:

Ինչո՞ւ է գրվել ժամանակագրությունը: Ո՞րն էր հեղինակի նպատակը

Երրորդ գլխում Դոնդոնի Վարդան Յոզեֆը խոսում է հայ ազգի պատմությունը հունգարերեն գրելու դրդապատճառի մասին: Հեղինակը փաստում է, որ շատերին էր հետաքրքրում Հուն-

²³ Բարխուդարյան Վլադիմիր, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861), Երևան, 1967, էջ 327 և Chobanian, Pavel: Ani et son mythe (XIII-XIX siècles). In: Ani capitale de l'Arménie en l'an mil Catalogue of exhibition. In: Kevorkian, Raymund: Ani, capitale de l'Arménie en l'an 1000. Paris-Musées, 2001, 277.

գարիայի հայերի պատմությունը, սակայն այն հունգարերենով դեռևս հասանելի չէր, ուստի նա որոշում է լինել առաջինը, ով կգրեր հայերի ամբողջական պատմությունը հունգարերենով²⁴:

Հետագայում մենք իմանում ենք, որ նա հայերեն սովորել է արտերկրում. «Իմ երիտասարդության տարիներին ես շատ տարիներ անց եմ կացրել այլ երկրներում՝ իմ ազգի հին լեզուն սովորելու համար»²⁵. Ցավոք, անհասկանալի է մնում այն փաստը, թե որտեղ է նա սովորել լեզուն:

Եզրակացություն

XVIII և XIX դարերում հայոց պատմությունն ու պատմական աղբյուրները քննադատորեն խմբագրել և գնահատել են Վենետիկում և Վիեննայում՝ Մխիթարյանները: Ոմանք, ինչպես Միքայել Չամչյանը կամ Ղևոնդ Ալիշանը, վերաշարադրել են հայոց պատմությունը հիմք ընդունելով հայ դասական հեղինակներին: Նրանց աշխատությունները հրատարակվել և դարձել են հասանելի ընթերցողներին: XIX դարում հայկական պարբերականների, տպարանների և դպրոցական համակարգի միջոցով նմանատիպ տեքստերը մտան հայկական համայնքների գիտակցության մեջ և հայտնի դարձան Ռուսաստանում, Օսմանյան կայսրությունում և հայկական գաղթօջախներում: Դոնդոնի Վարդան Ժոզեֆի ժամանակագրությունը նմանատիպ արժեք ունեցող աշխատություն է, որը հունգարերեն գրված միակ ձեռագիրն էր, որն արտացոլում է ազգային միտքն ու ազգային պատմագրությունը և շատ սերտ կապ ունի իր ժամանակի հայ պատմագրության հետ:

²⁴ „Figyelmeiségét tapasztaltam több több nagy érdemű olvasott uri jó szívé férfiakkal. kik á világi történetekbe járatosak lévén, ezen nagy nemzet régiségit, növekedésit, több történetekkel kívánczoztak egybe foglalva látni, mivel ezen [...] hazában nemzeti nyelven nem forog fenn.” f. II.

²⁵ Նույն տեղում:

**“THE HISTORY OF THE ARMENIAN NATION”: THE
HUNGARIAN-LANGUAGE MANUSCRIPT OF DONDONI
WARTAN JÓZSEF**

Keywords: Historiography, Chamchyan, church, Armenians in Transylvania, manuscript, Hungarian-Armenians, Mekhitarist Congregation.

This paper presents a manuscript in which the Armenian descended author - Dondoni Wártán József - presents the history of Armenians with monographic method, in chronological structure from the beginning until his time (end of 18th century).

“The History of the Armenian Nation” is a manuscript written in Hungarian, which is kept in Budapest in the Museum of the Armenian Catholic Church. The author and his chronicle were unknown until now, in the literature no one has written about this manuscript as about the author, in the inventory of the museum there is no further information about the manuscript.

According to the title page of the chronicle, it was written in 1800, the author is an Armenian from Transylvania, and he wrote the chronicle in his hometown in Tasnád. The whole manuscript has 595 pages, and was written in Hungarian with readable script.

The main source of the author is the history of Mikayel Chamchian, which was published in Venice in 1784. In the manuscript, the history of Armenians begins 4000 years before Christ, its starting point is Noah and Haik. Then he divided the history of Armenians into seven periods.

According to the sources and the structure, it can be seen that the Chronicle of Dondoni Wártán József is not a simple handwritten copy of another chronicle already existing in Armenian or in a foreign language, but it is a new work, which he wrote and conceptualised according to his readings. It can also be said that this manuscript is the first work in Hungarian in which the Armenian history is presented from a scientific point of view of his time.

**«ИСТОРИЯ АРМЯНСКОГО НАРОДА» РУКОПИСЬ
ДОНДОНИ ВАРТАНА ЙОЗЕФА НА ВЕНГЕРСКОМ ЯЗЫКЕ**

Ключевые слова: историография, Чамчян, церковь, Армяне в Трансильвании, рукопись, венгерские армяне, Конгрегация Мхитаристов.

«История армянского народа» — венгерская рукопись Дондони Вартана Йозефа. В настоящей статье представлена рукопись, в которой армянин по происхождению Дондони Вартан Йозеф описывает историю армян в хронологической последовательности: от возникновения и до своего времени (конец XVIII века).

«История армянского народа» — рукопись, написанная на венгерском языке, хранящаяся в Будапеште в Музее армянской католической церкви. Автор и его хроника были неизвестны до сих пор, в литературе нет сведений об этой рукописи, впрочем как и об авторе, а в музее отсутствуют какие-либо сведения о рукописи. Согласно заглавной странице хроники, она была написана в 1800 году, автор — армянин из Трансильвании, и летопись он написал в родном городе Таснаде. Вся рукопись насчитывает 595 страниц читабельного текста.

Основным источником автора послужила история Микаэла Чамчяна, которая была опубликована в Венеции в 1784 году. В венгерской рукописи история армян начинается за 4000 лет до Христа, от Ноя и Айка, затем она разделяется автором на 7 периодов.

По результатам анализа источников и исходя из структуры рукописи, можно утверждать, что хроника Дондони Вартана Йозефа не является рукописной копией другой хроники, уже существовавшей на армянском или на иностранном языке, а это полноценное исследование, которое автор осуществил и концептуализировал. Можно также сказать, что эта рукопись является первой работой на венгерском языке, в которой армянская история представлена в соответствии с исторической наукой того времени.

ԷԼԻՆԱ ՄԵՒԹԱՐՅԱՆ
Ասայիրանտ, Արցախի Հանրապետություն

ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ /ԳԱԼԻՑՅԱՆ/ ՌՈՒՄԻԱՅԻ ՀԱՅ
ԳԱՂԹՕՁԱԽՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ Ի. Ա. ԼԻՆՆԻՉԵՆԿՈՅԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. իրավական կարգավիճակ, Հարավ-Արևմտյան/Գալիցյան Ռուսիա, գաղթօջախ, համայնք, առևտրային կենտրոններ, ներհամայնքային ինքնավարություն, առևտրային ու դիվանագիտական միջնորդներ:

XII դարում հայերի սովոր գանգվածներ երեք հիմնական՝ Տրապիզոն-Սև ծով, Սև ծովի հյուսիս-արևելք-Հյուսիսային Կովկաս¹, Կ.Պոլիս-Դանուբ² ուղղություններով հասնում են Դրիմ, որտեղից էլ մոնղոլ-թաթարների ավերիչ արշավանքների հետևանքով մի մասը ստիպված էր հեռանալ և նոր ապաստան փնտրել Մոլդովայում, Վալախիայում, Պոդոլիայում, Գալիցիայում: Հայերին XIII դարի 60-ական թվականներին արդեն հրավիրում էին Գալիցիա. ըստ լեհ ժամանակագրի վկայությունների Գալիցյան իշխան Դանիել Ռոմանովիչը (1205–1264թթ.) իր նոր հիմնադրած քաղաքում և նրա շրջակայքում բնակվելու առաջարկ է արել հայերին³: Եթե դեպի Կիևյան Ռուսիա, Գալիցյան Ռուսիա ու Պոդոլիա հայերի գաղթի փուլերի ու ժամանակի մասին ամենահավաստի տեղեկությունները քաղում ենք լեհահայ պատմաբան Սադոկ Բարոնչի (1814–1892) աշխատություններից⁴, ապա Հարավ-արևմտյան

¹ Միքայելյան Վ., Դրիմի հայկական գաղութների պատմություն. հ. 1, Երևան, 1964, էջ 40-41:

² Ալպոյաձյան Ա., Հայ գաղթականության պատմություն. հ. 2, Կահիրե, 1955, էջ 355-356:

³ Zimorowicz B., Historia m. Lwowa, Lwo'wa, 1835, s. 68-69.

⁴ Sł u Barącz S. K.s., Żywoty sławnych armjan w Polsce, Tarnopol, Lwowie, 1856, str. 486. Rys dziejów armiańskich, 1869, էջ 317:

կամ Գալիցյան Ռուսիայի քաղաքներում արդեն ձևավորված հայկական գաղթօջախների կյանքի տարբեր կողմերի մասին բացառիկ մանրամասներ է հաղորդում ռուս պատմաբան, սլավոնագետ, Պետերբուրգի և Կրակովյան գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Իվան Անդրեևիչ Լիննիչենկոն (1857–1926): Նա հայերի մասին առաջին անգամ խոսում է իր «Ուրվագծեր XIV-XV դարերում Հարավ-արևմտյան Ռուսիայի խավերի պատմությունից» («Черты из истории сословий Юго-Западной Руси XIV-XV в.»⁵) աշխատության մեջ, որի համար հայերի մասին իր հավաքագրված նյութը հետազայում հրատարակում է մեկ այլ առանձին՝ «Հայերի հասարակական դերը Հարավ-արևմտյան Ռուսիայի անցյալում» («Общественная роль армян в прошлом Юго-Западной Руси»⁶) աշխատությունում, ինչպես նաև հատկանշական անդրադարձ է կատարում իր «Փոքր Ռուսիայի հարցը և ինքնավարությունը» պրոֆեսոր Մ. Ա. Գրուշևսկուն ուղղված բաց նամակում («Малорусский вопрос и автономия Малороссии: открытое письмо проф. М.А.Грушевскому»):

Ընդհանրապես, Լիննիչենկոն մեծ ուշադրություն է դարձնում Գալչինայում բնակվող ռուսների, իսկ նրանց գուզախեռ և հայերի տեղում ունեցած հասարակական և իրավական կարգավիճակին: Գալչինայում ապաստանած հայերն ի սկզբանե զբաղվում էին հիմնականում առևտրով, այդ իսկ պատճառով, ի թիվս մյուս օտարերկրացիների, միջնադարյան առևտի «կանտոնների» համաձայն պարտավոր էին բնակվել քաղաքի հիմնական սահմաններից դուրս՝ հարակից արվարձաններում, ինչը մի կողմից զգուշավորություն էր օտարազգիների հանդեպ, մյուս կողմից էլ՝ հենց վաճառականների անվտանգության ապահովման համար էր. «Անիրավահավասար բնակչությունը, աղքատ դասերը ծվարել էին հիմնականում արվարձաններում, իսկ քաղաքային մագիստրի ենթակայության տակ արվարձանաբնակները չէին օգտվում քաղաքա-

⁵ Линнченко И. А., Черты из истории сословий Юго-Западной Руси XIV-XV. Москва, 1894.

⁶ Линнченко И. А., Общественная роль армян в прошлом Юго-Западной Руси. Киев, 1896.

ցիության բոլոր իրավունքներից: Այստեղ առավելապես ապրում էին հայերն ու հրեաները»⁷: Հենց արվարձաններում էլ ձևավորվում են տեղի հայկական ազգային համայնքները: Բուն քաղաքի սահմաններում բնակություն հաստատելու համար խիստ կանոններ էին սահմանված. դավանանքով կաթոլիկ, նախկին բնակության քաղաքի/բնակավայրի կնիքով օրինական ծնունդը հաստատող արտոնագրված վկայական, նոր բնակավայրի ցանկացած երկու քաղաքացու երաշխավորագրեր, քաղաքի սահմաններում սեփականություն, համայնքի գանձարան մուծումներ և զինապահեստին զենք, տեղափոխվել ընտանիքով, չամուսնացած լինելու դեպքում ամուսնանալ տեղաբնիկի հետ (հետաքրքիր է, որ այս դրույթը գործում է նաև ներկայումս շատ երկրներում քաղաքացիություն ձեռք բերելու կարգում): Հետո արդեն Գալիցիայի իշխաններն իրենց քաղաքներում հայերին հատկացնում էին բնակավայրի որոշակի հատվածներ՝ տրամադրելով նրանց տվյալ շրջանում բնակվելու համար հատուկ արտոնագրեր:

Լիննիչենկոն անգնահատելի տեղեկություններ է ներկայացնում Գալիցիայի գաղթավայրերում հայերի իրավական կարգավիճակի, այսինքն՝ տեղում ունեցած դե յուրե և դե ֆակտո իրավունքների ու պարտավորությունների մասին: Այսպես հեղինակը մեկնաբանում է հայերի իրավական վիճակը սկզբնական շրջանում. «Ոչ կաթոլիկները, այդ թվում ուղղափառ ռուսները և հայերը, չէին կարող ընտրվել ավագանի և մագիստր, ռուսները և հայերը չէին կարող շուկայում տներ ձեռք բերել. այս վերջին սահմանափակումը դե ֆակտո և ռուսներին, և հայերին հաջողվում էր շրջանցել, ինչը հանգեցնում էր անվերջանալի դատական պրոցեսների»⁸: 1344 թվականին հայերին տրվում է ներհամայնքային ինքնավարություն: Այս հանգամանքը ևս չի վրիպել Լիննիչենկոյի ուշադրությունից. «Որ հայերը և հրեաները կազմում էին հատուկ համայնքներ իրենց ավագանիով, դա վաղուց էր հայտնի... Հայերը կազմում էին առանձին ինքնուրույն համայնք, որը գոյություն

ունեցավի շարք արտոնությունների, առավելությունների հիմքով, այնպես ռուսներն ունեին միայն կրոնական համայնք»⁹: Ապա և ներկայացնում է հայերի իրավական վիճակի էվոլյուցիան. «1359 թվականի դրությամբ ռուսների և հայերի համար քաղաքի սահմաններում անշարժ գույքի ձեռքբերումը սահմանափակվում էր որոշակի կետերում՝ Ռուսական և Հայկական փողոցներից միայն... ռուսները և հայերը երկար ժամանակ մուտք չունեին որոշ համքարություններ (уезды), օրինակ, մետաղաձուլական, ոսկերչական»¹⁰:

Լիննիչենկոն բացառիկ տեղեկություններ է հաղորդում հայերի նկատմամբ դատա-իրավական խտրականության վերաբերյալ դատարանի որոշումների ու դատական բազմաթիվ գործընթացների նկարագրությամբ: Հեղինակը հետևողականորեն լուսաբանում է դատա-իրավական ոլորտում ևս հայերի իրավունքների էվոլյուցիոն աճը. «Հրեաները, հայերը, թաթարները ունեին իրենց յա»¹¹ իրավունքը և դատվում էին իրենց իրավագիտական սովորույթներով¹²: Քաղաքագլուխ մագիստրի կողմից ինքնավարությանը գուգահեռ հայերին շնորհվում նաև սեփական դատարան ունենալու իրավունք. «1415 թվականին Լվովի արվարձանի Մբ. Հովհաննես եկեղեցուն կցազրված հայերը ռուսական իրավունքից անցան հայկական իրավունքի»¹³: Հեղինակը, անձամբ պրայտելով սկզբնաղբյուր հանդիսացող դատական ակտերի ժողովածուար-խիվները, մանրամասներ է ներկայացնում հայերի դատական իրավասությունների և դատական պրոցեսների մասին. «Դատը վարում էր ոչ թե դատավորը, ինչպես Լեհաստանում, այլ ավագը (староста)՝ և՛ քրեական, և՛ քաղաքացիական գործերով: Ինչ իրավունքով էին դատում՝ 14-15-րդ դարերի դատական գրքերը տալիս են դրա պատասխանը. լեհերին՝ լեհական, ռուսներին՝ ռուսական,

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 216:

⁹ «Jus gentium» «ազգերի իրավունք» եզրույթը ծագել է Հին Հռոմում և կշռանակում է նվաճված կամ տիրապետության տակ մտնող ժողովուրդների սովորույթային-իրավական նորմեր:

¹⁰ Նույն տեղում, էջ 90:

¹¹ Նույն տեղում, էջ 218:

⁷ Նույն տեղում, էջ 217:

⁸ Линниченко И.А., Черты из истории сословий Юго-Западной Руси XIV-XV. с. 216.

հայերին՝ հայկական: Դրա համար էլ դատի ընթացքում շատ հաճախ հանդիպում ենք այն ազգի ներկայացուցիչներին, ում դատում էին՝ հայեր, հրեաներ, վալախներ»¹⁴: Շեղինակը պարզաբանում է ռուսական, գերմանական իրավունքներին հայերի ինտեգրման խնդիրները և դրանց համադրությունը «հայերի ազգային» իրավունքին. «Լվովին ուղղված Կազիմիրի գրամոտայում գերմանական իրավունքի անցման թույլտվություն էին ստանում հայերը, ռուսները, սարակիստները և հրեաները»¹⁵: Դրանից հետո Լիննիչենկոն տողատակում բերված ծանոթության մեջ պարզաբանում է. «Հատկանշական է, որ հայերը անցնելով գերմանական իրավունքին՝ չէին կորցնում կապը իրենց համայնքի հետ»:

Խոսելով 14–15-րդ դարերի Հարավ-արևմտյան Ռուսիայի հայության զբաղմունքի մասին՝ Լիննիչենկոն նշում է երկու հիմնական ոլորտի մասին՝ արհեստագործություն և առևտուր: Սահմանափակումների պատճառով արհեստագործության մեջ հայերը երևելի դարձան քիչ ուշ, իսկ ահա առևտրի մեջ շատ էին հայտնի և մրցակցում էին հրեաներին. «Ծանոթ լինելով Արևելքի կենսակերպին, Արևելքի առևտրային ճանապարհներում լավ կողմնորոշվելով, գուրկ չլինելով անձնական խիզախությունից, տիրապետելով զինական արվեստին՝ հասկություններ, որոնք անհրաժեշտ էին վտանգավոր ուղիներ դեպի Արևելք, իսկ Ղրիմի իտալական գաղութների անկումից հետո էլ այն (Ղրիմը) ևս վերցրին իրենց ձեռքը»¹⁶:

Լիննիչենկոն չի շրջանցում նաև Գալիցյան Ռուսիայի հասարակության մեջ հայերի ունեցած դիրքի ուսումնասիրությունը. «Ընդարձակ առևտրաշրջանառության և տարբեր, հաճախ շահույթի ոչ այնքան պատվաբեր ճանապարհներով հայերը Ռուսիայում հասնում էին մեծ հարստության և անձնական նշանակության, դիրքի: Չնայած հայերի գործարարության և նախանձելի օրինակի շնորհիվ այդ կենտրոնները կանգնեցին առևտրային ձեռներեցությու-

յան լայն ճանապարհին, այնուամենայնիվ անգամ այդ քաղաքներում հայերին չհաջողվեց ձեռք բերել իրավական կարգավիճակ և լիարժեք հարգանք: Իրավացիորեն հասարակական կարծիքը հայերին մեկ աստիճան վերև էր դատում, քան հրեաներին, բայց ամեն դեպքում ցածր, քան գերմանացիներին»:

Հաճախ ստվերում է թողնվում հայերի կյանքի մի շատ կարևոր կողմ՝ նրանց մասնակցությունը գաղթօջախի արտաքին քաղաքական, դիվանագիտական գործունեության մեջ. «Ոչ ոք հայերից լավ չգիտեր թաթարներին, թուրքերին և արևելյան այլ ժողովուրդներին, որոնց հետ ամեն օր բախվում էին առևտրաշրջանառության ընթացքում: Ում, եթե ոչ հայերին պետք էր հանձնարարել դիվանագիտական բանակցությունների ռիսկային գործը այդ ժամանակի ամենահմուտ դիվանագետների՝ Արևելքի մարկանց հետ, կրք վարվելակարգի (этикет) փոքր խախտումը, անտեղի արտահայտությունը, ինքնահավան շլախտիչի համար առաջին հայացքից անխմաստ ձևականության խախտումը կարող են ամենասկզբից նեթ անհաջողության մատնել դիվանագիտական ամբողջ քաղաքականությունը Արևելքում: Այդ պատճառով չնայած արևելյան դիվանագիտական առաքելության գլուխ սովորաբար կանգնած է ինչ-որ մեծանուն մագնատ կամ շլախտական որևէ հայտնի ընտանիքի դիվանագիտական կարիերա սկսող երիտասարդ անդամ, սակայն դե ֆակտո դեսպան է հանդիսանում այդ առաքելության կազմի մեջ թարգմանչի համեստ դերում գտնվող հայազգի վաճառականը»¹⁷:

Ռուսական պետության քաղաքական ուղղորդման հարցերում ևս Լիննիչենկոն դրվագային անդրադարձ է կատարում հայերին իր «Փոքր Ռուսիայի հարցը և ինքնավարությունը» պրոֆետոր Մ.Ա.Գրուշևսկուն ուղղված բաց նամակում. «Մեզ համար օտար ծագման մեր կազմի մեջ մտած ազգերը, ունենալով այլ կրոն, այլ կենցաղ, այլ լեզու, բայց մեզ հետ կապված տնտեսական, մշակութային, և ռազմավարական շահերով, նրանք թույլ են ինքնուրույն գոյատևելու համար, նրանք կարող են խաղաղ ապրել և զարգանալ

¹⁴ Նույն տեղում. էջ 20:

¹⁵ Նույն տեղում. էջ 217:

¹⁶ Նույն տեղում. էջ 220:

¹⁷ Линниченко И.А.. Общественная роль армян в прошлом юго-западной Руси. Киев, 1896. стр. 6-7.

միայն մեր պետության պաշտպանության ներքո, որն ունի առավել թույլերին նրանց թշնամի տարրերից պաշտպանելու միջոցներ (հիշենք ոչ վաղ անցյալում թաթարների կողմից հայերի ջարդը)»¹⁸: Մերօրյա իրականությունը փաստում է, որ այսօր էլ մեր պետության մասին նույն կարծիքն ունի մեր ռազմավարական բարեկամը, բայց այդ դիրքորոշմանը պետք է ոչ թե ընդդիմանալ, այլ ըստ այդմ կառուցել ազգապահպան, կենսագոյի պետական քաղաքականությունը:

Ամբողջացնելով հայերի վերաբերյալ իր կարծիքը՝ Լիննիչենկոն ընդհանրացնում է. «Հարավ-ռուսական քաղաքների պատմության մեջ միջին ժամանակաշրջանում հայերին պատկանում է բավական երևելի տեղ: Առանց չափազանցության կարելի է պնդել, որ Հարավային Ռուսիայի խոշոր առևտրային կենտրոնները իրենց հարստության, փայլի և նշանակության համար հիմնականում պարտական են հայերին: Շնորհիվ այդ տոկոսն, ճարպիկ և ձեռներեց ազգի հարավ-ռուսական առևտրային կենտրոնները դարձան միջնորդներ Արևելքի և Արևմուտքի միջև առևտրում»¹⁹:

¹⁸ Линниченко И. А., Малорусский вопрос и автономия Малороссии: открытое письмо проф. М.А.Грушевскому, Одесса, 1917. с. 26.

¹⁹ Линниченко И. А., Черты из истории сосоловий Юго-Западной Руси XIV-XV, с. 220.

COVERAGE OF LEGAL, SOCIAL AND ECONOMIC STATUS OF ARMENIAN COMMUNITIES IN SOUTH-WESTERN (GALICIAN) RUSSIA IN THE WORKS OF I. A. LINNICHENKO

Keywords: legal status, South-Western/ Galician Rus, community, shopping centers, intra-community self-government, trade and diplomatic intermediaries.

The objective of the article is to scrutinize information about the formation of Armenian communities in Southwest (Galician) Russia in the works of the Russian historian, slavist, professor, corresponding member of the St. Petersburg and Krakow Academies of Sciences Ivan Andrey Linnichenko. Our task is to reveal the features of the legal and social status of the Galician Armenians, as well as coverage of the problems of the formation of Armenian communities in Galicia according materials by I.A. Linnichenko.

In comprehensive research of problems, posed under the theme, have been used general scientific methods: dialectical, logical, historical, as well as individual (partial) or special methods, such as comparative and historical, analytical, statistical and systemic.

In consequence of research I. A. Linnichenko not only has provided details of the formation of the Armenian communities in Galicia, but has analyzed the evolutionary development of the legal status of Armenians in the same communities, explained the moral, psychological and social and national perception of Armenians among the locals, identifying Armenians as commercial and diplomatic intermediaries between East and West.

ОСВЕЩЕНИЕ ПРАВОВОГО, СОЦИАЛ-ЭКОНОМИЧЕСКОГО
СТАТУСА АРМЯНСКИХ КОЛОНИЙ В ЮГО-ЗАПАДНОЙ /
ГАЛИЦКОЙ/ РУСИ В ТРУДАХ И.А.ЛИННИЧЕНКО

Ключевые слова: правовой статус, Юго-западная/ Галицкая Русь, колония, община, торговые центры, внутриобщинное самоуправление, торговые и дипломатические посредники.

Целью данной статьи является изучение сведений об образовании армянских колоний в Юго-западной /Галицкой/ Руси в трудах русского историка, слависта, профессора, член корреспондента Петербургской и Краковской академий наук Ивана Андреевича Линниченко. Наша задача – раскрыть особенности правового-социального статуса Галицких армян, а так же освещение проблем формирования армянских колоний в Галиции по данным собранным И. А. Линниченко.

При всестороннем изучении поставленных в рамках темы проблем, использовались общенаучные методы - диалектические, логические, исторические, а также индивидуальные /частные/ или специальные методы, такие как сравнительно-исторические, аналитические, статистические и системные.

В результате исследования пришли к выводу, что И. А. Линниченко не только предоставляет подробности становления армянских колоний на Галичине, а анализирует эволюционное развитие правового статуса армян в этих же общинах, разъясняет морально-психологическое и общественно-национальное восприятие армян у местных, идентифицирует армян как торговых и дипломатических «посредников между Востоком и Западом»:

ՀԱՅԵՐԻ ԹԻՎԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ ԸՍՏ
ԵՎՐՈՊԱՑԻ ՀԵՂԻՆԱՎԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ
(XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴ - XIX ԴԱՐԻ ՄԿԻՋԲ)

Հիմնաքաներ. Կոստանդնուպոլիս, 500000-600000 բնակչություն, 70000-80000 հայ, XVIII դարի վերջին քառորդ, XIX դարի սկիզբ, Եվրոպացի հեղինակներ, Օսմանյան կայսրություն, հայկական գաղթօջախ:

XVIII դարի երկրորդ կեսին արևմտահայության՝ տոկոսալիս հարաբերությամբ փոքրամասնությունն ապրում էր քաղաքներում և քաղաքատիպ բնակավայրերում:

Նշված ժամանակաշրջանում արևմտահայ քաղաքային բնակչության հոծ զանգված էր կենտրոնացած Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսում, որն իրենից ներկայացնում էր մի յուրօրինակ ներկայանակ, որտեղ արևմտահայ գավառներից եկած յուրաքանչյուր համայնք, իր հետ բերելով սեփական երանգը, ամբողջացնում էր այդ ներկայանակը: Նշված ժամանակաշրջանում հայ Պոլիսը համեմատաբար քիչ է ուսումնասիրված: Այս ժամանակաշրջանում Կ.Պոլիսը արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքի գլխավոր կենտրոնն էր: Պոլսահայ գաղութի կենսունակությունն ու աշխուժությունը մեծապես պայմանավորված էր արևմտահայ գավառներից դեպի Կ.Պոլիս տեղի ունեցող անընդհատ ներհոսքով, ինչի շնորհիվ էլ այն պահպանում էր արևմտահայության քաղաքական, հոգևոր ու կրթամշակութային կենտրոնի իր դերը:

XVIII դարի վերջին քառորդի ֆրանսիացի հեղինակ Գ.-Ա. Օլիվիեն ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսի մասին. «Կ.Պոլիսը թուրքերի, հույների, հայերի, հրեաների, եվրոպացիների մի խառնուրդ է իրե-

նից ներկայացնում, որտեղից էլ բխում է բարքերի, կրոնների և լեզուների բազմազանությունը: Թուրքերն այստեղ ավելի շատ են, քան մյուսները և տարածված են ամբողջ քաղաքում և նրա արվարձաններում: Հույները կազմում են բնակչության 1/6-ը. նրանք մի թաղամաս ունեն՝ նավահանգստի դիմաց և հայտնի է հունական Ֆանարակի կամ Ֆանալ անունով: Մի մեծ զանգված էլ ապրում է Բերայում և Գալաթայում [Ղալաթիա] և ապրում են ֆրանկների՝ մեջ: Հայերը թվով փոքր-ինչ նվազ են, քան հույները. նրանք ապրում են քաղաքի ներսում և արվարձաններում: Բայց հարուստների մեծամասնությունը որոշ ժամանակից ի վեր եկել է բնակվելու Բերայում և հաստատվել է ֆրանկների միջավայրում՝ առանց, սակայն, ձուլվելու նրանց հետ: Հրեաներն ամենաքիչն են, ապրում են քաղաքի ներսում, որոշ թվով հրեաներ հաստատվել են Բերայում և Գալաթայում և միջնորդ են վաճառականների մոտ: Դեսպանները և Բ.Դոան մոտ գտնվող օտարերկրյա իշխանությունների գործակալները և այն եվրոպացիները, ում առևտուրը Կ.Պոլիս է ձգել, կազմում են 2000-ից ավելի»²:

Արժեքավոր է նաև Օլիվիեի տեղեկությունը Կ.Պոլսի բնակչության թվաքանակի վերաբերյալ: Նա գրում է, որ «այդ մեծ քաղաքի բնակիչները, դրա մեջ ներառելով նաև Բերա, Գալաթա, Սեն Դիմիտրի, Սկյուտար և Բոսֆորի ափերին տեղադրված շրջակա գյուղերի բնակչությունը, կարող են լինել ավելի քան 500000, ըստ այլուրի այն քանակության, որ այնտեղ օրական սպառվում է: Ճիշտ է նաև, որ հաշվի մեջ պետք է մտցնել այլուրի այն քանակությունը, որը գալիս է մաքսանենգ ճանապարհով՝ չնայած կառավարության

¹ Օլիվիեն այս բառը ծանոթագրում է հետևյալ կերպ. «Մա մի անուն է, որով կոչում են բոլոր եվրոպացիներին»: Ինչպես հայտնի է, այս եզրը օգտագործվում է նաև հայագիտության մեջ՝ և՛ եվրոպացի, և՛ կաթոլիկ իմաստներով:

² Olivier G.-A., Voyage dans l'Empire Othoman, l'Égypte et la Perse, Fait par ordre du Gouvernement, pendant les six premières années de la République; Par G.-A. Olivier, Membre de l'Institut national, de la Société d'Agriculture du département de la Seine, etc. etc., Paris, An 9. (1801), tome premier, Paris, 1801, p. 24-25.

հսկողությանը: Բայց այդ փաստն այնքան էլ կարևոր չէ, որ 20000 բնակչի տարբերությունն տա»³:

Հայտնի է, որ Կ.Պոլսի հայ գաղթօջախը հարյուրամյակների պատմություն ունի: Կ.Պոլսում հայեր հաստատվել էին թուրքերի գրավումից (1453 թ.) դեռևս շատ դարեր առաջ և IX - XI դդ. Կ.Պոլիսն արդեն վերածվել էր հայկական մարդաշատ գաղթօջախի⁴:

1478 թ. վիճակագրության համաձայն, թուրքերի գրավումից 25 տարի հետո, Կ.Պոլսում կար 100000-120000 բնակիչ, որոնք բնակվում էին 16026 տներում և ըստ ազգությունների ունեին հետևյալ պատկերը. 9486 տուն մահմեդական, 3743 տուն հույն, 1647 տուն հրեա, 817 տուն հայ, 267 տուն կաֆայեցի (սրանց մի մասը հայեր էին), 332 տուն եվրոպացի, 31 տուն գնչու⁵: Հետագա դարերում հայերի թիվը զգալիորեն աճեց՝ ի հետևանք բռնագաղթերի և պանդխտության⁶:

³ Olivier G.-A., Voyage. t. 1, p. 30. 31-32.

⁴ Տե՛ս Կիլիկիեան Բարզևն Եպիսկոպոս. Կ.Պոլսոյ հայ գաղութին ծագումը եւ հնագոյն եկեղեցիներ. Ընդարձակ տարեցոյց Մք Փրկչեան Ազգային հիւանդանոցի. Նոր շրջան. Բ. տարի. Կ.Պոլիս. 1926. էջ 291: Միքումի Յ. Ճ., Պոլիս եւ իր դերը. Առաջին հատոր (1453-1800). Պէրոյթ. 1965. էջ 79: Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության. Հատոր Ա.. Երևան. 1964. էջ 55: Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն. Երևան. 2002. էջ 585: Հայ գաղթաշխարհի պատմություն. հտ. 2, էջ 65-67: Խատասոյան Ա. Ա., Կոտտանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV – XVII դդ.). էջ 49-87: Դադայան Խ., Հայոց առևտրատնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում. XV դ. – 1915 թ., էջ 7: Համագոսայան Վ., Էջեր հայ գաղթավայրերի պատմությունից. էջ 31-36: Դադայան Խ., Հայոց տնտեսական ցեղասպանություն: Հայերի տնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում մինչև 1915 թվականը: Փաստաթղթերի ժողովածու. Երևան, 2016. էջ 19:

⁵ Տե՛ս Պէրպէրեան Հ., Իսթանպուլի հայ բնակչութիւնը քաղաքին գրառումէն մինչեւ Ֆաթիհ Մեհմետ Բ.-ի մահը. Հանդէս ամսօրեայ. 1962. Թիւ 9-12. էջ 422: Նույնի Նիւթեր Կ.Պոլսոյ հայոց պատմութեան համար. Վիեննա. 1965. էջ 52: Դադայան Խ., Հայոց տնտեսական ցեղասպանություն. էջ 21-22:

⁶ Տե՛ս Ալլայօյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան. Հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը. Հտ. Գ.. (Նոր դարու սկիզբէն մինչև Բ. դարու սկիզբը). Ա. մաս. Արեւելեան գաղութներ. Գահիրէ. 1961. էջ 256: Hammer J. de. Histoire de l'Empire Ottomane depuis son origine jusqu'à nos jours. t. IV. Paris.

XV դարի վերջերին Կ.Պոլսի հայ բնակչության թվաքանակն արդեն 1000 ծխի էր հասել⁷: XVII դարի ճանապարհորդ Միմեոն դպիր Լեհացին, որը 1608 թ. եղել էր Կ.Պոլսում, գրում է. «Եւ ասին թէ կայ ի Ստամպոլ ԽՌ (40000) Հրէի տուն եւ ԽՌ (40000) տուն Հոռմի, ԺՌ (10000) տուն Հայի, բայց Տաճկաց հաշիւ եւ համար չկայ»⁸: Լեհացու այս հաղորդման մեջ թեև ճիշտ է բացատրվում Կ.Պոլսում հավաքված բնակչության՝ հայրենիքից տեղափոխվելու պատճառները, սակայն «նրա կողմից բերված թվերն ակնհայտորեն չափազանցված են»⁹: XVIII դարասկզբի Կ.Պոլսի բնակչության վերաբերյալ տեղեկություններ է հաղորդել 1715 թ. հունվարի 19-ից մինչև 1716 թ. մայիսի 13-ը Կ.Պոլսում մնացած վրաց նշանավոր գրական-մշակութային ու քաղաքական գործիչ Սուլխան-Սաբա Օրբելիանին: Նա գրում է, որ Կ.Պոլսում, Ղալաթիայում, Պերայում և Սկյուտարում հարկատու են 15-60 տարեկանները՝

- հույներ – 43 հազար,
- հայեր – 17 հազար,
- հրեա - 12 հազար,
- ֆրանկներ – 2 հազար հոգի,
- քրիստոնյա հյուրեր – 4 հազար,
- նավերից գերյալներ և այլ – 2 հազար,
- թաթարներ – 475 հազար,

M.DCCC.XXXVI. (1836), p. 203. **Զամյանց Մ.**, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը). Հատոր Գ., Երևան, 1984, էջ 529, 689-690: **Պերպլեռան Հ.**, Դրուագներ ԺԷ. Դարու թրքահայոց պատմությունն, 1609 եւ 1634-ի բռնի ներգաղթները. - «Պայքար», 6-25 փետրվար. Բոստոն, 1948:

⁷ Տե՛ս **Պերպլեռան Հ.**, Իսթանբուլի հայ բնակչությունը քաղաքին գրառումն մինչև Ֆարֆին Մեհմետ Բ-ի մահը, Հանդես ամսօրեայ, 1962, Թիւ 9-12, էջ 422: **Պերպլեռան Հ.**, Նիսիեր Կ.Պոլսոյ հայոց պատմութեան համար, էջ 52:

⁸ **Միմեոն դպրի Լեհացոյ** ուղեգրություն, տարեգրություն եւ յիշատակարանք, Ոստմնաստիբեց եւ հրատարակեց Հ. Ներսէս վրդ. Ակինեան Մխիթարեան ուխտէ, Վիեննա, 1936, էջ 26:

⁹ **Չոբանյան Պ. Ա.**, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981, էջ 30:

ֆրանկներն ու թաթարները հարկ չեն վճարում¹⁰:

Այս տվյալներից Պ. Չոբանյանը եզրակացրել է, որ ֆրանկների և թաթարների քանակը լրիվ է արձանագրված, իսկ հարկատու ժողովուրդների քանակն ընդգրկում է բնակչության միայն 15 - 60 տարեկան հասակը, և նրանց ընդհանուր թիվը շատ ավելի պետք է լիներ (մոտավորապես՝ եռակի): Հետևաբար, 1710-ական թվականներին Կ.Պոլսում և նրա արվարձաններում հայերի թիվը պետք է լիներ ավելի քան 50 հազար հոգի կամ մոտ 9000 ծուխ¹¹: Ըստ Կ.Պոլսում ֆրանսիական դեսպանության քարտուղար դը լա Կրուայի (ոմանց մոտ՝ Դելակրուա, դը լա Գռուա, F. G. de la Croix) տեղեկության, ով Արևելք էր ուղարկվել դեռևս 1670 թ. և Կ.Պոլսում էր գտնվում 1676-1680 թթ.¹², «... հայերը հինգ եկեղեցի ունին Կ.Պոլսոյ մէջ, Ս. Գեորգ, Ս. Աստուածածին, Ս. Հրեշտակապետ, Ս. Լուսաորիչ, Ս. Կարապետ, եւ թէ ըստ իրեն հաղորդուած հաշուոյն, այն ստեն Պոլսոյ մէջ 8000 Հայու տուն եւ 50000 ոչ բնիկ Հայեր կային»¹³: Օսմանյան տերության մայրաքաղաքի բնակչությունը հետագայում, ինչ խոսք, ավելացել է՝ գլխավորապես արևմտահայ գաղութներից եկած գաղթական վերաբնակիչների հաշվին: Ղ. Ինճիճյանը Կ.Պոլսի ընդհանուր բնակչության թիվը նշում է մոտ մեկ միլիոն, այնուհետև գրում է, որ «Պիշինկ զթիւ յունաց առաւել դնէ քան զ300 հազար ոգիս, և գրեթէ նոյնչափ է ասէ և թիւ հայոց»¹⁴: Իսկ Մրմբյանը գրում է, որ «Հայոց թիւն ի Կ.Պոլիս ամեն ստեն հազիւ

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 28-29:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 29:

¹² Տե՛ս **Զուպլյան Մ. Կ.**, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիքք Ա., Քաղաքական պատմություն, Երևան, 1990, էջ 42:

¹³ Մեջբերումն ըստ Ասատուր Հրանդ. Կ.Պոլսոյ հայերը ու իրենց պատրիարքները, Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան Ազգային հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1901, էջ 111, հմմտ. Սիբուսի Յ. Պոլիս եւ իր դերը, հ. 1, էջ 354, **Չոբանյան Պ.**, Վրացական ուղեգրությունները, էջ 30: Համագաստյան Վ., Էջեր հայ գաղթավայրերի պատմությունից, Երևան, 2015, էջ 43:

¹⁴ **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրություն, Մասն Երկրորդ, Երուպիա, Հատոր Ե., Վենետիկ, 1804, էջ 115:

150000-ն անցած է ու այն՝ 19-րդ դարին կեսերը» և ապա ծանոթագրում, որ «Ումանք՝ մանաւանդ Հ. Ղուկաս Ինճիճեան՝ կը չափագանցեն այս թիւը կրկնապատիկ քանակով»¹⁵: XVIII դարավերջին և XIX դարասկզբին Կ.Պոլսում եղած եվրոպացի որոշ ճանապարհորդներ, դիվանագիտական ներկայացուցիչներ թողել են Կ.Պոլսի բնակչության վերաբերյալ տվյալներ:

1784 թ. Լոնդոնում հրատարակված Է. Աբեսկիի (Habesci) աշխատության մեջ Կ.Պոլսի բնակչության թիվը, ներառյալ նաև Գալաթա, Բերա, Սկյուտար արվարձանները, նշված է 1,5 մլն. բնակիչ¹⁶: Իսկ Ջ. Պինկերտոնի տվյալներով՝ Կ.Պոլսի բնակչությունը 400000 է՝ ներառյալ չորս արվարձանները՝ Գալաթա, Բերա, Թոփխանա, Սկյուտար: Այդ թվից 200000-ը թուրք են, 100000-ը՝ հույն և մնացածը՝ հրեաներ, հայեր, ֆրանկներ¹⁷: 1801 թ. Լոնդոնում տպագրված մի վիճակագրական հաշվետվության մեջ Կ.Պոլսի բնակչության թիվը 900000 է նշված¹⁸, իսկ 1819 թ. Լոնդոնում տպագրված միսիոներական մի վավերագրում Կ.Պոլսի բնակչության թիվը տրված է 400000, որից 200000-ը՝ թուրքեր, 100000-ը՝ հույներ, իսկ մնացածը՝ հրեաներ, հայեր, ֆրանկներ¹⁹: 1822 թ. Փարիզում տպագրված մի գործույկում Օսմանյան կայսրության մայրաքաղաքի բնակչության թիվը, ներառյալ նաև արվարձանները, հաշվված է ամենաքիչը 600000²⁰, իսկ անգլիացի ճանապարհորդ Ջ. Քեյրնիի

(J. Carne) մոտ բուն քաղաքի բնակչությունը 400000 է նշված, արվարձաններով՝ 800000²¹, Էյզենմանի (Eisenmann) մոտ Կ.Պոլսի ունի 88000 տուն և 600000 բնակիչ²²: Ա. Գասպարին Կ.Պոլսի բնակչությունը հաշվում է 500000²³, Կ. Հոֆմանը համարում է 380000, թեև նշում է, որ ոմանք հաշվում են 600000²⁴: Վ. Հոֆմանը 1848 թ. հրատարակած աշխարհագրական գրքույկում նշում է 640000 բնակիչ²⁵: 1818-1821 թթ. ճանապարհորդած Վեյանդը (J. C. Weyand) Կ.Պոլսի բնակչության թվաքանակն ընդունում է 400000-500000²⁶: Վ. Հունտերը (W. Hunter) Կ.Պոլսի բնակչությունը հաշվում է 700000 հոգի. երեք մասը՝ թուրքեր, երկու մասը՝ քրիստոնյաներ, մի մասը՝ հրեաներ²⁷:

Բավարարվելով վերը բերված տվյալներով՝ նշենք, որ XVIII դարավերջին և XIX դարասկզբին Կ.Պոլսի բնակչության թվակազմի վերաբերյալ տվյալների մեջ բավականին հաճախակի է հանդիպում 500000 և 600000 թիվը²⁸: Նշենք նաև, որ բավականին երկար ժամանակ Կ.Պոլսում ապրած և գործած նշանավոր Մ. դ'Օստոնը ևս նշում է, որ Կ.Պոլսի բնակչությունը 1790-ական թվականներին

¹⁵ St u Carne J., Reise im Orient. Jena. 1827. s. 18. St u Миховъ Н.В., укр. соч., т. 2. էջ 72-73:

¹⁶ St u Eisenmann J. A., Nueste, allgemeine Erdbeschreibung, München. 1813. s. 250. տե՛ս Миховъ Н.В., укр. соч., т. 2. էջ 91:

¹⁷ St u Gaspari A. C., Lehrbuch der Erdbeschreibung zur Erläuterung sowohl des neuen methodischen Schulatlasses, Weimar. 1819. I Abth., s. 527. St u Миховъ Н.В., укр. соч., т. 2. էջ 110:

¹⁸ St u Hoffman K., Die Erde und ihre Bewohner. Wien. 1833. s. 332. տե՛ս Миховъ Н.В., укр. соч., т. 2. էջ 133:

¹⁹ St u Hoffman W., Handbuch der Geographie. Leipzig und Wien. 1849. s. 305. տե՛ս u Миховъ Н.В., укр. соч., т. 2. էջ 134:

²⁰ St u Weyand J. C., Reisen durch einen Theil von Europa, Asien und Afrika in den Jahren 1818 bis 1821. Wien. 1828. s. 11. տե՛ս u Миховъ Н.В., укр. соч., т. 2. էջ 297:

²¹ St u Hunter W., Reisen durch Frankreich, die Türkei und Ungarn bis Wien. Leipzig. (1797). s. 119. տե՛ս u Миховъ Н.В., укр. соч., т. 2. էջ 138:

²² St u Миховъ Н.В., укр. соч., т. 2, с. 76. 118-119. 123, 175, 185. 228-229: т. 3, с. 20, 82, 135, 181, 257, 332, 338: т. 4, с. 309: т. 5, София. 1968. էջ 57:

¹⁵ Մըրքընան Յ. Գ., Մասնական պատմություն հայ մեծատուններու (1400-1410 1900), Բ. տպագրութիւն. Կ.Պոլիս, 1910, էջ 49:

¹⁶ St u Habesci E., The present state of the Ottoman Empire, London. 1784. էջ 354. E. Abesci, État actuel de l'empire Ottoman. t. 2. Paris. 1792. էջ 154. St u Миховъ Н.В., Населението на Турция и България прѣз XVIII и XIX в., томъ втори, София, 1924. էջ 1:

¹⁷ St u Pinkerton J., Modern Geography. London. 1802. v. 2, p. 456 տե՛ս u Миховъ Н.В., укр. соч., т. 3, София, 1929. էջ 333:

¹⁸ St u The Statistical Breviary; shewing on a principle entirely new. the Resources of every State and Kingdom in Europe.... London, 1801, էջ 21, տե՛ս u Миховъ Н.В., укр. соч., т. 3, էջ 337:

¹⁹ St u Black Sea. Church Missionary Society. = The Missionary Register for 1819, London. 1819. էջ 14, տե՛ս u Миховъ Н.В., укр. соч., т. 4, София, 1935. էջ 41:

²⁰ St u Capitale. La capitale de l'Empire Ottoman considerée sous le point de vue militaire, Paris. 1822. p. 13. տե՛ս u Н.В. Миховъ, укр. соч., т. 2. էջ 72:

կազմել է մոտ 600000 հոգի²⁹: Ըստ Կ.Պոլսում երկար ժամանակ գտնված (1812-1814, 1826 թթ.) ֆրանսիացի կոմս Անդրեոսիի տվյալների՝ Օսմանյան կայսրության մայրաքաղաքի բնակչությունը կազմել է 630000 հոգի³⁰:

1765 թ. Կ.Պոլսի բնակչության թվաքանակի մասին մի հետաքրքիր տվյալ է բերում Ղ. Բնձիճյանը. «Ի ցուցակն Իսթանպուլ էֆենտիսիին որ յամին 1765, թիւ տանց տաճկաց և քրիստոնէից միայն ի Ստանպուլ քաղաքի՝ դնի լինել 88185»³¹: Այս տեղեկությունը հիմք ընդունելով՝ կարելի է ասել, որ եթե Կ. Պոլսի բնակչության 60%-ը մահմեդական էր³², ապա 1765 թ. դրությամբ Կ.Պոլսի քրիստոնյաների թիվը, ըստ տների կամ ծխերի, եղել է մոտ 35000: Եվ քանի որ հույների թիվը եղել է հայերից ավելի շատ, ապա Կ.Պոլսում հայոց տների թիվը մոտավորապես կազմել է 15000-16000: Եվ եթե յուրաքանչյուր ծխում հաշվենք մոտ հինգ մարդ, ապա կարելի է ասել, որ 1765 թ. Կ.Պոլսի հայ բնակչության թիվը մոտավորապես եղել է 75000-80000: Ըստ Հ. Պերպերյանի՝ 1848 թ. Կ.Պոլսում հայերի թիվը 110000 էր³³:

Այսպիսով, ըստ Գ.-Ա. Օլիվիեի այն տեղեկության, որի համաձայն Կ.Պոլսի բնակչությունն ավելին է եղել, քան 500000-ը, (իսկ տվյալ ժամանակաշրջանի և XIX դարասկզբի հեղինակների ճնշող մեծամասնությունը հաղորդում են 500000-ից մինչև 600000 բնակչություն) և որ, ըստ Օլիվիեի, հույները կազմել են ամբողջ բնակչության 1/6-ը, այսինքն՝ մոտ 86000-100000 և եթե հայերի թիվը հույներից մի քիչ է պակաս, ապա հայերի թիվը մոտավորապես եղել է 70000-80000, առավելագույնը՝ 100000: Մենք, այնուամենայնիվ, կարծում ենք, որ Օլիվիեի տվյալներն անվերապահորեն չպետք է

ընդունվեն, քանզի նրա բերած թվերը մոտավոր են, և ինչպես որոշ հեղինակներ, այնպես էլ Օլիվիեն, նշում են, որ «որովհետև Թուրքիայում ընդհանրապես չեն պահում ծննդյան և մահվան գրանցման մատյաններ, երբեք չի կարելի ճշգրիտ իմանալ Թուրքիայի քաղաքների բնակչության ճշգրիտ թիվը»³⁴: Վերոհիշյալ փաստի առթիվ Հ. Պերպերյանը գրում է. «ոչ Օսմանյան կայսրութան եւ ոչ ալ Պոլսոյ բնակչության թիւին մասին հին վիճակագրութիւն գոյութիւն չունի: Զանազան հին աղբիւրներու մէջ յիշուած բոլոր թիւերն ալ առտել կամ նուազ ենթադրական են: Նոյն իսկ ԺԹ. դարուն Պոլիս սպարած քանի մը Եւրոպացիներու կողմէ կատարուած հաշիւները՝ հիմնուած ալիւրի եւ միսի սպառումներուն հիման եւ ոչ թէ մարդահամարի վրայ»³⁵: Մյուս կողմից էլ Օսմանյան կայսրության մայրաքաղաքի բնակչության թվակազմի տատանումները զգալիորեն պայմանավորված էին ներքին և արտաքին բազմաթիվ գործոններով: Այսպես, Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից Կ.Պոլիս գաղթած բազմաթիվ վերաբնակիչները հետագայում կա մ վերադառնում էին իրենց հայրենիքը, կամ շարունակում իրենց ճանապարհը դեպի Եվրոպա: Կ.Պոլսի բնակչության և, մասնավորապես, հայերի աճը նույնպես տեղի էր ունենում հիմնականում գաղթական բնակչության հաշվին, որն արդեն պայմանավորված էր Օսմանյան կայսրության վարչական սահմաններում քրիստոնյաների նկատմամբ հալածանքների ուժեղացմամբ³⁶:

Քիչ դեր չէին խաղում նաև քաղաքին պատուհասված աղետները³⁷ հատկապես նշանավոր էր Կ.Պոլսի 1778 թ. ժանտախտը, որի հետևանքով «միայն Պալաթու թաղին բնակիչներէն երեք տոմսուան մէջ (մայիսէն-օգոստոս) 1000 Հայ զոհ գացած է ժանտախ-

²⁹ Sté u D'Ohsson M., Tableau général de l'Empire Othoman. t. VII. Paris, M.DCCC.XXIV. (1824), էջ 297:

³⁰ Sté u Andréossy M. le comte, Constantinople et le Bosphore de Thrace, pendant les années 1812, 1813 et 1814, et pendant l'année 1826. Paris, M.DCCC.XXVIII. (1828), էջ 426:

³¹ Բնձիճյան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Բ., հ. Ե., էջ 115:

³² Sté u Петросян Ю.А., Юсупов А.Р., Город на двух континентах. Москва, 1977, էջ 110:

³³ Sté u Պերպերյան Հ., Դրուագներ ԺԵ. Դարու թրքահայոց պատմութենէն. 1609 եւ 1634-ի բռնի ներգաղթները, «Պայքար», 21 փետրվար, 1948:

³⁴ Olivier G.- A., Voyage, t. I, p. 30.

³⁵ Պերպերյան Հ., Դրուագներ, «Պայքար», Թիւ 44 (11799), 21 փետրվար, Բոստոն, 1948:

³⁶ Sté u Չոբանյան Պ., Վրացական ուղեգրությունները, էջ 30:

³⁷ Պերպերյան Ա., Պատմութիւն հայոց, Մկսեալ ի 1772 ամէ Փրկչին մինչեւ ցամն 1860, հանդերձ կարեւոր տեղեկութեամբ եւ ժամանակագրութեամբ երեւելի իրաց, Կոստանդնուպոլիս, 1871, էջ 437, 438, 440, 441, 442 և այլն:

տին»³⁸: Աղետալի հետևանքներ է ունեցել նաև 1782 թ. օգոստոսի 10-ի սոսկալի հրդեհը, որը «66 ժամ տևեց, մոխիր դարձուց Պոլսոյ մէջ հազարաւոր տուներ, հազարէ աւելի մարդոց կիզման պատճառ ըլլալով. այրեցաւ Ս. Գեորգ եկեղեցին ալ, ինչպէս 6 յոյն եկեղեցի»³⁹:

Այսպիսով, հավանական ենք համարում, որ XVIII դարավերջին և XIX դարի սկզբին Կ.Պոլսում հայ ազգաբնակչության թիվը եղած լինի քիչ ավելի, քան եվրոպացի հեղինակների տվյալների հիման վրա հաշվարկած 70000-80000-ը, այսինքն, շուրջ 100000: Ուրեմն, XVIII դարի վերջին (1790-ական թվականներ) և XIX դարի սկզբին Կ.Պոլսում ապրում էր շուրջ 80000-100000 հայ:

ARMAN MALOYAN
Ph.D. in History, Armenia

THE NUMBER OF ARMENIANS IN CONSTANTINOPLE
ACCORDING TO EUROPEAN AUTHORS
(LAST QUARTER OF THE 18TH CENTURY - BEGINNING
OF THE 19TH CENTURY)

Keywords: Constantinople, population 500,000-600,000, 70,000-80,000 Armenians, last quarter of the 18th century, early 19th century, European authors, Ottoman Empire, Armenian community.

In the second half of the 18th century a considerable number of Western Armenian town dwellers were centered in Constantinople, the capital of the Ottoman Empire, which was, at the time, a kind of a palette to which people come from various Western-Armenian provinces added their own tinge of colour. As Constantinople was at the time the main

sociopolitical centre of Western Armenians, we think it important to consider in detail the demography of the Armenian community of the town, especially as that of the second half of the 18th century has been noticeably less studied. The sustainability and vitality of the Armenian community of Constantinople greatly depended upon the continuous inflow of people from Western Armenian provinces. It was also owing to this fact that the town maintained its role as the political, spiritual and cultural-educational centre of Western Armenians.

Comparing the information cited by both Armenian and European authors, the population of Constantinople exceeded 500,000 (the majority of authors of the time and those of the beginning of the 19th century estimate it to be around 500,000 to 600,000) where 1/6th of the overall population, that is, around 86,000 to 100,000, were Greeks, it allows us to conclude that the number of Armenians being slightly less, there must have been around 70-80 thousand, 100,000 maximum. Still we are of the opinion that Olivier's data shouldn't be taken at face value, as his numbers are approximate: Oliver himself as well as some other authors mentioned that there had been no birth and death registers in Turkey in those days, so one can never hope to have exact numbers of the town populations.

The fluctuations in the number of the Armenian population of the capital of the Ottoman Empire considerably depended upon numerous inner and outer factors. For example, many of the settlers from Western Armenian provinces would later either return to their native land, or move on to Europe. The growth of the population in Constantinople, in particular that of Armenians was also mainly due to the inflow of migrants which, in its turn, was conditioned by the increase of persecutions of Christians in Turkish Pashaliks.

Thus, we consider it possible that at the end of the 18th century and the beginning of the 19th century, the number of the Armenian population of Constantinople was slightly more than 70,000-80,000, calculated according to European authors, that is, about 100,000. So, at the end of the 18th century (1790s) and at the beginning of the 19th century, about 80,000-100,000 Armenians lived in Constantinople.

³⁸ Ասատուր Հրանդ, Կ.Պոլսոյ հայերը ու իրենց պատրիարքները. «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան Ազգային հիւանդանոցի», Կ.Պոլիս. 1901. էջ 153: Պէդպէրեան Ա. Պատմութիւն հայոց, էջ 436:

³⁹ Ասատուր Հրանդ, Կ.Պոլսոյ հայերը ու իրենց պատրիարքները. «Ընդարձակ օրացոյց», էջ 155-156: Նույնի. Կ.Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, Ուոթթթաուն. 1973. էջ 85-86:

АРМАН МАЛЮЯН
к.и.н., Армения

ЧИСЛО АРМЯН В КОНСТАНТИНОПОЛЕ ПО ДАННЫМ ЕВРОПЕЙСКИХ АВТОРОВ (ПОСЛЕДНЯЯ ЧЕТВЕРТЬ XVIII ВЕКА - НАЧАЛО XIX ВЕКА)

Ключевые слова: Константинополь, население 500000-600000, 70000-80000 армяне, последняя четверть XVIII века, начало XIX века, европейские авторы, Османская империя, армянская колония.

Во второй половине XVIII века в столице Османской империи – Константинополе было сосредоточено большое число западноармянского городского населения, которое представляло собой оригинальную палитру, где каждая провинция Западной Армении со своими представителями вносила свой собственный оттенок, дополняя палитру. Армянский Константинополь во второй половине XVIII века сравнительно мало изучен. В отмеченный период Константинополь был центром общественно-политической жизни западных армян. Жизнеспособность и оживленность армянской общины Константинополя в основном была обусловлена непрерывной миграцией из провинций Западной Армении в Константинополь, благодаря чему он сохранял свою роль политического, духовного и образовательно-культурного центра западных армян.

Сравнивая свидетельства армянских и европейских авторов, согласно которым население Константинополя составляло свыше 500000 человек (а подавляющее большинство авторов этого периода и начала XIX века говорят о населении от 500000 до 600000), а греки составляли 1/6 часть всего населения, т.е., приблизительно 86000-100000 человек, и если армян было чуть меньше, чем греков, то число армян составляло приблизительно 70000-80000 человек, самое большее – 100000. Мы, тем не менее, считаем, что не нужно безоговорочно принимать сведения европейских авторов, поскольку числа, приведенные им, приблизительно и, как и некоторые авторы, Оливье отмечает, что в Турции вообще не велись журналы с данными

о рождаемости и смерти; соответственно никогда нельзя в точности знать число жителей в городах Турции.

Неустойчивость количества армянского населения столицы Османской империи существенно обусловлена многими внутренними и внешними факторами. Так, многочисленные мигранты, переезжающие из разных районов Западной Армении в Константинополь, впоследствии или возвращались на родину, или продолжали свой путь в Европу. Увеличение населения (в частности, армянского) Константинополя также происходило в основном за счет эмигрантов, что было обусловлено усилением преследований христианского населения в турецких провинциях.

Таким образом, мы считаем возможным, что в конце XVIII века начале XIX века численность армянского населения Константинополя была немногим больше 70000-80000, рассчитанных по данным европейских авторов, то есть около 100000. Итак, в конце XVIII века (1790-е годы) и в начале XIX века в Константинополе проживало около 80000–100000 армян.

ՀԱՅ ՍՓՅՈՒՌՆՆԵՐ ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

ԳՈՀԱՐ ԽՆԿԱՆՈՍՅԱՆ
պ.գ.թ., Բուլղարիա

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԿՅԱԼՆԵՐ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմնադրանք. հայեր, Բուլղարիա, Հակոբ Կարապետյան, Հակոբ Գլիկյան, պատմություն, մշակույթ, եկեղեցի, Սոֆիա, Պլովդիվ, Վաննա, Բուրգաս, Ռուսե:

Հայերի ներկայությունը ներկայիս Բուլղարիայի հանրապետության տարածքում, ըստ պատմական աղբյուրների, սկսվում է դեռևս VI դարում Բյուզանդական կայսրության օրոք՝ որպես ռազմական ուժ հյուսիսից ներթափանցած տարբեր ցեղերի դեմ¹: 681 թվականին նախաբուլղարները և սլավոնները Սապարուխ խանի գլխավորությամբ հիմնադրում են իրենց պետությունը Պլիսկա մայրաքաղաքով: Այդ թվականին կազմավորված Բուլղարիայի պետության արքունիքի հետ ունեցած կապերի կամ առհասարակ դարերի ընթացքում այս տարածաշրջանում կամ թեկուզ երկրի որոշ տարածքի վրա հայերի ներկայության վերաբերյալ ամբողջական, խորացված ուսումնասիրություններ գրեթե չկան: Բուլղարիայի տարածքում տարբեր դարերում հայերի բնակություն հաստատելու մասին տեղեկություններ կարելի է գտնել հայ և օտար պատմիչների աշխատություններում:

Բուլղարահայությանը վերաբերող մատենագիտության մասին գաղտփարը առաջացավ, երբ, ուսումնասիրելով բուլղարահայերի մշակութային կյանքը 1878-ից մինչև 1944 թվականները, դժվարությամբ հավաքելով թեմային վերաբերող տվյալներ՝ պարզեցինք, որ գրավոր պատմական փաստերն այնքան էլ շատ չեն չնայած տարածված ըմբռնմանը, թե «հայերի արխիվը հայերի մոտ

¹ Овнян С., Армено-български исторически връзки, София, 1972, стр. 48

է: Ուստի մեր նպատակն է այստեղ հնարավորինս մեկտեղել այն աշխատությունները, որոնք ինչ-որ չափով տեղեկություններ են տալիս հայերի մասին: Հիմնականում հայերենով և բուլղարերենով տպագրված գրքերում կարելի է գտնել նաև հղումներ որոշ աշխատությունների մասին, որոնք լուսաբանում են հայերին առնչվող այլ հարցեր ևս:

Այս հոդվածում նշում ենք ոչ միայն հրատարակված **գրքերի** ու գրքույկների վերնագրերը, այլև անդրադառնում ենք տպագրված որոշ **հոդվածներին**: Վերջիններս, չնայած իրենց փոքր ծավալին, արժեքավոր ու բովանդակալից են, քանի որ հիմնականում գրված են գիտնականների կամ ազգանվեր հայրենակիցների կողմից, որոնք ցուցաբերել են մասնագիտական լուրջ մոտեցում:

Հատուկ ուշադրություն ենք ուզում դարձնել **ժողովածուներին**: Բուլղարիայի հայկական համայնքի անցյալի վերաբերյալ հարուստ նյութեր են պարունակում հայերենով տպագրված «Մասիս» (Սոֆիա, 1934) և «Վիթոշ-Արարատ» (Պլովդիվ, 1935) տարեգրքերը: Այդ ավանդույթը շարունակվում է նաև մեր օրերում. Բուլղարիայում տեղի ունեցած գիտաժողովների կամ այլ միջոցառումների առիթով կազմված ժողովածուները լուսաբանում են տեղաբնակ հայերի կյանքի տնտեսական, մշակութային, մասնագիտական և առհասարակ համայնքին վերաբերող շատ հարցեր: 1997–2020 թթ. ընթացքում լույս տեսած ժողովածուները, որոնք հիմնականում բուլղարերեն են, ընդգրկում են բազմաթիվ ոլորտների պատկանող նյութեր՝ բացա՛ռ այստեղով կարևոր և երբեմն մոռացության մատնված էջեր:

Տեղաբնակ ազգանվեր հայրենակիցներն իրենց հոդվածներում այնուպիսի տեղեկություններ են տալիս, որոնք մինչ օրս մնում են որպէ՛ս եզակի աղբյուրներ: Պատմության հանդեպ հատուկ վերաբերու՛մունք ունեցող մեր ազգակիցներն իրենց ուսումնասիրությունների արդյունքները տպագրում են ժամանակակից մամուլի էջերում: Օսմանյան կայսրությունից ազատագրված Բուլղարիայում, 1878 թվականից մինչև 1944 թվականը, երբ Բուլղարական թագավորությունը դառնում է Բուլղարիայի ժողովրդական հանրապետություն, այստեղ բնակվող «տեղացի» հայերին միանում են մի

քանի տասնյակ հայրենակիցներ: «Նորեկները» 1894–1896 թթ. համալսյան շարդերից փրկվածներն են, ինչպես նաև հետագա տարիներին ցեղասպանությունից մազապուրծ եղած փախստականները և ի վերջո՝ 1922 թվականի Հույն-թուրքական պատերազմից Բուլղարիայում ապաստանած մոտ 20.000 մեր հայրենակիցները: Հաստատվելով Բուլղարիայում՝ հայ մտավորականները շարունակում են իրենց գործունեությունը՝ ի շահ ազգին: Նույնիսկ ժամանակավորապես այստեղ տանիք գտած նվիրյալները՝ ինչպիսիք են, Օրինակ, Երովիանը կամ Հակոբ Մարթայան-Դիլաչարը, իրենց լուսման են ներդնում բուլղարահայության պատմամշակութային և հոգևոր զարգացման ասպարեզում: Ստորև ներկայացնում ենք մեր հայրենակիցներից մի քանիսի կենսագրությունը, ինչպես նաև նրանց գործունեության վերաբերյալ ոչ շատ հայտնի որոշ փաստեր:

Հեղինակներին նշելիս պետք է նախ և առաջ հիշատակել պատմաբաններին, որոնք մասնագիտական մոտեցումով մեկնաբանում և արժեվորում են ուսումնասիրված տարբեր խնդիրները: Ստորև հակիրճ ներկայացնում ենք հատկապես կարևոր աշխատությունների հեղինակներին:

Կոնստանդնուպոլսի Ազգային Մատենադարանի պատասխանատուի պաշտոնը վարած **Գևորգ Մեսրոպը** (Кеворк Месроб, 30.04.12.05.1881 – 17.09.1948), հաստատվելով Բուլղարիայում 1922 թ., Պլովդիվում առաջին իսկ ամիսներից ձեռնամուխ է լինում հայկական դպրոցի՝ ճեմարանի բացմանը²: Հետագայում տեղափոխվելով մայրաքաղաք՝ նա ընդլայնում է և ավելի բարձր մակարդակի հասցնում ուսումնական հաստատությունը, որը կոչվում է “Մեսրոպյան ճեմարան”³: Մինչև իր կարճատև, բայց բեղուն կյանքի ավարտը, Գևորգ Մեսրոպը և դպրոցի ուսուցչական ամբողջ կազմը, իրենց աշակերտներին մնայուն գիտելիքներ հաղորդելուց բացի, նրանց կրթում են հայրենասիրական ոգով: Այդ անփոխարինե-

² Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 1388

³ **Գևորգ Մեսրոպ**, Գրական և ուսուցչական գործունեության 30 և 25ամեայ յոբելեանի առիթով (կենսագրական գիծեր), Սոֆիա, 1929

լի գիտնական-մանկավարժը հայոց լեզվի և մեր պատմության պանծալի էջերի վերաբերյալ արժեքավոր դասեր է հաղորդում դպրոցահասակ պատանիներին նաև Խասկովո, Բուրգաս և այլ քաղաքներում⁴: Իր հեղինակած «Պուլկարահայոց ծագումը» այն հոդվածներից է, որը ցույց է տալիս նրա արհեստավարժ մոտեցումը՝ հոդվածը ներկայացված է պարզ ու մատչելի լեզվով, ինչն ինքնին հուշում է, որ այն գրված է բանիմաց մասնագետի կողմից: Գիտնական-պատմաբանի բազմաբնույթ գործունեությանը լիարժեքորեն չանդադառնալով՝ նշենք միայն, որ Բուրգաս և Այթոս քաղաքների հայ համայնքների պատմությանը վերաբերող չափազանց կարևոր մի ձեռագիր, ինչպես հայտնի է դառնում ընդօրինակչի ծանուցումից, մեզ է հասել Գևորգ Մեսրոպյի և Ն. Կասաբյանի ջանքերի շնորհիվ:

Պովղիվարնայ Ներսես Կասաբյանը (Գասապեան, Нерсес Касабян, 1904–1978), հաստատվելով Բուլղարիայում 1922 թվականին, դարձել է համայնքի առաջին նվիրյալ գործիչներից, որն աշխատելով կտորէղենի ոլորտում՝ լրջորեն ուսումնասիրել է համայնքի պատմությունը: Ժամանակակիցների վկայությամբ՝ նա ունեցել է Էարուստ գրադարան: «Բազմավեպ» հայագիտական հանդեսում և Սոֆիայի «Մասիս» տարեգրքում տպագրվել են նրա որոշ կոլւթերը: Երևանի Մատենադարանի՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Էյին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի, մասնագետների կողմից ըստ արժանավույն է գնահատվում նրա «Յուցակ էայերէն ձեռագրաց ի Բուլգարիա» աշխատությունը: Կատարած այլ ուսումնասիրություններից բացի, նա է եղել Բուլղարիայում հայերեն լեզվով հրատարակված գրքերի և մամուլի ցուցակագրության ու դրանց մասին համառոտ տեղեկությունների հեղինակը (տես՝ Български книги 1878 – 1944... և Български периодичен печат 1844 – 1944...):

Սարգիս Փաչաճյանի (Саркис Пачаджян, 1896–1980) գրչին են պատկանում բուլղարահայության պատմությանը վերաբերող տարբեր հոդվածներ: Օժված Ռոդոսթո քաղաքում՝ 1915 թվականի

⁴ Մեսրոպեան ձեռարանի բրոշուր. Սոֆիա. 1931

Եղտնից նա փրկվում է՝ հայտնվելով Սիրիայում, ապա հաստատվում է Կոնստանդնուպոլսում, իսկ 1922 թվականից ապաստանում է Սոֆիայում՝ դառնալով համայնքի կարևոր դեմքերից մեկը: Աշխատակցում է «Մշակոյթ», «Պուլկարահայ ձայն», «Զանգ» թերթերին, հրատարակում է «Պալքանեան մամուլ» շաբաթաթերթը: 1944-ից մինչև թոշակի անցնելը մայրաքաղաքում դասավանդում է հայոց լեզու: «Յուշամատեան Ռոդոսթոյի հայերուն 1606–1922» աշխատության հեղինակն է, որը լույս է տեսել Սոֆիայում 1929 թ. (129 էջ) և ապա լրացված հրատարակությունը՝ Բեյրութում՝ 1971 թ. (266 էջ): Տեղական գաղութի պատմության մասին իր ուսումնասիրությունները տպագրում է հիմնականում Սոֆիայի «Երևան» շաբաթաթերթում և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի պաշտոնական հրատարակություն «Էջմիածին» ամսագրում: Իր ժառանգների մոտ է պահվում նրա «Համառոտ պատմություն հայերի և բուլղարների հարաբերություններից՝ հնուց մինչև մեր օրերը» անտիպ մեքենագիր ձեռագիրը բուլղարերենով («Кратка история на връзките между арменци и българи от древността до наши дни», София, 1976, 115 с.):

Մեծ ներդրում ենք համարում Վառնայի մտակայքում գտնվող Էզերեց ավանում բնակվող **Արա Մարգոսի (Մինեգյոզյան)** (Արա Маркос, 28.06.1924–2.12.1990) բացառիկ աշխատությունները: Դասավանդելով շրջակա գյուղերի դստրոցներում՝ Արա Մարգոսը հեռակա ուսուցմամբ ավարտում է Սոֆիայի համալսարանի պատմության բաժինը և երկրորդ մասնագիտությամբ աշխատում է հիմնականում Վառնայի պատմության թանգարանում, Դենյա քաղաքի հնագիտական արգելոցում, Ռազգրադի պատմության թանգարանում: Առօրյա գործերի և պեղումների հետ մեկտեղ, նա հետաքրքրվում է տարածաշրջանի հայկական հուշարձաններով: Հակիրճ, առանց ավելորդ պատմական կամ այլ տվյալների, նա իր բազմաթիվ հրապարակումներում անդրադառնում է հայկական տարբեր պատմալեզակությային հուշարձաններին, եկեղեցիների բակերում մոռացության մատնված հայկական տապանաքարերի արձանագրություններին և այլն՝ ի հայտ բերելով կարևոր փաստեր բուլղարահայության պատմությունից: Համեստ գիտնականը մեծ հարգանք էր վայելում իր գործընկերների մոտ, որոնք նրա ուշադ-

րությանն էին ներկայացնում Բուղարիայի տարբեր վայրերում գտնված այլատառ որմագրությունները: Այդպիսով վերձանելով նաև բուլղարական մշակութային հուշարձանների վրա առկա հայատառ անձանոթ գրությունները, նա իր բացառիկ տեղն է գրավում բուլղարական հնագիտության ասպարեզում՝ թողնելով հարյուրից ավելի տպագրված նյութեր իր կողմից հայտնաբերված և ուսումնասիրված բուլղարական հուշարձանների վերաբերյալ⁵:

Մասնագիտությամբ լինելով գյուղատնտես **Հակոբ Կիլիկյանը** (Агоп Гилигян, 1925-2015), հասարակական ակտիվ գործիչ էր, պատմության հանդեպ հատուկ վերաբերմունք ունեցող մեր նվիրյալներից մեկը: Հ. Կիլիկյանը, համագործակցելով Ն. Կասարյանի հետ, վերջինիս մահից հետո էլ շարունակում է իր որոնումները՝ 2008 թվականին հրատարակելով Բուղարիայում 1878-1989 թթ. տպագրված գրքերի ցանկը հայերեն և բուլղարերեն տարբերակներով: Հետագայում շրջելով բուլղարահայ համայնքներում, Կիլիկյանը հավաքագրում է այլ տվյալներ նա, որոնք ներկայացնում է տեղի հայկական մամուլում կամ մասնագիտացված ամսագրերում: Նշենք, որ ներկայումս որոշ հայկական էկեղեցիներ ուսումնասիրված և նկարագրված են միայն իր շնորհիվ (տես «Исторически бележки за арменските църкви в Североизточна България...») «Պատմագրական նշումներ Հյուսիսարևելյան Բուղարիայի հայկական էկեղեցիների մասին»): Ժամանակակիցները նրան ճանաչում էին որպես Բուղարիայի հայկական համայնքի պատմությունն ուսումնասիրող, խստապահանջ և նույնիսկ մանրուշները ճշգրտորեն ներկայացնող հեղինակ, որը մեզ է թողել բազմաթիվ նյութեր տեղի հայերի համայնքային կյանքի վերաբերյալ⁶:

Խոսելով հայագիտությամբ զբաղվող մեր ազգակիցների գործունեության մասին ուրախությամբ պետք է նշենք, որ 20-րդ դարի վերջին տասնամյակների ընթացքում, ինչպես նաև մեր ժա-

մանակներում գործել և գործում են մի շարք **գիտնականներ**, որոնք անդրադարձել են մեր համայնքի պատմությանը, պատմական կապերին ու սովանդայիններին:

Սուրեն Հովնակյանը (**Сурен Овнанян**), կարելի է ասել, որ ասոջին ուսումնասիրության հեղինակն է, որտեղ անհրաժեշտ խորությամբ ներկայացված է խնդրո առարկան: Նրա «Հայ-բուլղարական պատմական կապեր» աշխատությունը հրատարակվել է նախ ուսերենով՝ 1968 թվականին, ապա թարգմանվել է նաև բուլղարերեն 1972 թվականին:

Պլովդիվաբնակ **Զոհրաբ Ղասաբյանը** հայրենադարձման տարիներին հաստատվում է Խորհրդային Հայաստանում և 1986 թ. Երևանում լույս է տեսնում նրա «Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության» աշխատությունը, որը լուսաբանում է բուլղարահայ գաղութի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը 1896-1970 թթ.:

Պրոֆեսոր **Հակոբ Կարապետյանը** (Агоп Карапетян, ծն. 21.03.1943), լինելով Բալկանյան պատմության մասնագետ (հիմնականում ուսումնասիրելով Հունաստանի, Կիպրոսի պատմությունը և Հույն-թրքական հարաբերությունները), բուլղարահայության անցյալի հարցերին վերաբերող ուշադրության արժանի մի շարք հոդվածներ ունի, որոնցում բացահայտում է հետաքրքիր փաստեր:

Հատկապես կարևոր է նշել այն հանգամանքը, որ վերջին ժամանակներս հայ համայնքի հանդեպ լուրջ հետաքրքրություն են ցուցաբերել նաև մի շարք բուլղար հետազոտողներ, որոնք իրենց ուսումնասիրությունների վրա հիմնված մենագրություններ և հոդվածներ են տպագրել:

Բանահավաք պրոֆեսոր **Էվգենիա Միցևան** (Евгения Мицева, 06.01.1945-21.05.2006), հետաքրքրվելով բուլղարահայերի բանահյուսությամբ, որպես իր հետազոտությունների արդյունք հրատարակել է «Հայերը Բուղարիայում՝ մշակույթ և ինքնություն» («Арменците в България: култура и идентичност») ուսումնասիրությունը, որտեղ գիտական մոտեցմամբ նկարագրել է XX դարի հայերի սովորությունները, ներկայացրել համայնքային կառույցները, մայրենիի ուսուցման հարցը, ինքնագործ գեղարվեստական խմբե-

⁵ Годишник на музеите от северна България, книга 27, 1991, стр. 61-62.

⁶ Държавен архив – Пловдив, фонд 2288 Агоп Артин Киликян /Պլովդիվի պատմական արխիվ, գործ 2288 /:

րը և այլն: Մինչ այժմ եզակի այդ աշխատությունն ունի իր յուրօրինակ լայնածավալ տարբերակը «Հայերը պատմում են իրենց մասին...» («Арменците разказват за себе си...») խորագրով: Գրքի հեղինակները Ե. Միցևան և իր գործընկեր Միրանուշ Դանիելյան-Փափազյանը, հավաքագրել և տպագրել են առանձին հարցազրույցներից կազմված ընդարձակ մի տեղեկատվություն, որի միջոցով ընթերցողին են հաղորդում բուլղարահայերի ապրումներն իրենց հուզող այս կամ այն հարցի շուրջ, նրանց նիստուկացի մասին զրույցներ, հայերիս մտահոգությունները համայնքային կյանքի, եկեղեցու, դպրոցի, մամուլի և այլ կարևոր խնդիրների վերաբերյալ, մի խոսքով՝ Բուլղարիայում XX դարում հայերի առօրյա կյանքի մասին:

Պրոֆեսոր **Շորժետա Նազրբաևյան** (Жоржета Назърска, ծն. 1970) այն մասնագետներից է, որոնք ոչ միայն ինքնուրույն ուսումնասիրում են իրենց հետաքրքրող որոշ թեմաներ, այլ նաև ուղղորդում և խրախուսում են ներկայիս ուսանողներին: Ուսումնասիրելով Բուլղարիայի պետական հիմնական կառույցներում երկրի տարբեր ազգային փոքրամասնությունների մասնակցությունը, ինչպես նաև վերջիններիս ազգային և կրոնական ծեսերը, նա իր աշխատություններում հաճախ անդրադառնում է նաև հայերին: Իր բանիմաց, դեկավարության շնորհիվ **Նադյա Վլադիմիրովան** (Надя Владимирова, ծն. 1985) եզակի ուսումնասիրություն կատարեց Բուլղարիայի հայկական համայնքի վերաբերյալ և պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն «Բուլղարիայում հայերի մշակույթային ժառանգության պահումն ու պահպանումը» թեմայով («О пазване и съхранение на културното наследство на арменците в България»):

Իհարկե, որպես բուլղարահայության պատմամշակութային աղբյուր, չենք կարող չնշել նաև **բուլղարահայ մամուլը**, որը 1897 թվականից մինչև մեր օրերը արտացոլում է համայնքում տեղի ունեցած իրադարձությունները: Սակայն տեղի մամուլից բացի, ի տարբերություն այլ գաղթավայրերում լույս ընծայվող լրագրերին, որոնք չեն անդրադառնում մեր համայնքին, 1885-ից սկսած մինչև 1897-ը Մարսելում Մկրտիչ Փորթուգալյանի կողմից հրատարակ-

վող «Արմենիա» թերթում բուլղարահայության կյանքի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ են տպագրվում: Բուլղարահայերն էլ իրենց հերթին բաժանորդների ցուցակներում տարիներ շարունակ առաջին շարքերն են զբաղեցնում:

Հիմնականում Վառնա, Պլովդիվ և Սոֆիա քաղաքներում տարիներ շարունակ հրատարակված պարբերականների հավաքված և կարված որոշ հատորներ դեռևս կարելի է գտնել հայկական համայնքում (օրինակ՝ «Շարժում» թերթի հատորները, որոնք 2014 թ. տեսել ենք Շումեն քաղաքում, իսկ Սոֆիայի «Երևան» թերթի խմբագրությունում այժմ պահվում են այլանուն մամուլի կարված հատորներ): Ամբողջական հավաքածուներ կարելի է գտնել Վիեննայի Մխիթարյան միաբանության պահոցում և Պլովդիվի «Իվան Վազովի» անվան ժողովրդական գրադարանում: Սոֆիայում գտնվող Կիրիլ և Մեթոդիի անվան Ազգային գրադարանում կարելի է հանդիպել հայալեզու մամուլի քարտազրված անվանումներ, սակայն առկա են միայն որոշ տարիների առանձին հատորներ: Մեր օրերում կանոնավոր կերպով լույս են տեսնում Սոֆիայում «Երևան» և Պլովդիվում «Վահան» շաբաթաթերթերը, ինչպես նաև «Բարեգործականի ձայն» երկշաբաթաթերթը:

Սույն մատենագրության հայերեն հոդվածները տարբեր առիթներով օգտագործվել են հայաստանյան մասնագետների ակնադրի գաղթավայրերին վերաբերող աշխատություններում, որի պատճառով վերջիններս այստեղ չեն նշված:

Բոլոր վերնագրերը (և հեղինակների անունները) տրվում են ըստ բնօրինակների:

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲՈՒՂԱՐԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՁԵՆԱԳՐԵՐ

1. «Ստորագրութիւն Սրբոյ Եկեղեցոյ Գեորգայ ի Փիլիպուպոլիս եւ անցից ժողովրդեան Գաւանիցոց» (ձեռագիր 10812, Մատենադարան, Երևան):
2. «Տեղեկութիւններ Պուրկազի անցեալէն ու ներկայէն. Այտոս», հասարեց և գրեց Ս. Կենտիկեան, ռուսացիչ Ազգ. վարժարանի, 1901 (Ընթօրինակիչ Գրիգոր Փոստաճեան, Պուրկազ, 1976):
3. Пачаджиян С., Кратка история на връзките между арменци и българи от древността до наши дни, София, 1976 (машнописен ръкопис).

ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

1. «Պուլկարահայ օրացոյց 1941 թուականին Քրիստոսի» Սոֆիա, 1941:
2. «Պուլկարահայուն տարեցոյցը 1926» պատրաստեց Դանիէլ Դազկրաթլեան, Սօֆիա:
3. «Հայ նկարիչներ Պուլկարիոյ մէջ 1897–1997», ցուցահանդէսի կատալոգ, Սոֆիա, 1998 (եռալեզու):
4. «Հայրենի տարեցոյց» Ա տարի, Փլովտիվ, 1938:
5. «Մասիս», տարեգիրք, Ա տարի, Սոֆիա, 1934:
6. «Ոսկեմատեան» 1906–1931 ՀԲԸՄ Արծաթեայ Յորելեան, Ա հատոր, Փարիզ, 1931. 455 էջ:
7. «Վիթոշ - Արարատ» պուլկարահայ տարեգիրք, Ա տարի, Փլովտիվ (Պուլկարիս), 1935:
8. «Арменската духовност», съставител проф. С. Саркисян, София, 2010 (сборник от конференция (19-21.10.2007) «Арменската духовност»).

9. «Арменският духовен и образователен живот в България», съставител Г. Мардиросян, София, 2015 (сборник от конференция (17.05.2014) посветена на 88 години от избора и 80 години от смъртта на първия арменски архиепиев в България – архиепископ Степанос Ховагимян).
10. «Българи и арменци заедно през вековете», редактор Г.Хайрабебян, София, 2001.
11. «Български книги 1878 – 1944. Библиографски указател. Азбучна поредица. Издания на чужди езици», (вкл. Арменски книги), София, 1983 г. VI.
12. «Български периодичен печат 1844 – 1944 г.», София, 1969, т. 3.
13. «Исторически, културни и литературни контакти между българи и арменци», редактор С. Саркисян, София, 1998 (сборник от конференция /септ. 1997/. «75 години от масовото приютяване в България на спасилите се от Геноцида арменци (1922) и 85 години от участието на Арменската доброволческа рота в Балканската война (1912) »).
14. «Лицата на Русе (от I до средата на XX век)», Русе, 2011, Енциклопедичен справочник.
15. «Ние, арменците: духовно и културно наследство», Սոֆիայի «Երևան» և Պլովդիվի «Վահան» թերթերի համատեղ ծրագիր (2005 թ.), 4 գրքով:
16. «Престъпления против човечеството и тяхното отражение XXI век», редактор Г. Мардиросян и др. София, 2016 (сборник от конференция (05-06. 06.2015) „Престъпления против човечеството и тяхното отражение XXI век» посветена на 100-гоодишнината от Геноцида над арменците).
17. «Тихите арменци», съставител Н. Ненов, София, 2002 (сборник от конференцията (04.09.2004) «Тихите арменци» в чест на 1700 годишнината от приемането на християнството от арменския народ).

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գասապեան Ներսէս «Յուցակ հայերէն ձեռագրաց ի Բուզարիա», Վենետիկ, 1981:
2. «Գէորգ Մեսրոպ., Գրական եւ ուսուցչական գործունէութեան 30 եւ 25 ամեայ յոբելեանի առիթով (կենսագրական զիծեր)», Սոֆիա, 1929:
3. Դարանաղցի Գրիգոր, «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ», Երուսաղէմ, 1915:
4. Ղարիբջանյան Գ., Ակնարկներ հայ-բուլղարական բարեկամութեան պատմութեան, Երևան, 1989:
5. Ղասարյան Զ., «Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմութեան», Երևան, 1986:
6. Ճինգոզյան Կ., «Հայ – բուլղարական գրական կապերի պատմությունից», Երևան, 1966:
7. Մեսրոպ-Թանգարանեան, Մեսրոպոսի Գէորգ «Պուկարահայ դպրոցներու պատմութիւն», Սոֆիա, 2004:
8. Փաշաճեան Սարգիս, «Յուշանատեան Ռոդոսթոյի հայերուն 1606–1922» Սոֆիա 1929թ. (129 էջ), վերահրատարակվել լրացված կրթութեան Բեյրութ, 1971 (266 էջ):
9. Аждерян, А., Топакбашян, В. „Осъдени да помним“ (сборник документални разкази), София, 2006.
10. Владимирова Н., Опазване и съхранение на културното наследство на арменците в България: актуално състояние и проблеми, София, 2018.
11. Касабян Н., Гилигян А., Библиография на арменските кѳици, издадени в България, Пловдив, 2008.
12. Мицева Е., Арменците в България – култура и идентичност, София, 2001.
13. Мицева Е., Папазян-Таниелян С., Арменците разказват за себе си, София, 2007.
14. Нерсисян М., История на арменския народ , София 1998.

15. Орманджиян А., Арменски пътеписи за Балканите, София, 1984.
16. Овнянян С., Армяно - болгарские исторические связи, Ереван, 1968.
17. Овнянян С., Армено - български исторически връзки, София, 1972.
18. Саркисян С., Армения – духовен и научен живот през вековете, София, 2001.
19. Саркисян С., Арменията цивилизация, София, 2006.
20. Събев О., Робърт колеж и българите, София, 2015.
21. Чалгъджян Х., Давидян – Ернисян Х., Малгара. Летопис за живота на арменците 1610 – 1922, Русе, 2014, с. 235.

ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Գասապեան Ն., Ֆիլիպէի շրջանի հին հայկ.եկեղեցիներու եւ վանքերու մասին («Մասիս» տարեգիրք 1934, Սոֆիա, էջ 247-256):
2. Մեսրոպ Գ., Պուկարահայոց ծագումը» տես «Մասիս» տարեգիրք 1934, Սոֆիա, էջ 221-241:
3. Փաշաճեան Սարգիս, Լոթեր Բուլղարիո հայ զաղութի պատմութենէն, Էջմիածին , Դ, 1963, էջ 47-49:
4. Փաշաճեան Սարգիս, Հայ գրականներ և զինվորներ ցար Բրումի բանակին մէջ, Էջմիածին, Բ, 1976:
5. Артинян К., Якубян С., Лекарите арменци в свободна България, в: „Исторически, културни и литературни контакти между българи и арменци“, София, 1998, с. 67-76.
6. Гарабедян А., Струничество и съвместни действия между арменското и българското освободително движение в края на XIX и началото на XX век, в: „Българи и арменци заедно през вековете“ София, 2001, с. 331-359.
7. Гарабедян А., Формиране на арменската общност и нейната роля в развитието на българската държава” в: „Българи и арменци заедно през вековете“ София, 2001, с. 231-272.

8. Гарабедян А., За арменското присъствие в българските земи през Средновековието” в: Византия, Балканите, Европа. – София: ИБ, 2006, с. 197-217.
9. Гилогян А., Арменски надгробия по българските земи в периода на османското владичество (XVII - XIX в.)” в: „Български фолклор”, 1999, № 1-2, с. 129-135.
10. Гилогян А., „Исторически бележки за арменските църкви в Североизточна България и тяхната архитектура – XVII-XX век” в: Култова архитектура и изкуство в Североизточна България XV-X век” с. 195-211.
11. Гилогян А., „Арменските бежанци от 1922 година и арменският периодичен печат в България” в: „Исторически, културни и литературни контакти между българи и арменци” София, 1998, с. 33-46.
12. Иванова С., Арменци и аджем туджари: за статуса на търговеца в Румелия през XVII-XVIII в. в: Bulgarian Historical Review, 2006, № 1-2, с. 274-303.
13. Илиев И., Арменската доброволческа рота в Балканската война 1912–1913 г.” – В сборник “Исторически, културни и литературни контакти между българи и арменци”, София 1998, с. 17-33.
14. Илиев И., Чедата на арменския народ за свободата на България” в: Хайрабедян, Г., съст. „Българи и арменци заедно през вековете”, София, 2001, с. 360-383.
15. Инджов Н., Арменски чеда в България” в: „Исторически, културни и литературни контакти между българи и арменци” София, 1998, с. 61-66.
16. Касабян Н., Начало и развой на арменския периодичен печат в България” в Годишник на Българския библиографски институт, т. VI (1956 – 1957), София, 1959, с. 109.
17. Коев, Т. „Българската и арменската църква през вековете” в: Хайрабедян, Г., съст. „Българи и арменци заедно през вековете”, София, 2001, с. 146-172.
18. Крикорян Р., Арменската общност в България в: „Българи и арменци заедно през вековете”, София, 2001, с. 414-422.
19. Маргос А., Арменски надписи върху чешми в България в: Музеи и паметници на културата, год. XI, кн. 2, 1971 г., с. 20-23.
20. Маргос А., Два арменски епиграфски паметника от югоизточна България” в „Известия на музеите от югоизточна България”, т. VII, 1984, с. 109-113.
21. Малчев Б., Арменци в среднородопската Радюва планина в: Ненов, Н., съст. „Тихите арменци”, София, 2002, с. 40-43.
22. Мелконян А., Културната съкровищница на българския и арменския народ” в: Хайрабедян, Г., съст. „Българи и арменци заедно през вековете”, София, 2001, с. 384-402.
23. Мелконян А., Някои аспекти на българо-арменските литературни контакти – В: Сборник “Исторически, културни и литературни контакти между българи и арменци”, София 1998, с. 95-100.
24. Мицева Е., Фолклорната култура на арменците в България в: Хайрабедян, Г., съст. „Българи и арменци заедно през вековете”, София, 2001, с. 300-330.
25. Мишев Т., Другите етноси и религии в българските учебници (1879–1944) в: Назърска Ж., Шапкалова С., съст. „Хармония в различията”, София, 2016, с. 300-311.
26. Назърска Ж., Културно-историческото наследство на етническите и религиозните малцинства в България: опазване, съхраняване и социализация, София: За буквите-О писменехъ, 2014. с. 381.
27. Ненов Н., Арменците в традиционната менталност на българите в: Ненов, Н., съст. „Тихите арменци”, София, 2002, с. 127-133.
28. Русев Р., Хлебното зърно в етнокултурните представи на арменците в: Ненов, Н., съст. „Тихите арменци”, София, 2002, с. 7-17.
29. Салтирова – Павлова К., Архивни документи от 20-те години XX в. и сведения за арменските бежанци България в:

„Престъпления против човечеството и тяхното отражение ХХІ век”, София, 2016, с. 102-120.

30. Саркисян С., Присъствието на арменците на балканите и участието им в етнокултурния диалог в региона в: „Етнокултурен диалог на Балканите”, София, 2001, с. 335-345.
31. Сачкова Е., Образованието на арменците в България (1878–1999) в „Годишник на Софийския университет” Факултет по педагогика, 2002, т. 92, с. 143-182.
32. Папазян-Таниелян С., Арменците в България (по страниците на един арменски вестник) в: Българска етнография, 1994, № 3-4, с. 66-67.
33. Хайрабедян Г., Арменският периодичен печат в България, в: „Периодичният печат на малцинствата в България (1878–1997) София, 1998, с. 100-127.
34. Хнканосян Г., Арменският етнос в българските градове в: „Хармония в различията”, в: Назърска, Ж., Шапкалова, С., съст. „Хармония в различията”, София, 2015, с. 230-238.
35. Хнканосян Г., Живот и дейност на Кеворк Месроб в България в: „Хармония в различията”, в: Назърска, Ж., Шапкалова, С., съст. „Хармония в различията”, София, 2019, с. 368-382.
36. Хнканосян Г., Училището в живота на арменската общност в България в: „Арменският духовен и образователен живот в България”, София, 2015, с. 132 – 148.
37. Чанега-Дечевска Н., Паралели между църкви от дунавска България и Армения през Средновековието в: Хайрабедян, Г., съст. „Българи и арменци заедно през вековете”, София, 2001, с. 173–194.
38. Чанева-Дечевска Н., Арменската архитектура и влиянието ѝ върху българската средновековна архитектура в: „Исторически, културни и литературни контакти между българи и арменци”, София, 1998, с. 76-121.

ՔԱՂԱՔՆԵՐ ՍՈՖԻԱ

1. Թ.Շ. «Սոֆիայի հայ զաղութը» «Մասիս» տարեգիրք 1934, Սոֆիա, էջ 257-276:
2. Փաշաճեան Ա., «Սոֆիայի հայերը» Էջմիածին, Ե, 1960. էջ 46-50:
3. Փաշաճեան Ա., «Սոֆիայի պուլկարահայ զաղութը», Երևան, 26.01, 02.02, 09.02.1979:
4. Бохосян Михран, Арменците в София” исторически очерк, София, 1999, 132 с.
5. Назърска Ж., Религиозното културно-историческо наследство в политиката на Софийската община (края на ХІХ-средата на ХХ в.) в: Обществото на знанието и хуманизмът на ХХІ век. – София: За буквите-О писменехъ, 2012, с. 222-229.

ՊԼՈՎՉԻՎ

1. «125 տարի» Պլովդիվի «Ստեփան Շահումյան» պետական հայկական դարոցի հիմնադրության 125-ամյա հոբելյանին առթիվ կազմված հատոր. Սոֆիա, 1959 (երկրկվանի):
2. Գասապեան Ն., Ֆիլիպեի շրջանի հին հայկ.եկեղեցիներու և վանքերու մասին («Մասիս» տարեգիրք 1934, Սոֆիա, էջ 247-256):
3. Թերզեան Գ., Չիլպեի հայ զաղութը, «Մասիս» տարեգիրք, 1934, Սոֆիա, էջ 285-298:
4. Կլիվեան Յ., Փլովտիի ազգ. վարժարանի պատմության էջերն 1828–1994, «Յարաջ» (Փարիզ), № 18.364/05.07.1994:
5. Գիլիկեան Յ., Փլովտիի ազգ. վարժարանի պատմության էջերն 1828–1994, «Յարաջ» (Փարիզ), № 18.364/05.07.1994:
6. Յոբեկեան միացեալ «Կահան Մանուկեան – գեղարվեստասիրաց» միության 1905–1925 (գիծեր միության 20-ամեայ գործունեությունն). Ֆիլիպե, 1925:

7. Փէրոսահճեան Երուանդ եպիսկ., Փ.Պոլսոյ հայ զաղութիւն ծագումը եւ անոր եկեղեցին (1675-1828-1929)» [հ.ն. Փիլիպոլիս /ֆիլիպե/ սյժմ Պլովդիւ] Փ.Պոլիս, 1929:
8. Артинян К., Следовници на Амирдовлат Амасиаци. Пловдивските медици, стоматолози и фармацевти арменци и потомци на арменци, Пловдив, 2000.
9. Гилигян А., Страници из историята на арменската колония в Пловдив и нейната църква, „Сурп Кеворк” (1675-1828-1998), Пловдив, 2002.
10. Данчева-Василева А., Арменското присъствие в Пловдив през Средновековието (VIII - XIII в.) в: Исторически преглед, 1999, № 5-6, с. 119-135.
11. Данчева – Василева Ани, Пловдив през средновековието (IV-XIV), София, 2011.
12. Мирчева К., Арменците в пловдивските занаяти в: Ненов, Н., съст. „Тихите арменци”, София, 2002, с. 44-51.
13. Пеев Ж., Пловдивската къща, София, 1960.
14. Райчевски Г., Пловдивска енциклопедия, Пловдив, 2004.
15. Сборник по случай 125 години от основаването на Държавно арменско народно училище „Степан Шахумян” – Пловдив, София, 1959 (дюзичен).
16. Монографичен албум „С вяра и всеотдайност” [Саркис Балтаян], Пловдив, 2008 (триезичен, եռալեզու).

ՎԱՌԱ

1. Փաշահճեան Սարգիս «Նորէր Վանսայի հայ զաղութի մասին» Էջմիածին, 1970:
2. Бодурова Ж., Портрети, Варна, 2015 [սկանավոր հայերի կենսագրական սվյալներով]:
3. Вартанян Т., Свети Саркис – арменската църква във Варна, Варна, 2006, 24 с.
4. Кацарски Г., Варна. Архитектурни паметници, история, личности, Варна, 2016.

5. Колева С., Семейство и род при арменците, живеещи в град Варна в: Ненов, Н., съст. „Тихите арменци”, София, 2002, с. 74-78.
6. Пенев С., Варненските арменци, Варна, 2012.
7. Хаджолян М., Прокурорът, Варна, 2009, ВСУ, 180 с.
8. Хаджолян М., Арменски родове в град Варна, Варна, 2010, 215 с.
9. Шакарян А., Хаджолян М., Църквата „Свети Саркис – Варна” (исторически обзор), Варна, 2013, 95 с.
10. Щерева Т., За арменците – занаятчий в Варна през погледа на техните ученици в: Гоев, А., съст. Народните занаяти: минало, настояще и бъдеще, т. 7. – Велико Търново: Фабер, 2012, с. 280-286.
11. Щерева Т., Забавленията на арменската общност във Варна в: Ненов, Н., съст. „Тихите арменци”, София, 2002, с. 82-85.

ԲՈՒՐԳԱՍ

1. Дадурян, Б. „История на арменците в град Бургас (1549–2003)”, Бургас, 2009.
2. Бохосян Е., Минало и настояще на арменската църква и училище в Бургас в: „Арменският духовен и образователен живот в България”, София, 2015, с. 189-198.
3. Гилигян А., Арменската общност и нейната църква „Сурп Хач” в Бургас” в: Арменци, № 154, 1-15.09.2001, с. 1, 5; № 155, 16-30.09.2001, с. 4; № 156, 1-15.10.2001, с. 6; № 157, 16-31.10.2001, с. 6; № 159, 16-30.10.2001, с. 5-6; № 160, 1-15.12.2001, с. 4, 6; № 161, 1-15.01.2002, с. 4.

ՌՈՒՍԵ

1. Թաժսո «Ռուսճուկի հայ զաղութը» «Մասիս» տարեգիրք, 1934, Սոֆիա, էջ 278-283:

2. Бърчева М., За арменския дял в икономиката на Русе (края на XIX в. – първата половина на XX в.) в: Ненов, Н., съст. Тихите арменци. – София, 2002, с. 57-64.
3. Великова Т., Организация и дейност на Русенското арменско църковно настоятелство в: Ненов, Н., съст. „Тихите арменци”, София, 2002, с. 99-105.
4. Душков Ж., Арменската преса с русенски адрес (1887–1994) в: Ненов, Н., съст. „Тихите арменци”, София, 2002, с. 86-90.
5. Топакбашян А., Арменската колония в град Русе в края на XIX – началото на XX в в: Българска етнография, 1994, № 2, с. 46.
6. „Лицата на Русе (от I до средата на XX век)”, Русе, 2011, Енциклопедичен справочник.

ՀՈՒՄԵՆ

1. Փռչաճեան Սարգիս «Հուլմենի հայերը /Գաղութի կազմութեան 350-ամյակի տոթիվ/» Էջմիածին Զ, 1961, էջ 46-51:
2. Пачаджян С., Маргос А., „Шуменските арменци”, Шумен, 1981, (с. 29) изд. Известия на народния музей.
3. Ангелова Р., Шуменското общество (1919–1944), В. Търново, 2013.
4. Гарабедян Г., За приноса на арменския етнос за културния живот на гр. Шумен, в: Краезнание, ч. 1. – В. Търново, 2011, с. 115-118 : ФАБЕР.
5. Куманова М., Документални свидетелства за развитието на етносите в Шумен и Шуменско в: Краезнание, ч. 1. – В. Търново: Фабер, 2011, с. 158-162.
6. Маргос А., Арменската колония в Шумен през XVII-XIX в в: Изв. НМ – Варна, 1967, т. 4, с. 103-112.
7. Пачаджян С., Маргос А., Шуменските арменци, Известия на народния музей – Шумен, 1981, с. 29.

ՂԱՐԳՆ

1. Бешков Л., Страници от историята на арменското население в Добрич, Добрич, 1995.
2. Голян О., Страници от историята на духовния живот на арменската общност в град Добрич в: „Арменският духовен и образователен живот в България”, София, 2015, с. 177-182.
3. Жамгочян Е., Арменците от някогашния Базарджик, Добрич, 2014.
4. Маргос А., Арменската колония в Хаджиоглу Пазарджик през османското владичество в: Изв. НМ – Варна, 1982, т. 18 (33), с. 119-126.

ՄԻԼՍՏՐԱ

1. Занов И., Арменците в Силистра. Минало и настояще, Силистра, 2003.
2. Шейтаниян С., Арменците Силистра, в: „Арменският духовен и образователен живот в България”, София, 2015, с. 182- 189.

ՊԱԶԱՐԺԻԿ

1. Гилигян А., Кратък очерк за арменската колония в Хасково (от 80-те год. на XIX век до края на XX век) в: Вахан, 31.07.2002, с. 6-7.
2. Гилигян А., Старата арменска колония в Пазарджик в: „Ние, арменците: арменската общност в България”, 2003, с. 40-41.
3. Ширинян Н., Арменската общност и арменската църква в Пазарджик, в: „Арменският духовен и образователен живот в България”, София, 2015, с. 174-176.

ԽԱՍԿՈՎՈ

1. Гилигян А., Кратък очерк за арменската колония в Хасково (от края на XIX век до края на XX век) в: Вахан, 24.07.2002, с. 6-7.

2. История на арменците в Хасково: ААПЦ „Сурп Степанос“, Хасково (с. 30) [Записки от Кареки С. Караханян, издание дек. 2009]: б.д. – 30 с.
3. Костова В., Етнорелигиозни общности и институции в Хасково през първата половина на XX в. в: Исторически преглед, 2002, № 3-4, с. 266-275.

ՍՏԱՐԱԶԱԿՈՐԱ

1. Назърска Ж., Културното многообразие на България: социодемографско проучване на арменската колония в Стара Загора (20-60-те години на XX в.) в: България в културното многообразие на Европа. – София: За буквите-О писменехъ, 2009, с. 666-676.
2. Иванова Е., Арменците в Стара Загора: моменти от живота им през първата половина на XX в.” в: Ненов, Н., съст. „Тихите арменци, София, 2002, с. 18-23.
3. Назърска Ж., Културното многообразие на България: социодемографско проучване на арменската колония в Стара Загора (20-60-те години на XX в.) в: България в културното многообразие на Европа. – София: За буквите-О писменехъ, 2009, с. 666-676.

ՄԼԻՎԵՆ

1. Փաշաճեան Սարգիս, Միլվենի պովարահայ գաղութի անցյալէն (1549-1944) [կուրթ կարգած է թերթից հավանականորէն «Երևան» շաբաթաթերթից, 1960]:
2. Дечев В., Махалите на Сливен” в „Известия на музеите от югоизточна България, т. VIII, 1985 г., с. 107-122.
3. „Сливен – средище на арменщината в миналото” в: „Ние, арменците: арменската общност в България”, 2003, с. 38-39.

ԱՆՅՅԱԼՈՒՄ ԳՈՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԳԱՂՈՒԹՆԵՐ

1. Вачев Х., Един храм, един некропол, две религиозни общности, В. Търново, 2012.
2. Гарабедян А., Свято изповедалище: Арменска колония в Търново през XIII век в: За буквите, 2006, № 23, с. 9.
3. Маргос А., Изчезналата арменска колония в град Провадия в: „Известия на варненското археологическо дружество”, кн. XIV, 1963 г., стр. 93-102.
4. Маргос А., Археологически разкопки на арменската църква „Св. Степанос” – град **Провадия**” в: Изв. НМ – Варна, 1976, № 12 (27), с. 137-139.
5. Маргос А., Към историята на **Айтос** през епохата на османското владичество в: „Известия на музеите от югоизточна България”, т. IX, 1986 г., стр. 87-95.

GOAR KHINKANOSIAN
Ph.D. in History, Bulgaria

BIBLIOGRAPHIC DATA ABOUT THE HISTORIC AND CULTURAL HERITAGE OF BULGARIAN ARMENIANS

Keywords: Armenians, Bulgaria, Hakob Karapetyan, Hakob Kilibyan, history, culture, church, Sofia, Plovdiv, Varna, Burgas, Ruse.

The article presents research, books and articles about the history and activities of Bulgarian Armenians. Their authors are mainly Armenians interested in history, who collected and saved anything related to Armenians living in Bulgaria or Bulgarian-Armenian relations. In the past few decades there has also been some interest in certain topics involving Armenians among Bulgarian researchers.

Some information about notable authors of particularly important works has been given. The works of prof. Evgeniya Mitseva, prof. Georgeta Nazirska, prof. Agop Garabedian, and the historian Ara Margos are

distinguished by their scientific approach. Being teachers has allowed Gevorg Mesrob and Sarkis Pachadjyan to have a meaningful impact on the development of the local society and the preservation of its history. The study of the history of Armenian churches and districts in different towns done by Agop Giligyan - an amateur historian - remains the only written record on those subjects.

ՊՕՐ ՄԻՆԿՈՍՏԻՆ

к.и.н., Болгария

БИБЛИОГРАФИЧЕСКИЕ ДАННЫЕ ПРО ИСТОРИКО-
КУЛЬТУРНОЕ НАСЛЕДИЕ
АРМЯН В БОЛГАРИИ

Ключевые слова: армяне, Болгария, Акоб Гарабедяна, Агоп Гилигян, история, культура, церковь, София, Пловдив, Варна, Бургас, Русе.

В статье дается библиографическая справка исследователей, книг и статей посвященных истории и деятельности болгарских армян. Авторы - в основном армяне, любители истории, собирающие и сохраняющие все, что касается армян на территории Болгарии или армяно-болгарских отношений. В последние десятилетия наблюдается и интерес болгарских исследователей, которые изучают отдельные темы, касающиеся и армян.

Коротко представлена информация про тех авторов, труды которых имеют особую значимость. С научным подходом отличаются труды профессоров Евгении Мицевой, Жоржетты Павловской, Агопа Гарабедяна, историка Ара Маргоса. Геворг Месроб и Саркис Пачаджян, будучи преподавателями, имеют особый вклад в развитии местной общины и сохранении исторической памяти. Изучение истории армянских церквей и общин в разных городах Болгарии историком-любителем Агопом Гилигяном пока остаются единственными письменными сведениями по этим темам.

ԱՔԷԼ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Աստուածաբանութեան եւ
փիլիսոփայութեան դոկտոր, Շվեյցարիա

ԶՈՒՒՑԵՐԻԱԿԱՆ ՎԱՒԵՐԱԳՐԵՐԸ

ԺԸՆԵՒԻ ԵՒ ԼՈՁԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՃԱԽՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Հիմնաբառեր. Ժրնեւ, Լոզան, Զուիցերիայի հայեր, Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւն, «Հայ Յեղափոխական Ընկերութիւն», Անթոնի Քրաֆթ-Պոննար:

Առկայ յօդուածին մէջ ուշադրութիւնս աւելի կեդրոնացած պիտի ըլլայ Ժրնեւի եւ Լոզանի հայկական գաղթօճախներուն վերաբերեալ արխիւային փաստաթուղթերուն վրայ, որոնց ճնշող մեծամասնութիւնը կը պահպանուի Զուիցերիոյ Համադաշնութեան պետական⁷, Ժրնեւ⁸ եւ Վոտ քանթոններու, ինչպէս նաեւ համալսարանի արխիւներուն⁹ եւ Համադաշնութեան Ազգային Գրադարանին¹⁰ մէջ:

Երբ կը խօսինք Ժրնեւի եւ Լոզանի հայկական գաղթօճախներուն մասին, փաստօրէն անդրադարձած կ'ըլլանք ընդհանրապէս Զուիցերիոյ հայկական համայնքին, նկատի ունենալով, որ հայութեան ներկայութիւնը ձեւաւորուիլ սկսած է նախ այս երկու քաղաքներուն մէջ, իսկ Զուիցերիոյ միւս գերմանախօս եւ իտալախօս շրջաններէն ներս ան յառաջացած է 20-րդ դարու 60-ական թուականներէն ետք, Մերձաւոր Արեւելքէն, բայց մեծաւ մասամբ Թուրքիոյ զանազան քաղաքներէն իբրեւ աշխատաւոր ժամանած ներգաղթողներէն:

Եթէ համեմատենք Զուիցերիոյ հայկական գաղթօճախը Եւրոպայի միւս օրինակ Պալքանեան երկիրներու, Արիւմի, Հունգար-

⁷ Bundesarchiv, Bern.

⁸ Archives d'Etat de Genève.

⁹ Archives de l'Université de Genève.

¹⁰ Schweizerische Nationalbibliothek, Bern.

րիոյ, Տրանսիլվանիոյ, Իտալիոյ եւ Լեհաստանի հայկական հին գաղթավայրերուն հետ, պիտի տեսնենք, որ Ջուիցերիոյ մէջ հայկական ներկայութիւնը կը սկսի զգալի դառնալ համեմատաբար աւելի ուշ շրջանին, այսինքն՝ 19-րդ դարու վերջին քառորդին եւ 20-րդի սկիզբը:

Վերոյիշեալ արխիւային վաւերագրերուն մէջ դժուար թէ կարելի ըլլայ միջնադարեան ուշագրաւ վկայութիւններ գտնել Ջուիցերիոյ մէջ հայկական հետքերու վերաբերեալ:

Եթէ երբէք 1433 թուականին Պազելի Ժողովէն եկեղեցիներու միութեան հարցով նաեւ հայոց մասնակցութեան հրաւեր-նամակ¹¹ մը յղուած է, ապա սոյնը տակաւին Ջուիցերիոյ տարածքին հայերու ներկայութեան վերաբերեալ վկայութիւն մը չէ:

Ամենահին վկայութիւնը Լոզանի համալսարանէն է, որ իբրեւ տարեթիւ կը կրէ 1865–1866 ուսումնական տարեշրջանը, երբ Տիգրան Աբբո հայ ուսանողի մը անունը արձանագրուած կը տեսնենք համալսարանի գրականութեան ֆակուլտետի տարեգիրքին¹² մէջ: Այս վաղ շրջանին, համալսարանական տարեգիրքերուն մէջ նշուած կը գտնենք ուսանողին անունն ու ազգանունը, ապա՝ ազգութիւնը եւ մասնագիտութիւնը, որ ան կ'ուսանի: Ուրեմն այստեղ Տիգրան Աբբո անունին դիմաց փակագիծերու մէջ կը կարդանք ազգութեամբ *Arménien*¹³ հայ ըլլալը:

Երկրորդ ամենահին վկայութիւնը եւ այնուհետեւ միւս վկայութիւնները Լոզանի համալսարանի ուսանողական արձանագրութեանց վաւերաթուղթերն են: 1872–1873 ուսումնական տարեշրջանին կը կարդանք ուրիշ հայ ուսանողի մը անունը՝ Ներսէս

¹¹ Տե՛ս **Պալճեան Ա.**, Պատմութիւն Կաթողիկէ Վարդապետութեան Ի Հայս Եւ Միւրթիւն Նոցա Ընդ Հռոմէական Եկեղեցոյ Ի Փլորենտեան Միւնիտրոսի, Վիեննա Միլիթարեան տպ., Վիէննա, 1878, էջ 80:

¹² Տե՛ս Catalogue des Etudiants et des Externes de l'Académie de Lausanne. Année Académique 1865-1866, Lausanne, 1865, էջ 17:

¹³ Նոյնը:

Ներսէսեան¹⁴, որուն համար նոյնպէս նշուած է ազգութեամբ (*Arménien*¹⁵) հայ ըլլալը:

Ապա, 1873-1874 ուսումնական տարեշրջանին՝ Պետրոս Եուսուֆ¹⁶, Արամ Ներսէսեան¹⁷ եւ Ճանիկ Եագրճեան¹⁸ անունները, իսկ 1875–1876 ուսումնական տարեշրջանին՝ գրականութեան ֆակուլտետի ուսանողական արձանագրութեանց ցանկին մէջ՝ Կարապետ Թումայեանին¹⁹ անունը:

Թումայեան հետագային իր ելոյթներով կարելոք ներդրում ունեցաւ Ջուիցերիոյ մէջ ծաւալած զանգուածային հայանպաստ շարժումին մէջ: Ան ամուսնացած էր Ժընեւէն ազդեցիկ վերապատուելիի մը՝ Լուիս Ռոսիերի դստեր՝ Լյուսի Ռոսիերի հետ: Երբ Թումայեան 1893-ին հակաօսմանեան յեղափոխական գործունէութիւն ծաւալելու ամբաստանութեամբ տասնեակ հայերու հետ Մարգուանի մէջ կը ձերբակալուի, ապա Անկոբայի մէջ մահուան կը դատապարտուի, իր աներորդին՝ Ադուֆ Հոֆման Ռոսիեր, Ժընեւէն անձամբ Կ.Պոլիս կը մեկնի եւ բազմաթիւ միջնորդութիւններու դիմելով, ի վերջոյ, կը յաջողի զինք երկրէն արտաքսուելու պայմանով մահապատիժէ ազատել: Adolf Hoffmann իր տպաւորութիւնները կ'ամփոփէ հատորի մը մէջ ու զայն կը հրատարակէ 1897-ին «Im türkischen Kerker. Wie ich Garabed Toumajan fand. Eine armenisch-türkische Geschichte von Adolf Hoffmann»²⁰ խորագրով:

¹⁴ Տե՛ս Catalogue des Etudiants et des Externes de l'Académie de Lausanne. Année Académique 1872-1873, Lausanne, 1872, էջ 19:

¹⁵ Նոյնը:

¹⁶ Տե՛ս Catalogue des Etudiants et des Externes de l'Académie de Lausanne. Année Académique 1873-1874, Lausanne, 1872, էջ 21:

¹⁷ Նոյնը:

¹⁸ Նոյնը:

¹⁹ Տե՛ս Catalogue des Etudiants et des Externes de l'Académie de Lausanne. Année Académique 1875-1876, Lausanne, 1875, էջ 24:

²⁰ Hoffmann A., Im türkischen Kerker. Wie ich Garabed Thoumajan fand. Eine armenisch-türkische Geschichte von Adolf Hoffmann. Berlin, 1897: Թումայեանի մասին տե՛ս նաեւ՝ Manoukian A., Zeugen der Menschlichkeit. Der humanitäre Einsatz der Schweiz während des Völkermordes an den Armeniern im Osmanischen Reich 1894–1923. Zum 100. Gedenkjahr des Völkermordes. Bern, 2015, էջ 227–228:

1890–1891 թուականի ուսումնական տարեշրջանին նույնպես Լոզանի համալսարանի ուսանողության ցանկին մեջ կը գտնենք բժշկության հետեւող առաջին հայ ուսանողուհիին անունը՝ Նինա Քանանեան²¹, որ, ինչպես ծանօթ է, հետագային կը դառնայ Հնչակեան Կուսակցության հիմնադիր անդամներէն Գաբրիէլ Կաֆեանի կինը:

Դժբախտաբար անկարելի պիտի ըլլայ անդրադառնալ Լոզանի համալսարանին մէջ ուսանած բոլոր հայ ուսանողներու բազմաթիւ անուններուն եւ ինքնութեան: Այստեղ պիտի ուզէի պարզապէս յիշել մի քանի անձնատրութիւններ, որոնք իրենց բարձրագոյն ուսումը ստանալով այս հաստատութեան մէջ՝ կարելոր ներքրում ունեցած են հայոց քաղաքական կեանքին եւ գրական-մշակութային ասպարէզներէն ներս:

Աւետիս Ահարոնեան²², հայ հասարակական-քաղաքական գործիչ, գրող, հետագային Հայաստանի առաջին Հանրապետութեան խորհրդարանի նախագահ, գրականութեան բարձրագոյն ուսման հետեւած է 1898-1899 թուականի ձմեռնային ուսումնական տարեշրջանէն սկսեալ:

Ռուբէն Սեւակ Զիլինկիրեան²³, քանաստեղծ, արձակագիր, բժիշկ եւ Հայոց Յեղասպանութեան տարաբախտ զոհերէն մին, բժշկութիւն ուսանած է 1905-1906 թուականի ուսումնական ամառնային տարեշրջանէն սկսեալ:

Նիկոլ Աղբալեան²⁴, գրականագետ, մանկավարժ, հրապարակախօս, հասարակական-քաղաքական գործիչ, հետագային Հա-

յաստանի առաջին Հանրապետութեան կրթութեան նախարար, իրաւաբանութեան բարձրագոյն ուսման հետեւած է 1906-1907 թուականի ձմեռնային ուսումնական տարեշրջանէն սկսեալ:

Լոզանի համալսարանին մէջ 1865-էն մինչեւ 1923, բնակաւսարար, նաեւ հետագայ տարիներուն ուսանած բազմաթիւ ուսանողները, որոնք մի առ մի այստեղ կարելի չէ յիշել, ընդհանրապէս եկած են Կովկասէն՝ Հայաստանէն, Նախիջեանէն, Արցախէն, Թիֆլիսէն, Պաքուէն, Ռուսական Կայսրութենէն, ապա Արեւմտեան Հայաստանէն, Օսմանեան Կայսրութեան զանազան քաղաքներէն՝ Կ.Պոլսէն, Տրապիզոնէն, ընդհուպ մինչեւ Կիլիկիոյ զանազան շրջաններէն: Անոնք հետեւած են ընդհանրապէս մարդասիրական առարկաներու՝ ընկերաբանութեան, գրականութեան, իրաւագիտութեան, բնագիտութեան եւ բժշկութեան:

Ի դէպ, պէտք է ընդգծել, որ բազմաթիւ հայ ուսանողներու անուններուն հետ, նաեւ կը հանդիպինք ուսանողուհիներու պատկառելի թիւի մը, որ արդարեւ պատիւ կը բերէ հայ իգական սեռին՝ ցոյց տալով, թէ հայը առանց սեռային խտրականութեան միշտ բաց եղած ու ձգտած է դէպի ուսումն ու գիտութիւնը:

Համալսարանական տարեգիրքերուն մէջ սովորաբար նշուած են նաեւ բոլոր ուսանողներուն կեցութեան հասցէները, նաեւ հայ ուսանողներունը, որոնց շարքին յաճախ կը հանդիպինք «Institut Arménien», «Mont-Ararat» եւ «Maison Arménienne» անուանումներուն: Պետք է ենթադրել, որ երբ հայ ուսանողներու թիւը Լոզանի մէջ որոշակի քանակ մը կազմած է, անոնք փորձած են համախմբուիլ եւ ստեղծել իրենց համար կեցութեան եւ մշակոյթի հայաշունչ բնակավայր եւ մթնոլորտ մը:

Արդարեւ, պատահական չէ, որ Ժընեւի եւ Լոզանի հայ ուսանողներէն կազմուած է Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը, որ հայանպաստ ահագին գործունէութիւն ծաւալած է՝ կազմակերպելով Հայկական Հարցի արդար լուծման վերաբերեալ քարոզչական բնոյթի հրատարակութիւններ, կատարած է հայերէնէ եւ ռուսերէնէ ֆրանսերէնով կարելոր թարգմանութիւններ եւ զանոնք հրատարակած է Ժընեւի մէջ:

²¹ Տե՛ս, Catalogue des Etudiants et des Extêmes de l'Académie de Lausanne. Année Académique 1890-1891, Lausanne, 1891. Էջ 17: Նինա Քանանեանի մասին տե՛ս նաև՝ Manoukian A., The Origins of the Hnchakian Party in Geneva and the Legacy of the Twenty Gallos, Yerevan, 2019. Էջ 49–50, 55:

²² Տե՛ս, Catalogue des Etudiants de l'Université de Lausanne. Année Universitaire 1898-1899, Lausanne, 1898. Էջ 9:

²³ Տե՛ս, Catalogue des Etudiants de l'Université de Lausanne. Année Universitaire 1905-1906, Semestre d'Eté, Lausanne, 1906. Էջ 38:

²⁴ Տե՛ս, Catalogue des Etudiants de l'Université de Lausanne. Année Universitaire 1906-1907, Semestre d'Hiver, Lausanne, 1906. Էջ 9:

1880-ական թուականներն սկսեալ, Ժընեւ նոյնպէս կը դառնայ հայ ուսանողութեան զգալի կեդրոններէն մէկը: Ուսանողներու այս առաջին հոյլէն 1886 թուականի աշնան կը ձեւաւորուի «Հայ Յեղափոխական Ընկերութիւնը» յանձինս Աւետիս Նազարբէկեանի, Մարօ ՎարդանեանՆազարբէկեանի, Ռուբէն Խան-Ազատի, Գաբրիէլ Կաֆեանի, Գեորգ Ղարաջեանի եւ Քրիստափոր Օհանեանի: Ընկերվարական գաղափարներով տոգորուած յեղափոխական այս «ընկերութիւնը» քիչ ետք՝ 1887 թուականի առաջին քառորդին, կը դառնայ հիմքը հետագայ Հնչակեան Կուսակցութեան²⁵: Նոյն թուականի Նոյեմբերին, Ժընեւի մէջ կը հրատարակուի «Հնչակ» պարբերաթերթը²⁶:

Թիֆլիսի մէջ իր կազմաւորումէն ընդամենը քանի մը տարի ետք՝ 1893-ին, Ժընեւի մէջ կը հրատարակուի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան «Դրօշակ» պաշտօնաթերթին 4-րդ թիւը, որ, ի տարբերութիւն «Հնչակի», կը գրանցուի Զուիցերիոյ մէջ հրատարակուող պաշտօնական մամուլի տարեգիրքերուն մէջ, մինչդեռ «Հնչակ» զինք հրատարակողներուն երկաթեայ գաղտնապահութեան պատճառով, - հակառակ հայ շրջանակներու մէջ ունեցած իր լայն տարածումին, - տեղւոյն մամուլին եւ համապատասխան գրանցումներուն կը մնայ անծանօթ:

Անշուշտ, ինչպէս Լոզանի, նոյնպէս Ժընեւի համալսարանէն ներս տասնեակ ուսանողներու անունները, կենսագրական համառօտ տուեալները պահպանուած են համալսարանին ուսանողական արձանագրութեանց, ինչպէս նաեւ կեցութեան իրաւունք ստանալու վերաբերեալ Ժընեւ քանթոնի արխիւային փաստաթուղթերու մատենաներուն մէջ:

Այս առնչութեամբ շատ աւելի ընդգրկուն տեղեկութիւններ կը պարունակեն Զուիցերիոյ Համադաշնութեան ազգային արխիւին մէջ պահպանուող վաւերաթուղթերը այն ուսանողներուն մա-

սին, որոնք յեղափոխական եւ անիշխանական գործունէութիւն ծառայած են Համադաշնութեան սահմաններէն ներս: Վերոյիշեալ արձանագրութիւններէն բացի, ասոնք ուստիկանական գաղտնի հետապնդումներու, վերահսկողութեան բնոյթի տեղեկագրութիւններ եւ պետական թղթակցութիւններ են, որոնք որոշակի լոյս կը սփռեն Ժընեւի եւ Լոզանի մէջ ձեւաւորուող հայկական կեանքին վրայ:

Սակայն գուիցերիացի ժողովուրդին քով Հայաստանի եւ հայ ժողովուրդին նկատմամբ հետաքրքրութիւնը առանցքային նշանակութիւն կը ստանայ 1894-1896, առանձնապէս 1897 թուականէն սկսեալ, երբ Արեւմտեան Հայաստանի հայաշատ կեդրոններուն մէջ սկիզբ կ'առնեն Համիտեան զանգուածային կոտորածները:

Զուիցերիոյ մամուլը՝ Ժընեւէն մինչեւ Յիւրիխ, Պազլ եւ Վինթերթուր, ներառեալ զաւառական թերթերն ու եկեղեցական համայնքային լրագրերները, գրեթէ ամէն օր լայն էջեր կը տրամադրեն Հայկական Հարցին եւ կը տեղեկագրեն օսմանեան իշխանութեան իրագործած հայահալած քաղաքականութեան մասին:

Այս շրջանին, հայանպաստ հարիւրաւոր յօդուածներ կը հրատարակուին ֆրանսերէն, գերմաներէն եւ իտալերէն լեզուներով եւ ղեկավարութեամբ գուիցերիացի հանրային եւ կրօնական հեղինակութիւններու՝ օսմանեան վայրագութիւններուն դէմ հասարակութեան մէջ կը յառաջանայ բողոքի բուռն եւ հսկայ ալիք մը. բողոք, որ կ'ամրագրուի աւելի քան 450.000 քաղաքացիներու ստորագրութիւններով²⁷:

Բողոքագիրը, կամ աւելի ճիշդ՝ հայցագիրը, որ 4 Մարտ 1897-ին կը ներկայացուի Համադաշնութեան նախագահ Adolf Deucher-ին²⁸, ինքնին առանցքային կարեւորութիւն ունեցող փաստաթուղթ մըն է, որուն մէջ օսմանեան իշխանութիւններուն դէմ քաղաքական ծանրակշիռ յանցագործութիւններու մեղադրանքներ ներկայացնելէ բացի, հայ ժողովուրդին մասին կը վկայէ:

²⁵ Այս մասին տե՛ս, Մանուկեան Ա., Հնչակեան Կուսակցութեան Կազմաւորումը Եւ Քսան Կախաղաններու Մասին Անդրադարձը Եւրոպական Մամուլի Ու Դիւանագիտական Թղթակցութեանց Մէջ, Երեւան, 2020, էջ 63-113:

²⁶ Անդ., 55-62:

²⁷ Այս մասին տե՛ս, Manoukian A., Zeugen der Menschlichkeit, անդ. էջ 224-247:

²⁸ Անդ., 240-241:

“Հայ ժողովուրդը, ճնշող մեծամասնությամբ [...] խաղաղա-
սեր ժողովուրդ մըն է, որ ոչինչ կը խնդրէ, քան իր տան պա-
տիւին եւ խաղաղ սշխատանքին պաշտպանութիւնը: Ի
հարկէ, ան հաւատարմութեամբ իր յիշողութեան մէջ կը
պահէ իր փառահեղ պատմութիւնը, նաեւ կը տածէ յոյսը
վերականգնելու իր ազգային ազատութիւնն ու փառքը [...]:
Արդարեւ, ինչքան ալ իր նախնիքը խիզախութեամբ կրօնած-
էին, [այնուամենայնիւ] զինուած ապստամբութիւն մը ամ-
բողջապէս հեռու է իրմէ:

Արդեօք հայը ինչ-որ խունացած եւ քայքայուած ժողովո՞ւրդ
մըն է, որ լոկ իր անցեալին փառքովը կ'ապրի եւ իր ընդհա-
նուր վարուելակերպին պատճառով ըստ ամենայնի կ'ար-
ժանանայ ատելութեան եւ արհամարհանքի: Բոլոր անա-
չառ գիտնականները, որոնց կարգին նաեւ մեր նշանաւոր
հայրենակիցը՝ Էռնեստ Շանթըրը (Ernest Chantre), կը վկայեն,
որ Փոքր Ասիոյ բոլոր ժողովուրդներուն մէջ հայը օժտուած է
բարձր իմացականութեամբ, մտաւոր զարգացման գերա-
զանց ունակութեամբ, առեւտուրի եւ արդիւնաբերութեան
մէջ բազմաբղիւն կարողութիւններով: Ան կը յատկանշուի
իր ընտանեկան պարկեշտ կեանքով եւ, ի մասնաւորի, ա-
տակ է արդիական իմաստով բարձրացնելու [Օսմանեան]
Կայսրութեան բարօրութեան մակարդակը: Արդարեւ, եթէ
հայ վաճառականները [Եւրոպայի] մեծ քաղաքներուն մէջ
արեւելեան սովորութիւններու համաձայն առեւտուրով կը
զբաղին, ասոր համար ոչ ոք իրատուօք ունի դատապարտե-
լու ամբողջ հայ ժողովուրդը: Ժողովուրդ մը, որ իր կրօնա-
կան համոզումին համար ուրիշ որեւէ մէկ ազգէ աւելի զո-
հաբերուած եւ տառապած է, պէտք է, որ իր էութեան մէջ ըլ-
լայ միանգամայն ստեղծագործ եւ պատուաւոր ժողովուրդ
մը»²⁹:

²⁹ Հմմտ. CH-BAR#E2001A#1000/45#2066*; Manoukian A., Zeugen der Menschlichkeit, անդ. 241–247:

Այս շրջանին, նաեւ հետագայ տարիներու ընթացքին, Ջուի-
ցերկոյ մամուլի էջերուն, ինչպէս նաեւ առաձին հատորներու մէջ
Հայաստանի, հայ ժողովուրդին, անոր ունեցած մշակոյթին, դաս-
նած հաւատքին եւ եկեղեցիին, ինչպէս նաեւ հազարամեակներով
ստեղծած քաղաքակրթութեան բարձր մակարդակին մասին կը
հրապարակուի այնպիսի գրականութիւն մը, որ միայն հիացմունք
եւ յարգանք կը թելադրէ հանդէպ գուիցերիացի ժողովուրդին:

Լոզանի եւ Շընեւի մէջ հայ ուսանողներու ներկայութիւնը,
որուն վերագրեալ անդադարձանք, տակաւին գուիցերիահայ հա-
մայնքի մը կազմակերպուած կառոյցին վկայութիւնը չի տար: Այդ
ստոր ջրերը հասկի այնուհետեւ կը կազմուի 1 Դեկտեմբեր 1922
թուականէն սկսեալ, երբ Կ.Պոլսէն Մարսիլիա ծովային ճանա-
պարհով իրենց ինամակալներուն եւ ուսուցիչներուն ուղեկցու-
թեամբ դէպի Begnins կը տեղափոխուին 41 հայ որբեր:

Ջուիցերիական նպաստամատոյցը, գործակցելով «Մերձա-
ւոր Արեւելքի Օգնութեան Ամերիկեան Կոմիտէ»-ին հետ, վերոն-
շեալ թուականէն մինչեւ 1930, Քորֆուէն եւ ուրիշ վայրերէ Begnins-
ի հայկական որբանոցը³⁰ կ'ընդունի շուրջ 170 որբացած հայ երե-
խաներ: Որբանոց ըսուածը, իրականութեան մէջ, գուիցերիական
դատաւանդման ուղեգիծով կազմակերպուած դպրոց մըն էր, ուր
հայ երեխաներուն կ'ուսուցանէին դպրոցական ծրագրի ոչ միայն
ֆրանսերէն առարկաները, այլ նաեւ մասնաւոր կարեւորութիւն կը
տրուէր հայոց լեզուի, հայ եկեղեցւոյ պատմութեան եւ կրօնի, հայոց
պատմութեան ու մշակոյթի դասաւանդումներուն: Այսպէս, դպրո-
ցի երկար տարիներու անձնուէր տնօրէնին՝ Անթոնի Քրաֆթ-
Պոննարի³¹ հիմնական նպատակներէն մին էր այս երեխաներէն

³⁰ Begnins-ի հայկական որբանոց-դպրոցին մասին տե՛ս u Manoukian A., Zeugen der Menschlichkeit, էջ 478–491:

³¹ Antony Krafft-Bonnard (1869-1945) ի նպաստ Հայկական Հարցին հրապարակած է շարք մը գրքոյկներ, որնց շարքին օգտաշատ պիտի ըլլայ նշել հետեւեալները Die Schweiz und Armenien 1919–1920. Genève, 1920; ders., Les cinq étapes d'un drame 1878 à 1943. Genève, 1944; ders., L'heure de l'Arménie. Genève, 1922; ders., Arménie. Suisse et Société des Nations en 1924. Genève, 1924; ders., École Arménienne Begnins et Genève. Genève, 1925; ders., École Arménienne Begnins et Genève, Lausanne, 1928:

պատրաստել ընտրանի մը, որ թերեւս մօտ ապագային ի վիճակի պիտի ըլլար ստանձնելու ստեղծուելիք անկախ Հայաստանի մը պետութեան ղեկավարութիւնը: Ան ամբողջապէս համոզուած էր, որ անկախ Հայաստանի ստեղծումը պէտք էր անպայման ըլլար արդարութիւն էւ միջազգային իրաւունքէ բխող իրագործում մը: Բայց, աւա դ... Լոզանի դաշնագիրէն, ինչպէս նաեւ 1923 թուականին Թուրքիոյ Ազգերու Լիկա ընդունուելու փաստէն ետք, բոլոր իրապաշտ մարդոց համար յստակ կը դառնայ, որ այլեւս անհնար էր ի նպաստ հայ ժողովուրդին քաղաքական լուծում մը տալ Հայկական Հարցին: Այս տխուր իրողութիւնը Anthony Kraft-Bonnar-ի համար կը դառնայ իր կեանքին ամենածանր յուսախաբութիւններէն մին՝ զգալ, որ իր որբուկները ընդմիջտ պիտի մնան խաբուած ժողովուրդի մը տարաքախտ զուակները:

Մահուան բովէն անցած եւ ակամայ որբութեան կրակոտ շապիկը հագած այս հայ երեխաները Ջուիցերիոյ ապահով եւ հոգատար պայմաններուն մէջ կը հասնին կեանքին, կը տիրանան տարբեր մասնագիտութիւններու եւ կը ստեղծեն իրենց ընտանիքները: Հետագային անոնցմէ ոմանք կը ներգաղթեն Խորհրդային Հայաստան, Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Գանատա, իսկ որոշ մասը կը մնայ Ժընև: Ահաւասիկ, Ժընևի մէջ արմատակալող այս պտղատու որթին կու գայ պատուաստուիլ Մերձաւոր Արեւելքէն՝ Լիբանանէն, Սուրիայէն, Իրաքէն, Իրանէն, Թուրքիայէն եւ Եգիպտոսէն Ջուիցերիա ներգաղթող հայերու որոշ թիւ մը, որ կը ձեւաւորէ այսօրուան գուիցերիահայ համայնքը: 1969-ին, Ժընևի Թրուանէ արուարձանին մէջ կը կառուցուի հայ առաքելական Ս. Յակոբ եկեղեցին, իսկ 1987-ին, անոր կից կը պատրաստուի վայել-

լուջ Հայ Կեդրոն մը՝ յարմարաւետ երեք սրահներով եւ համապատասխան գրասենեակներով³²:

Սոյն ակնարկը պիտի ամփոփեմ՝ ներկայացնելով հայութեան նկատմամբ գուիցերիացի ժողովուրդին ցուցաբերած զօրակցութենէն պատմական օրինակ մը: Giuseppe Motta, որ հինգ անգամ Թուիցերիոյ Համադաշնութեան Խորհուրդի նախագահ ընտրուած էր 5 Հոկտեմբեր 1924-ին, միաժամանակ Ազգերու Լիկայի նախագահի իր հանգամանքով, նոյն ժողովի լիագումար նիստին մէջ խօսքը ներկաներուն ուղղելով՝ կ'ըսէ.

«Թոյլ տուէք ինծի անդրադառնալու կարեւոր հարցի մը, որ Հայկական Հարցն է: Երեքշաբթի երեկոյեան ես պատիւն ունեցայ այցելելու Վոտ քանթոնի Begnins քաղաքին մէջ որոշ բարեգործներու կողմէ հիմնադրուած հայկական որբանոցը: Այստեղ ես տեսայ մեծ թիւով երեխաներ՝ տղաք եւ աղջիկներ: Այս երեխաներէն ամէն մէկը նման է կենդանի ողբերգութեան մը: Անոնք զուրկ են իրաւաքաղաքացիական կարգավիճակէ: Անոնցմէ շատեր տեսած էին իրենց հայրերուն կամ մայրերուն, իրենց տատիկներուն եւ պապիկներուն սպաննուիլը: Անոնք Begnins-ի մէջ կը դաստիարակուին եւ ուսում կը ստանան իրենց մայրենի լեզուով: Անոնք միաժամանակ կը ներկայացնեն իրենց ցեղին ողջ զեղեցկութիւնը, բայց նաեւ՝ անոր նահատակութիւնը: Երբ ես այնտեղ ժամանեցի, անոնք իմ երկրին պետական օրհներգը՝ «Ով ազատ լեռներ»-ը երգեցին: Իրենց վիճակը խորապէս յուզեց զիս, եւ ես Begnins-ի որբանոցէն հեռացայ այն հաստատ համոզումով, որ որպէս Ազգերու 5-րդ Լիկայի նախագահ՝ ամբողջ աշխարհին հետ անգամ մը եւս խօսիմ մեր եղբայրներուն կարիքներուն եւ անոնց օգնելու պարտականութեան մասին: Ինչ ուրախալի օր մը պիտի ըլլար ամէնուս համար, եթէ երբէք Ազգերու Լիկան շնորհիւ իր եռան-

ders., Pourquoi un Foyer Arménien en Suisse? Lausanne, (տպագրութեան թուականը չի նշուել), ders., Dix ans après l'ouverture du Foyer Arménien de Begnins. Lausanne, (տպագրութեան թուականը չի նշուել), ders., Arménie Justice et Réparation, Genève, 1930:

³² Այս մասին տե՛ս, **Manoukian A.**, La Communauté Arménienne de Suisse, Le présent et une histoire de plus de 100 ans, Genève, Toronto, Beyrouth, 2009, էջ 28-38:

դուն եւ ազնուահոգի մեծ ներկայացուցիչին՝ Դոկտ. Նանսէ-
նի, վերջապէս յաջողէր հայրենիք մը ստեղծել այս ժողո-
վուրդին համար»³³:

ABEL MANOUKIAN

Doctor in Theology and Philosophy, Switzerland

SWISS DOCUMENTS ON THE ARMENIAN COMMUNITIES IN GENEVE AND LAUSANNE

*Keywords: Geneva, Lausanne, Armenians of Switzerland,
Armenian Student Union of Europe, Armenian Revolutionary Society,
Antony Krafft-Bonnard.*

The purpose of this article is to present the documents on the Armenian presence in Lausanne, in the archives of the Swiss Confederation, in the cantons of Vaud, in the University, as well as in the National Library of the Confederation.

The Armenian community in Switzerland began to form in the last quarter of the 19th and by beginning of the 20th century. The earliest evidence known to us is the record of the name of an Armenian student named Tigran Abro in the yearbook of the Faculty of Literature of the University of Lausanne in 1865-1866. It is noteworthy that in this period, in the university yearbooks, next to the name, surname, profession, the nationality of the student was also mentioned. In the following years, many Armenian students from Armenia, Nakhichevan, Artsakh, Tbilissi, Baku, the Russian Empire, Western Armenia, and various cities of the Ottoman Empire studied in the other departments of medicine, law, and natural sciences at the University of Lausanne. Among them were Avetis Aharonyan, Ruben Sevak, Nikol Aghbalyan and others who played a great role in the Armenian political, cultural and literary spheres. Based on the documents, it can be assumed that the Armenian students tried to unite and create an Armenian-inspired cultural environment. It is no coincidence that the pro-Armenian

activities of the Armenian Student Union of Europe, formed by Armenian students in Lausanne, were aimed at propagating the Armenian Question. In the autumn of 1886, thanks to Avetis Nazarbekyan, Maro Vardanyan-Nazarbekyan, Ruben Khan-Azat, Gabriel Kafyan, Gevorg Gharajyan and Christapor Ohanyan, students at the University, the "Armenian Revolutionary Society" was founded, which in 1887 formed the basis of the later social democratic Hunchakian Party. In November of the same year the newspaper "Hnchak" was published, and in 1893 the 4th issue of "Droshak" also appeared as the official organ of the ARF in Geneva.

The paper focuses on the Swiss press, including provincial newspapers and church media, which took a particular stand on the Armenian Question and the political persecutions of Armenians by the Ottoman authorities. Hundreds of articles published in French, German and Italian reflected a huge wave of protest in Switzerland against the Ottoman atrocities. A petition signed by more than 450,000 Swiss citizens pointed out the atrocities committed against the Armenian population in the Ottoman Empire.

АБЕЛЬ МАНУКЯН

Доктор теологии и философии, Швейцария

ШВЕЙЦАРСКИЕ ДОКУМЕНТЫ ОБ АРМЯНСКИХ ОБЩИНАХ В ЖЕНЕВЕ И ЛОЗАННЕ

*Ключевые слова: Женева, Лозанна, армяне Швейцарии,
Армянский студенческий союз Европы, «Армянское революционное
общество», Антони Краффт-Боннар.*

Целью данной статьи является представить документы об армянской диаспоре Женевы и Лозанны, хранящиеся в архивах Швейцарской Конфедерации, кантонов Женевы и Вод, в архивах университета, а также в Национальной библиотеке Конфедерации.

Армянская община Швейцарии начала формироваться в последней четверти XIX - начале XX века. Самым ранним известным нам свидетельством является запись армянского студента по имени Тигран Абро в ежегоднике факультета литературы Лозаннского

³³ Հմմտ. Société des Nations. Akten. 2. Okt. 1924; Manoukian A., Zeugen der Menschlichkeit. էջ 491:

университета в 1865-1866 гг. Примечательно, что в этот период в университетских ежегодниках рядом с именем, фамилией и специальностью упоминалась также национальность студента. В последующие годы многие армянские студенты из Армении, Нахичевани, Арцаха, Тбилиси, Баку, Российской империи, Западной Армении и различных городов Османской империи учились на факультетах медицины, права, естественных наук и других факультетах университета Лозанны. Среди них были Аветис Агаронян, Рубен Севак, Никол Агбалян и другие, сыгравшие большую роль в политической, культурно-литературной жизни Армении. Исходя из документов можно предположить, что армянские студенты пытались объединиться и создать армянскую культурную среду. Неслучайно проармянская деятельность Союза армянских студентов Европы, созданного армянскими студентами в Лозанне, была направлена на пропаганду армянского вопроса. Осенью 1886 года, студентами университета Женевы Аветисом Назарбеяном, Маро Варданян-Назарбеяном, Рубеном Хан-Азатом, Габриэлом Кафяном, Геворгом Караджяном и Кристафором Оганяном было основано «Армянское революционное общество», которое в 1887 году стало основой социал-демократической партии «Гнчакян». В ноябре того же года в Женеве стала издаваться газета «Гнчак», а в 1893 г. был издан 4-й номер официальной газеты Армянской революционной федерации «Дашнакцутюн» - «Дрошак».

В данной статье особое внимание уделяется швейцарской прессе, в том числе провинциальным газетам и средствам массовой информации церковных общин, по армянскому вопросу и преследованию армян османским правительством. Сотни статей, опубликованных на французском, немецком и итальянском языках, отражают огромную волну швейцарских протестов против зверств Османской империи, подписанных более 450 000 гражданами и которые возглавлялись многочисленными общественными и религиозными авторитетными деятелями.

ՀԱՅԵՐԻ ԹՎԱԿԱԶՍԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 1897-2010 ԹԹ.
(ԸՍՏ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ)

Հիմնաբառեր. Հայություն, համայնք, թվակազմ, մարզ/երկրամաս, մարդահամար, բնակչություն, Ռուսաստան/ՌԴ, Կուրան:

Հայ-ռուսական առնչություններն ու հայության բնակչությունը ռուսական հողերում սկիզբ են առնում XI-XII դարերից, երբ Կիևում գոյություն է ունեցել հայկական համայնք, որը հիմնականում զբաղվել է արհեստներով և առևտրով: Հայերի հոսքը ռուսական հողեր մեծացել է XIII-XVI դարերում, համայնքներ են հիմնվել Մոսկվայում, Նովգորոդում, Կազանում, Աստրախանում, ավելի ուշ՝ Դոնում, Հյուսիսային Կովկասում և այլ վայրերում: Հետագա դարերում զգալիորեն ամրապնդվել է հայ-ռուսական տնտեսական կապերը, ընդլայնվել է ռուսահայերի առևտրական ու արտադրական գործունեությունը, հիմնվել են մանուֆակտուրաներ: XVII դարում հայ առևտրական կապիտալի ներհոսքը ռուսական պետություն և համայնքի թվակազմի մեծացումը կապված էր 1667 թ. մայիսի 31-ին մոսկովյան կառավարության կողմից Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերությանը տրամադրած մենաշնորհային արտոնության ու իրավունքների հետ, որով հայ վաճառականները մետաքսի առևտուր էին իրականացնելու ինչպես Ռուսական պետության, այնպես էլ նրա միջոցով Արևմուտքի և Արևելքի երկրների հետ: 1711 թ. մարտի 2-ին ցար Պյոտր I-ի հրամանագրով վերահաստատվել է հայ վաճառականության ազատ գործունեության իրավունքը, ապա լրացուցիչ արտոնություններ են տրվել հայերին, խրախուսվել է նրանց բնակչությունը Ռուսաստանում: Հայերին տրված արտոնություններն ու առանձնաշնորհումները նպաստել են Պովոլժիեի, Դոնի, Հյուսիսային Կովկասի համայնքների ստվա-

րացմանն ու տնտեսական զարգացմանը: Ռուսական կայսրությունում հայտնի են դարձել Շերիմանյան, Մաֆարով, Խաստառով, Իսախանով, Լազարյան և շատ ուրիշ հայ ընտանիքներ, որոնք խոշոր առևտրական, արտադրական ու արդյունաբերական գործունեություն էին իրականացնում, հեղինակություն էին վայելում հայ համայնքում և ռուսական արքունիքում:

Ռուսական կայսրության տարածքի հայ համայնքներին շնորհիվ էն ոչ միայն տնտեսական, այլև իրավական արտոնություններ: XVIII–XIX դդ. ռուսահայ կյանքի խոշոր կենտրոնները՝ Աստրախանը, Նոր Նախիջևանը, Մոզդոկը, Ղզլարը ստացել են ներքին ինքնավարություն, հայկական դատարան կամ մագիստրատ, որոնք համայնքային ներքին կյանքը կազմակերպել են «Աստրախանի Հայոց դատաստանագրքի» հիման վրա: XVII–XIX դդ. ռուսական կառավարությունն, իր արևելյան քաղաքականությունն իրականացնելիս, լայնորեն հենվել է հայերի վրա, ձևավորվել են նաև քաղաքական կապեր: Ռուսահայերի թվակազմի մեծացմանը զուգահեռ նրանց հոգևոր և ազգային կյանքում կարևոր դեր է ստանձնել Հայ առաքելական եկեղեցու Աստրախանի թեմը (առաջինը ռուսահայ համայնքներում), որը կազմավորվել է դեռևս 1717 թ. միավորելով ռուսահայ բոլոր համայնքները:

XIX դ. երկրորդ կեսին Ռուսական կայսրությունում, կապված տնտեսական զարգացման առաջընթացի հետ, երկրի տնտեսական և մարդկային ռեսուրսների հաշվառման պահանջ է առաջացել վեր հանելու տեղեկություններ ոչ միայն բուն եվրոպական Ռուսաստանի, այլև նորանվաճ Կովկասի և Թուրքեստանի, ինչպես նաև թույլ բնակեցված Սիբիրի և ծայրամասերի ազգաբնակչության, նրանց տնտեսական ռեսուրսների մասին: 1895 թ. հունիսի 5-ին Նիկոլայ II-ը հաստատել է Պ. Սեմյոնով Տյան-Շանսկու մշակած «Կանոնադրություն Ռուսական կայսրությունում առաջին համընդհանուր մարդահամարի մասին» ծրագիրը¹:

¹ Ասոյան Լ.Ա., Հայերի տեղաբաշխումը և աճը Անդրկովկասում ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների. Լրագրեր հասարակական գիտությունների, Երևան, 2003 (N 3), էջ 99:

1897 թ. անցկացված Համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով Ռուսական կայսրության հայ բնակչությունը կազմում էր 1.173.096 մարդ, որը կազմում էր ամբողջ կայսրության բնակչության 0.93%-ը:

Հայության տեղաբաշխումը Ռուսական կայսրությունում ըստ 1897 թ. մարդահամարի²
Աղյուսակ N 1

	ամբողջը	քաղաքային	գյուղային
Անդրկովկաս	1.079.059	221.192	857.867
Հյուսիսային Կովկաս	33.452	17.677	15.775
Եվրոպական Ռուսաստան	49.329	29.211	20.118
Միջին Ասիա	4.864	4.316	548
Սիբիր	629	239	390
Մերձբալթիկա	182	166	16

1897 թ. դրությամբ Անդրկովկասն ընդգրկում էր Թիֆլիսի, Քութայիսի, Ելիզավետպոլի, Երևանի, Բաքվի նահանգներն ու Կարսի մարզը, ուր բնակվում էին 4.934.614 մարդ, որից հայեր՝ 1.079.059 մարդ: Հայերը ներկայացված էին տարածաշրջանի բոլոր նահանգներում և մարզերում: Այսպես, Երևանի նահանգում բնակվում էր 441.000 հայ, Ելիզավետպոլում՝ 292.188, Թիֆլիսում՝ 196.189, Բաքվում՝ 52.233, Քութայիսում՝ 24.043 և Կարսի մարզում՝ 73.406 հայ³:

Հայ բնակչությունը նկատելիորեն կենտրոնացած էր նաև կայսրության Եվրոպական մասի թվով 8, Միջին Ասիայի 2 և Սիբիրի 2 նահանգներում:

Ռուսական կայսրությունում հայերենին, որպես մայրենի լեզու, տիրապետողների քանակը կազմում էր 1.173.096 մարդ⁴,

² Ասոյան Լ.Ա., Հայերը Ռուսական կայսրությունում 19-րդ դարի վերջին. Պատմաժողովրդագրական հետազոտություն. Գյումրի, 2010, էջ 173:


³ Նոյն տեղում:

⁴ http://www.demoscope.ru/weekly/ssp/rus_lan_97.php

որից Կովկասում՝ 1.118.094-ը, Եվրոպական մասում՝ 49.329-ը, Միջին Ասիայում՝ 4.862-ը, Սիբիրում՝ 629-ը, Մերձվիսյան (լեհական) նահանգներում՝ 182:

Հատկանշական է, որ մարդահամարով վեր են հանվել ըստ նահանգների և քաղաքների հայերեն լեզվին որպես մայրենի տիրապետողների թվաքանակը և աշխարհագրությունը⁵: Այսպես, Մոսկվա, Մանկո-Պետերբուրգ և Օդեսա քաղաքներում այդ ցուցանիշը կազմում էր համապատասխանաբար 1604, 753 և 1.401 մարդ, իսկ նահանգներից Դոնում՝ 27.234, Կուբանում՝ 13.926, Տավրիկյանում (Ղրիմի)՝ 8938, Աստրախանում՝ 4.270, Թերեքում՝ 11.803, Ստավրոպոլում՝ 5.385, Անդրկասպյանում՝ 4.256, Չեռնոմորիեիում՝ 6.285, Բեսարաբիայում՝ 2.080, Սամարղանդում՝ 370, Սախալին կղզում՝ 167, Վարշավայում՝ 104, Լիֆլյանդիայում՝ 49 մարդ և այլն:

Հայերենի տարածման արեալը Ռուսական կայսրությունում



⁵ <https://datatowel.in.ua/pop-composition/languages-census-1897>

ԽՍՀՄ կազմավորումից հետո առաջին Համամիութենական մարդահամարով, որն անցկացվել է 1926 թ. դեկտեմբերի 17-ին, ՌԽՖՍՀ-ում բնակվում էր 195.410 հայ⁶:

ՌԽՖՍՀ հայությունն ըստ 1926 թ. դեկտեմբերի 17-ի Համամիութենական մարդահամարի⁷

Աղյուսակ N 2

	Ամբողջը	Արական	Բզակական	Մայրենի լեզու			Գրագիտություն	
				հայ.	ռուս	այլ	գրագետ	մայրենի լեզվով
ՌԽՖՍՀ, որից	195.410	101.069	94.341	170.428	22.823	2.159	98.193	53.172
Քաղաքային	116.157	59.564	56.593	94.270	20.092	1.795	67.510	28.272
Գյուղական	79.253	41.505	37.748	76.158	2.731	364	30.683	24.900
Դոնի ժողովուրդ	44.504	22.366	22.138	38.806	5.552	146	25.007	15.941
Չերնոմորիե	27.729	14.781	12.948	27.079	551	99	9.738	8.153
Թերեք	21.423	10.733	10.690	20.056	1.293	74	9.146	3.739
Կուբան	21.023	10.953	10.070	18.438	2.421	164	10.365	5.488
Արևալիք	19.198	9.690	9.508	15.371	2.851	886	9.401	3.605
Մայկոպ	9.801	5.076	4.725	9.406	361	34	2.822	2.067
Մոսկվայի նահ.	6.718	3.662	3.056	3.927	2.705	86	5.907	2.531
Ղրիմի ԻՖՍՀ	10.713	5.469	5.244	8.965	1.730	18	6.431	3.179
ք. Վլադիկովկաս	6.529	3.311	3.218	5.798	536	195	2.935	1.168
ք. Գրոզնի	5.843	3.066	2.777	4.793	965	85	2.753	1.538

⁶ Весоюзная перепись населения 1926 года, Российская Социалистическая Советская Республика, Москва, 1929, с. 38.

⁷ Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917–1941 թթ., Երևան, 2014, էջ 64:

Հայրենական Մեծ պատերազմից հետո անցկացված 1959 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով ՌԽՖՍՀ-ում բնակվում էր 255.978⁸, կամ ԽՍՀՄ ամբողջ հայության 8.4%-ը, իսկ 1970 թ. ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 298.718 մարդ, նախորդ մարդահամարի համեմատ, գրանցվել էր հայության թվաքանակի աճ 42.740 մարդով կամ 16.7%-ով: Ուշագրավ է, որ ՌԽՖՍՀ ամբողջ հայության 33%-ը բնակվում էր Կրասնոդարի երկրամասում, իսկ շուրջ 18%-ը Ռոստովի մարզում: Այս երկու վարչական միավորների հայությունը միասին կազմում էին Ռուսաստանում ապրող հայության կեսից ավելին:

Հատկանշական է, որ Հյուսիսկովկասյան տարածաշրջանի բոլոր վարչատարածքային միավորներում առկա էր ստվար հայ բնակչություն, ընդ որում, գլխավորապես քաղաքային վայրերում:

ՌԽՖՍՀ առանձին սուբյեկտների և քաղաքների հայություն թիվը, մայրենի, ռուսերեն և այլ լեզուներին տիրապետելու վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի

Աղյուսակ N3

ՌԽՖՍՀ (առանձին սուբյեկտներ և քաղաքներ)	Ամբողջ	Մայրենի լեզու			Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ		
		հայ.	ռուս.	այլ	հայ.	ռուս.	այլ
Կրասնոդարի երկր.	98.589	76.207	22.263	119	7.910	64.295	405
Ադրբեյջանի ԲՄ	5.217	4.088	1.119	10	370	3.617	42
Ստավրոպոլի երկր.	31.096	21.188	9.878	30	3.343	18.800	214
Աստրախանի մարզ	1.784	861	912	11	228	819	22
Ք. Լենինգրադ (քաղաքային)	6.628	2.290	4.286	52	1.366	2.172	172

⁸ Итоги Всесоюзной переписи населения 1959 года, РСФСР, Москва, 1963, с. 300.

Ենթ.բնակավայրերով)							
Ք. Մոսկվա (քաղաքային ենթ.բնակավայրերով)	25.584	9.008	16.448	128	5.595	8.453	741
Մոսկվայի մարզ	5.683	2.296	3.360	27	1.100	2.110	184
Ռոստովի մարզ	53.620	37.383	16.220	17	5.287	31.471	164
Ղաղստանի ԲԽՍՀ	6.615	5.041	1.563	11	276	4.530	95
Կարաբաղի Բնակավայրական	2.033	1.364	647	22	120	1.241	40
Հյուսիս-Օսական	13.355	10.345	2.925	85	573	9.582	138
Չեչենա-Ինգուշական	14.543	10.081	4.437	25	1.017	8.896	107

1979 թ. համամիութենական մարդահամարով հայությանը վերաբերող ամփոփ տվյալների համաձայն ՌԽՖՍՀ-ում բնակվում էր 364.570 հայ կամ ԽՍՀՄ հայ բնակչության 8.8%-ը:

Համամիութենական վերջին մարդահամարն անցկացվել է 1989 թ. հունվարի 12–19-ը, որի արդյունքներով ՌԽՖՍՀ-ում արձանագրվել է 532.390 հայ⁹, որից Հյուսիսային Կովկասում կենտրոնացած էր ավելի քան 355 հազարը կամ ՌԽՖՍՀ հայության 66.7%-ը, ընդ որում նրանց գերակշիռ մասը (67%-ը) բնակվում էր քաղաքներում¹⁰:

Մոսկվայի հայ ազգաբնակչության թվաքանակը երեսուն տարում (1959–1989 թթ.) աճել է 2.5 անգամ՝ 1989 թ. կազմելով շուրջ 43.5 հազար մարդ¹¹: ՌԽՖՍՀ հայությունը կազմում էր ամբողջ ԽՍՀՄ հայության 11.5%-ը: Հատկանշական է, որ 1979–1989 թթ. բացարձակ թվերով ամբողջ ԽՍՀՄ հայությունը արձանագրել էր թվաքանակի աճ 471.991 մարդով, որից 167.820-ը ՌԽՖՍՀ-ում:

⁹ Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной переписи населения 1989 г., Москва, 1990, с. 5.

¹⁰ Тер-Саркисянц А., Армяне. История и этнокультурные традиции, Москва, 1998, с. 357.

¹¹ Арутюнян Ю., Об армянской диаспоре в России. Этносоциологическое исследование армян Москвы и Краснодара. Е., с. 15.

Հայության թվաքանակը, տեղաբաշխումն ու տոկոսային կշիռը
միութենական հանրապետություններում ըստ 1989 թ.
Համամիութենական մարդահամարի¹²

Աղյուսակ N 4

	Թվաքանակը	ԽՍՀՄ-ում %-ով	հանր. բն. մեջ %-ով	դինամիկ. 1979թ համեմատ %-ով
ԽՍՀՄ, որից	4.623.232	100	1.6	111.4 (+)
1. Հայկական ԽՍՀ	3.083.616	66.7	93.30	113.2 (+)
2. ՌԽՖՍՀ	532.390	11.5	0.36	146.0 (+)
3. Վրացական ԽՍՀ	437.211	9.5	8.09	97.6 (-)
4. Ադրբեջանական ԽՍՀ	390.505	8.4	5.56	82.1 (-)
5. Ուզբեկական ԽՍՀ	50.537	1.1	0.25	119.3 (+)
6. Ուկրաինական ԽՍՀ	54.200	1.2	0.10	140.2 (+)
7. Թուրքմենական ԽՍՀ	31.829	0.7	0.90	119.6 (+)
8. Ղազախական ԽՍՀ	19.119	0.4	0.11	136.4 (+)
9. Տաջիկական ԽՍՀ	5.651	0.1	0.11	116.3 (+)
10. Կիրգիզական ԽՍՀ	3.975	0.1	0.09	121.0 (+)
11. Բելոռուսական ԽՍՀ	4.933	0.1	0.04	179.3 (+)
12. Լատվիական ԽՍՀ	3.069	0.07	0.11	160.4 (+)
13. Մոլդովական	2.873	0.06	0.06	147.1

¹² Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной переписи населения 1989 г., Москва, 1990, с. 5.

ԽՍՀ				(+)
14. Լատոնական ԽՍՀ	1.669	0.04	0.10	197.5 (+)
15. Լիտվական ԽՍՀ	1.655	0.04	0.04	173.3 (+)

Հետխորհրդային տարիներին, սկսած 1990-ական թթ., Ռուսաստանի Դաշնության հայ ազգաբնակչության թվաքանակն անշեղորեն աճել է, ընդլայնվել է հայության բնակության աշխարհագրությունը:

ՌԴ-ում հայ ազգաբնակչության թվաքանակի աճը պայմանավորված էր Ադրբեջանից, Վրաստանից, Աբխազիայից, միջինասիական հանրապետություններից հայ բնակչության բռնազաղթով և միգրացիոն արտահոսքով: Հետխորհրդային տարածքում տեղի ունեցած հակամարտությունների, կրոնական ու էթնիկ խտրականության պատճառներով թե՛ զոտիներից բազմահազար հայեր ներգաղթել են Ռուսաստանի Դաշնություն:


Նորանկախ ՀՀ սոցիալ-տնտեսական դժվարությունները, Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը, Սպիտակի աղետալի երկրաշարժի հետևանքները պատճառ են դարձել Հայաստանից դեպի ՌԴ հարյուր հազարավոր հայերի արտագաղթի՝ հայաշատ համայնքների հայության թվաքանակի շեշտակի մեծացման, Ռուսաստանի արևմտյան մարզերց մինչև Հեռավոր Արևելքի Կամչատկա երկրամաս հայկական նոր համայնքների ձևավորման:

Այսպիսով, 1990-ական թթ. սկզբից ՌԴ-ում բնակչության տեղափոխված հայերի շրջանում նկատելի էին ինչպես սոցիալ-տնտեսական խնդիրների պատճառով, այնպես էլ հարկադրված հայ վերաբնակիչների, փախստականների, աշխատանքային և սպորինի միգրանտների խմբերը:

Որոշ հետազոտողների հաշվարկով ՀՀ-ից արտագաղթած բնակչության թվաքանակը 1990–2000 թթ. կազմել է մինչև 1 մլն, 2002–2009 թթ.՝ 57.5 հզ, 2010–2014 թթ.՝ ավելի քան 206 հզ մարդ, որոնց թվում նաև ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնություն-

ները, ընդ որում, հայ միգրանտների հիմնական զանգվածը՝ 95.5%-ը մեկնել է ՌԴ¹³:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև միգրացիոն գործընթացների հիմնահարցը կարգավորվել է մի շարք երկկողմանի և ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրերով: Այդ շարքում բազային համաձայնագիր է դիտվում 1997 թ. օգոստոսի 29-ին ՀՀ և ՌԴ միջև կնքված համաձայնագիրը երկու երկրների քաղաքացիների իրավական կարգավիճակի և կամավոր վերաբնակեցման գործընթացի կարգավորման վերաբերյալ արձանագրությունը:



Աշխատանքային միգրացիա քարտեզագրումը իրականացվել է ՀՀ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
Զբաղվածության պետական գործակալության և Միգրացիայի
Միջազգային Կազմակերպության համագործակցությամբ: Տես՝
<http://map.imigrantarmenia.eu/>

¹³ Գալստյան Մ., Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների միգրացիան (Լեռնացիալոգիական հետազոտություն), Երևան, 2015, էջ 103, 160:

ՌԴ-ում բնակչության հաշվառման նպատակով 1990-ական թթ. անցկացվել են մարդահամարներ (միկրոմարդահամար), որոնք սակայն համընդգրկուն չեն եղել, ուստի ամբողջական տվյալներ ՌԴ-ում բնակվող հայության քանակի վերաբերյալ ներկայացնում են միայն 2002 և 2010 թվականներին անցկացված համապետական մարդահամարները: Վերոհիշյալ մարդահամարները տվյալներ են ներկայացնում ըստ ՌԴ Դաշնային օկրուգների, սուբյեկտների, գյուղական և քաղաքային հայ բնակչության տեղաբաշխվածության, քաղաքացիության, հայերեն և ռուսերեն լեզուներին տիրապետման:

Այս երկու մարդահամարների միջև ընկած ժամանակշրջանում ՌԴ-ում վարչատարածքային որոշ փոփոխություններ են տեղի ունեցել, առանձնացվել են նոր Դաշնային օկրուգներ, կատարվել են տարածքների անվանափոխումներ կամ լուծարումներ, որոնք արտացոլված են ներքևում բերված աղյուսակներում:

Մարդահամարը ներկայացնում է նաև ՌԴ հայության սեռատարիքային և աշխատունակ կազմերը: Ներկայացված են սեռատարիքային կազմի տարբեր խմբերի կրթական մակարդակները՝ միջնակարգ, թերի բարձրագույն, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական:

ՌԴ հայության թվաքանակի, տեղաբաշխման շրջանների ու մարդահամարներով ամփոփված այլ տվյալների ամբողջական ներկայացումը շատ կարևոր է բազմաբնույթ գործընթացների վերաբերյալ հնարավոր ճշգրիտ պատկեր ապահովելու տեսանկյունից:

ՌԴ հայ բնակչության թվաքանակը, քաղաքաբնակ ու գյուղաբնակ հայությունը, սեռային կազմն ու ռուսերենին տիրապետողների թվաքանակն ըստ 2002 թ. Համառուսաստանյան մարդահամարի արդյունքների¹⁴

¹⁴ Итоги Всероссийской переписи населения 2002 года, (В 14 томах), том 4, книга 1, Национальный состав и владение языками, гражданство, Москва, ИИЦ «Статистика России», 2004, с. 8–20.

Աղյուսակ N5

ՌԴ	Ամբողջը	Արական	Իգական	ռուս. տիրապետող.
Հայեր, որից՝	1.130.491	620.178	510.313	1.113.215
Քաղաքաբնակ	805.621	446.424	359.197	794.135
Գյուղաբնակ	324.870	173.754	151.116	319.080

2002 թ. Համառուսաստանյան մարդահամարի տվյալներով ՌԴ հայության ավելի քան 71%-ը քաղաքաբնակ էր, գյուղաբնակ էր շուրջ 29%-ը, ինչն ուրբանիզացման բարձր մակարդակ էր: Այսպիսով, 1989 թ. մարդահամարի տվյալների համեմատ Ռուսաստանի հայ բնակչության թվաքանակն աճել էր ավելի քան կրկնակի անգամ: ՌԴ հայ բնակչության գերակշիռ մասը տիրապետում էր ռուսերենին: Հայերենին տիրապետողների թվաքանակը ՌԴ-ում կազմում էր 904.892 մարդ, որից հայեր էին՝ 827.930-ը, ռուսներ՝ 31.346-ը և այլ ազգությունների ներկայացուցիչներ¹⁵: Այսպիսով, ՌԴ-ում բնակվող ավելի քան 300 հզ հայեր չէին տիրապետում մայրենի լեզվին: Հետաքրքրական է ՌԴ-ում բնակվող հայության սեռատարիքային կազմը, համաձայն դրա մինչև 35 տարեկան հայերի թվաքանակը կազմում էր 606.996 մարդ, իսկ 35–50 տարեկան էր 300.740 մարդ¹⁶:

Աշխատունակ տարիքի էր ՌԴ-ում բնակվող ավելի քան 727 հզ հայ, աշխատունակ տարիքից փոքր էր 256 հզ մարդ: Այս ցուցանիշներից հստակ երևում է ՌԴ-ում բնակվող հայության երիտասարդ տարիքային և աշխատունակ կազմերի առկայությունը:

2002 թ. Համառուսաստանյան մարդահամարի տվյալներով ՌԴ-ում բնակվող 136.841 հայեր ունեին ՀՀ քաղաքացիություն:

2010 թ. ՌԴ-ում անցկացվել է հերթական Համառուսաստանյան մարդահամարը, որի տվյալներով հայ ազգաբնակչության թվաքանակը նախորդող ութ տարիների ընթացքում ավելացել էր շուրջ 50 հազարով: Այս մարդահամարի արդյունքներով նկատելի

¹⁵ Նույն տեղում, էջ 123–126:

¹⁶ Նույն տեղում, էջ 182:

էր գյուղական վայրերում հայության թվաքանակի աճ: ՌԴ քաղաքաբնակ հայության կշիռը 69% էր, գյուղաբնակներինը՝ 31%:

ՌԴ հայ բնակչության թվաքանակը, քաղաքաբնակ ու գյուղաբնակ հայությունը, սեռային կազմն ու ռուսերենին տիրապետողների թվաքանակն ըստ 2010 թ. Համառուսաստանյան մարդահամարի արդյունքների¹⁷

Աղյուսակ N6

ՌԴ	Ամբողջը	Արական	Իգական	ռուս. տիրապետող.
Հայեր, որից՝	1.182.388	638.479	543.909	1.165.256
Քաղաքաբնակ	816.375	441.798	374.577	804.512
Գյուղաբնակ	366.013	196.681	169.332	360.744

2010 թ. մարդահամարով ՌԴ հայ բնակչության ճնշող մեծամասնությունը տիրապետում էր ռուսերենին: Նախորդ մարդահամարի տվյալների համեմատ կտրուկ կերպով նվազել էր հայերենին տիրապետողների թվաքանակը: Հայերենին տիրապետում էր 660.935 մարդ, որից հայեր՝ ընդամենը 592.086 կամ ՌԴ հայ բնակչության ուղիղ 50%-ը: Այս մտահոգիչ ցուցանիշը ամենացածրն էր երրկից անցկացված մարդահամարների ժամանակ արձանագրված տվյալների մեջ¹⁸:

Մարդահամարով վեր են հանվել ՌԴ հայության տարիքային կազմին և կրթական մակարդակին վերաբերող տվյալներ: Այսպես, 15–45 տարեկան ՌԴ հայազգի բնակչության թվաքանակը կազմում էր 439.139 մարդ կամ հայության ավելի քան 41%-ը: Աշխատունակ տարիքի էր ՌԴ ավելի քան 800 հզ հայ քաղաքացի, որից բարձրա-

¹⁷ Итоги Всероссийской переписи населения 2010 года. (В 11 томах), том 4. Национальный состав и владение языками, гражданство, книга 1, Москва, ИИИ «Статистика России», 2012, с. 11–25.

¹⁸ Նույն տեղում, էջ 142–149:

գույն կրթություն ունենին 176. 815-ը կամ 22%-ը¹⁹: Ոչ լիարժեք բարձրագույն կրթություն ունենին 49.269 մարդ:

Հետբուհական կրթություն ունեն 4.920 հայ, իսկ գրագետ չէին ընդամենը 676-ը: Մեծ թիվ էին կազմում միջին մասնագիտական ու միջնակարգ կրթություն ունեցողները:

ՌԴ-ում բնակվում էին 59.351 ՀՀ քաղաքացիներ, որոնցից աշխատունակ էր ավելի քան 46 հզ մարդ: Նրանցից մոտ 26 հզ մինչև 30 տարեկան էր, 22.8 հզ՝ 30-49 տարեկան: ՌԴ-ում բնակվող ՀՀ քաղաքացիների գերակշիռ մասը բնակվում էր քաղաքներում՝ 48.222, իսկ գյուղական վայրերում՝ 11.129 մարդ: Ընդ որում, ՌԴ Կենտրոնական Դաշնային օկրուգում էին բնակվում ՀՀ ավելի քան 24 հզ քաղաքացիներ: 2013 թ. դրությամբ ՌԴ-ում գտնվող Հայաստանի քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնային Միգրացիոն Տառայությունը հրապարակել է վիճակագրական տվյալներ, համաձայն որոնց այդ երկրում ՀՀ քաղաքացիների ընդհանուր թվաքանակը կազմել է 338.349 մարդ²⁰: Նրանցից մինչև 17 տարեկան էին 29.053, 18-29 տարեկան՝ 106.193, 30-39 տարեկան՝ 76.309, 40-49 տարեկան՝ 58.033, 50-59 տարեկան՝ 52.048, 60 և ավելի տարեկան՝ 16.713 ՀՀ քաղաքացիներ:

Բազմաբնույթ հետազոտությունների արդյունքներով հայ միգրանտների նախընտրությունը վերաբնակվել Ռուսաստանում, մասնավորապես Մոսկվայում, մեծապես պայմանավորված է աշխատանքի և բիզնեսի հնարավորություններով, բարձր վարձատրությամբ, լեզվի իմացությամբ, ուժեղ ու բազմամարդ համայնքի առկայությամբ, բարեկամների ու ընկերների աջակցությամբ: Այս համատեքստում Մոսկվայի հայ միգրանտների զբաղվածությունն ըստ ոլորտների արձանագրել է հետևյալ պատկերը. առևտրի՝ 32%, շինարարության՝ 15%, առողջապահության՝ 10%, արդյունաբերության և տրանսպորտի՝ 7-9% և այլն²¹: Այդուհանդերձ, Մոսկվա-

յում բնակվող հայ միգրանտների շուրջ 15-17%-ը հետագայում վերաբնակվել են Եվրոպայում, ԱՄՆ-ում և այլ երկրներում²²:

Հայության թվաքանակն ու տեղաբաշխումը ՌԴ-ում²³

Աղյուսակ N7

Դաշնային օկրուգներ/ռեզիդենտներ	2002 թվական		2010 թվական	
	հզ մարդ	ՌԴ ամբողջ հայության կշռում %-ով	հզ մարդ	ՌԴ ամբողջ հայության կշռում %-ով
Կենտրոնական ՂՕ	249,2	21,88	271,0	22,92
Ս. Մոսկվա	124,4	10,92	106,5	9,01
Մոսկվայի մարզ	39,7	3,48	63,3	5,35
Հյուսիս-արևմտյան ՂՕ	46,3	4,06	49,0	4,14
Ք. Սանկտ Պետերբուրգ	19,2	1,68	20,0	1,69
Հարավային ՂՕ	427,9	37,56	442,5	37,42
Ադրդեայի հանրապետություն	15,3	1,34	15,6	1,32
Կրասնոդարի երկրամաս	274,6	24,10	281,7	23,82
Վոլգոգրադի մարզ	28,0	2,36	27,8	2,35
Ռոստովի մարզ	110,0	9,66	110,7	9,36
Հյուսիսկովկասյան ՂՕ	166,5	14,61	190,8	16,14
Հյուսիսային Օսիա-Ալանիայի հանր.	17,2	1,51	16,2	1,37
Ստավրոպոլի երկրամաս	149,3	13,10	161,3	1,38
Պրիվոլժսկի ՂՕ	105,1	9,23	108,8	9,20
Օրենբուրգի մարզ	10,6	0,93	10,6	0,90
Սամարայի մարզ	21,6	1,89	23,0	1,95
Սարատովի մարզ	25,0	2,19	23,8	2,01
Ուրալի ՂՕ	44,6	3,86	46,1	3,90
Սվերդլովսկի մարզ	11,1	0,97	11,5	0,97

²² Կույն տեղում, էջ 40:

²³ Итоги Всероссийской переписи населения 2002 года, Москва, 2004, Т. IV, Кн. I, с. 8, 25-122; для сравнимости субъекты РФ 2002 года рассчитаны в границах 2010 года. Итоги Всероссийской переписи населения 2010 года, Москва, 2012, Т. IV, Кн. I, с. 29-140. Расселение армян по всем субъектам Российской Федерации в 1959, 1979, 1989, 2002 и 2010 гг. см. Приложение (подготовленное И.А. Субботиной).

¹⁹ Итоги Всероссийской переписи населения 2010 года. (В 11 томах), том 4. Национальный состав и владение языками, гражданство, книга 2, Москва, ИИЦ «Статистика России», 2012, с. 860.

²⁰ <http://news.am/arm/news/177525.html>

²¹ **Осадчая Г.И.**, Мигранты из Армении и Грузии в Москве. Москва, 2010, с. 48.

Տյումենի մարզ	14,8	1,30	15,5	1,31
Չեյարխինսկի մարզ	8,6	0,76	9,3	0,79
Միջին ՂՕ	60,9	5,34	63,1	5,34
Ալթայի երկրամաս	8,1	0,71	7,6	0,64
Կրասնոյարսկի երկրամաս	10,8	0,95	10,7	0,90
Կեմերովոյի մարզ	10,1	0,89	10,7	0,90
Օմսկի մարզ	6,6	0,58	7,3	0,62
Հեռավորարևելյան ՂՕ	17,6	1,57	19,2	1,62
Մախա (Յակուտիայի) հանր.	2,8	0,24	3,7	0,31
Ամուրի մարզ	4,1	0,36	3,9	0,33
Պրիմորսկի երկրամաս	5,6	0,50	5,9	0,50

Ռուսաստանի Դաշնության հայության ներուժը միջպետական մակարդակում, լիարժեք օգտագործված չէ, չնայած այն հանգամանքին, որ աշխարհի խոշորագույն հայ համայնքը բնակվում է հենց Ռուսաստանում (ոչ պաշտոնական տվյալներով՝ 2,5-3 միլիոն)։

Մյուս կողմից ակնհայտ է, որ ՌԴ հայ համայնքի կազմակերպչական մակարդակը նույնպես չի արտացոլում ռուսահայերի ներուժը։ Ռուսաստանի հայ համայնքի սերտ հարաբերությունները Հայաստանի հետ, ինչպես նաև տարբեր երկրների հայկական սփյուռքերի հետ կարող են այն դարձնել առանցքային գործոն հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունների առաջընթացի տեսանկյունից։ Այստեղ առկա է չօգտագործված զգալի ռեսուրս։

Ռուսաստանի հայկական համայնքի տնտեսական և լոգիստական ներուժը նույնպես գնահատվում է բարձր, սակայն դրանք ևս ամբողջական հնարավորություններով զարժարված չեն։ Հայաստանում գործում են ռուսական կապիտալ ունեցող շուրջ 1300 ընկերություններ, որը կազմում է երկրում օտարերկրյա կապիտալ ունեցող բոլոր ընկերությունների շուրջ մեկ քառորդը։

ՌԴ-ում բնակվող հայության թվաքանակն աճ է արձանագրել նաև 2010 թ. հետո՝ պայմանավորված ՀՀ-ում և հետխորհրդային տարածքում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների լարվածությամբ։

ՀՀ-ից դեպի Ռուսաստանի Դաշնություն կատարվող շարունակական արտագաղթին լրացնելու է եկել ՌԴ կառավարության կողմից իրականացվող կամավոր վերաբնակեցման «Հայրենակիցներ» ծրագիրը, որն հաստատվել է ՌԴ Նախագահի 2006 թ. հունիսի 22-ի հրամանագրով։ «Հայրենակիցներ» ծրագիրն իրականացվում է նախկին ԽՍՀՄ տարածքում, որին մասնակցում են այն անձինք, ովքեր ծնվել են նախկին Խորհրդային Միության հանրապետություններում։

Այս ծրագիրը ՀՀ-ում սկսվել է կիրառվել 2007 թվականից, որին մասնակցած հազարավոր ընտանիքներ արդեն իսկ տեղափոխվել են բնակության ՌԴ տարբեր սուբյեկտներ։ ՌԴ հայ համայնքի թվաքանակի ներկա աճը (մեխանիկական և հարկադրված) որոշակիորեն պայմանավորված է նաև 2014 թ. Ուկրաինայի շուրջ ծավալվող քաղաքական և ռազմական իրադարձություններով, ինչի արդյունքում Դոնեցկի և Լուգանսկի հայաշատ մարզերից բազմաթիվ հայեր արտագաղթեցին ՌԴ տարբեր շրջաններ։

Առանձին հետազոտությունների արդյունքում պարզ է դառնում, որ ՌԴ-ից դեպի ՀՀ տեղի է ունենում հայերի հայրենադարձության գործընթաց, որը սակայն անհամեմատ փոքր ծավալներ ունի, քան դեպի Ռուսաստան կատարվող միգրացիոն ալիքն է։

Հետխորհրդային տարիներին ՌԴ-ում հայության թվաքանակի աճը, ազգային կյանքի և մշակույթի վերելքը, համայնքային կյանքի կազմակերպումը մեծապես կառուցվեց տարաբնույթ կազմակերպությունների շուրջ, որոնք հիմնվեցին ՌԴ բոլոր տարածաշրջաններում։

Այսպիսով, հետխորհրդային տարիներին ՌԴ հայության թվաքանակի շարունակական աճն այդ երկրի հայկական համայնքը դարձրել է խոշորագույն աշխարհում, որի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային ներուժը դեռևս լիովին բացահայտված չէ։ Ակնհայտ է, որ ՌԴ-ն հետայսու ևս հանդիսանալու է ՀՀ-ից և հետխորհրդային երկրներից հայության միգրացիայի հիմնական ուղղություններից մեկը։

THE NUMBER OF ARMENIANS IN RUSSIA IN 1897–2010
(ACCORDING TO OFFICIAL STATISTICS)

Keywords: Armenians, community, number, region, census, population, Russia/RF, Kuban.

The dynamics of the growth of the number of Armenians, the area of their distribution in Russia can be traced with the help of the censuses of the population of the Russian Empire, USSR and Russian Federation, conducted in 1897–2010.

It is important to note that over 100 years the Armenian population of the Russia (without Transcaucasia) increased more than 12 times - from 100 thousand to 1.2 million people (according to unofficial data - 2.5–3 million), and the territory of their distribution has expanded. The Armenian population has a high level of literacy and knowledge of their native language.

ОВАННЕС АЛЕКСАНИЯ
к.и.н., Армения

ЧИСЛЕННОСТЬ АРМЯН В РОССИИ В 1897–2010 ГГ.
(ПО ДАННЫМ ОФИЦИАЛЬНОЙ СТАТИСТИКИ)

Ключевые слова: Армяне, община, численность, регион/область, перепись, население, Россия/РФ, Кубань.

Динамику роста численности армян, ареал их распределения в России можно проследить с помощью переписей населения Российской империи, СССР и РФ проведенных в 1897–2010 годах.

Важно отметить, что за 100 лет армянское население России (без Закавказья) увеличилось более чем 12 раза – с 100 тыс. до 1.2 млн человек (по не официальным данным 2.5–3 млн), а территория их распределения расширилась. Армянское население имело высокий уровень грамотности и знания родного языка.

ՋԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՎՐԱՑԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ (ԸՍՏ 1999-
2009 ԹԹ. ՎՐԱՑԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ՄԱՍՈՒԼԻ ԼՅՈՒԹԵՐԻ)

Հիմնաբառեր. Ջավախքի հիմնահարց, վրաց հասարակական-քաղաքական միտք, վրաց տպագիր մամուլ, վրացական միջավայր, ընկալումներ, ներքին և արտաքին գործոններ, քաղաքական ուղեգիծ, միջպետական հարաբերություններ, վերաբնակեցում, տարանցիկ ուղիներ, Ռուսաստան, Հայաստանի Հանրապետություն:

Հետազոտությունը շարադրվել է 1999-2009 թթ. վրացական տպագիր մամուլում հրատարակված, ինչպես նաև թեմային առնչվող այլևայլ նյութերի և առանձնաբար, և համադրմամբ ուսումնասիրելու հենքի վրա:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա խորը և հիմնական ազդեցություն են գործել մի խումբ ներքին և արտաքին գործոններ: Նշյալ գործոններով ձևավորված ընկալումները և կարծրատիպերը մեծապես պայմանավորում են այն քաղաքական ուղեգիծը, որը վարել և վարում են վրացական իշխանությունները ջավախահայության հանդեպ: Վրաց հասարակական-քաղաքական միտքը հիմնականում և գերակշիռ մասով մերժել է Ջավախքի հիմնահարցի գոյությունը, բացասաբար է վերաբերվել բոլոր այն կազմակերպությունների, գործիչների գոյությանն ու գործունեությանը, որոնք այս կամ այն կերպ արձարծել են Ջավախքի հիմնահարցը: Ներկայիս Վրաստանի տարածքում բնակվող տեղաբնիկ ժողովուրդ հանդիսացող, միևնույն ժամանակ որպես ազգային փոքրամասնություն հանդես եկող ջավախահայության պահանջները, որոնք համապատասխանում են միջազգային իրավունքի տառին ու ոգուն, վրաց հասարակական-քաղաքական միտքը որակել է անջատողականության դրսևորում, ՀՀ-ի և ՌԴ-ի կողմից

ուղղորդվող սաղրանք Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ:

Վրաստանի պետական քաղաքականությունը երկրի հարավում ձևավորված Սամցխե-Ջավախք նահանգի և Քվեմո Քարթլի նահանգի՝ Սամցխե-Ջավախքի սահմանակցող Ծալկայի շրջանի (այսուհետ՝ Սամցխե-Ջավախք-Ծալկա կամ Ջավախք) հայության հանդեպ պայմանավորված է ներքին (ժողովրդագրական, հոգեբանական) և արտաքին գործոններով: Ըստ այդմ, 2014 թ. պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ 88.500 (49,3 %)՝ իսկ փաստացի, տարբեր հաշվարկներով, 120-150 հազար հայ ազգաբնակչությամբ Սամցխե-Ջավախք-Ծալկա (Ջավախք) երկրամասի հիմնահարցի վրաց հասարակական-քաղաքական շրջանակների ընկալումները լավագույնս ըմբռնելու համար հարկ է որոշակի խմբավորման միջոցով անդրադառնալ վերոհիշյալ գործոններին: Դժվար է ասելը, թե դրանցից որն ի՞նչ չափով է ազդել և շարունակում ներգործել այդ ընկալումների վրա, միաժամանակ պետք է փաստել, որ տարբեր ժամանակաշրջաններում դրաց ազդեցության չափաբաժինը ենթարկվել է փոփոխման:

Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա ազդող **ներքին գործոններ**: Դրանք են՝

- *վրացական միջավայրում հայության հանդեպ ձևավորված «ավանդական», գերակշիռ մասով՝ բացասական վերաբերմունքը*: Այստեղ Ջավախքն ու ջավախահայությունը լիարժեքորեն դիտարկվում են որպես հայկական միջավայր այստեղից բխող բոլոր հետևանքներով,
- *Վրաստանի բազմէթնիկ լինելու իրողությունը և, հակասակ դրան, տվյալ երկրում մշտապես կիրառվող մոնոէթնիզաց-*

²⁴ Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի ընդհանուր բնակչության թիվը 2014 թ. Վրաստանում անցկացված մարդահամարի տվյալներով կազմել է 179.353, որից 86.300-ը՝ վրացիներ (48,1 %), 88.500-ը՝ հայ (49,3 %), 1.300-ը՝ ադրբեջանցի (0,7 %), 3.100-ը՝ այլ (1,7 %):

ման (միաէթնիկ հանրության ձևավորման) քաղաքականությունն առկայությունը: Խոշոր հաշվով՝ **աբխազական և օսական հակամարտությունների** հիմքերում հենց այս քաղաքականությունն էր, որն, ի վերջո, հանգեցրեց այդ երկրամասերի՝ Վրաստանից փաստացի անջատմանը և, 2008 թ. սկսած, անկախության ճանաչման գործընթացի սկզբնավորմանը²⁵: Սույն կետի տակ հարկ է հիշատակել նաև **Վրաստանի փաստացի տարածքում էթնոժողովրդագրական հողի վրա տեղի ունեցող հետևյալ գործընթացները**²⁶.

- ❖ *Ա. ադրբեջանական գործոնը կամ, Վրաստանի հարավային և հոծ ադրբեջանաբնակ Քվեմո Քարթլի նահանգում ապրող շուրջ 180 հազար ադրբեջանցիների*²⁷ խնդիրները: Դրանք իրենց սուր բնույթով հանդիսացել են մշտական օրակարգային հարց, և նահանգի մեջ մտնող նախկին խորհրդային չորս շրջանների՝ Դմանխի, Բոլնխի, Մաոնեուլի և Գարդաբանի հանդեպ ադրբեջանական պատմական նկրտումների, այնտեղ գործող կազմակերպությունների, տեղի ունեցող խմորումների և պահանջների վերաբերյալ վրացական մամուլը բազմիցս է անդրադարձել: Փաստվել է, որ այնտեղ պարբերաբար ի հայտ եկող թերթերը²⁸, կազմակերպությունները և

²⁵ Սարգսյան Վ., Հարավօսական հիմնահարցի մասին, «21-րդ ԴԱԸ», N 4, 2018, էջ 27-39:

²⁶ Էթնոժողովրդագրական փոփոխություններն Անդրկովկասում. Վրաստան, 08.05.2017թ. (<http://armenian-community.ge/News/2444>):

²⁷ 2014 թ. Վրաստանում անցկացված մարդահամարի տվյալներով՝ Վրաստանում շուրջ 230 հազար ադրբեջանցի է ապրում: Նրանց ճնշող մեծամասնությունը՝ 180 հազարը, բնակվում է հարավային Քվեմո Քարթլի նահանգում:

²⁸ 1996 թվականից Թիֆլիսում հիմնադրվել և հրատարակվել է «Մոլլա Նասրեդին» ընդդիմադիր ամսագիրը («ვეთის პედაგոგ» («Կվիդիս պալիտոս» («Շաբաթվա ներկայանալը»)), N 22, 2001): Այս և հետագա հոդումներում վրացալեզու թերթերի անունները բերված են վրացերենով, իսկ փակագծերում՝ հայատառ և թարգմանաբար:

գործիչներն այդ տարածքը կոչում են «Բորչալու»՝ պահանջելով ազգային-լեզվական արտոնություններ, մշակութային, վարչական լայն ինքնավարություն, առանձին դեպքերում՝ ընդիուպ մինչև անկախություն կամ միացում Ադրբեջանին և այլն²⁹:

❖ *Բ. մեզրեղա-սվանական գործոնը կամ, Վրաստանի հյուսիս-արևմտյան երկու Մամեզրեղ-Ջեմո Սվանների ու Ռաճա-Լեչխումի և Քվեմո Սվանների նահանգներում ապրող մեզրեղների ու սվանների ազգային-լեզվական խնդիրները*³⁰:

Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա ազդող արտաքին գործոններ: Դրանք են՝

▪ *Թուրք-ադրբեջանական գործոնը*: Քննարկման թեմայից դուրս համարելով Թուրքիայի և Ադրբեջանի տնտեսական, էներգետիկ, տարանցիկ, ռազմաքաղաքական և ժողովրդագրական ազդեցությունները Վրաստանի վրա՝ փաստենք, որ խնդրո առարկա շրջանի վրացական մամուլը բազմիցս անդրադարձել է թուրք-ադրբեջանական նվաճողական քաղաքականությանը Վրաստանում, ինչի հետևանքով Վրաստանը հետզհետե վերածվում է թուրքական վիլայեթի³¹: Վրացական հասարակական-քաղաքական միտքը էրբեմն դժգոհություններ է հայտնել նաև թուրք-ադրբեջանական տարանցիկ քաղաքականության³², ադրբեջանական տնտեսական էքսպանսիայի և Վրաստանի վրսյ դրա հետևանքների մասին³³,

▪ *հարևանների հանդեպ հողային պահանջների և, ինչպես այդպիսի տարածքների վրա, այնպես էլ արտերկրում եր-*

բեմն բնակված կամ այժմ ապրող քարթվելական ժողովուրդների խնդիրների շուրջ քննարկումները: Վրացական գիտական-հանրային շրջանակներում այս խնդիրների քննարկումը, բնականաբար, այս կամ այն կերպ, ուղղակի և անուղղակի, իր ներգործությունն ունի Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա:

❖ *Ռուսաստանի հետ հարաբերություններում առկա հողային պահանջներ*: վրացական հանրային ընկալման մեջ գերակշռողն այն է, որ այդ երկիրը զավթել է ոչ միայն Վրացական ԽՍՀ-ի կազմում գտնված Աբխազիայի ԻԽՍՀ-ն ու Հարավային Օսեթիայի ԻՄ-ը, այլև Աբխազիային սահմանակից ՌԴ Մոչիի շրջանները (վրացական շրջանակներում այն անվանում են Ջիբեթի): Ըստ վրացական տեսակետի 1918–1920 թթ. անկախության տարիներին քաղաքացիական պատերազմների մեջ գտնվող ռուսական ուժերը՝ կարմիրներն ու սպիտակները, միակամորեն զավթել են Մոչիի մարզը (ըստ վրացական հրապարակումների՝ երկրի տարածքը մինչ այդ կազմել է 91 հազ. 110 կմ²)³⁴, ինչի արդյունքում 1920 թ. այն վերջնականորեն հաստատվեց որպես Ռուսաստանի մաս և Վրաստանի (Աբխազիայի) հետ Ռուսաստանի սահմանն անցավ Փոտու գետով (գետն այսօր հանդիսանում է ՌԴ-Աբխազիա սահմանգիծը)³⁵:

²⁹ «კვირის პაღლიტრა» («Կվիրիս պալիտոա» («Շաբաթվա ներկայակալը»)), N 46, 2005.

³⁰ «რეკონანსი» («Ռեգոնանսի» («Ռեգոնանս»)), N 150, 2001.

³¹ «საღლი თაობა» («Սխալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 78, 2006.

³² «საღლი თაობა» («Սխալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 41, 2007.

³³ «საღლი თაობა» («Սխալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 78, 2006.

³⁴ «საქართველოს სარკმელი» («Սաքարթվելոս սարկմելի» («Վրաստանի պատուհանը (օդանցքը»)), N 4, 2001. Պ.գ.թ. Բեժան Խորվան ջիբեթին համարում է հնագույն վրացական ցեղերից մեկը և իր հարցազրույցներում խոսում վերջիններիս մասին հնագույն հիշատակությունների, բնակեցրած Լրբեմնի տարածքների և Ջիբեթիի (Մոչիի մարզի) վրացապատկան լինելու հարցերի մասին (տե՛ս «ჯორჯიან თაობის» («Ջորջիան թայնս»), N 32, 2004).

³⁵ «ბასტა» («Բաստա» (բառացի՝ «Հերի ք Ե»)), N 196, 2003. Հեղինակը, փաստելով 1918–1920 թթ. Ջիբեթիի (Մոչիի շրջանների), իսկ այնուհետև Աբխազիայի և Հարավային Օսեթիայի կորուստը, մեղադրում է երկրի ղեկավարությանը (Էդ.

Այս համատեքստում Ռուսաստանի ցանկացած գործողություն Վրաստանում ընկալվում է որպես Վրաստանի մնացած մարզերը, այդ թվում՝ Ջավախքը, անջատելուն ուղղված քայլ:

❖ *Թուրքիայի հետ հարաբերություններում առկա հողային պահանջներ.* վրացական հանրային ընկալմամբ՝ ներկայիս Թուրքիայի Հանրապետության կազմի մեջ մտնող հյուսիս-արևելյան, այն է՝ ծովափնյա Օրդու, Գիրեսուն, Ռիզեի, Տրապիզոնի, Արդվինի մարզերի, ինչպես նաև Արդահանի մարզի, Կարսի մարզի արևմտյան, Էրզրումի մարզի հյուսիսային և Ադրբի մարզի հյուսիս-արևելյան (Ալաշկերտի շրջան) շրջանների հենքի վրա պետք է ձևավորվի լազական-մեսխական ինքնավարություն: Նշված տարածքները պատմամշակութային հուշարձաններով հանդերձ, վրաց հասարակական-քաղաքական շրջանակներում համարվում են վրացական, իսկ լազերն ու մեսխերը՝ քարթվելական ժողովուրդներ³⁶:

❖ *ՀՀ-ի հետ հարաբերություններում առկա հողային պահանջներ.* վրացական հանրային ընկալմամբ՝ ներկայիս ՀՀ Լոռու մարզի մեծագույն հատվածը հիմնականում Բագումի լեռնաշղթայից հյուսիս, որը 1919–1921 թթ. իրերի բերմամբ հայտնի էր որպես «Լոռու չեզոք գոտի» անվամբ (ժամանակին ներառել է Վորոնցովկայի (Կալինինո, Տաշիր), Ուզունլարի (Օձուն) և Ալավերդու տեղամասերը Էամասյատապխան գյուղախմբերով հանդերձ),

համարվում է վրացապատկան տարածք³⁷: ՀՀ Լոռու մարզի հյուսիսային մի քանի շրջանների հանդեպ պահանջատիրական կեցվածքը, այն է՝ «Լոռու կորստի ցավը», լրջորեն ազդում է Վրաստանի Ջավախքի հանդեպ վարվող պետական քաղաքականության վրա: Իր հերթին՝ ցանկացած քայլ, որն ուղղված է ջավախահայության ազգային, մշակութայնական կամ այլևայլ իրավունքների արձարձմանը, միանգամից ստիպում է հիշելու շուրջ մեկ դար առաջ տեղի ունեցածը, այն է՝ Լոռու կորուստը: Այդ ամենի մեջ տեսնելով ինքնորոշվելու կամ «Լոռվա սցենարի» կիրառման, այն է՝ ՀՀ-ին միանալու վտանգ, Վրաստանն ամեն գնով ոչնչացնում է ջավախահայության ազգային գիտակցությունն ու մշակութային դիմագիծը:

❖ *Ադրբեջանի հետ հարաբերություններում առկա հողային պահանջներ.* քաղաքացիական պատերազմից հետո վրաց-ադրբեջանական հարաբերությունների ամենացավոտ հարցերից մեկից՝ Վրաստան-Ադրբեջան ներկայիս սահմանագծի վրա գտնվող Դավիթ Գարեջիի ժայռափոր վանական համալիրի պատկանելության շուրջ ծանր, իսկ երբեմն-երբեմն՝ բախումներով ուղեկցվող վեճից³⁸, Մեծ Կովկասի հարավային փեշերի երկայնքով ձգվող, Ադրբեջանի՝ աշխարհագրորեն Վրաստանի և ՌԴ-ի (Դաղստան) միջև գտնվող Բալականի (մինչև 1991 թ.՝ Բելոկանի), Ջաբաթալայի և Կախի շրջանները վրացական հանրային գիտակցության մեջ համարվում են վրացապատ-

Շևարդնաձեին) «պրոկոմունիստական» և «պրոհարևանական» քաղաքականության համար՝ որպես պոստեցլիալ վտանգ մատնանշելով «գլուխ բարձրացրած Ջավախքի հայությանը»:

³⁶ «Հրեշտակներ» («Ջորջիան Թայմս»), N 42, 2004.

³⁷ «ՃՏԵՃ» («Բաստա» (բառացի՝ «Հերիք է»), N 196, 2003.

³⁸ Սարգսյան Վ., Դավիթ Գարեջիի խնդրի լուծման բանալին Արցախում է, 17.07.2019 թ. (<https://www.yerkir.am/news/view/180020.html>).

կան տարածքներ և վաղ թե ուշ ենթակա են վերադարձման Վրաստանին³⁹:

Նշված իրողությունն անմիջականորեն ազդում է վրացական հանրային գիտակցության վրա ստիպելով երկրի տարածքում բնակվող բնիկ ժողովուրդների կամ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ուղղված ցանկացած քայլ դիտարկել որպես «Վրաստանի հողերի հանդեպ հերթական ոտնձգություն» կամ «Վրաստանի դեմ ուղղված նեոբոլշևիկյան քաղաքականություն»:

- ❖ *արտերկրում (ոչ հարևան երկրներում) երբեմն բնակված կամ այժմ ապրող քարթվելական ժողովուրդների խնդիրներ.* արտերկրում (ոչ հարևան երկրներում) ապրող ոչ այնքան մեծաթիվ վրացական համայնքների խնդիրների շուրջ քննարկումներն ուղիղ կերպով կապված են Վրաստանում ապրող ոչ վրացի ազգությունների խնդիրների և իրավունքների արձարձման հետ: Այդպիսով, Ջավախքի հիմնահարցի շուրջ քննարկումները վրացական սփյուռքի առջև ծառայած խնդիրների և պատճառ են, և հետևանք: Փաստենք նաև, Թուրքիայից և Ադրբեջանից հետո պայմանական երրորդ երկիրը, որտեղ ապրող վրացական համայնքի մասին ակտիվորեն քննարկվում է վրացական մամուլում, Իրանն է: Վրացական հանրային շրջանակներում տիրապետող է հետևյալ տեսակետը. 16-17-րդ դարերում Արևելյան Վրաստանից Պարսկաստան են բռնագաղթեցվել շուրջ 75.000 վրացիներ, նրանց սերունդները գերակշիռ մասով ապրում են Սպահանին հարակից Ֆերեյդանի (պատ-

³⁹ “*ჯეორჯიან თაობის*”, («Ջորջիան թայմ»), N 43, 2004, “*ჯეორჯიან თაობის*” («Ջորջիան թայմ»), N 42, 2004.

մական Փերիայի շրջան) շրջանում, այժմ կազմում են մի քանի հարյուր հազար, և Պարսկաստանի իշխանությունները հարկ է, որ վերջիններիս տրամադրեն լայն մշակութային ինքնավարություն, ստեղծեն ազգային դպրոցներ, ֆոլկլորային խմբեր, թատրոն, ռադիո, երկրի խորհրդարանում պետք է լինեն ազգությամբ վրացի պատգամավորներ և այլն⁴⁰:

Վերևում ամփոփեցինք Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա ազդող **ներքին և արտաքին գործոնները**: Ստորև ներկայացնենք այդ ընկալումների արգասիք հանդիսացող որոշ հրապարակումներ:

«Խաղաղության, ժողովրդավարության և զարգացման կովկասյան ինստիտուտի» տնօրեն, քաղաքագետ Գիա Նոդիան, խոսելով ռուս-վրացական հարաբերությունների և տարածաշրջանային զարգացումների մասին, հիշատակում է նաև Ջավախքը: Ըստ քաղաքագետի՝ Վրաստանի ղեկավարությունը զսպում է իրավիճակը Ջավախքում (որտեղ տեղակայված էր ռուսական խոշոր ռազմաբազաներից մեկը), այդուհանդերձ, ժամանակն է, որ հայտարարվի ՌԴ ռազմակայանների՝ Վրաստանում գտնվելու անթույլատրելիության մասին, և այդ պահանջը, ըստ Գ. Նոդիայի, պետք է դրվի

⁴⁰“*ჯეორჯიან თაობის*” («Ջորջիան թայմ»), N 43, 2004. Հետաքրքրական է, որ վրացական կողմի թվային տվյալները և Իրանում ապրող վրացիների մասին մի շարք բնութագրումներ չեն համընկնում իրանական կողմի ներկայացրած տվյալների հետ: Այսպես, ըստ այդ տեղեկությունների՝ Իրանում ապրող ծագումով վրացիների թիվը կազմում է ոչ թե մի քանի հարյուր հազար, այլ 30.000-40.000, ովքեր ապրում են Կասպից ծովի ավազանում, Սպահանին հարակից Ֆերեյդանի (Փերիայի) շրջանում և այլուր, հարյուր տոկոսով մուսուլման են և հիմնականում ձուլվել են պարսիկներին: Նրանց շուրջ 20.000-ն իր արմատների մասին խորությամբ տեղյակ չէ:

Ռուսաստանի հետ նորմալ հարաբերությունների կառուցման հիմքում⁴¹:

Վրաստանի նախագահ Էդ. Շևարդնաձեի և Խորհրդարանի խոսնակ Ջ. Ժվանիայի 2000 թ. նախընտրական շրջանում⁴² Ջավախք կատարած այցելություններին, ջավախահայության ներկայացրած պահանջներին և Ջավախքում ստեղծված իրադրությանն է անդրադարձել «Ռեզոնանս» թերթի հոդվածագիր-վերլուծաբան Գ. Քալանթաձեն: Հոդվածագիրը Ջավախքում տեղի ունեցող բոլոր խմորումները, պահանջների ձևավորումն ու երկրի ղեկավարության առջև դրանցով հանդես գալը կապում է նորաստեղծ «Վիրք» կուսակցության⁴³ անջատողական գործողությունների հետ⁴⁴: Նույնն է փաստում նաև «Մերիդիանի-44» թերթի հրապարակագիր Ս. Ջանդուկելին՝ մեղադրելով նաև «Ջավախք» կազմակերպությանը⁴⁵:

Էդ. Շևարդնաձեի՝ 2001 թ. հոկտեմբերին Երևան կատարած պաշտոնական այցի քննարկման համատեքստում վրացի հրապարակագիր Մ. Խուրցիձեն, քննարկելով ՀՀ-Վրաստան հարաբերությունները, արխագահայությանը և ջավախահայությանը դիտարկում է որպես Երևանի կողմից Վրաստանի վրա ազդեցություն գոր-

ծելու լծակներ: Հրապարակագիրը շատ հետաքրքիր և կրկին միակողմանի մի համեմատություն է ներկայացնում, ըստ որի՝ 1991 թ. մարտի 17-ին տեղի ունեցած ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվեի ժամանակ հայությունը Հայաստանում բոյկոտել է հանրաքվեն, իսկ անհա Աբխազիայում հայերը միացել են արխագաներին, հակադրվել Վրաստանին և քվեարկել ԽՍՀՄ պահպանման օգտին⁴⁶: Ավելին, ըստ հոդվածագրի՝ հայերը «երկակի ստանդարտներ» են ցուցաբերել. նրանք մարտի 17-ին Հայաստանում բոյկոտել են հանրաքվեն և հանդես եկել երկրի անկախանալու օգտին, իսկ անհա նույն թվականի մարտի 31-ին տեղի ունեցած Վրաստանի անկախության հանրաքվեին Աբխազիայի հայերը հրաժարվել են մասնակցելուց⁴⁷: Այստեղ ևս ցավով պետք է փաստել, որ վրացական շրջանակները հաշվի չեն առնում ստեղծված այն կոնֆլիկտային, իսկ դրանից ավելի քան մեկ տարի անց՝ պատերազմական արյունալի իրավիճակը Աբխազիայում, որի պայմաններում արխագահայությունն այլ կերպ չէր կարող գործել: Ցավոք, արխագահայության նման դիրքորոշումներով, իսկ հետագայում նաև պատերազմական գործողություններին մասնակցությամբ պայմանավորված վրացական կարծիք մոտեցումները իներցիոն ուժով տարածվել են նաև ջավախահայության վրա, և ամենևին պատահական չէ, որ Մ. Խուրցիձեն արխագահայության մասին քննարկումների համատեքստում, որպես «անվստահելի» շրջանակների, հիշատակում է նաև ջավախահայությանը: Այնինչ, այս մոտեցումը ոչ միայն հիմնադուրկ է, այլև, ելնելով առկա փաստերից, նաև անարդարացի: Մեր գիտական հրապարակումներում ոչ մեկ անգամ ենք անդրադարձել 1991 թ. մարտի 17-ի ԽՍՀՄ պահպանման հանրաքվեին և ջավախահայության կողմից վերջինիս հանդեպ ցուցաբերած դիրքորոշումներին: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Ջավախքում գործող «Ջավախք» ժողովրդական շարժման և «Փարվանա»

⁴¹ “კვირის პეტიტორ” («Կվիրիս պալիտոր») («Շաբաթվա ներկայակ»)», N 48, 1999.

⁴² 2000 թ. ապրիլի 9-ին Էդ. Շևարդնաձեն վերընտրվեց Վրաստանի նախագահի պաշտոնում:

⁴³ «Վիրք» կուսակցությունը հիմնադրվել է 1999 թ. հունվարի 31-ին Ջավախքում: Այն իր բնույթով համավրաստանյան էր և վերջինիս անդամ կարող էր դառնալ ընտրության իրավունք ունեցող ցանկացած քաղաքացի՝ անկախ ազգային պատկանելությունից (см. Устав – всегрузинской партии «Вирк», пункт 4, 04.02.1999):

⁴⁴ “რეზონანსი” («Ռեզոնանսի») («Ռեզոնանս»), N 92, 2005.

⁴⁵ “მეგობრობა-44” («Մերիդիանի-44») («Մերիդիան-44»), N 43, 2000. 1988 թ. փետրվարի վերջին, Ղարաբաղյան շարժման սկսվելուց մեկ շաբաթ անց, Ախալքալաքում, հիմնադրվեց «Ջավախք» կոմիտեն, որը հետագայում վերածվելու էր «Ջավախք» ժողովրդական շարժման (տե՛ս **Մարգարյան Վ.**, Միություններն ու կազմակերպությունները Սամցխե-Ջավախք-Շավկայում (1988-2008 թթ.), «21-րդ դար», N 5 (27), Երևան, 2009, էջ 64-65):

⁴⁶ Վրաստանն ի սկզբանե հրաժարվել էր որևիցե ձևով մնալ ԽՍՀՄ կազմում և բոյկոտեց հանրաքվեն:

⁴⁷ “სხვალი მეგობრობა” («Ախալի մերիդիանի») («Նոր միջօրեական»), N 8, 2001.

կազմակերպության⁴⁸ կողմից Ջավախքի ազգաբնակչությանն ուղղված կոչին, որով վերջիններս պահանջում էին ժողովրդից չմասնակցել ԽՍՀՄ-ը պահպանելու մասին 1991 թ. մարտի 17-ի համաժողովրդական հանրաքվեին այն (մասնակցությունը) համարելով սխալ. «...քանզի ԽՍՀՄ-ն այն կայսրությունն է, որի գոյությունն ինքնըստինքյան հակաժողովրդավարական է, վարում է ամբողջատիրական քաղաքականություն, խեղդում ամեն մի ազգային դեմոկրատական շարժում»⁴⁹: Ցավոք, վրացական շրջանակներում հայության հանդեպ համընդհանուր տարածում ունեցող «հատուկ» վերաբերմունքի պայմաններում այսպիսի բազմաթիվ փաստերը որևէ քննարկման չեն արժանանում:

2009 թ. սեպտեմբերի 1-ին ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական ծառայությունների ղեկավարների հետ ամենամյա հանդիպման ժամանակ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը, անդրադառնալով Ջավախքի հիմնախնդրին, նշեց. «...Կարծում եմ, որ հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու Հայ Առաքելական սուրբ եկեղեցու գրանցումն ապահովելու, Վրաստանի՝ հայկական հուշարձանների պահպանմանն ուղղված քայլերը Վրաստանում միայն նպաստելու են հայ-վրացական բարեկամության ամրապնդմանը, փոխվստահության մթնոլորտի խորացմանը»⁵⁰: Ջավախահայությունը, բնականաբար, ողջունեց նախագահ Սարգսյանի այս քայլը, իսկ վրացական մամուլը

և հասարակական-քաղաքական միտքը, ընդհակառակը, հուժկու քննադատության ենթարկեցին այն⁵¹:

Եզրակացություններ

Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա խորը և հիմնական ազդեցություն են գործել մի խումբ ներքին և արտաքին գործոններ:

Վրաց հասարակական-քաղաքական միտքը հիմնականում և զերակշիռ մասով մերժել է Ջավախքի հիմնահարցի գոյությունը, բացասաբար է վերաբերվել բոլոր այն կազմակերպությունների, գործիչների գոյությանն ու գործունեությանը, որոնք այս կամ այն կերպ արձարծել են Ջավախքի հիմնահարցը:

VAHE SARGSYAN
Ph.D. in History, Armenia

THE MAIN PROBLEM OF JAVAKHK IN THE PERCEPTION OF GEORGIAN SOCIO-POLITICAL THOUGHT (BASED ON GEORGIAN PRINT MEDIA IN 1999-2009)

Keywords: Javakhk problem, Georgian socio-political thought, Georgian print media, Georgian environment, perception, internal and external factors, political direction, interstate relations, resettlement, transit routes, Russia, Republic of Armenia.

The purpose of the article is to present the Javakhk issue through the materials of the Georgian print media for about ten years (1999-2009) with the perception of Georgian social and political thought. The article indicates all internal and external factors, to present signals about the

⁵¹ Մարգսյան Վ., Հայերենին կարգավիճակի տրամադրման խնդրի քննարկումը վրացական մամուլում, «21-րդ դար», N 5, Երևան, 2018, էջ 68-81:

⁴⁸ «Փարվանա» հասարակական կազմակերպությունը ծնունդ է առել Բոգդանովկայում (այժմ՝ Նիոնոմինդա) 1989 թ., ազգային ինքնագիտակցության վերածննդի շրջանում, միտինգային թոհուրոնի մեջ (տե՛ս «Ջավախք», ապրիլ, 1995, N 3 (9), հմտո. Բոգդանովկայի շրջան, «Տեղեկագիրք», Բոգդանովկա, 1992, էջ 99):

⁴⁹ Տե՛ս Կոչի բովանդակությունը (Մարգսյան Վ., Ջավախահայության դիրքորոշումը 1991 թ. մարտի 17-ի ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվեի նկատմամբ (մի փաստաթղթի պատմություն), ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2019, էջ 224-225):

⁵⁰ «Հայաստանի Հանրապետություն», N 168, 2009:

problems of Javakhk' Armenians and other requirements arising from their use, about stereotypes formed by the Georgian press.

In the article presents the main publications of the Georgian print media, which indicate the Georgian perception of the Javakhka problem. The corresponding conclusions are also placed at the end.

The text of the research is presented as a result of a separate study and comparison of Georgian print media published in 1999-2009, as well as other sources related to this topic.

As a result of the study, we concluded that a group of internal and external factors had a profound and serious impact on Georgians' perception of the Javakhk problem.

The Georgian sociopolitical thought largely rejected the existence of the Javakhk issue, negatively related to the existence and activities of all organizations and figures, who, in one way or another, raised the Javakhk issue.

ВАЭ САРКИСЯН
к.и.н., Армения

**ПРОБЛЕМА ДЖАВАХКА В ВОСПРИЯТИИ ГРУЗИНСКОЙ
ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ
(ПО МАТЕРИАЛАМ ГРУЗИНСКИХ ПЕЧАТНЫХ ИЗДАНИЙ
1999-2009 гг.)**

Ключевые слова: Проблема Джавахка, грузинская общественно-политическая мысль, грузинские печатные издания, грузинская среда, восприятия, внутренние и внешние факторы, политический курс, межгосударственные отношения, переселение, транзитные пути, Россия, Республика Армения.

Цель статьи - с помощью материалов грузинских печатных изданий одного десятилетия (1999-2009 гг.) представить восприятие проблемы Джавахка грузинской общественно-политической мыслью. Статья решает задачу систематизированного выявления и представления всех внутренних и внешних факторов, влияющих на грузинское восприятие проблемы Джавахка. В работе представлены основные публикации грузинской прессы, выявляющие грузинское восприятие проблемы

Джавахка. В конце статьи представлены соответствующие выводы. Текст исследования изложен вследствие отдельного изучения и сопоставления грузинских печатных изданий, опубликованных 1999-2009 гг., а также других источников, связанных с данной темой.

В результате исследования мы пришли к выводу, что ряд внутренних и внешних факторов оказал глубокое и серьезное влияние на восприятие грузинами проблем Джавахка.

Грузинская общественно-политическая мысль в большинстве случаев отрицала существование проблемы Джавахка, формировала отрицательное отношение к тем организациям и деятелям, которые так или иначе поднимали проблему Джавахка.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտքի խոսք
ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ5
ԼԵՒՈՆ ԱՐՔ. ԶԷՔԻԵՆԱՆ
 Հ. Ղևոնդ Ալիշան բանասեր, աղբիւրագետ.....10
ԷԼԻՉԱԲԵԹ ԹԱԶԻՐԵԱՆ
 Հ. Ղևոնդ Ալիշանի «Հայ գաղթօջախների մասին» ձեռագիրը
 հատորը եւ նրա աղբիւրները.....21

ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ГЕВОРГ КАЗАРЯН
 К вопросу о присутствии Армянских монашествующих в Риме в
 середине VII века..... 39
CLAUDE MUTAFIAN
 Regards Europeens sur la Jerusalem Armenienne
 Preottomane.....55
ՅԱԿՈԲ ԶՈՂԱՔԵԱՆ
 Արաբական աղբիւրները Անտիոք քաղաքի եւ շրջակայքի հայ
 հին գաղթականութեան մասին.....73

ԱՅՍՐԿՈՎԿԱՍ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔ

ԱԼԲԵՐՏ ԻՅԱՆՍՅԱՆ
 Ուղեգիրները Զվյունիայի հայերի մասին (XVII դ. I կես-XIX դ. I
 կես).....94
ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ
 XV-XVIII դդ. եվրոպական հեղինակների երկերը որպէս
 Արեւելեան Այսրկովկասի հայերի պատմության սկզբնաղբյուր
 (համառոտ ակնարկ).....112
ԱՐԾՎԻ ԲԱՆԶԻՆՅԱՆ
 Շվեդ ճանապարհորդ Նիլս Մաթսոն Շիուփինզը Հայաստանի և
 հայերի մասին..... 129

ԹՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

17-րդ դարի պարսկական աղբյուրները Շահ Աբբաս Ա-ի կողմից
 Այսրկովկասից Իրանի կենտրոնական ու Հյուսիսային շրջաններ
 տարագրված հայության մասին..... 139
ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Եվրոպական աղբյուրները Պարսկաստանի հայկական
 գաղթօջախի որոշ հարցերի շուրջ.....162
ԻՎԵԹ ԹԱԶԱՐՅԱՆ
 Նոր Ջուղայի Խոջայական ապարանքների հարդարանքը
 եվրոպացի ճանապարհորդների տեսանկյունից..... 176
ՍԵՂԱ Տ. ՕՀԱՆԵԱՆ

Միջագետք(Իրաք)ի հայ գաղթօճախը ըստ Բրիտանական
 աղբիւրներու (XIX դար)..... 192
ՎԵՆԵՐԱ ՄԱԿԱՐՅԱՆ

18-րդ դարի Հալեպի հայ համայնքի ընդհանուր նկարագիրը
 Ալեքսանդր Ռասելի «Հալեպի բնական պատմությունը»
 աշխատությունում.....207
ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ (ՖՉԼԿՉՅԱՆ)

Մուհամմետ Ճեմալ Պարուզի «Ժամանակակից Սուրիական
 Ճեզիրէի ձեւաւորման պատմութիւնը» աշխատութեան
 տեղեկութիւնները դէպի Սուրիա հայերու գաղթի մասին (1915-
 1945 թթ.).....223
ԱՐՄԵՆ ԱՍՏԱՐՅԱՆ

Եվրոպացի ուղեգիրները Թիֆլիսի հայերի մասին.....240

ԱՄՆ-Ի ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի սկզբնաղբյուրները գաղութային
 ժամանակաշրջանի ամերիկա մեկնած առաջին հայերի մասին
 (XVII դ. սկիզբ - XVIII դ. առաջին կես).....255

ՔԱԼԻՆՏ ԿՈՎԱԶ

«Հայ ժողովրդի պատմությունը». Դոնդոնի Վարդան Յոզեֆի հունգարալեզու ձեռագիրը.....293

ԷԼԻՆԱ ՄԻԻԹԱՐՅԱՆ

Հարավ-արեվմտյան /Գալիցյան/ Ռուսիայի հայ գաղթօջախների իրավական, սոցիալ-տնտեսական կարգավիճակի յուսարանումը Ի. Ա. Լիննիչենկոյի աշխատություններում.....306

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ

Հայերի թիվը Կոստանդնուպոլսում ըստ եվրոպացի հեղինակների տվյալների (XVIII դարի վերջին քառորդ – XIX դարի սկիզբ).....315

ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

ԳՈՀԱՐ ԽՆԿԱՆՈՍՅԱՆ

Մատենագիտական տվյալներ բուլղարահայության պատմամշակութային ժառանգության վերաբերյալ329

ԱՔԷԼ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Զուիցերիական վաերագրերը Ժընևի եւ Լոզանի հայկական գաղթօճախներուն մասին.....353

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հայերի թվակազմը Ռուսաստանում 1897–2010 թթ. (ըստ սյաշտոնական վիճակագրական տվյալների).....367

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Ջավախքի հիմանահարցի վրացական ընկալումները և դրանց վրա ազդող գործոնները (ըստ 1999-2009 թթ. վրացական տպագիր մամուլի նյութերի).....385

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՂԵՄԻԱ
ՊԵՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊՐԱԿ Ա

ՀԱՅԴ ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆՅԱՆ
200-ԱՍՅԱԿԻՆ ԵՎԻՐՎԱԾ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ԽՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

FOREIGN-LANGUAGE SOURCES ON
ARMENIAN COMMUNITIES

ISSUE I

PAPERS OF THE INTERNATIONAL CONFERENCE DEDICATED TO THE
200TH ANNIVERSARY OF GHEVOND ALISHAN'S BIRTH

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ ОБ
АРМЯНСКИХ ОБЩИНАХ

ВЫПУСК 1

СБОРНИК МАТЕРИАЛОВ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ,
ПОСВЯЩЕННОЙ 200-ЛЕТИЮ ОТЦА ГЕВОНДА АЛИШАНА

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊՐԱԿ Ա

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆՅԱՆ
200-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԼՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Տպագրիչ՝ Լ. Մուրադյան
Շարվածքը՝ Գայանե Շախկյանի
Էջաղրուսը՝ Աստղիկ Ղազարյանի

Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА

INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4

РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4

24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan

<http://www.academhistory.am>

